




786

L. I. 5







ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵԿ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԵՖԵՐՈՐԴ ԳԻՐՔ.

ՄՈՍԿՈՒԱ

ՑՊԱՐԱՆ Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ հ.

1894

Дозволено цензурою. С.-Петербургъ, 22 мая 1894 г.

---

Типогр. Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыххъ.

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՄ.

I. ՀԱՅՐԻԿԸ-ԿԱԹՈՂԻԿՈՍ,	Ա.	ԾԱՏՈՒՐԵԱՆ	1.
II. ԶԱՏԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, ՊԵՐՃ ՊԻՇ-			
ԵԱՆՅ			1
III. ԹԱԳՈՒՀՈՒ ԱՐՏԱՍՈՒՔԸ, աւանդութիւն, Մամին-			
Սիրիոսկից			14
IV. ՄԻ' ՎՀԱՏԻՐ, բանաս. Ա.	ԾԱՏՈՒՐԵԱՆԻ	78	
V. Ա.ՐԵՒՄՈՒՏՔԸ ԲՈՐԲՈՔ-			
ՈՒԵՑ, բանաս. Լերմօնտովից,	ԳԱՄԻՆՈՒ- ԴԱՐԻԱՆ		80
VI. Վէճ, բանաս. Լերմօնտովից,			81
VII. ԻՄ ԿԻՆԸ ԵՒ ԻՄ ՍՈՒՐԸ,			
բանաս. Պէտեօֆից,	Գ.		85
VIII. ՆԵՐԴԱԾ, պատկեր, Թարգ. Տիկ. ՍԱՐԳԱՐԻՑ			87
IX. ՎՐԴԱՆԱՆՑ ՕՐԸ. — ԵՐԳԻՐ, ՀՈԳԵԱԿ.—ՔՈՒՆ			
ԵՂԻՐ, բանաստ. Յ. ՅՈՎԱՆՆԻՍԻՍԱՆՑԻ			115
X. ՎԵՅԵՐՈՐԴ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՑ			
ՄՏԱՒՐՐ ԿԵԱՆՔԸ, ԵՐ. ԾԱՀԱԶԻՉ			119
XI. ՀՐԵԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ, բանաս. Բալընից, Ա. ԾԱ-			
ՏՈՒՐԵԱՆ			151
XII. ԲԱՅՐԼՆԸ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՄՈՏ, ԻԻՐԻՑ ՎԵ-			
ՍԵԼՈՎՍԿԻՑ			158
XIII. ԲԱՐԻ ՀՐԵՇՏԱԿ.—ՀԱԼԱՄՈՒԱԾ ՍԵՐ, բանաս.			
Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ			175
XIV. ՇՈԳԵՆԱԻԻ ՎԵՐԱՅ, զբաց. Թարգ. Տ. ՍԱՐԳԱՐԻՑ			177
XV. ՍՐԲԱԶԱՆ ՈՒՂԻՆ—ԱԻԵՑԵԱՅ ԵՐԿԻՐԸ.—ՀԱՅ-			
ԴՈՒԿ. — ՀԱՍԱՐԱԿԱՅ ԽՈՒՄԲԸ ԵՒ ԱՇՈՒԴԸ.—			
ԺՈՂՈՎՐԴԻՆ. — ՈՒԽՏԱԿՈՐՆԵՐ, բան. Յ. ԿՈՍ-			
ՏԱՆԵԱՆՑ			192

XVI.	ՄԻ ԵՐԵՍ ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՑՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ,	
	ԵՐ. ՇԱՀԱԶԻՋ . . . . .	205
XVII.	ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԹԷՌԴՈՍԻԱՅԻ (ԿԱՖԱՅԻ) ՀԱՅ-	
	ԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, Ս. ԹԱՆԴԵԱՆ	241
XVIII.	ՀՈՒԱՔԵԼ, ԴՐԱՄԱ ՀԻՆԿ ԳՈՐԾՈՂՈՎԹԵԱՄԲ, ԳՈՐԾ Ս.	
	Առնոյի, 8. ԶԱՆՈՒԻՄԵԱՆՑ . . . . .	226
XIX.	ԼՈՒԽԱՐԱՐԻ ՆԱՄԱԿԸ Կ. ՊՈԼՍԻՑ, 8. ՊԱ-	
	ՐՈՒՆԵԱՆ . . . . .	315
XX.	Ի ԶԱՄՉԵԱՆ ՀԱՅՐ ՄԻՔԱՅԵԼԻ . . . . .	319
XXI.	ՎԱՆԵՑԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒՀՈՒՆ, Գ. ՔԱՀ ՄԿՐ . . .	329
XXII.	ԳԱՄՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԹԱՐՄ ՇԻՐՄԻ ԱՌԱՋ, Ա.	
	ՄԱՑՈՒՐԵԱՆ . . . . .	332
XXIII.	ԼԵՀԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ : ՀԱՐԱՀԱՅԻՆ	
	ՈՈՒՄԻՍԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ. Ի. Ա. Լինիլենկոյից, Թարդ.	
	Ի. ՑՈՎՃԱՆՆԻՄԵԱՆՑ . . . . .	337
XXIV.	ԱՆՎԵՆԵՐ ԱՄՊԵՏՈՒԹԻՒՆ. Մ. ԲԱՐԻՈՒԿԱՐ-	
	ԵԱՆ . . . . .	359
XXV.	ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ . . . . .	388
XXVI.	ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	392



## ՀԱՅՐԻԿԸ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մի հարազատ ծայն հեռաւոր հիւսիսից.

Ազգերի պատմութեան մէջ շատ սուհմանափակ է այն անձանց թիւը, որոնք՝ օժտուած լինելով առաքինական բնատուր վսեմ բարեմասնութիւններով և բարձր ձիրքերով, իրանց կեանքի ընթացքում կարողանում են մեծանալ, հոչտկուել և համել բարոյական մի այն պիսի բարձրութեան, որ մարդկանց համար դառնում են երկրպագելի հերոսներ, խնկելի էակներ: Մարդկութիւնը հիացած և զարմացած՝ իւր այդ խնկելի էակներին մկրտում է մեծ մարդիկ անունով և երախտագիտական ջերմ զգացմունքով բաց է անումնանց առաջ պատմութեան ամենալայն և ամենափայլուն էջերը: Նրանց նուիրական անունները, որպէս մարդարիտներ, ոսկի տառերով շարում է պատմութեան առաջին երեսին և այդ ոսկեշար անուններն այնուհետեւ դառնում են անվերջ գարերի անկողողակելի սեպհականութիւն: Այս, մեծ մարդիկ իրանց փայլուն անուններով ու զործերով զարդարում են մարդկային պատմութեան էջերը: Նրանց կեանքով դաստիարակվում են սերունդներ. նրանց կարող

խօսքով զօրանում, յաղթանակում է սիրոյ, գեղեցկի, բար-  
ւոյ և ծշմարտութեան գաղափարը. վերջապէս, նրանց  
քրտնառատ աշխատութեամբ ու անընկճելի հոանդով  
տիռվում է լոյսը, յաղթվում է խաւարը, աճում, յա-  
ռաջադիմում է աշխարհաշինութեան հրաշալի՝ գործը:

Երանի այն ազգին, այն ժողովրդին, որ ընդունակ  
է իւր ծոցից ծնելու այդպիսի մեծ զաւակներ և նրանց  
փայլուն անուններով ու լուսաւոր գործերով զարգարե-  
լու մարդկային կեանքը, մարդկային կեանքի պատմու-  
թիւնը:

Երանի և՛ հայ ազգին—հալումաշ հայ ազգին, որ իւր  
ներկայ վեճակում գեռ ունի իւր մէջ այնքան բարոյա-  
կան ոյժ, այնքան կենսական զօրութիւն, որ այսօր հա-  
մարձակ կարող է մարդկային պատմութեանն առաջարկել  
իւր կրծքին սնուցած ՀՅ.Յ.Ի.Կ.ի պէս մի մեծ անձ-  
նաւորութեան անուն: Մի՛ անուն, որի հետ միշտ  
սերս կապուած է եղել լուսոյ, ազգային յառաջադիմու-  
թեան սուրբ գործը. մի՛ անուն, որի առաջ խորին ակ-  
նածութեամբ զլուխ է խօնարհում հինգ միլիոնի չափ  
ժողովուրդ. մի՛ անուն, որ իւր բարոյական վիթխարի մե-  
ծութեամբ և անյաղթեկի ուժով տիրասպետել է մի ամ-  
բողջ ազգի սրտին ու հոգուն. վերջապէս, մի՛ անուն, ո-  
րից այնքան հայրական խնամք, գործվ ու գգուանք է  
վայելել միլիոնաւոր հայ ժողովուրդը տասնեակ տարիների  
ընթացքում. . .

Եւ ահա այդ խնկելի անձն այսօր ամենային Հայոց  
Կաթողիկոս է:

«Վասպուրականի Արծիւը», որ հին Սիօնի բարձուն-  
քից միայն զողարիկ երտղներումն էր թռչում զէպի Մայր-  
երասխի տիժունքը, գէպի նուիրական Այրարատը, այսօր  
վերջապէս նա արթուն աչքով, լոյս ցերեկով ոլացաւ գէ-  
պի նոր Սիօն, գէպի իւր կարօտած Մատիսը Հզօր թիւ-

լով նա ձեղքեց ամպերը, անցաւ ծով ու ցամաք, լեռներ ու գաշտեր — և ահա հեռազէտ ու լուսահայեաց Ճախրում է էջմիածնի սրբավայրերում, սաւառնում է Լուսաւորչացն Տաճարի խաչապսակ գմբէթի շուրջը:

Մի՛ սիրտ, որ բազում տարիներ տանջվում, տառապում էր ազգի ցաւերով. մի՛ սիրտ, որի խորքերում ազգը կանգնել էր իւր դարեւոր հայրենասիրութեան, իւր դարեւոր ըղձերի նուիրական սեղանը — այդ մեծ սիրտն այսօր ուժգին տրոփում է Լուսաւորչի լուսաղարդ Գահի վրայ:

Եւ ազգն աննկարազելի ցնծութեամբ, հոգեպարար զգացումներով տօնեց իւր Հայրիկի Հայրապետութիւնը, իւր կեանքի այդ մեծախորհուրդ բոպէն, այդ մեծահանդէս տօնը:

Այդ տօնը հասարակ տօն չէր...

Հազարաւո՞ր յօյսերով, հազարաւո՞ր ակնկալութիւններով նա յուղում էր հինգ միլիոնտչափ հայ ժողովոդի սիրտն ու հոգին:

Այդ տօնն իսկապէս մի փառաւոր յաղթանակի տօն էր:

Յաղթանակի, որ տարաւ Հայրիկի մէջ մարմնացած բարոյական վեհութիւնն ու յառաջապիմական գաղափարը, Հայրիկի մէջ վառուող հայրենանուէր լայն ողին, Հայրիկի կրծքում եռացող ժողովսկասիրական անկեղծ, անհուն զգացմունքը:

Եւ զառամեսով ազգը վերստին ոյժ առած, վերստին զուարթացած, տսես մի կայտառ մանուկ, վիստաց ու ցնծաց, որ վերջապէս պսակուեցին նրա յօյսերը, և բանաստեղծի ասած, «առաքելաշաւիլ վեսայ զնաց մըմունջների ընդունարան էջմիածննը»: Գնաց, բազմեց Լուսաւորչի այրիացեալ Գահի վրայ, վերայրեց սզոյ քողը, ցրուեց երկրայութեան մոսյլը... Սակայն ազգի ցնծութիւնը հարիւրապատկվում է Հազարապատկվում է, երբ տեսնում է, որ այդ «առաքելաշաւիլ վեսան» իւր ինվելի

Հայրիկն է, երբ մտածում է, որ այդ Գահի վրայից այսուհետև պիտի լսէ ու տեսնէ կենդանի խօսք կենդանի գործի հետ, պիտի լսէ սիրոյ, ուսման և նոր կեանքի նոր քարոզ: Իրաւ է, եղել են նոյն աղքի կեանքում բոպէներ, երբ Լուսաւորչի Աթոռից դարձեալ վերացուել է սդոյ քօղը, Հայրապետական Գահին դարձեալ բազմել է Գահակալ, սակայն աղքային կեանքի այդ մեծախորհուրդ վայրինանն երբէք այսքան ցնծութեան արտասուք չէր քամած աղքիս աչքերից, այսպէս սաստիկ չէր ալիկոծած աղքի վշատանջ կուրծքը:

Դրա մեծ պատճառը ժողովրդասէր Հայրիկի մեծ անձնաւորութեան մէջ է. այն Հայրիկի, որ անշուռք խրձիթը չէ փոխել շքեղ պալատի հետ, զիւղացու ու հայը — ամիրայի սպիտակ հացի հետ... այն Հայրիկի, որի բոլոր կեանքնն — ինչպէս բանասանեղծն ասում է — առաքինութեան ծաղիկների մի զեղեցիկ շալք է, որով կարելի կը լինէր Երասխի նման ոլորուն գօտի կապել Հայրենեաց մէջքին»:

Երկինք, երկար կեանք պարզեիր Վեհ Ծերունուն, որ մեր կեանքի մութ գիշերին յաջորդէ լոյս ցերեկը, յուրա ձմբան — ջերմ գարունը:

Ա. ԽԱՏՈՒՐԵԱՆ.

Մուկուտ,



## ԶԱՏԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Զարմանալի խորթ և օտարոտի բնաւորութեան տէր մարդ էր իմ հանգուցեալ հաջի Ալահվերդին. ոչինչ բանով նման չեր իւր համշերակ հազարաւոր պանդխառութեան դառը վիճակին անձնատուր եղած հայատանցի մշակներին. եկաւ չեկաւ, ըսկիրեց մշակութիւն անել. մեր գուռար Ճանաշած օրից՝ ինձանից ըշհեռացաւ, մեր քնչըներում թափած զրքերն ու տպուած թղթի կտորներն էր կուլ տալիս, ել հայերէն զիբք ըրմաց, որ ըսկարդաց. իմ ունեցածով չեր բաւականանում, օրական էլ զիսացաւանք էր տալիս, որ ուրիշներից նրա համար զրքեր ճարեմ: Ցաւն այս է, որ բոլոր իւր կարդացածների համար իմ կարծիքն ուզում էր իմանալ թէկուզ ես այն զրքի թերթն էլ շրջած չըլինիս, մի և նոյն էր նրա համար. նա ինքը բովանդակութիւնը ինձ պատմում էր և կարծիքս հարցնում:

Սյուփիսով մի երկու ասրուց յետոյ՝ մշակութեան համար հայրենիքը թողած և զիսպուածով ինձ ծառաց մտած հաջին իմ անբաժան զրոյցընկերա դարձաւ և նրա դասողութիւններն ինձ համար գնահատելի համարուեցան: Թէսպէտ սկզբներումն էլ մի օրինաւոր ծառայ չեր, այնուշեաւ միանգամցն անպէտք դարձաւ և ես ստիսպուած՝

ինքս էի շատ գործը կատարում: Ինչ արած, խիզճ էի համարում ընդհատել նրան իւր ողերութեամբ ընթերց-  
մունքից: Քիչ չէր պատահել, որ աչքիցս կ'աներեռութա-  
նար. այդ, յաճախ, երեկոները կամ կիւրակի օրեն էին  
լինում, երբ ինձ համար ծառան անհրաժեշտ էր:

Երկար ժամանակ չըկարողացայ իմանալ թէ Հաջիս  
ո՞րտեղ էր անհետանում: իմ բարկացական հարցերը միշտ  
անվատասխան էին մնում, զլուխը կախում էր, աչքերը  
կորացնում և ծործորակը քերում եթէ, վայ ինձ, մի քա-  
նի ասպառակ էլ զարկում էի, նոյնպէս անշարժ և լուս  
էր մնում: ինչ կարես անել հարկադրուում էի լոել և  
հեռանալ:

Դեռ բարկութիւնս նոր էր սկսում զիջանել, որ զու-  
ռը ճռռում էր: Ակամայից ժաղիտը շարժվում էր այդ  
ժամանակները շրմունքներիս վերայ. գիտեի, որ Հաջին էր  
ուսերքը շարժելով ներս մտնողը, ևս սովոր էի նրա մե-  
ղյականին: «Ներողութիւն կըհայցեմ քո դժառասու-  
թիւնէն, կ'աշխատիմ, ողքան հնար է սակաւ բացակայել»:  
— Թոնէ իմանամ, թէ ո՞ր սե քարի տակն ևս կոր-  
չում:

— Այսօր չէ, օր մը կ'իմանաս, հարկաւ:

Այս պատասխանից յետոյ՝ էլ չէր կանգնում, հաս-  
տառ գիտեր, որ ներողութիւնն արժանացել է, ձեռքս  
բռնութեամբ խլում, համբուրում, ճակատին էլ գնում  
ու զլուխը կորացրած «էս զլուխ քեղ զուրբան» ասում  
և զուրս էր թռչում:

Երեք տարին անց էր, ինձ մօտ էր Հաջիս, և ոչ մի  
օր ես նրա երեսին ծիծաղ չէի նկատել. միշտ լուրջ, միշտ  
ստոր, յաճախ տիսուր: Առաջին անգամները դժուար էր  
թվում մի այդպիսի ձէթ մարդի քիթ ու պառնդին շա-  
րունակ նայելը, բայց վերջը սովորական եղաւ: Հաջին շան  
նման հաւատարիմ էր ինձ, իմ մի հոտ ծեփը կորչելը

իրան մահ հասածի պէս էր երեռւմ, իմ կոպէին աչքի լուսի նման էր նայում և այդքանը շատ գնահատելի էր ինձ համար, ես հոգեհան եղայ ծառաներ բռնելով և արձակելով. շատ էլ ճարպիկ հրամանատար, որ ոչ զբանաւմի մանր փողեր կը մնան և ոչ տանդ աննշմարելի իրեղիններ, ինչպէս ես պահում:

Ելքէք չեմ մոռանում. մի անգամ Աւագ ուրբաթ օրն էր, ընկերներս սլարտք գրին վզիս միւս երեկոյին թաթախումն ինձ մօտ կատարել մի հայկական ուրախ նախատօնակ անել:

Ո՞ր հայի համար տարուան երկու թաթախումը սուրբ ու նուիրական չէ, մանաւամնդ՝ որսնք օտարութեան լեզի բաժակը խմելու հարկադրուած՝ այդ մեծ օրերին ազգ ու ընտանիքից հետու՝ թաթախումի ձենեղէնն ու թարմ թարխունով պատրաստած ձուազեղով փլաւը և կարմիր ձուն կուլ չնալ զնալ մինչև սեղանիդ շուրջը բոլորուած չըլինին քեզ նման սիրելիներից անջատուած հայ եղբայրներ:

Ընկերներիս առաջարկութիւնը սրախ ջերմ ցանկութիւնն էր, սպասուեր տուի հաջուս ամենայն ինչ լի անել:

— Կարծեմ յարմար կու գայ, եթէ բայի փլաւէն ամեն բան սառը լինի:

— Ինչ կուզես արա, միայն ժամանակին պատրաստ լինի, որ ժամիցը գանք ու սեղան նստինք, թէյ չենք ուղիլ զուտ հայկական թաթախում պէտք է կատարենք: Միայն լսիր, հաջի, վայ քո կաշուն, եթէ յիմարութիւնդ բռնել է ու ըստ քո սովորութեան բացակայել ես, աւելացրի ես ցուցամասով զրէն Ճօճելով զիտէի բնութիւնը, հանգիստուոր օրերին միշտ կորչում էր:

Ճրագալուցի սպասարապից յետոյ շասապում ենք բոլորեկանս զէպի իմ կացարանր և ուզգակի մեզ ձգում սեղանասունը:

Սինեակը լուսաւորուած է, հացի սուփրէն լի է, ինչպէս առում են Աստծու մի հօգին կայ շարուած, ձուկ տապակած, ձուկ խաշած, - ձուկ խորոված, իշխանաձուկը կուտապ դրած՝ փորք համեմունքներով լցրած՝ պոջ բերանովը հանած, ո՞ր մինն ասեմ անմահական անուշահոտութիւն է բուրում կարմիր ձուն ու կանաչին էլ այդ բոլորի թագն ու պսախն են:

— Հաջի, մենք նստեցինք, ձայնում եմ ես ու սեղանի մի անկիւնում ինձ համար տեղ ծարում. ընկերներս արդէն մի-մի օդի գատարկած կարմիր ձու են կծպում:

— Հաջու՝ հետքը չի երեսում, բայց մենք գեռ այդ բանի համար չենք մոտածում, ոչինչ պակաս չըկայ, ինչ սիրոտ ցանկանում է առջելդ շարուած է: Ուտում ենք, խմում ու բաժակները միմեանց շրիկացնում:

— Հաջի՛, փլաւը, գոչեցի ես:

Բաւական միջոց անցաւ և Հաջին չըկայ, ինչպէս ասում են, անշարժ քարի տակովն է եղել:

— Հաջի՛, շուա փլաւը, Հաջի՛, Հաջի՛, փլաւը րե՛ր:

Ուրախութիւնից ժամերը աննկատելի թռչում են իրար ետևից, կես զիշերը մօտ է և ոչ փլաւ, ոչ Հաջի:

— Մեր աղայ, ի՞նչ եղաւ փլաւը, յիշեց ընկերներից մէկը, չըլինի ուզում ես մեղ հայ-քրիստոնէի փլաւից զրկել այս քո բազմատեսակ խաւիարներն ու շահմայեաները մեր աչքումը զին չունեն առանց ձուաձեղով փլաւի:

— Հաջի՛, նորից ծչացի ես ու վեր առայ փազեցի խոհանոցը:

Ինչ եմ տեսնում, Հաջուս հոսք չըկայ, բայց մարմանդ կրակի վերայ բազմած է փլաւի մեծ պղինձը: Բերանը բաց եմ անում և անոյշ գոլորշին համակում է խոհանոցի օդը:

Կրկին ծածկում եմ ափսէն ու ներս դալիս մէկ մէկ պատմում ամեն բան և յայտնում Հաջուս սովորութիւնը:

— Կեցցէ Հաջին, դուռը և են միտձայն ու մի քանիսը վեր թռչում գաղում խոհանոց, վլտւի սղինձը վերցնում ու բերում սեղանի վերայ ծանրագործ մշակող բաղմայնում:

Ի՞նչ վլտւ, կեանը ումնի կերած չես լինիլ. մանաւանդ երբ որ ուելացրինք վրան տակը դրուած թարիսւնով ձուաձեղը, մասներս էլ հետն ենք ուզում ուտել այնքան անուշահամ է:

— Կեցցէ Հաջին, առաջարիեց սեղանի կառավարիչը և բաժակները լցուեցին և Հաջուս փառաց 'ի փառաբարձրացրին իւր պատրաստած վլաւի համար:

Ուրախութիւնը շարունակուեց մինչեւ կէս զիշեր, բարի կինացը մի քանի անգամ վայելել ենք, խաղ ու խնդումներին, երդ ու ցնծումներին վերջ ըրկար:

Ամենքիս աչքը յանկարծ զիսի պատը դարձաւ, ժամացուցի ճօճանակի շաշեւնը մեր ուշազրութիւնը զիսի սլաքը քարշեց. կառավարիչը մի-մի վերջին բաժակ էլ լիքը սպասել է տալիս, որ զիշերուայ կիսին մի ազային կենացի հետ լման անի (լրացնի) մեր ուրախութիւնը:

— Հայոց Աղքի կենացը, յոանկանյս, գոռաց կառավարիչը և ուզում էր շարունակել ճառախօսութիւնը, որ սեղանատան դրուը մի սաստիկ բաղիսիւնով յետ բացուեց ու ներս ընկառ—ինչ էք կարծում, ով—իմ Հաջին: Նա խլեց կառավարչի ձեռքից բաժակը և ձայնը բարձրացրեց. — Ենորհաւոր զատիկ, տեարք իմ, յանկանում եմ հայուն այն ուրախութիւնը և որտի անսորդութիւնը, ինչ որ եկաւ երկու տարի առաջ Փրանսիական աղգին:

— Ձայնդ կարիք, անպիտան, բերանս եկաւ գոչել Հաջու վերայ զինու ովեորութեան ներքոյ, բայց նրա ձայնը խեղդեց խօսքերը կոկորդիս մէջ, մանաւանդ երք երկու ձեռքը բարձրացրած՝ նշան տուեց ամենքիս լուել:

Զըդիակմ ինչ եկերարական հոսանք էր, որ Հաջու-

աչքերից ներս ցորացաւ բոլորիս սրտումը և հնազանդ  
մանկան նման բունը կոխեց մեր ուրախ լեզուն, լուռ-  
թիւնը խանդարողը միայն ժամացոյց ձկձկոցն է, տունը  
բոնել է մեռելութիւն, կարծես ոչ ոք չըկայ, կարծես  
յատակին թափուած տասն տւուր դատարկ շշերը մեր  
պարապածը չըլինեն. բերաններս սեղմել ենք, որպէս զի-  
ջշախւ կատարած լինենք մեր հրամանատուի պատուերնե-  
րը, իսկ անողոք հրամանատարն այս բովեիս ոչ այլ ոք  
էր, եթէ ոչ աչքերիցը կրտկի կայծեր զուրս ցայտող  
չաջին. Մենք մեղագրելու չինք, ամենասրբու անվեհեր  
ու խիզախը կրնկճուեր չաջուս աչքերից. քաղցած զայլի  
շանթիչ բեր չեն խաղում նրա աչքերի մէջ, հապա  
ի՞նչ էին:

— Հա, լսեցէք, տեսնք իմ պատմեմ մի քանի խօս-  
քով թէ ի՞նչ ցանկութիւն էր, որ մաղթեցի ձեղ հո-  
մար, ձայնը զողացնելով յոխորում էր մեր վերայ հա-  
ջին. երեք տարի է, ես այս մարդու տանն եմ այս մար-  
դու հայն եմ ուտում (մասնացոյց արեց նա ինձ), իս  
եկել եմ Մշու երկրից, ես եկել եմ Խարբերդից, եկել  
եմ Վանից, եկել եմ գեօս ու ջհաննամից, ձեղ  
ի՞նչ՝ թէ որտեղեց եմ եկել, եկել եմ Անատոլոց, մոնել  
եմ Ստամբոլից, զուրս եմ եկել Ղարսից ու Բայաղիղից,  
ես տեսել եմ Տաճկոհայտատնի քաղաքներն ու զիւղերը,  
աեղեկացնել եմ նրանց տնային և արտաքին հանգամանք-  
ները:

— Գիտէ՞ք, ինչն է եղել ինձ Անատոլուն պատեցնո-  
ղը, իս ձեղ առաջին անգամը խոստովանուում եմ, որ  
ինքս յիշոծս աշխարհի ծնունդ չեմ և ոչ տաճկահպա-  
տակ, ես Արարատին աշխարհի զաւակ եմ, Գեղամայ  
ծռվակի ձկներով մեծացած մի անբաղդ արարած եմ, լե-  
զուիցս, հաղուստիցս ու զբաննումն ունեցած անցաթղ-  
թիցս մի՛ խարուեք, ես մեր տան մէջ կեղծ անցաթղ-

թով եմ ապրում, տան զաւակ՝ զիտմամբ՝ զբսեցի եմ ձեւանում. այդ միտքն առաջինը ծնաւ իմ մէջ Ստամբոլումը, ուր որ հանգիպեցոյ հաղորդաւոր թուլումբաշիների և բեռնակիր մշակների, որոնք բոլորիքեան Վանից, Մշեց ու Անտառօլուի հոյ զիւղացներից էին. Ես զարմացայ, որ այսքան մարզիկը թողած տուն ու տեղ, ընտանիք, կին, որդիք, եկել սրանդիսութեան մէջ վանաւմ են առողջութեան հետ իրանց երիտասարդական ոյժը, մոքումն դատապարտեցի այդ սառը մարդիանց անտարբերութիւնը որով վերաբերուում են զէպի իրանց մարդկային արժանաւորութիւնը. անաշխները մի չորքոտանուանատունի չափ անդամ արժեք չէին տալիս իրանց անձին, ի՞նչ սառոր ծառայութիւն ասես, անում էին, ամեն տեսակ վտանգուոր գործերի մէջ ներս էին ընկնում, հրդեհների բոցերի մէջ այնպէս սառնութեամբ էին մրանում և չին քաշուում, ինչպէս մեզանից մէկը կըմաներ դարերով մոռացած աւերակների մէջ, որի ամեն մի քարը ձեղքուել հեռացել է ընկերից, կախուած է օգի մէջ, կարծուում է, թե ուր որ է կընկնի, և կամ հէնց այսօր է տեղահան եղել բայց որ հաստատ զիտենք, որ մանկութիւնից աչքներո բացել և աւերակի դրութիւնը նշնն ենք տեսել երկրաշարժեր են եկել դնացել և կիսախարխուու աւերակի մի հատը չեն կուրպ կորպել:

Ես մասամոլոր մնացի, վճռեցի յետ թողնել ուխտս (Ես գնում էի սուրբ տեղերին երկրպագութիւն), մինչեւ որ մօտիկից ծանօթանամ այս պլներից ձեռք քաշած մարդկանց հետ:

Հեշտ անելիք էր, ամեն քայլափոխում կարող էիր դտնել մշակներ և մի քանի փարոյ տալով՝ քարշ տալ ուր կամքդ կըհածէր:

Այդպէս էլ արի, երկու-երեք շաբաթ լսոն ու զործս շինել էի այդ մշակների կեանքն ուսումնասիրելը; Հարց-

նում էի ամենքից, զարմացք էի յայնում և բոլորից միատեսակ յուսահատ պատասխան էի ստանում. նրանք պատմութիւնները, ձնշումները, արհեստական կերպիւ հարատահարութեան ձեռքով աղքատանալը, պարագիւ տակ ծանրաբեռնուելը և իրանց միբելիների դառն վիճակը թեթեադնելու միակ հնարը՝ զարեւութեան լեզի բաժակը խմելը, մարդիկն իրանք խոստովանում էին, որ իրանց տասներորդ մասը հազիւ է վերապառնում տուն, կամ մի չնչին օդնութիւն հասցնում ընտանիքին, մնայածնելը փշանում են օտարութեան մէջ, մեռնում են խոնաւ ու նեղ տներում անտերութիւնից, բայց որ Էլի տէրութեան միակ ելքը՝ այս անտանելի վիճակն են որոշել:

Մեղքու չեմ թափյնում, անհաւատալի էին թուռմ ինձ նրանց պատմածները՝ ուստի մաքումն զրի ոուրբ երուսաղէմից վերագրանալուո՛ Անտառոլուո՞ն անցնել և անձամբ հասու լինեմ:

Այդպէս էլ արի, երեք տարի զիւղէ զիւղ գտառոէ գաւառ թափառեցայ ոտքով իբրև մուրացկան և հաւաստիացայ, որ Պօլսոյ մշակնելն իրանց նեղութիւնների հարիւրերորդը չեն կարողացել պատմել, իմ թշնամուս աչքերին կը ինայէի տեսնել, ինչ որ ևս ականտառես եղայ:

Հաջիս այստեղ մի ժամաշափ աղիողորմ և աղէշարժ խօսքերով նկարագրում էր մեզ Տաճկահայաստանի հայերի կեանքը: Փուչ կենդանին հարամ արեց ուրախութիւններս, զինու փոխարէն արտասունք էինք կուլ տալիս, նոր տարին ու եղաւ մեր պլանին:

— Այնուհետեւ, տեսարք իմ, շարունակեց Հաջին, ես եկայ մեր երկիրը, եկայ այս Տփիսիս քաղաքը, եկայ որ, իբր թէ, իմ կարծ խելքովս Պօլսի մեր զարիք եղբայրների ցաւին մի գարման գտնելու և վայ ինձ, այստեղ էլ նշնը տեսայ, ինչ որ Պօլսում. ես չըդիտէի, թէ Տփիսիս

Հոյակասղ, ընդտրձակ շէնքերի վերայ բանող բոլոր մշակները, երկնանման բարձրութեան համար կարեւոր հոդ ու տղիւս ուսով վեր տանողները ամենքը մի և նոյն Տաճկատանի հայերն են, եկայ և զայ որ Տփխիսեցի հայի ձեռքից ամենքից աւելի հարատահարուած և արհամարհուած մշակը Մշեցի հայերն են, սրանք են ամեն անարդ ծառայութիւն կոտարողները, սրանք են չնչին կոպէկներով այս քաղաքի աղք թափողները, չնչին կողիկներով եմ տառւմ, որովհեաւ հայ մշակի շալտկոծ աղքի տասներորդ մասի ծանրութիւն ունեցող ապրոնք փողոցից տուն բերող իմերէլ մշակին եռապատիկ աւելի և վճարուում:

Ի՞նչ պէտք է անեի ես, վճոեցի ինքս էլ տաճկատանցի կերպաւորուել, տաճկատանի անցաթուղթ ձեռք բերել և իբրև տաճկատանցի իմ տիրոջս ծառայ մըտնել (կրկին ինձ ցոյց տուեց հաջին) և գորա ներողամուռեան չնորհիւ մի կողմից կարգալով ինքո զարգանալ միւս կողմից իմ տկար լեզուովս գործից ազտաժամանակները զիտեցածներս հաղորդել մարդկանցից և Աստուածանից մոռացուած անբաղդ հայ մշակներին:

Ես մեզաւոր եմ իմ տիրոջ տուաջ, սորա հրամանին համաձայն ես պէտք է ինքս ծառայէի ձեղ, բայց յոյս ունիմ որ կըներէ իմ ոգորմած աւերս և գուք էլ նորա հետ, եթէ ես տսեմ, որ զնայել էի սրբելու քառակից աւելի մշակների աղի աղքերը թափելով, աչքերովը ահսել են սյն հազարաւոր սնոյշ կերակուրները, մոնել են հարուաս արիխիսեցւոց աները, բայց որ հայրենիքումը իրանց զաւակներն են քաղցած ու մերկ ցրտի ձեռքից դրդողալով քնի մէջ մտել, ևաման բաւօ (հայրիկ), ուր ես արպիօք կանչելով, իսկ իրանք էլ մի կատը քասթու (հին հայ) զըի մէջ թաթախել են, բայց նշանաւոր օրուան յիշո-

դութիւնը կասպել է նրանց առաջնելը, ծնօտները յիշ  
չեն բացուել որ ծամեն, կուլ տան մի քիչ ոյժ ժողո-  
վեն, որ վաղը մի և նոյն խաչը կրեն:

Այսուհետեւ առաջ իմ իմ աէրս շատ անգամ է վրաս  
բարկացել շատ անգամ է հարց ու խնդիր եղել թէ ուր  
եմ ես կորչում տուաւելապէս այսպիսի նշանաւոր օրերը,  
ուզեցել է իմանալ իմ յարատե արամութեան պատճա-  
ռը, բայց եռ չի ասել ես սրանից թաղցրել եմ՝ սրա  
զգացուն սիրալ չպատահնելու համար, ընչու ասէի, քա-  
նի որ աւելի պիտք է վիշտ պատճառէի, ի՞նչ կրգար սո-  
րա ձեռքիցը, մի մարդու ուժից վեր է այս չարկից յա-  
ռաջն առնելը:

— Իսկ դու ընչով ես միսիթարում նրանց, Հաջի,  
հարցրի ես:

— Ես նրանց համար կարգում եմ զանազան յու-  
ստղական պատմութիւններ, որով մի քիչ սփոփում  
եմ նրանց ցաւերը և ահա այս երեկոյեան կարգացածիս  
ապաւորութեան ներքոյ ցանկացայ հայ ազգին Փրանսիա-  
կան ազգի անդորրութիւնը, ես կարգացի իմ ունկնդիր-  
ներին այս կտորը, որ ինքս թարգմանեցի մի գրքից:

Հաջին ծոցիցը հանեց ռուսերէն գրքի մէջ գրուած  
մի ձեռապիր տեարակ և մեկնեց գէպի ինձ: Գիլքը մի  
վեպ էր Փրանս-պրուսական պատերազմական անցքերից,  
իսկ ձեռապիրն այդ գրքի մի կտորն էր հայերէն թարգ-  
մանած:

— Ի՞նչպէս, Հաջի, միթէ դու ռուսերէն էլ գիտես:

— Գթասրտութեանդ շնորհիւ զիշելները պարտապ-  
ում էի և ինչպէս տեսնում ես, թէև սոււտ ու սիսով,  
բայց թարգմանել եմ, պատասխանեց նա իմ հարց-  
մունքին:

Ընկերներիս խնդրանաց համաձայն Հաջին ինքը կար-  
գաց իր թարգմանութիւնը. վիսլաստնը մանրամասն նկա-

րաղբել էր ֆրանսիական ամբողջ ազգի անվանիթար զբութիւնը, երբ պրուսացիք Փարիզ մտան Հնաց այդ ժամանակները մի ազգային տօն օր է մօտենում. ամեն տարի այդ տօնի ժամանակ ամբողջ Ֆրանսիան ուրախ է լինում, ձրագալոյցներ և հրագութիւններ են կատարուում, իսկ այդ օրը՝ ամեն տուն գուոր փակած սուդ է անում:

Նատ չե քաշում, պղուսացիք հինգ միլիարդ պղուսերական կոնտրիբուցիան են առաջարկում. կարծելով, թէ անհնարին կը լինի վճարել և երկիրն իրանց կը մնայ. բայց ինչպէս զգջում են, երբ մի քանի օրում՝ միլիարդների մեծ, մասը վճարուում է հայրենասէր ազգի անձնամիբութեան շնորհիւ:

Ավասոս երկարում են յիշողութիւններս, ապա թէ ոչ են կրկարդայի այն կոտրները, երբ իւրաքանչիւր ֆրանսիացի՝ աղքատ թէ հարուստ, մեծ թէ փոքր, կին թէ աղամարդ զարդարուած իրենց տօնի հաղուստներով ու թանդապին շորերով՝ գնում են, մանում քաղաքական տան դահլիճը, համում այնաեղ իրանց բոլոր շքեղ հագուստները, թափում իրանց ամբողջ դանձը մինչեւ վերջին սուն (կոտկէ) և ուրախ ուրախ զուրս զալիս տակին ունեցած հասարակ էժանապին շորերով։ Մի առ մի նկարագրուած էին բոլոր իրեղինները՝ ոսկեղին, արծաթեղին, աղամանղեղին, պղնձեղին և կերպասեղին։ Մտնում էր միլիօնատէր մարդիրն իւր շոայլ հագուստով, ծոյ ու զրպանը փողով ու գոհարներով տռած և ամենը թափում, գուրս գալիս մի հասարակ ֆրանսիական արհետառորդի վերնաշապկով (բլուզ):

Գալիս էր կոմսուհին, կամ բանկիրի կինը քառամին նժոյգներով լծուած ուկենկար կառքի մէջ թիկնած, ոսկեշղթայ ժամացոյց կախ, մարգարտաշար մանեակը բայց լանջի վերայ ծօճերով, ջայլամի թանկագին փետրաւոր փեղջորը զլիին, ներս մտնում դահլիճը, թափում այն

առևնը և դուրս գալիս հասարակ գեղջկուհու չեթ շորի մէջ, զլուխը մի քանի կոսէկանոց թաշկինակով կտպած և առանց աջ ու ձախ նայելու, աչքերը գետին ձգած՝ ուսքով գնում էր գեղի իւր տունը, գալիս էր հարուստ վաճառականը պայուսակը կոնտառակով կախ, տուղած պայուսակը իւր մէջ ամփոփած բանկի տումնակներով թողնում է գահլիճումը և նշյնպէս սոսկ վերնաշապկով զլուխը կախ՝ գնում:

Այսպիսով ահա երկու ամսում Փրանսիացիք վճարեցին այնքան պատերազմական առողջական որոշումք, որ բոլոր եւրոպան զուցէ տարիներով դժուարանար վճարել:

Այնուհետև նկարազրուած էր այն ուրախութիւնը, որ պրուսական զօրքի մի մասը Փրանսիայից վճարքի ուժով դուրս հանելուց յետոյ՝ Փրանսիացիք կատարել են: Տօն ու զատիկ չի եղել, բայց նրանք ստեղծել են մի նոր օր և անունը զբել վերակենդանութեան նոր օր ու այնպէս տօն են կատարել որ շատ տարիներ չեն եղել կատարած: Կարծեմ յուշին էր:

Ահա, տեսարք իմ ընթերցմունքը վերջացնելուց յետոյ զարձաւ հաջին գեսպի իւր լուս ունիսիրներն, այս կտորը կարգացի այս երեկոյ իմ սիրելի թշուառ հայատանցի մշակների համար, սրանով մենք զատիկ կատարեցինք. այս յօգաւածով ես մի քանի բոսպէ մոսացրի խեղձերին իրանց ցաւելը և այդ տպաւորութեան տակ լարի գիշեր մաղթելով՝ շտապաւ հեռացայ, ըրկամելով ականատես լինել այն հիսութափութեանը, որ մի քանի րոպէից յետոյ գալու էր նրանց վերայ, և որովհետև, ինչպէս տեսնում եմ, իմ յիմար վարմունքս առկթ տուառ ձեղ կարծ միջոց ընդհատելու ձեր ուրախութիւնը, ես իմ կողմից շնորհաւորելով ամենքիդ զատիկը, ցանկանում, որ ձեր բարեկան տիրութեանը հետեւի այն ուրախութիւնը, ինչ զգացին Փրանսիացիք իրենց ստեղծած

նոր տօնի օրը. ուստի, կեցցէ՛ հայ և հայութիւն, դոչեց Հա-  
ջիս և լիքը բաժակը գատարկեց ու զուրս թռաւ:

—Հաջի՛, Հաջի՛, Հաջի՛, գոռացի ես և քամուկիցը  
դուրս վաղեցի, Հաջի՛, Հաջի՛, Հաջի՛, կրկնեցին ընկերներու  
հետեւելով մթութեան մեջ ինձ, Հաջի՛, Հաջի՛... Ձի՛...  
Ձի՛... Ձի՛... կրկնեց արձագանգը Սոլուակի խոր ձորամ,  
ուր ես ընակուում եի. բայց կրկին լուս թիւնը աիրեց,  
Հաջիս մի ասեղի նման անհետացաւ:

Տան և ութ տարի է անցել այն օրից և ես ոչինչ  
աեղեկութիւն չունեի Հաջուս մասին. երկու ամիս է միայն,  
որ նրա մահուան բօմբը ստացել եմ էջմիածնից:

ՊԵՐՃ ՊՌՈՇԵԱՆՑ.



## ԹԱԳՈՒՀՈՒ ԱՐՏԱՍՈՒՔԸ.

(աւանդութիւն)։

### I.

Ծեր Ռւզուն-Խանը տխրեց Այլ ևս նորան չէին  
միսիթարում ոչ կանաչ այզիները, որ պատել էին նորա  
ասպարանկը, ոչ կարկածիւն շատրուանները, ոչ իւր զօր-  
քի յաղթութիւնները, ոչ խանի առաջին խորհրդական  
Զուշի-Քաթէմը, որին ծեր խանը անուանում էր «Կրկու  
աչքից» աւելի լաւ», ոչ խանի պարտէզների վերահսկող  
խորամանկ Ալթուն-Թիլքիի (ոսկէ աղուէս) հէքիաթները,  
ոչ էլ վերջապէս պալատական բանաստեղծ և ուսումնա-  
կան Ավուջի-Բօշի խելացի գատողութիւնները և ուսանա-  
ւորները։ Մաղկափթիթ Կանաչ Քաղաքը, ուր հաւաքուած  
էին Ռւզուն-Խանի տասն հարեւան աւերակ դարձրած տէ-  
րութիւնների գանձը, լուռ էր, սպասում էր, թէ ինչով  
կրվերջանայ խանի արտմութիւնը, գուցէ նոր պատերազմ  
յայտնուի, կամ բանկերում վեգերուող թշնամիներին  
ակսեն կախել. կամ գուցէ խանը ուրախանոյ և այնպի-  
սի մի խնջոյք տայ, որ ուրախութիւն կըպատճառէ տաս-  
նեակ հազար ժողովրդի։ Սակայն խանի պալատում լուռ  
էր, ինչպէս մի գերեզմանում, իսկ ծեր Ռւզուն-Խանը՝ շար-  
ժելով իւր զառամեալ, տասանուող գլուխը, տառւմ էր  
Ալթուն-Թիլքիին։

— Ալթուն-Թիլքի, զուարձութեան համար արդեօք չկախեմ քեզ. բայց որպէս զի տիսուր չլինիս կախուած ժամանակիդ, կախել շամամ քեզ մօա և աշխարհիս ամենառաջականին՝ Ավուղի-Բօշին:

— Սրեգակը տւելի պայծառ չի լինիլ, եթէ հանդցրնեն երկու խեղճ, ազօտ լոյս տուող ճրագ, — պատասխանում էր խորամանկ Ալթուն-Թիլքին: — Բայց խանի սիրտը մի և նոյնն է թէ անեզը ծոփ այն տեղ ամեն մէկը կրխորասուղուի և կըխեղդուի, ով որ համարձակուի նայել տակը...

Մեր Ուզուն-Խանի գլուխը արգէն վաղուց էր տատանվում իսկ գէմքը սաստիկ գեղին էր, կնծուապատ, բերանում ոչ մի առամ չկար, ներքին ծնոտը կախ էր ընկած, իսկ աչքերը պղտորուած էին և միշտ արտասուք էր թափիվում: Արտաքին այս այլանդակութիւնը ծածկը վում էր թանկաղին մետաքսով հաղուազիւտ մորթերպ, ոսկով ու թանկաղին քարերով, այնպէս որ խանի հաղտակիները որոնք տեսնում էին հեռուից, առաջուսց պէս նորան բոլոր թագաւորներից հզօրը, ուժեղն և խմատունն էին համարում: Որդիքը նոյնպէս մօաից չէին տեսել ծեր խանին, իսկ նորա ընտանիքն էլ փոքր չէր. հարիւր տղայ ունէր և երկու հարիւր աղջիկ: Միայն մերձաւորները գիտէին, թէ ինչ բան է Ուզուն-Խանը՝ իւր ժամանակի նշանաւոր աիրապետողը, որ արիւնաշաղախ էր արել ամբողջ տէրութիւններ, որ տասնեակ բարգտուած քաղաքներ էր աւերել և ամսյի դարձրել բաւականին շատ հարեւան նահանդները:

Ալթուն-Թիլքին միակ յօյն էր մնացել, որ մինչև այժմ չէ խարել նորան. աիրող Ուզուն-Խանը սովորաբար վերջացնում էր այսպէս. իւր սպալատիան պարտէղներում էր մսիթարքում, ուր հաւաքուած էին արեւելքի բոլոր գեղեցկուհիները: Պարակներից մէկի անունը Աթա-

ՓԵԹՆԱՄՀՀ էր, իսկ միւսը — Բաղե-Դիզիշտ Այս պարտէգ-ներում բաւականին շատ կային խանի կանչք, հարձեր և նաժիշտներ, որոնք ասորիներով էին սպասում, թէ ով կարժանանց խանի փաղաքուշ հայեացքին, — այսպէս ծաղիկները միայն սպասում են զիշերային ցողին և թօշ-նում, եթէ երկինքը փակվում է, ինչպէս փակուել էր խանի ծեր սիրառ: Մակայն խանի սիրառ ծովից լայն էր և նորա հայեացքից չէր խուսափում իւր համայն տե-րութեան ոչ մի գեղեցիուհին, իսկ խանի տռաջին խոր-հրագակն Զուշի-Քաթէմը աւելի ևս յարգանք էր վայե-լում Ուզուն-Խանի կողմից իւր արժանաւորութիւնների համար, խանը խել էր նորա մօրը, կնոջը և աղջկանը: Զուշի-Քաթէմը ընդունեց խանի ողորմութիւնը ուրախ գէմքով և մինչև գեաին կուսալով՝ կրկնում էր.

— Երկնքում մի արեգակ կայ, երկրում մի Ուզուն-Խան և չնչին Զուշի-Քաթէմի մի գլուխը, որ մտածում է միայն, ինչպէս հաճոյք պատճառէ երկրիս արեգակին...

— Ո՞հ, Զուշի-Քաթէմ, իմ երկու աչքիցս աւելի լաւը, ինչպէս ևմ կարող ես գնահատել քեզ արժանի կերպով, — Հարցնում էր Ուզուն-Խանը, շարժելով իւր ալեգարդ գլուխը: — Միայն մի Ալժուն-Թիլքի ունիմ, և երբ նորա բերանում մի ատամ կրմնայ, այն ժամանակ ես նորան քեզ կըտամ...

Զուշի-Քաթէմը և Ալժուն-Թիլքին ատում էին մի-մեանց, ինչպէս կատուն և մուկը՝ պոչերով միմեանց հետ կապուած, որավհետեւ երբէք չէին կարողանում հաւա-սարապէս վայելել խանի սէրը: Ուզուն-Խանը զուարձա-նում էր, տեսնելով նոցա կոիւը և ստիպում էր Ա-վուջի-Բօշին հաշտեցնել նոցա, — մեծ ուսումնականը կա-րողանում էր նայել ամեն բանի վերայ խանի հայեաց-քով և լսել բոլորը խանի ականջներով:

Այսպէս Ուզուն-Խանը տիրում էր... Լուռ ու մունջ

Եին խանի պարտէզները, ինչպէս երկու կանաչ գերեզման. ի գուր էր պտտում պալատում Ավուջի-Բօշը, խանի համար նոր զուարձութիւն Հնարելով, իսկ խորամանկ Ալթուն-Թիլքին մտածում էր և միայն մտածում, և նորա մոքերը այնպէս էին թռչկոտում գլխումը, ինչ պէս չղջիկները հին աւերակներում: Ամբովջ կանաչ Քաղաքը աւելի չեր կարող Հնարել քան թէ խորամանկ պառաւը: Վերջապէս նա հնարից... Ո՞հ, որպէս թնդաց նորա ծեր սիրող, երբ յղացաւ այդ երջանիկ միոքը և ինքը ուսումնական Ավուջի-Բօշը, պառաւի գաղտնի խորհրդականը և հաւատարմատարը ասաց նորան.

— Ալթուն-Թիլքի, աշխարհիս բոլոր ուսումնական-ները քո մի կոճակին էլ չեն արժանի. և կթէ ես խան լինէի, կըհրամայէի, որ քեզ ոսկէզօծեն... Եւ խանը կ'ուրախանայ քո հնարածից... և Զուչի-Քաթէմը կըխմէ տան-ջանքների թասը մինչև վերջին մրուրը:

Կանաչ Քաղաքում ոչ ոք չգիտէր Ալթուն-Թիլքի հնարածն, և միայն մարդարտեայ շատրուաններն էին արտասվում գիշերային լրութեան ժամանակ, երբ խանի պարտէզներում քնած էին վեղեցկուհիները, իսկ սոխակը բարձրածայն երգում էր սէր, բերկրութիւն և յաւիտենական երջանկութիւն: Ալթուն-Թիլքին ամեն երեկոյ գալիս էր Ուզուն-Խանի մօտ և պատմում էր նորան հեքիթներ, մինչև որ ուժասպառ ծերունին քնում էր:

## II.

Ուզուն-Խանը առաւօտեան վաղ կանչում է իւր հաւատարիմ սարուկ Զուչի-Քաթէմին և ասում նորան.

— Երկու աչքից աւելի լաւը, ես ողջ գիշերը մըտածել եմ... իմ համայն թագաւորութիւնը քնած էր մեռելական քնով՝ սկսած աղքատներից, իշապաններից,

Հանդէս Տ.

թափառաշըջեկ դերվիշներից և վերջացնելով զինուորական պահապաններով, որոնք նշանակուած են իմ պալատը պահպանելու, —այս, ամենքը քնած էին, և միայն ծեր խանն էր արթուն: Նա մտածում էր, թէ անարդարացի է ապրում, և ի վուր տեղը շատ արտասուք է թափել տուել: Խանն էլ միւսների ովէս մարդ է, —նա ուղար պէս տասը փար չունի, վեշապի պէս քառասուն աչք չունի, և միայն մի սիրտ է, ոյնպէս չէ, մեծ ուսումնական Ավուջի-Բօշ:

Զգացուելով՝ նա միայն աչքերը փակեց և ձեռը դրեց լանջին. իսկ միւս սենեակում, վարագոյրի հաւե՛ թագնուած ուրախանում էր Ալթուն-Թիլքին: Ի հարկէ, Ուղուն-Խանը ծեր է և նա զժուարանում է իւր սեպհական մարմինը կրելու, բայց նա այժմ էլ սուր խելքի տէր է, ինչպէս և առաջ, —ինքը Ալթուն-Թիլքին այնպէս չի խօսիլ, ինչպէս Ուղուն-Խանն է խօսում:

— Իրաւայի՞ է, եթէ մէկը առնէ իրեն համար հազար երիտասարդ և դեղեցիկ կին, —շարունակեց խանը, շարժելով զլուխը: — Նա նմանում է այն անմիտ մարդուն, որ ծարաւը կոտրելու համար չէ բաւականանում մի գետի ջրով և վագում է դէպի միւսը գարձեալ ծարաւի, մինչեւ որ ուժասպառ ընկնում է: Մեր պալատական Ավուջի-Բօշ ուսումնականը, երկիւղ կրելով զլուխը կորցնելուց, այդպէս էլ յայտնեց. «Պա անարդարացի է»: Նա մինչեւ անկամ վախեցաւ խանի բարկութիւնից և ուղղակի ասաց. «Պու, Ուղուն-Խան, ծեր ես և քեզ անհրաժեշտ է մտածել քո մոլորութիւնների մասին, որպէս զեռողջուես զօնէ ծերութեանդ ժամանակ»: Ավուջի-Բօշը ծմարտութիւն ասաց, և ես արքայտվայել կերպով կը վարձարեմ նորան իւր համարձակութեան համար: Այս, ես իրաւացի չէի... Եւ ամենից աւել ես անարդար էի քո առաջ, Զուչի-Քաթէմ, իմ ջռւխտ աչքիցս էլ լաւը,

որովհետև անարգեցի մօրդ, լսկցի կնոջդ և խայտառակեցի աղջկանդ: Այժմ ես ծեր եմ և կամենում եմ ուղղուել: Նայիր աղաւնիներին, պորերին, սոխակներին, արջերին, առիւճներին, տես՝թէ ինչպէս են ապրում: Ամենահեղ թռչունը, ամենասպիտակ թռչունը և ամենաքաղցրաձյան թռչունն էլ ապրում է իւր կողակցի հետ, որովհետև նա օրինակ պիտի ցոյց տայ միւս գազաններին: Նոյնն էլ ես եմ կամենում անել, Զուչի-Քաթէմ, և քեզինձ օգնական եմ ընտրում... Դու գիտես, որ իմ նշանակած մարդիկը ամեն գարուն շրջում են իմ թագաւորութիւնը և ընտրում իմ պարտէջների համար ամենազեղեցիկ աղջկերանց; Միւսները գնում են ուրիշ տէրութիւններ և գնում ամենալաւ հարծերին,—ես ոչինչ չկի ինայում, որ ամենալաւ վարդերը Բաղի-Դիգիշում և Լէթաֆէթ-Նամէհում ծաղկեն: Սակայն այդ մարդիկ ինձ խարում էին: Բայց իմ սիրած միշտ սառն էր մնում, որովհետև նոքա չին կարողանում գտնել այն աղջկան, որ կարողանար երջանկացնել ինձ: Դու, իմ երկու աչքիցս աւելի լաւդ, կ'անես այդ, և արդէն մէծ ուսումնական Ավուջի-Բօշը զուշակել է քո յաջողութիւնը... Գնա՞ և գտիր նորան, որ կըվերազարդնէ ինձ երիտասարդութիւնս, երջանկութիւնս և ուրախութիւնս: Ինձ խարածներին ես կըհրամայեմ կախել, իսկ քեզ կըպարզեւեմ նոցա կայքը կանանց և որդիներին: Քո օգնականը կըլինի ամենասուստնական Ավուջի-Բօշն:

Զուչի-Քաթէմը խոնարհ կերպով զլուխ տուեց և դրւրս եկաւ: Նա չէր հաւատում խորամանկ ծերի ոչ մի խօսքին,—Ուղուն-Խանի ամեն մի խօսքի տուկ թափնուած էր մի մի թունաւոր օձ: Կախելուց առաջ նա շատ սիրալիր կերպով էր վարվում իւր թշնամիների հետ և բաւականութիւն էր ստանում նոցա զիւրահաւատութիւնից, իսկ իրեն օգտակարներին նա հալածում էր նուրբ

պատիմներով, ինչպէս և եղ առ Զուշի-Քաթէմի հետ:

Խնչպէս խանը ասաց, այնպէս էլ արաւ: Երեկոյեան Զուշի-Քաթէմը ստայաւ հինգ տոպրակ լիքը մահապարտների գլուխներով և կենդանի Ավուջի-Բօշին, որ եօթ ոչխարի յիմարտութեան տէր էր: Խանի կին գտնելու ցանկութեան լուրը արդէն տարածուել էր Կանաչ Քաղաքում, և խանի պարտէզներում սարսափելի իրարանցում կար: Դա այն սովորական բանը չէր, երբ զարնան հաւաքում էին խանի համար հարձեր, այլ մի նոր բան էր, որ ստիպեց մտածել խանի հին կանսնց և խանի բոլոր երեխայոց մայրերին: Մի բան կը լինի, երբ գայ այդ միակ աղջիկը: Խանի պարտէզներում լաց ու կական բարձրացաւ, ուր մաշվում էին նորա գեղեցկուհիները և միայն անտեսանելի տոխակն էր բարձրաձայն դայլայլում, ի զուր միթթարելով սիրուց տոչորուող վարդերին:

Սակայն Զուշի-Քաթէմը ձեռնամուխ եղաւ գործին: Գաւառներում գտնուող բոլոր զօրքերը ենթարկվում էին նորա կարգազրութեան: Հազարապեաներից և հարիւրապետներից համարզների մի ստուար խումբ էր կազմուել, որոնք պարտական էին Հպատակուել նորա իւրաքանչիւր հայեացքին: Ամբոխը սովոր էր այդ տիսակ հանդէսների, և շատ ծնողներ մտածում էին այն երջանիկի մտախն, որ իբրև թագուհի պիտի մտներ Կանաչ Քաղաքը: Հազարաւոր աղջիկներ՝ տասն և չորս տարեկանից սկսած մինչև տասն և վեց տարեկան սպասում էին, որպէս մի մեծ աօնի, թէ երբ կը զայ Զուշի-Քաթէմը. իւրաքանչիւրը երազում էր խանի կինը զառնալու: Ամենքը զոհ էին և միայն Զուշի-Քաթէմն էր, որ ման էր զալիս մտախոհ և տխուր —մի վատ բանի նախազգայշունքը տանջում էր նորան: Երբ ստորագրեալները գիմում էին նորան և մի բան հարցնում, նա յօնքերը կիտում էր և ասում:

—Հարցրէք Ավուջի-Բօշին, նա ամեն բան զիտէ...

Պալատի փորսպարշ մեծ ուսումնականը այժմ անհուն բերկրութիւն էր զգում և այնպէս էր ձիռվ ման գալիս, ասես, թէ յաղթական տարած նուածող լինէր, որ նոր միայն մտնում է իւր տիրապետած երկիրը: Արդարե նոյն ամեն տեղ իշխանների նման էին ընդունում: իսկ Ավուջի-Բօշը սիրում էր պատիւ, գէր ոչխարի միս և պարապութիւն իւրաքանչիւր քաղաքում նորան ներկայանում էին աեղական ուսումնականների կողմից պատգամաւորներ և ի պատիւ զիսութեան այդ խոշոր աստղի ստրկական ոստանաւորներ էին կարգում, որոնցից կարող էր պացյա գալ մինչև անգում ուղար զլուխը, սակայն Ավուջի-Բօշը իրեն համեստ էր ցոյց տալիս և չէր ուզում իւր իմաստութիւնը ցոյց տալ: Բայց ինչպէս հպարտ հպարտ էր բարձրացնում նա իւր զլուխը փոքրիկ զիւղերում, աւաններում, կարծես, թէ մարդարէ լինէր: Եւ նոր պարուտկանութիւնը գուր էր գալիս ծեր-ուսումնականին, նա ինքն էր անձամբ նայում օրիորդներին, որպէս զի չանհանգստացնի անարժաններին՝ հեռաւոր ձանապարհորդութիւն անելով դեպի խանի պալատը:

Այսպէս երեք ամսում նոքա համարեա պտտեցին, ամբողջ տէրութիւնը և մինչև հազար աղջիկ հաւաքեցին: — Այժմ մենք էլ կարող ենք վերադառնալ — վճռեց Զուչի-Քաթէմը: — Խանի հրամանը կատարուած է...

— Չէ, մենք համայն աէրութիւնը պիտի անցնենք, — վեճում էր Ավուջի-Բօշը մի անբացարելի յամառութեամբ: — Մենք պիտի նայենք բոլոր անկիւնները, որպէս զի մաքուր խղճով ներկայանանք խանին... գուցէ խանի երջանկութիւնը թագնուած է մի որ և է խուլ տեղում:

Անկասկած, Ավուջի-Բօշը յիմար էր, բայց այս յամառութիւնը անհանգստութիւն պատճառեց Զուչի-Քաթէմին, և նա սկսեց արհամարհել աշխարհիս ամենամեծ զիտնականի զլուխը: Ի զուր չէր ծեր խանը ուղարկել այդ

շատախօսին նորա հետ, և Զուշի-Քաթէմը սկսեց կասկածել: Միթէ այս բոլորը որոգայթ էր լարուած նորա դէմ:

## III.

Ուզուն-Խանի թագաւորութեան հիւսիսային սահմանը Սոված Տափաստանն էր: Մի ժամանակ դա բարգուած երկիր էր, բայց Ուզուն-Խանը նուածեց նորան, աւերեց քաղաքները, բնակիչներին մասամբ կոտորեց, մասամբ էլ քչեց ուրիշ կողմեր: Եյն երկիրը, ուր հողը ամեն աեղ վարած էր, ուր պարտուու ծառերով լի պարտէներ ու այգիներ էին կանաչում և տարին երկու անգամ արտերը ծածկում էին բեղմնաւոր հունձերով, այժմ սովալլուկ տնապատ էր, և միայն քամին էր խաղում այնտեղ, որ աւազով լորել էր քաղաքի աւերակները, ջրհորներն և արքքների աշազին ցանցը: Զուրը ցամաքեց, և Սոված Տափաստանի վերայ իշխում էր մահիր: Նորանից հետու էին քաշվում վաճառականների կարաւանները, հովիւներն իրենց հօտերով և մինչեւ անգամ անսպատական աւազակները: Սակայն Ուզուն-Խանը հըպարտանում էր դորսնով, որպէս իւր զօրութեան ապացուցակ. նորա մի խօսքը միայն ամբողջ տէրութիւն անսպատ էր գարձնում: Եյսպէս էին անում բոլոր մեծ նուածողները: Կանաչ Քաղաքից մինչեւ Սոված Տափաստանը տասն օրուայ ճանապարհ էր: Բայց ահա քառասուն տարի է, որ ոչ ոք այդ կողմը չէ գնացել, բացի մի քանի հազուագէս որսորդներից, որոնք այցելել են Զօլփան-Թառուի անտառախիտ լեռները, ուր պուրակներում թաքկացած էին լինում եղջերուներ և մարալներ:

Սակայն Սոված Տափաստանումն էլ կեանք կար, այն է Զօլփան-Թառուի հիւսիսային կողմում, ուր լեռկ ժայռերն ու ամեչի ապառաժներն էին ցցուած: Եյնտեղ քա-

րանձաւում ապրում էր հարիւրամեայ ծերունի Բայզեր  
խանը, այն իշխաններից մէկը, որոնք մի ժամանակ իշխում  
էին Սոված Տափաստանին, որ աւերակ դարձաւ Ռւզուն-  
Խանի շնորհիւ։ Կար ժամանակ, երբ նա ամենալաւ ջիկիտն  
էր, ունէր բազմաթիւ հօտեր, այգիներ, հերկած արտեր և  
մեծ ընտանիք, բայց այդ բոլորը կորաւ նուաճման ժամա-  
նակ։ Բայզեր-Խանը առիւծի պէս էր կռվում, պաշտպա-  
նելով իւր հայրենիքը, և երբ բանը պրծաւ, գնաց Զօլ-  
փան-Թառ, որպէս զի այս անմատչելի բարձրութիւնից  
կիանքը թանգ ծախէ իւր բախտաւոր թշնամուն։ Նորա  
հետ միասին գէպի լեռները գնացին մի քանի անպատի  
բամբռներ։ Այդ հերոսները ողջ օրը պաշտպանվում էին  
սարերում, մինչև որ ամենքը ընկան։ Սպանուեցաւ և  
Բայզեր-Խանը, այսինքն՝ կարծում էին, թէ նա սպանուած  
է։ Մակայն նա միայն ուշաթափ էր ընկած և ուշքի ե-  
կաւ այն ժամանակ, երբ թշնամիները հեռացել էին։ Այս,  
Բայզեր-Խանը ուշքի եկաւ և ափսոսաց, որ կենդանի է  
մնացել, նորա աչքերը դեռ բաց էին մի ամբողջ ժողո-  
վորդի թշուառութիւնը ողբալու համար։ Նա վճռեց միշտ  
մնալ Զօլփան-Թառ'ում, որի ապառաժոտ բարձրութիւ-  
նից երեսում էր Սոված Տափաստանը։ Նորա աչքի առաջ  
Տափաստանի աւազը թաղում էր ոտնակոխ արած զաշ-  
տերը, աւերուած քաղաքները և թանկազին գերեզման-  
ները,—ոչ, ամբողջ Սոված Տափաստանը մի լայնատարած  
գերեզման էր, և Բայզեր-Խանը նստած էր ապառաժին,  
որպէս մի լեռնային արծիւ վերաւորուած թևերով։ Սկըզ-  
բում նա կամենում էր վրէժը հանել Ռւզուն-Խանից,  
յետոյ մտածեց, որ իւր անդը ուրիշները վրէժինդիր կը  
լինեն, և վերջ ի վերջոյ վճռեց, որ արիւնուշտ նուա-  
ճողին այդ անսարդարութիւնն վոխարէն։ Աստուած ին-  
քը կըհատուցանէ։ Տարիները արագընթաց սահում էին  
Զօլփան-Թառ'ի վրայից, իսկ Բայզեր-Խանը դարձել էր

մի միայնակեաց։ Նա կերակրվում էր լեռների արօտներով, բանջարեղիններով ու իւր որսածով, և միշտ մտածմունքների մէջ էր ընկդմում։ Նորա գոյութեան մասին զիտէին միայն Զօլփան-Թառւից մի քանի գաղթածներ, որոնք երբեմն այցելում էին ծերունուն, բանկցնելով ամեն տեսակ նախազգուշութիւն, որպէս զի Ուզուն-Խանը չիմանայ, որ նա ողջ է։ Երբ Բայզիր-Խանը արգէն իննսուն տարեկան էր, բերին նորա մօտ մի չորս տարեկան աղջիկ, որ Սոված Տափաստանում երբեմն իշխող խաների վերջին ճիւղն էր։ Դա մի այնպիսի գաղանիք էր, որ ինքը Բայզիր-Խանն էլ չէր ենթադրում։ Նա սկզբում չէր հաւատում, իսկ յետոյ, երբ հարիւրամեայ աչքերն արտասուեցան, Բայզիր-Խանի սիրտը բացուեց։ Մէծ է Աստուած և ի զուր չէ ինքը՝ Բայզիր-Խանը այսքան տարի ապրել սարհրում։—ուրախութիւնը թռչնի պէս թռչաւ եկաւ նորա մօտ։

—Ես զգում եմ, որ սա իմ ոսկորս է, —ասաց Բայզիր-Խանը, համբուրելով չորս տարեկան երեխային։ Մէծ է Աստուած և ուղարկեց ինձ վերջին սփոփանքը...

Աղջկայ անունը Ղարա-Նինդիլ էր (ու մարգարիտ) և նա մնաց Բայզիր-Խանի հետ մի քարանձաւում։ Մերունին կինդանութիւն առաւ, ասես թէ վերածնուեց, և իւրաքանչյուր նոր առաւօտ նորան նոր բերկութիւն էր բերում։ Ղարա-Նինդիլի սևորակ աչքերից նայում էր ծերունուն նոր կեանք, իսկ նորա ժպիտով ժպտում էր ապագան։ Երեցան երկու այծ, շուն, մանկական խաղալիքներ, որ մի առանձին բաւականութեամբ շնում էր Բայզիր-Խանը։ Իրիկնաղիմին, երբ արեգակը իջնում էր դէպի հօրիզոնը, ծերունին երկար ժամանակ նստում էր քարի վերայ, նայում էր դէպի ցած, ուր լայն շերտով սփռվում էր Սոված-Տափաստանը, և երգում էր հին քաջերի, զարմանալի գեղեցկուհիների և խստասիրտ Ու-

գուն-Խանի մասին։ Նա չէ յիշում, թէ ով է յօրինել այդ երգերը, —ի՞նքն է, թէ մի ուրիշը, բայց կետնքը կենդանի խօսք է պահանջում, որպէս զի խանգարուի շրջապատող լեռնախմբի մեռելային լռութիւնը։ Ղարա-Նինդիլը լռում էր Բայզեր-Խանի երգերը, և քաղցր կերպով ընկդմում մանկական անմեղ քնի մէջ՝ զլուխը դրած ծերունու ծննդներին։ Ազգիկը այնպէս էր մեծանում, ինչ պէս մեծանում էին շրջակայ անտառների ծաղիկները և լեռնային հոտաւէտ արօար, միայն այն գանագանութեամբ, որ ծաղիկները անկարող են ժամել և ողբալ ի զուր տեղը կորած մարդկանց թշուառութիւնը։ Ղարա-Նինդիլը նոյնպէս մեծացաւ մեռելային այս առասպելական թագաւորութիւնում; Ինչպէս գերեզմանների վերայ բումում են կանաչ ծառեր։ Իսկ Բայզեր-Խանը, կարծես, թէ նորից երիտասարդացաւ և համոզուեցաւ, որ չի մեռնիլ մինչեւ որ Ղարա-Նինդիլը կը մեծանայ և լիովին լեռնային մեծ զեղեցկուհի կը դառնայ։

Ղարա-Նինդիլը ողջ օրը անց էր կացնում անտառում և գիտէր մերձակայ սարերի իւրաքանչիւր ծմակը։ Նա մենակ չէր վախենում ման գալ և այծեամի պէս վեր էր բարձրանում ապառաժի վերայ։ Նորա սիրած տեղն էր Գեօղ-Թառւն (Աչք-սար), որի ապառաժոտ բարձրաւանդակում մնում էին հին բերդի աւերակները. թէ երբ էր նա շինուածի կամ ով էր շինել և ինչու համար, —ինքը Բայզեր-Խանն էլ չէր յիշում. բայց հիանալի տեսարան էր բացվում դէպի Զորփան-Թառւն և Սոված-Ճափաստանն, որ քանի զնում էր, որպէս մի զեղին կապերտ, հեռանում էր մարդու աչքից։ Բայզեր-Խանը Գեօղ-Թառւն անիծեալ տեղ էր անուանում, ուր մինչեւ անգամ ծաղիկներ չեն, բուսնում, և չէր յաճախում այդ տեղը։ Եւ հարիւրամեայ ծերունու համար դրժուար էր հեռանալ այդ ողորսապտոյտ սարը, — Գեօղ-

Թառի վերայ էր նա պաշտպանվում թշնամիներից և այս տեղ նա վերաւորուեց վերջին անգամ։ Հաստ, հին պատերը, որ շնչած էին վայրի քարերից, գեղեցիկ կերպով պատասպարում էին և միայն ջրի պակասութիւն կարխոր ջրհորը, որ շնչուած էր բերդում, վաղուց քանզուել էր և այնտեղ այժմ միայն օձեր էին և չղջիկներ։

Տասն և երկու տարիկան հասակում Ղարա-Նինդիլը մտախոհ աղջիկ գարձաւ և համարեա ամեն օր առանձնանում էր Գեօղ-Թառի վերայ, — նստում էր պատի դուրս ցցուած ծայրին և երկար, շատ երկար նայում էր հեռուն, ուր կապուտակ երկինքը միանում էր զեղնազոյն տափաստանի հետ։ Նորան անպէս էր թւում, որ ճիշդ այգտեղից պիտի դայ այն քաջերից մէկը, որոնց մասին երգում էր Բայզիր-Խանիր։ Երբեմն նա մինչեւ անգամ լըսում էր ձիու տրոփիւն և հեռաւոր ձայներ, բայց այդ բոլորը լինում էր միայն նորա զլիսում, և Ղարա-Նինդիլը մինչեւ անգամ սարսում էր։ Մի անգամ, երբ նա այգպէս նստած էր Գեօղ-Թառի վերայ, լսեց որսորդական փողի ձայն և շների հաջոց։ Աղջիկը վախեցաւ, վեր թռաւ և թռչնի արագութեամբ ճախրելով վագեց դէպի իրենց քարանձաւը։

—Պապի, այն տեղ, սարերում մի ինչ որ մարդ կայ, — ասաց նա Բայզիր-Խանին։ — Ինքս լսեցի... Վախենում եմ։

— Դա շայթանն է, — ասաց ծերունին։ — Սարերում նվ պիտի լինի... Քառասուն տարի է, որ ես այստեղ եմ և ոչ ոքի չեմ տեսել... Դա երևել է քեզ շայթանն է վախեցնում։

Բայզիր-Խանը այս անգամ մխալուել էր. լեռների մէջ խանի որսորդներն էին ոստոստում։ Խանի համհարդներից ամենալաւ որսորդը շեղուել էր և ճանապարհը կորցրել սարերում։ Բազէն հեռու է թռել իսկ ջեղիաը յետելիյն

է ընկել ոսկեզօյն նժոյզի վերայ նստած։ Երբ Ղարա-Նին-  
զիը վաղում էր Դեօղ-Թառւից, Զիգիտը նկատեց նորան  
և շուտով գտառ այն քարանձաւը, ուր թաք էր կացել  
Բայզիր-Խանը։ Դա մի հսկայ էր, որ թռչնի պէս թռչում  
էր իւր ձիու վերայ։ Երբ նա մօտենում էր քարանձաւին,  
Բայզիր-Խանը ասաց։

—Քառասուն տարի է, որ ապրում եմ սարերում,  
բայց առաջին անգամն է, որ կենդանի մարդ եմ տես-  
նում։ Համեցէք, մեր հիւրը կը լինեա։

Հսկան միայն ժպանեց։

—Քանի՞ տարեկան ես, ծերունի, —Հարցրեց նա։ —  
Հարիւր տարի աշխարհում ապրել ես, բայց խարել չես  
առվորել։

Բայզիր-Խանը վախեցաւ և միայն զլուխը շար-  
ժեց և ասաց։

—Հարիւրամեայ ծերունին խարեց, որովհետեւ վա-  
խեցաւ, իսկ դու, հսկայ, երկիւղդ հետդ ես ման ա-  
ծում։

Այս խօսքերը ստիպեցին հսկային մոտածել — ծերու-  
նին ճիշդ ասաց։

—Իմ բազէս ինձ այսուեղ բերեց, և ես քեզ ոչ մի  
ֆնաս չեմ տալ — պատասխանեց նա աչքերը ցած ձղելով։  
—Բայց ճիշդ է, որ ես վիշտ ունիմ։ Դու, մենակեաց,  
ամեն բան զիտես, և ես կը պատմեմ՝ քեզ։

Հսկան սկսեց պատմել թէ ինչպէս Ուզուն-Խանը  
անարգել է նորա մօրը, խլել է կնոջը և անպատճել  
աղջկանը և թէ վրէժխնդիր պիտի լինի։ Բայզիր-Խանը  
լսում էր նորան և շարժում իւր ալեզարդ զլուխը։ Ին-  
չու վրէժխնդիր լինել... Մեծ է Աստուած և իւրաքանչիւ-  
րը ունի իւր ուրախութիւնը։ Պէտք է այնպէս ապրել  
որ ինքդ չփիրաւորես ուրիշին։ Ժպան հսկան, հարցրեց  
Ճանապարհը և գնաց։

ծիշզ մի տարուց նա վերադարձաւ, մենակ և Բայ-  
ղիր-Խանին մի տոպրակ թանկագին ընծաներ բերեց:

—Տուր այս աղջկանոր,—ասաց նա:—Կըմեծանայ—  
պէտք կըդայ:

Բայղիր-Խանը նորից շարժեց զլուխը, նայելով թան-  
կագին ընծաներին. Հսկան հասարակ մարդ չէր, և բաղեն  
չէր բերել այսուղ այլ գուցէ ինքը բաղդր: Նա կանչեց  
Ղարա-Նինդիլին, հրամայեց, որ շնորհակալութիւն անի  
հսկայից, իսկ ընծաները յետ տուեց: Հսկան նայեց Ղարա-  
Նինդիլին, նորա ցած ձգած մութ աչքին, վայելակազմ  
իրանին, վարդագոյն այտերին և միայն հառաչեց.

—Մի տարուց կըդամ...—ասաց նա:

Վիրաւորուած թոշնի պէս թփթիաց հսկայի սիրուը,  
աւելի ևս ցած ձգեց Ղարա-Նինդիլը իւր աչքերը, և երբ  
հսկան զնաց և այլ ևս չէր լսվում նորա ձիու արոփիւ-  
նը, նա անշարժ կանգնած էր մի և նոյն տեղում, զմայ-  
լածի պէս: Բայղիր-Խանը մինչեւ անգամ բարկացաւ նո-  
րա վերայ, բարկացաւ առաջին անգամ, թէև տասը տարի  
էր, որ միասին ապրում էին, և երկար ժամանակ բան  
չէր խօսում: Ծերունին իւր մտածմունքն ունէր, Ղարա-  
Նինդիլը—իւրը:

Արդարեւ, մի տարուց յետոյ հսկան վերադարձաւ,  
բայց այս անգամ մենակ չէր, այլ մի խումբ համշարզ-  
ներով: Նորա հետ էր Ավուշի-Բօշը, որ հարսնացուներին  
էր նայում: Մեծ ուսումնականը իմացաւ Ղարա-Նինդիլի  
մասին, որպէս ամենազեղեցիկ հարսնացուի մասին, և ա-  
ռաւ նորան ի թիւս Ուզուն-Խանի հարսների: Զուշ-  
Քաթէմ հսկան ոչինչ չասաց Բայղիր-Խանին—նորա հո-  
գին գիշերուայ պէս խաւար էր: Նա առաջուց գիտէր,  
որ Ղարա-Նինդիլը, իւր փայփայած, աչքի լուսի պէս  
սիրած Ղարա-Նինդիլը Ուզուն-Խանի ընտրեալը կըդառ-  
նայ: Ալթուն-Թիլքին վաս օյին խաղաց նորա զլխին,

բայց աղջկան կորզելը նոցա թանկ կընսուի... Ո՞հ, Զուշի-Քաթէմի կրծքում երկաթէ սիրտը բաբախում էր, և այն տեղ սառն օձ էր պառկած:

—Ես, Զուշի-Քաթէմս վրէժխնդիր կըլինիմ,—ասաց նա լաց լինող Բայզեր-Խանին:—Ղարա-Նինգիլի ամեն մի ի զուր տեղը թափած արցունքի համար մի մի զլուխ կըհատուցանեն նոքա:

## IV.

Կանաչ Քաղաքից դուրս՝ ուր այգիների մէջ թագ-նուած հոսում է արագահաս իկը, մի նոր քաղաք կազ-մուեց զյոնզզյոն վրաններից—այս տեղ հաւաքուած էին համայն տէրութեան բոլոր զեղեցկուհիները, և իւրա-քանչիւրն ունէր իւր սուանձին վրանը: Նախ քան ընտրելը, նոր նշանակուած մարդիկը, տեղական հե-քիմիերը և հմուտ պառաւները, որոնք խանի պալա-տում վերակացուներ էին, նորից նայեցին նոցա բոլորին: Զուշի-Քաթէմը, կատարելով իւր պարտականութիւնը, այժմ մտածում էր ազատութիւն ստանալ, բայց Ուզուն-Խանը ասաց.

—Ամեն մի լաւ գործ պէտք է մինչև ի վերջը հաս-ցնել... Դու դժուարանում ես մենակ կառավարել աղջը-կանց քաղաքը, Ավուջի-Բօշը շատ է զիտուն այդ բանի համար, ուստի ես քեզ օգնական եմ նշանակում Ալ-թուն-Թիլքիին:

Արդէն երկրորդ ամիսն էր, որ Ղարա-Նինգիլը ապ-րում էր իւր վրանում; և նա շատ ուրախ էր: Զուարթ աղջկերանց աղմկալից շրջանում նա մոռայաւ և Զոլպան-Թառի սարերը, իւր քարանձաւը և Բայզեր-Խանին: Երի-տասարդ սիրտը թրթուում էր սպասելուց, թէ ինչ կը լինի անյայտ ապագայում: Երեկոյեանները նա երկար նըս-

տում էր արագավազ իկի ափին և լսում, թէ ինչպէս է քնի մեջ խորասուզվում կանաչ Քաղաքը. ուզուերը մը-  
ռնչում էին, սայլերը ճրծում, ոչխարները բառաչում  
էին և ձիերը խրխնջում: Խնչպէս էր նա կամենում տհո-  
սել այդ քաղաքը, ուր մեծ Ուզուն-Խանն էր ապրում,  
գէթ մի աչքով տեսնել: Խանի կինը գառնալ նա չէր էլ  
երազում: Քիչ գեղեցկուհիներ կան: Նորան զզուեցնում  
էին միայն վերահսկողները, որոնք ամեն օր գալիս էին և  
նայում նորան, որպէս մի ձիու: Մէկը ատամներն էր նա-  
յում, միւսը—աչքերը, երլորդը—մազերը, ձեռները, վեզը:  
Դիշերը պառաւները ման էին գալիս բոլոր վրանները և  
զիտում, հանգի՞ստ են քնած գեղեցկուհիները, թէ ոչ,  
կամ չունին նոքա այնպիսի վաս նշաններ, որ ցերեկով  
կարելի է ծածկել: Չուշի-Քաթէմին նա տհունում էր միայն  
հեռուից, և նա, կարծես, չէր ուզում ձանաչել Ղարա-  
նինզիլին, և այդ զայրացնում էր աղջկանը: Միթէ քա-  
ջը այդպէս շուտով մոռացաւ նորան և չէ զգում: Թէ  
ինչպէս է բարախում աղջկայ սիրտը, երբ անցնում է  
նորա վրանի մօտից:

Սակայն որքան ուրախ էր լինում ցերեկը, մանա-  
ւանդ առաւօտեան, երբ բոլոր աղջկերը զնում էին իկ  
լողանալու: Ոչ ոք իրաւոնք չունէր մօտենալ Աղջկանց  
Քաղաքին երեք հարիւր քոյլից աւել: որովհետեւ կանդ-  
նած պաշտպանում էր խանի վաշտը, և աղջկերը կա-  
րողանում էին ազատօրէն զուարձանալ ինչպէս կամե-  
նում են: Միայն մի անգամ, երբ նոքա լողանում էին,  
գետի վերայ երեեց մի նոտւակ, որ վախեցրեց բոլորին. դա  
ինքը Ուզուն-Խանն էր, որ կոմեցել էր զուարձանալ  
նայելով լողացող գեղեցկուհիների վերայ: Ղարա-Նինզիլը  
չէր ուզում հաւատալ, որ կուչ եկած, գեղին ծերունին,  
որի զյուխը սաստիկ տատանվում էր, ինքը Ուզուն-Խանն  
է, որի մասին այնքան շատ լսել էր: Մի այդպիսի փթած

խաղալիկի կին դառնալն մեծ ուրախութիւն չէր,—աւելի լաւ էր մնալ Զոյպան-Թառուի սարերում:

Մի ուրիշ անդամ՝ Ղարա-Նինգիլը սաստիկ վախեցաւ, երբ զիշերը նորա վրանը մտաւ մի ինչ որ կին Ծյս անտանելի պառաւները մինչև անդամ չէին թողնումքնել:

—Մի վախենալ, Ղարա-Նինգիլ,—ասաց մի մատղաշ կանացի ձայն, որ աւելի ևս վախեցրեց նորան:—Ես եկայ քեզ ասելու, որ միայն դու կը լինիս մեր խանի կինը: Դա արդէն վճռուած բան է... իմ անունն է Ակ-Բիբէ, ես Զուչի-Քաթէմի, որին գուլաւ ճանաչում ես, աղջիկն եմ: Ուզուն-Խանը ինձ էլ էր սիրում, միայն մի օր սիրեց, իսկ յետոյ ուզարկեց Լէտափէթ-Նամէհ, ուր ինձ նման անբախտ աղջկերք հարիւրներով են: Մենք ամենքս այժմ միայն քեզ կրծառայենք, որպէս մեր թագուհուն... Քեզ համար արդէն նոր ապարանք են շնում:

—Ես քեզ չեմ ճանաչում, Ակ-Բիբէ,—պատախանեց Ղարա-Նինգիլը, —Ե ես չեմ իմանում, թէ ինչ ես ուզում ինձնից:

—Ի՞նչ եմ ուզում, —հարցրեց Ակ-Բիբէն և յանկարծ արտասունեց, դառնագին, անմիշիթար կերպով լաց եղաւ:

—Իսկո՞ւ համար ես լաց լինում, Ակ-Բիբէ:

—Լալիս եմ և ինձ համար և քեզ համար, Ղարա-Նինգիլ... Դու զեռ այնպէս ջահիլ ես և չես իմանում, թէ քեզ պէս գեղեցկուհիներին որբան զարհուրելի է այս աշխարհում ապրելու: Իմ հայրս՝ Զուչի-Քաթէմը սիրել է քեզ և կամեցիլ է պսակուել քեզ հետ, բայց այդ բանը իմացիլ է Ալթուն-Թիլքին և ի վրէժ հօրս կամեցիլ է քեզ խանի կինը շինել—առանց այն էլ հօրիցս ամեն բան խլեցին, մնացել էր որ հարսին էլ խլէին:

Ակ-Բիբէն դառնագին լալիս էր և պատմում Ղարա-

Նինդիլին Ուզուն-Խանի բոլոր չարագործութիւնները: Կի-  
սով չափ փթած այդ ծերունին դեռ կարող է ուրախա-  
նալ ուրիշների տանջանքի, երկունքի ու անարգանք-  
ների համար: Որքան մարդը լաւ է, այնքան էլ Ուզուն-  
Խանին հաճելի է տանջել նորան: Յետոյ Ակ-Բիրէն պատ-  
մեց Ղարա-Նինդիլին, թէ որպէս են այրվում, տոշորվում  
բոլոր կանայքը Լէտաֆէտ-Նամէյում և Բաղի-Դիգիշաում,  
թէ ինչպէս ատում են նորան, ապագայ թագուհուն,  
Խանի հարիւր տղայքն ու աղջկերքը և ինչպէս պիտի  
հայհոյին ու անիծեն Աղջկանց Քաղաքում հաւաքուած  
հազարաւոր գեղեցիուհիները, երբ խմանան Ուզուն-Խանի  
ընտրութիւնը:

—Ես ոչ ոքի վնաս չեմ տուել...—շնչից Ղարա-  
Նինդիլը:—Բայց լսելով քո ասածները, ես միայն մի բան  
հասկացայ, որ կամ բարորոշին չպիտի ծնուեի, կամ  
առ միշտ պիտի մնայի Զողպան-Թառը՝ ում:

—Ամեն մարդ ունի իւր Ճակատագիրը, որից խօյս  
տալ չէ կարելի: Պէտք է արած այն, ինչ որ Ճակատագի-  
րը հրամայում է:

—Իսկ ի՞նչ պէտք է արած...—հարցրեց Ղարա-Նին-  
դիլը:

—Երբ ժամանակը կըգայ, ես քեզ կըսովորեցնեմ,  
—պատասխանեց Ակ-Բիրէն:—Դեղեցիկ աղջիկները աշ-  
խարհ են գալիս վշտի համար...

Դիշերը անցաւ և Ակ-Բիրէն գնաց, որ աննկատ  
գնաց Լէտաֆէտ-Նամէհն: Եթէ նորան նկատեին, խսկոյն  
կըգլխատէին, որովհետեւ խանի կանայք չպիտի անց կե-  
նացին իրանց պարտէզի շեմքը: Երբ նա գնաց, Ղարա-Նին-  
դիլը սաստիկ լաց եղաւ, —նա սկզբից տտեց և Ուզուն-  
Խանին և իւր վերակացուներին Ալթըն-Թիլքիի հետ  
միասին, և իրեն Զուշի-Քաթէմին, որի սկըր վտանգի են-  
թարկեց Ղարա-Նինդիլին: Եթէ իրեն, որպէս խանի ա-

պագայ կնոջ, ամենքն ատում են, ինքն էլ նոցա է ատում... Ամբողջ զիշերը բարձր երգում էր սոխակը Ղարա-նինդիլի վրանի վերայ և ամբողջ զիշերը լաց էր լինում Ղարա-նինդիլը: Նա ուզում էր մեռնել այնպէս ինչպէս այժմ էր,—ջահիլ գեղեցիկ, որպէս այն առասպելական գեղեցկուհիները, որոնց մասին երգում էր Բայ-ղիր-Խանը:

Առաւօտեան, երբ Ղարա-նինդիլը զարթնեց, Ակ-Բի-բէի այցելութիւնը նորան մի ծանր, սարսափելի երազ թուեց: Նա, կարծես, մեռած էր այդ զիշեր և արթնացաւ ուրիշ կերպ:

Ինչպէս Ակ-Բիբէն ասաց, այնպէս էլ եղաւ:

Երբ կատարուեց աղջկերանց նայեն ու փորձելը, իւրաքանչյուր տասնեակից ընտրեցին մէկին,—և մի քանի տասնեակ գեղեցկուհիներ հաւաքուեցան. Ղարա-նինդիլը դոյա թւումն էր: Այդ տասնեակներից ընտրեցին միայն եօթին—դրցա մէջ էր և Ղարա-նինդիլը: Այդ եօթնից ընտրեցին մէկին, և այդ մէկը Ղարա-նինդիլն էր: Շնչեցին փողերը Կանաչ Քաղաքում, քէֆ էր անում ժողովուրդը և ուրախացաւ ծեր Ուզուն-Խանի սիրտը, երբ առաջին անգամ տեսաւ Ղարա-նինդիլին: Գյոնզպոյն կերպասներից շինած նորա վրանը այժմ Աղջկանց Քաղաքի մէջ տեղումն էր և ծածանվում էին նորա վերայ փայլուն դրօշակներ, իսկ ինքը Ղարա-նինդիլը զարդարուած էր բեհեղեայ շորերով, ոսկւով և թանկազին քարերով: Բայց այդ ապրեշումի, ոսկու և թանկազին քարերի տակ թագնուած էր մի սև, վատ ոյժ—վիշա, որ ճնշում էր Ղարա-նինդիլի սիրտը, որպէս մի գերեզմանաքար:

## V.

Ուզուն-Խանը կամեցաւ կատարել իւր հարսանիքը Աղջկերանց Քաղաքում, ուր մեծ պատրաստութիւններ էին տեսնվում: Կենտրոնում շինած էր մի ապրեշումէ վարդաղյն վրան՝ ոսկէ սիւների վերայ, իսկ նորտն պատում էին երկի տեսակ ապրեշումի ցանեեր՝ կանաչ գեղին, կտորյոտ: Այս վրանը, որ ծածկած էր դրօշակներով և ոսկով, հեռուից նմանում էր մի մեծ ծաղկի: Ներսը զարդարուած էր թանկադին կտորերտներով, ապրեշումէ բարձերով, իսկ մեջ տեղում զրած էր ոսկէ մահակալ: Միւս վրանները լայն կիսաշրջան էին կազմում: Ուզուն-Խանը չեր կամենում մենակ ուրախանալ, և իւր մերձականերին, զօրավարներին և սիրելիներին ընծայեց միւս աղջկերանց: Մինչեւ անդամ Առողի-Բօշին էլ կին հասաւ, իրաւ է, տգեղ կին, բայց կանոցի այդ պակասող գեղեցկութիւնից ուրիշ ուրախութիւն չպիտի ունենաս. դու միշտ ինձ մօտ կը լինիս Ալմբն-Թիլքիի հետ:

— Դու, զցյդ աչքից լաւագոյնդ, բայցի իմ ուրախութիւնից ուրիշ ուրախութիւն չպիտի ունենաս. դու միշտ ինձ մօտ կը լինիս Ալմբն-Թիլքիի հետ:

Որպէս զի իւր ընտրածը տխուր չմնայ, Ուզուն-Խանը հրամայեց նորան ընկերուհիներ ընտրել երկու այգիներից, և Ղարա-Նինգիլը ընարեց միայն Ակ-Բիրէին, իսկ սորա ցուցմունքով և ուրիշներին: Երբ Ուզուն-Խանը իմացաւ նորան ընտրութիւնը, ուրախ կերպով ծիծաղեց:

Հարսանիքին ամեն կողմից հետաքրքիր մարդիկ եկան կանաչ Քաղաքը, որ իրանց աչքով տեսնեն, թէ ինչպէս է ուրախութիւն անում խանը: Երբ քաղաքում արդէն տեղ չկար, սկսեցին տեղաւորուել քաղաքից դուրս շինած վրաններում, ուր արագահոս իկը գուարթ սահում

Էր կանաչ ափերի մէջ։ Եյդ բոլորը բերկութիւն էր պատճառում Աւղուն-Խանին և նա հրամայեց, որ զօրքը դուրս բերեն Աղջկերտոնց Քաղաքի շուրջը, — թող ամենքն ուրախանան, որոնք մասնակից են եղել պատերազմի նեղութիւններին ու վասնգներին։ Սովորութեան համեմատ հարսը պիտի դար խանի պալատը, բայց այս անդամ Աւղուն-Խանը փոխեց այդ և ասաց։

— Երկիրը չէ պատում երկնքի շուրջը, այլ արեղակը, այդպէս էլ և խանի սիրառը...

Առջի-Բօշը ամենաբախառաւոր օրն էր ընտրել հարսանիքի համար, ինչպէս թելազրեց նորան իւր իմաստութիւնը։

Հարա-Նինդիլը խանից այնքան ընծաներ էր ստացել, որ եթէ բոլոր ապրեշումէ շորեն, ոսկին ու ակնեղէնները հաղյանէին նորան, նա այդ ծանրութեան տակ կըմնար։ Նորու վրանը իրաւունք ունէին մտնելու նաժիշտաներն և Ալթուն-Թիլքին, իսկ տղամարդկանցից միայն Զուչի-Քաթէմը։ Հարսանեաց գիշերը նա պիտի քնէր վրանում, որպէս զի հսկէ, նորասպասկների հանգստութիւնը — ինքը ստանան զորանից խիստ սպասիժ չէր կարող հնարել։ Բայց Զուչի-Քաթէմը երկաթէ սիրու ունէր, և նա ուրախ սրբով էր հեռանում, կարծես թէ Աւղուն-Խանը չէ ամուսնանում։ Հարա-Նինդիլի հետ, այլ ինքը։ Եյդ հանգամանքը մոլորեցից և Հարա-Նինդիլին։ ոչ, Զուչի-Քաթէմը երբէք չէ սիրել նորան... ինչո՞ւ է նա ուրախանում... Զորս կողմը ամենքն ուրախանում էին, և միայն Հարա-Նինդիլն էր գաղառուկ լաց լինում։

Ամուսնանալու օր առաւօտեան Զուչի-Քաթէմը շըշնչեց նորան։

— Մի՛ վախենալ իմ բերկրանքս, և լսիր Ակ-Բիբէլին այնպէս, իբրու թէ ես եմ առում։ Երբ ես քեզ տեսնում եմ երազումն — մեռնում եմ, իսկ երբ զարթնում եմ և տես-

նում քեզ—կրկին մեռնում եմ... Սիրտս, դու թագուհի  
կը լինես:

Այս խօսքերը քաջալերեցին Կարա-Նինդիլին: Զէ որ  
ամենքն օտար էին նորան, և նա միայն Զուշի-Քաթէմին  
էր ճանաչում—նորան ճանաչում էին օրիորդի սիրան ու  
աչքերը: Ո՛հ, նա այնպէս գեղեցիկ է և արի, իսկը մի  
հսկայ: Նորա մի խօսքը արժէր իւր կանացի վշտին:

Վաղ առաւօտեան կանաչ Քաղաքում հնչեց առա-  
ջին փողը, իսկ նորա պատասխանը լսուեց Աղջկերանց  
Քաղաքից: Տօնախմբութեան նշանն էր զա: Հաղարաւոր  
մարդիկ, լաւ շորեր հազած, անհամբեր սպասում էին  
հազուադէպ տօնախմբութեան: Որպէս կենդանի պատ,  
երկու քաղաքների մեջ երկու կարդ զինուորներ էին  
կանգնած: Կարա-Նինդիլի վրանի առջև կիսաշրջան շի-  
նած էին քէֆ անելու տեղերը, իսկ Ռւզուն-Խանի և Կա-  
րա-Նինդիլի համար պատրաստած էր մի բարձր գահ,  
զեղնազդյն ապրեշումէ կերպասով հովանաւորած: Այս  
տեղեց Ռւզուն-Խանը ցոյց պիտի տար բոլոր ժողովրդեան  
նոր թագուհուն:

Բարձր թմբկահարում էին, փողերը հնչում, զին-  
ուորական երաժշտութիւնը նուագում էր, միայն Կարա-  
Նինդիլի սիրալ խուլ արձադանք էր տալիս այդ ու-  
րախմութեան: Որպէս մի փոթորկարեր ամպ՝ մօտենում էր  
սարսափելի բոպէն: Ձիաների սմբակներից փոշին արդէն բար-  
ձրացել է ամպի պէս կանաչ Քաղաքի վերան: Հեռուից խուլ  
կերպով լսվում են մարդկանց ձայները, կարծես ծովի  
ալիքները շառաչում լինին:

Երբ պալատից դուրս եկաւ Ռւզուն-Խանը, այն-  
ովիսի ուրախութեան ձայն բարձրացաւ, կարծես, թէ  
դետինը զղրդաց: Նա ձիով էր իւր համհարզների հետ  
և որքան մօտենում էր Աղջկերանց Քաղաքին, նոյնքան  
բարձր էր նուագում երաժշտութիւնը, իսկ ամբոխը

Հետեւից խումբ խումբ վազում՝ էր որպէս ափից դուրս ողքածած ջուրը։ Դողաց Ղարա-Նինդիլի սիրալ, բայց նա ինքն իրեն յաղթեց, որպէս զի ուրախ գէմքով զիմուռքի փեսային։ Երբ եկողները սկսեցին մտնել Աղջկերանց Քաղաքը, նորից Ղարա-Նինդիլը երկիւղ զգաց, բայց նա կրկին յաղթեց իրան և կարծես, բոլորովին սառած մնաց։

— Շուտով բոլորը կրվերջանայ... — շնչեց Ակ-Բիրէն, որ Ղարա-Նինդիլի նաժիշտներիցն էր։ — Դու թագուհի կը լինես... և միայն կը լինես։

Երբ Ռւզուն-Խանը մօտեցաւ վրանին, Ղարա-Նինդիլը պիտի զիմաւորէր նորան իւր նաժիշտների հետ։ Ավուշե-Բօշը մի ոտանաւոր կարդաց փեսային, միւսը հարսին, որ նորա պարտականութիւնն էր, իսկ Զուշե-Քաթէմը օդ նեց Ռւզուն-Խանին ձիուց ցած իջնելու, աւելի ձիշդ ասած, վեր առաւ նորան թամքից, որպէս մի վիրաւորուած ազուաւի։ Ռւզուն-Խանը բռնեց Ղարա-Նինդիլի ձեռքից և տարաւ նորան արքայական տեղը, իւր կողքին, որպէս զի բոլոր ժողովուրպը տեսնէ իւր նոր թագուհուն։ Երաժշտութիւնը նուագում էր, թմբուկ էին ածում, հաղորաւոր ամբոխը և բոլոր զօրքը գժի պէս աղաղակում էին։ Այդ օրուայ համար մի նախիր եղ էին մորթել հաղար ոչխար և ամեն տեղ տկերով զինի էր շարած։ Ամբոխը զուարձանում էր և ուրախանում, ինչպէս և խանի սիրութն էր ուրախ, իսկ Ավուշե-Բօշը արգէն նոր ոտանաւորներ էր կարգում ի պատիւ նորապակների և երդիչները երգում էին նոցա, իսկ երաժիշտները նուազում։

— Սիրում ես ինձ, թագուհի, — հարցրեց Ռւզուն-Խանը, զուխը շարժելով։

— Մի՞թէ կարելի է քեզ չսիրել իմ տէրս, — պատասխանեց Ղարա-Նինդիլը։

— Ո՞չ, ոչ թէ քո տէրը, այլ հպատակդ... — շնչեց

կըքերից թուլացած ծերուկը և մինչեւ անգամ ուրախութիւնից արտասուզ երևեց աչքերում:

Խոջոյքը ուեցց ողջ օրը՝ մինչեւ արեգակի մայր մըտնելը և մինչեւ որ Ուղուն-Խանը հրամացեց բարորին հեռանալ: Աղջկերանց Քաղաքը յանկարծ գատարկուեց, միայն չըրս կողմից պատեց հրեղին շրջան և երաժշտութիւնն էր նուագում: Աղմկից վախեցած սոխակները այսօր չեն երգում, և Կարանինդիլի սիրաը նոյնալիս սառել էր, ինչպէս խստաշունչ ձմեռը սառչում են թռչունները թռչելիս:

Այժմ նա վրանում մենակ էր Ուղուն-Խանի հետ: Զուշի-Քաթէմը պատկառանօք կանգնած էր մուտքի առջեւ և սպասում էր՝ հրամաններին: Ալթուն-Թիկին և նաժիշանները խմբուած էին ոչխարների պէս առաջին բակում, — նոքա հարսի շորերը պիտի հանեին, երբ Ուղուն-Խանը անկողին մտնէր:

— Հուանում ես նշանածիս, — հարցրեց Ուղուն-Խանը իւր հաւատարիմ ծառայ Զուշի Քաթէմից: — Աս մի աստղ է, որ երկնքից իջաւ ինձ համար...

Երբ նաժիշանները հանեցին Ուղուն-Խանի շորերը, և նա անկողին մասւ, թանկագին կապերուի վերայ պատրաստած, Զուշի-Քաթէմը պայմանական նշան առւեց իւր աղջկան՝ Ակ-Բիրէին: Բոլոր նաժիշանները վաղեցին խանի կողմը, ծածկեցին նորան հարսանեաց ապրեշումէ վերմակով և, բռնելով գորգի ծայրերից, սկսեցին թափ տալ Ուղուն-Խանին: Դա մի տեսակ պարտաւոր պատիժ էր տոհմական իշխանների համար, որովհետեւ օրէնք կար, որով «ալեգակը չպիտի տեսնէր խանական արիւնը»: Բոլոր նաժիշանները քսան հոգի կը լինէին և նոքա այնպիս սասաւիկ էին թափ տալիս գորգը, որ ծերունին այլ ևս չէր աղաղակում, նորա զառամեալ, մեղսական մարմինը այնպէս էր պղրվում վերմակի տակ, ինչպէս մի կառը իւղ,

երբ աշխատատեր կինը խնացում է կաթը: Զուչի-Քաթէմը  
միայն կարգադրութիւններ էր անում,—խանի ձայնը չէր  
լսվում վրանից դրւրս նուազող երաժշտութեան ձայնից:  
Երկիւղեց կիսամեռ Սլմուհ-Թիլքի պառաւը այժմ սո-  
զում էր Զուչի-Քաթէմի սաների առաջ և թողութիւն  
էր հոյցում: իսկ նա ցցյ էր տալիս պառաւին անկիւ-  
նում կանգնած Ղարա-Նինդիլի վերաց:

—Ահա մեր թագուհին, նորանից ներումն ինդրիր:

Եյս բոլորն այնպէս շուտ եղաւ, որ Ղարա-Նինդիլը  
միայն այն ժամանակ ուշքի եկաւ, երբ Ուղուն-Խանն  
արդէն մեռած էր: Զուչի-Քաթէմը չոքեց մի ծնկան վե-  
րայ նորա առաջ և ասաց.

—Մեծ թագուհի Ղարա-Նինդիլ, այսուհետեւ դու  
ես մեր հրամանատարը...

Ղարա-Նինդիլը խիստ կերպով նայեց նորան և ասաց.

—Եթէ դու ինձ էլ այնպէս ծառայես, ինչպէս Ու-  
զուն-Խանին էիր ծառայում: կը մնաս սրալատում և կը  
շարունակես նախկին պաշտօնու... յայտնիր ամբոխին, որ  
մեծ Ուղուն-Խանը ուրախութիւնից մեռաւ: Օրհնեալ լի-  
նի մեծ խանի և իմ մարդու անունը...

Երբ հետեւալ օրը Կանաչ Քաղաքում կենգանու-  
թիւն սկսեց, խանի պահապանները, որոնք հսկում էին  
Աղջկանց Քաղաքին, թագուհի հուշակեցին Ղարա-Նինդի-  
լին: Նոյա օրինակին հետեւեցին ուրիշ զօրքերը, և երա-  
ժշտութիւնն նուաղելիս Ղարա-Նինդիլը մտաւ Կանաչ  
Քաղաքը, ուր և բանեց խանի պարասոր: Զուչի-Քաթէմի  
հրամանով՝ այդ իսկ գիշերը մորթոտեցին խանի բոլոր  
հարիւր որդիկերանց, իսկ աղջկերքը փակուեցան Բաղի-Դի-  
գիշտում: մինչև որ նոր թագուհին կարգադրութիւն ա-  
նէր: Նա ինը մասնակից էր թագուհու Կանաչ Քաղաք  
մասնելու հանդիսին, գնում էր նորա կողքին և ողջու-  
նում ցնծութեամբ ուրախ-ուրախ աղաղակող ամբոխին,

կարծես, թէ ոչինչ բան չի եղել: Ղարա-Նինդիլին յայտնի չէր սպանուած ժառանգների թշուառ վիճակը և ազատութիւն ստացած թռչնի նման ուրախանում էր, — նա օրիորդ մնաց, ինչպէս և Չոլփան-Թառւումն էր:

Ավուշի-Բօշը գիմնարեց թագուհուն պալատում նոյն ստանաւորով, որ նա պատրաստել էր այս գէպքի առթիւ Ուզուն-Խանի համար: Քաղաքը կրկին ցնծում էր... Եւ ի՞նչ: Մեծ Ուզուն-Խանը մեռաւ ուրախութիւնից և կայ նոր թագուհի: Մեռած Ուզուն-Խանը պառկել էր վրանում, որպէս մի ստոկած էշ. մինչև անդամ հին հաւատարիմ ծառանիրն անցան նոր թագուհու կողմբ: Խրաքանչեւրը իւր մասին էր մտածում, իսկ ծեր խանը ոչ ոքի աջակցութեան կարօտ չէր, բայցի ձանձերից, որ հաւաքուել էին նորա վերայ:

## VI.

Երբ Ղարա-Նինդիլը իմացաւ Զուչի-Քաթէմի կոտորածը, սարսափ պատեց նորա սրախն: Խանի հարիւր որդիքը սպանուած են— դա մի այնպիսի սոսկալի զոհ էր, որով գնուեց իւր խանութիւնը: Նա կանչեց Զուչի-Քաթէմին և յայտնեց:

— Զուչի-Քաթէմ, այժմ ես գիտեմ, թէ ինչ եմ պարտական քեզ... Առաջ ինձ այնպէս էր թւում, թէ սիրում եմ քեզ: Դու վազրի սիրտ ունիս, Զուչի-Քաթէմ:

— Ես միայն վրէժինդիլ եղայ իմ խայտառակութեանս համար ..— պատասխանեց Զուչի-Քաթէմը՝ աչքերը ցած ձգելով: — Ուզուն-Խանը ինձ ամեն բանից զրկեց, և ես քսան տարի պահում էի քէնս: Այժմ դու ես թագուհի, և Զուչի-Քաթէմը գառը կըդառնայ:

Սակայն Ղարա-Նինդիլը չհաւատաց նորա խօսքին և աշխատում էր չտեսնել նորան: Մինչև անդամ Ալթուն-

Թիլքին էլ արդարացնում էր Զուչի-Քալթէմի վարմունքը. Միթէ նա կարծղ էր ուրիշ կերպ վարուել քանի որ բոլոր խաները՝ նստելով գահի վերայ, զիսատում են իրենց բոլոր հակառակորդներին: «Այլպէս է եղել հին ժամանակներից, այդպէս էլ կրլինի միշտ», — հաւաաացնում էր պառաւը, որ իւր անձի համար էր երկիւղ կրում:

Խանի այն կին-հարձերը, որոնք մտանակից էին Աւգուն-Խանի մեռյնելուն, այժմ Ղարա-Նինդիլի մերձաւորներն էին, և նոցա սարտպուխն անվեհեր Ակ-Բիբէն էր: Նորա միջոցով Ղարա-Նինդիլը ամեն բան իմանում էր, ինչ որ կատարվում էր Կանաչ Քաղաքում, ինչ որ խօսում էին զօրքերը նոր թագուհու մասին և մինչև անդամ ինչ որ տեղի էր ունենում հեռաւոր գուառներում:

Երբ Աւգուն-Խանին մեծ մարդու վայել շքով թաղեցին և զերեզմանի վերայ աշագին արձան կանդնեցրին, Ղարա-Նինդիլը ոչիշացրեց խանի երկու այդին, իսկ այն տեղ մաշուռղ գեղեցիւհիներին մօրդու տուեց ամենաւլաւ զօրավարներին: Դոհ էին և խանի նախկին կանայքը, որոնք ջաշել ամուսին ստացան, նոյնպէս դոհ էին և աղամարդիկ, որոնք գեղեցիկ կին ստացան, հետն էլ հարուստ օժիտ: Ամբողջ զօրքն ասաց, թէ Ղարա-Նինդիլը իմաստուն կին է: Ղարա-Նինդիլի մօտ մնացին նոքա, որոնք նորա նաժիշտներն էին Ազգիերանց Քաղաքում: Նա չժողովց, որ նոքա հեռանան. ինքը մարդ չուներ, նոքա էլ մօրդու չպիտի դնուցին: Կարծես, դա մի տեսակ վարձատրութիւն էր Աւգուն-Խանին սպանելու փոխարէն:

Երբ խանի պարտէզները դատարկուեցան, Ղարա-Նինդիլը կամեցաւ տեսնել նոցա: Ձէ՞ որ այդ բաղերի մօսին առասպելներ էին պատմիում, — այնտեղ էր կուտակել Աւգուն-Խանը այն բոլոր գանձերը, որ նա յափշտակել էր Միջին Ասիայում, Զինաստանում և Պարսկաստանում: Տեսնելու համար օր էր նշանակած, և երբ Ղարա-Նինդի-

լը իւր մարդկանց հետ ներս մտաւ Լէստաֆէտ-Նամէշն, բոլոր ծաղիկներն նորա աչքի առաջ՝ թառամեցան։ Նոյնը կրկնուեց և Բազիկ-Դիպիշտում։ Եյդ բանը մեծ վիշտ պատճառեց Ղարա-Նինդիլին, և նա չկամեցաւ տեսնել հոյակապ և պերճազարդ ապարանքը, ուր մաշվում էին ոսկե գերութեան մէջ խանի կանայքը, հարծերն ու ըստուկները։

— Դա մի կախարդ արած կը լինի, — ասաց Ալթուն-Թիլքին, որ թագուհուց պակաս չէր վախեցել։ — Աշխարհում քիչ վաս մարդ կայ...

Առաջի-Բօշը հաստատում էր Ալթուն-Թիլքիի կարծիքը, բայց Ղարա-Նինդիլը տիսուր մտածում էր ինքն իրեն...

« Ծաղիկները չեն տանում իմ ներկայութիւնը, որովհետեւ ինձ համար այնքան անմեղ արին է թափած» ...

Նա այժմ վախենում էր ամեն մի ծաղկից։ Խանի պալատում ծաղիկներ չկային և նա կարող էր հանդիսանալ բայց դա սաստիկ տանջում էր նորան, թէև նա ոչ ոքին բան չկը ասում։ Անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ, բայց Ղարա-Նինդիլը մի և նոյն բանի վերայ էր մտածում։ Մի քանի անգամ նա Ալթուն-Թիլքիի միջոցով ծաղիկներ բերել տուեց, բայց նոքա խսկյն և եթ թառամում էին նորա աչքի առաջ, կարծես թէ սառնամանիքի խստաշունչ քամին փչում լինէր։ Ղարա-Նինդիլը վախենում էր, որ ժողովուրդը կ'իմանայ այդ և նորան Ուղուն-Խանի սպանիչը կը համարէ։

— Բարութիւն կ'անեմ և այն ժամանակ Աստուած կ'աղատէ ինձ այս անէջքից, — մտածում էր Ղարա-Նինդիլը։

Նախ և առաջ նա աշխատում էր չվիրաւորել Ալթուն-Թիլքիին, որ ուղում էր վրէժինդիր լինել Զուշի-Քաթէմին, իսկ ապա Առաջի-Բօշին բաշխեց կեանք, որի ուսումնա-

կան զլուխը պատրաստ էր մարմնից անջասառելու ամենատղօր Զուշի-Քաթէմի մի խօսքովը: Ղարա-Նինդիլը ցանկացաւ տեսնել Բայզիր-Խանին, սակայն ինքը ծերունին պյնքան զառամած էր, որ չկարողացաւ գոլ Կանաչ Քաղաքը նորա մօտ, իսկ նա էլ չէր կարող գնալ Զոլֆիան-Տառ այնալէս, որ իրեն չի մտանի—Զոլֆիան-Տառ'ու մ ծաղիկներ քիչ էին, իսկ Գեօղ-Տառն մինչև անդամ բոլորին լերկ էր, բայց այն տեղ տանող Ճանապարհին ծաղիկներ կային, այն լեռնային հովիտներում, ուր կայտառ հոսում էին գետակներն: Բայզիր-Խանին տեսնել չկարողանալը սասափիկ արտմեցրեց Ղարա-Նինդիլին, բայց նա չկարողացաւ Կանաչ Քաղաքից գուրս պրծնել:

Ուզուն-Խանի տերութեան մէջ Զուշի-Քաթէմը առաջին մարդն էր, և ամեն բան նորանից էր կախուած: Սակայն նորան չին ուրախացնում ոչ իշխանութիւնը, ոչ հարասութիւնն և ոչ էլ պատիւը, որովհետեւ Ղարա-Նինդիլն այլ ևս չէր սիրում նորան: Ինչ որ Ուզուն-Խանը չկարողացաւ իլել ինքն իրեն գնաց: Իւր վեշտը նա մոռանում էր գործի ժամանակ, իսկ գործ շատ կար: Ի միշի այլոց յայանուեցաւ, որ Ուզուն-Խանի ուղղակի ժամանգներից մէկը, որ տասն տարեկան մի երեխոց է, Ալանչա-Խանը, կենդանի է մնացել: Մի հրաշքով նա ազատուել էր, երբ խանի որդիկերանց կոտորում էին և փախել սարերը զէպի Զինաստանի սահմանները: Ինչպէս էլ որ լինէր, պէտք էր գտնել Ուզուն-Խանի այս վերջին ներկայացուցչին, և այն ժամանակ միայն Ղարա-Նինդիլի թագաւորութիւնը բոլորովին ապահոված կը լինէր: Ի հարկէ, Զուշի-Քաթէմը ոչ ոքի չէր յայանում իւր գործը և սասափիկ կերպով գաղանի էր պահում: Ալանչա-Խանը թագ կացաւ կիրղիզ հովիւներից մէկի խուզում և որպէս մի աղքատ՝ խաշն էր արածում: Մի ամբողջ տարի Զուշի-Քաթէմը շետամուտ էր լինում, և միայն մի տօ-

բուց յետոյ կարողացաւ բռնել նորան: Երեխայի վիճակը կանխագիշ վճռուած էր և Ղարա- Նինդիլը ոչինչ չպիտի խմանար:

Բայց բանը ուրիշ կերպ դուրս եկաւ: Խորամանկ Ալթուն-Թիլքին պատմեց Ղարա-Նինդիլին փոքրիկ Ալան- չա-Խանի վիճակի մասին, որպէս հեքիաթ, և թագուհին գառնաղէտ ողբում էր թշուառ մանկան վիճակը: Իսկ երբ նա իմացաւ, որ այդ հեքիաթը եղելութիւն է, և Ալանչա-Խանը կենդանի է, նա կանչեց Զուչի-Քաթէմին և ծնկաչք ակսեց աղերսել որ չսպանէ անմեղ մանկան:

—Թագուհին է քո առաջ ծնկաչք սողում, —ասում էր Ղարա-Նինդիլը, ձեռքելը կուրասելով:

—Թագուհին իւր և իմ կորուսան է աղերսում: —կըսկ- նում էր անբրդելի Զուչի-Քաթէմը: —Կամ նա, կամ մենք...

—Իսկ եթէ քեզ խնդրէ ոչ թէ թագուհին, այլ Ղարա-Նինդիլը, այն Ղարա-Նինդիլը, որ քեզ սիրում էր... Քեզ խնդրում է Զուչիան-Տառւի խեղճ աղջեկը...

Այս խօռքերից շարժուեց Զուչի-Քաթէմի երկաթէ սիրու և նորա զօրեղ ձեռները թուլացան: Ի՞նչ պիտի անէր: Ալանչա-Խանը կըմեծանար և նոցա բոլորին կըգըլ- խատէր... Բայց Ղարա-Նինդիլը այնպէս լաց էր լինում, այնպէս աղերսում էր և մինչեւ անդամ համբուրում նորա շորի փեշերը, որ Զուչի-Քաթէմը անկարող եղաւ նորան վիմաղրելու. —այդպէս էլ ջուրը լուանում է լին- նային ամենամեծ ժայռերը:

—Ղարա-Նինդիլ յիշեր, դու ինքդ այդ կամեցար, — առայ Զուչի-Քաթէմը, զլուխ տուեց և դուրս եկաւ:

Ալանչա-Խանը փրկուած էր: Նորան տարան Բաղի- Դիգիշտը բնակելու, ապարանքը պատեցին բարձր պարիս- պով, նշանակեցին սաստիկ հսկողութիւն և ամեն տեսակ միջոցներ գործ դրին, որ Ալանչա-Խանը չփախչի: Ղարա- Նինդիլը ուրախութիւնից լաց էր լինում:

## VII.

Ալանչա-Խանը կենդանի թաղուած էր Բաղի-Դիգիշտում, և նորան պատել էին համբ պահապանները, — այդ այն թշուառ զերիներն էին, որոնց լեզուները Ուզուն-Խանը կտրել տուեց: Զուչի-Քաթէմին հաւատարիմ պահապաններ էր ընարել և ամեն առաւօտերեկեկոյ գալիս էր ստուգելու: Խւրաքանչխւր ստամբակին, որ թողնում էր իւր տեղը, մահ էր սպառնում: Փոքրիկ Ալանչա-Խանը, կարծես, ընկած լինէր մեռեալների թագաւորութիւնը և չէր լսում կենդանի մարդկային խօսակցութիւն: Որպէս մի ուրու նա թափառում էր իւր պալատի սենեակներում, զքօնում էր պարտիզում և ողջ օրը անց էր կացնում շատրուանների մօտ, որոնք, կարծես, խօսում լինէին նորա հետ: Սյո, այստեղ չէին լուսմ միայն շատրուանները և վիշերը լալիս էին չինարների, նոճիների կանաչ սաղարթներում սոխակները: Համբ ծառաները նշտնայի էին խօսում խտնի հետ, այն էլ ամենակարեռ գէպքում: Մանկահասակ խանը ոչինչ զգիաէր, թէ ինչու են իրեն նստեցրել այս տեղը ինչու գերութեան մէջ են սպահում և վերջապէս ինչու իրեն էլ չեն սպանում, ինչպէս միւս եղբայրներին: Նա թափառում էր Բաղի-Դիգիշտում, որպէս իւր կենդանի ստուերը:

Որքան երկար էր տեսում ժամանակը Բաղի-Դիգիշտում, նոյնքան արագ էր անցնում նա նորա պարխապներից գուրա, այն տեղ, ուր տարածուած էր Կանաչ Քաղաքը: Թոշնի պէս էին թոշում այստեղ օրերը, շաբաթներն ու ամիսները, մասնաւանդ Նարա-Նինդիլի համար: Մատղաշ, անփորձ աղջիկը այժմ մեծ, նոյնպէս զեղեցիկ և թարմ օրիորդ էր, ինչպէս և գահ նատելու ժամանակ: Նորա հասակակիցները, որոնք մարդու չէին գնացել, արդէն ծերացել էին, որովհետև երեխաններ էին

բերել, հոգսեր էին քաշել, ուրախացել էին և տիրել, լայ  
եղել իսկ Ղարա-նինդիլը առաջուայ պէս օրիորդ էր մնա-  
ցել և չէր իմանում, թէ ինչ բան է աղամարդի համբոյ-  
րը: Նա մինչեւ անզամ վախենում էր աղամարդկանցից,  
որոնք աշխարհիս բոլոր գժբաղդութիւնների պատճառներն  
են—և պատերազմ՝ և որդեծնութիւնն, և խարուած կա-  
նանց արցունքները և շատ ուրիշ անարդարութիւններ,  
որ գործում են ուժեղները թոյլերի վերաբերմամբ: Ղարա-  
նինդիլը վճռել էր օրիորդ մնալ, որպէս զի կեանքը  
նուիրէ իւր ժողովովին և կամաց-կամաց ուզզէ բոլոր  
այն թշուառութիւնները, որ խստասիրտ Ուզուն-Խանը  
հասցըրել էր նորան:

Նորա մերձականների մէջ կային շատ գեղեցիկ կարիք-  
ներ, բայց թագուհու ողորմած հայեացքին ոչ ոք չար-  
ժանացաւ, կարծես, թագուհին իւր կախորդական գեղեց-  
կութիւնից սառած լինէր: Երկրագործութիւնը, արհեստաները,  
վաճառականութիւնը, արուեստաները ծաղկում էին,  
և երջանիկ ժողովուրզը զբաւառում էր իւր իմաստուն  
թագուհուն, Ղարա-նինդիլին, որին տեսնում էին միայն  
պալատականները: Ճերմակցաւ նոյն իսկ Զուշի-Քաթեմի  
մօրուքը, բայց Ղարա-նինդիլը կրկին օրիորդ էր, եռան-  
զազին կերպով պահպանելով իւր «կուսական հպար-  
տութեան սառուցը», ինչովէս ասում է բանաստեղծ Հա-  
ֆիզը:

Ոչ ոք բացի Ալթուն-Թիլքիից և Ակ-Բիբէից, ոչ  
ոք չգիտէր, թէ ինչպէս սիրում է այդ անմատչելի գեղեց-  
կուհին, երբ մենակ է մնում: Հասարակ մարդիկը պիտի  
չիմանային այդ, թէ չ այլ ևս չէին յարգիլ իրենց  
թագուհուն: Նախ և առաջ նա ինքն պէտք է յարգէր  
իրեն և ասում էր.

—Ես թագուհի եմ ոչ միայն նորա համար, որ Ու-  
զուն-Խանը պահպան ինձ հետ, այլ այն պատճառով,

որ ևս հին խանական տոհմից եմ... Ես արիւնով թագուհի եմ, զուտ թագաւորական արիւնից եմ:

Հարևան թագաւորութիւններն օգուտ քաղեցին Ռւզուն-Խանի մահից նորա տէրութիւնը ձեռք բերելու նպատակով, բայց Զուչե-Քաթէմը ջարդ ու փշուր արեց նոցա և կարող էր նոր երկրներ նուաճել: Ղարա-Նինդիլը այդ չըր կամենում: Թող միայն որ իրեն ձեռ չտան: Փոքր առ փոքր նա այնպէս ընտելացաւ իւր իշխանութեան, որ իրեն մի արտասովոր կին էր համարում, որ բոլորովին նման չէ մարդու գնացող այն աղջկերանց, որոնք երեխայ են բերում և իւնեց սոօրէական կանացի հոգսերի մէջ մաշվում են շատ շուտով: Նա թաղուհի է և նորա համար սովորական բերկրութիւն, վիշտ և արտասուք չկան: Երբ նա տիրում էր, Ալթուն-Թիլքին հէքիաթներ էր պատմում, իսկ զուարթ Ակ-Բիրէն երգեր էր երգում:

Մակայն Ղարա-Նինդիլը յածախակի առանձնանում էր իւր ապարանքի ամենաշեռաւոր սենեակը, փակվում էր և երկար լաց լինում,—ոչ ոք պիտի չտեսնէր կանացի այս արտասուքը, մինչև անդամ Ակ-Բիրէն և Ալթուն-Թիլքին: Ղարա-Նինդիլի անձնաւորութեան մէջ սաստիկ կռիւմ էին կինն ու թաղուհին: Նա այնտեղից այնպէս ուրախ և հանդիսաւ էր զուրս գալիս, որ ոչ ոք չէր իմանում, թէ ինչ էր անում նո այն տեղ: Բայց այս կանացի խորամանկութիւնը ծածուկ չմնաց Ալթուն-Թիլքիի ծեր աշքից, որ շան պէս հասկանում էր իւր տիրուհու իւրաքանչիւր շարժուածքը: Մի անդամ սա տսաց թաղուհուն:

— Ուզում ես, սպանիլ ինձ, թաղուհի, բայց զուլաց ես եղել...

Ղարա-Նինդիլը իսկըն կարմիեց ու գեղնեց, ինչպէս մի բռնուած զող բայց ոչինչ չպատասխանեց յիմար պատմին: Մի ուրիշ անդամ Ալթուն-Թիլքին տսաց նորան:

— Դու լաւ ես անում, որ տղամարդ առած բանդ չես իմանում, բայց կըպառաւես և այն ժամանակ կ'ափսոսաս: Ուզում ես, հրամայիր, որ ինձ սպանեն, բայց ես ձիշդ բան եմ ասում...

Ղարա-Նինգիլը չասաց, որ Ալթուն-Թիլքիին կախեն, այլ միայն ժպտեց:

Ակ-Բիբէն ուրիշ բան էր մատածում, երբ Ղարա-Նինգիլը սկսում էր տիրել նա մի որ և իցե զուարձութիւն էր գտնում: Մի անգամ նա ասաց թագուհուն:

— Գնանք, տեսնենք, թէ ինչ է, անում Ալանչա-Խանը... Նա մեղ չի տեսնիլ, իսկ մենք կընայենք: Նա այժմ բոլորովին մեծացել է և, ինչպէս ասում են, շատ գեղեցիկ է:

Ղարա-Նինգիլը ընդունեց այս անմիտ առաջարկութիւնը և Ակ-Բիբէի հետ գնաց Բաղի-Դիգիշտ: Ալանչա-Խանը ձեմում էր պարտիզում, իսկ նոքա նայում էին այգու պատի մի ծակից:

— Այս, որքան գեղեցիկ է: Ի՞սկը խան, է,— շնչեց Ակ-Բիբէն: — Ո՞րպիսի խիզախ գէմք, ո՞րպիսի կրակոս աչքեր ունի: Ափսոս, որ նորան գերութիւնից չէ կարելի ազատել: Ձուչի-Քաթէմը անողում է...

Ղարա-Նինգիլը ոչինչ չպատասխանեց և սովորականից աւելի մտախոհ առն վերագարձաւ: Հետեւալ անգամ նաժիշափ շոր հագաւ և մենակ գնաց Բաղի-Դիգիշտ: Պահապանները ձանաչում էին նորան և ներս թողին: Ալանչա-Խանը կրկին ձեմում էր պարտիզում և շատ զարմացաւ, երբ տեսաւ իւր առջեւ մի շատ հաստրակ կերպով հագնուած աղջիկ:

— Դու ի՞նչ ես անում այս տեղ, — հարցրեց Ալանչա-Խանը և զարմացաւ իւր ձայնից, — նա բոլորովին մոռացել էր լսելի կերպով խօսելը:

— Ինձ մեր թագուհի Ղարա-Նինգիլը ուղարկեց

քեզ մօտ հարցնելու, արդեօք քեզ բան պէտք չէ,—պատասխանեց Ղարա-Նինդիլը համեստաբար աչքերը ցած ձգելով, ինչպէս անում են նաժիշտաները:

—Ես կանանց հետ գործ չունիմ,—հպարտ պատասխանեց Ալանչա-Խանը և մինչեւ անդամ ձգուեց, որպէս մի գեռաբջյութարտի:—Ասա Ղարա-Նինդիլին, որ նա վաս կին է... նա սպանեց եղբայրներիս և տիրեց զահին: Նա ինձ էլ է կամենում սպանել այստեղ, այս ոսկեպատ գերեզմանում, և ես զարմանում եմ, ինչու նա ուղղակի չըրամայեց, որ ինձ կախեն: Այդպէս էլ ասա նորան, ես մահից երկիւղ չեմ կրում... Ասաւած մեզ կըդատէ:

—Ղարա-Նինդիլը աւելի լաւ է, քան թէ դու կարծում ես... Նորան են վերապրում շատ բան, որ նա երբեք չի էլ մտածել անելու, իսկ նորա անունով անում են ուրիշները: Լաւի մտսին չեն խօսում, իսկ վատը ամենքը նկատում են...

—Երեւում է, որ Ղարա-Նինդիլը քեզ հետ լաւ է, որ այդքան գովում ես նորան, —կոպիտ պատասխանեց Ալանչա-Խանը և ծիծաղեց:

Այդ պատասխանը Ղարա-Նինդիլին վերաւորեց որպէս մի զանակի հարուած, և նորա աչքերը փայլեցին, բայց նա զսպեց իւր զայրոյթը և կրկին սկսեց գովել շնորհալի թագուհուն, որ իրեն զոհում է ուրիշների համար:

—Եթէ դու միայն գորտ համար ես եկել, գտ ապարդիւն աշխատանք է, —պատասխանեց Ալանչա-Խանը, յետ դարձաւ և շարունակեց:—Ասա Ղարա-Նինդիլին, թէ ես նորան ատում եմ, որպէս իմ հարիւր մարթած եղբայրներա... Ինձանում թագաւորի արիւն կայ, իսկ նա հասարակ հոգուի աղջիկ է:

—Ճշմարիտ չէ, —կարուկ կերպով պատասխանեց Ղարա-Նինդիլը և նոյնպէս ձգուեց, բայց շուտով խելքի եկաւ և ցած ձգեց իւր հիանալի աչքերը: Ղարա-Նինդիլը

բուն թագաւորի արիւնից է, ոչ թէ հովուի աղջեկ։  
Ղարա-նինդիլը զայրացած ու վտացած տուն վերա-  
դարձաւ։ Ինչու համար է պատասնին այգպէս ատում նո-  
րան և մեղաղրում այն բաների համար, որ նա երբէք չէ  
արել։ Դա անարդար է։ Բայց որպիսի հպարտ տեսք ու-  
նի նա, Սլանչա-Խանը... Ղարա-նինդիլը բոլոր ժամանակը  
նորա մասին էր մտածում, և որպէս զիշերուայ գող  
թափանցեց նորա սրտում կարեկցութիւն դէպի թշուառ  
կալանաւորը։

Խեղճ Սլանչա-Խան... Այդ միաքը երբէք չէր թող-  
նում Ղարա-նինդիլին։ Ինչպէս նա չկարողացաւ Ալանչա-  
Խանի յանդզնութեան որպէս պատասխան պատմել այն  
բոլորը, ինչ որ զիտէր Ուզուն-Խանի՝ մասին, թէ ինչ-  
պէս նա բնածինջ արաւ Սոված Տափառանի մարդկանց,  
աւերակ դարձեց շատ քաղաքներ և տմարդորէն ոչնչաց-  
րեց խանական տոհմերը, ի միջի որոց և իւր տոհմը...  
Ու, մի անգամ էլ պէտք է գնալ և պատմել բոլորը  
այդ հպարտ տղային... Ղարա-նինդիլը այգպէս էլ արաւ։  
Սլանչա-Խանը գարձեալ Ճեմում էր պարտէզում և կար-  
ծես թէ սպասում էր նորան։ Նա պատրաստուել էր  
արգէն բոլորն աօելու Սլանչա-Խանին, բայց սա կանդնեց-  
րեց նորան։

— Ա՞խ, նաժիշտ, որքոն տիսրում եմ ես... — շնչեց  
Սլանչա-Խանը և յետ դարձաւ, որ ծածկէ իւր ար-  
տասուքը։ — Այն ժամանակ դռւ ասացիր, թէ Ղարա-  
նինդիլը արդարամիա է և կամենում է իմ զրութիւնը  
բարւոքել։ Ես այն ժամանակ չեի կումենում ստորանալ  
և խողբել բայց այժմ տաս նորան։ Սլանչա-Խանը խընդ-  
րում է Ղարա-նինդիլից, որ թոյլ տայ իւր նաժշանն  
ամեն օր գալ թաղի-Դիղիշտ։

— Դա անկարելի է... — ընդհատեց նորան Ղարա-նին-  
դիլը և կարմրեց։

— Բայց չէ որ դա նորա համար չնշին բան է: Միթէ նա քիչ նաժիշտ ունի, որ միայն մեկը ինձ տայ... Բայցի այդ, դու դեռ զիտես, թէ ինչպէս կըլսորհի թագուհին: Գուցէ, նա կ'ուղարկէ ել քեզ...

Կարծես, թէ խանի հպարա որդին այլ ևս չկար, կար մի թշուառ մարդ, որ ասես բաղխում լինէր Ղարանինդիլի հոգուն: Մի և նցյն ժամանակ սա զայրանում էր, որ իրեն նա մի հասարակ նաժիշտ էր համարում, որի վերաբերմաբ թագուհին կարող էր ամեն տեսակ կարգադրութիւն անել: Նա ել նայում էր Ղարանինդիլի վերայ, որպէս մի հասարակ կնոջ վերայ, որ կարող էր քաղցրացնել իւր ախրութիւնը և միայնակեցութիւնը: Սակայն Ալանչա-Խանի աչքերն ուրիշ բան էին ասում: Նորա խանդակաթ սիրով էին նայում և ախրազին աղերսնէք էր երեւում նոյս մէջ: Ղարանինդիլը չփիմացաւ և փախաւ նորանից, ինչպէս փախչում է եղջերուն որսորդից: Զվիճեց Ալանչա-Խանը նորա հետ առաջին անգամուայ պէս, չհայհցեց Ղարանինդիլին, սա տեսաւ, որ ախուր է Ալանչա-Խանը. Զէ, աւելի ևս—պատանին սիրեց նորան առաջին խոկ անդամից, և սիրեց նորան ոչ որպէս թագուհու, այլ այնպէս, ինչպէս որ կըսիրէր ամեն մի ուրիշ աղջկայ:

Այս արկածը վրգովեց Ղարանինդիլին: Բայցի այդ բոլորը կատարուեց առապելական շոշանի մէջ. թագուհին մինչեւ անգամ երազում տեսնում էր Ալանչա-Խանին, և սա մի ինչ որ փաղաքշական խօսքեր էր շնչում նորան և անդամար նայում էր իւր սե, ախրամած աչքերով, նայում էր ուղղակի հոգու մէջ: Խեղդուկ էր նորա համար օվը իւր պալատում և Ղարանինդիլը երազում շնչում էր այն ջերմ խօսքերն, որ խեղդում էին նորան: Սակայն երրորդ անգամ գնալ նորա մօտ Ղարանինդիլը չերազում չնշում էր այն ջերմ խօսքերն, որ խեղդում էին նորան: Սակայն երրորդ անգամ գնալ նորա մօտ Ղարանինդիլը չերազում չնշում էր այն ջերմ խօսքերն, որ խեղդում էին նորան:

տեղը տանջել խղճուկին անմտաչելի ուրուականով: Իսկ  
եթէ նա սպասում է: Գոնէ պէտք է նորան ասել, որ  
Ղարա-Նինդիլը չէ ուզում թողնել իւր ամենասիրելի և  
հաւատարիմ նաժշտին:

Այս նպատակով Ղարա-Նինդիլը երրորդ անգամ  
զնաց Բաղի-Դիգիշտ, բայց ներս մննելիս պահապանները  
արգելեցին:

— Զուչի-Քաթէմը հրամայել է, որ ոչ ոքի ներս  
չթողնենք...

— Մինչև անգամ և ի՞նձ: Դիտէք, թէ ով եմ...

— Մինչև անգամ և քեզ, թագուհի:

— Հա, այ բանը ինչպէս է...— շնչեց ամաչած Ղա-  
րա-Նինդիլը, և նորա աշքերը փայլեցին մի արտասովոր  
կրակով:

### VIII.

Զուչի-Քաթէմը ձերբակալուեցաւ և բանտարկուեցաւ  
Լէտաֆէտ-Նամէյում: Նո էլ այնպիսի մի կալանտոր  
դարձաւ, ինչպէս և Ալանչա-Խանը:

— Ո՞վ է հրամայել կալանտորել և ինչու համար,—  
հարցնում էր նա, ապշած լինելով եղելութիւնից:

— Իւքը թագուհին:

— Անկարելի բան է այդ: Միջոց տուէք, որ ես նո-  
րա հետ խօսիմ, և թագուհին կըտեսնէ, որ ես անմեղ  
եմ պատժվում... Ես միշտ նորա բարին եմ միայն կա-  
մեցել:

Սակայն Ղարա-Նինդիլը չցանկացաւ տեսնել Զուչի-  
Քաթէմին, բայց միայն ուղարկեց նորա մօա Ալթուն-Թիւլ-  
քիին ասելու, թէ թագուհին կարող է վարուել, ինչպէս  
կամենում է, և թէ իւր կամքին իւրաքանչիւր հակառակ  
զնացողը կըստանայ արժանի պատիժ: Զուչի-Քաթէմը

ոչինչ չողատասխանեց, բայց միայն գլուխը խոնարհեց. ահաւասիկ վարձատրութիւն նորա հաւատարիմ ծառայութեան և հաւատարմութեան համար:

Ամենքը սպասում էին, թէ ում կընշանակեն Ձու-  
չե՞աթէմի տեղ և որ երջանիկը թագուհու մօտիկ մար-  
դը կըդառնայ, բայց Ղարա-Նինդիլը ուզում էր ցոյց տալ,  
որ ինքը իսկ թագուհի է և մենակ կարող է կառավարել  
տերութեան բոլոր գործերը: Նորա կամքը օրէնք է բոլորի  
համար:

Այժմ Բաղի-Դիզիշտ գնալու ձանապարհը բաց էր,  
և Ղարա-Նինդիլը կարող էր գնալ այն տեղ, երբ ուզե-  
նար: Սկզբում այդ ազատութիւնը մինչեւ անգամ մի  
փոքր շփոթեց նորան, և կարծես թէ նա չէր վստահա-  
նում օգուտ քաղել դորանից, ինչպէս մի վանդակապատ  
թռչուն, որ նախ քան դէպի վեր սաւառնելը պատրաս-  
տում է իւր թեւերը: Նա խղճահարվում էր Ակ-Բիբէի  
և ուրիշ կանանց առաջ: Բայց և այնպէս նա սրտով  
Բաղի-Դիզիշտ էր ուզում գնալ. հաւանական է, որ Ալան-  
շա-Խանը սպասում է նորան և տիրում: Արդարեւ նա  
սպասում էր, և երբ եկաւ՝ առաջուայ պէս գարձեալ որ-  
պէս համեստ նաժիշտ, Ալանշա-Խանը աղերսազին պարզեց  
իւր ձեռը:

—Քանի քեզ չէի տեսնում, թւում էր, թէ ես մե-  
ռել եմ,—ասաց նա փաղաքշանքով:—Հը, ինչպէս է Ղա-  
րա-Նինդիլը: Ոլքան շատ եմ մտածում, այնքան էլ շատ  
եմ ուզում տեսնել նորան... Ես նորա մասին ամեն բան  
կիտեմ: Համայն թագաւորութեան մէջ նա առաջին գե-  
ղեցկուհին է:

—Դու նորանից էլ գեղեցիկ ես, Ալանշա-Խան... Քո  
գեղեցկութիւնը նման է ամպերի յետև թագնուած արե-  
գակին: Յետոյ Ղարա-Նինդիլը յիմար է... Երբ ես նորան  
յայտնեցի քո ցանկութիւնը նաժիշտ ունենալու, նա պա-

տասխանեց. գնա՛ նորա մօտ և ամեն բան արա, որ նա չտիրէ:

— Զէ, նա բոլոր կանանցից ամենաիմաստունն է...  
Ուրեմն զու ամե՞ն օր պիտի գաս ինձ մօտ:

— Ո՞չ, ոչ... Ես միայն երբեմն կարող եմ գալ, բայց  
միալ այս տեղ—ոչ: Ղարա-Նինդիլը ասաց. «գու անարատ  
աղջեկ գնում ես նորա մօտ և այնպէս էլ կրվերադառ-  
նաս, թէ չէ ես քեզ սպանել կրտամ»:

Ալանչա-Խանը միայն ծիծաղեց, իսկ Ղարա-Նինդիլը  
աչքերը ցած ձգեց: Երբ սա գալիս էր, Ալանչա-Խանը  
հարց ու փորձ էր անում թագուհու մասին, կարծես,  
սիրահարուած լինէր: Ղարա-Նինդիլի սիրալ սասահիկ բա-  
րախում էր, բայց նա իւր իսկական անունը չէր յայտ-  
նում: Երբ Ալանչա-Խանը տիրում էր, նա պատմում էր  
նորան հեքիաթներ, ուր սիրահարուածները միմեանց չեն  
ձանացում, իսկ չար բաղզը ծիծաղում էր նոյա վերայ:  
Ղարա-Նինդիլը իւր բոլոր զբացմունքները և մոքերը այս  
ձեռվ էր յայտնում նորան և զիտում էր, թէ որպիսի  
տպաւորութիւն են թողնում Ալանչա-Խանի վերայ: Երբ  
նա մտնում էր Բաղի-Դիգիշա, բոլորովին փոխվում էր—  
հպարտ թագուհին մնում էր պարախզի գուան մօտ, իսկ  
այստեղ մի համեստ աղջեկ էր, որ վախենում էր ամեն  
մի սիրալիր հայեացքից:

Եյդ այն բանն էր, որ հաւասարեցնում է բոլոր կա-  
նանց: Երբ Ալանչա-Խանը առաջին անգամ զրկեց և  
համբուրեց Ղարա-Նինդիլին, սա սարսուռ զգաց, զողաց,  
որպէս մի նետահար թռչնակ, և միայն շշնջեց.

— Ի՞նչ ես անում: Ես ի՞նչ կ'ասեմ Ղարա-Նինդիլին:

— Ասա՞ նորան, որ ես սցըպէս եմ ուզում:

Ղարա-Նինդիլը հաղիւ հաղլ զուրս պրծաւ նորա  
զրկեց և երկար ժամանակ էլ չէր երեսում Բաղի-Դիգիշ-  
տում: Ինչու համոր Ալանչա-Խանը համրուրեց նորան...

Այս համբոյրը, կարծես, բորբոքեց նորան և, զիշերը զարթնելով, նա մեկնում էր ձեռքերը անտեսանելի Ալան- չա-Խանին: Ի հարգէ, նա կարող էր համբուրել հասա- րակ նաժշտին, բայց թագուհի Նարա-Նինդիլի հպարտու- թիւնը վիրաւորուած էր: Ո՞հ, նա սիրում է Ալանչա- Խանին, իսկ սա երբէք պիտի չիմանաց այդ:

Հետեւեալ անդամ տեսնուելուց Նարա-Նինդիլը ասաց Ալանչա-Խանին:

—Ես խեղձ աղջիկ եմ, և դու ինձ վիրաւորեցիր քո համբոյրով:

—Ես սիրում եմ քեզ, նաժիշտ, —պատասխանեց Ալանչա-Խանը:

—Ոհ, միթէ այդպիսի սէր լինում է... Մենակ այս տեղ նստած զու ախրում ես և փաղաքշեցիր նաժշտին: Բայց դու մոռացար, որ խաբում ես Նարա-Նինդիլին, որ քեզ հաւատում է: Քո սէրը նոյնպէս ինձ կ'ոչնչացնէ, ինչպէս արեգակը տոչորելով անապատի զարնանային ա- րօտը: Եթէ դու խան լինի, Ուզուն-Խանի պէս իւրա- քանչիւր տարի ամբողջ տէրութեանդ զեղեցկուհիներին կըհաւաքէիր և կըփակէիր պարտէղներումը: Դա անար- դարութիւն է, և զա սէր չէ:

—Սիրելի աղջիկ, իշխանութիւնը մարդկանց փչաց- նում է, բայց այժմ ես մի բան գիտեմ, որ քեզ սիրում եմ և աւել ես ոչ մի բան չեմ իմանում... Եթէ ես խան լինէի, քեզ կի՞ն կ'առնեի:

—Իսկ եթէ քեզ մօտ ի՞նքը Նարա-Նինդիլը դադ... Դու ինձ էլ կըմոռանայիր և բոլորին աշխարհում:

—Նա—իմ հօր կինն է:

—Միայն անունով... Նա անարատ կըս է մնացել և գորանով հպարտանում է: Եւ եթէ Նարա-Նինդիլը զար քեզ մօտ, ինքը թագուհի Նարա-Նինդիլը, և ասէր, թէ քեզ սիրում եմ... Ո՞հ, դու կըմոռանայիր ինձ...

— Երբէք, կրկնում էր Ալանչա-Խանը և պարզում  
տղերսազին իւր ձեռնիրը ձիշդ սյնպէս, ինչպէս տեսաւ  
նորան երազում Ղարա-Նինդիլը — Եթէ ես խան լինէի,  
նախ և առաջ սպանել կրտսյի Ղարա-Նինդիլին... Ես  
նորան ատում եմ:

— Իսկ ինչո՞ւ համար ես այդքան յածախ հարցնում  
նորա մասին:

— Որովհետեւ գու այդքան գովասանում ես նորան:

Այդ այն էր, ինչ որ լինում է զեղեցիկ և ագեղ  
օրիորդնիրի հետ: Ղարա-Նինդիլը ամբողջ զիշերը անց  
կացրեց Բաղե-Դիզիշտում և առաւօտեան դառնաղէտ կեր-  
պով լաց եղաւ:

— Այժմ ես ի՞նչ կ'ասեմ Ղարա-Նինդիլին, — կրկնում  
էր նա, չըսելով Ալանչա-Խանի մսիթարանքը: — Ես խա-  
րեցի նորան... Նա այժմ կ'արհամարհէ ինձ: Ինչպէս ես  
պիտի երեխմ նորա աչքին:

— Մնա այս տեղ, — խնդրում էր խանը: — Կամ սո-  
վորեցրու պահապաններին և մենք փախչենք:

Ղարա-Նինդիլը սցժմ խանդ էր տածում Ալանչա-  
Խանի վերաբերմամբ և վախենում էր նորա համար իւր  
սեպհական սառւերից, այն անմատչելի թագուհի Ղարա-  
Նինդիլից, որ պիտի չիմանար սովորական կանացի թու-  
լութիւնները: Նա առեց Ալանչա-Խանին, որ ամեն բան  
զոհեց: Բայց մի անյաղթելի ոյժ կրկին մղում էր նորան  
Բաղե-Դիզիշտ, և այս տեղ Ղարա-Նինդիլը լի ու լի խը-  
մում էր իւր առաջին սիրոյ գառն բերկրութեան բաժա-  
կը: Նա երջանիկ էր, որ Ալանչա-Խանը ուրախ է, ինչ-  
պէս կալանաւորի պատուհանում երգող թաշնակը: Տուն  
վերադառնալուց նա կրկին անմատչելի թագուհի էր գառ-  
նում, որի առաջ ամենքը գոզում էին: Ա-հ, նա զիտէր  
ցոյց տալ որ Նորա-Նինդիլը առանց Զուշի-Քաթէմի կա-  
րող է նոյնաղէս խելացի կերպով կառավարել տէրութիւ-

նը: Հեռուուր երկրներից գտվիս էին հետաքրքրուող մարդիկ տեսնելու, թէ ինչպէս է կառավարում թագաւորութիւնը մի մատաղահաս կին, և զովարանում էին նորան: Ավուջի-Բօշը փառաբանում էր նորան իւր ստանաւորներում, որ երգում էին թափառաշրջիկ աշուղները: Ժողովուրդը բարօրութեան մէջ էր, վաճառականութիւնը ծաղկում էր և միայն զօրքերն էին տրանջում, մտարերելով Ռւզուն-Խանի արշաւանքները, երբ նոքա կարողանում էին յափշտակել, սպանել և գերի տանել:

Կարա-Նինդիլը նոյնպէս երջանիկ էր իրեն համար, ինչպէս և տռաջ մենակ էր լալիս, —ոչ ոք պիտի չիմանար նորա գաղտնի ուրախութիւնները: Ասածուայ ողէս նորա ներկայութեամբ ծաղիկները թառամում էին, բայց այժմ նա դոյցա համար ժամանակի չուներ:

## XXI.

Արդէն երկու տարի էր, որ Զուչի-Քաթէմը նստած էր բանառում և ոչինչ չփիտէր, թէ ինչ է լինում ոյն տեղ, բանախ պատերից գուրս: Նա նոյնպէս շրջապատռած էր համր պահապաններով, ինչպէս և Արանչա-Խանը: Ամբողջ օրեր նա ձեմում էր այգում և զգաստ ականջ էր զնում Կանաչ Քաղաքից եկող շշուկին: Ի՞նչ է լինում այժմ այն տեղ և ի՞նչ է անում Կարա-Նինդիլ թագուհին, որ այգպիսի սև տպերախոռութեամբ վարձատրեց նորսն և՝ արած ծառայութիւնների և՝ սիրոյ փոխարէն: Զուչի-Քաթէմը չեր էլ մասածում փախչելու մասին, ուր փախչի, կամ միթէ նա կարող է փախչել Հարա-Նինդիլից: Մի ժամանակ գեղեցիկ հսկան այժմ ալեւոր էր և ընկած, — արդէն ծերունի էր նա: Սակայն նա համոզուած էր, որ կըզայ այն ժամր, ելք Ղարա-Նինդիլը նորան էլ կըյիշէ, այն սև ժամը, երբ միայն հաւո-

ապրիմ ծառաներն են հարկաւոր: Թա՞ղ այժմ թագուհին ուրախանաց Ալանչա - Խանի հետ, բայց այդ ուրախութիւնները թանկ կընստին նորան: Զուչի-Քաթէմը մինչև անդամ երազում տեսաւ. Բաղի - Դիզիշա այգին, տեսաւ և Ղարա-Նինդիլին, ինչպէս նա գաղտագողի կերպով գնում էր սիրականի մօտ, — ոչ. ինչո՞ւ նա այն ժամանակ չհրամայեց սպանել խանի այդ անիծեալ որդուն: Գոռող և անմատչելի թագուհին նորա համար ամեն բան մոռացաւ. — և իւր կուսական հպարառութիւնը, և թագուհու մեծութիւնը և նորա խորհուրդները:

Մի անդամ զիշերը, երբ Զուչի-Քաթէմը քնած էր, նորան զարթեցրեց անծանօթ քայլերի մի ձայն: Ակղում նա կարծեց, թէ եկել են իրեն սպանելու, և աշից սարսուռ զզաց, բայց յետոյ ներս մտաւ Ակ-Բիբէն և փաթաթուեցաւ հօր վզով:

— Դու ազտ ես, — շշնջեց նա: — Ղարա-Նինդիլը քեզ է սպասում:

— Մի բա՞ն է սպասահել, — հարցրեց Զուչի-Քաթէմը չհաւատալով իւր երջանկութեան:

— Ալանչա-Խանը փախել է, — սպասախանեց Ակ-Բիբէն, աչքերը ցած ձգելով: — Ղարա-Նինդիլը իրաւունք է տուել նորան որսի զնալու, իսկ նա փախել է: Նորա յետեից են ընկել զօրքը և ժողովուրդը: Ամեն րոսկ սպասում են ապստամբութեան, իսկ Ղարա-Նինդիլը փակուել է իւր պալատում: Ժողովուրդը մոռացել է նորա բարերարութիւնները, իմաստալից կառավարութիւնը — ամեն բան:

— Ես սպասում էի այդ, — մտախոչ տսաց Զուչի-Քաթէմը: — Այդպէս էլ պէտք է լիներ:

Ղարա-Նինդիլը անհամբեր սպասում էր իւր պալատում Զուչի-Քաթէմին: Նորա զէմ էին ամենքը. սիրուած իշխանները, զօրքը, ժողովուրդը: Քանի որ Զուչի-Քաթէմը

կալանաւորուած էր, Ուզուն-Խանի կողմանակիցները աղտա-  
օրէն տեսնում էին իրենց գաղտնի զործը: Ղարա-Նինդիլը  
ամենից յետոյ խմացաւ բոլորը: Ալանչա-Խանը որս զնալու-  
իրաւունք է խնդրել և փախել: Ո՞հ, ինչպէս էր սա ա-  
զառում, պաղատաւմ, և Ղարա-Նինդիլը հաւատաց նորա-  
երգումներին: Մի բան լաւ էր, մինչեւ վերջը նա հասա-  
րակ նաժիշտ մնաց և չասաց իւր անունը:

Երբ Զուչի-Քաթէմը եկաւ պալատ, Ղարա-Նինդիլը  
ընդունեց նորան հպարա ու հանդիսա կերպսի, ինչպէս  
նա միշտ ձանաչում էր թագուհուն:

— Դու աղատ ես, Զուչի-Քաթէմ, — ասաց թագուհին,  
— մատածիր փրկութեանդ մասին: Զօրքը անցել է Ալանչա-  
Խանի կողմը:

— Ես քեզ հետ կրմեանեմ, թագուհի, — պատասխա-  
նից Զուչի-Քաթէմը Բաղդը փոփոխական է, բայց մենք  
կըտեսնենք, թէ այս տղան ինչ կ'անէ Զուչի-Քաթէմի  
հետ... Ուզան-Խանի անիծեալ յեղը կը ճանաչէ ինձ:

— Արա, ինչ որ ուզում ես, — վճռեց Ղարա-Նինդի-  
լը: — Ես մեղաւոր եմ քո առջե:

— Միթէ արեգակը կարող է մեղաւոր լինել, որ կու-  
րացնում է մեր թոյլ աչքերը:

Զուչի-Քաթէմը յցս էր գնում, որ տռաջուայ պէս  
աղդեցութիւն կ'ունենայ ժողովրդի փերայ, բայց նա այնպէս  
չարաչար սխալուեց, ինչպէս և Ղարա-Նինդիլը Ալանչա-  
Խանի վերաբերմամբ: Ժողովրդը արդէն մոռացել էր  
Զուչի-Քաթէմին և անհամբերութեամբ սպասում էր, թէ  
երբ Ալանչա-Խանը զօրքերով կը մօտենայ Կանաչ Քաղա-  
քին: Զուչի-Քաթէմը այժմ իւրաքանչիւրին մատնիչ էր  
համարում և թուկ չէր բաւականանալ նոցա կախելու  
համար: Յուջի-Քօշը ի միջի այլոց նոյնպէս անցել էր  
Ալանչա-Խանի կողմը և այժմ նորան էր պրուատում,  
ինչպէս առաջ Ղարա-Նինդիլին: Օրէ ցօր փրկու թեան յոյ-

որ աւելի և աւելի պակասում էր, իսկ Ալանչա-Խանը օրէ ցօր աւելի և աւելի էր մօտենում: Նորան՝ որպէս յաղթողին անձնատուր էին լինում մէկը միւսի յետեից քաղաքները և զօրքը իւրաքանչիւր առաջ զնացած քայլի հետ աւելանում էր: Արդէն քաղաքում երեւան էին եկել խանի զաղրալի թերթերը, որ Առշի-Բօշն էր զրել:

— Այժմ ամեն բան վերջացել է, — ասաց Զուչի-Քամեմը, համոզուելով, որ ապարդիւն են իւր բոլոր ջանքերը:

Ղարա-Նինդիլը այս լուրը լսեց բոլորովին անվըդով, կարծես, թէ հէնց այդպէս էլ պէտք է լինէր բոլորը: Մի և նոյն բանն է՝ անցեալը չես վերադարձնիլ, իսկ ապագայի մասին նա աշխատում էր չմտածել:

— Պէտք է փախչել, թագուհի, — ասաց Զուչի-Քամեմը: — Ալանչա-Խանը կըզայ հարաւից, իսկ մենք կը դնանք պէտի հիւսիս:

— Զոլփան-Թառու, — ուրախացաւ Ղարա-Նինդիլը: — Թերես և Բաղիր-Խանն էլ ողջ է, և ես կըտեսնեմ նորան... Ո՛, շուտով, շուտով...

Ալթուն-Թիլքին վաղուց անհետացել էր, և նորան մինչև անգամ չէին որոնում: Զուչի-Քամեմը վճռեց, որ երկով փախչեն: Բնքը, Ղարա-Նինդիլը և Ակ-Բիրէն: Խանի ախոռից նա ընտրեց վեց լաւ նժոյդ, որ երկու-երկու ձիով փախչեն: Ղարա-Նինդիլը հագաւ այն իսկ շորը, որով նորան բերեցին Զոլփան-Թառուից, և խանական մեծագին իրեղիններից ոչինչ չառաւ: Ինչի՞ն են պէտք հարստութիւն, թանկագին շորեր և ծոխութիւն, երբ սիրտը կոտրուած է: Նա չէր համաձայնիլ փախչել, եթէ իւր սիլելի լեռները տեսնելու փափազը չլինէր, ուր նա մեծացել էր, և Բայզիր-Խանին մի անգամ ևս գրկելու ցանկութիւնը չլինէր: Միթէ մի և նոյն բանը չէ մեռնել ինչ տեղ ուզում է լինի... Միայն Զուչի-Քամեմը չէր մատծում մաշուսան մասին, այլ ընդհակառակ կեանքը

նոր էր ժպառում նորան: Նա հեռու-հեռու կըստանէ Դարա-նինդիլին, և սա կրկին կըսիրէ նորան: Հարևան տէրութիւններից իւրաքանչիւրն ուրախութեամբ կ'ընդունի նորան և նա վրէժինդիր կըլինի Ալանչտ-Խանին մտածութեան համար:

Մի մութ զիշեր փախատականները զուրս եկան Կանաչ Քաղաքից, երբ քաղաքային բալոր պահապանները քնած էին: Առջելից թուչկոտում էր ինքը Զուչե-Քաթէմը, իսկ նորան հետեւում էին Դարա-նինդիլն և Ակ-Բիրէն: Այսպէս նոքա երկու օր, երկու զիշեր արշաւում էին, մինչեւ որ հասան Զոլփան-Թառ:

— Այժմ մենք տանն ենք, — ասաց ուրախ-ուրախ Զուչե-Քաթէմը: — Ալանչտ-Խանին էլի մի շաբաթ պէտք է, որ հասնի մեզ: Հանգստաններ Բայզիր-Խանի մօտ և կրկին շարունակենք մեր Ճանապարհը Առված Տափաստանի միջով:

Դարա-նինդիլը լրւու էր: Նորան հետաքրքրում էր այն բանը, որ ինչ տեղից անց էին կենում: Իսկոյն բոլոր ծաղիկները մեռնում էին, կարծես, թէ նոյտ հետեւից ինքը մնաւ զալիս լինէր: Դա մի սարսափելի անհձք էր, որ նա հետը տանում էր Կանաչ Քաղաքից:

— Ի՞նչ ես լոել, թագուհի, — հարցրեց սիրալեր կերպով Զուչե-Քաթէմը:

— Ես թագուհի չեմ, այլ Դարա-նինդիլ... Թաղուհին մեռաւ... այն աեղ, Կանաչ Քաղաքում մեռաւ...

## X.

Առաջ Բայզիր-Խանը չՃանաչեց փախատականներին, իսկ յետոյ ուրախացաւ: Առաջ նորա միրուքը ճերմակ էր, յետոյ գեղնել էր, իսկ այժմ կանաչ մամաի ողիս, որով Ճանակած էին Զոլփան-Թառի սարելք:

—Մենք հիւր ենք եկել—ասաց Զուչի-Քաթէմը:—  
Ղարա-Նինդիլը կարօտել էր քեզ:

Ծերունին նայեց իւր հարիւրամեայ տչքերով Զու-  
չի-Քաթէմին և միայն զլուխը շարժեց. թագուհին երկու  
ձիով ման չէ գալիս: Յետոյ Զուչի-Քաթէմը պատմեց  
Բայզիր-Խանին եղելութիւնը և ոչինչ չժաղցրեց:

—Մեր գժբաղբութիւնները մեծ են միայն մեղ հա-  
մար, իսկ եթէ հեռուեց նայելու լինինք նոյա վերայ, ա-  
ւելի և աւելի փոքրանում են,—պատասխանեց ծերունին:

—Կար Ուզուն-Խան, կար Ղարա-Նինդիլը այժմ Ալանչա-  
Խանն է, նորանից յետոյ էլ մի ուրիշը կը լինի... Գարնան  
մի արօտ է լինում, աշնանը—ուրիշը, իսկ միւս ամառ՝  
հրբորվը: Ամենից զժուարը ինքն իրեն համար թափառու  
լինելն է... և վախենալ նոյնալէս պէտք է միայն իրենից:

Ղարա-Նինդիլը առաջ ուրախայտ, երբ տեսաւ Բայ-  
զիր-Խանի քարանձաւը, ուր նա մանկահաստկ ժամանա-  
կը ասլրում էր նորա հետ, Գեօղ-Թառն իւր աւերակնե-  
րով բարձրաւանդակի վերայ և այն բոլոր տեղերը, ուր  
նա՝ անհոգ մանուկը վազվզում էր: Սարերի վերայ ծա-  
ղիկներ չկային, այդ ուրախայնում էր նորան. այժմ չը  
կան մեռնելու բաներ նորա ներկայութեան ժամանակ:  
Գեօղ-Թառնի գագաթը լիրկ էր, և հաղիւ հաղ այն տեղ  
բռնվում էին մի երկու համարեա գօսացած թուփի: Բայց  
յետոյ Ղարա-Նինդիլը կրկին ընկաւ մտախոհութեան մէջ  
և բոլորովին անստարբեր գտրձու: Նա սիրում էր կրտկի  
մօտ նստել և նայել այն տեղ հեռու ցածր, ուր սփրո-  
ռւած էր որսէս գեղին գորգ Սոված Տափաստանը, իսկ  
ապա՝ մտաբերեց այն երգերը, որ մի ժամանակ երդում  
էր Բայզիր-Խանը:

Մի երկու օրից, երբ ձիերը արգէն հանդստացել էին,  
Զուչի-Քաթէմը ասաց.

—Ղարա-Նինդիլը ժամանակ է դնալու:

— Ո՞ւր, — զարմացաւ Ղարա-Նինդիլը: — Ես կը մնամ  
այս տեղ Բայզեր-Խանի մօտ, իսկ դու Ակ-Բիրէի հետ  
կը դնաս:

Զուչի-Քաթէմը շուտրած մնաց: Որքան էլ համոզում  
էր նորան, որքան էլ խնդրում էր, աղաջում և սպազ-  
առում, կրկին Ղարա-Նինդիլը իւր տաճին մնաց:

— Այսոտեղ ինձ համար լաւ է, — պնդում էր նա մի  
և նոյնը:

— Խելքի եկ, թագուհի:

— Ես արդէն եկիլ եմ:

— Զէ՞ որ իւրաքանչիւր ժամը թանկ է... Եթէ ինքդ  
քեղ չես մեղքանում, մեղքայիր ինձ ու Ակ-Բիրէին:

— Թողէ՞ք ինձ մենակ և աղատեցէք ձեղ...

Զուչի-Քաթէմը արտասուաթոր աղերսում էր Ղարա-  
Նինդիլին, բայց նա անտարբեր էր և դէպի արցունքը:

— Ա՛, ուրեմն զու այդպէս ես վարվում ինձ հետ, —  
աղաղակեց նա թագուհու վերայ սաստիկ կատաղած, որ-  
պէս մի զաղան: — Այն ժամանակ ես քեղ կը կապեմ, որ-  
պէս մի յամառ ոչխարի, և բռնի կերպով կը տանեմ  
ինձ հետ:

— Կապի՞ր, եթէ ձեռդ կը բարձրանայ մի այդպիսի  
բան անելու, իսկ ես կենդանի անձնասուր չեմ լինիլ քեղ:

— Ո՞չ, եթէ այդպէս է, ես քեղ սարսափելի բան  
կ'անեմ, Ղարա-Նինդիլ... Երդը եմ իմ ազիտակ մօրու-  
քով, որ այն կ'անեմ, ինչ որ դու չես էլ մտածել:

— Ի՞նչ կ'անես:

Այժմ Ղարա-Նինդիլին էր արցունք թափելով խընդ-  
բում Զուչի-Քաթէմին, որ փախչի, քանի ժամանակ կայ,  
իսկ իրեն լծողնի այն տեղ բայց Զուչի-Քաթէմը տագառ-  
ժի պէս կարծր էր:

Անցաւ մի օր, անցաւ միւսը, բայց Ղարա-Նինդիլը բոլո-  
րովին անտարբեր էր դէպի սաստիացող վտանգը: Նա միայն

մեղքանում էր Ակ-Բիբէխն, որ աշխատում էր ուրիշներից ծածուկ լալ և լալ—Ակ-Բիբէխն զեռ շատ երիտասարդ էր և ուզում էր ապրել:

Զուչի-Քաթէմը կարծես, հանգիստ էր, բայց յաճախակի ականջը գնում էր գետնին և լսում,—նորա սուր ականջը գայլե ականջից լաւ էր լսում:

— Պալիս են...

Ղարա-Նինդիլը մինչեւ անգամ յետ չնայեց:

— Ղարա-Նինդիլը գալիս են, կրկնեց նա:

Ղարա-Նինդիլը անշարժ մնաց:

— Թագուհին, գալիս են,—գարձեալ կրկնեց նա, և

Ղարա-Նինդիլը ծիծաղեց:

Ակ-Բիբէխ բարձրաձայն լալիս էր և յուսահատութիւնից մաղերը փետում էր:

— Եթէ այժմ և հթ մենք գնանք, մեղ չեն հասնիլ,— համոզում էր Զուչի-Քաթէմը:— Նոցա ձիերը յոգնել են, իսկ մերը զուարթ են... Մի օրից մենք հեռու կը լինենք ամեն վտանգից:

Զվերջայրեց իւր խօսքը Զուչի-Քաթէմը, և աշա սարերում երևեցին ձիաւորներ. նոքա շատուք էին և սարից իջնում էին զէպի հովիտ: Զուչի-Քաթէմը նայեց իւր սուրը, նիզակը, աղեղն ու նետերը և տառց.

— Մահը մօտ է...

Այդ միջոցին Ղարա-Նինդիլին երկիւղ աիրեց. չէ որ կարող են կենդանի գերի տանել նորան և որպէս մի խեղճ սորկուհի քաշել տանել Կանաչ Քաղաքը:

— Զուչի-Քաթէմ, սպաննիր ինձ,—աղերսում էր նա:— Լաւ է մեռնել, քանի թէ թագուհու զերութեան խայտառակութիւնը տանել...

Այժմ Զուչի-Քաթէմը ծիծաղեց. փախչել ուշ էր...

Արդէն ձիաւորները մօտենում էին, այնպէս որ կարելի էր որոշել նոցա բարձր մորթէ զլիսարկները, երկայն

Նիղակները, նոցա վերայ ծածանուող ձիու պոչերի և դէսքերի փայլը,—դա խանական հին պահապաններն էին, որ առաջինը հեռացան Ղարա-Նինդիլից: Զուչի-Քաթէմը կկոցեց աշքերը և ձանաչեց Ալանչա-Խանին, որ պահապանների մէջ տեղումն էր՝ սպիտակ ձիու վերայ:

—Ես չեմ կամենում այս տեղ մեռնել...—հաստատ կերպով ասաց Ղարա-Նինդիլը: —Չի տուր և գնանք Գեօղ-Թառը: Այնտեղ լաւ ասկաստարան կայ:

Զուչի-Քաթէմը հնազանդուեց: Ահից ու վախից Ակ-Բիրէն զըկուեց զգայմոնքից, բայց Զուչի-Քաթէմը դրեց նորան ձիու վերայ իւր առջև և տարաւ հետը: Ղարա-Նինդիլը և Բայղեր-Խանին համոզեց զնալ իրենց հետ, որ սկզբում չէր կամենում թողնել իւր քարանձաւը: Երբ խանի պահապանները մօակցան այդ քարանձաւին, երեք ձի՝ կատուի պէս չանդուակելով, վեր էին բարձրանում գէպի Գեօղ-Թառն: Հեռուից անդամ նոցա վերայ նայելը խղճալի էր, և նոյն իսկ քաջերի սրաները ահ զգացին:

Երբ վերջապէս փախստականները հասան գագաթը, Զուչի-Քաթէմը զրեց հին աշտարակի պատին իւր տէզը և, զլիսրկը ծածանելով, աղաղակեց գէպի ցած՝ Ալանչա-Խանին:

—Է՞, զուք, վախկոտնե՛ր, ով է ուզում այսաեղ թողնել իւր ջիմսար զլուխը... Իսկ քո ականջները, Ալան-չա-Խան, ես կըկտրեմ, ինչպէս մի լակոտի, միայն քիմդ ցոյց տուր դու այսաեղ:

Բայղեր-Խանը նայում էր գէպի ցած միւս կողմից, ուր սփռուած էր Սոված Տափաստանը և յիշեց, ինչպէս էր կովում Գեօղ-Թառի վերայ գեռ Ռւզուն-Խանի հետ:

## XI.

— Նոքա այլ ևս գնալու տեղ չունին, — ասաց Առւ-  
ջի-Բօշը իւր նոր իշխան Ալանչա-Խանին: — Նոքա մերը կը  
լինին. . .

— Գլխաւորն այն է, որ ողջ բռնենք նոցա, — պա-  
պասխանեց Ալանչա-Խանը: — Ես երբէք չեմ տհսել այդ  
Ղարա-Նինդիլին. . .

— Են տեղ՝ Գիօղ-Թառի վերայ նոքա երկու հոգի  
են. Ղարա-Նինդիլն ու Ակ-Բիրէն: Լաւ կը լինէր, եթէ եր-  
կուսին ողջ բռնենք և շղթաներով կաշկանդած տա-  
նէնք Կանաչ Քաղաք:

Ալանչա-Խանը ոչ ոքի չէր ասել որ մի նաժիշտ էր  
դալիս իւր մօտ Բաղը-Դիզիշտ, և միայն կարօտում էր  
տեսնել այդ առասպեկտական թագուհի Ղարա-Նինդիլին, որի  
մասին այնքան շատ բան էր լսել: Նորա բոլոր յաղթու-  
թիւնները ոչինչ էին այդ ցանկութեան առաջ. քանի  
գեռ Ղարա-Նինդիլը աղաս է, նա, Ալանչա-Խանը, գեռ խան  
չէ: Ի միջի այլոց նա զարմանում էր, թէ ինչու վախը-  
տականները այդքան ժամանակ մնացել էին Զոլպան-  
Թառում և առաջ չեն գնացել: Խանական ախոռի ըն-  
տիր նժշյգները նոցա կ'աղատէին:

— Ըստ ամենը վեց ձի է, իսկ իրենք չորս հոգի են  
Բայղըր-Խանի հետ միասին, — ասաց Առւջի-Բօշը: — Նոքա  
չին կարող այստեղ անպաշտապան թողնել ծերունուն...

— Դու չափազանց շատ ես մեծահոգութիւն վերա-  
գրում նոցա, — բարկացած պատասխանեց Ալանչա-Խանը:  
Հասարակ պատահմունք է. . .

Իսկըն խանի համբարդներից զուրս եկան մի քա-  
նիսը, որոնք կամեցան բարձրանալ Զոլպան-Թառ և զերի  
առնել այն տեղ դանուող այդ մի քանի քաջերին: Մա-

Նաւանդ վրդովվում էր Առջե-Բօշը, որին ծառայութիւնների համար Ալանչա-Խանը մի սուր էր ընծայել: Նա յայտնեց, թէ ինքը կրբարձրանայ Գեղգ-Թառն, եթէ պէտք լինի այդ: Երբ Ալանչա Խանին պատմեցին Զուչի-Քաթէմի հպարտ խօսքերը, կարմրեց, որպէս մի աղջեկ. ոհ, թանկ կընստի նոյտ վերայ այդ անպատճռութիւնը, միայն որ կենդանի բռնենք նոյտ:

Խիզախ կամաւորների Գեղգ-Թառն բարձրանալու առաջին փորձը լիակատար անյաջողութիւն ունեցաւ: Ստիպուած էին մի-մի բարձրանալ տպառաժոտ սարի վերայ, ինչպէս այծեամներ, և Զուչի-Քաթէմի հմուտ հարուածները մի-մի վայր էին զլուում և խեղճերը ջարդ ու փշուր էին լինում: Որքան էլ Առջե-Բօշը ծածանում էր իւր թուրը, որքան էլ տղաղակում էր նա, վազվելով սարի ստորոտում, կրկին ոչինչ վուրս չեկաւ այդ յարձակմունքից, բայց միայն մի քանիսները սպանուեցան:

—Ի՞նչ են վախենում, — բայցանչում էր Առջե-Բօշը: — Ես ինքս մենակ կ'առնեմ Ճնճղուկների այդ բոյնը . . .

— Իսկ Ալանչա-Խանը ի՞նչ է ինկայ պէս թաք կացել — աղաղակում էր սարից Զուչի-Քաթէմը, ծածանելով իւր սուրը: — Թո՞ղ գայ այս տեղ, իսկ յած իջնելու ես նորան կ'օգնեմ . . .

Սնդօր կտասղութիւնից Ալանչա-Խանը ատաֆներն էր կրծառում, — այսպէս մի-մի Զուչի-Քաթէմը նորա բոլոր զինակիցներին կըսպանէ: Բայց Առջե-Բօշը միսիթարում էր նորան:

— Մենք այնպէս էլ կ'առնենք նոյտ, որովհետեւ այն-աել, սարի վերայ ջուր չկայ. . .

— Ի՞նչ աեղից զիտես:

— Ես իմանում եմ իմ ձիերի խրխնջենից:

— Այն ժամանակ մենք կըսահողենք նոյտ առանց մի

կաթիլ արխւն թափելու անձնատուր լինել, — վճռեց ա-  
լանչա-Խանը:

Գեօղ-Թառւի ստորատում հաւատարիմ պահապան-  
ներ էին զրուած, իսկ ինքն Ալանչա-Խանը իւր բանակը  
զրել էր հովտում: Նորս վրանից երևում էր ամբողջ  
Գեօղ-Թառւն և, գորդի վերայ պառկած, նա կարող էր  
աեսնել բոլոր, ինչ որ անում էին սարի գարաթին: Աշ-  
տարակի աւերակների վերայ երեցող մարդկային կեր-  
պարանքներն այնքան փոքրիկ էին, ինչպէս մանկական  
խաղալիքները, այնպէս որ գժուար էր որոշել տղամար-  
դուն կնկանից, այն էլ միայն շնորհիւ լեռնական թա-  
փանցիկ օղի:

Երեկոյեան ուրախ-ուրախ վառվում էին ճբագները  
Ալանչա-Խանի բանակում, որ իւր պատերազմական աշ-  
խատութիւններից և յաղթութիւններից յետոյ այժմ  
հանգատանում էր: Արշաւանքից գարսրած պահապան-  
ները նշյալքէս ուրախ էին այժմ հանգստութիւն առնե-  
լու: Երեկցաւ կրակ և Գեօղ-Թառւի գարաթին, — կարծես,  
գայլի աչք լիներ: Չորս կողմում տիրում էր գերեզմանա-  
կան լուսութիւն և միայն ձիերի խրինջիւնն էր լսվում,  
որոնք անտեղեակ էին մարդկային ատելութեան: տիրա-  
զին խրինջում էին նժյոգները Գեօղ-Թառւի գարաթին և  
ուրախապին պատասխանում էին նոցա խանի ձիերը, որ  
արածում էին կանաչ արօսում:

Ուրախանում էր Ալանչա-Խանը իւր քաջ նիղակա-  
կիցների հետ և վայելում խնջոյք, երբ Չորսան-Թառւն  
շուտ ընկղմուեց լեռնային պիշերի մթութեան մէջ:

— Իսկ այդ ով է երգում, — հարցրեց Ալանչա-Խանը,  
ականջ զնելով:

— Դա անմիտ ծերունի Բայզըր-Խանն է...

Արգարե, այդ Բայզըր-Խանն էր երգում: Նա իւր  
չին երգերն էր երգում Աւզուն-Թանի մասին, չին հսկա-

ների մասին, որոնց ոսկրները յիր ու յան են եղած Սովոր Տափաստանում, հիասքանչ գեղեցիուհիների մասին, որոնց Ուղուն-Խանը գերի էր տարել, տերակ դարձրած քաղաքների մասին և ամենքի վերայ պտտուող անտեսանելի մաշուան մասին: «Ո՞հ, սիրում է մաշը քաջերին, — երգում էր Բայզըր-Խանը, — նա չէ խնայում ոչ գեղեցիուհիներին, որոնք գնում են գալիս մեր աչքի առաջ, ինչպէս վայր ընկնող տսագեր... Ինչ տեղ Տաղկած քաղաքներ են այժմ, իւր ժամանակին այն տեղ անտպատ կը լինի: Ուղուն-Խան, զու շատ թափեցիր մարդկային արիւն, բայց գորտնից գերեղմանդ կակուղ չէ... ընդհանուր վեճակը վերջին աղքատի և ամենամեծ խանի համար հաւասար է: Միայն անարդար մարդկանց համար ապրելը սարավիելի է, իսկ մաշը սիրում է քաջերին... Դարձեալ եկաւ Բայզըր-Խանը Գեօղ-Թառն և կըսպասի այս տեղ ինչպէս ստոր վախկոտները կըթափեն նորա արիւնը: Միայն վատ գործերի վառքը չի մեռնի և սուրբ երգերն, որոնց մէջ երգիչները երգում են իրենց հայրենիքը»:

Լսելով Բայզըր-Խանի երգը, Ալանչա-Խանը արտասուեց: Լեռնային օդը այնքան մաքուր էր, որ հասցնում էր նորան իւրագանչիւր խօսքը: Մտածմունքի մէջ ընկըդմայան և այն քաջերը, որոնք պատերազմական աւարի մասին էին մտածում, որ գոնվում էր Գեօղ-Թառի բարձրաւանդակի վերայ. ովլ զիտէ, թէ որը կենդանի կըմնայ և կըվերադառնայ տուն, իսկ Զուշի-Քաթէմը հմուտ կերպով է նետեր արձակում: Մինչ ծերունին երգում էր իւր երգերը և Ալանչա-Խանի համհարզները լսում էին նորան, Զուշի-Քաթէմը կատուի պէս ցած իջաւ սարից: Ճանապարհին նա սպանեց խորասուղուած պահապանին և կըրկին վեր բարձրացաւ՝ հետը ջուր բերելով իւր թաւուամազ զլլսարկով:

—Ահա, Ղարա-Նինդիլ, և ջուր,—հպարտօրէն ասաց նա, մեկնելով իւր թաց զլիարկը թագուհուն, —իսկ Ալանչա-Խանը յիմար է...»

Ծարաւատանջ ձիերը ուրախ-ուրախ խրխնջացին, երբ զգացին նոր բերած ջրի թարմութիւնը: Բայց Ղարա-Նինդիլը ոչ մի կաթիլ չխմեց, այլ իւր բաժինը տուեց Ակ-Բիրէին, որ հիւանդ պարկած էր: Զրի մնացածը Ջուշի-Քաթէմը տուեց Բայզըր-Խանին: Խեղճ ձիերին ոչինչ չմնաց, և նոքա տիսուր նայում էին բոլորի վերայ: Ի զուր էր Ղարա-Նինդիլը փաղաքշում՝ նոցա և տալիս թաց զլիարկը լիզելու, — նոքա սմբակներով գետինն էին փորում և ջուր խնդրում: Նոքա հետեւում էին իրենց տէրերի իւրաքանչիւր քայլին և խրխնջում, կարծես, թէ կանցում լինէին նոցա, — և բոլորի վերայ մահաբեր տըրամութիւն էին բերում:

—Արձակենք ձիերին... — ասում էր Ղարա-Նինդիլը: — Երե՛ք, — հպարտութեամբ պատասխանում էր Ջուշի-Քաթէմը: — Դոքա մեր վերջին յշյն են, որ մեզ հետ էլ պիտի մեռնեն... Եթէ Ակ-Բիրէն լաւանայ այնքան, որ կարողանայ ձիու վերայ նստել, մենք կ'անցնենք խանի այդ ազուաների մօտից, որոնք միայն ուտել-խմել են խմանում:

—Երկաթէ սիրտ ունես, Ջուշի-Քաթէմ...»

Ղարա-Նինդիլը աչք չփակեց ամբողջ զիշերը և միայն նստած էր հին պատին, ուր զեռ մանուկ ժամանակը սիրում էր նստել: Այս տեղ առաջին անգամ նկատեց նորան Ջուշի-Քաթէմի արծուային հայեացքը, և ահա կրկին Ղարա-Նինդիլը իւր սիրած տեղումն է, վերեւում նոյն երկինքն է, այն տեղ, հեռու, մի և նոյն Սոված Տափաստանը, բայց ինքը այժմ այն չէ և իրեն հետ բերել է այս տեղ մի ամբողջ գժոխք: Ինչպէս ձիերն էին տանջվում ծարաւից, աւելի ևս տանջվում էր Ղարա-Նինդիլը

իւր յիշողութիւններից։ Եւ չկար այն ջուրը, որ կոտրէր նորա հոգու ծալաւը... Նորա դժբաղզութիւնների ամենաազլիսաւոր պատճառը, որ սիրելով Ղարա-Նինդիլն պատրաստ էր անձը զոհել, վաղուց արդէն օտար էր նորա սրբին, և Ղարա-Նինդիլին էլ հէսց այս էր տանջում, որ վճռել էր մեռնել։

Ո՞հ, անմիտ Զուչի-Քաթէմը, ինչու է նա այս տեղունակ, որին ընտրեց Ղարա-Նինդիլի սիրաը, որին ամեն բան տուեց, սպասում է նորան, որպէս զի հրձուի նորա վերջին անարդանկով... Բայց այդ չի լինիլ. Ալանչա-Խանը չի անեսնիլ Ղարա-Նինդիլ թագուհուն և չի իմանալը որ աս իրեն սիրող նաժիշտն է... Նա թագուհի էլ կըմեռնի այս քարերի մեջ որպէս այն քաջերը, որոնց սիրում է մահը։ Մի անգամ, միայն մի անգամ բացուեցաւ նորա կուսական սիրաը և ահա ծանր վարձ այդ սիրոյ փոխարէն... Իսկ նա կարծում էր զեռ, թէ Ղարա-Նինդիլ թագուհին նման չէ ուրիշ կանանց և թուլութիւններից զերծ է։ Անիծեալ օր, երբ Զուչի-Քաթէմը առաջին անգամ տեսաւ նորան. . .

Պաշարուածների, ինչպէս և զիւանդների համար, զիշերները երկարատև են լինում։ Մի քանի անգամ Ղարա-Նինդիլը նայեց ձիերին, որոնք զով զիշերի պատճառով մի փոքր հանգստացել էին, բայց դա միայն պատրամը էր, որպէս զի տւելի սաստիկ ծարաւ զդան արել ծագելուն պէս։ Այն արկանը, որ ամենքին կեանք ու շարժողութիւն է պարզեւում, նոցա բոլորին կ'ոչնչացնէ։ Ղարա-Նինդիլը նոյնպէս տաննջփում էր ծարաւից և զնում էր զլուխը հով քարերի վերայ։

Զուչի-Քաթէմը աչք չէր խփել այդ զիշեր և բոլոր ժամանակը հսկում էր, քարի յետև թաք կացած։ Ամենից յարմարը զիշերն էր թշնամիների համար յարձակուելու, և, երեխ, միայն յոդնածութիւնն էր խանգարում

Ալանչա-Խանի զինակիցներին զիշերուայ մթութիւնից ս-  
գուտ քաղելու: Լուսաբացին Զուչի-Քաթէմը զգաց, որ  
յոզնել է, և նորա արծուէ աչքերը սկսեցին նիրհիլ: Մի-  
այն զգաստ ականջը լսում էր ամեն մի ձայն, և Զուչի-  
Քաթէմը ամեն մի չնչին շշուկից վեր էր թռչում: ուր  
քարերի մէջ բոյն էին դրել խլէղներն ու օձերը: Առաւո-  
տեան, երբ հովիտը միգով ծածկուեց, երկինքը դորշ գոյն  
ստացաւ, իսկ քարերը, կարծես, քրանել էին, Զուչի-Քա-  
թէմը ընկղմուեց անհանգիստ քնի մէջ: Նա ուշքի եկաւ,  
երբ վիղը փաթաթուեցաւ կանացի երկու ձեռներով,—այդ  
Ղարա-Նինդին էր: Սա զլուխը թեքեց և ջերմ կերպով  
համբուրեց նորան:

— Զուչի-Քաթէմ, ես Ճանաչում եմ քո առիւծական  
սիրտը... — շնչեց նա, զեռ ևս զրկած նորան, — ես զիտեմ,  
որ դու միշտ սիրում էիր ինձ... Բայց ես մի խնդիր ու-  
նեմ քեզանից. գնա՞ այս տեղից և մոռացիր Ղարա-Նինդի-  
լին: Ես քեզ համբուրում եմ, ինչպէս եղօրս, իսկ իմ  
սէրս այն տեղ է, ցածը... Թող ինձ, որ մեռնեմ այս տեղ  
մենակ, և ես կըմեռնեմ, որպէս թաղուհի:

— Ես բախտաւոր եմ... — պատասխանեց Զուչի-Քա-  
թէմը, — այս, ես բախտաւոր եմ, որ պիտի մեռնեմ քեզ  
հետ, թագուհիս: Եթէ կեանքը մեզ բաժանեց, թող մա-  
հը միացնէ... Օրհնեալ լինի այն ժամը, երբ իմ աչքերը  
քեզ տեսան այս աւերակներում:

## XII.

Անցնում է մի օր, անցնում է և հետեւալը: Ուրա-  
խանում է Ալանչա-Խանը իւր վրանոկմ և անդադար  
նայում է Գեօղ-Թառւին, նորա զագաթին, ուր ամեն  
բան ասես թէ մեռած լինէր: Մարաւատանջ ձիերը կար-  
ծես թէ այլ ևս խրինջելու ոյժ չունէին, և Ալանչա-

Խանի սիրալը ուրախանում է: Շուտով կըգայ այն ցանկալի ժամը, երբ Ղարա-Նինդիլը անձնատուր կըլինի և նա կըտանէ նորան կանաչ-Քաղաք որպէս իւր գերին և կըհրամայէ կախել նորան, մեռցնել ինչպէս Զուշի - Քաթէմը Ուզուն-Խանին մեռցրեց: Մրեգակը չպիտի տեսնէ խանտկան արխւնը... Ուրախութիւն է անում Արանջա - Խանը, ուրախանում են նորա հետ և զինակիցները:

Առջե-Բօշը առաւօհան և երեկոյեան դուրս է գալիս բանակից և գոչում:

— Ե՞հ, գուք, ագռաւներ, անձնատուր եղէք... Ալանչա-Խանը ձեզ հետ կըվարուի այնպէս, ինչպէս հրամայում է նորա խանտկան սիրալը: Մի և նոյն բանն է, սովից կըսատկէք... .

— Ե'կ և առ, — աղազակում է սարից Զուշի-Քաթէմը: — Դու ծեր յիմար ես, չարժէ մինչև անզամ, որ քեզ կտինեն:

Այս, ինչպէ՛ս էին տանջվում ձիերը Գեօղ-Քառուի գագամթին, և ինչպէ՛ս էր ցաւում նոցա համար Ղարա-Նինդիլի սիրալը... Նոքա արդէն էլ չէին կարողանում լիրինջալ, այլ միայն մարդկանց պէս հառաջում էին: Գիշերը նոքա լիզում էին խոնաւ քարերը, իսկ ցերեկը արեգակը շատ անխնայ էր կիզում, և ձիերը շոգից տապակվում էին և կրծտում միմեանց: Ակ-Բիրէն մեռածի պէս պարկած էր և կրկին ամենից լաւ էր զգում իրեն Բայղըր-Խանը: Ամեն երեկոյ ծերունին բարձրանում էր պատի վերայ և երգում իւր երգերը:

Անցաւ և չորրորդ օրը: Ալանչա-Խանը սպասելուց զգուեց, և նա հրամայեց, որ գիշերը յարձակուեն, սակայն դորա հետեւանքն այն եղաւ, որ Զուշի-Քաթէմը էլի չորսին սպանեց, իսկ մնացեալները փախան: Ծարաւից ծիւրեալ Զուջի-Քաթէմը, քիչ էր մնացել, մեռնէր թուլու-

թիւնից, և Ղարա-Նինդիլը հոգս էր քաշում նորա համար, զնելով զլխին ստո քարեր:

Վեցերորդ օրը մեռաւ Ակ-Բիբէն: Ի՞նչպէս էր տանջվում խեղճ կինը և ինչպէս էր նա ջուր խնդրում, որ թրջե չորացած բիբանը. բայց ջուր չկար... Նորան միշտ թւում էր, թէ թշնամիները նորից ու նորից յարձակփում են, և նա խնդրում էր, որ իրան սպանեն և չտան Աղանջա-Խանի ձեռքը խայտառակութեան: Նորան թաղեցին խոր ջրհորում, որ երբեմն փորել էին Գիօղ-Թառուի զըլիխն: Զուշ-Քաթէմը աղի արյունք էր թափում իւր աղջկայ գերեզմանի վերայ, որին անարգել էր Ուզուն-Խանը, և այդ վեշար ոյժ էր տալիս նորան:

— Մի՛ լար, Զուշ-Քաթէմ, — միսիթարում էր նորան, Ղարա-Նինդիլը, — Ակ-Բիբէն մեղանից երջանիկ է... Նա այլ ևս չէ տանջփում: Նա այլ ևս ծարաւ չէ, չի տեսնիլ խայտառակութիւն, հիւանդութիւն, իւր և ուրիշ անարգութիւնը:

— Ո՞հ, ի հարկէ, մեռնել, շուտով մեռնել, — շշնջեց Զուշ-Քաթէմը, ծածկելով երեսը ձեռներով: — Եւ զու, Ղարա-Նինդիլ միսիթարում ես ինձ... Դու իմ արեգակն ես, որ մի քանիսներին կեանք է տալիս, իսկ միւսներին մեռցնում... Ես միայն մի բանից եմ երկիւղ կրում: անարդար չլինել գերջին րոպէն գէպի քեզ և ինձ... Դու իմ սոված Տափաստանն ես, ուր ես ամեն բան թաղեցի...

Ո՞հ, ինչպէ՞ս էր տանջփում, ինչպէս սաստի՛կ էր տանջվում Ղարա-Նինդիլը: Արժէր միայն փակել աչքերը, և ամեն բան ծածկվում էր կարմիր կրակով, — նա, այդ կրակը լափում էր նորան: Մինչև անգամ խնայողութիւն չկար և տմբողջ երկինքը արիւնոտ էր երեսում և աստղերը նայում էին այն տեղից զարհութելի կարմիր կրակի աչքերով: Եթէ ձիերը այդպէս սարսափելի կերպով սատկում էին ծարաւից, Ղարա-Նինդիլը կրկնապատիկ

առանջվում էր, և բարոյական երկունքն մարմնական տան-  
ջանքներից ծանր էին:

— ԶԵ, ԵՍ Թագուհի ԻՄ... Թագուհի... — շշնջեցին  
Ղարա-Նինդիլի ցամաքած՝ շրթունքը, այն շրթունքը,  
որոնցով նա համբուրել էր Աղանջա-Խանին: — ՆԱ ՀԻՇ տես-  
նիլ իմ անարգանքս... ՆԱ ՀԻՇ լսիլ իմ աղաչանքս, որ  
ինայի... ԵՍ Թագուհի ԻՄ...

Անցաւ եօթ սոսկալի օր և եօթ սոսկալի գիշեր, և  
երբ Զոլպան-Թառւի վերայ բարձրանում էր առաւօտեան  
արելը, Գեօլ-Թառւի վերայ կալանաւորները մտածում  
էին — վերջին անգամն է մեզ համար ծագում արեգակը:  
Բոյորի երեսները կապուտել էին, ծռուել և սարսափելի  
զարձել: Նոքա աշխատում էին չնայել միմեանց վերայ:  
Մինչեւ անգամ Ղարա-Նինդիլի լեզուն ուռահլ էր, և նա  
հազիւ հազ էր կարողանում խօսել: Զուչի-Քաթէմը նոյն-  
պէս հաղիւ էր կարողանում ոտի վերայ կանգնել, և մի  
տեղից միւս տեղ գնալու համար նա զարմանալի կերպով  
զժուարանում էր: Ամենից զուարթ ու առյգն էր Բայ-  
զըր-Խանը, բայց նա էլ բոլորովին խելքը կորցրել էր սո-  
վեց: Մահը արագ քայլերով էր մօտենում նոցա:

Ղարա-Նինդիլը պատի վերեռում սպասում էր: Ո՞՛Հ,  
որքան զժուար էր նորան բարձրանալ այդ տեղ, բայց  
պէտք էր... Նա ցած էր նայում՝ Աղանջա-Խանի բանակի  
վերայ, և տեսնում, որ նորից պատրաստվում էն յարձակ-  
ուելու: Ո՞՛Հ, եթէ նա կարողանար ծիծաղել այդ քա-  
ջերի վերայ, բայց նա միայն ձեռքով արաւ Զուչի-Քաթէ-  
մին, որ պատի մօտ գայ: Երբ սա բարձրացաւ պատի վե-  
րայ, տեսաւ, որ ծնկները գրկած՝ լաց է լինում Ղարա-  
Նինդիլը... Եյդ Ղարա-Նինդիլի վերջին արցունքն էր...  
Ո՞՛Հ, որքան անպէտք չարիք կայ շրջակայքում, որքան  
սոսկալի անարգարութիւն: Միայն մարդս կարող է զը-  
ւարճանալ և բերկրիլ ուրիշների զժբախտութիւններով

և անարդանկով... Ղարա-Նինդիլը, որպէս կին, վաղուց  
արդէն մեռել էր, և այժմ լալիս էր թագուհին և լոլիս  
էր վերջին անգամ: Յանկարծ նա ափսոսաց այդ բոլորին,  
Ալանչա-Խանին էլ հետներնին, որ հանդիսաւոր ու բերկ-  
րալի կերպով պատրաստվում էր ձեռք բերելու ծարաւից  
տոշօրուած աւարը, իսկ կըգտնեն, կըբռնեն միայն խելո-  
գար Բայզըր-Խանին: Ահա հնչում է կանչող փողը...  
ահա դիմովցած Առողի-Բօշը ազաղակում է.

— Ես ինքս մենակ կ'առնեմ բոլորիդ... Դուք կ'իմա-  
նաք, թէ ով է Առողի-Բօշը... Է՛հ, թագուհի Ղարա-Նին-  
դիլ, անձնատուր եղիր՝ վստահանալով զթութեանս... .

— Նոքա գալիս են արդէն... — շնչեց Զուչի-Քաթէմը,  
զիտելով քարափներով վեր բարձրացող թշնամիներին:  
— Իսկ ես շարժուել չեմ կարողանում, որ դոցա մի-մի  
վայր զլուեմ սարից... .

Զինուորական երաժշտութիւնը աւելի և աւելի էր  
մօտենում... Բայզըր-Խանը նոյնպէս պատի վերայ էր և  
զարմացքով նայում էր չորս կողմբ: Փողի ձայնը զար-  
թեցրեց նորա մեջ բոլոր անցեալը, երբ նա երիտասարդ  
էր և ուժեղ, և ծերունին հաւաքելով իւր բոլոր ուժը,  
երգեց.

«Ո՞հ, մահը սիրում է քաջերին»...

— Ժամանակ է... — շնչեց Ղարա-Նինդիլը, երբ թըշ-  
նամին արդէն մաել էր աւերակների մէջ:

Նա ամուր զրկեց Զուչի-Քաթէմին, և նոքա երկուսը  
միասին ընկան ցած, անդունդը: Մինչև անգամ թշնամի-  
ները սարսափից աղաղակեցին... Իսկ Բայզըր-Խանը կրկին  
ներդում էր և անմիտ հայեացքով նայում էր Գեօղ-Քա-  
ռուի աւերակները մտած թշնամիների վերայ:

Քարոտ բարձրաւանդակից Ալանչա-Խանի ոսների մօտ  
զլորուեցան երկու դիակ: Զուչի-Քաթէմի երեսը Ճանաչել

չեր կարելի. այնպէս էր այլանդակուել քարերին քսուելուց: Երբ Ալանչա-Խանը մօտեցաւ ինկայ զիակին և նայեց նորա գէմքին, նա սարսուռ զգաց. այդ այն նաժիշտն էր, որ գալիս էր իւր մօտ Բաղի-Դիգիշտ:

— Ո՞ւր է Ղարա-Նինդիլը, — հորցրեց Ալանչա-Խանը, զարհուրանօք յետ քաշուելով:

— Սա է Ղարա-Նինդիլը, — հուտատայնում էր Առջե-Բօշը: — Ես չեմ ճանաչում նորան, ինչ է... Այս, սա նա է:

Ալանչա-Խանը հրամայեց Ղարա-Նինդիլին և Զուշի-Քաթէմին թաղել Գեօղ-Թառի գագաթին, իսկ Բայլը-Խանին թողնել իւր քարանձաւում, ուր և առաջ բնակվում էր:

Շատ տարիներ անցան Զոլպան-Թառուում, — տասնեակ, Հարիւրաւոր տարիներ: Կրկին անմարգաբնակ է մնում Սոված Ճափաստանը, Կանաչ-Քաղաքից էլ մնացին միայն աւերակներ: Բայց Գեօղ-Թառն նոյնպէս բարձր է պահում իւր զլուխը և միայն ոլորապտոյտ կողմը, ուր առաջ լերկ քարեր էին ցցուած, այժմ, ասես զորդով ծածկուած է զշնդպոյն ծաղիկներով: Այդ ծաղիկներից շատ է այդ տեղ. վարդագոյն, կապոյտ, գեղին. . . Ուրիշ ոչ մի տեղ չկայ այդ ծաղիկից, եթէ պատելու լինիք ամբողջ Զոլպան Թառուն... Ժողովուրդը Գեօղ-Թառի այդ ծաղիկներին անոււանում է «Ղարա-Նինդիլ թագուհու արտասուքը»:

Թարդ, Մամին-Սիբիրեակից:

ԹԻ ԱՀԱՑԻՐ...

Աշքերդ արտասոնք, հոգիդ վշտահար,  
Խմ խղճնւկ եղբայր, զու մի՛ վհատիր,  
Որ այսքան դարեր անգութ, անարդար  
Քեզ հալածում է սև ձակաստազիր:

Գիտեմ, չար բախտի ծանըը լծի տակ  
Դու շնու ես տանջուել ու շնու համբերել.  
Շնու ես փափազել զու մի այլ վիճակ,  
Անվերջ յուսացել, անվերջ սպասել...

Բայց մի՛ վհատիր... Թողլ խորին հաւատ  
Դեռ ալեկոծէ քո տանջուած հողին.  
Շատերն են քեզ պէս մընում յուսառատ  
Սուրբ աղառութեան քաջ յաղթանակին...

Եւ ի՞նչ կը լինէր, թէ դառն օրերին  
Մարգկային կեանքում, փոթորկի նման,  
Ոսկեշող յշյսեր սիրտ չը յուզէին,  
Հաւատը զոհուէր յուսահատութեան. . .

Օ՛, վաղուց մարդը անցոյս, յաւագար—  
Վշաերի ծովում կրգտնէր վախճան.  
Մերկ անսապատի կրգտնէր աշխարհ,  
Կեանքը կրգառնար մռայլ գերեզման:

## Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

10 մարտի 1893 թ.

Առակուա.



\* \* \*

(L եր ճօն տովի ից).

Արևմուտքը բորբոքվում է բոցավառ,  
Հուսամուտից զմայլում եմ ես նրա փայլով.  
Գուցէ վաղը փայլի նոյնպէս նա պայծառ,  
Իւր շողերը դիակիս վրայ տեղալով:

Եւ ոչ եղբայր, ոչ բարեկամ սրտակից  
Վերջին համբոյր գրոշմելու չեն իմ այտին,  
Օտար մարդիկ, որոնք ինձ չեն կարեկից,  
Սառը հողում կըթաղեն իմ անշունչ դին:

Անվերջ անդունզը կընկղմի իմ հողին—  
Բայց դու խղճա՛ ինձ, ով աղջիկ լոյսերես.  
Ոչ ոք այնպէս ջերմ և այնպէս կաթողին  
Զէ կարող քեզ երբէք սիրել ինչպէս ես:

Ա. Ե. Յ.

(Լեռ Ճօն տուակից)

Անդամ Շատը\*) և Կազբէկը  
Ունեցան մեծ վէճ.  
Միւս լեռներից և ոչ մէկը  
Զիառնուեց նրա մէջ:  
«Զգայշ կաց», ասաց մեծ Կազբէկին  
Ալէզարդն Շատ.  
«Մարդը նուածեց քեզ պէս մէկին,  
Եղըայր, վատ է շատ:  
Մխոտ իցեր կըշինէ նա  
Ժայռոտ կողերիդ,  
Սուր կացինը պինդ կըթնդայ  
Խորքում ձորերիդ.  
Եւ քարէ կուրծքդ ձեղքելով,  
Բրիչը երկաթէ,  
Ոսկի ու պղինձ հանելով,  
Ուղի կըհարթէ:  
Արդէն անցնում են քարվաններ  
Այն ժայռերից սուր,

\*) Էլբրուս:

Ուր հասնում էին միայն ամպեր,  
Արծիւն և ուրուր:  
Խորամանկ են մարդիկ, թ' և շատ  
Ծանր առջի ելքը.  
Զգոյշ կաց, զօրեղ ու մարդաշատ  
է Արևելքը»:

— Արևելքն ինձ չէ աշաւոր,  
Ասաց Կազբէկ լեառ.  
— Այնտեղ մարդիկ քնած են խոր  
Արդէն ինը դար:  
Տե՛ս, չինարի հովանու տակ  
Քնուկ վրացին  
Անոյշ գինու փրփուրը տաք  
Թափում հանդերձին.  
Մարգարտացայտ շատրուանի  
Կողքին նիրհելով,  
Նստած է տէրը թէհրանի,  
Կալիան ծխելով  
Երուսաղէմի չորս կողմը  
Այրել է Աստուած,  
Մարդուն խեղում խորշակ հողմը,  
Բնութիւնը մեռած.  
Անդ զլորում է նեղոս հսկան  
Իւր ջուրը դեղին,  
Ուր կանգնած են արքայական  
Շիրիմները հին,  
Բէզուինը մոռացել է  
Արշաւանքները,  
Նախշուն վրանի տակ երգում է  
Նախնեաց գործերը:

Մինչեւ ուր հասնում իմ աչքը,  
Քուն և թմրութիւն.  
Իսձ տիրելու Արևելքը  
Չունի զօրութիւն:

«Մի՛ պարծենար դու վաղօրօք»,  
Ասաց լեառն Շատ.  
«Ինչ որ տեսնում եմ հիւսիսում՝  
Եղբայր, միզապատ»:

Շփոթուեցաւ մեծ կաղբէկը,  
Երբ որ այդ լսեց,  
Թէա՛ հիւսիսի թանձր մեզը  
Հայեացքը ուզզեց:  
Նայում է նա մոքամոլոր,  
Նայում, մտածում.  
Տեսնում շարժում մի անսովոր  
Ու իրարանցում.  
Ուրալ գետից սկսած մինչեւ  
Մեծ գետը Դանուբ  
Զօրագնդեր հսկայաձեւ  
Շարժվում ալէծուփ.  
Ծածանում են զլխարկների  
Փետուրներն օդում,  
Եւ վաշտերը ուլանների  
Փոշի են հանում.  
Բազմի պատրաստ հաղարեակներ  
Գալիս են կարդ-կարդ,  
Նոցա առաջը դրօշակներ,  
Թմբուկներ մի շարք.  
Թնդանոթներ որոտալով  
Գլորփում են արագ,

Եւ պատրոյցները ծխուելով,  
 Կարծես, պիտ' տան կրտակ.  
 Նոցա վարում է և բերում  
     Մի ծեր զօրավար,  
 Պատերազմի մըրիկներում  
     Փորձուած ու ճարտար:  
 Գալիս է զօրքը ահագին,  
     Խնչպէս մի հեղեղ,  
 Նա սպառնում է Արևելքին,  
     Խնչպէս ամազ ահեղ:  
 Անձնատուր սե երազներին,  
     Կազբէկը հսկայ  
 Հաշուեց, տեսաւ, ոսոխներին  
     Թիւ, համար չկայ:  
 Տխուր հայեացք մի ձգելով  
     Լեռներին իւր շուրջ  
 Եւ յօնքերը կուտակելով,  
     Մնաց լուռ ու մունջ:

---

## ԱՐ ԿԻՆԸ ԵՒ ԱՐ ՍՈՒՐԵ

(Պէտք օֆիս)

Կտրին նստած է աղտոնին,  
Երկնքումը փայլում աստղեկ.  
Խոկ իմ սիրուն կինն իմ զրկին  
Հանգստանում է անուշեկ:  
Վշնպէս քնքոյշ այնպէս փափուկ  
Թեփս վերայ պարկած է նա,  
Խոչպէս որ ցողը կամացուկ  
Օրօրվում է տերևի վրայ:

Կարող եմ նրան սրտիս սխմել  
Եւ համբյորներ տալ շատ ու շատ.  
Իմ բերանը, պէտք է ասել  
Համբուրելումը չէ ժլատ:  
Գրաւիչ են մեր զրոյցները,  
Սակայն խօսքը մնում է կիսատ,  
Որովհետեւ համբյորները  
Շարունակվում են անընդհատ:

Անչափ մեծ է մեր սէրն ու խանդ,  
Մեր շուրջ ծաղկում է զրախտը,  
Խոչպէս մաքուր մի աղամանդ,  
Պայծառ փայլում է մեր բաղզը:

Բայց այդ բանը իմ հին սրին,  
Որ կախած է պատին մեխից,  
Դուք չեղալիս ամենեին.  
Նա մռայլ նայում է վերեկից:

Ո՞վ ծերունի, ինչի՞ համար  
Դու վատ աչքով նայում ես մեզ.  
Չինի՞ թէ, էյ դու տիմար,  
Չար նախանձը տանջում է քեզ:  
Ե՛հ, թող ընկեր, այդ իմ անձին,  
Ոչ թէ քեզ է վերաբերում:  
Միջամտել կանանց գործին  
Այլ մարդուն չեղասիւ բերում:

Դու իմ կնոջը աննման  
Նախանձում հո—սակայն ի զուր. .  
Կեանքիս զարդը նա է միայն.  
Այդ հօ դու յաւ գիտես, իմ սուր:  
Գիտես, նրա սիրան է անարատ,  
Գիտես, որ մի հրեշտակ է նա,  
Որին երկինքը գթառատ  
Ուղարկել է երկրի վերայ:

Երբ բազուկս հարկաւորի  
Իմ թանկագին հայրենիքին,  
Չէ՞ որ նա ինքը իւր ձեռով  
Կըկապէ քեզ սուր, իմ մէջքին,  
Կըկապէ քեզ սուր, իմ մէջքին  
Եւ օրհնելով կասէ. «Գնացէք,  
Ծառայեցէք հայրենիքին,  
Հաւատարիմ իրար մնացէք»:

## Ն Ե Դ Դ Ա.

Փայտերը տոչորփում էին. միաքս թռչում էր հեռու  
և յանկարծ միտս եկաւ և աչքիս երևցաւ կրակը՝ Պինո  
ագարակի աշազին վառարանում էտնայի ստորոտում:

Սնձեւ էր գալիս. փշում էր կատաղի քամին. քսան  
երեսուն կին, որոնք ագարակում գէյթոն էին ժողո-  
վում, չորացնում էին վառարանի մօա իրենց անձրե-  
ւից թրջուած շորեղը: Ուշախները (որոնք փող ունէին)  
և կամ սիրահարուածները երգում էին. միւսները խօ-  
սում էին կամ դէյթոնի պաղաքերութեան կամ ժողովր-  
դական հարսանիքների և կամ անձրեսի մասին, որ կըտ-  
րում էր իրենց աշխատանքը՝ այսինքն ամենօրեայ հացը:  
Տնտեսը մանում էր. ինչու զուր տեղը վառուէր ճրա-  
գը, որ կախուած էր վառարանի վերայ. մեծ շունը, գայլի  
տեսակից, պարկել էր, ոտները ձգած, դունչը գէպի կրակը  
և ամեն քամի փշելիս ականչները տնկում էր: Մինչև  
որ ապուր եփուի, հովեւը նուազում էր զանազան լեռնա-  
յին եղանակներ, որոնցից չէր կարելի անտարբեր նստել  
մէկ տեղում. աղջիկներն սկսեցին պարել ծխոտ խոհանոցի  
կոտրտած քարայատակի վերայ, իսկ շունը մրմռում էր  
վախից, չլինի թէ պոչը կոխեն. ուրախ թռչկոտում էին

աղջիկները, թռչկոտում էին և լոբիքն ամանի մէջ, փրբ-  
փուրի հետ միասին եռալով:

**Աղջիկները յոգնեցին.** պարելուց յեաոյ պէտք էր  
երգել:

— Նեղդա, Նեղդա, որտեղ ես,— կանչեցին նոքան

— Ես այստեղ եմ,— լսուեց մէկ սուր ձայն ամենա-  
մուժ տնկիւնից, որտեղ նստել էր աղջիկը, կուչ եկած  
փայտի խուրձի վերայ:

— Ի՞նչ ես անում այդտեղ:

— Ոչինչ:

— Ի՞նչու չպարեցիր:

— Յոգնել եմ:

— Երգի՞ր մէկ լաւ երգ:

— Զէ, երգել չեմ ուզում:

— Եղ ի՞նչ է քեզ պատահել:

— Ոչինչ:

— Նորա մայրը մեռնում է, — ասաց ընկերուհիներից  
մէկն այնպէս հասարակ ձեռվ որ կարծես թէ գանգատ-  
վում էր ատամի ցաւից:

**Աղջիկը նստել էր,** դունչը ծնկների մէջ դրած. նա  
բարձրացրեց խօսողի վերայ իւր սև, փայլուն, բայց ան-  
տարբեր, համարեա յիմար, աչքերը և դարձեալ սկսեց  
նայել իւր բորիկ ոտներին:

Նորան մօտեցան ընկերուհիներից երկու-երեքը, իսկ  
միւսները խօսում էին գանազան գատարկ բաներ կաշա-  
զակների նման, որոնք ուրախանում են ուտելիք գտնելիս:

— Ինչու դու հեռացար մօրդ մօտից:

— Աշխատել պէտք է:

— Դու որտեղացի ես:

— Մենք Վիանգարդից ենք, բայց ապրում ենք Ռա-  
վինուգայում:

**Եյն ժամանակ խելօքներից մէկը,** տնտեսի աղջիկը,

որ նշանուած էր Մասսարօ Զակօպօյի (Հարսանիքը զատկին էր) երբորդ տղի հետ և որ ունէր վզին կախած շատ գեղեցիկ ոսկե խաչ, ասաց.

— Ռավենդուած հեռու չէ, եթէ մի բան պատահելու լինի, մինչև անգամ ծիաը լուր կըբերէ:

Նեղդան մի հայեացք ձգեց նորա ետևից այն շան պէս, որ մտիկ էր տալիս իւր պոչին սպառնացող կօշիկների վերայ:

— Չէ, իմ ետևիցս կըգար բիծա Զօվաննին, — կանչեց նա, կարծես ինքն իրան էր պատասխանում:

— Ո՞վ է այդ Զօվաննին:

— Ռավենդուզի բիծա Զօվաննին. բոլորը նորան այդպէս են անուանում:

Մէկ ուրիշ աղջիկ ասաց. — դու պէտք է նորանից փող փոխ առած լինէիր և ոչ թէ մօրդ թողնէիր մենակ:

— Բիծա Զօվաննին հարուստ չէ, մենք առանց էն էլ նորան պարտ ենք տասը լիրա. հապա բժիշկ, հապա զեղ, հապա ամենօրեայ հացը, հեշտ է ասելը... — շարունակում էր Նեղդան, զլուխն օրօրելով և առաջին անգամ արտայայտելով գանգատ իւր կոպիտ և համարեա վայրենի ձայնով. — հապա, երբ տեսնում ես, որ արեւ մայր է մանում և մի կտոր հաց չկայ դարակում, ծրագի մէջ ձեթ չկայ, միւս օրուայ համար աշխատանք չըկայ... այդ բոլորը շատ դառն է, մանաւանդ որ անկողնում պառկած է խեղճ, ծերունի հիւանդը... .

Նա լռեց և շարունակ զլուխն օրօրում էր, ոչ ոքի վերայ չնայելով. նորա ըոր, բոլրոքուած աչքերը արտայայտում էին այնպիսի անվերջ ցաւ, որպիսին չեն կարող արտայայտել ոչ մի արտասուբին սովոր աչքեր:

— Աղջեկներ, բերեք ձեր ամանները, — կանչեց տանտիկնը, կաթսայի խուփը բանալով:

Բոլորը հաւաքուեցին օջաղի շուրջը, որտեղ տան-

տիկինը ժլատութեամբ և համբերութեամբ բաժանումէր լորիից պարաստուած ապուրը, նեղդան սպասեց ամենից վերջը, ամանը կռան տակ բռնած. վերջապէս կարողացաւ մօտենալ և նա. օջաղի լոյսը լուսաւորեց նորան, ամբողջապէս:

Նա թուխ, աղքատ հազնուած աղջիկ էր, վախկոտ ու կոպտացած աղքատութիւնից. նա գուցէ գեղեցիկ լինէր, եթէ ոյժերի սպառուելը ու շարունակ յոդնածութիւնը չխլէին նորանից ոչ թէ միայն կանացի գեղեցկութիւնը, այլև կանացի պատկերը: Նա ունէր սև, խիտ, խուճուծ մազեր, ատամները սպիտակ էին, աչքերը խոշոր ու սև. թագուհին մինչեւ անդամ կընախանձէր այդ խեղա աղջկայ վերայ, որին աղքատութիւնը հասցրել էր մինչեւ վերջին աստիճանը: Բայց այդ աչքերի գեղեցկութիւնը նսեմանում էր աղքատութեան երկիւղով. նոքա կարծես յիմար էին երեսում մշտական ծանր հնագանգութիւնից. նորա անգամները, որոնք ձնշուած էին ծանր բեռներից, կամ անբնական կերպով զարգացել էին ոյժերից վեր աշխատելուց, և գեռ չկաղգուրուած արդէն կոշտացել էին: Նա աշխատում էր քարտաշների հետ, իսկ եթէ չէ, շուռ էր տալիս ահազին քարեր և տանում էր դաշտերից: Երբ առաջին անդամ արտը վարում էին, ուրիշների փոխարէն տանում էր քաղաք մեծ ծանրութիւններ. վերջնում էր ամեն տեսակ գժուար գործ, որ մինչեւ անդամ տղամարդը չէր կարող կատարել. հնձելու, խաղող և զէյթոն հաւաքելու օրերը նորա համար տօն էր. այդ համարում էր զբաղմունք, միևնոյն է, թէ ոչինչ չանել և ոչ թէ աշխատանք: Չափազանց ողորմելի հազուստի ցնցոտիները ծիծաղելի: կերպով աղջատում էին նորա գեղեցկութիւնը. ամենավառ երեսկայութիւնը չէր կարող ներկայացնել. որ այդ ձեռքերը դատապարտուած ամենօրեայ ծանր աշխատանքի, կոպտանալու ցրտում, կամ տաք գետ-

նում, տանելու քերծուածներ և վերքեր, որ այդ ոտքերը, որոնք սովոր են, բորիկ վազելու ձեսն մէջ, սաստիկ տաքացած գետնի վերայ, փուշերի ու տատասկների մէջ,—որ նոքա կարող էին երբ և իցէ գեղեցիկ եղած լինել: Ոչ ոք չէր կարող որոշել թէ քանի՞ տարեկան էր այդ խեղջանը արարածը. երեխայութիւնից աղքատութիւնը ճնշել էր նորան ամբողջովին և աղաւաղել նորա մարմինը, հոգին ու միաքը... նոյն էր և նորա մօր ու մեծ մօր հետ, նոյնն էլ կըլինի և իւր աղջիկների հետ. իսկ նորա մօտիկներին բաւական էր և այն, որ նորա մէջ մնում էր խելք, հասկանալու հրամանները և ոյժ՝ կատարելու ամենալժուարին և ստորացնող ծառայութիւնները:

Նեղդան մօտեցրեց իւր ամանը. տանտիկինը լցրեց այն, ի՞նչ որ մնացել էր կաթսայում—շատ քիչ բան:

—Ինչու ես գալիս ամենից վերջը, չգիտե՞ս, որ վերջինին միշտ մնում է տակուցքն, —ասաց տանտիկինը:

Աղջիկը աչքերը ձգեց սև ապուրի վերայ և հեռացաւ կամաց, որ չթափթիւ:

—Ես իմա կըտայի, —ասաց ընկերուհիներից մէկը, միւսներից աւելի բարին—իսկ եթէ էլի անձրե գայ... ճշշմարիտ... ու աշխատելու օրը կորչի, սախալուած բոլոր հացդ պէտք է ուտես:

—Ես այդ գմբախտութիւնից չեմ վախենում, —ասաց նեղդան, տխուր ծիծաղելով:

—Ի՞նչպէս չես վախենում:

—Ես հաց չունեմ ինձ համար, ինչ որ ունեի՝ քիչ հաց ու փող պահել եմ մօրս համար:

—Աւրեմն գու ապրում ես միայն ապօւրով:

—Սովորել եմ, —պատասխանեց նեղդան:

—Անպիտան անձրե, օրը կորաւ, —բարկանում էր մէկ ուրիշը:

—Առ իմ ամանից:

—Ես կուշտ եմ,—բացասեց նեղդան շնորհակալութեամբ:

—Այ, դու Աստուծոյ ուղարկած անձրեից դժգոհ ես, բայց ինքո չե՞ս ուտում նորա հացը,—դարձաւ տանտիկինը զէպի նորան, որ գանգատվում էր վատ եղանակից, — մի՞թէ չգիտես, որ թաց աշունքը լաւ հունձր տարի է:

Բնդհանուր ձայնը հաստատեց նորա խօսքերը:

—Այո՛, բայց ձեր ամուսինը այնու ամենայնիւ շաբաթուայ վարձից դուրս կըդայ կէս օրուանը:

Նոր համակրութիւններ:

—Իսկ դու այդ երեք կէս օրը աշխատե՞լ ես, ուրեմն զու կըվճարե՞ս նորանց, —ասաց պառաւը բերկրութեամբ:

—Այդ էլ ուղիղ է... — ասացին միւսները, անդիտակցաբար զգալով արդարութիւնը, որը ամբոխի մէջ միշտ ուժեղ է, թէպէտ և ամենքի համար առանձին - ռանձին, արդարութիւնը ծանր լինէր:

Տանտիկինը վերցրեց տէր-ողորմէն և յօրանջելով մըթմըթաց մի աղօթք, յիշելով կենդանեաց և մեռելոց. Նեղդայի աչքերը լցուած էին արտասուքով. նա մոռացաւ մինչեւ անդամ ասել «ամէն»:

—Այդ ի՞նչ նոր բան է, «ամէն» չէ ասում, —խիստ կերպով հարցրեց պառաւը:

—Ես մտածում էի իմ մօրս մտսին... նա այնքան հեռու է, —վախվիսելով ասաց նեղդան:

Տանտիկինը ցանկացաւ ամենքին «բարի զիշեր», առաւ ճրագը ու գնաց: Խոհանոցում, օջաղի շուրջը, գեղեցիկ սարգուած էին անկողինները. վերջին բոցից ընկաւ դողդողջիւն լցու պարկածների վերայ: Ապարակը լաւ էր, տանտէրը միւս տանտէրերի նման չէր՝ չէր խնայում ոչ լոբի ապուրի համար, ոչ փայտ, ոչ էլ յարդ անկող-

նու համար. կնիկմարդիկ քնում էին խոհանոցում, իսկ տղամարդիկ խոսանոցում երբ պատահում է, որ տանտէրը ժլատ է, կամ ագարակը մեծ չէ, տղամարդ, կնիկմարդ մէկ տեղ են քնում, որտեղ պատահի՝ գոմում, մարդում, յարդի վերայ, ձորձերի վերայ. երեխայքն էլ հետներն են քնում: Եթէ հայրը հարուստ է և ունի իւր վերմակը, նա նորանով ծածկում է իւր ընտանիքը. ով որ մրսում է, սեղմվում է հարևանին, կամ կոխում է ոտքերը տաք մոխրի մէջ, կամ ծածկվում է խոտով.—ով ինչպէս կարող է. ամբողջ օրը արորուել և առաջն էլ այդպիսի վիճակ,—քունն էլ ամուր է, ինչպէս մէկ կամակոր բարերար. տանտէրը բարցյականութիւնից քաշուող չէ՝ շատ, շատ, կըզրէ աղջկան աշխատանքից, երբ նա էլ ոյժ չի ունենալ բանելու օրական տասը ժամ:

Դեռ արել ջագած, ամենահոգաստարները գուրս կըգային նայելու, թէ եղանակը ի՞նչպէս է. գուրս ամեն ըուպէ ճրճուալով, զցում էր քնողների վերայ անձրեի կաթիլներ և լսելի էր անում ցուրտ քամու ձայնը: Լուսաբացին, տանտէրը բայց այդ գուրս և զարթեցրեց ծոյլերին որովհետեւ անարգարութիւն է օրուայ տասը ժամից մի՛ րոպէ անգամ կորցնել, որի համար նա վճարում է իւր փողերը՝ պատահում է երեք կարլին, (այդ կանէ 65 չլնդեղիմ) դէ՞հ, համեցէ՞ք և էլի ապուր...

— Անձրեւ:

— Եյդ խօսքը տիսրութեամբ հասաւ ամենքին. Նեղդան թիք եկած դռանը, տիսուր նայում էր գորշ ամպերին. նոցա մահսնաման ստուերը ընկել էր նորա վերայ, կարծես թէ երեկոյ լինէր: Ցուրտ, ամպամած օր, չոր տերեւը աղմուկով ընկնում է ճիւղի վերայից և պտտուելով ընկնում է ցեխուտ գետնի վերայ. առուակը դառել է ծահիճ, նորա մէջ վայելչութեամբ թաղվում են խողերը, կովերը հանում են իւրեանց սե գունչերը կողպած գոմի

ցանկապատից և տիսուր նայում են անձրեի վերայ. ծառերը կուչ են եկել և ողորմելի կերպով ծվծվում են...

— Ահա, էլի մէկ օր բոլորովին կորաւ, — ասաց աղջիկներից մէկը, կրծելով չոր հացի մեծ կտորը:

— Այնտեղ ծովի մօտ ամպերը ցրվում են, — ասաց նեղդան, ցցյ տալով ձեռով, — կարելի է մինչև ճաշպարզի:

— Միւնոյն է, անպիտան տանտէրը կրվճարի միայն օրուայ երրորդի համար:

— Բայց էլի:

— Այո, քայց էլի՞», իսկ մեր հացը մենք ձրի ենք ուսում:

— Ապա տանտիրոջ հալն ի՞նչ է, որ նորա զէյթոններն էլ բոլորովին բանի պէտք չեն դալ և ցեխի մէջ կըկորչեն:

— Ուղիղ է, — ասաց միւսը:

— Ապա փորձիր վերցնել մի զէյթոն և կեր իւր չոր կեղեռով, տե՞ս, թէ տանտիրոջից ի՞նչ բաներ էիմանաս:

— Եւ տեղն էլ է, զէյթոնները խօ մերը չեն:

— Ապա գետինն ուսումէ, նոքա նորանն ե՞ն, ի՞նչ է:

— Բայց իսկ հողն էլ տանտիրոջն է, — ասաց նեղդան ուրախանալով իւր դատողութեան վերայ, այնպէս որ աչքերը փայլեցին:

— Ինձ մնայ, աւելի լաւ է, թող ամբողջ օրը անձրւ գայ, քան թէ կէս օր քաշքշուել հաւաքել ցեխի միջից, այսպիսի վատ եղանակին՝ միայն երեք-չորս սոլդիի համար:

— Քեզ համար երեք-չորս սոլդին ոչինչ բան է, — ասաց նեղդան:

Նաբաթ երեկոյեան, ամբողջ շաբաթուայ հաշիւները տեսնուեցան. տանտիրոջ տռաջ, սեղանի վերայ կային անհաշիւ թղթեր, առմանակներ և սիւնաձեւ դարսած սոլդիի-

ներ, կռուարար մշակներին վճարում էին խսկոյն, յետոյ կանանց, որոնք աւելի ժիր էին և վերջապէս բծախընդրութեամբ վախկոտներին և անգօրներին: Երբ տանտէրը հաշիւը վերջացրեց, Նեղան խմացաւ, որ վատ եղանակի պատճառով, ակամայ կորած երկու օր ու կէսը դուրս գալով, նա պէտք է ստանար միայն քառասուն սօլլի:

Նեղան չհամարձակուեց ոչինչ ասել՝ միայն լաց եղաւ:

— Դեռ էլի դուռում է լալիսնը, — կանչեց ազարակատէրը, պաշտպանելով իւր տիրոջ փողերը. — ըեղ վճարում են այնքան, ինչքան որ միւններին, ոյն ինչ զուրուրից փոքր ես և աղքատ. ես քո աշխատած օրուայ համար տալիս եմ այնքան, որ չի տալ ոչ մի կալուածատէր՝ երեք կարլին, բայի ապուրը:

— Ես չեմ գանդատվում, — վախինալով պատասխանեց Նեղան, պահելով սոլդիքը, որոնց ազարակապետը խուրդայի էր քառորդների շատ երեկու համար. — Ի՞մ բաղդս է, որ եղանակները վատ էին, այդ պատճառով ես չստացայ այնքան, ի՞նչքանի որ յոյս ունէի:

— Ուրիմն պահանջի՛ր Աստուածանից, — կոպիտ ձեւով տսաց ազարակապետը:

— Ա՛խ, ի՞նչպէս կարելի է... ես ինքս եմ մեղաւոր... աղքատ եմ. . .

— Վճարի՛ր խեղճ աղջկան ամբողջ շաբաթուան համար, — վեր թռաւ կալուածատիրոջ որդին, որ եկել էր նայելու զէյթոնի հաւաքելուն. — բոլոր զանազանութիւնը մի քանի սոլդի է:

— Ես վճարում եմ նորան արդարութեամբ:

— Իսկ եթէ ես քեզ հրամացում եմ:

— Բոլոր հարեւանները կըբողոքեն, կ'ասեն, ի՞նչ նորութիւններ էք մոցնում:

— Այդ էլ ուղեղ է, — տսաց իշխանի որդին:

Նա ունէր շատ հող և շատ էլ հարեւաններ:

Նեղդան հաւաքեց իւր ունկցած-չունեցածը և բարով մնաք ասաց ընկերուհիներին:

— Գնում ե՞ս Ռաւենուզա, էսպէս ուշ:

— Մայրս հիւանդ է:

— Միթէ չես վախենում:

— Վախենում եմ, որովհետեւ փողերս հետո են. բայց ի՞նչ արած, մայրս հիւանդ է. հիմայ էլ գործ չունեմ այստեղ այնպէս որ եթէ մնամ, ոչ մի գիշեր չեմ քնիլ  
— Ուզում ե՞ս, քեզ ձանապարհ ձգեմ, — ասաց հովիւր հանգրով:

— Խսձ հետ է Աստուած և Մայր Աստուածածինը,  
— ասաց նեղդան և զլուխը քաշ արած գնաց դաշտ:

Եղեն արդէն մայր է մոռել և ստուերները արագութեամբ բարձրանում էին սարերի գագաթներում: Նեղդան գնում էր շտապելով և երբ մթնեց, սկսեց երգել ինչ պէս մէկ վախեցած թռչուն. տասը քայլ անելուց յետոյ նա ետ նայեց՝ արդեօք քար ընկաւ անձրեւի թրջած պատից, թէ քամին էր թաց ծառերին իրար խփում: Նա կանգնեց յանկարծ, ամբողջ մարմնով դողալով, ինչպէս մէկ ձանապարհը կորցրած այժ: Մասից - ծառ, մի քանի ժամանակ թռչուում էր սարեկը, տխուր երգելով. նա այնպէս ուրախ էր այդ ընկերին, որ կանչեց սարեկին, վախենալով, որ նա կը ձանձրանայ և ետ կը մնայ. անցնելով մի որ և իցէ ագարակի մօտից, նա կանգնում էր մէկ բոպէ, մրմնջում էր աղօթք, հսկելով, որ չլինի թէ շունը վրաց պրճնի, որ կատաղի հաշում էր ցանկապատի ետեից: Յետոյ վաղեց աւելի ոյժ առած, նայելով կանթեղի լոյսին, որ վառվում էր պատկերի առած և միենոյն ժամանակ լուսաւորում էր ագարակապետին, երբ նա վերադառնում էր դաշտից. այդ լոյսը, կարծես, նորան միսիթարում էր: Նա մտածում էր իւր մօր վերայ. սիրալ երբեմն-երբեմն, յանկարծ սեղմվում էր

այնպէս, որ ցաւ էր զգում. նա սկսեց վաղել բարձր երդիլով, որ իրան մոռացութեան տար. յիշում էր ուրախ օրերը, երբ խաղող էր հաւաքում ամառուան երեկոները, երբ հիանալի լուսնի լուսով խմբով գնում էին Պիանայից և առաջը ուրախ նուազում էր տիկը. բայց միտքը անդադար դառնում էր դէպի իւր հիւանդի աղքատ անկողինը: Նա դիպաւ լաւայի քարերին, որոնք սուր էին ինչպէս ածելի և ոտը կարեց. այնպէս մութն էր, որ ճանապարհը ծռելիս խեղճը զիազում էր պատերին, թփերին. մոլորուց և չփիտէր, թէ ուր է գնում: յանկարծ նա լսեց Պունաայի ժամացոյցի ձայնը, որ խփից ժամը իննը և այնպէս մօտիկ, որ կարծես ականջի տակին էր: Նեղդան ուրախացաւ՝ կարծես թէ օտարների միջեց կանչեց իւր բարեկամը:

Ուրախ վաղեց նա զիւղի փողոցում, երգելով իւր գեղեցիկ երգը և սեղմելով գողնոցի զրադանը, որտեղ պահուած էին 40 սօլգիքը:

Անցնելով գեղատան կողքից, նա ներս նայեց, տեսաւ, որ գեղապեան ու նոտարը նստած թուղթ են խաղում. յետոյ պատահեց խեղճ ապուշին, որ փողոյի մի կողմից միւսն էր գնում; ձեռները զրադանում և քսան տարի շարունակ երգում էր միւնիցն երգը, թէ ձմեռուայց ցրախն, թէ ամառուայ շոքին: Ռտաւենուզայի ձանապարհի վերայ, առաջին գոների մօտ, նա պատահեց մի զոյդ եղի, որոնք կամաց-կամաց գնում էին:

— Էյ, նեղդա, — կանչեց մէկ ծանօթ ձայն:

— էղ զու թու, եանու:

— Ես եմ, տիրոջս եղներն եմ քշում:

— Դու որտեղից ես գալիս, — հարցրեց նեղդան, առանց կանգնելու:

— Պիանայից. ձեր տունը մոտայ, մայրդ քեզ սպասում է:

— Ի՞նչպէս է նա:

— Ինչպէս միշտ:

— Այս, փառք Քեզ Աստուած, — ասաց աղջիկը,  
կարծես սպասում էր աւելի վատ բանի և սկսեց արա-  
գութեամբ վազել:

— Մնաս բարե, Նեղդա, — կանչեց Եանուն հտեւից:

— Մնաս բարե, — ասաց հեռուից Նեղդան:

Նորան թւում էր, թէ աստղերը գուրս եկան, ի՞նչ-  
պէս արել, իբր թէ բոլոր ծառերը, մէկը միւսի հտեւից  
քաշում էին Ճիւղքերը, պահպանելով իրան և իբր թէ,  
բոլոր քարերը փայփայում էին իւր տանջուած ու յոգ-  
նած սաքերը:

Միւս օրը եկաւ բժիշկը. նա գնում էր Հիւանդների  
մօտ այն օրերը, երբ դաշտում հարկաւոր չէր լինում  
հսկել աշխատանքին. ուրախալի այցելութիւն չէ: Նեղդա-  
յենց տանը չկար նախասենեակ, չկար ընկերուհի, որտեղ  
և որին կարողանար յայտնել Հիւանդի խականն դրու-  
թիւնը, իսկ նա սովորութիւն չունէր թագյնելու:

Օրուայ մէջ կատարուեց աւելի ևս տխուր կարգ՝  
եկաւ տէրտէրը շուրջառով, ժամկոչը սուրբ մեռնով, եր-  
կու-երեք հարեւան կանայք էլ աղօթք էին փսփսում.՝  
ժամկոչի զանգակի ձայնը հնչուեց դաշտում և բեռնա-  
կիրները լսելով այդ ձայնը, կանգնեցնում էին ջորինե-  
րին և հանում զիխարկները: Երբ Նեղդան լսեց փողոցից  
ուրքի ձայներ, նա վերցրեց Հիւանդի վերայից պատռասած  
վերմակը, որ մարգիկ չտեսնեն, թէ չունեն սպիտակեղին  
և փոեց իւր ամենալաւ սպիտակ գոգնոցը կաղ նստա-  
րանի վերայ, մինչեւ որ տէրտէրը կարզը կըկատարէր: Նեղ-  
դան չոքեց գուան ետեր և անզիտակցաբար կարդում էր  
աղօթք ու նայում էր շեմքի քարերին, որտեղ պառաւը

սովորաբար նստում էր տաքանալու մարտի արեի տակ.  
շփոթուած լսում էր իւր շուրջը սովորական ձայներ,  
նայում էր ժողովրդին, որ անցնում էր փողոցից. տէր-  
տէրը զնաց, զնաց և ժամկոչը, 'ի զուր սպասելով, որ նո-  
րան կըտան աղքատների համար ողորմութիւն, ի'նչպէս  
ընդունուած է:

Երեկոյեան ուշ բիծա Զովաննին տեսաւ, որ Նեդ-  
դան վազում է Պունտացի Շանապարհով:

— Էյ, ուր հսպէս ուշ:

— Բժշկի պատուիրած դեղն եմ գնում բերելու:

Բիծա Զովաննին սիրում էր բարկանալ և մրթմըր-  
թալ.

— Էլե՞ դեղ, սուրբ մեռնով օծել են, բայց էլի դեղի  
են գնում. Ճշմարիտ, կդ զեղապետները աղքատ մարդ-  
կանց կողսպտում են. լսի՞ր ինձ, Նեդդա, պահի՞ր փողերդ  
և վերագարձիր մօրդ մօտ:

— Բայց կարելի է սորանից նորա ցաւը կըթեթեա-  
նայ, — տխուր ասաց աղջիկը և մի քայլ էլ աւելացրեց:

Բիծա Զովաննին մրթմըրթալով կանչեց նորա ետելից.

— Էյ, Նեդդա:

— Ի՞նչ է:

— Ես քո փոխարէն կ'երթամ զեղատուն, անհոգ ե-  
ղի՞ր, քեզանից շուտ կըհասնեմ, իսկ դու հիւանդին մե-  
նակ մի՛ թողնիլ:

Աղջկայ աչքերը արտասուքով լցուեցան:

— Միս, Աստուած ձեզ օրհնի:

Նա ուզում էր նորա ձեռը փող դնել:

— Կդ արդէն յետոյ, — կոպիտ ասաց նա, զնաց ինչ-  
պէս մէկ երիտասարդ:

Աղջեկը զնաց մօր մօտ:

— Բիծա Զովաննին զնաց դեղի, — ասաց նա մօրը  
կամաց:

Մեռնողը լսեց, ինչպէս Նեղդայի զրապանում փողերը  
Ճնկանկացին, նայեց, կարծես հարցնում էր. . .

— Ասաց, որ յետոյ կ'առնի, — պատասխանեց աղջիկը:

— Աստուած թող վարձատրէ նորա բարութեան հա-  
մար, — ասաց Հիւանդը. — դու գոնէ առանց փողի չես մնալ:

— Ա՛խ, մայրիկ. . .

— Ի՞նչքան ենք պարոք մենք բիծա Զովաննուն:

— Տասը լիրտ, դու մի՛ վախենար, մայրիկ, ես կ'աշ-  
խատեմ:

Մայրը երկար նայեց նորա հանդած աչքերին, յետոյ  
համբուրեց նորան, առանց մի խօսք ասելու:

Միւս օրը եկան զագաղակիրները, ժամկոչը և հա-  
րեանուշիները: Նեղդան գագաղի մէջ հաղցրեց մօրը իւր  
ամենալաւ դէյրէն, զրեց նորա ձեռներում բացուած մե-  
խակ և մի փունջ իւր մաղերից. գագաղակիրներին, պա-  
հաղաններին իւր բոլոր մնացած փողը բաժննեց, որ  
նոքա, ինչպէս որ հարկն է, կատարեն, տանեն մեռելին  
զգոյշ չշարժեն զերեղմանի քարոտ ձանապարհին. յետոյ  
նա հաւաքեց տեղաշորը, հաւաքեց տունը, զրեց վերել՝  
թարեքի վերայ վերջին զեղը և գնաց նստեց շեմքի քա-  
րին, նայելով երինքի վերայ:

Նոյեմբերի երկշուր թռչունը, սարեկը, սկսեց երգել  
զժնիկի մէջ, պատի վերայ, շեմքի հանդէպ. նա թռչկո-  
տում էր ձիւղից ձիւղ և խորամանկութեամբ նոյում էր  
աղջկայ վերայ փայլուն աչքերով, կարծես ուղում էր բան  
ասել Նեղդան յիշեց, որ մայրը նախընթաց օրը լսում  
էր, ի՛նչպէս նա երգում էր. հարեւանի պարտէզում; զետ-  
նի վերայ թափիթփուած էին գէյթոններ. կաչտղակները  
թռչում էին նոյա կտցելու: Նեղդան առաջ քշում էր,  
զրանց քարերով, որ մեռնողը չլոի նոյա չարագուշակ ա-  
ղաղակը. հիմայ նա նայում էր նոյա վերայ անտարբեր  
կերպով և տեղեց չշարժուեց. փողոցից անցան երկու

վաճառական՝ մէկը լորի էր ծախում, միւսը զինի. նոքա խօսում էին իրանց սայլերի ծրճոսից ու ջորիների զանդակներից աւելի բարձր. Նեղդան մտաբերում էր, անուանելով նոցա՝ սու այս մարդն է, նա—այն:

Իրիկուայ զանգերը տուին, վառուեց առաջին ասողը. Նեղդան յիշեց, որ պէտք չէ գնալ Պունտա դեղ բերելու. Փողոցի ձայները հանդարտուեցին, մութը պատեց պարտէղը. Նա մտածեց, որ էլ կրակ վառելու հարկաւորութիւն չկայ:

Բիծա Զովաննին այդպէս էլ գտաւ նորան շեմքի վերայ:

Նա վեր թռաւ, լսելով ոտքի ձայներ, որովհետեւ ոչ ոքի չէր սպասում:

—Ի՞նչ ես անում այսուեղ,—ասաց բիծա Զովաննին:

Նա ուսերը վեր քաշեց, առանց պատասխանելու. Տերունին նստեց նորա կողքին, շեմքի վերայ և նոյնպէս լռեց:

—Բիծա Զովաննի,—ասաց վերջապէս աղջեկը՝ հեմայ ես ոչ չունեմ, կարող եմ գնալ հեռու, գործ գտնելու համար. Կերթամ Բոչելլա, այնտեղ դեռ հաւաքում են դէյմոն, իսկ երբ կը վերադառնամ, կը վճարեմ ձեզ, ի՞նչ որ պարտ եմ:

—Ես քիզ մօտ չեկայ փողերս ստանալու համար,—ասաց բարկացած բիծա Զովաննին:

Նա ոչինչ չասաց, երկումն էլ սուս լսում էին, ինչպէս սարեկը երգում էր: Նեղդան մտածում էր՝ «Էղ կարելի է էլի նոյն թռչունն է», և սիրաը ձմլուեց:

—Գործ կայ, —հարցրեց բիծա Զովաննին:

—Ո՛չ կարելի է գտնուի մի բարի մարդ, որ ինձ գործ ասյ:

—Ես լսել եմ, որ Աչի-Կատենում վարձում են կանանց՝ նարինջները թղթում փաթաթելու համար. վՃա-

բում են օրական մէկ լիրա, տռանց ապուրի. ես իսկոյն քո մասին մտածեցի. զու այդ գործով դարնանը պարապեցի՛ր, վարժուեցար. կ'երթա՞մ:

— Ի հարկէ:

— Ուրեմն, զու պէտք է հէնց լուսաբացին գնաս Մերլո պարտէզը, ձանապարհի բաժանուելու տեղը, որ տաննում է Սանտա-Աննու:

— Կարող եմ այսօր գիշերը գնալ... մայրս երեխ չի ուղում, որ ես հանդատանամ:

— Ճանապարհը զիտե՞ա:

— Գիտեմ և հարցնել կարող եմ:

— Տարցը հիւրանոցի տիրոջը, որ Վալվերդոյի մեծ ձանապարհի վերայ է, շագանակի անտառից գէպի ձախ. այդպէս էլ հալցըրու՝ Մասսարօ Վիներաննու և ասա, որ ես եմ զըկի:

— Կ'երթամ,—ասաց խեղճ աղջիկը:

— Ես մուածել եմ, որ ամբողջ շաբաթուան հաց չես ունենալ,—ասաց բիծա Ջովաննին, հանեց իւր խորը դրպանից մեծ սե հաց և զրեց նստարանի վերայ:

Նեղդան կարմրեց, կարծես թէ ինքն էր արել բարի գործ և քիչ լուելուց յետոյ տասց.

— Եթէ վաղը տէրաէրը հոգեհանդիստ կատարէր մօրս համար, լորիքը հաւաքելիս ես նորա համար երկու օր կ'աշխատտէի:

— Ես արգեն հոգացել եմ այդ մասին,—ասաց բիծա Ջովաննին:

— Ա՛խ, մայրս քեզ համար կ'աղօթի,—կամաց ասաց աղջիկը արտասուելով:

Վերջապէս, երբ գնաց բիծա Ջովաննին և կարուեց նորա քայլերի ձայնը, Նեղդան կողակեց զուռը ու վառեց ձրադ. այդ լոպէին նա զգաց, որ մնաց աշխարհումն բոլորովին մենակ և վախկոտութեամբ քնեց այն ան-

կողնու վերայ, որտեղ սովորաբար պարկում էր իւր մօր կողքին . . .

Գիւղում, աղջկերքը գատապարտեցին նորան, որ գնացել է աշխատելու հենց մօրը թաղելուց յետոյ և չէ հագել սև շօրեր. տէրտէրը բարկացաւ նորա վերայ: Կիւրակէ օրը տեսաւ՝ որ նեղդան նստած շեմքի վերայ, նորոգում էր իւր գոգնոյը, որ տուել էր սև ներկելու. այդ էր միայն նորա սուզի շորը: Տէրտէրը առաւ այդ դէպքը, իբրև օրինակ քարոզի համար՝ թէ մարդիկ մոռանում են շաբաթ օրերը և բանի տեղ չեն դնում տօները: Որպէս զի այդ մեղքը քաւէր, խեղձ աղջիկը երկու օր բանեց դաշտում տէրտէրի համար և ամեն տմնի առաջին երկուշաբթին, պատուիրեց հոգեհանգիստ կատարել մօր համար: Կիւրակէ օրերը, եկեղեցում, աղջկերքը զուզուած տօնի պատճառով, նստում էին նստարանների վերայ և ծաղզում էին նեղդային, իսկ ջահիլ տղերքը եկեղեցուց դուրս գալիս՝ ամեն տեսակ կոպիտ հանաքներ էին անում. նա փաթաթվում էր իւր պատուած վերարկուի մէջ, շփոթվում էր, աւելացնում էր քայլը, բայց ոչ մէկ գառն միտք չէր շփոթում նորա սուրբ աղօթքը. նա խօսում էր ինքն իրան, իբրև արմենի մեղաղրանք՝ «ես աղքատ եմ, իւեղձ եմ». իսկ նայելով իւր ուժեղ ձեռքերին, աւելացնում էր՝ «փառք Քեզ Աստուած, որ տըւել ես սոցա ինձ» և ուրախ գնում էր տուն:

Մէկ երեկոյ, նա հենց նոր հանգյրել էր ծրագը, լսեց որ փողոցում մէկը երգում է. ծանօթ ձայն է, տխուր եղանակ, գիւղական երգ արեւելեան բարբառով՝ «Թռիր, իմ սիրուհու մօտ, իմ սիրուհու մօտ» . . .

— Այդ Եանուն է... — ասաց նա ինքն իրան, սիրար թուլացաւ և ծածկեց զուեխը:

Միւս օրը, բայց անելով պատուհանը, նա տեսաւ Եանուին: Եանուն բոլորովին նոր շորեր էր հագել՝ քաթանէ բաճկոն և աշխատում էր պահել իւր սե, կոպտացած, մշակի ձեռքերը զրպաններում: մէկ զրպանից երեսում էր նոր, բայց դժյնի մետաքսէ փուշին: Եանուն վայելում էր ապրիլի գեղեցիկ արևը, յենուած պարտիզել պատին:

— Էդ դու ե՞ս, Եանու, — կանչեց նա, կարծես թէ չէր սպասում:

— Բարե, — պատասխանեց երիտասարդը, ծիծաղելով լիասիրա:

— Ինչո՞ւ ես դու այստեղ:

— Ես եկել եմ Պիանայից:

— Աղջիկը ժպտեց, — նայելով արտուտիկներին, ոռոնք առաւօտ վաղ թռչկոտում էին խոտի վերայ:

— Արտուտիկների հետ ե՞ս թռել:

— Արտուտիկները հատիկ են պատում, իսկ ես հայ:

— Էդ ի՞նչպէս:

— Պարոնս ինձ դուրս արեց:

— Ինչո՞ւ համար:

— Այնտեղ դող ստացայ, այնպէս որ օրամէջ միայն կարող էի աշխատել:

— Այդ երեսում է... խեղջ Եանու:

— Էդ անպիտան Պիանը, — ասաց Եանուն, բռունցքը ցոյց տալով հովտին:

— Իսկ մայրս, գիտե՞ս, — ասաց Նեղդան:

— Պատմեց ինձ բիծա Զովաննին:

Նեղդան ոչինչ շաւելացրեց. նա նայում էր գէպի պարտէզը ու պատի այն կողը. մօխրագոյն քարերից բարձրանում էր գոլորշին. ցողի կաթիլները փայլում էին ա-

մեն մի արօաի վերայ. նուշի ծառերը կամաց սոսափում  
էին, ձգելով խրճիթի կտուրի վերայ իրենց սպիտակ-  
վարդագոյն և հոտաւէտ ծաղիկները. կամակոր և մի և  
նոյն ժամանակ յուզուած ծիտը կանչում էր, որքան  
ոյժ ունէր խողովակի վերայ, սպառնալով եանուին, որ  
իւր մատհոդ գէմքով, կարծես, բունի ամբողջութեանը ու-  
ղում էր վնասել, որտեղից գուրս էին եկել յարդի կը-  
տորները. . .

Պատարագի զանդերը տուին:

—Քաղցր է իւր զանգակի ձայնը լսել, — ասաց  
Եանուն:

—Ես գիշերը ճանաչեցի քո ձայնը, — ասաց Նեղդան,  
կարմրելով և փորելով մի քիչ հող իւր ծաղկամանի մէջ:  
Եանուն դառաւ գէպի նա և ծխեց իւր ծխամորճը,  
ինչպէս վայել էր աղամարգուն:

—Մնաս բարեւ, զնում եմ ժամ, — ասաց յան-  
կարծ Նեղդան երկար լուսթիւնից յետոյ, հեռանալով  
պատուհանից:

—Ահա, ես բերել եմ քեզ համար քաղաքից, —  
ասաց կարիճը, հանելով իւր գեղեցիկ մետաքսեայ փուշին:

—Ահ, ի՞նչպէս գեղեցիկ է, չէ՛, աս ի՞նչ իմ բանն է:

—Ինչու, այդ խօ քեզ հասնում է ձրի, — ասաց նա  
զիւղացու դատողութեամբ:

Նեղդան կարմրեց, կարծես թէ թանկապին ընծան  
հասկացրեց նորան երխտասարդի զգացմունքը. ժպտելով  
նայեց նորա վերայ և քաղցր ու երկչոտ կերպով մտաւ  
տուն. միայն, երբ լսելի եղան փողոցում ծանր քայլերը,  
նայեց, որ տեսնի, թէ զնո՞ց Եանուն:

Պատարագի ժամանակ գիւղացի աղջկերքը նայում  
էին Նեղդայի գեղեցիկ փուշուն, որի վերայ նկարուած էին  
վարդեր, իսկ եկեղեցու երկար պատուհաններից արեւ ու-  
րախ ընկել էր նոցա վերայ: Դուրս գալիս Նեղդան ան-

յաւ Եանուի կողքից. նա կանգնած էր առաջին նոճիի  
մօտ գաւհիթում, յենուած պատին և ծխումէր ծխամործը:

Նեղդայի երեսը վառուեց և սիրտը թրթռաց. նա  
գնաց շուտ-շուտ, երիտասարդը ծխելով գնաց նորա հետե-  
ւից, նայելով, ի՞նչպէս նա զեղեցիկ գնում էր, առանց  
ետ նայելու, իւր նոր դէյրով, որի ծալքերը զեղեցիկ ու  
հաստ էին, կօշիկները, վերարկուն նոյնպէս նոր. խեղձ  
ողորմելին՝ այն ժամանակուանից, երբ մայրը գնաց Յա-  
տուծոյ մօտ և էլ հոգս չունէր, աշխատել էր մի քիչ  
փող իւր հագուստի համար... Կարելի է ամենասարսափե-  
լին է աղքատութեան զժբախտութիւններից խսկապէս  
ահա այս թերութիւնը, որ զգում են ամենասիրելիներին  
կորցնելուց յետոյ:

Ինքը անզիտակցաբար՝ վախով և մի և նոյն ժամա-  
նակ բաւականութեամբ լսում էր երիտասարդի քայլերը  
իւր ետեից. Ճանապարհի սպիտակ փոշու մէջ, արեւով  
լուսաւորուած, տեսնում էր մի երկրորդ ստուեր, որ ժա-  
մանակ առ ժամանակ միանում էր իւր ստուերի հետ. յան-  
կարծ տեսնելով իւր տունը, սկսեց վաղել, ինչպէս մէկ  
սիրահարուած եղջերու. Եանուն հասաւ նորան: Նեղդան  
զուան մօտ կանգնած, ծիծաղելով ու կարմրելով խիեց  
նորա թիկունքին.

—Ահա քեզ:

Նա պատասխանեց նոյն կերպով, տղամարդի քաղա-  
քավարութեամբ:

—Ի՞նչ ես վճարել այս փուշու համար, —հարցրեց  
Նեղդան, հանելով զլխից, որ սլահսպանի արևից և հիաց-  
մամբ նայելով:

—Քիսդ լիրա, —պատասխանեց Եանուն, փոքր ինչ  
հպարտացած:

Նեղդան ժպտեց, ուղիղ ծալեց աղլուխը և սկսեց եր-  
գել... Նա արդէն վաղուց մոռացել էր, թէ ի՞նչպէս են երգում:

Պատուհանի վերայ կոտրած ծաղկամանում կային,  
շատ մեխակները, բայց բոլորը կոկոններ էին:

— Ավանսո, որ ոչ մէկը չէ բայցուել — ասաց նեղդան,  
քաղեց ամենամեծը և առեց եանուին:

— Ի՞նչի է պէտք, քանի որ չէ բացուել — ասաց նա  
չհասկանալով և զէն ձգեց ծաղիկը:

Նեղդան ետ դարձու:

— Հիմայ ուր կ'երթաս աշխատելու, — հարցրեց նա  
մի քանի բռպէից յետոյ:

Նա ուսերը շարժեց:

— Իսկ դու վաղը ուր կ'երթաս:

— Բոնդջարգօ:

— Դործ կրգտնեմ, միայն թէ դողս էլի չիսանգարէ:

— Ուրեմն և հարկաւոր չէ երգել գիշելները պա-  
տուհանների տակ, — ասաց նա կարմիելով ու դռանը յեն-  
ուելով:

— Չես ուզում, ուրեմն չեմ անիլ:

Նեղդան խփեց նորան և վաղեց ներս:

— Էյ, եանու, — կանչեց բիծա Զովաննոին:

— Գալիս եմ, — պատասխանեց եանուն և ասաց նեղ-  
դային՝ վաղը ես էլ կրգամ Բոնդջարգօ, եթէ ինձ վարձեն:

— Սյղպէս, — ասաց բիծա Զովաննին, երբ երկուն  
էլ դուրս եկան ճանապարհի վերայ. — Հիմայ նեղդան ոչ  
ոք չունի, դու էլ լաւ տղայ ես, բայց հարկաւոր չէ միա-  
սին լինել հասկացա՞ր:

— Հասկացայ, բիծա Զովաննի, բայց եթէ Աստուծոյ  
կամքը լինի, հէնց որ հացը կըհաւաքեն, փող կ'աշխա-  
տենք և միասին հիսնալի՛ կ'ապրենք:

Նեղդան լսեց այդ պատի ետևից և թէւ ոչ չտե-  
սաւ, բայց կարմիեց:

Միւս օրը լուսաբացին, հինգ որ դուռը բաց արեց  
և ուզում էր գնալ, տեսաւ եանուին՝ փայտը և տոպրա-  
կը ձեռին:

— Էղ մւր:

— Գնում եմ Բոնդարդո գործ գտնելու:

Ծաերը զարթեցին մարդկանց ձայներից և սկսեցին  
բնի մէջ ծվծվալ. Եանուն անց կացրեց իւր փայտի վերայ  
նելքայի տոպրակը և երկուսն էլ արագ ձանապարհ ըն-  
կան. Հորիղոնում երեսում էր օրուայ առաջին լոյսը. քա-  
մին զոշարար էր. . .

Բոնդարդոյում ամենի համար գործ կալ, միայն թէ  
ուզող լինէր. գինին թանգացել էր և հարուստ կալուա-  
ծատէրը վարում էր շատ հողեր խաղողի այգիների հա-  
մար. այդ հողերը լորիներով և զէյթոններով բերում  
էին տարեկան 1200 լիրա, իսկ խաղողով, 5 տարուց յե-  
տոյ նոքա բերում էին 12 կամ 13 հազար լիրա: Բայց  
զէյթոնի ծառերի վաճառումը ծածկում էր ծախսի կէ-  
սը. այդ ամենալաւ շահն էր: Կալուածատէրը ուրախու-  
թեամբ վճարում էր մշակներին, որոնք վարում էին —  
օրական 30 սոլդի տղամարդկանց և 20 կանանց առանց  
ապուրի. իրաւ է, գործը քիչ գժուար էր և նոցա ցըն-  
ցոտիները քրքրվում էին, որոնց մշակները հագնում էին  
աշխատանքի դժուար օրերը — բայց նեղդան սովոր չէր  
ստանալու օրական 20 սոլդի:

Վերակացուն նկատում էր, որ Եանուն դամբիւղի  
մէջ քարերը հաւաքելիս միշտ ամենաթեթև տալիս էր  
տանելու նեղդային և սպառնացաւ նորան, որ գուրս կ'ա-  
նէ. խեղճ երիտասարդը, որպէս զի չըրկուի հացից, ստի-  
պուած էր 30 սոլդի տեղը, 20-ով բանել:

Անբախտութիւնը նորանումն էր, որ զեռ թերակազմ

ագարակում բնակարան չկար, այնպէս որ տղամարդ և ինիկմարդ քնում էին միամին անդուռն մարտզում, գետնի վերայ. զիշերները մեծ մասը ցուրտ էին. Եանուն միշտ շողում էր. նա տալիս էր նեղդային իւր բաժկոնը ծածկուելու. կիւրակէ օրերը մշակները ցրվում էին—ամենը իրանց տեղը:

Եանուն և նելդան գնացին շագանակի անսառի ձանապարհով, խօսելով, ծիծաղելով, երգելով, չխէլխկացնելով զրպաններում պղնձէ զրամները: Արեւ տաք էր, ինչպէս յունիս ամսին. հեռւում արտերը արդէն սկսէ հէտ զեղնել. ծառերը նայում էին ուրախացած, կանաչ արօտը զեղեցիկ էր, ծածկուած ցողով:

Կէս օրին, նոքա նստեցին ստուերի տակ և կերան իրանց սե հացը, սպիտակ սոխով: Եանուն ունէր Մասկալի լաւ զինի և առանց խնայելու հիւրասիրում էր նեղդային. աղջիկը սովոր չէր. նորա լեզուն շաղուեց, զըլուխը ծանրացաւ. երբեմն-երբեմն նայում էին իրար վերայ և ծիծաղում էին, չզիսենալով, թէ ի՞նչու:

—Եթէ լինէինք մենք մարդ և կին, ամեն օր միտոին հաց կ'ուտէինք և զինի կըխմէինք,—ասաց Եանուն լիքը բերանով, իսկ նեղդան շփոթուեց, որովհետեւ Եանուն նայեց նորա վերայ մէկ ուրիշ կերպ:

Կէս օրուան խոր լոռութիւնը աիրեց, ոչ մի տերեւ չէր շարժվում. մարդուս աչքերը բուտկանութեամբ փակվում էին հանդարտութեան, տոքութեան մէջ և միջատների բզզոցի աղգեցութեան տակ. երբեմն, յանկարծ ծփում էր ծովից օդի թարմ հոսանքը և շագանակների կատարները սոսափում էին:

—Այս տարի հիանալի կըլինի, թէ աղքատների և թէ հարուստների համար,—ասաց Եանուն,—Աստուած տայ, չունձից յետոյ փող ետ կըձգեմ.. և եթէ դու ինձ սիրես. . .

Նա տուեց նեղդային շեշր:—  
 — Զէ՛, ես էլ չեմ ուզում, —պատասխանեց աղջիկը  
 բոլորովին կարմրած:—  
 — Ինչո՞ւ այդքան կրամբել ես, —ասաց Եանուն ծի-  
 ծաղելով:  
 — Չեմ ասիլ:  
 — Եատ Ե՞ս խմել:  
 — Զէ՛:  
 — Ուրեմն այն պատճառով, որ ինձ սիրում Ե՞ս:  
 Նեղդան խփեց նորա ուսին և ծիծաղեց:  
 Տեռուից լսուեց մի աւանակի ձայն, որ ուրախացել  
 էր, տեսնելով կանաչ խոտը:  
 — Գիտե՞ս, ինչու են աւանակները զոռում, — ասաց  
 Եանուն:  
 — Իսկ դու գիտե՞ս, ուրեմն ասա՞:  
 — Գիտեմ, նշանակում է սիրահարուած են, — ասաց  
 նա կոպիտ ծիծաղելով և նայեց նեղդայի վիրայ:  
 Աղջիկը շփոթուեց, կարծես, բոլոր խմած գինին զը-  
 լուխը թռաւ, կարծես, բոլոր օրուան շոքը, ինչպէս եր-  
 կաթ, թափանցեց նորա ջղերի մէջ:  
 — Գնանք այստեղից, — կանչեց նա անհամբեր, թակ-  
 տալով իւր ծանրացած զլուխը:  
 — Ի՞նչ եղաւ քեզ:  
 — Զգիտեմ, գնանք:  
 — Սիրում Ե՞ս ինձ:  
 Նա զլուխը կախեց:  
 — Ուզում Ե՞ս լինել իմ կինս:  
 Նեղդան պարզ նայեց նորա վերայ, սեղմեց իւր սեա-  
 ցած ձեռքերում նորա կօշտ ձեռքը և շտապ վերկացաւ  
 գնալու: Եանուն բռնեց նորա դէյրից, վրդովուած խօ-  
 սում էր անկատ խօսքեր, չհասկանալով՝ ի՞նչ էր լի-  
 նում:

Ոչ հեռու ագարակում աքլորները կանչեցին. Նեղ-  
դան յանկարծ վեր թռաւ, վախեցած ետ նայելով:  
—Գնանք, գնանք,—կանչեց նա:

Անկիւնում, իւր տան առաջ, Նեղդան կանգնեց մի  
բոպէ, դողալով, կարծես վախենում էր տեսնել մօրը շեմ-  
քի վերայ, որտեղ նա արդէն կէս տարի չկար. . .

Եկաւ Զատիկը, դաշտերի տօնը, իւր ուրախ ձրագ-  
ներով, իւր թափորներովը կանաչ արօսներում ծաղկած  
ծառերի տակ. բոլոր խրճիթները զարդարուած էին պը-  
սակիներով իսկ աղջիկները ամառնային նոր հագուստներով:  
Տեսան, որ Նեղդան լաց էր լինում խոստովանելուց յե-  
տոյ. այն աղջիկների մէջ, որոնք չոգել էին հաղորդ առ-  
նելու, նորան չուսան. այդ օրուանից էլ ոչ մի պար-  
կեշու աղջիկ նորա հետ չեր խօսում. պատարագի ժամա-  
նակ նորա համար տեղ չկար նստարանի վերայ, այնպէս  
որ սահպուած էր չոքել ամբողջ պատարագին. երբ նա  
լաց էր լինում, Աստուած զիտէ, թէ ի՞նչ մեղքեր էին  
կասկած տանում և շուռ էին գալիս նորանից. իսկ այն  
մարդիկ, որոնք տալիս էին նորան աշխատանք, օգտվում  
էին դորանից, որպէս զի կտրեն նորա վարձը:

Նա սպասում էր փեսայուին. Եանուն գնացել էր  
Պիանա հունձ անելու, որ փող հաւաքէ, տուն ու տեղ  
լինի և վճարէ տէրտէրին:

Մէկ երեկոյ, Նեղդան մանում էր, լսում է, ինչպէս  
Ճանապարհին կանգնեց մէկ սայլ եղներով լծած. ներս  
մտաւ Եանուն, բոլորովին սիրթնած, այնպէս որ Ճանա-  
շել չէր կարելի:

—Էդ ի՞նչ է պատահել քեզ:

— Տիւանդ եմ, էլի անպիտան Պիանայում դոզս բըռ-  
նեց, մէկ շաբաթ չաշխատեցի, ի՞նչ էլ որ փող ունէի,  
կերայ:

Նեղդան վազեց, քանդեց իւր խոտէ դօշակը, ուզեց  
տալ իւր քիչ փողը, որ պահել էր դուլսպայի մէջ:

— Զէ, — ասաց նա, — հարկաւոր չէ, վաղը կ'երթամ  
Մասկալուչիա՝ խստակելու զէյթոնի ծառները. այնտեղ  
ինձ ոչինչ պէտք չէ, իսկ այդ գործս վերջացնելուց յետոյ  
կըպսակուենք:

Նա ասաց այդ տխուր կերպով և կանգնեց՝ դրանք  
կոթնելով: Նա նայում էր Նեղդայի վերայ կրակոտ աչ-  
քերով:

— Զէ որ դու դոզացնում ես:

— Եյ՛, բայց այստեղ կ'անցի, այժմ երեք օրը մի  
անդամ է կրկնվում:

Նեղդան նոյեց, առանց մի խօսք ասելու. Խեղճը,  
ինչպէս զեղնած է, նիշար է և սիրաը Ճմլուեց:

— Ի՞նչպէս դու կըլւարձրանսա բարձր ծառի վերայ,  
— ասաց նա:

— Ամեն բան Աստուած կըհոգայ, — պատասխանեց  
եանուն. — Բնաս բարե, ինձ բերեց Պիանայի կառապանը.  
Նա չի կարող սպասել. կըտեսնուենք շուտով:

Նա դեռ երկար ժամանակ չէր գնում. վերջապէս  
Նեղդան նորան ուղեկից եղաւ մինչև մեծ ձանապարհը  
և նայում էր նորա ետեից առանց արտասուքի. միայն  
թւում էր նորան, որ նա յաւիտեան հեռայաւ և սաս-  
տիկ յուղուեց. Ճանապարհը ծոելիս էլի մէկ անդամ ձայն  
տուեց Նեղդային. . .

Երեք օրից յետոյ, փողոցում բարձրացաւ աղմուկ  
և խօսակցութիւն. Նեղդան նայեց պատից և տեսաւ զիւ-

դաշիների մէջ Եանուին, պարկած պատգարակի վերսց, սփոթնած, ինչպէս քաթան և ջարգուած զլխով. թաշկինակը բոլորովին արինուոտ էր. մինչև նորան տուն տանելը, Եանուն բռնած Նեղայի ձեռքը, պատմում էր, որ գողեց թուլացած ընկել է ամենաբարձր ծառից և աշա, թէ ի՞նչ է եղել:

— Երկի քո սիրաը վկայում էր,—աւելացրեց Եանուն, ախուր ժագակը:

Նեղդան լոււմ էր վրդովուած, նոյնապէս սփոթնած, ինչպէս Եանուն և բոլոր ժամանակ բռնած նորա ձեռքը: Միւս օրը Եանուն մեռաւ:

Նեղդան զգաց, որ իւր մէջ շարժուեց այն, ի՞նչ որ այդ հանգուցեալը թողել էր իրան յիշատակ. նա վաղեց եկեղեցի ազօթելու նորա համար Աստուածածնին. բակում Նեղդան հանդիպեց տէրաէրին, որ դիտէր նորա ամօթը. Նեղդան ծածկեց իւր երեսը վերարկուով և փախաւ, իւրեւ մի յանցաւոր:

Տիմայ արդին, երբ Նեղդան խնդրում էր զործ, նորա երեսին ծիծագում էին ո՛չ թէ այն պատճառով, որ դատավարառում էին մեղաւոր աղջկան, այլ որ աղքատ մայրը չէր կարող առաջուայ նման աշխատել. լսելով առաջին մերժումը և առաջին ծաղըները, նա էլ չէր զբնում խնդրելու և կողավում էր տան մէջ, ի՞նչպէս մէկ վիրաւորուած թաշուն, որ պահվում է իւր բնում. գուլ-պայում պահուած մի քանի սօլիին շուտով միստուեցին մէկը միւսի եաւելից և նորանց հետ միասին նոր գէյրէն և զեղեցիկ մետաքսեայ փուշին: Բիծա Զովաննին օգնում էր նորան, որքան կարող էր, միսիթարում էր, հոգս էր տանում, առանց ասելու նորան սպառնալիքներ և չոր ու ցամաք խրաններ. մի և նոյն ժամանակ չէր թողնում նորան մեռնել քաղցածութիւնից: Ծնուեց մէկ աղջիկ, նիշար ու մաշուած. Նեղդան լսց էր լինում, որ տղաց

չէ, լաց էր լինում, ի՞նչպէս այն օրը, որ կողպեց տունը,  
մօր զագաղը ճանապարհ ձգելուց յիշոյ, մնալով մենակ  
և ոչ մի կերպով չէր ուզում տալ երեխային որբանոց:

—Իմ աղջիկս է, թող գեռ որչափ կարելի է, եր-  
կար ժամանակ չիմանայ, թէ ի՞նչ է թշուառութիւնը:

Գիւղացի կանայք անուանում էին նորան անամօթ,  
որովհետեւ կեղծաւորութիւն չէր անում և տմարլի չէր:  
Երեխային չէր բաւականանում կաթը, որովհետեւ մայրը  
հաց չէր ունենում ուտելու. աղջիկը հետզհետէ մաշվում  
էր. նեղդան՝ ի զուր մօտեցնում էր իւր դաստարկ կուրծ-  
քը նորա քաղցած քերանին: Մէկ ձմեռուան երեկոյ—ա-  
րել մայր էր մտել կտուրի վերայ ձիւն էր թափվում,  
քամին խփում էր կոտրած գուանը—խեղզ փոքրիկը մըր-  
սած, սեղմելով թաթիկները, երկար նայում էր իւր ա-  
պակեայ աչքերով մօր կրակոտ աչքերին և յանկարծ նա-  
ցնցուեց և էլ շշարժուեց:

Նեղդան թափ տուեց նորան, վայրէինաբար սեղմեց  
կուրծքին, տափացնում էր իւր շնչով, տափացնում էր  
համբոյրներով, բայց համովուեց, որ նա մեռել է և կո-  
մաց զլեց նորան անկողնու վերայ, որտեղ քնում էր իւր  
մայրը. յետոյ նա չոքեց առանց լացի, բայց անելով աչ-  
քերը ապօւշի նման:

—Ա-ի, դուք երջանիկ էք, որ մեռաք... Փառք Քեղը  
Սուրբ Աստուածածին, որ առար աղջկանս... նա չի տանջ-  
ուիլ այս փուչ աշխարհումն այնպէս, ինչպէս ես:

Տիկ. ՄԱՐԳԱՐԻՏ.

## ՎԵՐԴԱՆԱՑ ՕՐԸ.

Այս դատարկ կեանքի անմիտ խնջոյքում,  
Ուր աննպատակ անցնում էն օրեր,  
Ուր ամէն վառ կիրք, ամէն սուրբ զգացում  
Խեղզում են չնչին առօրեայ հոգսեր,  
Ուր բաքոսական զեղիսութիւններով  
Մաշվում է, թօշնում ծաղիկն հասակի,  
Ուր ունայն փառքի սին երազներով  
Զոհվում է բերկրանքն աղաս վիճակի.

Երբ ոսկի հորթին տաճարներ կանգնած  
Մենք վաճառում ենք և խիղճ և ամօթ,  
Եւ նորա համար Աստուած մոռացած՝  
Էլ արդարութեան չենք քաշում կարօտ,  
Երբ մեր անզգայ կուրծքին կախ տալով  
Մի ցընորական պատույ բաժոմներ՝  
Միրել են տալիս մեղ նենոդ զգուանքով  
Անարդ ըստրուկի թունոտ շղթաներ,—

Հոգիս դառնացած, արցունքն աչերիս,  
Ես սլանում եմ մոքով այլ աշխարհ—  
Եւ այլ պատկերներ ահա առաջիս,  
Այլ կրգի ձայներ ահա ինձ համար.

Աշա բռնութեան կապանք խորտակած՝  
Սուրբ աղատութեան մատաղ զիցուհին  
Ժպտում է հային մարտից թուլացած,  
Զեսին նոր կեանքի ծաղկող ձիթենին:

Գարնան դալարիքն արեամբ հեղեղած,  
Արի կուրծքերից վարդեր ևն բուսնում:  
Փառաւոր մահուան համբոյլն ընդունած  
Շրթունքն՝ հայրենի երկիրն են օրհնում:  
Դիւցազանց ոգին մոռցուած դամբանից  
Ցարութիւն առած մեզ շունչ է տուել  
Եւ նոր Աւարայր մեր խորունկ քնից  
Զարթած զիմում ենք կոռուել ու մեռնել . . .

Փափկասուն տիկնայք, նազելի կուսան  
Շքեղ մազերից վերակատ հիւսած  
Հեղ ճակատներին վեհ սիրոյ նշան  
Դաշտ են շտապում, պաճուճանք մոռցած.  
Եւ մենք մեռնում ենք մեր մահն օրհնելով  
Որ մե՛ծ, սուրբ գործի եղանք նահասակ,  
Սուրբ աղատութեան այզը տեսնելով  
Եւ անմահութեան անթասում պսակ:

Եւ աշա զեփիւոն անուշ բուրմունքով  
Եմ տանջուած հոգուն հրծուանք է բերում,  
Աշա երկնային քաղցր բերկանքով  
Ես զրախտի արժան նոր երդ եմ լսում . . .  
Բայց աւաղ յնորդիս դեռ մօտ չ գալուն,  
Ոչ ժանդն է ջնջուել մեր շղթաներից,  
Ոչ մեր կուրծքըն է վարդով զարդարուն,  
Ոչ այզն է ջոկվում խաւար զիշերից . . .

\* \* \*

( Զ-Ն. )

Երդի՛ր, հոգեակ, երդի՛ր իմ մանուկ.  
Զայնիկդ անուշ յուզում է հոգիս.  
Անցած աւուրց ցընորք վաղանցուկ  
Փայլ է տալիս այս մարտլ կեանքիս:

Գուցէ դու ես, որ կեանք պիտի տաս  
Մաշուած սրտիս այս դառն օրերում:  
Եւ երանի՛ թէ դու հաւատաս,  
Որ քո երդիցն ես նոր եմ ապրում:

Վառ զգացմոնքի այն մոռցուած լեզուն  
Թոթովում է աշա ականջիս.  
Ահա նախկին սեր, խանդ և աւիւն,  
Անցած չքնաղ պատկերն առաջիս...

Երդի՛ր, հոգեակ. հոգեզմայլ երգով  
Տուր մոռացօնք ծերացող սրտիս.  
Ո՞հ, թովի՛ր ինձ, և քնքուշ ձեռքով  
Տուր քաղցր հանգիստ յոգնած ձակատիս:



Քուն եղի՛ր, հոգեակ, թող քաղցր նիրհով  
Աչերըդ փակուխն ջերմ կուրծքիս վերայ.  
Սիրոյ անուշիկ մեղեղիներով  
Թող մինչև նոր այդ տկանջդ հեշտանայ:

Քնքուշ վարդերով ես կըզարդարեմ  
Քո գլուխն ու կուրծք, որրան փափկութեան.  
Քնի՛ր, թագուհիս, մինչեւ լուսադէմ,  
Մինչեւ արտուտներն երկինք սըլանան:

Եւ երբ առաջին նշոյն ոսկէփայլ  
Արև ձըգէ կուտական դէմքիդ,  
Թող քեզ զարթեցնէ իմ սիրցդ դայլայլ,  
Բոցավառ համբօյրս այդ վալդ շըթունքիդ:

Յ. ՅՈՎՅԱՆԻՒՍԵԱՆ.



# ՎԵՑԵՐՈՐԴ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՑ ՄՏԱԿՈՐ ԿԵԱՆՔԸ.

Ա.

Զորրորդ դարում, քրիստոնէութեան աղբեցութեան ներքյ, Հայոց մտաւոր կեանքը, ուժգին զարկ ստանալով, սկսաւ արագ քայլերով առաջ գնալ, աստիճանաբար ծաղկել և բարգաւաճել և, վերջապէս, հասաւ իւր գագաթնակէտին, որից առաջ եկաւ մեր գրականութեան «Ոսկեղենիկ» կոչուած դարը. Սակայն Հայոց մտաւոր կեանքի այդ կենդանութիւնը իւր այդ մէկ անգամ հասած զարգացման գագաթնակէտի վերայ երկար չկարողացաւ կանգ առնել և շարունակել իւր կանոնաւոր ընթացքը. Նա ընկաւ յիտագայ դարերում, կորցնելով իւր թարմութիւնը, և այդ նորա անկումն չեղաւ այնպէս աստիճանաբար, կանոնաւոր, ինչպէս զարգացումն, նա կանգնեց իւր ամենաարագ շարժման մէջ, ինչպէս սրընթաց երիվարը իւր ընթացքում. Նա ահագին բարձրութիւնից գլորուեց խոր փոսի մէջ, ինչպէս կատաղի ջրվէժը գլորվում է լեռների գագաթից անդունդը. Միանգամից դադարեց Հայաստանում այն մեծ մտաւոր շարժումն, որ առաջ էր եկել Հայոց տառերի գիւտից, միանգամից, կարծես, ցրտահար եղան Ս. Սահակի և Մեսրովիցի ցանած ատոր սերմերը և կանաչեցրած դալարի տունկերը. Մտաւոր կեանքի այդ անկումն, որ պատահեց Հինգերորդ դարի վերջերում և վեցերորդի սկզբներում, թէև շարունակուեցաւ երկար ժամանակ յետագայ դարերում, բայց մանաւանդ զգալի եղաւ վեցերորդ և եօթներորդ դարերում, որովհետեւ նոքա, անմիջապէս յաջորդելով մտաւոր կեանքի ծաղկեալ դարին, աւելի սաստիկ զգացին այդ անկման աղբեցութիւնը, կազմելով

միանդամայն հակապատկեր նախընթաց դարին. Ահա այս է պատճառը, որ վեցերորդ և երջերորդ դարերը հայոց մտաւոր կեանքի անկման երկար դարերի շրջանում համարվում են բուն անկման դարեր. Հայոց մտաւոր կեանքի այդպիսի յանկարծակի և արագ անկման պատճառը կփենակի էր՝ արտաքին—քաղաքական և ներքին—կրօնական.

## Բ.

Քաղաքականապէս Հայաստանը, Վահանի մաշից յետոյ (510), ընկաւ մի շատ խեղճ վիճակի մէջ ծիչու է, Հայաստանը, իւր քաղաքական կեանքի սկզբնաւորութիւնից ի վեր, երբէք բոլորովն անկախ ու խաղաղ գրութեան մէջ եղած չէր. միշտ հարկելով, միշտ ուրիշ աղղեցութեան տակ գտնուելով, այս կամ այն գրացի տէրութիւնից կախումն ունենալով, նա երբէք լիովին խաղաղութիւն պայելած չէր. մինչև անգամ նոյն իսկ հինգերորդ գարում Հայաստանի վիճակը աղմկալի էր: Երկիրը, այդ ժամանակ կորցնելով իւր սեփական թագաւորութիւնը (428), տարուբերվում էր ներքին սաստիկ խոռովութիւնների, արտաքին կրօնական պատերազմ ների և Պարսից երեսից կրած սաստիկ նեղութիւնների մէջ: Սակայն ինչպէս և իցէ առաջ մեր երկիրը ունէր իւր սեփական թագաւորին, որ ընկած տեղը միշտ պաշտպան էր կանգնում ժողովրդի շահերին, իսկ հինգերորդ գարում Վարդանանց և Վահանանց, որոնք փոխանակում էին թագաւորական իշխանութիւնը, պահելով նորան, գոնէ, իւր ժամանակով, Խաղաղութեան մէջ, երբ ժողովուրդը, գտնուելով թէ՛ ներքին և թէ՛ արտաքին կողմից ապահովութեան մէջ, ժամանակ էր գտնում մտածելու և իւր զարգացման ու կրթութեան վերայ: Իսկ այժմ Հայաստանը քաղաքականապէս բոլորովն ուրիշ պատկեր էր ներկայացնում: Արտաքին կողմից, Հարեւանցի կերպով նայելով, կարծես, մի առանձին փոփոխութիւն առաջ չէր եկել Հայաստանի կառավարութեան գործի մէջ, համեմատելով նորան հինգերորդ գարի հետ, Մեր երկիրը վեցերորդ գարում, ինչպէս և հինգերորդում, բաժանուած էր երկու մեծ ազգերի մէջ, որոնցից առաջինը—Պարսիկները տիրում էին Հայաստանի արևելեան մասին, կառավարելով նորան մարզպաններով, իսկ երկրորդը—Ցոյները—արևմտեան մասին, կառավարելով նորան կիւրապալատներով,

պատրիկներով և կամ կոմսերով։ Թէ արևելիան և թէ արևմուան մասերը մարզպանների և կիւրապաշտաների իշխանութեան ներքոյ պահպանում էին իւրեանց ներքին անկախութիւնը, որի ներկայացուցիչ համարվում էին հայոց նախարարները հայկական այրուձիով։ Բայց նայելով նորա վերայ ներքին կողմից, իսկոյն կարելի էր նկատել այն մեծ փոփոխութիւնը, որ առաջ էր եկել նորա քաղաքական գրութեան մէջ։ Բիւզանդիոնի կայսրները, որոնք Սրբակունեաց հարստութեան ժամանակ անընդհատ կռուելով Պարսից ալքայից արքաների հետ թէ հայաստանին տիրապետելու և թէ Ասիայի գերիշխանութեան համար, նոյն Արշակունեաց հարստութեան ընկնելու օրերը թուլացել էին և տեղի էին տուել Պարսից, պահելով իւրեանց իշխանութեան ներքոյ հայաստանի արևմուան մի չնչին մասը միայն, այժմ, վեցերորդ դարի սկզբներում, նորից հզօրանում են և սկսում են նոր ի նորոյ մաքառել իւրեանց առաջուայ նպատակների համար, նորից, ինչպէս Արշակունեաց հարստութեան ժամանակ, սկսվում է երկար ու ձիգ պատերազմ՝ հայաստանի գրացի երկու մեծ տէրութիւնների մէջ Ասիայի գերիշխանութեան և հայաստանին տիրելու նպատակով, և մեր երկիրը, մնալով երկու մեծ պետութիւնների մէջ և պատերազմի ասպարէց դառնալով աւերվում ու քանդվում՝ է։ Պատերազմը Բիւզանդացւոց և Պարսից մէջ մղվում է փոփոխակի բախտով՝ կամ յաղթող են հանդիսանում և տիրում մեր երկրին Յոյները, կամ Պարսիկները։ Սակայն երկու դէպքում ևս թէ՝ Պարսից և թէ՝ Յոյների յաղթութեան ժամանակ հայաստանը չէ շահվում, որովհետև յաղթող տէրութիւնը, իւր իշխանութիւնը տարածելով հայաստանի մեծ մասի վերայ, խիստ հսկողութեան մէջ է պահում նորան, միայն վարձատրելով այս կամ այն մեծ նախարարին այն օգնութեան համար, որ նա ցոյց էր տուել յաղթող տէրութեան պատերազմի ժամանակ։ Այսպէս, օրինակի համար, Յոււատիանոս կայսրը մեծ սիրով և պատուով ընդունում է Պարսից դէմ ասպատամբած Վարդան Մամիկոննեանին, իրախուսում է նորան, աջակից և օգնական լինելով նորան իւր սկսած գործում։ « Խսկ առ հայոց երգնոյր թագաւորն Յունաց, և հաստատէր զնոյն ուխտ, որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց՝ երանելցն Տրգատայ և Կոստանդիանոսի. և տայր նոյա (Վարդանայ և նախարարացն հայոց) զաւարսն կայսերական յաւագնութիւն...» (Պատմ. Սեբէոսի. երես 26.), Խոսրով Բ Ապրուէզ կոչուած

թագաւորը Սմբատ Բագրատունի նախարարին նշանակում է մարզպան՝ Պարսկական Հայաստանի վերայ, երբոր նա Մօրիկ կայսեր ուղարկած Ներսէս Ստրատելատի և Տարօնի իշխան Մուշեղ Մամիկոնեանի օգնութեամբ վերահաստատեց նորան—Խոսրովին Պարսից գահի վերայ, որից զովել էին նորան Պարսից աւագանին։ « Աստանօր Սմբատ քաջ Բագրատունի բազում և անհնարին մարտս յարդարէր ընդդէմ բոլոր թշնամեաց նորա, և արիաբար մրցմամբ վանեալ վտանգեալ զբնաւ հակառակորդս նորա, յոտին նմա կացուցանէր։ Էսդ որ զարմացեալ Խոսրովայ՝ յաւէտ իմն հաճայանայր Սմբատ յաչս նորա, և բազմօք ոմամբք ընծայական օժտութեամբք զնա պատուասիրեալ՝ տայ նմա և զմարզպանութիւն Վրկանայ<sup>1)</sup>...» (Պատմ. Յովհ. կաթ. երես 86—114)։

Զէին շահվում Հայերը և այն ժամանակ, երբ Յոյները և Պարսիկները, զանազան հանգամանքներից ստիպուած, շատ թէ քիչ ժամանակուայ համար խաղաղութեան դաշն էին կապում միմեանց հետ, Զէին շահվում, ասում ենք, որովհետև Պարսիկները և Յոյները, որոնց մէջ բաժանուած էր Հայաստանը, խաղաղանալով այդ ժամանակ արտաքին պատերազմական գործերից, ուշադրութիւն էին գարձնում իւրեանց տէրութեան ներքին գործերի վերայ և աշխատում էին Հայաստանի վերաբերութեամբ իւրեանց մասնաւոր նպատակները առաջ տանել։ Պարսիկները, պարսիկ մարզպաններ նշանակելով Հայաստանի իւրեանց մասի վերայ, աշխատում էին, ըստ իւրեանց սովորութեան, չեթանոսութիւն տարածել Հայաստանում, ինչպէս, օրինակի համար, պյտ պատհեցաւ։ Կտւատ և Խոսրով Ա. Անուշ հուռան կոչուած թագաւորների ժամանակները։ Կաւատ, օգտուելով պատերազմական գործերի պարապ ժամանակամիջոցից, դեռ Վահան Մամիկոնեանի մարզպանութեան վերջին տարիներում, մոգերով լցրեց Հայաստանը, և միայն չկարողացաւ իւր նպատակին հանել Յունաց պատերազմների վերանորոգելու պատճառով։ իսկ Խոսրով

1) Վրկանայ մարզպանութիւն ասելով, այստեղ պէտք է հասկանալ զիկաւորապէս Հայոց մարզպանութիւն, որովհետև Ստեփանոս Տարոննցին, խօսելով Մովսիսի յաջորդ՝ Աբրահամի կաթուղիկոսութեան մասին, ուղղակի ասում է՝ «Եկաց կաթուղիկոս Հայոց Տէր Աբրահամ հրամանաւ Սմբատայ Բագրատունոյ, որ էր մարզպան Հայոց ի Խոսրովու հրամանէ»։

օգտուելով այն երկարատև խաղաղութեան ժամանակամիջոցից, որ իւր ժամանակ կայացրել էր Յունաց հետ, մի շաբք Պարսիկ մարզպաններ<sup>2)</sup> Նշանակեց, հրամայելով շարունակել Կաւատի սկսածը, որին ընդդիմացաւ Մովկէս Եղիվարդեցի կաթուղիկոսը, յիշեցնելով թագաւորին Վազարլի-Վահանի ժամանակ կապած պայմանները<sup>3)</sup>: Զարմանալի և նցյն ժամանակ վերին աստիճանի հետաքրքիր է այս Պարսից թագաւորի կարծիքը իւր հպատակութեան տակ գտնուած Հայոց երկրի կառավարութեան մասին: Այն ժամանակ, երբ նորա Նշանակած մարզպանները կեղեքում ու տանջում են Հայոց ժողովուրդը, այն ժամանակ, երբ նորա ազգական Սուրէն ծիհովը-Վշնասպ կոչուած մարզպանը «Ճնայր ընդ կանայս աղատաց ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ<sup>4)</sup>», նա պարծենալով ասում է՝ «Հայոր է ամենայն երկրի, և ոչ տէր, Եւ սնուցեալ զամենեսեան իրեւ որդի և սիրելի<sup>5)</sup>»: Յոյները ևս, օգտուելով իւրեանց խաղաղ դրութիւնից, հանդիսու չեին թողնում իւրեանց հպատակ Հայերին: Նոքա, Քաղկեդոնի ժողովի պատճառով, մեծ խտրութիւն տեսնելով իւրեանց և Հայոց եկեղեցիների մէջ, տանջում էին Հայերին, անդադար ստիպելով նոցա ընդունել վերոյիշեալ ժողովի դաւանութիւնը: Պատահում էր և այնպէս, որ Յոյները և Պարսիկները իւրեանց յժերը միացնում էին գործելու Հայաստանում միենոյն նպատակի համար: Այդ նպատակը, որի համար միայն երկու միմեանց հակառակ տէրութիւնների մէջ կայանում էր համերաշխութիւն, ձգուում էր զլատել Հայոց նախարարների յժերը, քանդել նոցա միաբանութիւնը և, ըստ կարեաց, ոչնչացնել իշխանական ցեղերին, տարագիր անելով նոցա Հայաստանից: Նախարարներն էին միայն արգելք լինում նոցա կամայական գործողութիւններին Հայաստանում, նոքա էին պատճառ լինում նոցա ծածուկ դիտաւորութիւնների իրագործման անյաջողութեան, նոքա էին, վերջապէս, շատ

<sup>2)</sup> Դենշապուհ, Վշնաս-Վահրամ, Վարազդատ և Սուրէն, որ կոչվում էր ծիհովը-Վշնասպ:

<sup>3)</sup> Վահրամ Մամիկոնեանի և Վաղարշ թագաւորի մէջ խաղաղութեան դաշը կնքուեցաւ (485 թ.): Այդ դաշինքի հիման վերայ Վահրամ ծառաջուեցաւ լիազօր մարզպան ու Հայոց կրօնքը անձեռնմխնլի:

<sup>4)</sup> Պատմութիւն Ստեփանոսի Տարհնեցւոյ. եր. 85—100.

<sup>5)</sup> Պատմութիւն Սերէոսի. եր. 28—29.

անդամ պատերազմի պատճառ լինում նոցա մէջ, անդադար անցնելով մէկ կողմից միւս կողմը՝ Պարսից հայաստանից Յունաց հայաստանը, անդադար գրգռելով մէկին միւսի դէմ: Ահա՛ այդ արգելքը, այդ ոյժն էր, որ երկու տէրութիւններին ևս անհրաժեշտ հարկաւոր էր ոչնչացնել: Հեռացնել մէջտեղից: Մօրիկ կայսրը, որ Խոսրով Բ-ին նստեցնելով Պարսից գահի վերայ, գրաւել էր նորա սէրը և այդպիսով ընդ երկար խաղաղութեան դաշն էր հաստատել երկու տէրութիւնների մէջ այդ խնդրի վերաբերութեամբ դրում է Խոսրովին՝ «Ազգ մի խոտոր և անհնազանդ էն. կան ի միջի մերում և պղտորեն. Բայց Ե՛կ, ես զիմն ժողովեմ և ի թօրակէ գումարեմ: և դու զքցոր ժողովէ և հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին, թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն, զթշնամիս սպանանեն. և մէք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա (իշխանք ամենայն հայաստանեայց և զաւրաց) յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»: (Պատմութիւն Սերէսոփ. Երես 47.): Հայոց նախարարները, յայտնի բան է, անտարբեր չէին մնում դէպի իւրեանց նեղիները. նորա յաճախակի ապստամբում էին, զէնք էին բարձրացնում և, մի առ ժամանակ ձգելով իւրեանց վերայից թշնամիների լուծը, կարողանում էին ինքնագլուխ դէմ դնել թշնամու ահագին զօրութեան և կառավարել իւրեանց երկիրը: Բայց այդ ապստամբութիւնները, չկրելով իւրեանց վերայ ընդհանրութեան նշան, չլինելով ժողովրդական, այլ միայն մաննաւոր անհատների գործ, շուտով ընկճկում ու վերջանում էին, չթողնելով իւրեանց յետեկից մի որ և իցէ զգալի հետեանք: Այսպէս էր, օրինակի համար, Վասակի որդի Վարդան Մամիկոնեանի ապստամբութիւնը Խոսրով Անուշիուանի դէմ: որ հեշտութեամբ ընկճեցին Խոսրովի զօրավարները, չնայելով, որ Յունաց Յուստինոս կայսրը, ինչպէս առաջ յիշեցինք, օգնում էր Վարդանին: Վարդանի ապստամբութեան պատճառը զիսաւորապէս անձնական էր: Նա կամենում էր իւր ապստամբութեամբ վրէժինդիր լինել Սուրէն մարզպանից իւր եղքօր Մանուէլ Մամիկոնեանի մահուան համար, որին սպանել էր Սուրէնը. ուստի և յարձակուեցաւ մարզպանի վերայ և սպանեց նորան, որից և առաջ եկաւ նորա ապստամբութիւնը (578թ.): Հայոց ապստամբութիւնները մաննաւանդ յաճախակի սկսում են կրկնուել Մօրիկ կայսեր և Խոսրով Ապրուէզի ժամանակները, երբ այդ թագաւորները համաձայնութիւն են:

կայացնում միմեանց մէջ հանել Հայոց նախարարներին և պյուռ-ձին Հայաստանից և, հեռաւոր երկներ պատերազմի ուղարկելով նոցա խրեանց թշնամիների դէմ, մաշել նոցա: Այդ ժամանակն էլ հենց Հայոց նախարարների մէջ ծագում է երկու տէրութիւններից էլ յետ կենալու և Հայաստանում անկախ Հայոց իշխանութիւն Հաստատելու միտքը: «Եւ զայս եղեալ ի մտի, եթէ գանձուդ<sup>6)</sup> այդորիկ զՀայաստան մեր արասցո՛ւք, և առեալ ի նոցանէ աւգնութիւն, պատերազմեցո՛ւք ընդ երկոսին թագաւորսդ, և բռնութեամբ զերկիրդ մեր ի մեջ գարձուացուք»: «Ապա գարձեալ սկսան միաբանել նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին. և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց<sup>7)</sup>, այլ եկեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»:

(Պատմ: Սեբէոսի. եր. 48 և օգ.):

Այդ բոլոր ապստամբութիւնների մէջ առանձին ուշադրութեան արժանի է միայն Մուշեղ Մամիկոնեանի, Տարոնի գլխաւոր նախարարի ապստամբութիւնը (604 թ.) Խոսրով Բ Ապրուեղի դէմ, որ չնորհիւ Գայլ Վահանի (606 թ.), Սմբատի (632 թ.) և Վահան Կամնարականի վերջացաւ յաջողութեամբ Հայերի համար: Սակայն այդ ապստամբութիւնը ևս մի ընդհանուր գործ չլինելով մի առանձին նշանակութիւն չունեցաւ Հայաստանի քաղաքական գրութեան վերայ: Ապստամբութեան պատճառը Յովհաննէս Մամիկոնեան եպիսկոպոսը մեկնում է նորանով, որ

6) Այս այն գանձն է, որ Խոսրով Ապրուեղը ուղարկել էր «ուղտօք բազմօք» Հայաստան, որպէսզի կարողանայ նորանով կաշառել նախարարներին և հանել նոցա Հայաստանից: Սամուէլ Վահկունի, Ատատ Խոռվոտունի, Մամակ Մամիկոնեան, Ստեփանոս Սիւնի, Կոտիս, Ամատունեաց տէր և Թէոդոս Տրպատունի նախարարները, լսելով Խոսրովի ուղարկած այդ գանձերի մասին, դիմում են կարաւանի վերայ և յափշտակում են գանձերը Մտրպատական աշխարհում:

7) Յունաց բաժնի Հայոց նախարարները և այլութին տարվում էին Թրակիա, որտեղից և ուղարկվում էին Դանուբեան ազգերի դէմ: «Եւ հրաման ետ (Մօրիկ) դարձեալ վերստին զաւը հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով և ընտրով հասակի, կազմել զունդս զարդս, և զինու վառեալ և անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացւոց ընդդէմ Թշնամոյն» (Սլաւոնական ազգերի):

Մուշեղ, որ, զզուած լինելով Խոսրովի նենգութիւնից<sup>8)</sup>, հեռացել էր քաղաքական գործերից և ապաստանել Տարոնում՝ հրաժարուեցաւ գնալ Խոսրովի հետ Յունաստան պատերազմի, երբ նա գնում էր պատժելու Փոկասին Մօրկի մահուան համար:

« Իսկ Խոսրով գնացեալ վրէժինդիր Մօրկայ, և եկեալ անցանէր ընդ Կարնոյ քաղաքն, և արձակէ առ Մուշեղ, իշխանն Տարոնց պատգամն և ասէ. արի՛ Ե՛կ ընդ իս ի գուռն թագաւորին Յունաց, լինել վրէժինդիր Մօրկայ մահուան. ապա թէ ոչ ի գառնալն իմ, զերկիրդ քանդեմ, և զքեղ կապանք տանեմ ի գուռն աբքոնի, կնաւ և որդեքը » (Յովհ. Մամիկ. պատմ. երես 14.). Մուշեղ վշտացած էր Խոսրովից. Այն բոլոր բարութիւնների փոխանակ, որ նա արել էր նորան, յաղթելով նորաթշնամիններին միւս հայ նախարարների օգնութեամբ և նորից իւր հօր գահը բարձրացնելով, նա տեսել էր նորանից միայն նենգութիւն և խարդախութիւն. Եւ այս բոլորից յետոյ գեռ Յունաց և Պարսից թագաւորները համարձակվում էին արհամարհանքով վերաբերուել դէպի հայոց նախարարները բարկանալ նոցա վերայ նոցայաճախակի մէկ կողմից միւս կողմը անցնելու համար, կոչելով նոցա « ազգ անհնաղանդ և խոտոր : Պէտք է գեռ զարմանալ հայ իշխանների այն մեծ հաւատարմութեան վերայ, որ նոքա ցոյց էին տալիս երկու բոնակալներին, որոնց համար, բացի իւրեանց անձնական շահերից ոչինչ սուրբ բան չկար. Որմիզդ, Պարսից թագաւորի դէմ ապստամբում է նորա Վահրամ՝ զօրավարը. Որմիզդ սպանվում է իշխաններից և նորա որդին Խոսրով հրաժարակվում է թագաւոր, բայց զօրքը և ժողովուրդը անցնելով Վահրամի կողմը, անխուսափելի են անում մանուկ թագաւորի պարտութիւնը. Այս Ճգնաժամի մէջ հայոց նախարարները իւրեանց զօրքերով Մօրկի կայսրից ուղարկած օգնական զօրքի հետ, պաշտպան են կանգնում Խոսրովի իրաւունքներին, թէև Վահրամ՝

8) Յովհաննէս եպիսկոպոսը պատմում է, որ երբ Յովները տեսան, որ Խոսրով կամենում է մեծ պարզներ տալ Մուշեղին նորա յաջողութիւնների համար, նախանձելով զրպարտեցին նորան թագաւորի առաջ: Մուշեղ յանդիմանելով Յովներին, ասում է՝ « Կամեցալք դուք սպանանել զիս նենգութեամբ, արդ մի զարթուցանէք զառիւծ, որ ի բուն է, և մի զգալլ, որ զիւր բարսն մոռացնալ է... » (Յովհ. Մամիկ. պատմ. եր. 14).

խոստանում էր Հայոց թագաւորութիւնը տալ նոցա, եթէ միայն նորա յետ կանդնեն նորանից. Ծատ հետաքրքրական է այն նամակը, որ այս առմեն գրում է Վահրամ Հայոց նախարարներին. «Ես այսպէս կարծէի՝ եթէ ես յորժամ՝ ընդ թշնամիս ձեր մարտնչեմ, և դուք ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւգնական լինիցիք. զե ես և դուք, միաբանութեամբ բարձուք ի միջյ զտիեզերական պատուհանն՝ զտունն Սասանայ . . . . բայց դուք Հայք՝ որ տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն. Ո՞չ ապաքէն տունդ Սասանեան երած զերկիրդ ձեր և զտիրասիրութիւն . . . . բայց զի հաճոյ թուեսցի ձեզ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս, և ձեռն տալ ինձ աւգնութեան. Եւ թէ ես յաղթեցից՝ երդեալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և ի կուսին, ի հուր և ի ջուր, ի Մշհը՝ և յամենայն աստուածս՝ եթէ ձեզ տուեալ լիցի իմ զչայոց թագաւորութիւն. Զո՞ր և դուք կամիք, արասջեք ձեզ թագաւոր<sup>9)</sup> . . . ». (Պատմ. Սերեսոսի. եր. 37). Եւ գեռ կրկնում ենք, Պարսից և Յունաց թագաւորները անբաւական էին Հայոց նախարարներից, կասկածանքով էին նայում նոցա հաւատարմութեան վերայ, Պարսկաստանի այսպիսի մի ձգնաժամին, երբ ամենայն բան խոստանում էր Հայերին յաջողութիւն, երբ ինքը Վահրամը առաջարկում է նոցա ցանկութիւններին բաւականութիւն տալ, նորա մնում են հաւագարիմ օրինաւոր թագաւորին, պաշտպանելով նորա իրաւունքները ապստամբովի գէմ: Սորանից էլ աւելի հաւատարմութիւն այլ ևս ի՞նչպէս Կարելի է պահանջել մի ոչ բոլորովին հպատակ, մի ներքին անկախութիւն վայելող աղջից:

Մոշեղ Մամիկոնեանի պատերազմի մէջ ուշադրութեան արժանին է և այն, որ այն ժամանակ, երբ Հայերի բոլոր ապլստամբութիւնները վերջանում էին անյաջողութեամբ, Մամիկոնեաններինը բոլորովին յաջող ելք է ունենում: Տարօնի համար: Հայոց ապստամբութիւնների անյաջողութեան պատճառը, բացի

9) Վահրամ իւր Հայոց նախարարներին գրած նամակի մէջ այսպէս է որոշում Հայաստանի սահմանները. «Եւ Թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոն և ի դուռն Սղուանից. և յԱսորոց կողմանէ զԱրուաստան և զԴոր Շիրական մինչև ցանձման Տածկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լիալ է. և ընդ արեմուստ մինչև ցԿեսարիա Կապաղովկազոց: Եւ ես մի իշխանից քան զԱրասաց անցանել»:

նորա ժողովրդական և ընդհանրութեան գործ չլինելուց, առաջ էր գալիս և այն նախարարութեան մէջ տիրող վարքի ու բարքի ապականութիւնից, որի գէմ բողոքում էր գեռ Վահան Մամիկոնեանը: «Բայց ամենից աւելի դոք խնկերդ ձեզնից վախեցէք, ասում էր Վահանը այն նախարարներին, որոնք» առաջարկում էին նորան ապստամբել Պերողի գէմ, որովհետև Խաթերայ և վախկոտ մարդիկ էք . . . . .»:

Սեբէոսը պատմում է, որ Հայոց Կախարաբները այն աստիճանի վախենում էին միմեանցից, որ քաշվում էին մինչև անգամ մի ընդհանուր ազգօգուտ խնդիր բոլոր իշխանների քննութեան առարկայ շինել: «Եւ առեալ նոցա զջրովարտակն (Վահամայ) և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի. և ոչ իսկ ասացին բազմաց, զի երկնչէին յանմիաբանութենէ իւրեանց»: (Սեբէոսի պատմ: եր. 38).

Հայաստանի այսպիսի խեղճ քաղաքական դրութիւնը փոփոխութիւն չէ կրում և յաջորդ եօթներորդ դարում: Միակ փոփոխութիւնը Հայաստանի քաղաքական դրութեան մէջ այդ ժամանակ լինում է միայն այն, որ Պարսկաստանի մարզպանական իշխանութիւնը բոլորովին տեղի է տալիս Յունաց կիւրոպաղատութեան (630 թ.) և Հայաստանի մէկ գլխաւոր թշնամու-Պարսիկների<sup>10)</sup> տեղը բռնում են Արարից անապատներից նոր դուրս եկած Արաբացիները և Հագարացիները, որոնք 640 թուականին առաջին անգամ մտնելով Հայաստան, սկսում են երկար ու ձիր պատերազմ Յոյների գէմ Հայաստանի համար: Այստեղ մէկ անգամ ևս կրկնվում է այն պատկերը, որ նախընթաց դարերում Հայաստանի քաղաքական դրութեան գլխաւոր յատկանիչն էր կաղմում: Երկու մեծամեծ ազգեր պատերազմում են միմեանց գէմ Հայաստանի համար, և մեր խեղճ երկիրը անդադար ձեռքից ձեռք է անցնում և ապականվում: Այս անելանելի դրութիւնը շարունակվում է մինչև այն ժամանակ, երբ վերջապէս Արաբացիները յաղթող Հանդիսանալով վերջնականապէս Հալածում են Յոյներին Հայաստանից նցն իսկ Հայերի օգնութեամբ, որոնք այդ ժամանակ սաստիկ զգուել էին Յոյներից նոցա կրօնա-

<sup>10)</sup> Պարսկաստանը առաջին երկրներից մէկն եղաւ, որ նուածնցին Արաբները: Վերջին Սասանեան թագաւորը եղաւ Յագկերտ Գ, որ փախաւ Բակորիա:

կան հալածանքների պատճառով, և տիրում են Հայաստանին (693թ.),

## Գ.

Հայաստանի քաղաքական ծանր գրութիւնը վեցերորդ և եօթներորդ դարերում աւելի ևս ծանրանում էր ներքին կրօնական խոռվութիւններով, որոնք սկսուելով հինգերորդ դարի 451 թուականից, շարունակուեցան անընդհատ յետագայ դարերում։ Բայց այդ խոռվութիւնները աւելի սաստիկ գրգռուեցան, աւելի սուր բնաւորութիւն ստացան վեցերորդ և եօթներորդ դարերում՝ Մօրիկ, Հերակլէս և Կոստանդին կայսրների ժամանակ։ Հանրի և Յոյների մէջ ծագած կրօնական խոռվութիւնները իւրեանց երկարատև ժամանակի ընթացքում միշտ մի և նոյն բնաւորութեամբ չէին շարունակվում։ Նոքա, ճիշտ է, ընդհանուրում կրում էին միշտ մի և նոյն ատելութեան ոգին, բայց երբեմն նոքա գրգռում, աւելի սուր բնաւորութիւն էին ստանում, երբեմն ևս նուազելով ընթանում էին հանգիստ, աննկատելի կերպով։ Խոռվութիւնների այդ անհաւասար ընթացքի պատճառը գլխաւորապէս պէտք է որոնել Բիւզանդիոնի քաղաքականապէս հըզօրանալու և թուանալու մէջ։ Այն ժամանակ, երբ Յոյները, քաղաքականապէս թուանալով, ստիպուած էին լինում տեղի տալ Պարսիկներին կամ Արաբացիներին, իւրեանց ձեռքի տակ պահելով Հայաստանի մի փոքր մասը միայն, նոքա աշխատում էին ըստ ամենայնի լաւ վարուել Հայերի հետ, աշխատում էին նոցա սիրտը գրաւել և մեղմացնում էին իւրեանց կրօնական պահանջները։ Իսկ երբ նոքա քաղաքականապէս հզօրանալով, իւրեանց ձեռքի տակ էին առնում Հայաստանի մեծ մասը, նոքա, ընդհակառակը, այլ ևս կարիք չէին զգուշութեամբ վարուել Հայերի հետ և սաստկացնում էին կրօնական հալածանքները նոցա դէմ։ Մօրիկ, Հերակլէս և Կոստանդին կայսրների թագաւորութիւնը Բիւզանդիոնի հզօրացած ժամանակամիջոցներից մէկն է։ Կայսրները, իւրեանց նպատակին հասնելու համար, գործ էին զնում Հայերի դէմ ոյժ և բոնութիւն։ Կրքերը սաստիկ գրգռուած են, այլ ևս հեռատեսութիւն ապագայի վերաբերութեամբ, խոչեմութիւն գործողութիւնների մէջ չէ երևում։ Մօրիկ կայսրը, օգտուելով Խ-ի բարեկամութիւնից, հրամայում

է Քաղկեդոնի դաւանութիւնը բռնութեամբ քարոզել ու միայն Յունաց մասի հայոց եկեղեցիներում, այլ և Պարսից մասի<sup>11)</sup>: Եւ երբ Պարսից մասի հայերը այդ ժամանակուայ Աբրահամ կաթուղիկոսի հետ ժիասին ընդդիմանում են այդ կարգադրութեան, նա Յունաց մասի վերայ նշանակում է հակաթոռ կաթուղիկոս, մտածելով՝ որ այդպիսով կըպառակտուի հայոց եկեղեցին և ինքը հեշտութեամբ կըհանսի իւր նպաստակին, Կայսեր ցանկացածը մասամբ իրագործվում: Է: « Հայոց եկեղեցին պառակտովում է ոմնաք օտար երկրներ են փախչում, ոմանք, արհամարհելով կայսեր հրամանը, մնում են հաւատարիմ Աբրահամին, իսկ ոմանք, բայց ու երես ընդունում են նոր նշանակուած հակաթոռ Յովհան Բագարանցու կաթուղիկոսութիւնը և միանում են Յունաց եկեղեցու հետ<sup>12)</sup>: » « Իրաման ելանէ դարձեալ ի Կայսրէն (ի Մօրկայ) վերստին այլ՝ քարոզել վժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցին հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ զաւրս իւր իսկ մանկոնք ուստի եկեղեցեացն հայոց փախստական գնացեալ յաւատար երկիր վարէին: Եւ բաղմաց առ ոչինչ համարեալ զհրամանն՝ զտեղի կալան և անշարժ մնացին, Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւրինաւորք: Բաժանեցաւ ապա և ամոռ կաթողիկոսութեան յերկուս... . . . » (Պատմ. Սերէոսի. եր. 52).

Հերակլը, աջողութեամբ վերջացրած լինելով Պարսից պատերազմը<sup>13)</sup> և այդպիսով մի տեսակ գերիշխանութիւն ձեռք,

<sup>11)</sup> Յունաց Հայաստանի և Պարսից Հայաստանի սահմանը այդ, ժամանակ կազմում էր Ազատ գետը, որից դէպի արևելք պատկանում էր Պարսից, դէպի արևմուտք—Յունաց:

<sup>12)</sup> Թէէ Սերէոսը ասում է՝ «Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւրինաւորք», բայց պէտք է կարծել որ այդ միանալը եղել է միայն առ նրան: Ինքը Յովհանը, ինչպէս ասում է Յովհաննէս կաթուղիկոսը, « բնաւ ոչինչ շեղեալ էր զինի Քաղկեդոնական աղանդիցն »:

<sup>13)</sup> Այդ Պարսից պատերազմը, սկսութիւն Մօրկի սպանուելուց, շարունակուեցաւ Խոսրով Ապրուէզի, Կաւատի, Արտաշրի ժամանակները, և վերջացաւ Խոռնամի Թագաւորութեան ժամանակ, որին Հերակլ կայսը օգնեց սպանելու Մրտաշրին և Թագաւորելու Պարսից վերա

բերած լինելով իւր ցանկացածի պէս գործելու բովանդակ հայատանում, ստիպմամբ և ապօրինի կերպով կազմում է Կարնոյ ժողովը (629թ.) և լնդունել է տալիս այդ ժամանակուայ հայոց Եզր կաթուղիկոսին Քաղկեդոնի դաւանութիւնը, սպառնալով հակառակ դէպքում՝ Յունաց մասի վերայ առանձին կաթուղիկոս նշանակել. «Եկն ապա զաւրավարն Յունաց Մժէժ Գնունին<sup>14)</sup> ի հայաստան երկրէն, և յինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասացելում սահմանին, Ասէ ցկաթուղիկոսն ցԵզր՝ երթալ նմա յերկիր սահմանացն և հաղորդել արքինաւք ընդ կայսեր. ապա թէ ոչ՝ արացո՛ք մեզ այլ կաթուղիկոս. և դու կալ զԵշխանութիւնդ քո ի Պարսից կողմանէ . . . »: (Պատմ. Սեբէոսի. եր. 101).

Կոստանդին կայսրը, Հերակլի թոռը ստիպում է Եզրի յաջորդ հայոց Ներսէս Գ Նինոլ կոչուած կաթուղիկոսին իւր եպիսկոպոսների հետ հաղորդուել Յունաց ծիսով Յունաց քահանայից, երբ նաև, օգտուելով իւր համար բարիշաջող այս կամ այն հանգամանքից, կարողանում է հալածել հայոց երկրից Արաբացւոց պահապան զօրբը՝ և նորից հաստատուել հայաստանում: « Մինչև եկն արքայ Կոստանդին և նստաւ ի տան կաթուղիկոսին և քարոզեցաւ յԵկեղեցւոցն Սրբոյն Գրիգորի ժողովն Քաղկեդոնի յաւուր կիւրակէի. Եւ մաստեաւ պատարագ հոռոմերէն ի հոռոմ երիցուէ, և հաղորդեցաւ թագաւորն և կաթուղիկոսն և ամեն եպիսկոպոսն, որ կամաւ և որ ակամայ . . . . : Մինչ զի առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին . . . . » (Պատմ. Սեբէոսի. եր. 141): Յունաց այդ կրօնական ատելութեան հայերը պատասխանում էին նոյն ատելութեամբ, աշխատելով ամենայն տեսակ վրէժինդիր լինել նոցանից: Հայոց նախարարները Պարսից իշխանութեան ժամանակ յաճախակի անցնում էին Պարսից կողմը, իսկ Արաբացւոց իշխանութեան ժամանակ—Արաբացւոց կողմը, որով շատ անգամ ուղղակի պատճառ էին դառնում Յունաց զօրբի պարտութեան. Յունաց թշնամիների դէմ պատերազմի ուղարկուած հայոց այրուձին շատ անգամ իւր զԷնքը դարձնում էր իւրեանց Յղների դէմ: Հայոց նախարարներից շատերը մասնակցում էին այն բազմաթիւ դաւադրութիւններին, որոնք ստէպ ստէպ կաղմ վում էին Բիւզանդիոնում կայսրների կեանքի դէմ: Հայ ժողուրդը

<sup>14)</sup> Այս Մժէժ Գնունին Հայաստանի Յունաց մասի գլխաւորն էր:

այնքան զգուանքով էր վերաբերում դէպի Յշները, այնքան ատում էր նոցա, որ հայաստանի Յունաց պահապան զօրքը ստիպուած էր բողոք ուղարկել Կոստանդին կայսեր հայերի դէպի նոցա ցոյց տուած կրօնական ատելութեան համար: Միբրև զանօրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ, գրում են նոքա իւրեանց բողոքի մէջ: Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լեռնի, և նզովն զնոսա, Եղը կաթուղիկոսի անունը անէծքով էր յիշվում: Ներսէս Շինողը, չնայելով, որ նա 648 թ. առանձին ժողովով նվովից Քաղկեդոնի ժողովը, ստիպուած էր, իւր Յունաց հետ հազորդուելու համար, թողնել կաթուղիկոսութիւնը մինչև Թէոդորոս Ռշտունեաց<sup>15)</sup> նախարարի մահը, Յունաց կայսրների հայոց դէմ յարուցած հալածանքների ու առհասարակ կրօնական խորվութիւնների պատճառը, ինչպէս արդէն յիշեցինք, կազմում էր Քաղկեդոնի ժողովը և նորա մէջ եղած որոշումն: Յայտնի է, որ մինչև 451 թ. եղել էին երեք տիեզերական ժողովներ, որոնց որոշումները հայերը ընդունելով, պահպանում էին ամենայն սրբութեամբ: 451 թուականին երբ հայաստանում վճռվում էր քրիստոնէական կրօնը մահուան և կեանքի խնդիրը, կայացաւ և մի չորրորդ տիեզերական ժողով: Որ կոչուեցաւ Քաղկեդոնի, որի մէջ հերքուեցաւ և հերձուածող անուանուեցաւ Եւտիքէս ծերունի երէցը, որ քարոզում էր Քրիստոսի մէջ մի բնութիւն, հակառակ ընդհանուր եկեղեցու դաւանութեան, որ ընդունում էր երկու բնութիւն: Հայերը, զբաղուած լինելով կրօնական պատերազմի ժժուար հանգամանքներով չկարողացան մասնակցել այդ ժողովին, ուստի իւրեանց համար պարտականացուցիչ չհամարեցին ընդունել ժողովի որոշումները, նամանաւանդ որ այդ ժողովի որոշման մասին թէ հայաստանում և թէ Բիւզանդիոնում տարածուել էին բազմաթիւ աննպաստ կարծիքներ, որոնք տարակուանքի մէջ էին ձգել հայոց հոգեւորականութիւնը և ժողովուրդը: Եւ ճշմարիտ, այդ տիեզերական ժողովը ամենեին չէր նմանում առաջուայ երեք ժողովներին: Մինչդեռ առաջին երեք ժողովները կազմուեցան և

15) Թէոդորոս Ռշտունին Յոյների անագորոյն թշնամիներից մէկն էր. նա արձակ համարձակ անցել էր Արարացոց կողմը: Նորա ազգն ցութեամբ կազմուեցաւ 648 թ. ժողովը, նորա ազգեցութեամբ և Ներսէս հրաժարուեցաւ կաթուղիկոսութիւնից:

վերջայան խաղաղութեամբ, այս ժողովի կազմութիւնը վերին աստիճանի աղմկալի և խոսվացոյլ եղաւ. առաջիններում մասնակցող եպիսկոպոսները իւրեանց որոշումները սահմանեցին իւրեանց յօժար կամքով, առանց բոնադատութեան, այս ժողովում նոքասահմանեցին, ընդհակառակը, կայսոների աղբեցութեան ներքոյ; Մարմնաւոր իշխանութեան այդ բոնութիւնը ժողովի կազմութեան և որոշումների հաստատութեան վերայ համարմ էր մինչև այն տեղը, որ կայսոների հրամանով ժողովատեղին շրջապատուած էր լինում զինուորներով: Բայց որ աւելի կասկածանքի մէջ էր ձգում հայերին,—այդ այն էր, որ հայաստանում տարածուել էր Զենն կայսեր «Հենոդիկոն» կոչուած հրովարտակը, որով իսպառ հերքում էր Քաղկեդոնի ժողովի որոշումն: Մի ուրիշ հանգամանք որ իսկապէս անվաւեր էր անում՝ Քաղկեդոնի ժողովը ոչ միայն հայերի, այլ նոյն իսկ Յայների աչքում, էր այն, որ այդ ժողովը կազմուած էր երեք առանձին ժողովներից՝ Կոստանդնուպոլիսի<sup>16)</sup>, Եփեսոսի և Քաղկեդոնի, որոնց մէջ թէե քննուեցաւ միենոյն ինսդիրը, բայց մէկի որոշումն հերքուեցաւ միւսից: Կոստանդնուպոլիսի ժողովը (448 թ.), որ կազմուեցաւ Փլարիանոսի, Կոստանդնուպոլիսի պատրիարքի նախագահութեամբ և Թէոդոս կայսեր հաճութեամբ, հերձուածով համարեց Եւտիքէսին, իսկ Եփեսոսի ժողովը (449 թ.) նոյն Թէոդոսի ձեռներեցութեամբ և Դիոսկորոս, Աղեքսանդրից Եպիսկոպոսի նախագահութեամբ արդարացրեց Եւտիքէսին և գատապարտեց Փլարիանոսին. Քաղկեդոնի ժողովը (451 թ.), որ ընդունելով Եփեսոսի որոշումն, արդարացրեց Փլարիանոսին և գատապարտեց Դիոսկորոսին և նորա կուսակիցներին, ընդունելի չեղաւ յետագայ Զենն կայսրից, որ, ինչպէս յիշեցինք, Հենոդիկոն կոչուած հրովարտակը հրատարակելով ոչ միայն հերքեց վերայիշեալ ժողովի որոշումը, այլ և արգելեց մինչև անգամ նորա մասին խօսել<sup>17)</sup>: Աչա այս և այսպիսի շատ խոշոր պատճառների վերայ հիմնուելով՝ հայերը որոշեցին ազգային Եպիքեցական ժողով կազմել և քննել Քաղկեդոնի ժողովի ինսդիրը, որպէսզի մէկ անգամ ընդ միշտ՝ վերջ դրուի Յունաց

<sup>16)</sup> Կոստանդնուպոլիսի ժողովը տեղական էր, իսկ Եփեսոսի և Քաղկեդոնի ժողովները—տիեզերական:

<sup>17)</sup> Պատմութիւն տիեզերական ժողովոց. Քաղկեդոնի ժողով. Երես 225—347.

ձգտումներին և պահանջներին և ժողովրդի մէջ տարածուած կասկածանքներին ու տարակուսանքներին: 491 թ. կալմաւեցաւ վաղարշապատի հինգերորդ ժողովը բարկէն կաթուղիկոսի նախագահութեամբ և վրաց ու Ազուանից կաթուղիկոսների մասնակցութեամբ, որի մէջ հերքուեցաւ թէ Եւտիքէսի վարդապետութիւնը և թէ Քաղինդոնի ժողովը, որով հայերը Վրացւոց ու Աղուանցւոց հետ միասին բաժանուեցան Յունաց Եկեղեցոց և կազմեցին իւրեանց ազգային եկեղեցին առաջին երեք ափեգերական ժողովների հիման վերայ<sup>18)</sup>: Կարծես, որ գործը սորանով ևս պէտք է վերջանար, բայց բոլորովին հակառակ պատահեցաւ, Յունաց կայսրները, որոնք սակաւ բացառութեամբ աւելի եկեղեցական-դաւանական վէճերով եին զբաղուած, քան բուն թագաւորական գործերով, սաստիկ գրգռուեցան հայերի ցոյց տուած գիմագրութիւնից, նամանաւանդ որ 491 թուականի որոշումն արգելք էր լինում միանդամայն և նոյցա քաղաքական նպատակներին հայաստանի և հայերի վերաբերութեամբ, նոքա սկսան ամենայն ձեռքից եկած միջոցներով պահանջել, ստիպել կարծելով որ այդպիսով շուտով կըհամնեն իւրեանց նպատակներին, որից առաջ գուրս եկաւ այն ցաւալի հանդամանքը, որ հայերը սառեցան Յոյներից, Կտրեցին նոյցա հետ բոլոր յարաբերութիւնները և, ինչպէս վերը մէկ անգամ յիշեցինք, եօմներորդ դարի վերջերում մտան Արաբացւոց իշխանութեան ներքյ, լաւ համարելով հնազանդել մահմեդական մոլեռանդ Արաբներին, քան կրօնակից Յոյներին, հայերի այդպիսի որոշման և քայլ անելուն ոչ սակաւ նպաստեց և այն, որ Յոյները հայերի օգնու-

18) Հայերը նամանաւանդ հակառակ էին Թղթին, որ Լեռն պապր գրել էր Գլաբիանոս պատրիարքին՝ Կոստանդնուպոլիսի ժողովում կարդալու համար: Թէև ալդ Թուղթը հակառակ ընդհանուր եկեղեցու ուսման ոչինչ չէր պարունակում իւր մէջ, բայց և այնպէս Հայ ժողովրդի բոլոր դասակարգերը ատելութեամբ էին վերաբերում դէպի նա, զանազան վատ ածականներով կնքելով Լեռնի տօմարը: Դորա պատճառը պէտք է համարել զլխաւորապէս նրանում, որ պապի Թղթի հայերէն Թարգմանութիւնը ծիշտ չէր, ալլ աղաւաղուած, ալնպէս որ Թղթի հայերէն Թարգմանութիւնից դուրս էր գալիս, որ պապը հետեւում է և քարոզում «ոչ այն, ինչ որ մինչեւ ալդ ժամանակ ընդունում էր ընդհանուր եկեղեցին Քրիստոսի բնութեան մասին»:

թեամբ տիրապետելով Հայաստանին սովորութիւն էին արել միայն օգտուել նոցա նիւթական զօրութիւնից, առանց ամենեւին մտածելու իւրեանց հպատակութեան տակ գտնուած երկրի նիւթական, բարդյական բարւոքման վերայ, առանց օգնութեան ձեռք կարկառելու Հայերին վլուանդաւոր րոպէներում: Հայաստանի ներքին-կրօնակտն խոռովութիւնները, ինչպէս ասացինք, սկսուելով Հինգերորդ դարից, շարունակուեցան յետագայ դարերում: Նորա չվերջացան և Հայերի Արարացւոց իշխանութեան տակ մտնելով: Նորա դեռ շատ երկար ժամանակ շարունակեցին վրդովել Հայերի խաղաղութիւնը, կամ թուլանալով, կամ նոր ոյժ ու բնաւորութիւն ստանալով, Աւեցերորդ և Եօթներորդ դարերը ծնունդ տուին և մի գէպքի, որ լինելով Հետևանք Քաղկեդոնի ժողովի և Յունաց կայսրների քաղաքականութեան, աւելի ևս երկարացրեց առանց այն ևս սուր բնաւորութիւն ստացած կրօնական խոռովութիւնները Հայաստանում: Այդ գէպքը Վրացւոց եկեղեցու Հայոց եկեղեցուց բաժանուելն էր, որ սկսուելով Մովսէս կաթողիկոսի վերջին տարիներից, վերջացաւ 596 թ., երկարաւակելով և խոռովցնելով միմեանց հետ երկու գրացի ազգեր, որոնք կրօնական կապերի միութեան շնորհիւ. Ս. Գրիգոր Լուսաւորչից մինչև այդ ժամանակ-ները ապրում էին միմեանց հետ առանց խորութեան ազգի և կրօնի, իբրև Հարազատ եղայրներ: Վրացւոց և Հայոց եկեղեցիների բաժանում ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն իսկ Բիւզանդիոնի քաղաքականութեան հետևանք. Կիւրին, Վրացւոց կաթողիկոսը, ընդունելով Քաղկեդոնի ժողովը, յայտնի բան է, այդ քայլը նա արեց ոչ համոզմամբ, այլ քաղաքական նպատակներով և անձնական փառասիրութեամբ: Նա կարծում էր դորանով. շահել Բիւզանդիոնի կայսրների սիրտը, հրաւիրելով նոցա ուշադրութիւնը իւր ազգի վերայ այն նեղ Հանգամանքներում, որի մէջ գտնվում էր այդ ժամանակ Վրաստանը: Սակայն այդ գէպքում Կիւրինը մոռանում էր մի բան, որ նա, իբրև Հայերին մօտ և Հայաստանում երկար ժամանակ ապրած մարդ, պէտք է լաւ միտքը պահէր. նա մոռանում էր, որ Յոյները միայն օգտուել գիտեն իւրեանց հպատակների նիւթական դրութիւնից, իսկ օգնել երբէք. նա, եթէ մի փոքր մտածէր, այդ հեշտութեամբ կարող էր հասկանալ Յոյների գէպի Հայերը ունեցած յարաբերութիւնից, որից ոչինչ շահուեցան նորա: Բայց Վրացւոց կաթողիկոսին սաստիկ գրաւում էր անկախ, անձնիշխան կաթողիկոս լինելու

միտքը։ Անզուսապ կիրքը, անձնական սաստիկ փառասիրութիւնը խեղդել էին նորա մէջ բոլոր առողջամիտ գատողութիւնը, հեռատեսութեան բոլոր պայմանները իւր ազգի ապագայի վերաբերութեամբ . . . , որով նա թուլացրեց Հայաստանը, առանց մի զգալի օգուտ տալու իւր հայրենիքին։

Դ.

Հայաստանի ներքին և արտաքին խռովութիւնները, զուգախառնուելով միմեանց հետ, ստեղծել էին նորա համար վեցերորդ և եօթներորդ դարերում մի այնպիսի դրութիւն, որ ոչ միայն չէր կարող առաջ տանել շարունակել հինգերորդ, Հայոց մոտաւոր կեանքի «Ոսկեղէն» դարը, այլ չէր կարող ընդհանրապէս նպաստաւոր լինել մի որ և իցէ մտաւոր շարժման։ Յայտնի է, որ միայն այն երկիրը, այն ժողովուրդը կարող է մտածել իւր հոգեկան և մտաւոր կրթութեան վերայ, յառաջադիմել զարգանալ կրթութեան ասպարիֆում, որ ապահովուած լինելով արտաքին և ներքին կողմից, վայելում է անպայման խաղաղութիւն, որի տնտեսական դրութիւնը այնպէս ծաղկած է, որ ժողովուրդը միջոց ունի, բացի իւր նիւթական պիտոյքների վերայ մտածելուց, մտածել և իւր հոգեկան կրթութեան վերայ, մի պայման, որ բոլորովին չկար Հայաստանում։ Հայաստանը ամբողջ վեցերորդ և եօթներորդ դարերում գտնվում էր անապահով դրութեան մէջ։ Հայ ժողովուրդը անընդհատ տարուբերվում էր ներքին և արտաքին խռովութիւնների մէջ։ Մեր երկիրը ժամանակ չունէր ուրիշ բանով զբաղուել բացի պատերազմական գործերից, որից նա քանդուել ու աւերտուել էր։ մեր ժողովուրդը միայն մտածում էր իւր ամենաէական և կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքների վերայ, որովհետև նորա տնտեսական դրութիւնը անընդհատ պատերազմերեց բոլորովին ընկել և քայքայուել էր։ Մի ընդհանուր ճշմարտութիւն է, որ քաղցածը առաջ իւր քաղցը կյագեցնէ, յետոյ արդէն ուրիշ պիտոյքների վերայ կըմտածէ, մերկը առաջ իւր մերկութիւնը կըծածէ։ Եւ ո՞վ պէտք է այդ ժամանակ մտածէր Հայ ժողովորդի մտաւոր կրթութեան գործի մերայ։ Նախարարները, սեպուհները, իշխանները և առ հասարակ ազատ և աղնուական դասակարգը պատերազմների ժամանակ իւր զօրքով անցնում էր

այս կամ այն տէրութեան կողմն, իսկ խաղաղութեան ժամանակ պարագում էր անվերջ խռովութիւններով և խսրիդներով. Թազկերտի և Պերողի քաղաքականութիւնը խոր հետքեր էր թողել նոցա բնաւորութեան և բարյական աշխարհի վերայ. Հայ մարզպանները, կիւրոպաղատները, պատրիկները, Պարսից և Յունաց աստիճանաւորներ լինելով աւելի մտածում էին իւրեանց սեփական պատրոնների շահերի վերայ, քան իւրեանց արիւնակիցների. Վերջապէս ժողովուրդը, ծանրաբեռնուած լինելով ահագին հարկերով, միայն իւր օրական ապրուստի վերայ էր մտածում. Մնում էր հոգեորականութիւնը, որի ձեռքին ի սկզբանէ անոնի գտնվում էր Հայ ժողովոդի հոգեոր և մարմաւոր կրթութեան ղեկը, որի ձեռքով առաջ էր գնում Հայի լուսաւորութեան գործը, ծաղկում և զարգանում էր զրականութիւնը. Սակայն հոգեորականութիւնը ևս այդ ժամանակ առաջուայ ուղղութեամբ ոչ հնարաւորութիւն և ոչ միջոց ունէր գործելու. Նա այդ ժամանակ լուրովին ուրիշ գործերով էր զբաղուած, ուրիշ մտածութիւններով և զիտաւորութիւններով էր առլցուած. Յրտաքին և ներքին խռովութիւնները բոլորովին կապում, կաշկանդում էին նոցա ձեռքերը. Այլ ժամանակ չկար մտածելու ժողովոդի մտաւոր կրթութեան վերայ, զրականական աշխատութեամբ պարագել. քաղմամիւ կենսական խնդիրներ կային, որոնց վերայ պէտք է ճգնէր հոգեորականութիւնը. Պէտք էր Հայոց եկեղեցին պաշտպանել Պարսից ձգտումների գէմ, Պարսից, որոնք քիչ խրառուելով Վարդանանց և Վահանանց պատերազմներից, մի առանձին յամառութեամբ աշխատում էին իւրեանց նպատակները առաջ տանել Հայաստանում. պէտք էր խեղճ ժողովուրդը պաշտպանել Հարստահարութիւններից, գերութիւնից, ծանր հարկատվութիւնից. պէտք էր խաղաղացնել նախարարների անվերջ կոիւները, սէր և միաբանութիւն քարողել նոցա մէջ. պէտք էր մաքառել Յոյների Հայոց եկեղեցու գէմ յարուցած կրօնական հալածանքների գէմ, պաշտպանել ոչ միայն Հայոց եկեղեցին, այլ և Աղուանից և Վրաց եկեղեցիները. պէտք էր վերականգնել եկեղեցու բարեկարգութիւնը, որ խանգարուել ու խանգարվում էր ներքին և արտաքին խռովութիւնների ժամանակ. Պէտք էր զանազան հերձուածողական և հերիտիկոսական վարդապետութիւնների Հայաստան մուտք գործելը արգելել. պէտք էր վերջապէս, վերանորոգել պատերազմների մէջ աւերուած ու քանդուած

եկեղեցիները և վանքերը և այլն և այլն . . . Այս բոլորի վերայ պէտք է աւելացնել և մի հանգամանք, որ շատ նպաստեց հայոց մտաւոր կեանքի անկման ընդհանրապէս և վեցերորդ ու եօթներորդ գարերի հայոց մտաւոր կեանքի անկման մասնաւորապէս։ Յայտնի է, որ հայերը ի սկզբանէ անտի չունեին իւրեանց սեփական զարգացած կրթութիւնը, նոքա օգտվում էին գիւաւրապէս գրացի և հեռաւոր երկներից՝ Ասորեստանից, Ասորիքից, Յունաստանից և Եգիպտոսից, տեղափոխելով այդ երկրների լուսաւոր կենտրոններից կրթութիւնը հայ հողի վերայ և սեփականացնելով նորան։ Այդ բոլոր հին աշխարհի լուսաւոր երկներից նամանաւանդ հին Յունաստանն էր, որ հայաստանի վերաբերութեամբ մայր և գայեակի դեր էր խաղում։ Յունական գիտութեամբ մնուել ու մեծացել է Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որ գուրս գալով Կեսարիայից, Ս. Թագէոս և Բարթողիմէոս առաքեալ ներից յետոյ, երկրորդ Լուսաւորիչ Եղաւ հայաստանի համար։ Յունաստանիցն էին մեծամասնութեամբ առաջին հայոց ուսուցիչներն ու վարդապետներն։ Յունաստան էին դիմում հայ պատանիները կրթութեան մէջ կատարելագործուելու համար։ Վերջապէս, Յունաստանի մէջ մնուեցան և կրթուեցան Ս. Սահակի և Մեսրովի վաթուն աշակերտները, որոնք վերագառնալով հայաստան, ստեղծեցին հայոց գրականութեան Ուկեղենիկ գարը։ Սակայն ժամանակի ընթացքում զանազան հանգամանքներից այդ լուսաւորեալ երկրները ընկան, ընկաւ և Յունաստանը, կորցնելով իւր առաջուայ լուսաւորեալ բնաւորութիւնը։ Այդ ընկած երկրների աւելակների միջից գուր եկաւ մի նոր տէրութիւն, որի մէջ ամիոփուեցաւ բոլոր հին լուսաւոր աշխարհների լուսաւորթիւնը և կրթութիւնը։ Դա նոր Յունաստանը կամ Բիւզանդիոնն էր, որ իւր աշխարհագրական աջող դիրքի պատճառով կազմեց մի հզօր կայսերութիւն, որ կրթութեան վերաբերութեամբ հայերի համար բունեց հին Յունաստանի տեղը։ Կոստանդնուպոլիսը լիովին փոխանակից Ամֆենքը, ինչպէս մի ժամանակ հին Յունաստանը հայերի համար համարվում էր մի նուիրական աշխարհ, ուր խումբ-խումբ դիմում էին հայոց երիտասարդները կրթութիւն ստանալու, մտաւոր պաշար ժողովելու և Յունաց հարուստ գրականութեամբ իւրեանց միտքը պարարտացնելու, նոյնպիս նուիրականութիւն ստացաւ հայերի աշքում յետոյ և Բիւզանդիոնը, որի հետ հայերը կապուեցան ոչ միայն իբրև իւրեանց մտաւոր կրթութեան

կենտրոնի հետ, այլ և իբրև կրօնակից եղքօր հետ, Հայերը իւրեանց այդ մտաւոր և հոգևոր միութիւնը Բիւղանդիոնի հետ պահեցին մինչև 491 թ., երբ Հայոց եկեղեցին բաժանուեցաւ Յունաց եկեղեցուց, Հայոց և Յունաց եկեղեցիների բաժանումն, հոգևարապէս անջատելով երկու կրօնակից ազգեր միմեանցից, բաժանեց և մտաւորապէս, որից առաջ եկաւ այն վնասակար հանդամնկը, որ Հայերը կտրեցին իւրեանց մտաւոր կրթութեան կենտրոնը և զրկուեցան այն գիտութեան պաշարից, որից մինչև այդ ժամանակ նորա ամենայն առատութեամբ օգուտ էին քաղում. նորա ստիպուեցան բաւականանալ միայն իւրեանց սեփական կրթութեան պաշարով, որ առանց այն ևս սակաւ լինելով վերոյիշեալ ձախող հանդամնկների ու պայմանների մէջ համարեած թէ բոլորովին ընկաւ. Եղած մտաւոր շարժումն էլ կենտրոնացաւ. վակիքերում, որոնք հեռացած ու առանձնացած լինելով ժողովրդից, բաւականաչափ ազդեցութիւն չեն գործում նորա վերայ. գիտութիւնը դարձաւ մասնաւոր մարդկանց սեփականութիւն, որոնց թիւը այնքան քիչ էր, որ որ մատով կարելի էր համարել: Համազասպ Մամիկոնեան կիւրոպաղատը և նորա նմանները, որոնք «ընդանեսուն, ընթերցասէր և ուսումնասէր» էին, կազմում էին մի փարրիկ բացառութիւն միայն բազմաթիւ իշխանական դասակարգի մէջ. ինքը հոգեսրականութիւնը ևս իւր զարգացմամբ շատ յետ էր մնացել իւր նախորդներից, որ և նա ընկած տեղը ամենայն պարզութեամբ խօսութանում էր, Դուինում 648 թուին կազմուած ժողովին մասնակցող եպիսկոպոսները, պատասխանելով Կոստանդին կայսեր, որ պահանջում էր, որ Հայերը լնդունեն Քաղկեդոնի ժողովը, ասում են՝ «Արդ՝ զի ժշնամիք աստուած-պաշտութեանն բավում անդամ արշաւեալ կորուսին զերկիս մեր. և որպէս մարդիկ երկիրս կորուսին, և զկտակարանս եկեղեցւոյ և զվարդապետս սպառեցին, Եւ արդ՝ կտակարանս և վարդապետս ոչ գոն. զդիրս և զդպրութիւն մէք ոչ գիտեմք. բայց որչափ ինչ մնացեալ են ի տեղիս տեղիս վարդապետական պատմութիւնք՝ ուսուցանեն . . .» (Պատմ. Սեբէսի. եր. 129). Այս բոլորը այսպէս լինելուց յետոյ, չպէտք է զարմանալ այն սարսափելի գրականական մոքի և գաղափարների աղքատութեան վերայ, որ մենք պատահում ենք վեցերորդ և եօթներորդ դարերում: Ամբողջ վեցերորդ դարը, կարելի է ասել, անցնում է ի զուր Հայի մտաւոր կեանքում, շաւելացնելով մեր գրականու-

թեան արդիւնաբերութեան վերայ մի որ և է նշանաւոր գրականական վաստակ, իսկ եօթներորդ դարը — միայն մի քանի գրականական աշխատանք, որոնք թէ իւրեանց գաղափարների և թէ լեզուի կողմից շատ հեռի են Ռուսեղարի գրականութեան վաստակներից։ Մի երկրի գրականութիւն նոյն երկրի ու նորա ժողովրդի իսկական պատկերն է ներկայացնում։ Նորա մէջ, ինչպէս հայելու մէջ, պարզ կերպով արտայայտվում է ժողովրդի վատ ու լաւ կողմերը, զարգացում ու անզարգացում, այնպէս որ նորանով կարելի է բաւականին ճիշտ գաղափար կաղմել մի անծանօթ երկրի ժողովրդի կեանքի բոլոր պայմանների մասին։ Հայոց վեցերորդ և եօթներորդ դարերի գրականութիւնը, լինելով հետեանք և արդիւնք այդ ժամանակների խռովայոյզ, աղմկեալ հանգամանքների, պարզ կերպով պատկերացնում է իւր մէջ Հայաստանի և Հայերի բարոյական և մտաւոր անկեալ վիճակը։ Անանիա Ծիրակացին, եօթներորդ դարի հեղինակներից մէկը, ուղղակի մատնացոյց է անում իւր ժամանակուայ Հայերի այդ մտաւորապէս անկեալ վիճակի վերայ։ Նա պատմելով իւր՝ կենացրութիւնը, ասում է՝ «Հայաստանում ես չգտայ ոչ փիլսոփայութիւն իմացող մարդ և ոչ այդ գիտութեան վերաբերութեամբ զրբեր, ուստի և ստիպուեցայ գնալ Յունաստան»։ Տիւքիկոս, Բիւզանդացի վարդապետը ուրիների հետ և Անանիային ընդունելով աշակերտութեան, ասում է՝ «Գոչութիւն Աստուծոյ, որ նա ուղարկեց քեզ ինձ մօտ ուսանելու և փոխադրելու գիտութիւնը Ս. Գրիգորիոսի վիճակը։ ուրախ եմ, որ ձեր երկիրը կ'աշակերտի վնձ։ Ես ինքս երիտասարդութեանս ժամանակ երկար ժամանակ ապրել եմ Հայաստանում։ այնտեղ թագաւորում էր տգիտութիւնը<sup>19)</sup>»։

<sup>19)</sup> Արմանская география VII вѣка по р. X. Патканова. стр. XVIII и XIX.

Ե.

Բայց որքան և ընկած լինէր հայաստանը, որքան և բարոյական անկեալ վիճակի մէջ գտնուէր վերսիշեալ բոլոր աննպաստ հանգամանքների շնորհիւ հայ չժողովուրդը, չպէտք է կարծել սակայն, որ վեցերորդ և եօթներորդ դարերում բոլորովին ցամաքել էին հայոց գրականութեան արմատները, դադարել և սպառուել էր հայ կեանքի մոտաւոր շարժումն. հայկական կրթութիւնը, հայի մոտաւոր կեանքը սառել ու թմրել էր, կորցնելով իւր կենսականութիւնը. հայի մոտաւոր կեանքը, այն, սառած ու թմրած էր, նա ոչ մի արժանի ուշադրութեան գրականական երկով ու վաստակով չէր արտայայտվում, բայց նա մեռած չէր. նա, թէև շատ թոյլ կերպով, բայց և այնպէս շարունակում էր պահել հանգած աճինի ու մոխրի տակ իւր շերտութիւնը ու կայծը. Մի փոքր խաղաղութեան ժամանակամիջոց, մի փոքր կեանքի ու գցաքի ապահովութիւն — չեւ աշա իսկցյն առկայծվում էր հայ կեանքի այդ թաքնուած մոտաւոր շարժումն. Բաւական էր, որ Սմբատ Բագրատունին նշանակուէր հայոց մարզպան, որ հայաստանում զարթնէր մոտաւոր կեանքը, ոգի առնէր ուսումնարանական գործը և տարածուէր ոչ միայն հայաստանում, այլ և դրացի Վրկանայ հայերի մէջ, որոնք նյոնպէս գտնվում էին Սմբատի իշխանութեան ներքոյ. Յայտնի է, որ Սմբատ Բագրատունին մարզպանական իշխանութեամբ գալով հայաստան և անցնելով Վրկանայ երկրից, տեսաւ այնտեղի հայերի տգիտութիւնը թէ հայոց լեզուի և թէ կրօնի մէջ. և ուղարկեց այնտեղ Աբել երեցին, որ և հաստատեց դպրոցներ ու տարածեց նոցա մէջ հայկական լեզուի ու կրօնի կրթութիւնը. հայոց մոտաւոր շարժումն այդ ժամանակ պահպանվում ու շարունակվում էր գլխաւորապէս երկու կենտրոններում՝ կաթողիկոսարանում և վանքական ուսումնարաններում կամ վարդապետարաններում, որոնք այդ ընդհանուր թշուառութեան ու անկման ժամանակ հայի մոտաւոր գործունէութեան երկու գլխաւոր ներկայացուցիչն էին համարվում: հայոց կաթողիկոսները իւրեանց բազմաթիւ զբաղմունքների մէջ առանձին ուշադրութեան առարկայ էին շինում եկեղեցու բարեկարգութիւնը, որ երկրի ներքին և արտաքին խոռոչութիւնների ժամանակ յաձախակի խանգարվում էր. և նորա յաձախակի ստիպուած

Էին լինում աղքային-եկեղեցական ժողովներ գումարել, եկեղեցու մէջ վերցիշեալ հանգամանքներից առաջ եկած խանգարմունքը ուղղելու և ժողովրդի բարոյականութիւնը պահպանելու համար, ժողովների ժամանակ չայստանի ամեն կողմերից հաւաքվում էին կաթուղիկոսարան եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, շատ ժամանակ և բազմաթիւ աշխարհականներ. Կաղմում էր ժողով կաթուղիկոսի նախագահութեամբ, արծարծվում էին զանազան իմադիներ, որոնցից մի քանիսը ուղղակի վերաբերում էին ժողովրդի կրթութեան գործին. վիճում-վիճարանում էին, որոշում ու սահմանում էին զանազան բարեկարգութեան կանոններ. լինում էր մոգերի ու զաղափարների փոխանակութիւն, որից առաջ էր գալիս մի տեսակ մտաւոր շարժումն, որ վերին աստիճանի բարերար ազգեցութիւն էր ունենում այդ ժամանակուայ աղքատ ու թոյլ մտաւոր զարգացման վերայ. Վեցերորդ և եօթներորդ դարերում կազմուած հինգ աղքային-եկեղեցական ժողովներից այս դէպքում մեզ համար նշանաւոր են երեքը՝ Դվնայ, երրորդ, չորրորդ և հինգերորդ ժողովները, որոնցից առաջին երկուսը կազմուած են համարվում վեցերորդ դարում; մէկը՝ եօթներորդում; Դվնայ երրորդ ժողովը (հօ1թ) նշանաւոր է չայս նոր տօմարի կամ թուականի հաստատութեամբ, որ, յայտնի բան է, սկզբց եկեղեցական-կրօնական նպատակով լինելով, ունեցաւ նշանակութիւն և ընդհանրապէս, չայերը ի սկզբանէ անտի ունէին իւրեանց առանձին թուականը, որ սկսուած լինելով չայկից, կոչվում էր «Շայկական թուական»: Երբոր չայստանում Արդարի օրով տարածուեցաւ քրիստոնէութիւնը, չայերի մէջ հաստատուեցաւ ու մի ուրիշ թուական, որ սկսվում էր Արդարի քրիստոնէութիւնը ընդունելուց. վերջապէս Գրիգոր Հուսաւորչի օրով հաստատուեցաւ և մի երրորդ թուական, որ կոչվում էր Շայոց լուսաւորութեան թուական: Այս երեք թուականները ևս, հիմնուած լինելով երկրի արեգակի շուրջ թաւալելու տարեկան ընթացքի վերայ, կազմում էին հասարակ տարի, որ բաժանվում էր 12 ամիսների նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղց, Արաց, Մեհեկան, Արեգ, Աչեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից 30 օրով իւրաքանչերը և մի ամիս հինգ օրով, որ կոչվում էր Աւելեաց, Տարուայ սկիզբը, որ կոչվում էր Ամանոր, համարվում էր Նաւասարդի մէկը, որ համապատասխանում է Յուլիան Տօմարի Օգոստոսի 11-ին: Շայոց թուականը, նահանջ տարի շաւնենալով,

ամենայն չորս տարի մէկ օրով յետ էր մնում, լինում էր շարժական և 1460 տարուայ մէջ, որ կոչվում էր Հայկայ շրջան, կարողանում էր միայն իւր առաջուայ տեղը հասնել: Այսպիսով երբոր երկիրը 1460 անգամ թաւալէր արեգակի շուրջը, Հայերը պէտք է համարէին 1460 տարի, որովհետեւ իւրաքանչիւր տարուայ մէջ բաց թողած հինգ ժամը և 49 րոպէն չորս տարուայ մէջ համարեա թէ կազմում է մէկ օր: Ահա Հայոց թուականի այս շարժական և անհաստատ լինելն էր, որ խառնակում էր եկեղեցական տօները և նոցա կարգաւորութիւնը: Դեռ քանի գյուղ թիւն ունէր բոլոր քրիստոնեայ աղքերի համար կազմած Անդրէաս Բիւզանդացու երկուհարիւրամեայ զատկի շրջանը, որի առաջին տարուայ զատկի լուսնի բալիս էր Ապրիլի 4-ին, Հայոց թուականի պակասութիւնը պյնկան զգալի չէր, բայց երր 551 թուականին լրացաւ վերոյիշեալ զատկի շրջանը, զատիկը պատահեց Մարտի 25-ին, փիխանակ Ապրիլի 4-ի, որից և բոլորովին խառնակուեցան տօները: Մովսէս Բ., Եղիվարդեցի կաթուղիկոսը, կամենալով Հայոց տօմարի այդ սխալը ուղղել, կազմեց Դվիայ երրորդ ժողովը, որին մասնակցեցին այն ժամանակուայ ամենահասկացող և գիտնական մարդիկը, Գլակայ վանքի վանահայրը, որ, երկար ժամանակ պարապած լինելով Հայոց տօմարի խնդրով արդէն կազմած ունէր մի թուական, Ներշապուհ Տարոնեցին, Աբգիշյ Սասնեցին և, վերջապէս, Պետրոս, Սիւնեաց եպիսկոպոսը, որ իւր գիտնականութեան, լրւրջ դատողութիւնների և գրականական նշանաւոր վաստակների համար կոչվում էր Քերթող: Պետրոս Սիւնեցու ամենանշանաւոր գրականական վաստակը — «պատմութիւնը» գժբախտաբար կորած է մեզ համար: Մի քանի գլուխ այդ կորած պատմութիւնից, որ պահէլ է մեզ համար իւր «Սիւնեաց պատմութեան» մէջ Օրբէլեան պատմագիրը, Սիւնեաց այդ աւանդապահ հեղինակը, ցոյց են տալիս Պետրոսի մաքուր գրիչը և բանաստեղծական հանձնարը և արժանի են անում՝ նորան այն մեծ գովեստին, որ տալիս է նորան յիշեալ պատմագիրը, կոչելով նորան «բազմերջանիկ և անհամեմատ ի մարդկանէ, քաջ հոետոր և անյաղթ փիլիսոփոս, լի իմաստութեամբ և առաքինութեամբ, . . . .»: Ժողովը ընդունեց Աթանասի կազմած տօմարը և գորանով հաստատեց նոր Հայոց թուական, որ կոչուեցաւ «Մեծ Հայոց թուական»: Մեծ թուականը, թէ և

Հուղարքը հայկական թուականի սխալը<sup>20)</sup>, որովհետև դարձեալ ինչպէս հայկական թուականը, չունենալով նահանջ տարի, շարժական և անհաստատ էր, բայց և այնպէս գործածութեան մէջ մտաւ թէ՛ եկեղեցու տօնակարգութեան և թէ՛ հայոց մատենագրների երկասիրութիւնների մէջ, որով և վերջ արուեցաւ օտարազգիների թուականների գործածութեան. « Եւ այսպէս ըստ հայկականս լեզուի տուեալ տօմար տօնից տարեկանաց, յայնմ հետէ ոչ կարօտանային իբրև մուրացիկ իմ առնելով յազդաց զպիտանի խորհրդոցն արարողութիւնս », ասում է Յովհաննէս կաթուղիկոսը, խօսելով հայոց տօմարի նորոգման մասին. Դվնայ ըորորդ ժողովը (597թ.) Նշանաւոր է Վրաց և Հայոց եկեղեցիների բաժանմամբ, որ սկսուելով Մովսէս Բ. Եղիվարդեցի կաթուղիկոսն օրով վերջացաւ Աբրահամի կաթուղիկոսութեան ժամանակ, թողնելով իւր յետեից մի ամբողջ գրականութիւն, որի բովանդակութիւնը կազմում է այդ բաժանման պատմութիւնը. Այդ գրականութիւնը ամբողջութեամբ պարունակվում է մի ընդարձակ նամակագրութեան մէջ, որ եղել է Հայերի և Վրացիների մէջ վերսիշեալ եկեղեցիների բաժանման վերաբերութեամբ. Նամակները, որոնք իւրեանց բովանդակութեամբ բաւա-

20) 551 Թուականին հաստատուած տօմարի սխալը շուտով նկատեցին յետազաները և սկսեցին գործածել նորա հետ միասին էաս Աղքասանղրացի աստղաբաշխի 562 Թուականին կազմած հին հարիւրամեակը, որի վերջանալուց յետոյ, գատկի լրումի գալիս էր նոյն իսկ օրը, որին և առաջին տարին: Հայոց Թուականի այդ խառնուշիոթ դրութիւնը շարունակուեցաւ մինչև 1116թ., երբ Յովհաննէս Սարկաւագ կոչուած վարդապետը, ըննելով Հայկական Թուականը, նկատեց նորա սիսալը և ընդունեց նահանջ տարի: Այս նոր Թուականը, որ Յովհաննէս ուղղեց ու հաստատեց, կոչուեցաւ « Յայսմաւուրաց տարի », որովհետև գործադրուեցաւ զիխառապէս Յայսմաւուրքի մէջ: Յովհաննէս Սարկաւագը մի ուրիշ Թուական ևս հաստատեց, որ սկսվում էր Քրիստոսի 1084 Թուականից և կոչվում էր « Փոքր » կամ « Մտրուկ », հակառակ Մովսէսի հաստատածին, որ կոչվում էր « Մեծ »: Հայոց Թուականի վերջնական կարգաւորութեան պատիւը պատկանում է Միմէն Երևանցի երջանկայիշատակ կաթուղիկոսին, որ կազմելով կամ կարգաւորելով Հայոց տօնացոյցը, ընդունեց Յուլիան տօմարը:

կանին լնդարձակ են, թուով համարվում են 28, որ ի մի ժողովեց և դասաւորեց, ըստ բովանդակութեան, իւր պատմութեան մէջ տասներորդ դարում Ուխտանէս, Սեբաստիոյ եպիսկոպոսը նշանաւոր Սնանիա Նարեկացոյ Խնդիրքով. Նամակների հեղինակ համարվում են՝ Մովսէս Բ Եղիվարդեցի կաթողիկոսը, Վրժաննէս Քերթողը, որ Մովսիսի տեղ տասնեւերեք տարի կառավարելով կաթողիկոսարանը իրեւ տեղապահ, շարունակեց Կիւրիոնի հետ Մովսիսից սկսած նամակագրութիւնը. Մովսէս, Վրացւոց 8ուրտաւի եպիսկոպոսը, որ հակառակ լինելով Եկեղեցիների բաժանման, թշնամացել էր Կիւրիոնին և անցել էր Հայոց Կողմը, Հաղորդելով Հայերին ամենայն բան, որ պատահում էր այդ խոռվութեան ժամանակ Վրաստանում Կիւրիոնի ազգեցութեամբ: Սմբատ Բագրատունի մարզպանը կամ, ինչպէս կոչվում է նամակների մէջ, «Տէրանց զինուորը», որ, իրեւ այդ ժամանակուայ Հայաստանի կառավարիչ և իշխան, կամենում էր վերջ գնել այդ կրօնական խոռվութեան, գործ դնելով իւր ազգեցութիւնը Վրացւոց վերայ. Կիւրիոնը, որ իրեւ հեղինակ և մերձաւոր պատճառ Եկեղեցիների այդ երկպառակութեան, պատասխանում էր Հայաստանից Եկած նամակներին, արդարացնելով իւր անձը և մէկնելով իւր վարմունքը, և, վերջապէս, Սբրահամ կաթողիկոսը, որ, Մովսիսից յետոյ ընտրուելով գահակալ շարունակեց իւր նախորդի սկսածը և վերջացրեց նորան, Հայոց և Վրացւոց մէջ Եղած այդ նամակագրութիւնը, ըստ իւր բովանդակութեան, բաժանվում է երկու միմեանց հակառակ մասերի: Առաջին մասն, որ ամենում է իւր մէջ այն բոլոր նամակները, որ գրուել են երկու ազգերի մէջ մինչեւ Մովսէս կաթողիկոսի մահը, կրում է իւր վերայ Հայոց Կողմից իշխանական պահանջի ձեւ, իսկ Վրացւոց՝ որդիական հնագանդութեան, խոնարհութեան և մի տեսակ արդարանալու ձեւ: «Զթուղթս ձեր, — պատասխանում է Կիւրիոնը Մովսիսի յանդիմանական նամակին, — զոր գրեալ էիք, ընկալաք և հասու եղաք: Եւ զպատգամն, զոր արարեալ էիք, լսեցաք յԵպիսկոպոսէս. և որ գրով և բանիւ Հոգացեալ էիք զմեզ խրատական վարդապետական բանիւ, նաև յանդիմանեալ էիք որպէս Տէր և Վարդապետ և Հայր Հոգեոր, որպէս և էքդ իսկ, երկիրպագի և շնորհակալ եղէ ձեր Հոգեոր սիրոյդ»: Երկրորդ մասն, որ ամիսովում է իւր մէջ այն բոլոր նամակները, որոնք գրուել են երկու ազգերի մէջ Մովսիսի մահից մինչեւ

Սրբահամի կաթուղիկոսութիւնը, կրում է, ընդհակառակը, հայերի կողմից համազմունքի և հայրական խրատի բնաւորութիւն, իսկ Վրացւոց — բացարձակ ըմբոստութան, լրբութեան և յանդուզն վիճարանութեան։ Նամանաւանդ աշքի են ընկում՝ Կիւրիոնի նամակների այն տեղերը, որտեղ նա, յենուելով Յայների վերայ, շեշտում է, որ իւր կրօնքը կայսեր կրօնքն ու գաւանութիւնն է։ «Ար եթէ զշաւատս մեր կամիք քննել և գիտել» — ասում է նա իւր վերջին թղթերից մեկում, — ետու թարգմանել և բերել զգիրա չորից ժողովացն, որով հոռոմք վարին, և ի սուրբ Անաստաս և ի սուրբն Սիոնի քաղաքի. եթէ կամիք և եթէ չկամիք՝ հաւատ մեր այդ է»։ Նամակների երկու մասերի բոլանդակութեան միմեանց այդպիսի հակառակ բնաւորութիւն ունենալը մեկնվում է այն հանգամանկով, որ առաջին մասում Կիւրիոնը ամաչում և պատկառում է ծերունի Մոլխիսից ու միայն նորա համար, որ երկար ժամանակ ծառայելով հայոց կաթուղիկոսարանում վայելել էր կաթուղիկոսից ըստ ամենայնի հսկական սեր և գգուանք, այլ և նորա համար, որ նա հենց նորան էր պարտական իւր կաթուղիկոսութեան աստիճանը, Դիմայ հինգերորդ ժողովը (645) նշանաւոր է հայոց հոգեւոր երգերի կամ Շարականների ընտրութեամբ։ Շարական ասելով մենք հասկանում ենք և հոգեւոր երգը և այն գիրքը, որի մէջ ամիսիուած են բոլոր հոգեւոր երգերը, շարականները։ Վերջին մորով շարական բառի տեղ ժամանակ առ ժամանակ գործ է ածվում և «շարականոց» ձեր, որ, ինչպէս կարելի է նկատել աւելի որոշ կերպով է արտայարում շարական հաւաքական անունը։ Դիմանական-հայկաբան էմինը, որ 1879 թ. լցու ընծայեց շարականների ուսուաց լեզուով արած իւր նշանաւոր թարգմանութիւնը, կարծում է, որ շարական բառը առաջ է եկել պարսկական «շեր» բառից, որ, ինչպէս յայտնի է պարսկագէտներին, նշանակում է «ոտանաւոր»։ Շարականների սկիզբը համարլում է հինգերորդ դարը, երբ Սո. Մահակ և Մեսրովը ամոնները, կաղմելով պատարագատետրը և հաստատելով հայոց ժամակարգութիւնը, հեղինակ եղան և երգեցին առաջին շարականները։ Ահա այդ ժամանակներից սկսած, շարունակ աւելանում է շարականների թիւը, որովհետեւ Սո. Մահակի և Մեսրովի յաջորդները, գլխաւորապէս կաթուղիկոսները, հետեւելով նոցա օրինակին, որիշ աղօմքների հետ միասին ստեղծում են և նորանոր շարականներ և գորանով հարստացնում

ու ծաղկեցնում են մեր եկեղեցու թէ՛ պատարագատետը և թէ առհասարակ ժամակարգութիւնը, Շարականների բաղմանալը լի նում է այնպիսի արագ կերպով, որ երկու ու կես դարի ընթացքում կազմում է մի պատկառելի հասոր բազմաթիւ շարականներով. Սակայն այդպիսի արագութեամբ բազմանալու ու հարստանալու հետ միասին հայոց շարականոցը խառնակվում է և աղաւաղինում, որովհետեւ նորա մէջ մնալոք են գործում շատ զանազան տեսակ շարականներ, որոնք անքանքար գրչի և հեղինակների գործ լինելով թէ լեզուի, թէ մոլիք և թէ բովանդակութեան կողմից արժանի չէին գասուելու ընտիր և բուն բանաստեղծական շարականների շաբթը: Ներսէս Գ կաթուղիկոս, տեսնելով շարականների այսպիսի բազմանալը և աղաւաղուիլը, նամանաւանդ որ շարականների բազմութիւնից առաջ էր գալիս և մեծ խառնակութիւն ժամասայութեան ժամանակ, եկեղեցական ժողով գումարեց, որին մասնակցեց և այդ ժամանակուայ նշանաւոր գիտնական Բարսեղ «Ճն» մականուաննեալ վարդապետը, որ հոչակաւոր Շիրակայ Դպրելանքի վանահայր-առաջնորդն էր: Ժողովը ընդհանուր հաւանութեամբ շարականների ընտրութեան և շարականոցի լուելու գործը յանձնեց Ճնին, ու, արդարացնելով ժողովի յշուր, մեծ իմաստութեամբ լըտրեց և կազմեց շարականոցը: Սյդ նոր ընտրած և լոտած շարականոցը կոչուեցաւ «Ճնընտիր» և գործածութեան մէջ մտաւ բոլոր եկեղեցիներում: Բարսեղի կազմած շարականոցի մէջ մտան գլխաւորապէս մինչև այդ ժամանակ հայոց կաթուղիկոսների և հեղինակների երգածները՝ Ս. Սահակ Պարմեկի, Ս. Մեսրովը Մաշտոցի, Մովսէս Խորենացու, Յովհանն Մանդակունու, որոնց վերայ այս եօթներորդ դարում աւելացան և իրեւան Ճնին վերագրուած համբարձման շարականը, Կոմիտաս կաթուղիկոսի նշանաւոր «անձինք'ը» և Սահակ Զորափորեցի կաթուղիկոսի Շողակաթի, Ս. Խաչի և Նաւակատեաց շարականները<sup>21)</sup>: Բացի այս երեք ազգային-եկեղեցական ժողովներից, որոնք, ինչպէս մենք տեսանկք, շատ թէ

<sup>21)</sup> Ճնի ընտրած շարականներով չսահմանափակուեցաւ նոցա Թիւը ժամանակի ընթացքում, յետազայ դարերում շարականոցը շարունակեց հարստանալ նորանոր շարականներով, ընդունելով իւր մէջ այնպիսի նշանաւոր հնդինակների երգածներ, ինչպիսի էին Յովհան իմաստաէրը, Ստեփաննոս Միւնեցի վարդապետը, Գրիգոր վկայաէրը, Ներսէս Շնորհա-

քիչ աղջեցութիւն ունեցան Հայոց մտաւոր կեանքի և կրթութեան զարգացման դործի վերայ վեցերորդ և եօթներորդ դարերում, նոյն իսկ զարգացման դործին և մի ուրիշ եկեղեցական ժողով, որ ազգային չլինելով և անվաւեր համարուելով, չէ մտնում մեր ազգային-եկեղեցական ժողովների կարգը, Այդ հերակլէս կայսեր Հայոց և Յունաց հոգեորականներից կազմած Կալնոյ ժողովն էր, որ այնքան մեծմեծ խոռվութիւնների պատճառ եղաւ Հայերի մէջ: Երակլէսը, Պարսից պատերազմից աջողութեամբ վերադառնալով, Կարինում 629 թ. կազմեց եկեղեցական ժողով, կամենալով գորանով վերջ դնել Հայոց և Յունաց մէջ եղած կրօնական խոռվութիւններին, որի մասին մէկ անդամ արդէն դէպք ունեցանք յիշելու: Այդ ժամանակուայ Հայոց Եզր կաթուղիկոսը կայսեր ստիպմամբ և Մժէժ Գնունի մեծ նախարարի յորդորանքով գնալով Կարին, կամեցաւ իւր հետ տանել ժողով և Մաթուսաղա վարդապետին, որ Երասխանաձորի ՎարդիկՀայր վանքի վանահայրն էր ու յայտնի էր իւր գիտնականութեամբ: Մաթուսաղան, այդ ժամանակ սաստիկ զքաղուած լինելով իւր վանքի վարդապետարանի գործերով, չկարողացաւ գնալ կաթուղիկոսի հետ ժողով այլ գրեց մի ընդարձակ ժաւանութեան թուղթ>, որ և կարգացուեցաւ ժողովում: Եկեղեցական պատմութիւնից յայտնի է, որ ժողովը վերջացաւ ոչ յօդուտ Հայերի, Եզր կաթուղիկոսը կայսեր ստիպմամբ ընդունեց Քաղկեդոնի ժողովը և, վերադառնալով Հայաստան, Երկարուակութեան պատճառ դարձաւ: Ընդհանրապէս բոլոր Հայերը, բացի մի քանի նախարարներից և հոգեորականներից, որոնք կախումն ունեին կայսրից, հակառակեցան Եզրի տուած որոշման. բայց ամենասաստիկ Հակառակորդ կաթուղիկոսին դուրս եկաւ Յովհան վարդապետը, որ, բացի իւր կրօնական համոզմունքից, անձնական թշնամութիւն և ունէր Եզրի դէմ: Օրբէլեան պատմագիրը ասում է, որ ժողով գնալու ժամանակ Եզր, Հակառակ իւր, Յովհանի ցանկութեան և Թէոդորոս Խշոռունի նախարարի յորդորանքին, չկամեցաւ նորան

լին, Ներսէս Լամբրոնացին, Պետրոս Գետադարձը, Գրիգոր վարդապետ Սկեռացին, Վարդան վարդապետը, Յակով Հռոմելացին և Յովհան Երզնկացին: Տասներրորդ դարում վերջացաւ շարականոցի հարստանալը. Յովհան Երզնկացին վերջինը եղաւ, որի գրուածները մուտ գործեցին Շարականոցի մէջ:

ևս իւր հետ ժողով տանել ուստի և, երբ կաթուղիկոսը վերադարձաւ Կարնից Դուին, Յովհան, որ Ս. Գրիգոր եկեղեցու փակակալն էր, ուրիշների հետ միասին դուրս չեկաւ նորան ընդառաջ, Եզր, կոչելով նորան իւր առաջ, ակսաւ յանդիմանել, բայց պատասխան ստացաւ, որ ինքը չէ կամենում՝ չնազանդել հայերի ուղղափառ կանոնը քանդողին, « Յիրաւի, —ասում է Յովհանը կաթուղիկոսին, —կոչեցար Եզր, զի եզր և վախճան եղեր հաւատոյ ուղղափառութեան ». Եզր ծեծելով արտաքսում է յանդուգն վարդապետին Դուինից, որ հեռանալով ապաստան է դանում նիգ գաւառի Բջնոյ Մայրավանք կոչուած վանքում: Բայց կաթուղիկոսը հրամայում է այնտեղից ևս դուրս անել նորան և վանքը անարդանքով անուանում է Մայրագոմ, իսկ իւրեան՝ Յովհան վարդապետին— Մայրագոմեցի: Յովհան, « որ էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ, և աստուածային գրոց գիտութեան բանիբուն ճանաչիր », գնում է Աղուանքի Գարդման գաւառը և, ժողովելով աշակերտներ, պարապում է ուսուցութեան, բայց չմոռանալով իւր կրած անպատճութիւնը, սկսում է այնտեղից գրչով մաքառել կաթուղիկոսի և իւր հակառակորդների գէմ: Մայրագոմեցու գրուածքներին պատասխանում են Գրիգորատուր անունով վարդապետը և ուրիշները, որոնց գրաւոր վիճարանութիւնից առաջ է գալիս մի ամբողջ գրականութիւն, որ եմեւ մեր ձեռքը հասած լինէր, բացի շատ հետաքրքիր լինելուց, մեծ լցո կը ձգէր ժամանակակից մարդկանց, գաղափարների և գրականութեան ուղղութեան վերայ: Մեր ձեռքը հասել են Մայրագոմեցու մի քանի գրուածքների անունները միայն՝ « Խրատ վարուց », « Հաւատարմատ », « Նոյեմակ »: Յովհանի հակառակորդները, հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ նորա անունով յայնուել էին մի քանի հերձուածողական գրուածներ, աղանդաւոր հոչակեցին նորան և նզավեցին Դվնայ վերոյիշեալ հինգերորդ ժողովում: Սակայն այդ նորա հակառակորդների գէպի նա ունեցած թշնամութեան արդիւնքը միայն կարելի է համարել: Ճիշտ է, հերձուածողական գրուածներ յայտնուել էին, բայց նորա պատկանում էին ոչ Մայրավանեցուն, այլ նորա աշակերտ Սարգսին, որ իւր գրուածների մէջ ծայրահեղութեան էր հասել: Նա թարգմանել էր Յուլիանոս Աղիկառնացի աղանդաւորի շարադրութիւնները: Այս հանգամանքը լաւ պարզում է իւր պատմութեան մէջ Յովհաննէս պատմաբան, հայոց կաթուղիկոսը: Զամանէ,

ասում. Է նա, խօսելով Մայրավանեցու մասին, ապա համբաւ ամբաստանութեան պատմի, իրը գառն հերձուածս նմա մուծանել յեկեղեցի սուրբ. սակայն ես ոչ կարեմ հաւանութիւն իմոյ կամացս տալ վասն այնպիսւոյ առնն . . . . այլ կարծիս իմն ընդունի սիրո իմ ի հակառակադիր և ի խորիմաց այլոց կամաց այս գործ համբաւոյ լեալ. Բայց եթէ սակս Սարգսի, աշակերտի նորա համբաւէ գր զայսպիսի չար հերձուածս ընձիւղել և ես ոչ վասն նորա հակառակիմ, զի իմ իսկ ընթերցեալ է զիկր վասու նորա. Այլ վասն զի Յովհաննէս ի բաց յիւրմէ հալածեաց զՍարգիսն, սակս այնորիկ արտաքոյ կամաց նորա ասեմ զնորայն հերձուած :

## Զ.

Վանքերից, որոնք նշանաւոր էին Խրեանց վարդապետարաններով, որտեղ կրթվում էր վեցերորդ և եօթներորդ դարերի հայ երիտասարդութիւնը, որտեղ կատարվում էր զլնաւորապէս այդ գարերի հայի մտաւոր կրթութեան և զարգացման գործը, որտեղից սկիզբն էր առնում հայոց երկրի ամեն մի մտաւոր շարժումն, յայտնի էին՝ Իննակեան Ս. Կարապետի կամ Գլահայ վանքը, Տաթեւի վանքը Սիւնեաց վարդապետարանով, Արշարունեաց կամ Երասիսածորի Վարդիկ-հայր Կոչուած վանքը, Շիրակայ Դպրեվանքը, Արագածոսնի Ս. Աստուածածնի վանքը, որոնցից առաջին երկուսը ծաղկում էին նամանաւանդ վեցերորդ դարում, իսկ միւսները — եօթներորդում Իննակեան վանքից էին՝ Ամանասը, Կոմիտաս կաթուղիկոսը և Յովհանն, Մամիկոննէից Եպիսկոպոսը, որոնցից Սթանասը, ինչպէս դեռ առաջ յիշեցնիք, նշանաւոր Եղաւիբրւ հայոց մեծ ժոռականի կազմող և հեղինակ, Կոմիտաս — իբրև կաթուղիկոս և «Անձնիք նուիրեալք» նշանաւոր շարականի երգող և Յովհանն, Մամիկոննէից Եպիսկոպոսը, որ հաշակուեցաւ եօթներորդ դարում, իբրև Մամիկոննէից տան և տոհմի պատմագիր և Զենոր Գլակի Տարոնի պատմութեան շարունակող Իննանկեան վանքից էր, հաւանական է ասել, և վեցերորդ դարի սկզբներում ապրած Արքահամ, Մամիկոննէից Եպիսկոպոսը, որ Աղուանից Վաշագան թագաւորի իսնդիրբով զբել է մի քանի գրուածներ սրբերի նշանակութիւն և ննջեցնեանե-

րի հոգու հանգստեան մասին, որոնցից մի նմուշ ևս պահել է իւր Սոյուանից պատմութեան մէջ Մովսէս Կաղանկատուային։ Տաթե վանքի Սիւնեաց վարդապետարանիցն էին՝ Պետրոս, Սիւնեաց եպիսկոպոսը, Մովսէս, Սիւնեաց եպիսկոպոսը, Մաթուսաղան եպիսկոպոսը և Ստեփաննոս եպիսկոպոսը, որոնցից առաջինը նշանաւոր եղաւ։ իւր գրականական վաստակներով, երկրորդը — իւր վարդապետական և ուսուցչական գործունէութեամբ, երրորդը — իւր գաւանութեան թղթով, որ կարդացուեցաւ Կարնոյ ժողովում; իսկ չօրրորդը — իւր շարականներով և եկեղեցական երաժշտութեան ձայները որոշելով։ Այս Ստեփաննոս եպիսկոպոսը ունէր Սահակուխտ անունով մի քայր, որ իւր պէս հմտւ էր երաժշտական արհեստին։ նա սովորութին ունէր նստել վարդապյալի յետեր և սովորեցնել երաժշտութեան արհեստը ուրիշներին։ «Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ Սրբուհին Մարիամ; որ իւրով անուամբն է յօրինեալ», — ասում է այդ նշանաւոր կոյսի մասին Օրբէլեանը։ Վարդիկ-Հայր վանքից գուրս եկան բաղմաթիւ կրթուած հոգեորականներ, որոնք բոլորը ևս վայելեցին վերոյիշեալ Մաթուսաղան եպիսկոպոսի վարդապետական խրատները, երբ նա, թողնելով Սիւնեաց վարդապետարանը, այդ վանքի հիմնադիրը եղաւ և ծաղկեցրեց նորան եօթներորդ գարում։ Բազմաթիւ կրթուած հոգեորականներ գուրս եկան և Արագածոտնի Ս. Սատուածածնի վանքից, որոնց մէջ նշանաւոր եղան Սահակ Զորափորեցի կաթուղիկոսը և Հոչակաւոր Յովհան Օձնեցի «իմաստասէր» կոչուած կաթուղիկոսը։ Այդ վանքի վարդապետարանը ծաղկեցաւ նամանաւանդ Թէոփորոս Քոթենաւորի, Կոմիտաս կաթուղիկոսի եղբօրորդու և Մաթուսաղայի աշակերտի առաջնորդութեան ժամանակ, որին աշակերտեցին և վերոյիշեալ Սահակ Զորափորեցին և Յովհան Օձնեցին։ Վերջապէս, ոչ փոքր մասն ունեցաւ այդ ժամանակուայ մուաւոր կրթութեան գործում և Շիրակայ Դպրեվանքը, որի առաջնորդը յայտնի Բարսեղ Ճոնն էր։

Ե. ՇԱՀԱԶԻԶ.

## ՀՐԵԱԿԱՆ ՄԵՂԵԹԻՆԵՐ.

(Բարելունից).

### Ա.

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՓԵՐԻՆ.

Արբանուել այս ափերում, ուր Յորդանանն է հոսում,  
Այժմ, աւաղը արաբների կարտւանն է թափառում:  
Եւ քո Սինա լերան վերայ փառք է երգվում Բաալին...  
Աստուած, ի՞նչու կայծակներով Դու չես շանթում չարերին:

Այստեղ, Քո այս սրբավայրում, Արտարադատ, Տզօր Տէ՛ր,  
Մոռացել են Քեզ հողածին, չար, ամբարիշտ զաւակներ。  
Եւ չես իջնում էլ Դու այնտեղ, նոյս ցրկում շանթերով,  
Ուր Դու առաջ յայտնվում էիր Քո լուսավառ պատկերով:

Աչքը—փայլակ, ձայնը—որոտ, ով, Տէ՛ր անյաղթ Դու  
մարդկան,

Արդեօք բախտը շնուտ կըժապտայ Խորայէլի աւել տան...  
Եւ զեռ երկան նորան պէտք է բռնաւորներ հայհօյեն,  
Ու անարդեն և օրէնքը, և տաճարը սրբաշն:

։։.

ՅԵՐՈՒՍ, ԴՈՒ ԱՆՑԱՐ ՔՈ ԿԵԾՈՆՔԻ ՈՒՂԻՆ...

Հերոն, դու անցար քո կետնքի ուղին,  
Սյժմ քո փառքը կ'ապրէ աշխարհում,  
Կ'ապրէ քո վսեմ անձնուրաց ողին  
Սուրբ հայրենիքիդ հզօր երգերում:  
Կ'ապրէ քո գործը—գործ հերոսական,  
Որ աղատութիւն պարզեց նորան:

Քանի քո ազգը շնչում է ազատ  
Կենդանի կը մնաս դու նորա կրծքում:  
Դու լնկար. բայց քո արիւնն անարատ  
Կը հոսէ դարձեալ մեր երակներում.  
Եւ քո գործերի փառաշեղ դափնին  
Միշտ ոյժ և եռանդ կը տայ քո ազգին:

Կռուի փոթորկում անունդ յիշելով,  
Սարսափ կը ձգենք թշնամու սրտում:  
Հերոսիդ մահը կը երգեն փառքով  
Մեր մատաղ կուսանք իրենց երգերում:  
Եւ դու չես լսիլ մեր լացն ու կական—  
Լայլ կ'անարդեր քո սուրբ դերեզման...

III.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱԻԵՐՈՒՄԸ ՏԻՏՈՍԻ ԶԵՐՔՈՎ,

Այն բլուրից վերջին ժամին տեսայ քաղաքն հայրենի,  
Ուր Ճամբորդներ մնան բարե են ասում մեր մայր Սիօնին.  
Այնտեղ այրում պղծում էին ամբարիշաներ կատաղի  
իմ հայրենի սուրբ քաղաքը՝ մատնած ահեղ հրդեհին:

Մեր տաճարն ու իմ տնակն էր այնտեղ աչքիս երեսում,  
Նակայն իզնուր, այնտեղ հրգեցն աղմկում էր որպէս ծով.  
Ես նայեցի թշլ ձեռքերիս—և, օ, տխոնուր ըզդացում,  
Տողիս վառուեց համբ ու անզօր փրէժինդրութեան  
Ճարաւով...

Ա՛խ, այդ բլրից ես երբեմն նայում էի այդ ժամին  
Դէպի քաղաք, ուր արել մայր էր մանում ժպտալով,  
Ուր վարդաշող քօղի նման մէզն իջնում էր սարերին,  
Ուր Սիօնը վառվում էր վերջալուսի շողերով:

Այնտեղ էի և այս վերջին, տխուր ժամին ես կանգնած,  
Բայց էլ սիրտա չէր դրաւում մուտք խռնարհուող արեգակ.  
Ես անհամբեր մընում էի, որ Եհովան զայրացած՝  
Թափէր երկիր ահեղ որոտ, շանթ, փոթորիկ ու կայծակ...

Բայց ոչ... Քո սուրբ տաճարի մէջ, ուր Դու էիր թագաւոր,  
Հեթանոսներն անկարող են այնտեղ գաւնալ տէր, իշխան.  
Փոյթ չէ, թէ Քո տաճարն ընկաւ. մի այլ տաճար փառաւոր  
Սիրած ազգը իւր սրտի մէջ Քեզ կանգնել է յաւիտեան...

ՅԵՓԹԱՅԻ ԱՂՋԻԿԸ \*).

Օ՛, հայր իմ, եթէ և՝ ազգ, և՝ Աստուած  
Յաղթութեանդ համար իմ մահն են ուզում,  
Երբ այդ մահն է քեզ յաղթանակ տուած—  
Ահա իմ սիրաը—քեզ եմ նուիրում:

Խոցի՛ր դու նորան—ես չեմ արտասուիլ,  
Մնաք բարե, սարե՛ր, ել ինձ չեք տեսնիլ.  
Ընկնել սիրելի հօր ձեռքով սպանուած—  
Ինձ չէ սարսեցնում այդ դառն հարուած:

\* ) Գեղիաղի ապօրինի որդի Յնգիմայը, որին հայրը դուրս էր արած տնից, գնում է մի վալրենի երկիր և նշանաւոր աւազակապն է դառնում: Նորա հայրենակիցները տանջուելով օտարի լծի տակ, կոչում են նորան իրանց մօտ և իրանց քաղաքի կառավարիչ են կարգում: Ամմօնիտների դէմ պատերազմ դուրս գալուց առաջ՝ նա ուխտում է, որ եթէ յաղմող հանդիսանայ, Աստծուն զոհ կըբերէ այն մարդուն, որն առաջինը կըհանդիպի նորան պատերազմի դաշտից քաղաք վերադառնալիս: Նա փառաւոր յաղմանակ է տանում: Այդ բանը լսելով՝ նորա միակ աղջիկը շրջապատում է իրեն երաժիշտներով և ուրախութիւնից պարելով՝ քաղաքից դուրս է գալիս — ազգի ազատչին ողջունելու: Խեղծ հայրը տեսնելով աղջկանը՝ լուսահատ հանդերծն է պատուորում, բայց ազնիւ աղջիկը չէ թողնում, որ նա դրժէ իւր ուխտը: Նա միայն թոյլտութիւն է խնդրում առ ժամանակ հեռանալ լեռները, որպէս զի այնտեղ՝ Սօֆօկլէսի Անտիգոնիայի նման, ողբայ իւր բախտը, որը դատապարտում է նորան մահուան՝ զրկելով մատադ աղջկանը ամուսին և մայր լինելու յոյսից. այնուհետև նա հնազանդվում է իւր ծակատազրին:

Միւ ման.

Զաւակին գպուող մօր սիրոյ նման,  
Մաքուր է արիւնն և՝ քո աղջկան.  
Օ՛հ, հայր իմ, թող ինձ օրհասի ժամին  
Հովանի լինեն քո շունչն ու հողին:

Հոգ չէ, թող հոսէ արտասուք առատ,  
Եղի՛ր գատաւոր գու քաջ, անվհատ.  
Քեզ վեհ յաղթանակ տուաւ քո աղջեկ.  
Ու փրկեց և՛ քեզ, և՛ իւր հայրենիք:

Երբ ես կըմեռնեմ, և սև գերեզման  
Կըմակէ խօսուն լեզուս յաւիտիան.  
Դու յիշի՛ր, հայր իմ, որ շունչս փչելիս,  
Ես ժպտում էի և ոչ թէ լալիս. . .

## Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

1892 թ., Մուկուտ.



## ԲԱՅՐԵՆԸ

### ՄԻՒԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՄՕՏ

(Նուէր Ալեքսանդր Մատուրեանին.)

«Այդ մարդիկը մի ստրկացած, բայց աղ-  
նիւ ժողովրդի հոգկորականներ են...»

ԲԱՅՐԵՆԸ

1817 թիւն էր:

Տարաւային շքեղափայլ արեգակը պայծառ լուսա-  
ւորում է Վինետիկի ծոցի կապուտակ մակերեսյթը: Ա-  
րեգակի կուրացուցիչ լուսի ասկ աւելի գեղեցիկ են երե-  
ւում երկնագոյն ջրերը, առաւել փարթամ և վեհ են  
«Աղբիատիքական ծովեզը թագուհի Վինետիկ» հոյակաս  
շինութիւնները: Ծոյում շարժվում են բավմաթիւ գօնդու-  
ներ, իսկ երբեմն էլ վաճառականական մեծ նաւը ձեղ-  
քում է ջրի երեսը՝ ուղեսորուելով դէպի բայց ծովը, դէպի  
Հեռաւոր օտարերկրեայ նաև ահանդիսաները:

Գօնդուներից մէկի վերայ, որ նոր է միայն հեռայել  
Վինետիկի նուռահանգստից և այժմ հանդարտ տպանվում  
է խաղաղ ջրի վերայ, կարելի է նկատել մօտաւորապէս 25

տարեկան մի երիտասարդ տղամարդու զէմք: Նորա գեղցիկ երեսը՝ խոհուն և արտայայտիչ աչքերով և մի տեսակ տիրող-կամացական դէմքի գծազրութիւններով, նորա մութ խարտեաշ մաղերը, վերջապէս անհոդ, բայց վայելուչ դիբը, — այդ բոլորը ակամայ գրաւում է այն մարդկանց ուշազրութիւնը, որոնք հանդիպում են նորա գօնզօլին: Այդ գեղեցիկ անձանոթը, որի դէմքից երևում էր, որ կեսնքից արդին վաստակած է, որի մտախոհ և մելամազնուա հայեացքը թափառում էր չորս կողմը, կարծես թէ մի բան էր որոնում: — Բայցընն էր:

Նա այժմ ուր է գնում: Խնչու համար է թողել վոթորկալի և կենսալից Վենետիկը: Ուրախ քէֆի չէ գնում, որ քաղաքի շրջակայքի որ և իցէ տեղում՝ զինու բաժակը ձեռքին՝ ամբողջ ժամեր վասնէ որ և է անհոդ շրջանում: ոչ որքան գօնզօլը առաջ է գնում, այնքան պօէտի հայեացքը ուշազրութեամբ կենտրոննում է Վենետիկեան ծոցի մուտքի մօտ ցրուած կղղիներից մէկի վերայ, որտեղ նշմարվում է մի բարձր զանգակատուն, մի քանի քարէ շինութիւններ և ձիթենիների ու դամինիների փոքրիկ խմբեր: Այդ մենաստանը, որ ամեն կողմից շրջապատուած է ծովի կապոյտ ալիքներով, ակներև է, որ մի վանք է: Բայց այդ վանքը միջնադարեան կաթոլիկութեան կրթող չէ, նորա հետ կապուած չեն աւանդութիւններ վեհ հաստօրակապեառութեան զօրութեան մասին: Նա կրօնական կամ մտաւոր կենտրոն չէ խտալական ազգի համար: ոչ գա մի տարօրինակ գաղթականութիւն է, մի անվեհեր պահակ է հեռաւոր և օստար ցեղի, հեռու արեւելքի մի խորշ է, որ մի տեսակ հրաշքով խտալական կաղմանկերպութիւն է, ստացելո: դա իւր լուսաւոր գործունէութեամբ մի նշանաւոր վանք է — Մխիթարեանների:

Բանաստեղծը կենգանի կերպով յիշում է, ինչպէս առաջին անգամ ոտք կոխեց հոչակաւոր Ա. Ղաղարու

կղզին և ծանօթացաւ նորա բնակիչ-աբեղաների հետ, այն ժամանակ նա ինկատի ունէր միայն մի նպատակ — գտնել որևէ պարապմունք, որ իւր գժուարութեամբ ստիպէր նորան աշխատել և գոնէ մասամբ հեռացնէր Վենետիկի աղմկալի գուարձութիւններից։ Նա վագուց արդէն շատ էր լսել հայերէն լեզուի գժուարութիւնների մասին։ Նա մտաբերում էր, օրինակ, այն գուարձալի անեկդոտը, թէ երբ Փրանսիայում առաջին անգամ հաստատուեցաւ այդ լեզուի գտաստանդութիւնը, 20 հոգի հայերէն սովորել կամեցողները սկսեցին պարապել երկուշաբթի օրուանից և 15 հոգի հինգշաբթի օրը ամօթաբար փախուստ տուին, հասնելով այբուբենի մինչեւ 26-րդ տառը։

Բայրընը վճռեց պարապել հինց այդ լեզուի ուսում-նասիրութեամբ։ որքան գժուար լինի նա, այնքան լաւ, գոնէ այդ կըստիպէ նորան ձեռքը գիրք առնել իսկ Փրանսիական ուսանողների օրինակին, որոնք չունեցան գեթ այնքան քաջութիւն, որ ամբողջ այբուբենը սովորէին, նա առաջուց որոշել էր չհետևել։

Եւ ահա նա եկաւ Մխիթարեանների մօտ, խնդրելով սովորեցնել նորան հայոց լեզուն։ Վանականները ուրախութեամբ համաձայնեցին և մէկը նրանցից, Աւգերեանը, «Հայր Պատիկ» — ինչպէս անուանում էր նորան Բայրընը — նորա ուսուցիչը եղաւ։ Բայց զարմանալի բան՝ գալով Ա. Ղազարու կղզին յատկապէս լեզուաբանական պարապմունքների համար, նա շուտով զգաց, որ իրեն սկսում է զրաւել այն հեռաւոր անծանօթ աշխարհը, որի ներկայացուցիչներն էին ծերունի արեղաները։ Հին արևելեան ժողովրդի կրօնը, զրականութիւնը, պատմութիւնը — այս բոլորը հետաքրքրեց նորան, իսկ կղզու միայնակեցների համեստ և հիւրասէր ընդունելութիւնը աւելի սերտ կապեց նորան այդ արօրինակ հայ գաղթականութիւնն հետ։ Նա առաջուանից յաճախ սկսեց այցելել իւր

նոր ծանօթներին և շատ անգամ կառնավալի (բարեկենդանի) ամենավառ ժամանակը թեթև գոնգոլը տանում էր նորան դեպի Ս. Ղաղարու խաղաղ, անդորր օթեանը: Ճիշտ է, այնտեղ չափազանց անդորրութիւն էր տիրում, չափից գուրս հեռու էր կեանքից, որպէս մի հակապատկեր Վենետիկի ազմկայցը կեանքին: Այդ անդորրութիւնը և հանդիսավոր ոչ միայն հաճելի չէին նորան, այլ և երբեմն ուղղակի ուրախացնում էին վաստակած բանաստեղծին:

Ահա այսօր էլ—որքան նա ուրախ է, որ կարողանում է ամբողջ օրը անց կացնել հայերի մօտ: Երեկոյեան նա կը վերադառնայ Վենետիկ, որ նորից խորասուզուի կեանքի յորձանքի մէջ և տեսնէ իւր ուրախ ծանօթներին: Իսկ այժմ նա յետ չէ նայում, նա նայում է միայն ծովին, հրաշալի, կապոյտ ծովին և խաղաղ կղզուն, որ հետզհետէ հանդէս է գալիս իւր բարձր զանգակատնով և կանաչ զավինիներով:

Վանքում արդէն հեռուից նկատեցին գոնգոլը, որի վերայ նա սահում էր. իտալացի գոնապանը շտապեց յայտնել աբեղաներին, որ նոքա գուրս գան ընդունելու նրանց յայտնի անզիացի հիւրին (il signor Inglese): Մի քանի հոգի կրօնաւորի հագուստով, արևելիան դէմքի գծագրութեամբ, երեւում են պատշգամբի վերայ. բոլորն էլ փաղաքշանկով զլուխը են տալիս Բայրընին, լսվում են մոերմական ողջոյներ: Գօնդոլը կանդ առաւ ափի մօտ. բանաստեղծը ճարպիկ ոստիւնով ցատկելով գոնգոլց՝ այժմ իւր բարեկամների ձեռքիրն է սեղմաւմ և պատասխանում նրանց սիրալիր ընդունելութեան: Ակսում են հարց ու փորձեր, թէ ինչու նա այդքան երկար ժամանակ նոցա չէր այցելում, ի՞նչ նորութիւններ կան, ի՞նչ են անում Վենետիկում: Նա դժուարանում էր այդ հարցերին պատասխանել. խօ կարող չէ նա հաղորդել այդ բարեպաշտ՝ աշխարհից հեռացած մարդիկներին իւր արկածները, իւր փոթորկալի,

անկարգ կեանքը. միայն Աւգերեանին, որի հետ նա շատ  
մօտ բարեկամացաւ, առանձնակի կը պատմէ այն ուրախ քա-  
ղաքում կատարած իւր արարմունքներից մի քանի ման-  
րամասնութիւններ: Եւ ծերունին զրուխը կը շարժէ, լսե-  
լով իւր երիտասարդ ընկերոջ պատմածը, բայց և խիստ  
յանդիմանական համոզմունքներով չի դիմիլ նորան, այլ  
գուցէ միայն հայրաբար կը կամենաց խորհուրդներ և խրատ-  
ներ տալ նորան: Բայց այստեղ բոլորի ներկայութեամբ  
նա չի շօշափիլ այդ հարցերը: Ահա նա մաքով աշխա-  
տում է գտնել այնպիսի նորութիւններ, որ հետաքրքրա-  
կան լինեին և նորա արեղայ բարեկամների համար: Պատ-  
մում է նրանց, թէ ինչ ապաւորութիւն են արել նորա  
վերայ Վինեակի հնութիւնները, հաղորդում է, թէ ինչ  
նամակներ է ստացել հայրենիքից, յայտնում է, թէ ինչ  
է մտազիր անել այսօր հայոց լեզուից: Վանականները  
ուշադրութեամբ լսում են այս բոլորը և իրանք էլ պատ-  
մում են իրանց պարզ ու հասարակ նորութիւնները:

Բայց նրանք շատ երկար չեն պահիլ նորան. նրանք  
զիտեն, որ նա եկել է պարապելու, որ հարիկաւոր է տա-  
նել նորան այն սենեակը, ուր նա պարապում էր, ժա-  
մանակ է, որ իրանք էլ սկսեն աշխատելու. նրանք զեռ  
էլ ժամանակ կ'ունենան խօսակցելու երիտասարդ բա-  
նաստեղծի հետ, իսկ առ այժմ կը զնան մատենազարդան  
և կամ իրանց համեստ խուցերը հին ձեռագիրները քըն-  
նելու, որև է պատմական կամ պատմազրականական բո-  
վանդակութեամբ տեսութիւններ զրելու: Եւ դանդաղ  
կերպով, առանց շտապելու վանականները ցրւում են:

Ահա Բայրընը մենակ է իւր զրասենեակում պա-  
տուհանը բաց է, որից ներս է հոսում ծովային կենդա-  
նաբար օղը: Վինեակիլ չի երևում: սենեակը նայում է  
նորա հակառակ կողմը: Այստեղ կարելի է լիսվին մոռա-  
ցութեան տալ քաղաքի փոթորկալի կեանքը և, աչքի

առաջ ունենալով շքեղ կապուտակ ծովի հրաշալի տեսարանը, խորասուզուել էր իւր մտածութիւնների մէջ և ամբողջովին նուիրուել իւր զբաղմունքներին: Որքան ժանօթ և թանկ է բանաստեղծին այդ տուանձնացեալ սենեակը: Քանի քանի անգամ՝ լարուած ուշազրութեամբ նա քննում էր հին ձեռագիրները, որոնք այնտեղ են պահվում: — և հայկական XIII գարու աղօթագրքերը և Աղեքսանդր Մակեդոնացու հետաքրքիր պատմութիւնը, որ XIII գարում յունարէնից թարգմանուած է բազմաթիւ նկարներով, և հայոց թագուհու միջնադարեան աստուածաշունչը նորա իսկական ստորագրութեամբ և Եւսեբէոսի հռչակաւոր ժամանակագրութիւնը: Այս բոլորը նորան հետաքրքրում էր և յաճախ երկար նա հարց ու փորձ էր անում իւր հայ բարեկամներին այս կամ այն ձեռագրի բովանդակութեան կամ պատմութեան մասին: Եւ ահա այս յարմարութիւնների մէջ, որից արեելքի հնութեան շունչ էր փչում, նա սկսեց պարապել հայոց լեզուով: Որքան ուրախանում էր ծերունի Աւգերեանը, երբ Բայրնը, սկսելով այր ու բենից, անցաւ լեզուի յետազայ ուսումնասիրութեան և հասկանում էր կարծ ու հեշտ հայերէն նախագաւութիւնները: Որքան նա ուրախացաւ, երբ նորա աշակերտը անվարժ ձեռքով զրեց առաջին անգամ մի կաոր թղթի վերայ «Պայրըն» խօսքը: Այստեղ՝ այս սենեակում պօէտու շատ անգամ զրում էր իւր ընկերներին նամակներ, գլխաւորապէս թումաս Մուրին և Մեօրէին, պատմելով նրանց Մխիթարեանների մօտ իւր կեցութեան մասին, նկարագրելով վանքի կազմակերպութիւնը և նորա միայնակեցների լուսաւոր գործունէութիւնը, տեղեկութիւններ էր տալիս իւր հայոց լեզուի պարապմունքների մասին: Այստեղ վերջապէս՝ կաղմուեցաւ այն առաջին լեզուաբանական վաստակը, որին մասնակցեցին և Աւգերեանը և Բայրընը. դա անգլիական

լեզուի քերականութիւնն էր հայերի համար նրանք երկուսով շատ աշխատանք թափեցին նորա վերայ. անհամբեր սպասում էին նորա լոյս տեսնելուն: Բայցընը չզլացաւ ծախսել 1000 ֆրանկ նորա հրատարակութեան համար, իսկ երբ զիրքը տպադրուած էր, նա սկսեց նպաստել և նորա տարածման: Նա զրում էր այդ զիրքի մասին իւր ընկերներին Անգլիա, աշխատելով կրթուած հասարակութեան ուշադրութիւնը դարձնել այն հետաքրքրական իրողութեան վերայ, որ հայերն էլ սկսել են հետաքրքրուել անգլիական լեզուով, գովաբանելով Աւգերեանի տաղանտը և զիտութիւնը և ընդհանրապէս խօսելով Միիթարեանների գործունեութեան մասին անկեղծ համակրանքով: Հնաց որ այդ զիրքը լոյս տեսաւ, ծերունի տրեղան իւր երիտասարդ ընկեր-բանաստեղծի հետ մի նոր միտք յղացան. Եթէ հայերին պէտք է ծանօթացնել անգլիական լեզուի հետ, ոչ սպակաս հարկաւոր է եւլուպական աշխարհին էլ ծանօթացնել հայոց լեզուի հետ: Հարկաւոր է զրել հայերէն քերականութիւնը անգլիերէն լեզուով: Նորից սկսուեցաւ լարուած, անխօնջ աշխատանք: Եւրոպական հասարակութեան հայոց լեզուն մատչելի անելու գաղափարը զրաւում էր թէ Աւգերեանին և թէ Բայցընին: Բանաստեղծին յշժ ցանկալի էր իմանալ հետեւում են արգե՞օք Եւրոպայում հայոց լեզուին և զիտութեան, տպագրում են այնտեղ հայերէն գրքեր. «Մեզ հարկաւոր է զիտենալ,—զրում է նա Մեօրրին,—անգլիական տպագրաններում Օքսֆօրտում, Կէմբրիջում և կամ ուրիշ քաղաքներում մնացել է արգե՞օք հայկական շրիֆտը, և երեխ զիտէք, որ շատ տարի առաջ երկու եղարք Վիստանները Անգլիայում տպագրեցին հայոց\*») պատ-

\* ) Այստեղ խօսքը Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան մասին է, որ հրատարակուած է երկու լեզուով և Վիստոն եղարքների ծանօթութիւններով, 1860 թ. Լոնդոնում:

մութեան մի ձեռագրի ընազիրը իւր լատինական թարգ-  
մանութեամբ։ Գոյութիւն ունի արգեօք այդ տպարանը  
և հրտեղ է։ Խնդրեմ տեղեկացէք Ձեր ծանօթ գիտնա-  
կաններից»։

Պօէտը այսօր շատ զործ ունի. նախ և առաջ նա  
պէտք է զրի նոր հրատարակելի քերականութեան յա-  
ռաջարանը։ Յառաջարանում նա կամենում էր խօսել ոչ  
միոյն հայոց լեզուի մասին, այլ և ընդհանրապէս հայերի  
մասին։ Եատ սակաւ տեղեակ են թէ Անդիսայում և թէ  
նորա դրացի երկրներում այդ վերին աստիճանի հետաքր-  
քրական ժողովրդի, նորա պատմութեան և ժամանակակից  
դրութեան մասին։ Նա երկար խորհում է իւր զրելիք  
յառաջարանի մասին. անց ու զարձ է անում կամ կանդ  
է առնում. բաց պատուհանի առաջ, կամ զննում է վա-  
զուց արդէն իրեն ծանօթ ձեռագրները. բայց ահա նա  
մօտեցաւ սեղանին և մի քանի ժամանակից յետոյ մի  
թեթև ակնարկ ձգեց թղթի վերայ, միմեանց յետեից կը-  
տոր կտոր նախադասութիւններ զրի է անցնում։ մինչ նա  
զրում է, նորա զլուխը աւելի եռանդով է տկառում աշ-  
խատել. դէպի Ճնշուած ժողովուրդն ունեցած համակրու-  
թիւնը առաւել պարզ և որոշ գոյն է ստանում. և արտա-  
յայտվում է մարդասիրական և անկեղծ մաքերով, որ նա  
իսկոյն զրի է առնում թղթի վերայ։ Ահա թէ ի՞նչ է  
զրում երիտասարդ պօէտը. «Անդիսայի ընթերցողը երեխ  
կրզարմանայ, զտնելով իմ անունը սոյնօրինակ ձեռնարկու-  
թեան մէջ և աւելի հաւատ կ'ընծայէ իմ ընդունակու-  
թիւններին, որպէս լեզուագէտի։ Որովհետեւ ես չեմ կա-  
մենում զիտակյօրէն՝ առիթ տալ կեղծ ենթագրութիւն-  
ների, ուստի համառօտակի կըքացատրեմ իմ մասնակցու-  
թիւնը այդ գործում, թէ ինչ են ինձ զեկավարող մօտիվ-  
ները։ 1816 թուին՝ զալով Վինեաթիկ, իմ միաբը այն-  
պիսի տրամադրութեան մէջ էր, որ զործ էր պահանջում,

բայց այնպիսի գործ, որ երևակայութեան քիչ տեղ տար և պարագողի համար ունենար մի որոշ զժուարութիւնն Այդ ժամանակ ինձ վերայ, ինչպէս, երեխ, և բոլոր ուրիշ ճանապարհորդների վերայ, մեծ ազգեցութիւն գործեց Ս. Ղաղարու միաբանութիւնը, որ իւր մէջ ամփոփում է վանական հաստատութեան բոլոր առաւելութիւնները, չկրելով նորա պակասութիւններից և ոչ մէկը. Մաքրութիւնը, սարք ու կարգը այս համայնքի մէջ, անկեղծ ջերմեռանդութիւնը, համեստութիւնը, այդ միաբանութեան եղբայրների տաղանտը և առաքինութիւնը ընդունակ են աշխարհական մարդու մէջ զարթեցնել այն միտքը, որ կայ ուրիշ աւելի լաւ աշխարհ նոյն իսկ այդ կեանքի մէջ: Այդ մարդիկը մի սարկացած, բայց ազնիւ ժողովրդի հոգեօրականներ են, որ հալածանքի և ճնշման ենթարկուեցաւ հրէսնների և յոյների նման, բայց ոչ առաջինի ոխակալութիւնը և ոչ երկրորդի ստրկութիւնը տարաւ գորանից: Այդ ազգը ձեռք բերեց հարստութիւն, վաշխառութեան չղիմելով, և բոլոր մեծարանքները, որոնք միայն կարող են տրուել նոյն, որոնք գտնվում են ստրկութեան մէջ,—առանց խորամաննկութեան: Դժուար կը լինէր գտնել մի ազգ, որի պատմութիւնը այնքան սակաւ արատաւորուած լինէր եղեռնագործութեամբ, որքան հայոց ազգինն է, որոնց ձգտումները խաղաղ ու առաքինական էին, իսկ պակասութիւնները — ճնշման հետևանք: Ի՞նչ վիճակի մէջ էլ որ լինէին հայերը, — իսկ նա տիսուր է, — ի՞նչ էլ որ սպասում լինի նրանց ապագայում, կրկին նոյն աշխարհը միշտ պիտի լինի ամենահետաքրքրականը ամբողջ երկրագնտի վերայ. նրանց լեզուն իսկ, գուցէ, միայն պէտք ունի մեծ ուսումնասիրութեան, որ աւելի գեղեցկութիւն ստանայ: Եթէ Ճիշտ է Ս. Գլքի մեկնութիւնը, Ճիշտ է, որ դրախտը հայաստանումն էր գտնվում, որ իւր մասնակցութեամբ նշնչան թանկ առւժուեց, ինչպէս և Ա-

դամի սերունդը, այն մարդու բոպէական երջաննկութեան համար, որը նցն երկրի հողից էր ստեղծուած։ Ձրհեղեղից յետոյ՝ հայաստանում առաջին անգամ սկսնց ջուրը նուազել և դուրս թռաւ աղաւնին։ Դրեթէ դրախտի ոչնչանալու օրից սկսուեցին այդ աշխարհի դժբախտութիւնները, որովհետեւ նա թէւ երկար ժամանակ մի հզօր պետութիւն էր, բայց շատ հաղիւ ժամանակ անկախ էր. Պարսից մարզպանները և առաջկաց փաշաները հաւասարապէս նըպատում էին այդ երկրի քայքայման, ուր Աստուած ստեղծեց մարդուն ըստ պատկերի և նմանութեան իւրցյա թայրընը գրեց վերջին տողերը մի ինչ որ ուժգնութեամբ, ոչ որպէս գիտնական, այլ աւելի որպէս պօէտ, առանձնապէս հոդ չտանելով ոճի սահունութեան վելայ, այլ կարծես շտապելով արտայայտել իրան յուղող յայտնի մաքիրը։ Նա ինքն էլ զգում է, որ յառաջաբանը, ինչպէս որ է, զեռ բաւարար կերպով մշակուած չէ՝ անկատարի տպաւորութիւն է անում, բայց և այնպէս նա ցոյց չի տալ Աւգերեանին, մինչեւ որ չվերջացնէ և չմշակէ լուսթեամբ։

Լաւ է և այն, որ յառաջաբանը գոնէ սկազբութեամբ էլ զրուած է։ Բայց թայրընը մտադիր չէ այդ որը միայն զորանով բաւականանալ հարկաւոր է գեթ մի փոքր էլ շարունակել իւր հայերէնից թարգմանութիւնը, որ դանդաղ էր առաջ գնում։ Եւ հեշտ է միթէ օտարագգուն, որ համեմատաբար նոր է սկսել պարապել հայերէն լեզուի ուսումնասիրութեամբ, թարգմանել կորնթացւոց Պօզոս առաքեալին ուղղած թուղթը և առաքեալի պատասխանը կորնթացիներին—երկու ապօկրիֆ շարադրութիւններ, հայերէն Աստուածաշնչի մէջ պահպանուած։ Բայց պօէտին հետաքրքրեցին այդ երկու քիչ յայտնի եւրոպական հասարակութեան շարադրութիւնները և մինչեւ անգամ այսօր, չնայելով, որ բաւական աշխատել էր, նա չի հեռանալ կղզուց մի քանի նոր տու-

ներ չժարգմանած այդ թղթերից: Շարում է իւր շուրջը բառաքաններ և սկսում է առանց շտապելու թարգմանել տողը տողի ետևից: Ժամանակ առ ժամանակ նա կանգ է առնում, որոնելով անդիմական մի յարմար բառ, երբեմն այս կամ այն ոճի տակը գիծ է քաշում հայ ձեռագրի մէջ, որ հարցնէ նորա նշանակութիւնը Աւգերեանից:

Սենեկում տիրում է խորին լոռութիւն, միայն լըս-փում է զրչի ճրճուիւնը և գարձուող թերթի շշուկը: Իսկ բաց պատուհանից հեռաւոր աշխարհի և անցած գնացած օրերի յիշողութիւններով լի սենեակը ներս են թափփում կենդանարար ոգեշունչ օղը, լոյն և ջերմութիւնը:

Արեգակը սկսում է մայր մանել: Բայրընը այլ ևս չի աշխատում: Նա գտաւ իւր մտերիմ Աւգերեանին և նրանք թափառում են վանքի մէջ խօսակցելով: Այստեղ ամեն ինչ լաւ ծանօթ է պօէտին, այնու ամենայնիւ ամեն անդամ նա բերկութեամբ շրջում է վանքական կալուածներում և միշտ գտնում է իրան հետաքրքրող մի նորութիւն:

Ահա վանքի մատենադարանումն են նրանք, բարձրագիր վայելուչ պահարաններում տեղաւորուած են այն 20,000 հատորները, որոնց տէրնէ վանքի միաբանութիւնը: Այստեղ են թէ՛ հայերէն գրքերը, թէ՛ օտարազգի գլուածները, Փոլիանաները (մեծահատոր գրքեր) և փոքր բրոշիւրները, հին և նոր հեղինակութիւնները, Պլուտարքոսի կենապրութիւնները և Ռոբինզօնի արկածները: Այս բոլորը ձեռք էր բերուած վանականների ջանքով մի ամբողջ դարի ընթացքում, անդադրում աշխատելով իրանց թանկագին մատենադարանի ճոխութեան համար: Բայց ամենից հետաքրքրականը մի բաժինն է, որ բաղկացած է

մի քանի հատորներից։ Այդ աշխատութիւնների հաւաքածուն պատկանում է իրանց Մխիթարեանների գրչին։ Դրանցից շատերը գրուած էին այստեղ կղզու վերայ, գուցէ այս մատենադարանի դահլիճում, յետոյ նրանք տարուել են վանքի հռչակաւոր տապարանը, որ տպում է ոչ միայն հայերէն գրքեր, այլ և ուրիշ լեզուներով և յետոյ լոյս են տեսել—և ահա Մխիթարեանների աշխատանքը գրուած, տպագրուած և հրատարակուած է. և այս բոլորը դուրս չեն գալիս խաղաղ մենաստանից, շրջապատուած օստար երկըքններով։ Բայց միաբանութիւնը չի թողնիլ որ իւր միաբանի աշխատութիւնը մնայ վանքի պատերում։ Նա կը ցրուէ այդ գրքերը արեւելքում, նա կընպաստէ նորա տարածմանը հայրենիքում։ Խօ այդ հայրենիքի համար և աշխատում են նրանք բոլորը, նորա լուսաւորութեան համար են գրում իրանց հետազօտութիւնները և տեսութիւնները. . . Երկար հարցնում է Բայրընը իւր ընկերակցին այդ բոլոր գրքերի մասին, մանաւանդ պատմական և զրականական բովանդակութեամբ՝ գրքերի մասին։ Եւ ծերունին պատմում է, թէ ինչպէս են նրանք պարապում հայոց լեզուի ուսումնասիրութեամբ, կազմում են բառարաններ և քերականութիւններ, հրատարակում են ազգային հեղինակների հին գրուածները նկատողութիւններով և թարգմանում են լատինիքն, յունարէն և ֆրանսերէն հեղինակութիւնները և բոլոր ջանքով աշխատում են կենդանութիւն տալ մայրենի լեզուին։ Պատմում է նա, որ պարապում են նրանք և իրանց հայրենիքի պատմութեամբ և հնագտարեան ձեռադրներում կարդում են անցեալի վեհ աւանդութիւնները, ծանօթանում են իրանց հերոսների և թագաւորների սխրագործութիւնների հետ, ուսանում են յարգանք տածել դէպի իրանց հայրենիքն և հաւատալ նորա ապագային։

Մատենադարանը այցելելով Աւգերեանը և Բայրընը

գնում են առաջ, կամաց-կամաց նրանք շրջում են ամբողջ կղզին նրանք մտնում են վանքի փոքր, բայց գեղեցիկ բակը, որ համարեա պարտէզ է դարձրած. պօէտը սիրում է այստեղ ժամանակ անց կացնել. այստեղ այնպէս լաւ է, այնպէս հով է, — ամեն ինչ անդորրութիւն և լոռութիւն է շնչում: Այստեղ մի փոքր տարածութեան վերայ խմբուած են զանազան բուսեղններ. կան այստեղ հրաշալի մագնոլիներ, ստուերախիտ մայրենիներ, եղևնիներ, բազմազան վարդեր, օլէանդրներ: Պարտէզը լի է անուշհոտութեամբ: Նորա մէջ տեղում խոխոջում է փոքրիկ շատրուանը. պատառուկը և չինական սողացող վարդերը պատում են սիւների երկար շարքը, որ սկսվում է նորա մի կողմից և վերջանում է այն տեղում, ուր կանգնում են գճուղները:

Բանաստեղծը չի մոռանալ այցելել այն չորս նոճիները, որ ինքն էր մի տարի առաջ պարզեել բուսաբանութիւն սիրող արեղաներին և որոնք արդէն ածել էին այն օրուանից, հպարտ բարձրացրել զէպի երկինքն իրանց կոնաձև կանաչ զլուխները: Պարտիզեց Բայրնը ուղղում է իւր քայլերը իւր ուղևորի հետ վանքի գերեղմանատունը. նա սիրում է գալ այստեղ: Երեւում են մի քանի արձանագրութիւններով յիշատակարաններ այն փոքր տարածութեան վերայ, որ նշանակուած էր յաւիտենուկան հանգիստ վայելլու համար: Այս բոլոր յիշատակարանները կանգնեցրած են հարուստ հայերի գերեզմանների վերայ, որոնք վախճանուել էին Վենետիկում և թաղուել մենաստանում: Կը-րօնաւորների գերեզմանների վերայ արձաններ և գովաբանական տողեր չկան: Նրանց թաղում են և թաղման տեղը ոչնչով չեն որոշում: բացի դորանից, վանքում խօնեղուածք է. գերեզմանատունը մեծացնել կարելի չէ. և ահա որպէս դի նոր ննջեցեալներին տեղ բացուի, ժամանակ առ ժամանակ հողը հիրկում են, որի մէջ ծած-

կուտած են տաղանտաւոր գիտնականների, հեղինակների և լուսաւորութեան նախանձախնդիրների ոսկորները։ Բոյրը ոսկորները, որոնք այդ ժամանակ պատահում են, հանվում և գարսվում են մի ընդհանուր հանգստարանում, որի մուտքը սովորաբար ծածկուած է լինում քարքարեան մարմարոնեայ մեծ սալով։ Այդ սալի վերայ կարելի է կարդալ հասարակ, զուտ կրօնական հոգով կազմուած հետեւալ արձանագրութիւնը։ «Նրանք յօժար կամքով թողեցին իրանց հայրենիքը նորա համար, որ այս միայնացած կղզում բնակեն, նուիրելով իրանց Աստուածամօր, Փրկչին և հայ աղջին ծառայելուն։ Այստեղ ուր նրանք միասին աշխատում են, հանգստանում են հարք և հղբարք Մխիթարեանները անցողողդդի իրանց յոյսը դնելով Աստուծոյ վերայ, գիտենալով, որ երբ կըհանի կեանքի ժամը, որ կըվերջանայ մահով, նրանք բոլորը միասին կերպարանափոխուած և շրջապատուած լուսով երկինք կը վերանան»։ Երկար ու ծիր նայում է պօէտը իրան ծանօթ արձանագրութեան։ Նորա վերայ խորին տպաւորութիւն է անում և այդ աչքի ընկնող գործիչների զերեղմանների վերայ արձանների բացակայութիւնը, որ կարծես թէ հաստատում է այն կարծիքը, թէ ամենալաւ անձեռագործ յիշատակարանն այն է, որ մարդու գործերը կարող են գարերով մնալ, մինչեւ անզամ եթէ նորա շիրիմը մոռացութեան էլ տրուի, և այդ լի հաւասով և յուսով բոլոր Մխիթարեանների ընդհանուր տապանագիլն է։ Պօէտը ընդհանրապէս սիրում է երեխն գալ զերեղմանատուն շատ մաքեր են նորա մէջ ծնեցնում դշնօրինակ այցելութիւնները։ Կ'անցնէ երկու տարի և նա երիտասարդ, ըստ երեսյթին կեանքի սիրահար, լուրջ կըխորասուզուի ֆերրարի գերեզմանատան արձանի մի հասարկ արձանագրութեան վերայ, ուր մի ինչ որ Լուկրեցիա Պիչինի յաւիտենական հանդիսատ է աղերսում։ —Lucrezia Picini implora eterne quiete...

Գերեզմանատնից՝ Աւգերեանը Բայրընին տանում է դէպի ծովը առաջ նորանք նստում են մի քանի ստուերաշուք ձիթենիների տակ, որոնք բուսնում են եղերքում և որոնք վանքում «լօրդ Բայրընի ձիթենիներ» անունով են յայտնի, որովհետեւ նկատելի էին, որ նա աւելի սիրում էր նրանց հոգասուն ստուերը. յետոյ նրանք բարձրանում են ծովի ափի վերայ ընկած բարձր պատշամբի վերայ, որից յանկարծ աչքի է խփում շրջակայքի հրաշալի տեսարանը: Հեռուում երեւում է Վինետիկը—Ս. Մարկոսի զանգակատունը, գտների պալատը, բարձր շինութիւնները Riva dei Schiavoni, — այս բոլորը յիշեցնում է այն կեանքը, որին պէտք է հանդիսէ այսօր սօէտը: Բայց նախ քան կղզուց հեռանալը Բայրընը կամենում է շատ բանի մասին հարցնել խօսակցել ընկերոջ հետ, շատ խորհրդակցել նորա հետ: Նրանք նստած են այժմ մայր մոնող արեգակի վերջին ճառագայթներով լուսաւորուած պատշամբի վերայ, ամեն աեղ լրութիւն է, միայն երեմն լսվում է աղբիատիքական ծովի ալիքի ծփումը. և այդ անդորրութեան մէջ լսվում են երիտասարդ բանաստեղծի կտրուկ, անհամբեր հարցերը և ծերունու մեղմ ու անվորով զըսյը:

Եյդ բոլորը լաւ, ազնիւ խօսակցութիւններ են: Ծերունին պատմում է, ինչպէս այնտեղ հեռու, հեռու տալրում է մի անբախտ ազգ, որին ծառայելուն իրանք նուիրում են իրանց ամենալու ոյժերը. նա ապրում է իւր մայրենի հողի ծոցում և մինչև այսօր երգում է իւր պանծալի նախնիների երգերը, պահպանում է հինաւուրց սովորութիւնները և հաւատալիքները չի մոռանում (հայրենանդ ծէսկըն ու աւանդութիւնները, չնայելով այն բոլոր Ճնշումներին և հալածանքներին), գուցէ թէ եղծուած, բայց այսու ամենայնիւ թանկագին մայրենի լեզուն, չնայելով այն բոլոր Ճնշումներին և հալածանքնե-

ըին դէպի ամեն հայրենականը. բայց ազգը գեռ չի տես-  
նում հեռառում պլաղացող լուսաբացի այզը և չկայ նո-  
րանում եռանդ և արիութիւն: Աւդիրեանը պատմում է,  
թէ այն երկրում, ուր ապրում և մարտնչում էին նրանց  
սխրագործ նախորդները, այժմ հին բերդերի, տաճարների  
և շքեղ սրալատների աւերակներն են ցրուած. օտար մար-  
դիկների համար այդ աւերակները համբ են, բայց այն ազ-  
գի համար, որ ստեղծել է այդ՝ այժմ խարխուլ շինքե-  
րը—պերճախօս է և նրանց վեհ լոռութիւնը: Նա սովո-  
րեցնում է նորան սիրել անցեալը, հասկանալ նիրկան  
և ձգտել լաւ ապագային: Դեռ շատ բան է պատմում  
Աւգերեանը. նա ասում է թէ՝ լուսաւորութեան այն գոր-  
ծը, որին նրանք ծառայում են, կարծես գա մի նախա-  
դուռ. է մի ուրիշ գործի — աւելի նշանաւոր և աւելի  
լայն — այնքան լայն, որ նրանք գեռ երբէք չեն կարող  
որոշել նորա սահմանները և ուղղութիւնը: Նրանք չեն  
տեսնիլ այդ նոր գործը: Նրանց վիճակուած է ամրացնել  
ազգի մէջ սէր դէպի մայրենի լիդուն, ծանօթացնել նո-  
րան իւր աշխարհի անցեալի հետ, տալ կրթութիւն, հե-  
ռուից խաւարի մէջ ցոյց տալ նորան լոյսը. այն ժամա-  
նակ գուցէ լիովին կը զարթնի ազգային ինքնաճանաշու-  
թիւնը, կը ծնուի նորա մէջ մի նոր, կորովի զգացում և  
յետոյ. . . յետոյ. . .

Բայրընը ագահութեամբ լսում է ծերունու խօսքերը  
և նորան թւում է թէ՝ մօտ է իւր սրտին և ծանօթ  
այդ հեռաւոր աշխարհը, ուր պատրաստվում է ազգային  
վերածնութիւնը և ուր հնադարեան աւերակները գեռ  
պահպանում են անցեալ փառքի և կորուսած բախար  
վսեմ պատմութիւնը:

Երկար և երկար շարունակվում են անկեղծ, սրտա-  
գին զրոյցները. . .

Մթնեց: Ա. Ղազարու կղզուց աղօտ մթութեան մէջ դէպիվնեսիկ լողում է թեթև գօնդոլը. նա հեռացնում տանում է երիտասարդ բանաստեղծին դարձեալ դէպի քաղաքային կեանքի յորձանքը. բայց նորա մաքից չի հեռանում հայկական մենաստանում անց կացրած օրը. որքան նոր և հետաքրքրական բաներ իմացաւ նա իւր նոր բարեկամնիրից: Խնչպէս ամեն ինչ լի էր այնտեղ խաղաղութեամբ և հանգստութեամբ. գեղեցիկ, անմեկին խորշում ինչպէս հիւրասէր էին միսյնակեայները, որոնք այնպէս իննդրում էին նորան հեռանալու միջոցին շուտ վերադառնալ իրանց մօտ և խօսք առան նրանից միւս անգամ գիշերը անց կացնել կղզու վերայ: Պօէտը վերջին անգամ՝ յետ է դարձնում երեսը. վանքում երեսում են ծրագներ. երեխ, ջանասէր կրօնաւորները նատել աշխատում են... Գիշերը մօտենում է, ծովը հեռալում ծածկուած է թեթև մառախուղով որն աչքից թափցնում է այն ամենը, ինչ որ գտնվում է վանքի սյն կողմը: Լուսինը դեռ դուրս չէ եկել:

Բայց այնտեղ, այդ ծովերից այն կողմը, հեռու, հեռու գտնվում է այն գժբաղդ աշխարհը, որին ծառայում են Մխիթարեանները և որն այնքան սիրում են, չնայելով իրանց անջտմանը: Եւ Բայրընը վերսախն յիշում է իւր վերջին խօսակցութիւնը Աւգերեանի հետ: Ի՞նչ է սպասում այդ խորհրդաւոր աշխարհն, կրգայ նորա համար միպայծառ օր, թանձր խաւարում կրփայլի՛ վառ արշալոյսը:

Ամեն ինչ լուեց. գօնդոլը գտնվաղ շարժվում է մըթութեան մէջ. նաւաստին սկսում է մեղմ երգել. վանքը աչքից անյայտանում է... Իսկ հեռալում հրավառ Վինետիկը տօնում է յաղթական կառնավալը (բարիկենդանը):

ԳԵՈՐԳ ՎԵՍԵԼՈՎՍԿԻՅ.

Թարգմ. Յ. Մելքոնեանց.

ԲԱՐԻ ՀՐԵՇԱԿ.

Մարդկանց մէջ մենակ, խեղճ, անմլսիթար,  
ես լալիս էի, օրերըս խաւար,  
երբ գու փայլեցիր իմ տխուր կեանքում,  
Որպէս վառ աստղիկ մթին երկնքում:

Եւ մտերմական մի ջերմ համբոյրով  
Դու վիշտս գարձրիր ուրախութեան ծով.  
Քո սէրը, որպէս գարնան արշալոյս,  
իմ կրծքում վառեց նոր կեանք ու նոր յոյս:

Եւ քանի՞ ըղձեր, քանի՞ խորհուրդներ  
Վաղաժամ թաղուած, վաղաժամ աւեր—  
Եռացին սրտումս, նորից կեանք առան,  
Եւ ողջունեցին քո մտերմութեան:

Մենակ չեմ էլ ես... Քո սէրն է, մանո՛ւկ,  
Այժմ կեանքի մէջ ինձ ոյժ ու նեցուկ.  
Քո սէրն է երգչիս ընկերը միակ.  
Օ՛, օրհնեալ լինիս, իմ բարի՞ հրեշտակ:

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ.

25 յուլիսի 1892 թ.  
Մոսկովա.



## ՀԱԼԱԾՈՒԽԾ ՍԵՐ.

Տիսուր ես, այ սէր, երբ տնհամարձակ  
Դու թրթուում ես սիրող սրտերում,  
Որպէս փոթորկից հալածուած թռչնակ,  
Որ կուչ է գալիս թաւոտ թվերում:

Եւ որքան ծանր է զսպել արտասուք,  
Երբ մարդ տանջվում է՝ թագուն սիրելով...  
Ո՛, ի՞նչու, հոգեակ, բախոը չարաշուք  
Կապեց մեր սրտելն այդ տխուր սիրով...

Սրտամաշ մի վիշտ, ծանր քարի պէս,  
Ճնշում է կուրծքըս, նազելի՛ ընկեր,  
Երբ մտածում եմ, որ այդ սէրը մեղ  
Ո՛հ, չի բերելու լուսազարդ օրեր. . .

Սիրել ու տանջուել՝ կեսանքում հալածուած—  
Ահա երկուսիս սև ծակատագիր.  
Բայց ես կըտանջուեմ... ես շատ եմ տանջուած...  
Երանի՛ միայն դու չըտանջուեիր. . .

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ.

4 սեպտեմբ. 1892 թ.  
Մոսկովա.



## ՅՈԳԵՆԱԻԻ ՎԵՐԱՅ.

Շողինաւը գնում էր հանդարտ, քիչ ցնցուելով և  
կտրելով Սև ծովի կանաչագոյն ջրերը, որոնք լուսաւոր-  
ուած էին լուսնի փայլով:

Քիչ-քիչ անշետանում էին մեր աչքից հեռաւոր  
մժութեան մէջ Եայլի շղթան և Եալտայի նաւահան-  
գիստն իւր գեղեցիկ ծովեղբեաց քաղաքով, որ լուսաւոր-  
ուած էր մի շարք ճրագներով: Քիչ-քիչ հանդարտուեց  
Ճանապարհորդների աղմուկը, որոնք Եալտայում նըս-  
տել էին շոգենաւ և տեղաւորուել էին իրենց կապոցնե-  
րով օթեակներում և պատշգամբի վերայ. շուտով և  
պատշգամբը սկսեց դասարկուել, մեծամասնութիւնը զը-  
նաց ներքե թէյ խմելու, կամ ընթրելու, կամ շտապե-  
լով քներն առնելու, մինչեւ Թէօդոսիա, որտեղ պէտք է  
հասնէին առաւօտուայ ժամը Հնդին. միայն մի քանիսը,  
որոնք ուզում էին հրձուել հիանալի՝ լուսնեակ գիշերով,  
մնացին վերել:

Վերջինների թվում կար մի գեղեցիկ և բարձրահա-  
սակ կին, մեկուսի կանգնած, յենուած վանդակին, ան-  
շարժ նայում էր հեռուն, որ միայնում էր ծովը հորի-  
զոնի հետ. նա այնքան էլ չէր հիացած գիշերուայ վե-

բայ—նայում էր և յիշում... Նորա առաջ կենդանի, կարծես թէ երեկ էր, պատկերացաւ այդպիսի մի հիանալի՝ գիշեր, երբ նոյնպէս լուսնի լուսով նա կանգնած պատշամքի վերայ հրձվում էր... ախ, ի՞նչպէս նա այն ժամանակ զմայլած էր, ի՞նչպէս նա կարող էր զաւարձանալ, տպրել կատարելապէս, հաւատալ և սիրել:

Նա զուարձանում էր այն մեղմ հողմով, որ փչում էր նորա երեսին մի անծանօթ բուրմունք. զուարձանում էր և այն լուսնի լուսով, որ արծաթի նման թափվում էր ալիքների և իրեն վերայ. զուարձանում էր և ընդարձակ մուգ կապոյտ երկնային կամարով, որի վերայ արծաթանման լուսնի շողքից անշուք փայլվիում էին հարաւային աստղերը. այն ժամանակ նա միայն 17 տարեկան էր. յաւ էր ապրում և երջանիկ էր... Նա այնքան սիրում էր իւր հօրը, այն ազնիւ, թէև քիչ խիստ նտաւատիին, որ նորա հետ լինում էր այնպէս քնքոյշ ինչպէս երեխան. Նա նոյնպէս, ինչպէս և հայրը, պաշտում էր ծովը և միշտ ուրախութեամբ նստում էր շոգենաւ, երբ հայրը իւր շոգենաւով մտնելով Սևաստոպոլ, ժամանակ էր գտնում այցելելու խրձիթը, որտեղ նա ապրում էր իւր մօրաքրոջ հետ, որ մեռած մօր տեղն էր, երբ նա, Զինան, զեռ օրօրոցումն էր. Խրձիթ գնալիս հայրը վերցնում էր իւր հետ Զինային և Ճանապարհորդութիւն էր անում ծովի վերայ. այն ժամանակ Զինան այնքան երջանիկ էր հօր ներկայութեամբ և իւր սիրած ծովի տեսքով:

Մինչև 17 տարին նա չգիտէր ուրիշ սէր, բայի դէպի իւր հայրը, մօրաքրոյրը, ծովը և այն կենդանիները, որոնց նա մեծացնում էր խրձիթում: Նա Ճանաչեց ուրիշ սէր միայն այն հիանալի՝ լուսնեակ զիշերուանից յետոյ, շոգենաւի վերայ, որի մասին հիմայ յիշեց, տասը տարուց յետոյ, որ նորա մէջ այդ տասը տարուայ ընթաց-

քում. չեր մեռել, չնայելով, որ բաժանումը և սառնութիւնը դառն էր նորան:

— Այնպէս չէ, ինչ հիանալի՞ գիշեր է:

Զինան իսկոյն ետ զարձաւ, բայց մինչև անդամ չըզարմացաւ, չվախեցաւ և ուղեղ հանդիպելով նորասև աչքերի հայեացքին, այնպէս մեղմ, ի՞նչպէս էր և այն ձայնը, ասաց բերկրանքով՝

— Հրաշալի՞ գիշեր է:

Նոքա իսկոյն սկսեցին խօսել կարծես թէ երկու հին բարեկամներ լինեին, որոնք բաժանումից յետոյ, նոր էին տեսել իրարու. Հայրը ձանաշում էր նորան քիչ և ծանօթացրեց աղջկան այն ժամանակ, երբ նոքա արդէն բարեկամացել էին և միասին զուարձանում էին, երկնքին և ծովին նայելով. նա մտածում էր իջնել Կիրչ, բայց նրանց հետ միասին գնաց մինչև Բաթում և մնաց այնտեղ այնքան, ինչքան որ նրանց պէտք էր և նոցա հետ վերագարձաւ Սեաստոպօլ. մինչև տնօքամ այնուհետեւ էլ ամբողջ ձմեռը մնաց այնտեղ որտեղ նա մի քանի գործեր ունեցաւ և յածախ այցելում էր խրձիթը, ինչպէս մի պայծառ արև, որից Զինայի սիրով փթթում էր:

Դարնանը, երբ շրջակայ դաշտերը ծածկուեցան վառվուն ծաղեկների գորգով և արտուտիկը սկսեց երգել. Դոլինը վրդովուած, ինչպէս մի ամաչկոտ աղջիկ, Զինային առաջարկութիւն արեց: Զինայի սիրով իսկոյն պատասխանեց այն, բայց գիտակցութիւնը յիշեցրեց Հօր մասին և սկսեց սպասել նորա վճռին. այդ այնու ամենայնիւ չէր խանգարում նոցա երազել մինչև այն աստիճան, որ զլուխները պառյա էր գալիս. այդ նորա կեանքի ամենաերջանիկ ժամանակն էր, երբ ապագան նկատվում էր նորա առաջ այնպիսի պայծառութեամբ, որի համար խաւարել չկար. Հօր գալուստը սառեցրեց այդ հոսանքը, որը մի տաք վտակ էր:

— Թուք գեռ շատ ջահիլ էք, իմ բարեկամ, — ասաց խիստ նտւաստին, ուղիղ նայելով թափանցիկ հայեցքով Դոլինի մուգ, մեզմ աչքերին, — դուք պէտք է ձեղ փորձէք. ամուսնութիւնը այնպիսի խաղալիք չէ, որ խաղաս ու դէն ձգես, որ երեխան թեթևամտութեամբ բռնում է, նոյնպէս էլ թեթևամտութեամբ նորան փոխում է մի ուրիշի հետ. պէտք է, որ դուք լաւ մոռածէք ձեր զբութիւնը և դորս համար ձեղ պէտք է հեռանալ մի ժամանակ՝ զրոյթինակ մի տարով, որպէս զի հեռու ձեր առարկայից, կշռէք, թէ որքան զօրեղ է դէպի նա ունեցած ձեր սէրը և ապա վերադառնալ առաջարկութեամբ:

Սիրահարուածների միւս բողոք ապացոյները զուր էին. հայրը իւր խօսքին հաստատ էր. նոմանիների, մատանիների, յիշատակարանի միջոցով, ինչպէս նա ասում էր, «տաքացնելը» նոյնպէս արգելեց. նոքա բաժանուեցին բոլորովին ապատ, չկաշկանդելով մէկը միւսին ոչինչով, բացի ծածուկ միմեանց տուած յաւիտենական սիրոյ երգում ները: Երբէք իրձիթը Զինային չէր երևեցել այզպէս տխուր, չնայելով, որ գարունը լիապէս ծաղկած էր. նո միայն ապրում էր յիշողութիւններով, հաշուելով ամիսները, շաբաթները և օրերը... նա ուրախ հանդիպեց աշնանը, յետոյ ձմրան, որից յետոյ պէտք է զար գարունը. իրենց տեսութեան բազդաւոր ժամանակը. Զինան ոչինչ չգիտէր նորա մասին. հաւատում էր նորան ինչպէս Յոտուծոյ և սպասում էր նորան, ինչպէս աղատարարի:

Բայց նա չեկաւ գարնանը:

Չեկաւ և ամառը, երբ բնութիւնը ուրախանում էր, լցուած տաք արեւի ձառագայթներով, չեկաւ և աշնանը, երբ թառամեցան դաշտերը, որոնց վերայ փշում էր աղասքամին: Զինան այլ ևս չէր սպասում. կողպուեց իւր սենեակում, ինչպէս խխունջը իւր խեցիի մէջ. նա արդէն ոչինչ չէր սպասում կեանքից, որ այդպէս ծիծաղեց նո-

րա վերայ հէնց սկզբումը. հայրը զուր չէր անուանում նորան ամոլորուածաւ Զինան չէր կարող նորա սէրը փոխել ուրիշի հետ և բացի գորանից նա առաջ շատ էր հաւատում մարդկանց, ուստի չէր կարող ներել առաջին խաբեբայութիւնը. . .

Նա այդպէս էլ կողպուեց խրձիթում, մինչեւ անդամ չէր ճանապարհորդում ծովով հօր հետ և իրեն նուիրեց մօրաքրոջ հոգսերին, որ անդամալցյած էր եղել: Նա զնաց Բաթում միայն մի տարի առաջ, հօրը թաղելու համար, որ կատկել էր թաղուելու այնտեղ և յետոյ Զինան ուխա զրեց ամեն տարի, նորա մահուան օրը այցելել հօր գերեզմանը. Հիմայ զնում էր հէնց այնտեղ, այս հիանալի՝ զիշերը, երբ կանգնած պատշգամքի վերայ յիշեց մի ուրիշ այդ տեսակ զիշեր, որ կարող էր լինել սկիզբը իւր լիակատար բաղդաւորութեան և որ ընդհակառակը խորտակեց նորա բոլոր համոզմունքները. սարսափելի՝ տիրութիւն. միւնցն անմոռանալի սիրոյ տըլսրութիւնը. պաշարել էր նորա սիրոը և նա բռնելով ձեռներով իւր զլուխը, սաստիկ հեկեկաց:

— Ի՞նչ եղաւ ձեզ, արդեօք ջուր հարկաւոր չէ, — լըսուեց մի մեղմ ձայն:

Զինան ցնցուեց ոտից մինչեւ գլուխ. ոչ, չէր կարող լինել ուրիշ մի այդպիսի ձայն. նա չէր կարող մոռանալ նորան այդ տասը տարուայ ընթացքում, կամ թէ ցնողք էր. նա սարսափում էր նայել խօսողի վերայ, սարսափելի՝ էր սթափուելը և համոզուելը:

— Ձեզ ջուր հարկաւոր չէ, — կրկնեց նցն ձայնը, դարձեալ մեղմ կերպով:

Նա շուտ զլուխը ետ դարձեց և նորա լայն բացուած արտասուքով աչքերը հանդիպեցին այն մեղմ մուգ աչքերին, որոնց նա կը ճանաչէր և հարիւր տարուց յետոյ: Նոքա երկուան էլ կարծես թէ քարացան:

— Դուք էք... դուք, — ասաց նա վերջապէս, հաղիւ շունչ քաշելով:

Զինան ոչինչ չպատասխանեց, միայն թուլացած ընկաւ նստարանի վերայ. Էլ չէր արտապում. Դոլինը կանգնել էր, կարծես մահուան էր դատապարտուած, չհամարձակուելով նայել նորա վերայ և չկարողանալով հեռանալ:

Բայց ահա՝ Դոլինը բարձրացրեց նորա վերայ աչքերը և նորան երեցաւ, որ կանգնած է առաջուան 17 տարեկան Զինայի առջև. այնպէս ջահիլ էր նորա երեսը և ճակատը, որի վերայ ցրուած էին նորա բաց շիկագոյն մազերը: Դոլինը չկարողացաւ նկատել այն թեթև կընձիռները, որոնք հաւաքուած էին ոչ թէ ժամանակից, այլ վշտից. չկարողացաւ նկատել և աչքերի տակի թեթև կապտութիւնը: Նա տեսնում էր միայն այն մեծ, մուգ շագանակագոյն աչքերը, որոնք նայում էին նոյն հարցական հայեացքով և նոյն գեղեցիկ շրթունքները, որ հիմայ ամուր խփուած էին:

— Ի՞նչքան պէտք է, որ դուք ինձ արհամարհէք, — հառաջեց նա, կուանալով դէպի Զինան:

Զինան նայեց նորա վերայ, կարծես չհասկացաւ այն, ի՞նչ որ նա ասաց:

— Ա՛խ, եթէ կարողանայի ես ասել ձեղ բոլորը, ի՞նչքան որ տանջուել եմ... — շարունակեց Դոլինը դարձեալ կամաց:

Զինան վեր կացաւ, կարծես թէ պատրաստվում էր հեռանալ:

— Ի սէրն Աստուծոյ մի՛ գնաք, — համարեա կանչեց Դոլինը յուսահատ, բռնիլով նորա ձեռից. — Ես զիտեմ, որ դուք չէք կարող ինձ ներել և ես չեմ էլ ինզրի ներողութիւն... մի՛թէ այդ հնարաւոր է. Ես ինքս չզիտեմ, ի՞նչ կարող եմ ասել... ինչպեմ; մի՛ գնաք այդպէս, մի՛ հասցնէք ինձ յուսահատութեան. . .

Զինան նորից ընկաւ նստարանի վերայ. Դոլինը նըս-  
տեց նորա կողքին. նոքա բոլորտվն մենակ էին այդ կող-  
մում, լուսաւորուած լուսնի լուսով, որ սահումէր մեղմիկ,  
հանդարա կերպով, Հաղիւ շնչող ալիքների վերայով:

Նա ինքը չէր հասկանում, թէ ի՞նչպէս հասաւ կատա-  
րեալ պարզութեան, որ պատմեց Զինային ամեն բան:

«Ձեղանից բաժանուելով ես այնքան անբախտ էի, —  
այդպէս սկսեց նա իւր խոստովանքը, — որ չգիտէի, թէ ի՞նչ  
անեմ. ամենից շատ ես ուզում էի հեռանալ մի որեկիցէ  
հեռու տեղ, որտեղ կարողանայի չհանդիպել ոչ ոքի ծա-  
նօթներից, որոնք ինձ կը հասցնէին այն հարցմունքներին,  
որոնց ես չի ուզում մօտենալ. ամենից շատ ուզում էի  
մնալ բնութեան հետ. ինձ թւում էր, որ միայն նա կա-  
րող էր հանգստացնել իմ զրգութած ջղերս: Եոգենաւը  
Սևաստովոլից գնաց Եալտա. ես մտածեցի գնալ այնտեղ.  
ինձ թւում էր, որ դա հանդարա անկիւն էր, լցուած  
գարնան անուշահու բուրմունքով. այդ գաղ գարնան ժա-  
մանակ, ճշմարիտ որ Եալտան հանդարա էր, որովհետեւ  
այցելուները քիչ էին: Ես տեղաւորուեցի համեստ հիւ-  
րանոցում և մտածեցի այգաեղ քիչ թէ շատ ձեղանից  
մօտ, ձեղ հետ միասին նոյն հարաւային երկնքի տակ,  
անց կացնել բալոր այն փորձութեան ժամանակը, որ նշա-  
նակեց ինձ համար ձեր հայրը:

«Հիանալի՝ գարուն էր, ամեն տեղ ծաղկել էին վար-  
դերը. մանուշակագոյն փունջերը կախուած էին պատշ-  
գամբներից և բուրտում էին անուշհոտութիւն. ես ամ-  
բողջ ժամերով թափառում էի շղակայքում, գնալով հե-  
ռու, կամ գնալով լեռները ձիով, մենակ առանց ուղեկցի:  
Այդպէս անցաւ մէկ ամիս, Եալտան սկսեց լցուել այցե-  
լուներով և կորցնել ինձ համար իւր գեղեցկութիւնը,  
այնպէս որ ես արգէն մտածել էի հեռանալ մի որեկիցէ  
տեղ, աւելի մենակութեան մէջ, բայց հէնց այդ ժամա-

նակ պատահեց ինձ այն սարսափելի ճակատագիրը, որ  
կործանեց իմ բոլոր կենքս. . .

«Եյդ հիանալի՝ յունիսի զիշեր էր, արել մայր  
մտնելուց առաջ, Եայլլիքարձութեան վերայ, որի հա-  
նաչ լայնութիւնը զնվացնում էր ինձ, այն հոտաւետ  
թարմութեամբ, որին զուր...որոնում էր սիրաս տաք  
եալտայում: Ես արդէն հասել էի այն զառիվայրին, որ զը-  
նում էր ներքեւ ոլորուն նեղ ձանապարհով, զիք ժայռի  
վերայից:

—Խոզրեմ զգօյշ, ինձ ներքեւ կը ձգեք, — լսուեց մի  
կանացի ձայն և ես նկատեցի այդ ոլորապտոյտ ձանա-  
պարհի առաջին դարձուածում մի ձիաւոր կնոջ, որի ա-  
ռաջից զնում էր թուրք ուղեցոյցը, արծաթով բանուած  
բաժկոնակով, ծուռը զրած փափախով:

«Ես արդէն ունեի քիչ թէ շատ նախապաշարմունք  
այդպիսի մենակ ձիաւոր կանանց դէմ, շռայլ ուղեցոյցնե-  
րով և քաշեցի ձիս, մոտագրուելով հեռու պահել ինձ,  
բայց ձիաւոր կինը, վարպետութեամբ ետ դառնալով  
թամբի վերայ, նայեց ինձ թեթև հայեայքով և ասաց.

—Ինչու դուք կանոնեցիք, ընդհակառակը եկէք իմ  
ետեկց, ես էլ այնքան չեմ վախենալ:

«Ես լուռ սկսեցի իջնել. նա լաւ էր նստել ձիու  
վերայ, իւր մոյդ կապոյտ շորերով, մէջքը կապուած գո-  
տիով, որ արծաթեայ թիթեղներով զարպարուած էր:  
Ես չկարողացայ տեսնել նորա երեսը, որ միայն մի րոսկէ  
դարձրել էր զէպի ինձ և այն էլ կապոյտ քողի տակ,  
զեղեցիկ փաթաթած նորա ցածր զլիուրկը. բայց նայելով  
նորա շքեղ կաղմուածքին, վճռեցի, որ նա չէր կարող  
շատ ջահիլ լինել:

«Իջնելով, նա անդադար ուղղում էր ինձ խօսքեր,  
որոնց ես չէի կարող չպատասխանել և շուտ-շուտ ծիծա-  
ղում էր շատ դուրեկան, արծաթեայ ծիծաղով: Մենք ի-

Հանք գեղեցիկ Այ-Վասելի հովեալը, դէպի թուրքի գիւղը, որ խեղբուած էր այզիների ձոխ կանաչի մէջ. իմ ուղեկիցը, երեսւմ էր, ևս էր պահում ինձ, շտալով ժամանակ թողնելու իրան, չխախտելով եթէ ոչ սիրալերութեան, գինէ մարդավարութեան օրէնքը: Երբ մեզ պէտք էր լինում երբեմն կողք կողքի գնալ, որից նա օդավում էր ամեն անգամ, հէնց որ ձանապարհը մի քիչ լայնանում էր՝ ևս կարողացայ տեսնել նորա երեսը. նա գեղեցիկ չէր՝ հաստ, գունաս դէմքով, բութ, հաստ քթով և հաստ շրթունքներով, որոնց վերայ ամեն րոպէ երեւում էր կոտրատուող ժպիտը, փոսիկներ անելով փափուկ այտերի վերայ և այզպիսի կոտրատող հայեացքով փայլում էին նորա փաքր, բաց մախրագոյն աչքերը, հաստ սև յօնքերի տակ. արտաքուստ երեսւմ էր երեսուն տարեկան:

«Համենելով մինչեւ Եալտա, ևս չտապեցի նորանից բաժանուել. մի բան մըթմըթալով բացասեցի նորա սիրալիր հրաւէրին՝ մտնել մօտը, խմել մի գտաւթ թէյ, ման գտլուց յետոյ. նա չստիպեց և զլուխը շարժելով բարեկամաբար, գնաց գետի ափով, որ արդէն լուսաւորուած էր լապտերներով. զուգուած թուրքն էլ գնաց նորա հետքով. . .

«Ես պատահեցի նորան հէնց միւս օրը ծովի ափում, որտեղ սիրում էի երեկոները նստել. նա վստահութեամբ մօտեցաւ ինձ և նստեց կողքիս, նստարանի վերայ: Այդ երեկոյ ևս արդէն չմերժեցի նորա հրաւէրը՝ գնալ մօտը թէյ խմելու և հնազանդութեամբ հետևեցի դէպի նորա ամարանոցը, ոչ հեռու ծովի ափից: Ամարանոցը շատ լաւ էր, գեղեցիկ պատշգամբով, փաթաթուած խիտ կանաչով և յասմիկով. պատշգամբի վերայ կային փափուկ կարասիք և թէյի սեղան, որի վերայ դրուած էին երկու աշտանակներ վառած մոմելով, ապակեայ ծածկոցների

տակ. այդ բոլորը այնպէս յարմար ու ընտանեկան տեսք ունիք, որ ես ինձ լաւ զգացի: Վարվարա Պաւլովնան՝ ինչպէս կոչվում էր իմ նոր ծանօթս, հագել էր փայլուն շոր, թուրքի ճաշակով, լայն թևերով, որի տակից երեւում էին ոչ գեղեցիկ ձեռները. մազերը բաւական կարծ կտրած էին, ընկած կոր և խուճուճ փունջերով նորա նեղ ճակատի վերայ. առանց վլսարկի նա ինձ երևեց աւելի տգեղ և ծեր, որ չէր խանգարում նորան առաջուան պէս կոտրտուելով ժպտել և հայեացքներ ձգել. նա խօսում էր անդադար, շատ սուր, գեղեցիկ կապելով նախագասութիւնները. անեկդոտներ էր պատմում բաւական կեզտոտ և անտեղի և այդ բոլորը ծածկում էր դուրեկան, արծաթեայ ծիծաղով:

«Ես վերադարձայ ուշ, բաւական զոհ այդ երեկոյից, բայց հաստատ վճռեցի Էլ չկրկնել իմ այցելութիւններս. չնայելով վճռիս, ես հէնց միւս օրը նորա մօտ էի, իսկ յետոյ ամեն օր լինում էի. . .

«Ես չգիտեմ, ի՞նչով նա ինձ կախարդեց, բայց ես սիրահարուեցի նորա վերայ, ինչպէս մի պատանի. ես գարձայ նորա գերին, ես գողում էի նորա առջե, ինչպէս մի շնիկ. ես ապրում էի միայն այն րոպէներով, երբ տեսնում էի նորան. ես պատրանտ էի ժամերով կանգնել նորա պատշգամբի տակ, որպէս զի տեսնեմ գոնէ նորա ստուերը, գոնէ կօշիկի ծայրը: Ես այն ժամանակ ամեն բան նորա մեջ հիանալի՛ էի համարում. ինձ թւում էր, որ ես չեմ տեսել նորանից աւելի գեղեցիկը և խելօքը. նա ինձ կաշկանդեց վարժ կոտրտուողի փորձառութեամբ, այնպէս որ մինչեւ ես սթափուեցի, արդէն ամբողջովին նորա ձեռումն էի և նորա գերին: Ես ամբողջ օրերով քաշ էի գալիս նորա ետեկց ամեն տեղ, որտեղ կարող.

Էի օգտակար լինել ես տանում էի նորա ետեխց վերաբ-  
կուն, կամ զամբիւղը խաղողով, որով նա մտածել էր  
աշունքը բժշկուել, ես փոխարինեցի հիմայ նորա թուրք  
ուղեցոյցին ամեն անգամ շուկաներում ման դալիս. ես  
վազում էի կրապակէ կրապակ, պտրելով օրինակին յարմար  
հարկաւոր շիրիտը, կամ ժապաւէնը և իբրև վարձատրու-  
թիւն երջանկութիւն էի համարում նստել մօտ և նա-  
յել նորա վերայ սիրահարուած աչքերով, կամ լսել նո-  
րա արծաթեայ ծիծաղը, որ պաշտում էի. . .

«Նա ինձ հասցրեց այն կէտին, որ ես պատմեցի նո-  
րան ամեն բան, բոլոր մեր սիրոյ պատմութիւնը. ես հա-  
զորգեցի այն սրբութիւնը, որի վերայ նա ծիծաղում էր.  
իւր մասին խօսել չէր սիրում. թեթև յիշում էր երե-  
խոցը, որոնց թողել էր Մոսկուայում մօր մօտ և խու-  
սափում էր խօսել ամուսնու մասին, որի հետ, ինչպէս  
երեսում էր, բաժանուած էր—և իմ ի՞նչ դործն էր այդ  
ամենը: Ես ապրում էի առանց մտածելու ապադայի մա-  
սին, որին վախենում էի նայել. միայն հրճվում էի ներ-  
կայով, որ չէր տալիս ինձ ոչինչ, բացի բարոյական տան-  
ջանկից. . .

«Այդպէս անցան ամառը, աշունը... Ես արդէն չէի  
մտածում թողնել եալտան. ես չէի նկատում բազմա-  
թիւ ժողովրդին, որոնք հաւաքվում էին փողոցներում և  
ձգում խաղողի չաչերը սալայատակների վերայ. ես տես-  
նում էի միայն նորան, որ չէր փախցնում դէպք կոտըր-  
տուելու, բացի ինձանից և ուրիշների հետ, որ զարթեց-  
նում էր իմ մէջ կրակոս նախանձ և իմ բարկութեան  
նա պատասխանում էր արծաթեայ ծիծաղով, ստիպելով  
ինձ ծնկաչոք խնդրել նորանից ներողութիւն, որ ես կա-  
տարում էի անխօս, հպատակելով իմ կուռքիս ամեն  
ցանկութեանը. ես արդէն էլ չունէի սեփական կամք և  
հայեացքներ:

«Աշնան վերջերը նա գնաց Մոսկուա, ուր և ես գնացի, այնտեղ նոյնպէս շարունակեցի լինել նորա մօտ, երբեմն տեմնելով նորա նուռազը մռայլ երեխոցը, որոնց հետ նա վարփում էր շատ անկարգ և մօրը, որ շատ անգուր և կասկածու պառաւ էր և նայում էր ինձ վերայ, իարծես ծաղրելով։ Ամուսնու մասին ոչ մի խօսք չկար...»

«Չեմ պատմիլ մանրամասն այն երկու տարուայ մասին, երբ ես ինչպէս անբախտ հառաջող, վազվզում էի նորա ետեից, մոռանալով իմ առաջուան մաքուր սէրս, իմ երգմնաղանցութիւնս... չգիտեմ, մինչեւ հիմայ, ի՞նչ էր արգելում նորան վճռելու. ի՞նչ հարկաւոր էր նորան կեղծ ամուսինը, որի հետ անհրաժեշտ էր բաժանուելը. յետոյ ևս իմացայ, որ այդ ամուսինը գոյութիւն էլ չունէր, որ նա ազատ էր, հենց մեր ծանօթութեան առաջին լուպէից Եայլիի բարձրութեան վերայ. բայց նա յայտնեց իւր ազատ լինելը միայն մեր ծանօթանալուց երկու տարի յետոյ, երբ վճռեց ինձ բախտաւորացնել իւր համաձայնութեամբ՝ լինել իմ կինու. . .»

«Նա եղաւ իմ կինու... և տհա՛ ութ տարի է, ինչ որ ես քաշում եմ այդ բեռը, որ դարձաւ անտանելի, մանաւանդ այն ժամանակ, երբ անհետացաւ սէրը։»

«Եւ միենոյն ժամանակ ես սարսափով նկատեցի, որ զրկուել եմ յաւիտեան ազատութիւնից և չնայելով սիրոյ բացակայութեանը, ես դարձեալ մնացել եմ նորա գերին, նորա խաղալիքը և որ նորա հետ մրցելը անմիտ կը լինէր. ես հնաղանդուեցի ճակատազրիս և տանում եմ այս սարսափելի կեանքը, լցուած հակակրութեամբ դէպի ամենքը և դէպի ամեն բան. . .»

«Միայն հիմայ, այս լուպէին, երբ ևս նայում եմ ձեզ վերայ, երբ իմ հոգուս մէջ զարթեց բոլոր անցեալը՝ ես զգում եմ, որ գեռ ապրում եմ, որ ինձ դեռ մատչելի են այն վըդովմունքները, որ կազմում են կեանքի տանջանքն»

և գեղեցկութիւնը, որ ստիպում է սրտիս բարախել ոչ  
միայն մեքենայական զարկով և հիմայ նայելով ձեզ վե-  
րայ, ես զարձեալ հասկանում եմ սէրը, վեշտը, լուսնեակ  
կիշելուան գեղեցկութիւնը և ալիքների ներդաշնակ շը-  
շունջը. . .

«Բայց վաղը ես նորից կ'ընկզմուեմ առաջուան հա-  
կակրանքիս մէջ և նորից կըտանեմ կնոջս անտեղի բար-  
կութիւնները՝ տանել նորա ետեից իւր ծածկոցը, ամպհո-  
վանին, հագցնել կօշիկները, տովորեցնել նորա բժամիս  
տղայի դասիրը, մոցնել հասարակութեան մէջ նորա տգեղ  
աղջկան և վազվացնելով նորա մօր յանձնարարութիւններով,  
որովհետեւ այդ ամբողջ ընկերութիւնը միշտ ինձ հետ է  
ապրում, աւելացնելով աւելի թօյն իմ կեանքիս. ես ապ-  
րում եմ մշտական կուլների, աղմուկների մէջ, որոնց  
մէջ քաւութեան նոխազի գեր եմ խաղում. խաղում իմ  
երբեմն աւելի յիմար գեր՝ եղջեւրատոր ամուսնու, որով-  
հետեւ կինս, չնայելով իւր քառասուն երկու տարեկան  
հասակին, շարունակում է ջահիլանալ և կոտրտուել իմ  
աչքիս առջեւ. զգիտիմ, յաջողութիւն գտե՞լ է նա իւր  
աշխատութեանց մէջ՝ յափշտակել ուրիշին, ինձ նման մի  
յիմարի, բայց նորան էլ չէ յաջողվում գրգռել իմ նա-  
խանձս, որ շատ զայրացնում է նորան. և այդ բոպէնե-  
րին, նա չէ քաշվում ամբակոծել ինձ, ինչ որ ձեռքն  
ընկնի, սկսած իւր կօշիկներից». . .

Դոլինը ասում էր այդ բոլորը հանդարտ և անտար-  
բեր, կարծես թէ խօսում էր մի օտարի մասին և միւնոյն  
ժամանակ կարծես թէ այդ ծսնը խոստովանանքը իւր  
սրտովն էր, կարծես թէ նորան ախորժելի էր ցցել սուր  
ասեղները իւր վերքերի մէջ:

Զինան նայում էր նորա զերայ լուռ, ամուր սեղ-  
մած ծնկների վերայ իւր փոքրիկ, գունատ ձեռները և  
ծանր շունչ էր քաշում:

Իսկ լուսինը, մեղմ լուսաւորում էր նոցա և համաց-  
կամաց խփվում էր ալիքը շոգենաւի եզերքներին. . .

— Դուք տեսնում էք, ի՞նչպէս ես սարսափելի պա-  
տժուած եմ իմ բոպէական թուլութեանս համար, — խօ-  
սեց նա բարձրացնելով իւր աչքերը Զինայի վերայ, որոնց  
մէջ երեսում էր այնքան վիշտ, որ Զինան անգիտակցա-  
բար ձեռքը մեկնեց նորան, ասելով.

— Խեղճ . . .

Նա ընկաւ այդ ձեռների վերայ և յանկարծ հեկե-  
կաց. Զինան չհեռացրեց ձեռները, միայն տւելի սփրոթ-  
նեց և ցնցուեց ջղային կերպով:

Եյդ «խեղճ» խօսքի մէջ նա գտաւ իւր ներումը և  
այն ցաւակցութիւնը, որ Զինան ներշնչեց նորան. Հիմայ  
նոցա մէջ էլ չկար թիւրիմացութիւն. նոցա միայնում էր  
հիմայ միայն տաննջանքը, որին օգնելու հնար չկար. նոքա  
գիտէին, որ յաւիտեան կորած են միմեանց համար. և շտա-  
պում էին խօսել մինչև բաժանուելը, ինչպէս մահուան  
դատապարտեալը պատժի օրը, շտապումէ թափել իւրայ-  
նոց առաջ բոլորը, ինչ որ հաւաքուել է նորա սրտի վերայ:

Նոքա այդպէս էլ խօսեցին տմբողջ գիշերը, մոռա-  
նալով քունը, մոռանալով առ ժամանակ ամեն բանի  
մասին, ինչ որ վաղը նորից պէտք է բաժանէր նոցա:

Երկինքը սկսուեց վառուել արշալոյսով, որ գեռ  
չէր կարողացել բոլորովին բաժանուել լուսնի փայլից.  
վաղ առաւատուց մառախուղի միջից սկսեց նկատուել  
Թէօդօսիայի պիր. շոգենաւը շուտով կանգնեց:

Տխուր իրականութիւնը զարթեցրեց Թօլինին սքան-  
չելի՛ երազե վերջին ժամերից. Ճանապարհորդները, որոնք  
պէտք է Թէօդօսիա իջնէին, քնուա երեսներով և զզգը-  
ուած մազերով սկսեցին դուրս գալ իրենց օթեակներից:

— Պօլ, ո՞րտեղ ես, մենք ոչինչ չենք դարսել — լսուեց  
ներքեկից մի խիստ կանացի ձայն:

Դոլինը յնցուեց և շուտ վեր կացաւ։

—Մնաք բարեւ... ցտեսութիւնն... —ասաց նա, շտապ սեղմելով փոքրիկ ձեռքը, որ սաստիկ դողում էր և վազեց ներքեւ։

Զինան մնաց նստարանի վերայ և նստեց անշարժ, ձգելով հայեացք կանաչ ալիքի վերայ, որ խաղում էր շոգենաւի տակ։

Նա վախենում էր նայել վախենում էր հանդիպել ատելի կնկայ հայեացքին, որ խլել էր իւր բաղդը, խոցոտել էր իւր սիրտը. նորա ետեկից ման էին գալիս, խրփում էին, խօսում էին, բայց նա նստած էր անշարժ, ինչպէս քարացած. միայն, երբ ոտքերի քայլերը բոլորովին հանդարտուեցին և պատշաճի վերայ զարձեալ տիրեց առաջուան լոռութիւնը, Զինան թողեց իւր տեղը և հասնելով մինչև օթեակը, ընկատ անկողնու վերայ և սաստիկ լաց եղաւ, կոխելով իւր գունատ ձակատը բարձի մէջ։

ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ.



## ՄՐԲԱՉԱՆ ՈՒՂԻՆ—ԱԿԵՏԵԾՅ ԵՐԿԻՐԸ.

Դեռ շատ կըսպասենք, դեռ շատ կըմնանք աւետեաց  
երկրին  
Եւ մեր հաւատոր օրէցօր կ'անձի՝ կըլինի զօրադին,  
Եւ մեր եռանդը խիստ կ'ուժեղանայ դէպքերի առաջ՝—  
Մենք էլ այդ յուսով միշտ լաւը տեսած կ'արթնենք  
անկասկած... .

Դեռ շատ կըսպասենք... Հեռո՛ւ է և շատ այն սրբավայրը,  
իսկ մենք ոտներս գեռ նոր ենք զրել նորա ձանապարհը,  
Ցանկալի՝ ուղի, — ո՞լ զիտէ ընչի մեզ չանդիապեցնէ,  
Ո՞վ զիտէ ամբողջ սերունդներ այնտեղ մահ գտնեն գուցէ:

Բայց մենք չենք տեսնում բօթաբեր մահը սրբազան ուղու՝  
Ո՞ղքան էլ երկար, ո՞ղքան էլ զժուար ու խիստ փշալի—  
Նա սուրբ է. նա մեզ պիտի հասյնէ աւետեաց երկրին  
Եւ մենք լիութեամբ առաջ ենք գնում սրտով խնդագին:

Մենք հաւատում ենք—տա՛ր. մի՞թէ կեանք չէ կեանքի  
սկիզբ,

Բայց շատե՞ն արդեօք կարող են ապրել կեանքի ողջ  
գիծը,—

Դեռ շատ կըսպասենք, դեռ շատ կըմնանք աւետեաց երկրին,  
Տա՛ր մեզ դու ուղի, թէկուզ սկզբում մահուան  
հանդիապենք...

## ՀԱՅԻ ՈՒԽԻԿ.

Կապուտակ ծին նստել եմ,  
Արագին մօտեցել եմ,  
Սրազ, ինձի ծամբայ տուր,—  
Մասիսին կարօտել եմ...  
ԺՈՂՈՎՐԴ.

Ա.

Սարերի միջին, ձորերի միջին,  
Աղաս հայ աղան մեծացաւ, ծաղկաւ,  
Նորա ջղերը—նորա կոշտ մարմին  
Կաղնի ծառի պէս ելաւ ամրացաւ:

«Ինձ նժոյդ տուէք, կանչեց հայ սողան,  
Սալերի զրկում էլ չեմ մնալու,  
Կըճեղքեմ սար ձոր,—այստեղից կ'երթամ,  
Սրտումն դարդ կայ... հոտ կայ արիւնի»...

Նստում է աղան, մթնշաղն առել,  
Լուսնեակն այն կողմից շողն է սարածել.  
Երդում է աղան,—ողջ սարեր թնդում,  
Արձագանք տալիս,—արձագանքն առնում:

Այսպէս է երգում, այսպէս է կանչում.  
«Աղքէրնե՞ր, ձեր գարդն իմ գարդս մէկ է.  
Ես գաղար շունիմ իմ հօրըս հողում—  
Գամ տեսնեմ ուժ կոյ ձեռումն իրկաթէ»:

Սարերի միջին, ձորերի միջին  
 Քամին է խաղում, լուսնեակը շողում,  
 Ազատ հայ տղան իւր գարդուտ հոգին  
 Այնտեղ է շնչում՝ այնտեղ տարածում...

III.

Աղքատ տան առջև՝ սարի թիկունքում  
 Նորա քոյրերը—սիրուն գեղջկուհիք,  
 Անուշ, մեղմ ձայնով արցունք են թափում—  
 Նորա լալիս են այնպէս գեղեցիկ.

«Աղբէ՛ր, այ աղբէր, զարիալ<sup>1)</sup> մի՛ երթար,  
 Դու անուշ աղբէր, դու մել՛ թանկ աղբէր» ...  
 Բայց հայ տղային այդ ձայնը չի դար,  
 Նա իրն է երգում շարժ տալով ձորել:

«Աղբէ՛ր, այ աղբէր, քո ձէնիդ սովրանք,  
 Մեր սարում մեծցար, մեր մէջը ծաղկար,  
 Մեր դարզը շատ է, զարիալ մի՛ երթար,  
 Քո ձէնիդ սովրանք, մեր սարում մեծցար» ...

Զորեր շարժ տալով, իւր երգն երգելով—  
 Ձեր ուզում լսել իւր քոյրերի ձայն,  
 Հայոց լեռներում լուսնեակ զիշերով  
 Գնում է տղան, գնում օգնութեան. . .

Օդեսա. 1889, հոկտեմբ.

<sup>1)</sup> Ղարիպութիւն:

## ՀԱՄԲՐԵԿՅԱՑ ԽՈԽՄԲՔ ԵՒ ԱՅՈՒՂՔ.

Հով արէք, սարնը ջան, հով արէք,  
իմ գարդիս դարձան արէք,  
Հով արէք, սարնը ջան, հով արէք,  
Դուշմանիս խապար տարէք...  
ԺՈՂՈՎՐԴԻ.

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԽՈԽՄԲՔ (աշուղին).

ԱՌ չունգուրդի, զարկ թելերին, սլար ածէ՛,  
ՄԵՆՔ ձեռներս բռնած ուրախ խաղ կ'անենք,  
Ցաւն ու վիշտը թող հեռանան, — մեզ պէտք չէ՛.  
Դեռ շատ բաներ կատարելու պէտիք ունենք:

ԱՌ, այ աղբէր, ժողովրդի բան ածէ՛,  
Նորա երգը, նորա խաղը սիրում ենք,  
Քո չունգուրդ մեր սլոտերը բաց կ'անէ —  
ՄԵՆՔ ձեռներս բռնած անհոգ խաղ կ'անենք:

Մարդու սիրուը անուշ ձայներ է սիրում,  
Մարդու սիրուը ժողովրդի խօսք կուզէ,  
Մեր սրտերում, աղբէ՛ր, չկայ խնդութիւն,  
Ուրախ երգեր որ չենք լսել՝ վաղուց է:

Առ չունդուլս, զարկ թելերին, սար ածէ՛,  
Թո՞ղ սրտերս մի քիչ խնդայ՝ օր տեսնենք,  
Հասարամի լաւ գործերից գու երգէ՛ —  
Որ սրտերս կրակ լցուի — ուժ առնենք:

ԱՇՈՒԽԱՀ (երգում է).

Բարձր ձիւնոտ սար կայ դաշտում,  
Դաշտի վերայ — սիրուն աղջեկ.  
Երբ լուսնեակը ծագու սարում  
Քաջը հեծաւ ձին գեղեցիկ.  
Ափսոս աչեր՝ ինչպէս երկինք,  
Ափսոս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Քշեց եկաւ դաշտին հասաւ,  
Հայ աղջըկան թամքին առաւ.  
Աստղու գիշեր՝ ինչպէս աչեր,  
Անուշ հովեր — կուսի մազեր.  
Ափսոս աչեր՝ ինչպէս երկինք,  
Ափսոս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Բարձր ձիւնոտ սար կայ դաշտում,  
Դաշտի վերայ — սիրուն աղջեկ,  
Առաւօտեան մայրն է դարթնում —  
Զկայ իրան սիրուն Աստղիկ. . .  
Ափսոս աչեր՝ ինչպէս երկինք,  
Ափսոս հասակ՝ ինչպէս եղնիկ:

---

Փախցրեց քաջը — քուրզը լեռնական  
Տարաւ. իր զիրկը հայոց աղջըկան.  
Երդիքը այսպէս հնչեց չունդուրով —  
Տինուր, վշտակը հին գեղղեղներով:

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԽՈՒՄԲԲԸ (աշուղին).

Մենք նոր երգ կուղենք ուրախ ձայներով,  
Հին շատ ենք լսել,—ախոնոր է, լացով.  
Այ աղբէր, նորից մեզ մի բան երգէ,  
Չունգուրիդ լսրը նոր բանի լարէ.  
Հին շատ ենք լսել,—ախոնոր է, լացով.  
Նոր երգէ շուտով:

ԱՇՈՒՂԸ (Երգում է).

Երկու եղբայր կային զիւղում,  
Տատրակի պէս սիրուն էին,  
Եղբօր արև, եղբօր արիւն,  
Սուրբ էր ինչպէս ուխտատեղին.  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ,  
Աղբէրն ընկաւ—պարզեց երկինք:

Նրանցից մեկն անցաւ սարից,  
Քուրփը թրով կարմիր ներկեց.—  
Զիմացաւ որ միւսի սիրտը  
Վառօղից էլ շուտ բռնկեց.  
Կարմիր արիւն—կարմիլ ծաղիկ,  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ:

Կրակ կտրաւ, քամի դարձաւ,  
Զիուն թռաւ, ելաւ եկաւ,  
Եղբօր տեղակ չորսին զարկեց,  
Քաջքի նման սարսափ զցեց.  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ,  
Աղբէրն ընկաւ—պարզեց երկինք:

Այն օրուանից էլ սիրտ չառաւ  
հսկամ մօա դալ «Հայ-քրիստոնին»,  
Եղբօր սէրը սուրբ խունկ դառաւ,  
Անուշ հոտով ելաւ երկինք:

Դէ՛հ, աղբէրնե՛ր, ձեռք բռնեցէ՛ք,  
Ոտք վերցուցէ՛ք, սլար խաղացէ՛ք,  
Թող տիրութիւնն անցնի ձեզնից—  
Աղբէրն ընկաւ—պարզեց երկինք.  
Կարմիր արիւն—կարմիր ծաղիկ,  
Արիւն թափառ—բուսաւ ծաղիկ:

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԽՈՒՄԲԲԼ (աշուղն).

Լաւ է երգդ, բայց դու էլ նորը երգէ՛,  
Լաւ է խաղդ, աղբէ՛ր, օրուայ բան երգէ՛:

ԱՇՈՒՂԸ (Երգում է).

Կալի միջում կոյ կաթնատուն,  
Կաթնատնում զով է, արձակ,  
Խնոցում մէջ հարում է «Հում»  
Աղջիկ—Թագուն նստած սեան տակ:

Նա նստել է բարձր թմբին  
Ու ձեռքերով ամուր բռնել.  
Մէջքն էլ տուած փայտէ սիւնին—  
Խնոցու վերայ երկու ոտքեր:

Նա շարժում է՝ օրօր բերում,  
Եր ոտքերով խնոցու «Հում»,  
Հետն էլ երդ է ասում կամաց—  
Այդ երդ թագունն ինքն է հիւսած:

ԹԱԳՈՒԻՆԻ ԵՐԳԸ<sup>1)</sup>.

«Բարձր սարին հաւք չկ հասնում,  
Միայն անուշ հովք է փչում,  
Իսկ այն բարձրում՝ աստղերու հետ  
Լուսաւորչայ վառ է կանթեղ<sup>2)</sup>».

Մատաղ հոգուդ—սրտոտ աղբէ՛ր,  
Այն կանթեղը քեզ թուր ու թև:

«Սարի կրծքում լիքն են ակներ,  
Այդ ակները—աղբիւրներն են,  
Ակն ու աղբիւր, իմ քաղցր աղբէր,  
Վափագ սրտիս շողն ու ցօղ են.  
Երնէ՛կ, աղբէ՛ր, քեզ սիրողին,  
Ե՞րբ կըհասնես քո մուրաղին:

«Հարաւ կողմից ամակ է գալիս,  
Ամակ է գալիս,—տերեւ գողում,  
Խփուելով է աղանգակ ծաղիկն,  
Աքաղաղն էլ շատ է կանչում<sup>3)</sup>.  
Անձրեւ կուգայ—ոսկի կուգայ,  
Իմ աղբէրը ուր է, չկայ:

«Լուսոյ աստղը հէնց դուրս եկաւ,  
Սրտոտ տղան ալ ձին հեծաւ.  
Զարկեց, քաշեց.—Փախաւ տաք ձին,  
Կըուուի գնաց կէս զիշերին.  
Երնէ՛կ, աղբէ՛ր, քեզ սիրողին,  
Ե՞րբ կըհասնես քո մուրաղին:

1) Տես «Արաքս»: 2) Աւանդութիւն կայ՝ որ Լուսաւորչայ կանթեղը Արագածի վերայ կախած է; 3) Ժողովրդի հասկացողութեամբ ալս երևոյթները գուշակում են անձրւ:

«Խապար չկայ հեռու տեղից,  
 Քաջի սրտում դադար չկայ,  
 Վաղուց է որ կտրայ քնից,  
 Մեր թշնամուց հանգիստ չկայ.  
 Վաղուց է որ կտրայ քնից,  
 Խապար չկայ հեռու տեղից»...

Թագունն այս էր երգում կամաց,  
 Երգն էր քաջի համար հիւսած.  
 Օդութեան էր գնացել նա՝  
 Սրտոս աղան—քաջը անահ,  
 Այսպէս երգեց եղօր համար,  
 Ու գնացել էր կռուի համար. . .

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԽՈՒՄԲԻ (աշուղին).

Մէկ էլ երգէ՛, երդի՛չ եղբայր,  
 Քո ասածդդ սիրեցինք,  
 Շուտով կանցնի նեղութեան զար,—  
 Բացուելու է պարզ երկինք.  
 Մէկ էլ երգէ՛, երդի՛չ եղբայր,  
 Քո ասածդդ սիրեցինք:

ԱՇՈՒԽՂԻ (Երգում է).

Դուրսը քամին լայով, ձիչով  
 Գիշերուայ մէջ ձայն է հանում,  
 Խրճիթի մէջ, օրօցքի քով  
 Մայրը որդուն երգ է ասում. . .

Բոլորն այնաւել քունն են մուել,  
 Դեռ ձրաղը վայլիայլում է,

Իսկ ծղբիթը երդը կցել—  
Մեծ կատուն էլ մրմռում է. . .

«Քնի՛ր, որդի՛ս, անուշ որդի՛ս,  
Մայրը որդուն երդ է ասում,  
Ես զաղըել եմ օրուայ գործից—  
Նատ բան ունեմ առաւօտուն. . .

«Անուշ ոսկէ երազները  
Քել համար միշտ չեն լինելու,  
Հրեշտակների սուրբ երգերը  
Միայն հիմնայ ես լսելու. . .

«Որդուս համար օրօր ասեմ—  
Քունը իջնի պարզ աւերուն,  
Հրեշտակների դասն հրեղէն  
Գան պահպաննն մատաղ հոգուն. . .

«Արձակ զաշտում ոռնում է գայլ  
Անօթի՞ է, ի՞նչ է ուզում.  
Գայլ զու կորի՛ր, որդուս չեմ տալ,  
Լաց չել լինիլ կըմոնի քուն:

«Քնի՛ր, որդի՛ս, անուշ որդի՛ս,  
Աստղել վաղուց դուրս են եկել,  
Քամին լոեց աղատ երգեց,  
Սղատ երդը քաջն է կցել. . .

«Ո՞ւր աեղ էիր, այ քաջ տղայ,  
Երկինք, երկիր մայիլ են քեղ.  
Երնէ՛կ մօրդ, սրտոս տղայ,  
Եւչուն չլինէր որդիս էլ մեծ. . .

«Մօր սիրան ինչպէս խորունկ ծով է,—  
Մարդարիտ կայ—անխախտ հաւատ.  
Քաջի գէմքը արևով է՝  
Ուզի կ'ելնես կեանքում ազատ. . .

«Քնի՛ր, որդիս, անո՞ւշ որդիս,  
Մայրը որովուն երգ է ասում,  
Քամին լռեց քաջի ձայնից,—  
Յաղթող քաջը տուն է գառնում» . . .

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԽՈՒՄԲԻԼ (աշուղին).

Այսուհետև շուտ շուտ երգէ՛,  
Մեզ խնդացուց քո երգը,  
Նոր եղածից, լաւից երգէ,  
Որ փարատուի մեր վէրքը:

Անուշ ձայնը մարդու հոգին վառում է,  
Երբ այդ ձայնը ուրախ բանից ասում է.  
Մենք տիսուր երգ շատ ենք լսել մեր կեանքում,  
Տիրութիւնն էլ սահման ունի աշխարհում:

Զարկ չունգուրին, երգի՛չ եղբայր,  
Թող մուանանք ցաւ ու կիրք,  
Շուտով կ'անցնի նեղութեան դար,  
Բայուելու է պարզ երկինք.  
Մէկ էլ երգէ՛, երգի՛չ եղբայր,  
Քո ասածդ սիրեցինք. . .

1890. Նոյեմբեր, Մոսկուա.

## ԺԱՂԱՎԵՐԻՆ

ՄԵՆՔ առաջ գնանք, մենք նորան խնդրենք, նորանն է հողը,  
ՄԵՆՔ նորան տանենք. «Եղբայր, դու ես մեր ուժն ու կողը,  
Առանց քեզ չկայ երկրի զօրութիւնն յաջողութեան հետ,  
իսկ մենք ցոյց կուտանք քեզ մի ճանապարհ, որ շարժուես  
այնտեղ:

«Զայնիդ բարբառին արձագանք կը լինենք, մենք քեզ ձայն  
կուտանք,  
Մեր ձայնին դու էլ ձայն տուր ու եղեց զօրեղ  
արձագանք,—  
Չլինէր ծովը՝ երկնի պատկերը երկրում չէր լինի,  
իսկ առանց երկինք ծովի պատկերը խիստ կը մռայլի:

«Լսում ենք երդդ, դու առանց ձնշուիլ բարձրացնւր երդդ,  
ՄԵՆՔ քո այդ երդից կը սթափուենք, կը զգանիք իսկութեամբ  
կեանքդ,  
Ո՛հ, կ'անցնի այնժամ տխուր հնչեւնքը իրական երդիդ,  
Կ'անցնի փորձանքը՝ որ այդպէս մահով կանգնել է  
Ճամբիդ» . . .

## ԱԻԽՏԱՐԵՐ.

Թո՞ղ շղթաների զօդանջը լսուի—  
Խրոխտ հրաման գայ  
Ու սոսկ բանտերի դուռը ճռնչայ,  
Կասկածանքն ածի.—

Մենք չենք երկնչում,—երկաթէ սրտով  
Առաջ կըքայլենք դէպի սրբավայր,  
Մենք այդ չենք լսում, վեհ ու անխռով  
Մեր ճամբան կ'երթանք՝ անկանդ, անդաղար:

Թո՞ղ մեզ գանգահար դէպի դատ կանչեն  
Ու խոստումներ տան,  
Սրբազան կայծը տրորել ջանան,  
Մեր միտքը ծաղրեն.—  
Մենք չենք հաւատում,—մեր ճամբան բռնած,  
Ինչպէս եկել ենք, նոյնպէս կըքայլենք—  
Ծոմ, պահք, նեղութիւն աչքերս առած  
Կ'երթանք հաւատով՝ սուրբ տեղին հասնենք...

Յ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ.

1891. յունուար, Մոսկուա.



# ՄԻ ԵՐԵՍ ՀԱՅՈՑ ՀԱՅԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

(Աեպածև արձանագրութիւնների հիման վերաբ).

Ա.

Հայոց ազգը, նայելով վերջին պատմական և համեմատական յեղուագիտութեան հետաղօտութիւնների հետեանքներին, պատմանում է Կովկասեան ցեղի հնդիկ-Եւրոպական բաժանմունքին<sup>1)</sup>. Նորա գոյութեան սկիզբը կորչում է ամենախոր հնութեան մէջ, այնպէս որ, կարելի է ասել, առանց ախալուելու, որ Հայոց ազգը աշխարհիս ամենահին ազգերից լիւն է. Նորա սկիզբն այնքան հին է, որ գեուար է, և մինչև անգամ հաւանականապէս ևս մինչև ցայսօր գեռ որոշուած չէ այն ժամանակամիջոցը, երբ նա առաջին անգամ հանդէս է գուրս գալիս պատմական ասպարիզում և գործում է, իբրև պատմական ազգութիւն. Հայերի գոյութեան պատմական ասպարիզում, մեզ հասած պատմական տեղեկութիւններին նայելով, Հայերին օտար Արմեն անունով միայն համարվում է 2490 տարի, որովհետև այդ անունը յիշվում է Դարեհ Վշնասպի այն սեպածև արձանագրութեան մէջ, որ գրուած է վեց դար Քրիստոսից առաջ<sup>2)</sup>. բայց յայտնի է, որ Հայերը աւելի հին են, որովհետև նոցա անունը գտնվում է և Ասորեստանի Քրիստոսից ինը և տաներկու դար առաջ գտնուած

1) Այսուհետու կառավարութիւնը առաջանաւ է Հայոց պատմական ամսանական առաջանաւութիւնը, որի մէջ յիշվում է Հայութիւնը և Հայաստանի անունը, կոչվում է «Բիսումունեան», որովհետև գրուած է Բիսումուն կոչուած սարի վերայ: Բիսումուն սարը համանուն գիւղի հետ միասին գտնվում է Պարսկաստանի Քիբրանշան քաղաքից ծգուող համանուն ծանապարհի վերայ:

2) Դարեհ Վշնասպի թեսուազիր արձանագրութիւնը, որի մէջ յիշվում է Հայութիւնը և Հայաստանի անունը, կոչվում է «Բիսումունեան», որովհետև գրուած է Բիսումուն կոչուած սարի վերայ: Բիսումուն սարը համանուն գիւղի հետ միասին գտնվում է Պարսկաստանի Քիբրանշան քաղաքից ծգուող համանուն ծանապարհի վերայ:

արձանագրութիւնների, մէջ<sup>3)</sup>): Միտ դնելով Ասորեստանի այդ բևեռագիր արձանագրութիւններին, որոնք այժմ արդէն ճըշտուած, կարդացուած և բրեանց բովանդակութեամբ յայտնի են բոլոր լուսաւորեալ աշխարհին—, և Հայաստանի գոյնպիսի բևեռագիր արձանագրութիւնների մօտաւոր և հաւանական բովանդակութեան, որովհետև նոքա գեռ մինչև ցայսօր ճշտութեամբ կարդացուած չեն<sup>4)</sup>), Հայաստանը իւր հնագոյն պատմական շրջանում չեր կազմում մի ամբողջ, կազմակերպուած տէրութիւն. Նա, ինչպէս և ուրիշ շատ հին ազգերի երկրներ իւրեանց նախնական ժամանակներում, բաժանվում էր շատ մանր մասերի, որոնցից իւրաքանչիւրը կազմում էր մի առանձին իշխանութիւն և կառավարվում էր առանձին իշխանով, որ կոչվում էր, հաւանական է ասել նախարար. Հնագոյն Հայաստանի այդ բաժան բաժան մասերից կամ իշխանութիւններից յայտնի էին իւրեանց նշանակութեամբ վեցը, որոնք, նայելով այն մեծ պատմական գերին, որ խաղում էին նոքա Հայաստանում, կոչվում էին և թագաւորութիւններ, յայտնի բան է, փոքրիկ թագաւորութիւններ, և նոցա իշխանները—թագաւորներ. Այդ վեց մեծ իշխանութիւնները կամ թագաւորութիւնները սոքա էին՝ 1) Նայիրի կամ Նապրի, որ գտնվում էր Տիգրիս և Եփրատէս գետերի ակունքի մէջ տեղը, 2) Մաննա, որ գտնվում էր Վանայ լճի ափում, 3) Մուսասիր, որ գտնվում էր Վանայ լճից գետի հիւսիս, 4) Մելիդ, որի տեղը գեռ որոշուած չէ, 5) Մելղիս, որ գտնվում էր այժմուայ Կարնոյ գաւառի տեղը և, վերջապէս, 6) Ուրաքս գետերի մէջ տեղը, այժմուայ Այրարատում<sup>5)</sup>):

<sup>3)</sup> «Օսերք истории древней армянской литературы» Патканова. (Всеобщая история литературы Корсака. Томъ пер., часть первая.)

<sup>4)</sup> Հայաստանում մինչև ցայսօր գտնուած սեպածե արձանագրութիւնների թիւը համարվում է 60, որոնցից մի քանիսի գտնելու պատիւը պատկանում է Մեսրոպ արքեպիսկոպոս Մմբատեանին: Արձանագրութիւններից նշանաւորները կոչվում են «Կանի արձանագրութիւններ», որովհետև գտնվում են Կանի շրջակայքի ապառաժների վերալ:

<sup>5)</sup> «Accurzia prii Саркунидах». (Древняя история востока В. А. Зайцева).

Բ.

Հնագոյն հայստանի վերսպիշեալ թագաւորութիւնների պատմական կեանքից մեր ձեռքը ոչինչ չէ հասել. ինչ որ էլ հասել է, այդ ևս հայկական աղբերներից չէ, այլ Ասորեստանցւոց, որոնց թագաւորները, ինքեանք գործող անձն լինելով պէտք է կարծել որ ամենայն ինչ արձանագրել են ի նպաստ իւրեանց։ Հայոց գործերի վերաբերեալ Ասորեստանի արձանագրութիւնները մեզ ներկայացնում են մի ամբողջ պատկեր արտաքին թշնամական յարաբերութեան հայոց փոքր և Ասորեստանցւոց մեծ և աշխարհակալ թագաւորների մէջ, որից առաջ են եկել այն երկարատև և արիւնահեղ պատերազմները, որոնք, սկսուելով Ասորեստանի պետութեան առաջին շրջանից, շարունակվում են մինչև վերջը, այսինքն մինչև Ասորեստանի անկումն. Պատերազմի սկզբնապատճուր, յայտնի բան է, հայերը չեն եղել այլ Ասորեստանցիք, որովհետև գժուար է երկեակայել, որ մի այնպիսի փոքր երկիր բաժան-բաժան իշխանութիւններով, ինչպիսին հայստանն է եղել այդ ժամանակ, համարձակուէր ինքնագլուխ պատերազմ սկսել աշխարհակալ Ասորեստանի հետ, նոցա պատերազմների պատճառը դիմաւորապէս պէտք է որոնել այն աշխարհակալական ձգտումների մէջ, որ ունեցել և աշխատել են իրագործել հին ժամանակի բոլոր մեծամեծ աղքերը. Պատմութեան անփոփոխ օրէնքների հիման վերայ ամենահին ժամանակներից մեծամեծ աղքերը, նպաստուելով այս կամ այն հանգամանքից, սկսում են զօրանալ հասնում են ամենամեծ կարողութեան, տիրապետում և իշխում են բոլորի վերայ, իսկ յետոյ փոքր առ փոքր թուլանալով, ընկնում են, տեղի տալով մի ուրիշին, որ անցնելով նոյն իսկ տիրապետութեան շրջանները, ինչպէս և առաջինը, տեղի է տալիս մի երրորդ աղքի տիրապետութեան. Այսպէս ահա անընդհատ կերպով պատմական ասպարէզ են գուրս գալիս աղքերը, հզօրանում են, ընկնում են և նորից հզօրանում են և շարունակում են ապրել աշխարհիս երեսին, մէկդմէկու փոխանակելով. հայստանի և Ասորեստանի մէջ եղած պատերազմների ժամանակը այն միջոցն է, երբ Ասորեստանցիք, բռնելով հզօր Եղիպտացիների տեղը, հղորացել էին և, առլցուած աշխարհակալական ձգտումներով աշխատում էին տարածել իւրեանց իշխա-

Նութիւնը բոլոր հին աշխարհի վերայ<sup>6)</sup>). Ասորեստանի այդ աշխարհական ձգտման ոյժը առաջին անգամ, յայտնի բան է, պէտք է զգային այն երկրները, որոնք իւրեանց աշխարհագրական դիրքով մօտ էին հզօրացած տէրութեան, սահմանակից էին նորա երկրին։ Հայաստանը, գտնուելով Ասորեստանի հիւսիսային սահմանների վերայ և նորանից մի որ և է դժուարամատցյ բնական սահմաններով չբաժանուելով, առաջնընը եղաւ, որ ենթարկուեցաւ աշխարհակալների զէնքի զօրութեան, Պատերազմը տևեց, ինչպէս վերև ասացինք, շատ երկար և մղուեցաւ վերին աստիճանի յամառութեամբ, և թէպէտ Հայերը, չունենալով այն ոյժը, որ կարողանային այնպիսի տէրութեան ընդդիմանալ և, նամանաւանդ, պաշտպանուելով ահագին թշնամու դէմ՝ բաժան-բաժան ոյժերով վերջ ի վերջը ստիպուած եղան խոնարհել և ընդունել բոնակալների լուծը, սակայն Ասորեստանցիք երբէք չկարողացան զլխովին նուաճել Հայոց երկիրը և տիրել Հայաստանին, Հայերը աշխարհակալների լուծը ընդունելուց յետոյ չեն դադարում պատերազմելուց, յաճախակի ապստամբելով և փորձ փորձելով ձգել իւրեանց վերայից իշխողների անարդ լուծը, իշխողները ևս, դրդուած Հայերի այդպիսի յամառութիւնից, վերին աստիճանի անագործն էին վարփում նոցա հետ, երբ ընկճում էին նոցա յաճախակի ապստամբութիւնները։ Զէր մնում նեղութիւն, տանջանք, որ նոքա չթափէին խեղճ նուաճուածների զլխին. նոքա քանդում էին քաղաքները, այրում էին բնակարանները, գերում էին բնակիչներին, ահագին հարկերով ծանրաբեռնում էին ժողովուրդը, սպանում, զլխառում և խեղբամահ էին անում իշխաններին և թագաւորներին, կողոպտում էին գանձերը, սրբազն անօթները և մինչև անգամ աստուածների արձանները, բայց չնայելով այդ բոլոր տանջանքներին և շարշարանքներին, Հայերի ապստամբութիւնները չեին վերջանում. բաւական էր միայն, որ իշխողները հետանային Հայաստանից, դարձեալ գրգռովում էր ալատութեան ցանկութիւնը Հայերի սրտում, դարձեալ բորբոքվում էր ապստամբութեան կրակը Հայաստանում։ Պատե-

<sup>6)</sup> Ասորեստանի հզօրանալու ժամանակամիջոցը համարվում է Թուկամի-Ծբալասար Խազարի ժամանակը, որ Ասուր-Ոիսիսի կոչուած Թագաւորի որդին էր։ Պերօս Accurijskoe պարտեօ. (Древняя история В. А. Зайцева).

բազմը հայերի և Ասորեստանցիների մէջ, նամանաւանդ խիստ և յամառ կերպարանք է ստանում, երբոր Ասորեստանի թագաւոր-ները, կործանելով մէկզմէկու յետևից նապի, Մաննա, Մուսա-սիր և միւս հայկական իշխանութիւնները, յարձակվում են նւ-րարտի թագաւորութեան վերայ, որ, ինչպէս երկում է, հայկա-կան բոլոր իշխանութիւններից ամենամեծը և ամենահզօրն է եղել: Սաղմանասար Դ թագաւորը (857—822) առաջինն է լինում, որ, սկսելով պատերազմ Ուրարտացւոց հետ, անցնում է թշնամու ասհմանը, բայց չկարողանալով նուաճել նոցա, վերադառնում է ունայն: Սաղմանասար Դ-ի սկսածը, առանց մի որ և է շօշափե-լի օգտի, շարունակում է Սաղմանասար Ե-ը (780—771) թուկ-լամ-Աբրաղասսար Բ-ը (745—721), հետեւ լով իւր նախորդների օրինակին, նոյնպէս քանից անգամ արշաւանք է գործում Ու-րարտացւոց թագաւորի վերայ, բայց պատահելով նոյն անյաջո-ղութիւններին, որոնց պատահել էին երկու Սաղմանասարները, նոյնպէս չէ կարողանում մի վճռողական հարուած տալ հայերին և հնազանդեցնել Ուրարտին իւր իշխանութեան: Սարգոն թա-գաւորը (721—704), իմանալով իւր նախորդների անյաջուղութեան մասին և տեսնելով Ուրարտի յամառութիւնը, վճռում է ամե-նայն ձեռքից եկած միջոցները գործ գնելով վերջ գնել և այդ վերջին հայոց իշխանութեան գյոււթեան, որ իւր փոքրիկ ոյժե-րով այնքան ժամանակ գէմ գնելով Ասորեստանի աշեղ զօրու-թեան, կարողացել էր մինչեւ այդ ժամանակ պահպանել իւր անկախ գրութիւնը: Սակայն Սարգոնը իւր ցանկութեան ու դի-տասորութեան իրագործման արգելաւիթ և արժանաւոր հակառա-կորդ իւրեան գտնում է Ուրարտի թագաւոր Ուրսային, որ, մի քաջազն, եռանդուն և հմուտ մարդ լինելով շատ գեղեցիկ հա-կացել էր, որ Ուրարտին միայնակ, իւր փոքր ոյժերով չէ կարող երկար դիմանալ Ասորեստանի հզօր հրոսակներին, և առաջ թէ յետոյ պէտք է ընկնի. նա հասկանում էր հայաստանի թուլու-թեան պատճառը, որ, ինչպէս վերն յիշեցնիք, կայանում էր նորա բաժան-բաժան եղած գրութեան մէջ, և աշխատում էր ամենայն տեսակ այդ վնասակար և կորստարեր գրութեան առաջն առնել: Նա հրաւեր է ուղարկում հայկական բոլոր իշխանու-թիւններին և համոզում է որին սիրով որին ուժով գալ միա-նալ և միասին, իւր գրօշակի տակ, ընդհանուր ոյժերով կոռուն Սարգոնի հետ, որ, ինչպէս նոքա լաւ հասկացել էին, վճռել էր

վերջ գնել հայոց ազատութեան գործին, փոխանակելով նոցա ազատութիւնը զերութեան։ Կարճ ժամանակում կազմվում է մի հայկական դաշնակցութիւն Ուրարտի Ուրսա, Մաննայի Ուլսուն, Մելլիսի Բագադատի, Մուսասիրի Ուրսոնա և Վանի իշխանի մէջ, որոնք, իւրեանց գլուխ ընտրելով Ուրսային, միացնում են իւրեանց ոյժերը և, այդպիսով մի ընդհանուր զօրք կազմելով սկսում են կանոնաւոր կերպով պատերազմել Ասորեստանցւոց գէմ, որ շարունակվում է մինչև 714 թ. Ք. առաջ, երբոր Սարգսնը, ազատուելով ուրիշ պատերազմներից, իւր բոլոր զօրութեամբ մտնում է Հայաստան և բռնում է, վերջապէս, Ուրարտին։ Ուրսան, տեսնելով սիրելի գործի անյաջողութիւնը և իւր դառն ու երկար աշխատանքի ապարդինութիւնը, վհատում է և, լաւ համարելով մեռնել քան թէ տեսնել իւր երկրի գերութիւնը, ինքը սպանում է իւրեան դաշցյնի հարուածով։ Քաջ թագաւորի մահից յետոյ, նորա յաջորդ Արգեսար, թէև բաւականին յաջողութեամբ գեռ մի քանի ժամանակ ևս կարողանում է շարունակել պատերազմական գործողութիւնները, բայց վերջի վերջոյ նա ևս յաջմվում է և Հայաստանը ստիպուած է լինում գլուխ խոնարհեցնել Ասորեստանի առաջ, Սարգսնը, գըրգուուելով Հայոց երկարաւու պատերազմներից, վերին աստիճանի խոսութեամբ է վարփում յաղթուածների հետ. նա աւերում է Հայկական իշխանութիւնների քաղաքներից՝ 8 քաղաք, 55 բերդաքաղաք, 11 ամրոց. գերում է 4450 հոգի, որոնց մէջ 250 հոգին միայն թագաւորական ցեղից էին. կողոպտում է պալատների գտնձերը, տաճարների սրբազն անօթները. յափշտակում է Մուսասիրի Հալդի և Բագաբարդա կոչուած շաստուածների արձանները և մորթեղերծ է անում Մելլիսի Բագադատի թագաւորին։ Այդ ընդհանուր աւերմոնքի, սպանութեան և կոստրածքի մէջ միայն ազատում է Մաննայի Ուլսուն թագաւորը, որ, յաղթուելով, նախ փախչում, ամրանում է բարձր լեռների մէջ, իսկ յետոյ լսելով Սարգսնի յաղթութիւնների մասին, գալիս է և աղաւանքով ներումն իննզրելով բոնակալից, նորից հաստավում է իւր իշխանութեան մէջ, հարկ տալու պայմանով<sup>7)</sup>: Բայց սորանով չէ վերջանում Հայերի գիմազրութիւնը Ասորեստանցւոց,

<sup>7)</sup> «Ассирія при Саруїнідаж». Стр. 161—164. (Древня язистория еостока Запада.)

չէ վերջանում՝ մաքառումն մէկի համար անկախութիւն ձեռք  
բերելու նպատակով, միւսի — աշխարհակալութեան համար. Ճիշտ  
է, երկու դրացի ազգերի մէջ եղած թշնամական յարաբերու-  
թիւնը այլ ևս առաջուայ պէս խիստ և յամառ պատերազմնե-  
րով չէ արտայայտվում, բայց յաճախակի ապստամբութիւնները  
անընդհատ շարունակվում են չայաստանում մինչև Ասորեստանի  
ընկնիլը, միշտ անհանգիստ անելով, միշտ գրաւելով աշխարհա-  
կալների ուշադրութիւնը գէպի հիւսիս-արևելեան սահմանները:

Գ.

Պատմութիւնը, որ զիսաւորապէս զբաղվում է ազգերի ներքին  
և քաղաքական կեանքի ուսումնասիրութեամբ, նոցա յարաբերու-  
թեան և միմեանց վերայ ունեցած ազգեցութեան հետազոտու-  
թեամբ, երկու ազգերի յարաբերութեան մէջ համարեա միշտ  
նկատում է երկու կողմն՝ բացասական և դրական<sup>8)</sup>, Ազգերի  
յարաբերութեան բացասական կողմն համարվում է այն, որ  
ազգերից մէկը աշխատում է զրկել միւսին ազատութիւնից,  
հնազանգեցնելով նորան իւր կամքին և իշխելով նորա վերայ  
քաղաքականապէս. Յարաբերութեան այդ կողմն բացասական է,  
որովհետեւ գործում է ի վնաս միւսին, խլելով նորանից այն,  
ինչ որ սեփական է նորան, ինչ որ նուիրական է նորա համար,  
բացասելով նորա մէջ այն, ինչ որ ինքը առատութեամբ վայե-  
լում է. Դրական կողմն այն է, որ մէկ ազգ, ձեռք բերելով  
իշխանութիւն միւսի վերայ, ենթարկելով նորան իւր ազգեցու-  
թեան, տալիս է նորան իւր ունեցած քաղաքակրթութիւնը, մաս-

<sup>8)</sup> Հայաստանին տիրապետող ազգերից բացասական և դոս կան  
ազգեցութիւն ունեցել են Հայերի վերալ, բացի Ասորեստանցիներից,  
Պարսիկները, Բիւղանդացիր և Արաբացիր, իսկ միւս բազմաթիւ ազգերը  
և ցեղերը՝ Սելջուկները, Մոնղոլ-Թաթարները, Ուզբէկները, Կարա-  
կոյնլու և Ակկոյնլու օնուրքմէնները, Օսմանցիք և ուրիշները, որոնք  
մէկգմէկու յնտեհից արշաւել են Հայաստան և կարծ մէ երկար ժա-  
մանակամիջոց տիրել են նորան, ինքեանք ևս խուժաղուժ և բարբարոս  
լինելով, ունեցել են միայն բացասական ազգեցութիւն, տուել են նը-  
ւածուած Հայերին միայն իւրեանց վայրենի և քաղաքակրթութիւնից  
ուորկ յատկութիւնները:

նակից է անում նորան իւր բոլոր լաւ մտաւոր և բարոյական յատկութիւններին։ Պատմութեան այս տեսակէտից նայելով Ասորեստանցւոց և Հայերի յարաբերութեան վերայ, մենք կը տեսնենք, որ Ասորեստանցւոց յարաբերութիւնը դէպի Հայերը և Հայաստանը ունեցել է նցնպէս իւր բացասական և դրական կողմերն։ Ասորեստանը, զանազան պատմական հանգամանքներից հզօրանալով առցցվում է աշխարհակալական ձգտումներով և սկսում է տարածել իւր իշխանութիւնը դրացի և հեռաւոր երկների վերայ։ Հայաստանը, իրեւ դրացի երկիր, շատ կանուխ է ենթարկվում հզօր աշխարհակալի աւարառութեան։ սկսվում է մի երկարատև և յամառ պատերազմ, յաղթանակը մնում է հզօրի կողմը։ Հայերը զըկվում են անկախութիւնից և ազատ քաղաքական կեանքից, ընդունելով իւրեանց վերայ օտարի լուծը, թէեւ, ինչպէս վերն յիշեցինք, նոքա երբէք չեն զադարում աշխատել զէնքի զօրութեամբ յետ բերելու իւրեանց կորցրածը։ Այդ աշա Ասորեստանցւոց դէպի Հայերը ունեցած յարաբերութեան բացասական կողմն է, Ասորեստանը, հզօրանալով նիւթականապէս, հզօրանում է և բարոյապէս։ նա, ինչպէս զինուորական և պատերազմական ցժի կողմից, բունում է Եգիպտոսի տեղը, նոյնպէս և քաղաքակրթութեան կողմից փոխանակում է Փարաւոնների Հայրենիքը։ նորա մեջ զարգանում է արուեստն ու գիտութիւնը։ Նինուէն յաջողութեամբ սկսում է մրցել Մեմիփիսի և Թերլի հետ։ Հայերը, չնայելով այն թշնամական յարաբերութեան, որ նոքա ունէին դէպի Ասորեստանցիք, շուտով ենթարկվում է նոցա քաղաքակրթութեան ազգեցութեան, ընդունում են զարգացման բարձր աստիճանի հասած նինուէացւոց կրթութիւնը, որից և առաջ է գալիս այն հանգամանքը, որ Հայաստանում ևս այդ Խորին հնութեան ժամանակները սկիզբն է դրվում Հայերի կրթութեան գործին<sup>9)</sup>։ Նինուէի լեզուն գործնական է գառնում Հայոց թագաւորների և իշխանների պալատներում։ նոցա արքունեաց սարքն ու կարքը մտնում է Հայոց իշխանների ապարանքները, նոցա տէրութեան կազմակերպութեան ձեւն ընդհանրա-

<sup>9)</sup> Հայերի ընածին յատկութիւններից մէկն էլ այն է, որ նոքա շասչութիւնում են օտարների քաղաքակրթութիւնը, բայց դժբաղդար նոքա օտարների յաւ կողմների հետ միասին քատ շուտով ընդունում են և նոցա վատ ազգային յատկութիւնները։

նում է Հայաստանում։ Ասորեստանցւոց սովորութիւնները, նոցակրօնական հայեացքները, աստուածպաշտութեան ձեզ ևս առանց աղդեցութեան չեն մնում։ Հայերի սովորութիւնների և աստուածպաշտութեան ձեզ վերայ. նոցա սեպաձեւ գիրն ու գրականութիւնը, նոցա գիտութիւնն ու ճարտարապետական արուեստը լիովին տեղափոխվում են Հայաստան։ Ճիշտ է, սկզբում՝ այդ բոլորը Հայաստանում կատարվում է փոխառութեամբ, մուրացածոյ և նմանողութեամբ։ Հայերը ուղղակի ընդունում են սեպաձեւ գիրը և, բերել տալով Ասորեստանից դպիրներ, նոցա ձեռքով ծածկում են բերդերի, քաղաքների պարիսպները սեպաձեւ արձանագրութիւններով<sup>10)</sup>). Նորա բերել են տալիս Ասորեստանից ճարտարապետներ, գործառներ ու արհեստաւորներ, որոնց ձեռքով զարդարում են իւրեանց ապարանքները ու պալատները, շինում են իւրեանց ամրոցները և քաղաքները, բայց շուտով Հայերը իւրեանց բնածին ընդունակութեամբ այդ փոխուած քաղաքակրթութեան բոլոր ձեերը մշակում են, փոխում են, տալով նոցա իւրեանց աղդային գյոնն, հոգին ու առանձնայատկութիւնները, ազգայնացնում են նոցա։ Ասորեստանի դպիրներին յաջորդում են շուտով հայ դպիրներ, Ասորեստանի ճարտարապետների տեղ բռնում են հայ ճարտարապետներ. սեպաձեւ գիրը փոխվում է և ստանում է ուրիշ թէ՛ կարդալու և թէ՛ գրելու եղանակ, ինչպէս այդ կարելի է տեսնել մինչև ցայսօր դեռ Հայաստանում պահպանուած սեպաձեւ արձանագրութիւնից, որի թէ՛ գրելու և թէ՛ կարդալու ձեզ զանազանվում է Ասորեստանում և Պարսկաստանում գտնուած այդ տեսակ գրութիւններից<sup>11)</sup>։ Աչա՛ Ասորեստանի այս

<sup>10)</sup> Ասորեստանի քաղաքակրթութիւնը ընդունելու և Հայաստանում տարածելու գործում մեծ զեր է խաղում, նամանաւանդ, Ուրարտի Բելիդուր Ա Թագաւորք։ (Դքեանյա ստորի Յանցեա)։

<sup>11)</sup> Հայաստանի և Ասորեստանի ու Պարսկաստանի սեպաձեւ արձանագրութիւնների գրելու ու կարդալու եղանակի մէջ եղած զանազանութիւնը երեսում է նորանից, որ այն այբուբէնը, որով ներկայումս յացողութեամբ կարդացվում են Ասորեստանի և Պարսկաստանի արձանագրութիւնները, չէ յարմարվում Հայոց արձանագրութիւններին, չէ տալիս մեզ նոցա կարդալու բանալին։ Դոնէ, մինչև ցայսօր դեռ դիտնականների ջանքը՝ կարդալ Հայոց արձանագրութիւնները նոյն իսկ եղանակով, չէ ունեցել յաջորդութիւն։ Դիլիաւոր դժուարութիւնը, որ ներկայանում է


բարերար ազգեցութիւնը հայոց սկզբնական կրթութեան գործի վերաբերութեամբ կազմում է նորա դեպի հայերը ունեցած յարաբերութեան դրական կողմն:

Ե. ՇԱՀԱԶԻԶ.

---

դիտնականներին, սեպածեւ արձանագրութիւնները կարդալու ժամանակ, կազմում է իմանալ, ինչ լեզուով են գրուած արձանագրութիւնները: Հանգուցեալ դիտնական Ք. Պատկանեանը, որ շատ աշխատանք է գործ դրել այդ արձանագրութիւնները կարդալու համար, իւր « Վանի արձանագրութիւններ » վերտառութեամբ գրուածքի մէջ, զալիս է մի զարմանալի եղակացութեան՝ որ նորա գրուած են Վրացւոց լեզուով:

# ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԹԵՐՊՈՄԻԱՅԻ (ԿԱՓԱՅԻ) ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.



Գիւղօրալք, ավանք, դաշտք և արտօրալք,  
Քաղաքք մարդաշատք, շէնք և գանօրալք,  
Ո՞ւր էք, ո՞ւր հիմիկ, հնչո՞ւ շուտ կորալք.  
Ո՞վ ձեզ կործանեց, ո՞ր ձեռք վայրակ:

Թ ՊԱՏԿԱՆԵԱՆ.

Մի սարսափելի տխուր և ամայի պատկեր է ներկայացնում՝  
Ղրիմի արևելեան ափիը. Սա այն երկիրն է, ուր մի ժամանակ  
ահագին հայկական գաղղթականութիւն էր գտնւում, որտեղ ծաղ-  
կած էր հայերի վաճառականութիւնը Խոալացւոց հետ, որ, հայի  
շատութեան պատճառով, Armenia maritima էր կոչում Եւրո-  
պացի պատմաբաններից:

Ամենահին հայոց բնակութեան տեղն թէոդոսիան կամ Կաֆան  
եղաւ, ուր գտնւում էին հայեր, գեռ Անիի կործանումից առաջ:  
Սորա վաճառականութեան նպատակով եկել էին շատ առաջ, և  
մինչև անգամ ունէին մի եկեղեցի սուրբ Սարգսի անունով. Այս  
երեսում է սուրբ Սարգսի եկեղեցւոյ արձանագրութիւններից,  
որոնցից շատերը կորցուած են և միայն մինը մնացել է եկեղեց-  
ւոյ պարսպի գլխաւոր դռան վրայ. Այս արձանագրութիւնը,  
բարձրութեան պատճառով, դժուարութեամբ է կարդացւում:  
Նոյնը՝ այսինքն սուրբ Սարգսի եկեղեցւոյ՝ Անւոյ գլխաւոր գաղ-  
թականութիւններից առաջ լինելը վկայում էն Քէֆէցիներից

շատերը, որոնք տեսել են շատ հին արձանագրութիւններ և լսել են ծերերից:

Հայերի գաղթականութիւնը դէպի Ղրիմ՝ մի ժամանակ եղած չէ: Այս գաղթականութիւնը միայն Աժտէրիսանի վերայով եկած և զգչաղու խանութեան մէջ կտոր ժամանակ բնակուած հայերի թւով սահմանափակուած չէ: Կ'երևի, որ հայերը հետզիտէ քիչ քիչ սկսել են գաղթել Ղրիմ՝ հայաստանի զանազան գաւառներից, ուր որ մուտք է գործել տաճիկը: Եթէ միայն Սնեցիք լինեին Ղրիմի բնակիչները, այն տարբերութիւնը արտասանութեան և բառերի գրութեան մէջ, որ երեւում է միւնոյն գարուն պատկանող արձանագրութիւններում, նկատելի չէր լինի. մինչդեռ այդ նկատուում է և ցոյց է տալիս Ղրիմի հայերի՝ հայաստանի զանազան գաւառներին պատկանելը և կամ տարբեր ժամանակներ գաղթելը: Սկսած Թէոդոսիայից մինչև Հին Ղրիմը և ապա Հին Ղրիմից մինչև Սբ. Խաչ և Սբ. Փրկիչ վանքերը մի մեծ բնակութեան տեղ է երեւում: Հայերը բնակուում էին ծովին և երկրի ներսը մտած չէին: Ամեն մի տեղ աչքի են ընկնում աւերակներ թէ եկեղեցիների, թէ ջրհոների, թէ մասնաւոր տների և այլն: Այս աւերակները կրում են միայն հայ արձանագրութիւններ: Մինչդեռ և ծենովացիք բնակուել են այնտեղ երկար ժամանակ և մեծ թւով նոցա հետքերը համեմատաբար քիչ են և արձանագրութիւններ համարեա չկան: Ղրիմի բոլոր աւերակները, քարերի տաշուածքները, զարդերը յիշեցնում են Անիի աւերակները:

Եթէ մանէք Թէոդոսիայի Կարանտին կոչուած թաղը, իսկզի՞ կը յիշէք Անիի աւերակները: Իսկապէս այժմեան Կարանտինը եղել է բուն հայկական Կաֆան և բաժանուած է եղել ծենովացւոց մասից ահազին սիրուն պարսպով:

Հայերը, իրենց սովորութեան համեմատ, շինել են Ղրիմում բաղմաթիւ եկեղեցիներ, վանքեր և ջրանցքներ: Միայն Կաֆայուում հայերը ունեցել են 45 եկեղեցի, թող Հին Ղրիմի եկեղեցիները: Բուն հայկական մասում եղել է 28 եկեղեցի, իսկ իտալացւոց մասում 17 եկեղեցի, վերջին ժամանակները, իտալացիների Ղրիմից հեռանալուց յետոյ, իտալացիների եկեղեցիները անցել են հայոց ձեռքը, իսկ 1331 թուին, երբ եկան տաճիկները (յիշատակարանիս համեմատ), նոքա Խլեցին հայերի ձեռքից շատ եկեղեցիներ և մզկիթ արին: Այժմեան ուսուաց մայր տաճարը եղել է հայոց եկեղեցի

(Յթ. Աստուածածին). տաճիկները արել էին մղկիթ և ռուսաց տիրապետութիւնը հաստատուելուց յետոյ՝ դարձրած է ռուսաց մայր եկեղեցի\*):

Եկեղեցիների մեծ մասը աւերակներ են ներկայացնում. այսօր շատերը հիմնապէս կորած են և տեղը շինուած են մասնաւոր մարդոց տներ. շատերը դարձրած են քամու ջրաղացներ կամ՝ զօրբի պահեստի շտեմարաններ. Յթ. Նիկողայոս եկեղեցին Հայոց, շինուած հռովմէական ճաշակով, որ եղել է ձենովացների եկեղեցիներից մինը, այժմ թանգարան է դարձրած և կիսում գտնուում է ռուսաց Յթ. Նիկողայոս եկեղեցին; Բերդի Յթ. Կարապետը, զարդարուած խեցիներից շինուած պատկերներով և գեղեցիկ հայ արձանագրութիւններով դարձրած է ռուս եկեղեցի, յանուն սրբուհւոյն Վառվառեայ. և այլն և այլն.

Նոյն աւերակ գրութեան մէջ է եղած մինչև 1888 թիւը և հին հայոց մայր տաճարը, Յթ. Սարգիսը, բայց հիմա գեղեցիկ կերպով վերանորոգուած է\*\*) (միմիայն կէսը. միւս կէսը բոլորով մին ոչնչացրած է: Պէտք է ասել, որ Ղրիմի եկեղեցիների մեծ մասը բաղկացած է երկու համարեա հաւասար կիսերից, իրարմէ բաժանած պատերով Խորանի մօտիկ մասը եղել է, ասում են, բուն տաճարը. իսկ աւելի հեռաւոր մասը եղել է դափիթը, ուր կանգնած են եղել ապաշխարովները և այն օրուան պատարագին Հայկական սրբավայրը: Նոյնախի աւերակ գրութեան մէջ եղել է և լերան վերայ գտնուած Յովակիմայ և Աննայի եկեղեցին, որ վերանորոգել է հանգուցեալ սրբազն Գ. Այվաղեանը: Անցեալ գորու 28 կանգուն եկեղեցիներից այսօր մնացած են միայն՝ սր. Սարգիսը, սր. Հրեշտակապետ, սր. Յովակիմ և Աննա և սր. Գէորգ. Տեղիս ժողովուրդը հովանում է մի ծերունի, ոյժից ընկած քահանայ և ժողովուրդը ցանկանում է ունենալ մի ու-

\*) Այսուեղ գտնվում է Յ. Այվաղովսքի գեղեցիկ պատկերը, որ ներկացնում է Քրիստոսի ջրի երեսին ման գալը:

\*\*) Այվաղովսքին նուիրել է եկեղեցուն մի փոքրիկ աննշան պատկեր:

րիշ, աւելի կրթուած, և աւելի գործունեայ. սակայն հոգեոր իշխանութիւնը, օգուտ քաղելով Ղրիմի վանքապատկան կալուած-ների դրամական արդիւնքից, հոգ չէ տանում իրեն յանձնուած ծուխին, և Ղրիմից առած արդիւնքի մի մասը գոնեա չէ նուիրում քահանայի ապահովութեան համար, լաւ տեսնելով որ ժողովուրդը աղքատ է. նոյնը, ինչ որ ասացի Կաֆայի եկեղեցիների մասին, կատարուել է և չին Ղրիմ քաղաքում. այստեղ նոյնպէս եկեղեցիների մեծ մասը աւերակներ են և կամ գարձրած ուրիշ դաւանութեանց տաճարներ:

Գեղեցիկ պատկեր է ներկայացնում չին Ղրիմի Սբ. Խաչ վանքը իւր բնական գիրքով և գեղեցիկ անտառով, որ ծածկում է նորա շրջակայքի բոլոր լեռները. Վանքի շինութիւնները համարեա կիսաւեր են և նորա մասին հոգ տանող չկայ: Փառք և պատիւ Խորէն վարդապետ Ստեփանէին, որ իւր սակաւ միջոց-ներով կարողացել է բարոգիել վանքի առաջուան աննախանձելի դրութիւնը. Նա մաքրել է վանքը, նա շինել է նոր պատշգամբներ՝ առաջուայ խարիսուլ պատշգամբների տեղը և վերջապէս պյն անտանելի՝ չին Ղրիմից դէպի վանք տանող ճանապարհը, որ շատերին յայտնի էր և որտեղից միայն եղան սայլերով և մեծ գժուարութիւններով կարելի էր անցնել, այժմ Խորէն վ. շնորհիւ գարձել է մի գեղեցիկ, լայն և հարթ ճանապարհ. Երանի թէ հ. Խորէնի օրինակին շատերը հետեւէին, ինչպէս որ հայերը գաղթել են զանազան ժամանակներ Ղրիմ, նոյնպէս էլ Ղրիմի հայ ժողովուրդը զանազան ժամանակ սակաւ առ սակաւ սկսել է թողնել Տաւրիկեան թերակղզւոյ արևելեան ափը և զնացել ուրիշ տեղեր: Սակայն, Ղրիմից դուրս եկած գաղթականութիւն-ներից երկուսը աւելի նշանաւոր եղած են իւր թուով: Առաջին մեծ գաղթականութիւնը եղել է դէպի Լեհաստան և Տրանսիլվա-նիա. դորա պատճառը եղել են թաթարները, որոնք ձգելով Ասիան, եկել են Ղրիմ: Հայերը կարողացած չեն տանել Տաճկաց բարբարոսութիւնը. Երկրորդը՝ նոյնպէս բաղմաթիւ, եղել է նոր Նախիջևանի գաղթականութիւնը, որ իւր վերջին հարուածն է տուել Ղրիմի հայ գաղթականութեան և իսպառ ամպյացրել է երկիրը. Այս գաղթականութեան պատճառները մութ են շատե-րիս աչքում, վասն զի, թէկ կան ասողներ, որ գարձեալ այստեղ էլ տաճկաց բարբարոսութիւնը, նեղելով հայերին, գաղթել է տուել նոցա, սակայն պարզ երևում է, որ տաճիկները թոյլ

եղած են ժիշտ գարու վերջին և ոռոսաց տիրապետութիւնը այն ժամանակ սկսել է հզօրանալ և Ղրիմի խաների նշանակութիւնը ոչնչացնել. ուրեմն, տաճկաց հայերի՝ բարբարոսութիւնից փախչելու մասին խօսել աւելորդ է:

Ինչպէս ասացի, բացի այս երկու մեծ գաղթականութիւններից, մանր գաղթականութիւններ եղել են՝ ոմանք դէպի թէրակղզւոյ միշին մասը, ոմանք դէպի մոռասատանի ուրիշ հարաւային քաղաքները օր. Աքերման, Գրիգորիոպոլս և այլն. Ամեն մի գաղթականութիւն, գուրս գալով Ղրիմից, տարել է իւր հետ եկեղեցիների սպասը, ձեռագիր աւետարանները, զգեստները և մինչեւ անգամ եկեղեցիների գուները. Մինչդեռ պէտք է ասել այստեսակ բաներով հարուստ է եղել Ղրիմի ժողովուրդը. Նոր նախիջևանում՝ շատ ընտիր ձեռագիրներ կարելի է տեսնել, որոնք բերուած են Ղրիմից. Կան նոյնպէս մի քանի հատ շատ հին պատկերներ հայկական վրձնինի պատկանող. Ղրմցւոց ասելով շատ իրեղէններ և նամանաւանդ ձեռագիրներ տարել են Վենետիկ Ղրիմի հայկամոլիկների վարդապետները, ժողովելով սորանից նորանից, գնելով և այլն:

Անիից բերուած գեղեցիկ երկիֆեղկեայ արձանագրութիւններով ծածկուած գուներ վերջին ժամանակներս ուղարկուեցան Ղրիմից Պետերբուրգի թանգարանը. Ղրիմի հայ ժողովուրդը թւով սակաւ լինելով և միջոցներով աղքատ, հետաքրքիր եղած չէ իւր հնութիւններին և թոյլ է տուել շատերին, մինչեւ անգամ մասնաւոր մարդոց, ցրուել իւր հնութիւնները. այնպէս որ այսօր Ղրիմի եկեղեցիներում անկարելի է գտնել մի որ և է ձեռագիր կամ մի հինաւուրց առարկայ. Ես շատ հարցրի և վնտեցի, բայց ոչինչ չգտայ բացի մի ձեռագրից, այն էլ վերջին ժամանակներիս, որ գտնում է Թէոդոսիոյ տէր Մարտիրոս քահանայ Տէրդաւթեանի մօտ. Գրբը մեծ հատոր է և պարունակում է իւր մէջ զանազան ազգերի պատմութիւններից զըսցներ, առասպելներ, հերիխաթի նման պատմութիւններ, խրաժներ և այլն. Հետաքրքիր է միայն մի պատմութիւն Երուսաղէմայ հայերի և յօների մէջ եղած կռուփ մասին ծուազատկի առթիւ, մի յիշատակարան Փէլիպպոս կաթուղիկոսի օրով եղած հջմիածնի զանգակատան վերանորոգման մասին, և մի քանի յիշատակարաններ սկսուած Անի քաղաքի կործանումից և հասցրած մինչեւ Ղրիմի գաղթականութիւնը. Այս գրքից կ'առաջարկեմ ընթերցողներիս այն, ինչ որ

կըվերաբերի Դրիմին, մի կողմ՝ թողնելով միւս պատմութիւնները, նոյնպէս կ'առաջարկեմ և Թէոգոսիոյ Եկեղեցիների արձանագրութիւնները, որոնցից շատերը կրոած են առանց հետևանքի և շատերն էլ անշուշտ պիտի կորչին, կամ զանազան ամբարների, ջրաղացների, արոտուարների, պատերի զարդ պիտի լինին, ինչպէս որ այժմ են\*).

### Գ Ի Բ Ք Ս Ը Ց Ս Կ Ո Չ Ի Պ Ա Տ Մ Ե Գ Ի Բ Ք.

Ի հայրապետութիւն սրբոյ Աթոռոյն էջմիածնի Դուկաս սրբազնասուրբ կաթողիկոսի ըսուստաց Ամենայն երկորի եղեալ հայոց Առաջնորդ սրբազան Յովսէփի Արքեպիսկոպոսի 1787

Անպիտան Մարտիրոս երեց Ավետիքով գրեցաւ նորաշնչն Նախիչևան:

Պատմութիւն Անի քաղաքի. (Օհաննէս վարդապետ Օպլուղի Անի գալն և այլն և այլն.) . . . . .

«Եւ այնպէս լինելոյ վերջն անկարծակի էջ սաստիկ բարկութիւն Աստուծոյ և ըսկաւ քաղաքն շարժիլ և տապալիլ պարսպածըն և զայն տեսեալ ամենայն որ ըստէպ ընթացմամբ փոյթքուոն հարեալ ի ձիւոց ընտանեաց և զաւակաց իւրեանց և տարագէպ եղեալ վըտարեցան թողելով գքաղաքն (Անի) Եկեղեցիս ոսկեզօծ պալատըն ծաղկաւէտ գաշտըն իւրեանց որպէս փախստական և կէսքն ճղեալ գընացին ի ձուղա կէսքն առ եղերքն կասպիական ծովուն ոմանք վան և այլք սիս. իսկ այնք որ անցին ընդ ծովըն կասպից գընացեալ յարեցան նետողաց զոր թաթար անուանին և առեալ հրաման ի թաթար զանէն բընակէին եախ սարայ կոչեցեալ վայրի որ է մերձ աժտէրիսանու Եւ ետ ոչ բազում ամաց զուզմեալ ի նետողաց դժնեայս բարոյ աղգայն գեսպան յղեցին ի Կաֆայ առ լատին իշխանն որ էր ի մէջ միջնաբերդի

\*) Ծնորհակալութիւնս կըլալտնեմ Թէոգոսիոյ Եկեղեցիների երնց փոխան մեծ. պ. Լազարեանին, որ օգնեց ինծ իւր կարողացածի չափ եկեղեցիների տեղերը ցոյց տալու:

զոր Փըռանկի սար ասին Եւ ուխտ եղեալ ընդ իշխանին հաստատապէս չուվեալ քան (գա՞ն) ի Կաֆայ և ոմանք ի Ղըրիմ՝ յեռնյ միջի մի կողմը աղըռոմը ասեն մի կողմն միխայելի օպան մերձ սր խաչ վանքին, և այլք անցեալք գընացին ի տունն լեհաց որ ասի յունաց թէ ո տունք էին ճոկք և փարթամք և ետ ժամանակաց ինչ դարձան երկայ բնակութիւն և փըշացան աղօժիկ սր լուսաւորչին իսկ նորա որբ մընացին ի ներքց իշխանութեան օսմանցոց և պարսից և միաբանութիւն ողորմութեան տեառն են ճոկք և փառաղարդք հոգով և մարմնով խակ որբ մընացին ի Կաֆան ըսկսան շնել եկեղեցիք վանօրայք բայց ամենեկեան ոչ կարացին ի միջոյ բերդին շնել վասն փոքրութեան ժղուրսը մնաց իթ եկեղեցի ներսը. Եւ ազգըն նետողաց ըստ ընիկ սովորութեանց իւրեանց գային գաղտարար գողանային զուստրս գըստերս տարեալ վաճառէին. յորժամ տեսին մեր աղնեայքն կրկին դաշն եղին ըստ լատինին հրաման առին վասն ինքեանց նոր պարիսպ բերդ շնել մարդոյս կեօրէ քար ձըգեցին ոմանց ծ արապայ ոմանց ծ ոմանց իե. անկի մնայ քաղաքն խարճ լինէրնը քարըն քանիյ ընկավ ասէին լլ ամ զ ամիս ժգ օրէն լըմընցեր է բերթը և ետ ինչ ժամանակաց էտո տաճիկ աղջն եղև սկիզբն գալցն իւրեանց ի Կաֆայ թվին հայոց էջմ ին իսկ փրկչին ՌԴՃԼՍ. ին:

Եւ շարացան տաճիկ աղջն ըսկսեցին եկեղեցի առնել և մղկիթ շնել իսկ եկեղեցիէն մընաց քրիստոնէից ձեռքը իթ եկեղեցի որ է այսորիք. . . .

Սբ. Սարգիս, Հրեշտակապետ, սր. Նիկողոս, սր. Յակովը, սր. Խաչովը, սր. Խաչուտիչը, սր. Յարութիւն, Սան Փեթրօ, սր. Աստուածածին, սր. Օքսէնտ, սր. Նիկողոս, սր. Աշարոն, սր. Խունկ (Ղունկիանոս?), սր. Մինաս, սր. Օհաննէս, սր. Հսուերանոս, սր. Ովաննէս, սր. Քամրաբում, սր. Քէվորդ քաշոտի, սր. Աննայ, սր. Թէոդորոս, սր. Գէւորգ, սր. Սիմէնն, սր. Սիմէնն ներսինը, սր. Աստուածածին, սր. Աստուածածին խօճին, սր. Առաքեալ, սր. ուրբատ, սր. Երրորդութիւն, սր. Աստուածածին կոլինը. օսմանցիի թագաւորն այսքան մուխաթմտէ խնդրեաց տարոց տարի կուտայինք ամեն եկեղեցւոյ իւր կարողութեամբն:

Սր. սր. Սարգիս 19 ոսկիյ, հրեշտ. 8 ոսկի. Նիկողոս 2 ոսկի. սր. յակուբ 3 ոսկի. խաչ 2 ոսկի. լուսաւորիչ 8 ոսկի. սր. յարութիւն 10 ոս. սանիկեթրօ 1 ոս. Ածածին 5. 0գսէնտ 4 ոս.

1 զոշ. ս. Նիկող 3 ոս. 1/2 զոշ. և աշրօն 1 ֆըլօրի. Խունկ սր. մենասօվը 9 ոսկի. սր. օչանէս 10 ֆլորի. ստեփանոս 5 ֆլ. սր. օվանէս 4 ֆլ. 1 զոշ. Համբարձում 5 ֆլ. 1 զոշ. քաշոս սր. Սննայ 6 ֆլ. սր. Թորոս 5 ֆլ. 1 զոշ. սր. Գէորգ 4 ֆլ. սր. Սիմէօն 2 ֆլ. Ներսի սր. Սիմէօն 4 ֆլ. Խօճի ածածին 10. առաքել 8 ֆլ. ու ուրբաթ 4 ֆլ. Երորդութիւն 4 ֆլ. Կոլին ածածին 6 ֆլ. Կու ուղարկեն ըստամազօլ պատրիարքարանը նալ թգրի թուռն (գուռն) Կուտար կասէր թէ Ղըըմի եղեալ հայոց ազգի եկեղեցին մուսաթտէնէ այսպէս էր մեր տղայ եղած ու մինչեւ իս տարի եկածը իդ եկեղեցի կայր. այսքաննալ տր ած հաստատ պահէ. ամէն.

Քէֆէ կասեն մեծ քաղաք է, քարերն ամեն սրբատաշ է քէֆէ քղքս ծովահայեաց եկեղեցիքն զարդարած Սր Սննայ բարձր տեղ է Ածածին անօր քովն է վարդապետաց օգարան է Համբարձումն անկից վար է սր Թորոս բերթէն դուրս է սր Դէորգ ատենահաս է Հրշտկաս բերթէն ներս է ամենեցուն բարեխօս է Սր Նիկողոս սարի վրէ սր ակոր հայրապետ է սր Խաչն անկից վեր է քրիտոնէից մեծ նշան է Սր Սարգիս յուժ մեծ ժամ՝ է մարտիրոս որդովն զինուոր է նախնեաց մերոց հաստատեալ է եկեղեցեաց աթոռակալ է սր Լուսաւորիչ կաթուղիկէ հաւատացելոց մեծ պարիսպ է հայոց աղջին հայրապետ է հերձուածողաց վանիչ է. Քէֆէ քաղաք ծովահայեաց և այլն.

Սր Յարութիւն պէրթի քով է քարէ խաչերն խիստ շատ է ժ սեղան շրջապատ է մէկ քան զմէկն պայծառ է.

Սր ածածին նոր ժամ է չորեք կողմը հայոց տուն է հաւատացելոց մինչ յոյս է դատաստանին բարեխօս է.

Սր աշրօն փոքրիկ ժամ է սր Նիկողոս տեղ տիւզ է սր սիմէօն բերթէն դուրս է միջի նահատակըն երկուս է. քէֆէ քաղաք և այլն.

Սր քառասունք աննման է կաթողիկէն խան է վիրնատունն բարցընան է բժն աստիճան է սր Կարապետ տեղն ձոր է քովն կասեն ջրհոր է սր մերկիանոս տեղն սար է քաջամարտ զինուոր է.

Սր Օհաննէս պատրն ցած է չորեք կողմը պարըսպած է սր Օքսէնտ մեծ բժիշկ է. սր օվանէս տեղն ձոր է կաթուղիկէն յուժ յարմար է.

Սր ըստերանոս վըկայ նախ է սա մէկ փոքրիկ մատուռ է.

Սբ մինասն է զօրաւոր նորաշէն գեղեցիկ տաճար է մէջըն կայ  
չորեսին կամար ուտաւոր (ուխտաւոր) երթայ անհամար. Գէֆէ  
քաղաք ծովահայեաց եկեղեցիքը զարդարած:

ՍԲ. ԱԱՐԴԻՍ ԵԿԵՂԵՑՎՈՅ Քարերի ՀԻշատակարանները:

1. Զարդարուն քար այս արձանագրութիւնով.

«Կանգնեցաւ . . . . . արս փրկչական մահ տր օվանէսին  
հոգւոյն թվ. ռմի:

2. Սպիտակ մարմարոնեայ խաչ:

«Կանգնեցաւ սր նշանս ասլանի որդի Գէորգին հոգւոյն թվ. ռմ:

3. Հիշատակ է սր խաչս աւքսէնտիոսի որդի այտընին հոգւոյն  
և . . . . . աւազակաց անմեղ սպանի թվ. ռՃիս:

4. Կափայի սր Սարգիս եկեղեցւոյ (մայր տաճար) աւանդատան  
գեղեցիկ փայտեայ գուռը պարունակում է.

«Վերստին նորոգեցաւ ժամցյունս մտսի ամիրանի որդի նահա-  
տակէն, Ած ողորմի աշխատաւորացն. թվ. ջ. ձ. ա. աւգստ. ս:

Այս դրան միւս փեղին տարուած է հրեշտակապետ եկեղեցին  
և ունի հետեւեալ յիշատակարանը.

«Կազմեցաւ գուռս տաճարի սրբոյն զաւրավարի արդար արդ-  
եամբ ժողովրդի . . . . . նստացող դրանս զծառուկն կողակցի  
գոհարի . . . նա . . . ահատին. ջզ:

### ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ.

5. Սբ հրեշտակապետի գուռը, նոյնպէս հին և գեղեցիկ, կրում  
է այս յիշատակարանը.

«Է յիշատակ վասն ամենայնի ի յութ հարիւր քսան թուի  
գործեալ ձեռամբ Շնորհօր Շահի»:

միւս փեղկի վերայ՝

«Վերստին նորոգեցաւ գուռս սր տաճարի անուամբ սրբոց  
հրեշտակապետի . . . . . արդեամբն ժողովրդի ձեռամբ  
Սիմեոն վարդապետի որ մականուն Կէտիկ գոչի:

6. Նոր ժամանակներս գտնուած է մի կլոր քար, որ ցցց է  
տալիս հրեշտակապետ եկեղեցւոյ շինողի անունը:

«Այս է տաճար ածային շինեալ յանուն զօրաց վերին Գարբէլի

և Միքայէլին սպասաւորի ած. բանին հայալ արդեամբԱծ ատրին կենակցին եաղութ խաթունին և ծնողաց սատաթի նուր (երեկ նուրիկ, Նախիջևան Նունէին այսպէս են կոչում) Խաթունին Խաշատուրի, Սիմեոնի, Յովհաննիսի Մելիք մոտսի մելիքին թվ պծէ:

7. Սր. Թէոդորոս եկեղեցւոյ տեղը այժմ ծածկուած է աղբի կղյաներով. Այս եկեղեցին աւերակ գրութեան մէջ մնացած է մինչեւ ներկայ գարուս յիսուն թուականները. այս ժամանակ աւերակների մէջ մի զինուարական ինքնասպանութիւն է գործում, որից յետոյ եկեղեցին քանդում են, թողնելով միայն սեղանի տեղի վերայ երկու մեծ քարեր, որոնց արձանադրութիւնը թողուած է, մեծ դժուարութեամբ էլ կարգացւում է:

Քարէ խաչ այսպիսի յիշատակարանով՝

« Սր. ամենափրկիչն է սա որ նշան է տէրունի ի ամա բազմալ է Քսի սա . . . . թվ. պծէ.

8. Մի աղբիւր լերան ստորոտում Հայոց թաղի մէջ, աղբիւրի ճակատին դրուած է արձանադրութիւն. Աւանդութիւն կայ, որ այս աղբիւրը շնոր կինը, հասցնելով ջուրը լեռներից մինչեւ այստեղ և զարդարելով քանդակած քարերով ծախսել է իւր բոլոր ունեցածը, բայց վերջացնել կարողացած չէ. վերջին անգամ նա ծախսել է իւր մի զոյգ թանկագին օղը և սորանով կարողացել է վերջացնել:

« Յիշատակ է աղբիւրս Խոճայ ասատուրին իւր կողակցին պիքաչային և իւր զաւակաց մայրամ խաթունին և . . . . Պիքային և . . . . նողացն պիտթային և մայրամ խաթունին . . . — Ածատուրին . . . թվին ովէ:

9. Սր. Սարգսի հին գոները գեղեցիկ կերպով քանդակուած գտնվում են Թէոդոսիոյ թանգարանի մէջ և ունին այս յիշատականները՝

« Այս է գուռս սր. տաճարի որ է յանուն սարգսի զաւրավարին յարդեանց Թօրոսիս . . . . և իւր զարմին թվին ջնիմ ».

Աշլ ևս կայ գրութիւն, որ չի յարմարւում վերոյիշեալ գրութեան հետ փոքր լինելու պատճառով . . . . « Կէղոս բարս որդւոյ ատովմի մամիկոնեանց ի թվ պժր մարտի իւր:

10. Գեղեցիկ քանդակուած ճերմակ մարմարին, որի կէսը

կրում է այս արձանագրութիւնը՝

«Կանգնեցաւ սր Նիկողայոս թվ պժա. մէկ տունն միարանից» :

միւս կէսը՝

«Կաղմբցաւ սր. Մինաս ի բարեխաւսութիւն աշխարհիս, մէկ

տունն սր Մինասին» :

11. Մի ուրիշ մորմարիոն՝

«Ճիշատակ է Խութլուշային և մայրամ Խաթունին թվ ջձե» :

12. Երրորդ մարմարիոն՝

«Բարեխօսէ սր նշանն ի միասին որդւոցն Խաչատուրին Ճիշանին Գոհար պլքային» :

13. Կայ այլ ևս մի զարդարուն կանաչ քար (յամա), վերան  
քանդակուած Խաչով. Թանգարանի ցուցակը ասում է, որ հան-  
գուցեալ Գաբրիէլ սրբազանը համարում է այս քարը Անիից բեր-  
ուած և այս քարի թուականը երեխ սխալմամբ է 476-ն. Խաչի վերի  
մասում փորագրած է. թվ 232 (776). իսկ վարը գրած է . . . .

«ախսէ նշանքս Գրիգորին և իւր զաւակին» :

Ա. ԹԵՂՆԴԵԱՆ.

# Հ Ո Ւ Փ Ե Լ

(LES FILS DE JAHÉL)

Ողբերգութիւն չօրս գործողութեամբ և յառաջարանով.

ԳՈՐԾ Ս. ԱՌՆՈՅԻ.

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ի Ն Ք.

ԱՆՑԻՈԹ, ասորոց Թագաւոր:  
ԵՂԻՍէ, Երուսաղէմի կառավարիչ:  
ԵՒՐԻՄԹԵՆԷՍ, ասորական պահապան զօրքի հրամանատար:  
ՍԻՐՐԱ, Անտիոքի աղջիկը:  
ՀԻՒԱՔԵԼ, Սակաբայեցիների մայրը:  
ՅՈՒԴԱՅ, ՅՈՎԱՅԱՆՆԵՍ,  
ԵՂԻԱԶԱՐ, ՍԻՄԵՈՆ,  
ՅՈՎԱՅԹԱՆ, } սորա որդիկը:  
ՏՈՒԲՈՎԱՄ, հրէայ:  
ԷՌԻԻԲՍ, Միքրայի նաժիշտը:  
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ:  
ՍՈՒՐՃԱՆԴԱԿ:  
ՊԱՀԱՊԱՆԵՐԻ ԳԼԽԱՀՈՐ:  
Ժողովուրդ: Զօրք: Անտիոքի պալատականներ: Միքրայի աղախիններ:

Գործողութիւնը կատարվում է Հրէաստանում 164 թ. մինչև  
Քրիստոսի ծնունդը:

(Յառաջարանի և առաջին գործողութեան մէջ անցնում է 20 տարի):

# Հ Ո Ա Փ Ե Լ

(LE FILS DE JAHEL)

Ողբերգութիւն չորս արարուածով և յառաջարանով.

## Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն .

Բամը ներկայացնում է անտառ, որի խորքում երեսում է մի խրծիթ. զորանից հեռու երեսում են լեռներ: Սեղանի վերալ գտնվում է հիւսուածքը դեռ ջաւարտած մի կողով՝ պատուած դրօշակ: Սեղանի մոտ նստած է Հոաբելը՝ շրջապատուած որդկերանցով: Սորա հանդէալ կանգնած է Ծորովամբ:

## Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Զ Ի Ն .

ՀԹԱ-ՔԻ-Լ, Ռ-Ա-Բ-Ո-Վ-Ա-Մ ԵՒ ԱՐԴԻՔ.

ՀԹԱ-ՔԻ-Լ:

Ո՛չ, սպասի՛ր, թղյլ տուր վերջացնեմ խօսքս... Ո՛չ, եթէ այդ որսը կարողանայ խոյս տալ թշնամու աւերող ձանկերից և եթէ լեռներն ու անտառները կարող լինեին փրկել սատանայից այս երկնային հրեշտակներին. այո՛, եթէ երկինքը օգնութեան հասնէր և ազատէր սոցա կորուսից իւր սուրբ պատսպարանքով, եթէ օգնէր և թոյլ չտար բռնուիլ սոցա այն թակարդում, որ լուռ և մունջ գարանել է սոցա համար նենգ թշնամին,—ահա՛, այդ միջոցին ուր էլ որ չլինես դու, խնդրում եմ, աղաչում եմ, յայտնիր ինձ, որ երկիւզը ու վտանգը անցել է:

## ԹՈՒԲՈՎԱՄ.

Հանգիստ եղի՛ր, առանց բոպէ անգամ՝ կորցնելու ամենի մասին ես քեզ ճիշտ տեղեկութիւն կըտամ՝ իւր ժամանակին:

## ՀՈՒԾՔԵԼ.

Թո՞ղ այդ համբաւը քեզանից առաջ հասնէ ականջիս ուղիղ այնպէս, ինչպէս այն քամին, որ գարնան գալու կայտառ մունետիկն է համարվում, ինչպէս մի արշալոյս, որ ծանրաշարժ առաւօտեան կանխաձայնն է ասվում... իսկ մինչև այդ ժամանակ ես այստեղ շարունակ կ'աղջմեմ ձեղ համար:

## ԹՈՒԲՈՎԱՄ.

Թո՞ղ Տէրը քո այս օթեանի պահապան հրեշտակը լինի:

## ՀՈՒԾՔԵԼ.

Շնորհակալ եմ քեզանից, իմ հաւատարիմ ընկեր:

## ԹՈՒԲՈՎԱՄ.

Իսկ եթէ յանկարծ մանի այն մարդը, որի լոկ անունից դողում է մեր ամերող ժողովորդը, այն, որ այժմ հնարել է գրի անց կայնել մեր գիւղերում բոլոր ցեղերը...

## ՀՈՒԾՔԵԼ, (ընդմիջելով).

Եւ որը վճռել է իմ որդոց համար ևս ստրկական կեանք... այնպէս չէ՞: (Երեխաներին հրում է դէպի Ռորովամը): ԵՇ, չարժէ մտածել թո՞ղ գայ: Ես այժմ պատրաստ եմ նորան այստեղ ընդունելու և գիտեմ, թէ ինչ պատասխան պիտի տամ, որ խարուի... ԴէՇ, գնա՛, գնա՛, էլ մի՛ ուշացնիլ...

## ՀՈՒԾՔԵԼ.

Գնում եմ, գնում:

## ՀՈՒԾՔԵԼ.

Թող որ քո փախուստը՝ կրակոտ ցանկութեան պէս, արագ ու համարձակ լինի և գարձդ ուրախութեան նման, պայծառ ու փայլուն: (Ռորովամը գնում է, տանելով իւր հետ մանուկներին):

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ՀԱՅԱՖԻՆ, (միայնակ և երկար լուսթիւնից յետոյ).

Գնացի՛ն, հեռացա՛ն. նոցա ոտների ձայնը էլ չի լսվում.. լեռան ձանապարհի վերայ էլ չեն երեսում նոքա... Այժմ երեխ անցնում են մարգագետինների ու անտառների մօտով որտեղ անխոնջ աշխատում են երկրագործն ու սերմնահանը... և ում համար, ում. թշնամու, շարագործի համար. Ո՞քան գժբաղդ, ո՞քան թշուառ ես դու, ո՞վ հայրենի երկիր, ո՞քան ցաւ, ո՞քան վիշտ է պատճառում իմ աչքերին, երբ ես տեսնում եմ նորա արօրը քո երկրի ընդերքը Խրուած, Ո՞քան ափսոսալի էք դուք, նիրհող դաշտեր, որ ձեր ցանքերով ու ոսկեզօծ հասկերով միմիայն թշնամու հայեացքն էք փայփայում և նոցա հոգիքը միսիթարում... Քանի՛, քանի՛ ժամանակ է, որ այլ ես ձեր առաջուայ պտղաբերութիւնը՝ նախկին օրերի նման էլ չի ուրախացնում ինձ... Այն օրուանից, երբ հայրենի արեգակը սկսել է թշնամու վրանները ձառագայթել ու լուսաւորել և գիշերուան պայծառ աստղը, երկնքից, ժամանակից օրերը գիշերուանից աւելի մութ են թւում ինձ... (Ծխուր մտածունքների մէջ խորասուզուած): Եւ այժմ միայնակ, ամենից թողուած, ընկած իմ բնակարանիս մէջ և խորին լուսթեամբ շրջապատուած... Ականջներիս մէջ ակամայից գեռ լսվում է նոցա ուրախ ծիծաղը ու աղաղակները, աչքերս ագահօրէն պտտելով այս ու այն կողմը, տակաւին օրոնում եմ գտնել նոցա, որոնք այժմ ինձանից անշափ հեռու են, որոնց հէնց այժմ՝ մնանք բարեաւ ասացի, որոնց վեց տարի, այս՝ ուղիղ վեց տարի ծածկած ու թագցրած պահում էի... (Սօտենում է անդանին և ձեռքը դնում դրօշակի վերայ): Մա՛կկաբայեցի, հրէաստանի պաշտպան, քո որդիքը, որոնց տնօրինել էր երկինքը շնորհել ինձ՝ հայրենի երկիրը դոցա միջոցով ստրկութիւնից աղատելու ցանկութեամբ, երբէ՛ք, երբէ՛ք չեն անպատուիլ քո յիշատակը, երբէ՛ք չեն արատաւորիլ քո վեհ անունը. նոքա պարտաւորեն են փառաւորել և անմահացնել այն անունը, որ արձանագրուած է այս ընտանեկան դրօշակի վերայ. Աչա՛ այդ դրօշակը, աչա՛. Այս օրուանից նա պէտք է իմ ձեռքում փողփողայ, որ դորանով գոնէ հոգոյս վիշտը ցրուէ. Ուրեմն իմացի՛ր ով հայր, որ որդոցդ վճռել եմ դատապարտել հայրենի երկրի.

ծառայութեան գործին. ես, նոցա ծնուած օրից իրենց անբաժան ընկերն եմ եղել և կաթիս հետ միավեն տուել եմ նոցա ծծել սէր դէպի հայրը, դէպի Ճշմարիտ Աստուածը և դէպի հայրենին երկիրը, իսկ ստրկութեան դէմ ուժգին ատելութիւն և հակակրանք, նոքա պատրաստ են քո կամքը կատարելու, ուղիղ այնպէս, ինչպէս ես էի մի ժամանակ կատարում և երկիւղածութեամբ վերաբերվում; երբ վախկոտ փախստականների պատրուակով, որդոց ամուր կրծքիս մէջ զրկած, եկայ պյս կողմերը նախ, նոցա թշնամու աչքից ծածկելու նպատակով և երկրորդ, հայրենին երկրի ապագայ պաշտպանները ազատելու ցանկութեամբ: (Փոքր ինչ լոելուց յետոյ): Կարծես ոտի ձայն է գալիս... երեխ ինձ որոնող կայ, սրտիս ուժգին բարախումից զգում եմ, որ այդ եկողը թշնամիներից է... Ասորոց ես սովորել եմ Ճանաչել իրենց փայլուն շրերից և առանձին տեսակ քայլուածքից... Այս եկողն էլ ինձ թւում է, որ նոյանից է... երեկի մտադիր է իւր չարանենք պարտքը կատարել... Ո՛չ, մի՞մէ ազատութեան համար կոռուելու վայրկեանը այդքան մօտ է, Այո՛, այո՛, կոռուելու ժամը մօտ է... հասել է այդ ցանկալի րոպէն... Ե՛չ, արիացի՛ր, ո՛վ ընտրեալ ժողովուրդի աղջիկ և հաւատաւ. Ամենաբարձրեալը կըտայ քեզ կարեօր ոյժը՝ այդ վսեմ և նուիրական գործի համար... (Արագութեամբ դրօշակը ծածկում է իւր հագուստի ծալքերի մէջ, նստում է սեղանի մօտ և վերցնելով նորանից գործը՝ զբաղվում է նորանով: Մտնում է նղիսէն):

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

Հ Ա. Ա. Ք Ե Լ. Ե Կ Ե Վ Ա Է.

ԵՎԻՍԵ.

ՈՂՋՇՆ ՔԵԶ:

Հ Ա. Ա. Ք Ե Լ.

ԸՆԴՈՒՆԻՇ և իմ ողջոյնս:

ԵՎԻՍԵ.

Ասա՛, սպասում էիր իմ գալուն, թէ ոչ:

Հ Ա. Ա. Ք Ե Լ.

Ո՛չ, չէի սպասում:

## ԵՎԼԻՍԻ.

Նոր հրատարակուած օրէնքը արդեօք քեզ յայտնի՞ է,

## ՀՌԱՔԱՆ.

Ի՞նչ օրէնք է, ևս ոչինչ չգիտեմ:

## ԵՎԼԻՍԻ.

Անախոք թագաւորը, մեր ընդհանուրիս հրամանատարը, իւր և ձեր երկրի տիրապետողը հրամայել է մեղ ձեղ բոլորիդ ցուցակագրել: Աչա՛, ինձ նա ինքն է ուղարկել այստեղ՝ այդ որոշումը գլուխ բերելու և ասել է, թէ նա ինքը ևս այստեղ է:

ՀՌԱՔԱՆ. (ԳԼՈՒԽԸ ԽՈՒԹԱՐՀԵԴՆԵԼՈՎ).

Ես լսում եմ. յայտնեցէք, ի՞նչ է նորա կամքը:

## ԵՎԼԻՍԻ.

Օրէնքը պահանջում է, որ ամենայն մի հսկայէլացի մեղ մանրամասն հաշիւ տայ, թէ որ ցեղին է պատկանում, յայտնէ իւր ունեցած կարողութիւնը, պարապմունքն ու ժառանգութիւնը, յիշէ մի առ մի արդիւնքները, յայտնէ կնոջ ու որդոց անունները և արու զաւակներին ցուցակագրել տայ մեծից մինչև փոքրը, որ նոքա՝ անցած ժամանակների նման անպայման ենթարկուեն թագաւորի գերիշխանութեան, նա, որ չի ստիլ և ճշտութեամբ տեղեկութիւն կըտայ, թագաւորի կարգադրութեամբ ազատութիւն կըտանայ, ոչ մի մահացու չարչարանքի չի ենթարկուիլ. այդպիսիք առաջուայ նման իրաւունք կ'ունենան իրենց հօտը արածեցնել, վար ու ցանքսով պարապուիլ և ապագայում բաղդարարու ու երջանիկ օրեր վայելել... Բայց նա, որ համարձակութիւն կ'ունենայ շլել թագաւորի հրամանը և հարց ու փորձի ժամանակ ճշմարտութիւնը ստել լոկ մի խօսքով, թշուառութեան ու դժբաղդութեան կըհանդիպի: Այդ ու դորա նմաններին այնուշետև սպասում է նախատինք, անէճք, մթին բանտ, շղթայ... Դոքա այնուշետև կըզրկուին այն ամենից, ինչ որ ունեին, լինի այդ տուն, տեղ, կին, ծառայ, խաշինք ևայլն ևայլն: Այդպիսիների տղայ որդոց համար աւելորդ է խօսել, որովհետև դոքա այնուշետև կ'ենթարկուին ծանր ստրկական կեանքի և կըկրեն տարիներով դառն լուծի չարչարանքներն ու աղէտները... ե՛՛, այժմ յայտնի՞ եղաւ քեզ նոր օրէնքի իմաստը, թէ ոչ:

## ՀՌԱՔԵԼ.

Այո՛, շատ լաւ իմացայ, բայց պէտք է խոստովանիմ, որ  
ձեր այդ նոր օրէնքը չափազանց խիստ է:

## ԵՎԼԻՍԵ.

Նայած թէ ում համար. անհնազանդների համար ճշմարիտ  
որ խիստ է, բայց հաւատարիմ ժառաների համար՝ կատարեալ  
միմթարութիւն:

## ՀՌԱՔԵԼ.

Ինչ ուղում է, թողլ լինի, այդ ինձ համար ողջ մէկ է.  
ինչպէս տեսնում էք, ես միանդամայն աղքատ, ողորմելի վիճակի  
մէջ եմ, իսկ աղքատների միակ ճանապարհը, այդ ստրկութիւնն  
է և միակ օրէնքը—աղքատութիւնը, որ տարիների ընթացքում  
դոցա պարանոցի վերայ ծանր լուծի նման ծանրացած, անողորմ  
շարունակ ճնշում է:

## ԵՎԼԻՍԵ.

Բայց որտեղ է քո օջախը, քո տունը, քո ընտանիքը և  
ժառանգելիք մասը:

## ՀՌԱՔԵԼ.

Զէ՞ որ արդէն ասացի, թէ ճակատագիրը ինձ միմիայն աղ-  
քատութիւն և թշուառութիւն է ժառանգել:

## ԵՎԼԻՍԵ.

Իսկ ո՞վ է քեզ ուտեցնում և իմեցնում:

## ՀՌԱՔԵԼ.

Աղքատութիւնը, երբ ես կարողանում եմ կրել նորան  
ինձ վերայ:

## ԵՎԼԻՍԵ.

Ո՞վ է ամուսինդ:

## ՀՌԱՔԵԼ.

Ես այրի եմ:

## ԵՎԼԻՍԵ.

Իսկ որդիքդ ո՞ւր են:

## ՀՌԱՔԵԼ.

Դժրաղդաբար որդի չեմ ունեցել:

ԵՊԻՍԵ.

Անունդ ի՞նչ է:

ՀՌԱՔԵԼ.

Յղա՛:

ԵՊԻՍԵ.

Դու օտա՞ր երկրացի ես:

ՀՌԱՔԵԼ.

Այո՛, ես եկել եմ այն երկրից, որտեղ մի ժամանակ հօրից թողած՝ Աբրահամի և հագարի որդին էր թափառում:

ԵՊԻՍԵ.

Ուրե՞մն դու իսմայելացի ես:

ՀՌԱՔԵԼ.

Այո՛, ես ևս անապատի հովիւների նման՝ երկրպագում եմ երկնքի լուսատու մարմիններին:

ԵՊԻՍԵ.

Իսկ ո՞վ է այստեղ քո տէրը:

ՀՌԱՔԵԼ.

Տէ՞րս—ամե՞նքը: Անտուն, անտէր, վարձով բանող մշակի տէրը նա է, ով նորան գործի է գնում; ում համար նա հաց է կալսում և հեծում արտը ամրող օրերով՝ առանց անգամ մէջ քը թէքելու, միմիայն մի կտոր վաստակելու նպատակով:

ԵՊԻՍԵ.

Իսկ այս տունը ո՞ւմն է, որի մէջ ահա բնակվում ես, նա այնքան հեռու է շրջակայ բոլոր գիւղերից, որ հազիւ կարելի եղաւ գտնել: Այդ քո՞ տունն է, թէ ոչ:

ՀՌԱՔԵԼ.

Այո՛, իմն է:

ԵՊԻՍԵ.

Ուրե՞մն դու նորան գնե՞լ ես:

ՀՌԱՔԵԼ.

Գնե՞լ եմ, այն էլ ե՞ս: Ո՞րտեղից կարող էի գտնել այն-քան գումար:

ԵՎԼԻՍՈՒՅԻ.

Ուրեմն ընծայել են քեզ:

ՀՄԱՅԻՆԵԼ:

Այո՛, նորան ինձ զեղել է փոթորկալից հեղեղը և մրդիկը:

ԵՎԼԻՍՈՒՅԻ.

Խօսքերդ բացատրութեան կարօտ են:

ՀՄԱՅԻՆԵԼ:

Ոչ շատ հեռու անցեալում այս հովիտը ենթարկուեցաւ մի անսպասելի հեղեղի, որի ժամանակ և նորա բոլոր բնակիչները կոտրուեցան. Ահա՛, այդ անցքից յետոյ ես ինձ համար ապաստարան գտայ այս անմարդարնակ գետնատներից մինում:

ԵՎԼԻՍՈՒՅԻ.

Ել ուրիշ ասելիք չունե՞ս:

ՀՄԱՅԻՆԵԼ:

Ո՛չ ի՞նչ որ կար, ես արդէն ամենը յայտնեցի:

ԵՎԼԻՍՈՒՅԻ.

Ուրեմն գու Արարիայի անապատների ծնունդ ես, միանգամցյն չքաւոր, չօւնես ամուսին և ընտանիք և ապրում ես հայրենիքիցդ հեռու, այնպէս է թէ ոչ:

ՀՄԱՅԻՆԵԼ:

Ի՞նչ արած:

ԵՎԼԻՍՈՒՅԻ.

Բայց քո խօսակցութիւնդ նման չէ Խամայելացոց բարբառին:

ՀՄԱՅԻՆԵԼ. (առանձին).

Ո՛չ, Աստուած իմ, օգնիր նոցա որքան կարելի է հեռուն փախչել այս տեղերից... (Կիմելով Եղիսէին): Ձեր գիտողըսթիւնը ճշմարիտ է, բայց ձեր կասկածները փարատելու համար ստիպուած եմ աւելացնել ասածներիս և այն, որ օտարութեան մէջ երկար ժամանակ ապրելուց յետոյ՝ յաճախ մայրենի լեզուն դաւաճանում է մեզ:

ԵՎԼԻՍՈՒՅԻ.

Ենթարենք մի առ ժամանակ, թէ ասածներդ ճշմարիտ են,

բայց չէ՞ որ մայրենի հողի ամեն տուրքը մոռանալու համար երկար պանդիստութիւն է հարկաւոր, բացի սորանից, անապատի ժառանգները այնպիսի մի քայլուածք ու այնպիսի մի դէմք ունեն, որի հետքը անգամ չի երևում ձեզ վերայ:

## ՀՌԱՎԻՇԵԼ.

Այդ ևս ձեր կողմից աւելորդ մի զարմանք է: Բնակուելով օտար երկրում, ստիպուած եմ լինում հագնել այն հագուստից, որ տեղական բնակիներն են գործ ածում և բնիկների սովորութիւններին հետևելով, ակամայից փոխվում եմ շէնք ու շնորհքով:

ԵՊԻՍԵ, (Ճատենալով դէպի Հո.աքելը).

Ճշմարի՞տն ես խօսում: Իսկ եթէ ես ասելու լինեմ, թէ քո ասածներդ սուտ են ծայրէ ի ծայր, թէ քո ասածին չպէտք է հաւատալ և թէ հայրենիքդ էլ այստեղ, ճրէաստանումն է: Որ դու այն ազգի ժառանգն ես, որի մէջ բուն է դրել չարութիւնը և ատելութիւնը, որ առանձին մի ոգեսորութեամբ ամեն տեղ և ամեն ինչում ստում է, որ ստրկութիւնից փախուստ է տալիս և առանձին կամակորութեամբ չի ուզում ճանաչել իւր համար սահմանած օրէնքները և որոնց մենք շարունակ հետևում ենք և հալածում անտառների խորքերում: Է՞հ, այս ամեն ասածներիս դիմաց այժմ ի՞նչ խօսք ունես ասելու: Դուք, հպարտացած ձեր ապստամբական հոգով՝ դուք, ստրուկների անարդ կանայքդ, միշտ նենդ, միշտ չարախնդաց էք այնպէս, ինչպէս և այն վագրերը, որոնք թագնելով թի մէջ բոլոր ձագերին, պառկած անցքի մօտ՝ թշնամուն վայրենի աղաղակներով են հանդիպում... Օ՛, ես ձեզ շատ լաւ եմ ճանաչում... (Կոպտութեամբ յարձակուելով Հոաքելի վերայ): Իսկ ի՞նչ կ'ասէիր դու, եթէ ես յարձակուելով Հոաքելի վերայ: Իսկ ի՞նչ կ'ասէիր դու, եթէ ես քո մէջ հէնց այս վայրկենիս կասկածէի նորան, որ...

## ՀՌԱՎԻՇԵԼ.

Ինքը երկինքը վկայ է, որ սրտիս մէջ չկայ բնաւ ոչ մի չարութիւն և ամեն ասածներս ճիշտ և անկեղծ են: Զգիտեմ, թէ իմ մէջ դու ինչ անձնաւորութիւն ես ուզում ճանաչել... իմ հանգուցեալ ամուսինս հովիւ էր...

ԵՊԻՍԵ, (Ընդդիշելով).

Ուրեմն դու չե՞ս ճանաչում Մակկաբայեցուն:

ՀՄԱՔԵԼ.

Ո՛չ չեմ ճանաչում, ոչ իրեն Մակաբայեցուն, ոչ նորա նախորդներին, և ոչ էլ ժառանգներին:

ԵՎԻՍԽ.

Դու չե՞ս թագցրել այստեղ քո որդոցդ:

ՀՄԱՔԵԼ.

Զէ որ ես արդէն ասացի, թէ երբէ՛ք որդի չեմ ունեցել:

ԵՎԻՍԽ.

Երդվում եմ Զևսի անունով, որ զու սուտ ես խօսում:

ՀՄԱՔԵԼ.

Ո՛չ, ինչ որ արդէն ասել եմ, այդ ամենը զուտ ճշմարտութիւն է, (Առանձին) Աստուած իմ, Աստուած իմ, տուր ինձ կարողոթիւն դիմագրելու մինչև վերջը. Կարծես այս մարդը ամեն բան գիտէ... Ո՛չ, իմ սիրուն որդիք, իմ քաղցր մանկտիք, գուցէ արդէն այս մարդու ձեռքումն էք...

ԵՎԻՍԽ.

Նենգապատիր Խօսքերդ քեղ յաջող հետեւանքի չհասցըն, չա:

ՀՄԱՔԵԼ, (առանձին).

Եւ մինչև այժմ գեռ լուր չկայ... Հոգիս ցաւում և մարմաջում է...

ԵՎԻՍԽ.

Է՛՛չ, մէկ անգամ ևս կրկնիր քո ստախօսութիւնները:

ՀՄԱՔԵԼ, (առանձին).

Ո՛չ, իմ քաղցր որդիք, իմ սիրուն զաւակներ, Աստուած իմ. . .

ԵՎԻՍԽ.

Ի՞շնու ես լոել:

ՀՄԱՔԵԼ, (առանձին).

Ո՛չ, ժամանակը շարունակ անցնում է, իսկ մերովամբ գեռ ոչ մի լուր չունեմ:

ԵՎԻՍԽ.

Դողում ես, չա:

ՀՄԱՔԵԼ, (շփոթուած).

Ե՞ս, ո՞չ:

ԵՂԻՍԻ.

Դու կարծում էիր, թէ չեշտ է մեղ խարել, չա՞ դէ չ,  
խօսի՛ր, ես քո պատասխանիդ եմ սպասում:

ՀՈՒԱՔԵԼ, (առանձին).

Դարձեալ լուր չեկաւ և ոչինչ չի լսվում... այս՝ ոչինչ...  
(Անդիտակցաբար վայր է գցում դրօշակը):

ԵՂԻՍԻ, (բարձրացնելով և բաց անելով դրօշակը).

Այս ի՞նչ վայր դժեցիր, ի՞նչ՝ ժամանակից է, որ հո-  
վիները դրօշակներ են ձեռք բերել Երևի վաղուց չեւ, ինչ իս-  
մայէլացիք...

ՀՈՒԱՔԵԼ, (շփոթուած).

Զգիտեմ ես...

ԵՂԻՍԻ.

Ի՞նչ է նշանակում այս անունը, որ խորապրուած է գոր-  
ծուաճքի վերայ:

ՀՈՒԱՔԵԼ, (խսուով թեամբ).

Զգիտեմ ես... չեմ իմանում... (Յուսահատութեան մէջ): ՈՇ,  
Ե՞րբ, Ե՞րբ պիտի այս ամենը վերջանայ...

ԵՂԻՍԻ, (հեգնօրէն).

Դրօշակի վերայ հրէական լեզուով նամակ... ԵՇ, ի՞նչ ես  
լոել, իսմայէլացի կին, կարդա՛ այս: (Հեռուից լսվում է փողի ձայն)

ՀՈՒԱՔԵԼ, (առանձին).

Աչա՛, այժմ աղատուած ենք: (Հրծուանքով):

Երդիր և ուրախացիր, ո՛վ դու թշուառ նաշատակ,  
Ուրախութեան օր է եկել, հասել, անցել է փոթորիկը...  
Քո թեթևաշարժ զօրախումբերը աներեսյթացան դունդ,  
գունդ

Հասան անտառներին, անցան լեռներից և առուակներից:

(Փողի ձայնը կրկնվում է):

ԵՂԻՍԻ.

Ի՞նչ են նշանակում քո անմիտ ցնորդները. այս ի՞նչ փողի  
ձայներ են հասնում ականջիս: Ասա՛, ի՞նչով կարելի է կամ  
ի՞նչով պէտք է բացատրել քո հրձուանքը:

ՀՌԱՔԵԼ. (ԽԵԼՈՊՀ ԽՎԻԱԷՒԻ ՃԵՄՔԻԳ ՊՐՈՂԱԿԸ).

Կարդա՛, կարդա՛, եթէ կարող ես կարդալ ո՛չ, ինքդ կարդա՛, ես արդէն գիտեմ: Է՞հ, ի՞նչ հասկացար, Ահա՛, նայի՛ր, տես, թէ այս ո՞ւմ անունն է. «Մակկա-բաշեցի», այնպէս չէ. Մակկարայեցի'...

ԵՊԻՍԵԼ.

Այդպէս ուրեմն, այժմ ի՞նքդ խոստովանիր սոտախօսութիւնդ:

ՀՌԱՔԵԼ. (ՎՃԱՌՊԱԿՈՆ ՃԱՅՆՈՒ)

Ամեն բան ես այժմ պատրաստ եմ խոստովանուիլ, այս՝ պատրաստ եմ ես այժմ ամեն բան ճշտիւ քեզ յայտնել. իմ անունս—Հռաքել է, իմ միակ Աստուածը՝ միշտ և ամեն ժամանակ Եհովան է Եղել, իսկ Հայրենիքս այս է, Հրէաստանը... իմ ամուսինս Եղել է Հպարտ զօրավար՝ Երջանկայիշատակ Մակկարայեցին, այն, որ մի ժամանակ ամբողջ ասորական ժողովրդի արիւնարբու և անհաշտ թշնամին էր Համարվում... Միմիայն նորա անունը լսելուց դուք արդէն գողում էիք և փախչում՝ ամեն ինչ թողած: Այս՝, ես Հպարտանում եմ նորա անունը կրելով ինձ վերայ, այս՝, ես նորա այրին եմ... Իմացիր և այս, ես անպտուղ չեմ, ես հինգ մանուկ եմ ծնել այս՝, հինգ արու զաւակ: Գուցէ ցանկանաս իմանալ նոցա անունները, ահա՛, լսի՛ր, ասեմ քեզ մէկ մէկ. Յովնաթան, Յուղա, Յովհաննէս, Եղիազար և Սամսոն...

ԵՊԻՍԵԼ.

Ցետոյ, ի՞նչ ես արել գոցա հետ, ո՞ւր ես ուղարկել, ասա՛, պատմիր տեսնեմ:

ՀՌԱՔԵԼ.

Սպա փորձի՛ր, գնա, ման եկ և գտի՛ր: (Հրձուանքով):

Անապատի վրայից բարձրացաւ, արթնացաւ Նիրհելուց քամին. Երջաններ կազմեց, պտոյտներ կատարեց փոթորիկից բարձրացած աւազը,

Ահա՛, ծովի Եղելքին մօտենում են ամպն ու մառախուզը Եւ շուրջն ու հեռուն զովը տարածում:

ԵՊԻՍԵԼ.

Քո կատաղութիւնը և յնորքը մի փոքր անգամ չեն կարող քեզ օգնել այստեղ տէրը մենք ենք: Հրէաներին մենք արդէն

մեր ոտների տակ կրունկներով ջարդ ու փշուր ենք արել իսկ  
ումը որ սեղմեցինք, նա էլ շունչ առնել կենդանանալ չի կարող:  
**ՀԹԱՔԵԼ,** (հեգործն)։

Զեր խօսքերը լսելուց անգամ՝ մարդ ակամայից սարսում  
ու դողում է, այնպէս չէ, Միթէ դու մինչև այժմ չգիտես, որ  
դուք հրէաստանի համար նոյնն էք, ինչ որ մորեխը անուշահոտ  
արտերի համար, ինչ որ փոթորիկը և կարկուտը...

**ԵՎԼԻԱԼ.**

Լոփ'ր, անարդ կին:

**ՀԹԱՔԵԼ,** (հրձուանքով)։

Գիշերուայ մութը կանցնէ  
Նորան կփոխարինէ արշալոյսը,  
Նորա հետ ի միասին կզարթնեն զօրավարները՝  
Կառնեն քաջասիրտ սրերը ու դաշցները  
Ցաղթութեան և միմիայն յաղթութեան համար,  
Շուտով ամբողջ երկիրը սոքի կկանգնէ  
Լոկ իր պարտքը յիշելուց, միմիայն իր սուրբ պարտակա-  
նութիւնը կատարելու.  
Կապստամբուի թէ ծերը, թէ երիտասարդը,  
Անկողնից գլուխ կրարձացնէ հիւանդն ու ախտաժէտը՝  
Կոռուի, պատերազմի յաղթութեանց համար.

**ԵՎԼԻԱԼ.**

Ով դու օձի ծնունդ, պիտի կտրե՞ս վերջ ի վերջոյ քո պար-  
շացը թէ ոչ:

**ՀԹԱՔԵԼ.**

Ինչպէս որ յարդի մէջ գրած կերպնը պատրաստ է ամեն  
մի բոպէ վառուել, այդպէս և իմ որդիքը կ'ապստամբեն յան-  
կարծ հայրենիքի ազատութեան համար: Դու կարող ես ինձ  
սպանել, ես դորա դէմ ոչինչ չունեմ, բայց որդիքս—այս՝, նո-  
քա կ'ածեն և հայրենիքը կ'ազատուի, է՛՛, էլ ո՞ւր ես սպասում,  
դէ՛՛, շո՛ւտ, սպանի՛ր:

**ԵՎԼԻԱԼ.**

Լոփ'ր, ցնորամիտ կին, Վերջին անգամ ասում եմ; Լոփ'ր ու  
լսիր այն ամենը, ինչ որ պիտի ասեմ քեզ ո՞վ անարդ, ո՞վ  
սորուկ կին, չգիտես միթէ, որ նա, ով որ համարձակվում է իմ՝

առաջ ստել և վիրաւորել ինձ, ի՞նչ օրի կարող է պատահել 2գիտես միթէ, որ բաւական է իմ մի խօսքը քեզ բնաշխնջ անելու այս աշխարհից և եթէ մինչև այս վայրկեանը համբերել եմ քո անմիտ ցնորդներին, այդ դու պարտական ես իմ առանձին ողորմութեանս, որ ողոշել եմ յայտնել քեզ մասնաւրապէս և ապա որդոցդ: Մեծահչոգի և գիթաշարժ է ձեր ամենիդ տիրապետողը և ինքը՝ մեր և ձեր թագաւորն էլ նոյն զգացմունքներով է ոգեսրուած. նա առատաձեռն և ողորմած է նոյն իսկ չարագործների դիմաց և աչա՛, ձեր ամբողջ ցեղը կարող է օգտուել լի ու լի այդ բարկեքներից, Քանի որ քո որդոց ձակատագիրը պիտի որոշուի քո ձեռքով, քանի որ նոյց ապագան քո ձեռքումն է և քանի որ դու, իբրև նոյց ամենի մայր, միմիայն և միմիայն բարիք կըցանկանաս ամենքին—կարող ես ստանալ բայց միմիայն այն պայմանով, որ նոքա մինչև գերեզման հաւատարիմ մնան թագաւորին: Անտիոք թագաւորը ներողամիտ է դէպի խառնակիչները և ապստամբները...

ՀՐԱՔԵԼ, (Ընդմիջելով).

Ո՛չ ո՛չ, նոքա պիտի կռուեն, պիտի լնեն...

ԵՂԻԱԽ, (Հարունակելով).

Եւ պատրաստ է ընդունել նա ձեր զղջումը և դարձը...

ՀՐԱՔԵԼ, (Ընդմիջելով).

Հերոսներ, երբ կարելի է... մինչև անգամ մարդասպաններ, երբ այդ հարկաւոր լինի...

ԵՂԻԱԽ, (սպառնալիքով).

Թո՛ղ քեզ վերայ թափուի ամբողջ երկնային դժոխքը: Դու անշուշտ կըտեսնես քո որդոց և նոյց համամիտների կորուսոր, քո հայրենիքի աւերմունքը և քո հաւատի վախճանը... է՛՛, սորանից յետոյ գողա՛ մեր արշաւանքներից և սպանութիւններից: (Գնում է դէպի աջ:—Զախ չենից մտնում է նորովաճը):

## ՏԵՍԻԼ ԶՈՐԲՈՐԴ.

ՀՐԱՔԵԼ ԵՒ ՌՈԲՈՎԱՄ.

ՀՐԱՔԵԼ, (Վազելով և վաթաթուելով Ռոբովամին).

ԱՇԽ, Ռոբովամ, նայի՛ր, տե՛ս, այն թշնամին է գնում:

ԹՈԲԲՈՎԱՄ.

Այս՝ գնում է, բայց նորից կըդայ և ոչ միայնակ, այլ  
մեծագուշեղ զօրքով, Փախչե՞նք, փախչե՞նք շուտ այստեղից, որ-  
քան կարելի է,

ՀՌԱՔԵԼ.

Իսկ որդիքս ի՞նչպէս են, ասա՛, Խօսի՛ր տեսնեմ,

ԹՈԲԲՈՎԱՄ.

Ազատուած են թշնամուց:

ՀՌԱՔԵԼ.

Բոլո՞րն են ազատուած:

ԹՈԲԲՈՎԱՄ.

Այս՝ բոլորը,

ՀՌԱՔԵԼ (երեսը դարձնելով դեպի այն դուռը, որտեղից հեռացաւ  
եղեսէն).

Այժմ որքան ուզում ես, սպառնացիր ինձ, (Դէպի Ռորո-  
վամը): Ուրեմն հաւատամբ ասածներիդ, ամե՞նքն էլ ազատ են:

ԹՈԲԲՈՎԱՄ.

Ամե՞նքը, Մեզ հաւատարիմ գիւղերի մէջ ես նոցա ամեն-  
քին մէկ մէկ տեղաւորեցի:

ՀՌԱՔԵԼ.

Օ՛, երիտասարդ արծուիկներ, կըդայ ժամը և նոքա կ'ուղղեն  
իրենց թևերը:

ԹՈԲԲՈՎԱՄ.

Ես նոցա թագցրի Եփրեմի ցեղի անտառների մէջ, Գալա-  
ադու ժայռի մէջ գտնուած քարանձաւներում:

ՀՌԱՔԵԼ, (Խորասուզու եղով մոտածունքների մէջ.)

Թշնամիները երբէ՛ք չեն կարող մօտենալ այդ ամեչի պա-  
րիսպներին:

ԹՈԲԲՈՎԱՄ.

Նոցա ազատուելուց յետոյ այժմ մնում է, որ մենք ևս  
մտածենք մեր ազատութեան մնախն և կորստեան չմատնուինք:  
Զէ՞ որ երկիւղը, մահը, կորուսալ ամնի նման արդէն կախուած  
են մեր վերայ, Առանց մի բռպէ անդամ կորցնելու, մենք պիտի  
փախչենք այստեղից:

Հանդէս Դ

ՀՌԱՔԵԼ, (օրօրուելով).

Այս՝ այս... իսկո՞յն...

ԹՐԲՈՎԱԾՄ.

Այժմ այս բնակարանի մէջ լնակութիւն են հաստատել երկիւղն ու վտանգը:

ՀՌԱՔԵԼ:

Խօսքդ ճշմարիտ է, բայց ես դեռ ելի չեմ վստահանում և գողում եմ, երբ յիշում եմ, թէ պէտք է թողնեմ ընդ միշտ այս բնակավայրը և հեռանամ, գնամ մի ուրիշ տեղ:

ԹՐԲՈՎԱԾՄ.

Ինչի՞դ է պէտք նա քեզ այժմ, երբ արդէն զաւակներդ այսուեղ չեն:

ՀՌԱՔԵԼ:

ՈՇ, ո՛չ, ո՛չ, մի' ասիլ այդ, Թորովամ: Մի՞թէ պյստեղ չեմ նոցա կերակրել ու մեծացրել և միեւնոյն ժամանակ փայփայել ականջները օրօրոցի քաղցր երգերով... Կազզելով խաղում էին այստեղ՝ պար ըռնած անհոգ մեղուների նման, իսկ դոցա մանկական ձայների ու աղմուկների վերայ խոժոռ դէմքով փոքր առ փոքր վայ էր հանում փոթորիկը: Զկարծես, թէ այդ ամենը տեսնելուց ես շարունակ նորա մասին եմ մտածել, թէ ի՞նչ եմ պատրաստում ապագայում զաւակներիս համար, ո՛չ, ես դեռ այդքան հեռուն չէի գնում, ես դեռ նոցա մէջ տեսնում էի անմեղ, անհոգ, զուարթ ու կայտառ մանուկներ, իսկ իմ մէջ՝ դոցա համար ընկեր ու պաշտպան: Երբեմն, երբեմն ինձ սարսեցնում էր այն միտքը, որ վտանգաւոր րոպէն արդէն մօտ է, այն լոպէն, որ պիտի վերջ տայ դոցա երեխայական խաղերին. այս՝, մտածում էի, բայց և ուժգին հարուածով մղում, հեռացնում էի ինձանից այդ ու դորա նուն մոքերը. Բայց ժամանակը անցնում էր, իսկ դորա հետ միասին հանում էր ահարկու ժամը: (Չոքում է): Ո՛վ երկնային Տէր, արդարութեան զօրեղ Աստուած, Դու, որ Քո զօրեղ աջով պահպանել ես այսքան երկար տարիներ մի թշուառ այրի կնոջ, պարզեիր ինձ այժմ տոկուն ոյժ, որ կարողանամ անսասան կրել այն ամեն փորձանքները, որոնք ուղարկուած են ինձ բարձրից: Օրչնի՛ր Քո Սուրբ ըթունքներով այն արիւնաշալախ ճանապարհը, որով ուղում եմ այսօրուանից ուղել իմ քայլերս: Անխորտակելի

արիութեամբ ու քաջութեամբ լցրու սիրտս և հոգիս, ազատիր  
ինձ խսպառ ամիրելու և խղճահարուելու զգացմոնկներից, վուքր-  
հոգութեան արտասուքները թող երբէք չերևին աչքերիս մէջ  
և թողոր իմ՝ ամբողջ կազմուածքս՝ տասը պատուիրանաց տախ-  
տակի ամրութիւնն ունենայ, որպէս զի դորանով փրկուի հայ-  
րենիքս ստրկութեան անարդ շղթաներից:

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Գործողութիւնը կատարվում է Երուաղէմի դիմաց:—Լուսանում է:—  
Ամրոցի պատնէշի վերայ երեսում են ասորական զինուորներ:—Բեմի  
առաջին մասում կանգնած են մի խումբ զօրավարներ և դոցա մօտ  
պահապան զինուորներ:—Դէպի ծախ, լեռան վերայ երեսում են քաղաքի  
աւերակները, շրջապատուած պարսպով:—Խորքում ձգուած է դաշ-  
տավալր:

Կարագոյրը բարձրացած ժամանակը քանդակագործը բանուորների օգ-  
նութեամբ վերջացնում է Զևսի արծանի կառուցումը կերոնների լոյսի  
առաջնորդութեամբ:

## Տ Ե Ս Ի Լ Ա Ա Ա Ջ Ի Ն.

Եղիսակ: Սորտ առաջ կանգնած են համբաւաբերներ և Յովհաննէսը:  
Դէպի այ—Եւրիսթենէսը և ուրիշ զօրավարներ:

ԵՎԻՍԻ, (Եւրիսթենէսին).

Կարծես աղմուկի ձայներ են լսվում, այնպէս չէ:

ԵՒՐԻՍԹԵՆԷՏԻ.

Ո՛չ, ես չեմ լսում: Աչա՛, շուտով կը բացուի օրը. նայի՛ր,  
տես, արշալցուը արդէն փայլում է:

ԵՎԻՍԻ.

Այո՛, այո՛, ճշմարիտ է ասածդ, թշնամին էլ չի կարող  
այժմ մեղ մօտենալ, արշալցու նորան վախեցնում է:

ԵՒՐԻՍԹԵՆԷՏԻ.

Բայց ե՞րբ պիտի վերջանայ մեր այս վրդովուած ու շփոթ-  
ուած կեանքը. գիշերը անդամ՝ ժամանակ չունիք աչք փակելու:

ԵՎԻՍԻ:

Այժմ այդ ամենի մախճանը հեռու չէ. մեղ օգնութեան

է գալիս ինքը թագաւորը և արագ քպյլերով Վակիսիտը և նիկանորը անթիւ զրախմբեր են բերում: Շուտով հրէաստանի հողի վերայ ոտք կըդնեն երեք գումարտակ, այս՝ ամբողջ երեք գումարտակ, իսկ այդպիսի մի ցժի գէմ կռուելը հեշտ բան չէ: Վաղոց էր հարկաւոր այդպէս վարուել: (Իէպի սուրհանդակը): Ե՞րբ ես տեսել թագաւորին:

## ՍՈՒՐՃԱՆԴԱԿ.

Անցեալ առաւօտ, այստեղից հարիւր ասպարէզ հեռաւորութեան վերայ՝ ձիշտ Բիւթանիայում:

ԶՕՐԱՎԱՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ, (Եւրիսթենեսին).

Ի՞նչպէս, կայսրը գալի՞ս է:

## ԵՒՐԻՍԹԵՆԵՍ.

Այո՛, գալիս է:

ԶՕՐԱՎԱՐ.

Ուրեմն պիտի Ճանապարհուե՞նք պատերազմելու,

## ԵՂԻՍԻ.

Ժամանակ է, հակառակ գէպքում ապստամբութիւնը սպառնում է աւելի և աւելի ամրանալ ու ընդարձակուել: (Ցոյց տալով լրաբերի վերայ): Ահա՛ մի մարդ, որ անձամբ ականատես է եղել Յուգայի և նորա համամիտների ամեն շարագործութիւններին:

## ՍՈՒՐՃԱՆԴԱԿ.

Ամեն տեղ նա զինուղներ է ժողովում, նորա զօրքերը օրօրի վերայ շատանում են:

## ԵՂԻՍԻ.

Օ՛, զազրալի ընտանիք և գարշելի եղբայրներ,

## ՍՈՒՐՃԱՆԴԱԿ.

Առել քարուքանդ են արել արդէն Քերրոնը, և ինչպէս ասում են, Հարիզմին էլ արդէն առել, տիրել են:

## ԵՂԻՍԻ, (զարմացած).

Ճիշտ, (Ցովհաննէսին): Իսկ ինչու դու մինչև այսօր չե՞ս յայտնել այդ ամենը ինձ, Դու պարտաւոր էիր յայտնել ինձ այն ամենի մասին, ինչ որ կատարվում և տեղի էր ունենում: Երբ հրէան ակաստան է գտնում թշնամեաց բանակում, նա գոնէ պարտաւոր է ամեն քայլափոխում հաւատարիմ լինել: Ուրեմն

սորանից յետոյ չմոռանաս ասածներս: (Յովհաննէսը խոնարհութեամբ պուլս է տալիս Եղիսէին, որ շարունակում է խօսել լրաբերի հետ):

**ԶՈՐԱՎԱՐ.** (Դիմելով Եւրիսթենէսին և ցոյց տալով Յավիշաննէսի վերայ).

Լաւ չէ ծառայում:

#### ԵՒՐԻՍԹԵՆԷՍԻԱ.

Միթէ երկար կըքաշէ դոցա կեանքը, ինձ այնպէս է թըւում, որ այդ իսրայէլացին մեզ համար վնասակար մարդ է, որ դա մի ստորաբարշ դաւաճան է, որ նա այստեղ դիտում է ամեն ինչ և իրայիններին յայտնում է բոլորը:

**ԶՈՐԱՎԱՐ.**

Այդ ամենի հետ միասին ի նկատի ունեցիր և այն, որ թագաւորական տան մէջ սիրով և յարգանքով է ընդունվում:

#### ԵՒՐԻՍԹԵՆԷՍԻԱ.

Ինքը՝ թագաւորի դուստրը լսում և հաւատում է նորա ամեն խօսքին: Ի՞նչով բացատրենք, որ ուրիշները մեր ձեռքից շարունակ հալածվում ու նեղվում են, և դա միայնակ, որ ազատ կեանք վայելելով և թշնամիներից բարեկամութիւն, ապաստարան է գտնում մեր բանակում: Խորամանկ, ինչպէս մի Յոհն, կանացի՝ ամենաքնքոյշ գեղեցկութեամբ օժտուած, նա ճշմարիտ որ ընդունակ է և կաշառել և կախարդել: Ես այդ բնաւ չեմ կասկածում: Այսպէս թէ այնպէս, ես նորա մէջ միմիայն մի դաւաճան եմ տեսնում:

**ԵՂԻՍԻ:** (Հեռանալով լսաբերից).

Ո՛չ, ինձ կատաղեցնում է այդ թուգան:

#### ԵՒՐԻՍԹԵՆԷՍԻԱ.

Իսկ յայտնի՞ է այն ճանապարհը, որով նա դալիս է, թէ ոչ:

**ԵՂԻՍԻ:**

Ո՛չ, արեգակը կարծես նոցա ծածկում է մեր աչքից և չի լուսաւորում նոցա իւր ճառագայթներով: Թագնվում են անապատների, խիտ անտառների խորքերում և լեռների քարանձաւներում: Շատ յաճախ մարդ մոտածում է, թէ նոցա թիւը քիչ է, թէ նորա դեռ հեռու են, բայց յանկարծ նայում տես-

Նում ես, որ Յուղայի անթիւ ու անհամար զօրքերը արդէն մօտդ են՝ կարծես գետնից բուանելով։ Մի՛ մոռանաք դուք ի նկատի առնել և նոցա այն ընդունակութիւնը, թէ ինչ հմտութեամբ և խորամանկութեամբ են կարողանում մտնել ամրոցները և կաշուել պահապաններին։ Նոքա այժմ աւելի մեծ փառք են վաստակել, քան մի ժամանակ իրենց հայրը. այժմ մեր կործը միմիսյն դոցա հետ է, դոցա մէջ է ամրողջ ոյժը, այդ եղբայրների մէջ է պատկերացել ամրողջ հրէաստանը։ Ո՛չ, ո՛չ, պէտք է դոցա մի հարուածով ջարդ ու փշուր անել։

## ԵԿՐԻՍԹԵՆԻԱ.

Դոքա անկարող կը լինեն մեր երկու զօրաբաժինների ոյժին գիմադիր լինել։

## ԵՎՀԱՅԵ.

Երբ կը լրջապատճեք դոցա ամեն կողմից, այն ժամանակ ժողովուրդը ինքը, շվոմթուած իրարանցումից ու երկիւղից, կը խոնարհի իւր զլուխը մեր առաջ և աչա՛ այն ժամանակ կը պայ օրհասական ժամը, մահուան վայրկեանը ամրողջ հրէաստանի համար։ Աչա՛, հէնց այս բոպէիս, իրենց քաղաքի դիմաց, որին ամենքն էլ սրբութեան տեղ են ընդունում, ուղեղ իրենց հարազատ երրուսաղէմի դիմաց՝ նոքա կը տեսնեն արբայավայել աստծուն, շանթընկէց քաջ Զեսին, (Քաղաքից, տափարակի վրայով մօտենում են մարդկանց մի քանի խմբեր)։ Այդ ովքեր են գալիս։

## ԵԿՐԻՍԹԵՆԻԱ.

Դոքա պատերազմի ուղեկիցներն են. վաճառականներ, աւազաններ, աղքատներ, պոռնիկներ։ (Վաճառականները մօտենում են իրենց ապրանքներով՝ բարձած զորինների վնրալ, այս խմբի մէջ երեւում են Ցովհաննէսի եղբայրներ՝ Ցուղան, Սիմէռնը, Եղիազարը և Ցովնաթանը։ Քաղաքալին դոնից խումբ խումբ դուրս է զալիս ժողովուրդը)։

## ԵՎՀԱՅԵ.

Ժողովուրդը արդէն դուրս է զալիս քաղաքի դոնից, Ե՞րբ ապա պէտք է ցոյց տաս մեզ՝ դու, հոգեշունչ քանդակագործ, քո աշխատանքը։ Նայի՛ր, տե՛ս, ժողովուրդը արդէն ՚ի մի է խմբվում։

**ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ,** (բանուորներին)։

**ՎԵՐԳՐԵ՛Ք ՃԱՖԿՈՅԸ,** (Բանուորները լետ են ծգում արձանի վը-

րալից ծածկողը, որի տակից երեսում է ջևսը, նստած գահի վերայ և բռնած ծախ ծեռքում զայխոնը, իսկ աշ ծեռքում տէրութեան նշանարանը (ծերչաւա): Ժողովուրդը մօտենում է արձանին: Խսրայէլացիք յուզուած սրտով միմեանց ցոյց են տալիս արձանի վերայ):

**ԵՂԻՍԻ:** (Հըճուաննքայ):

Ուրբան գեղեցիկ է: Այո՛, այո, այդ ամենակարող աստ-ուածն է, աստուածների աստուածը, մեծն ողիմացին: Զեռքում բռնած ունի գայխոնը...

**ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ:** (Ժելադրելով):

Իսկ միւսի մէջ տէրութեան նշանաբանը:

**ԵՂԻՍԻ:**

Ճշմարիս որ արժանի ես փառքի և զովասանաց. իրաւ որ հասկացել ես Ճշտիւ իմ միտքը...

**ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ:**

Նորա գահը հովանաւորում է Թեմիդը, իսկ աշա՛, այս-տեղ, ցածում, տիտանների օրհասական Ճակատամարտն է տեղի ունենում...

**ԵՂԻՍԻ:**

Փառք քեզ, փառք... կրկնակի փառք... ճշմարիտն եմ ա-սում, որ քո աշխատանքը անբիծ է... (Հրաւիրում է ծեռքով ժո-ղովուրդին): Եկե՛ք բոլորեքեանքդ էլ, նայեցէ՛ք ու զարմացէ՛ք: Լսի՛ր, ժողովուրդ. Հրէաստանը այլ ևս չկայ, նորա մահուան դա-տավճիռը արդէն որոշուած է մեր կողմից, Կայսեր վերջին հրա-մանը այս է, բոլոր երկիրը քար ու քանդ անել և աւերել, գե-ղերը և չենքերը կրակի մատնել, նոյն վիճակին ենթարկել նաև քաղաքներն ու տաճարները, իսկ ժողովուրդին քարշ տալ, տա-նել դէպի կախաղան և կամ ստրկացնել ամեաանգութ կերպով: Այդ նպատակով թագաւորը ամբողջ երեք զօրախումբ է տեղա-հան արել, իսկ դոցա հետ կըմիանան Ճանապարհին իգումիացիք: Դոքա ամենքը դէմ առ դէմ դուրս կըդան Հրէաստանի հետ կոռւե-լու և ճշմարիս որ այն ժամանակ կ'որոտայ կեանքի և մահուան Ճակատամարտը... (Առաւտեան նորաբաց արեգակը լուսաւորում է արձանը և նորա մօտ կանգնած Ցուղային, որին սկզբում Եղիազարը չի նկատում): Այս ի՞նչ եմ տեսնում, ինքը երկինքը կարծես մար-քարէանում է յօգուտ մեզ արշալոյսը բացուել և երկնքի

լուսաւորիչը իւր կենարար ճառագայթները թափում է ուղղակի յաղթական ճակատի դիմաց. Արդեօք այդ չի նշանակում; որ ինքը շանթընկեցը հիացմամբ լսելիս է եղել իմ խօսքերը. (Նկատելով Յուլային): Ի՞նչ գործ ունես դու մեզ մօտ, ո՞վ ես դու,

## ՅՈՒԴԱ. (ողջունելով).

Ես գերիներ եմ գնում. ուզում էի իմանալ քո զօրական-ներից, թէ ի՞նչ կ'արժենայ իւրաքանչիւրը այն Խրայէլացիներից, որ կըգերուի ձեզանից.

## ԵՎԼԻՍԵ.

Թագաւորը նշանակել է իւրաքանչիւր իննը տասնեակի համար մի դահնեկան:

## ՅՈՒԴԱ.

Ի՞նչպէս, ամբողջ իննսուն մարդու համար միմիայն մի դահնեկան, ինձ համար ի հարկէ որ ձեռնտու է, բայց բանը նորանում է, թէ դուք ի՞նչ օգուտ ունէք դորանից. Ի՞նչով պէտք է այն ժամանակ վճարէք չոռվմայեցիներին ձեր տուրքը:

## ԵՎԼԻՍԵ. (կոպտաթեամբ).

Քեզ ի՞նչ, թէ ինչով կըվճարենք. Աչա՛, գնա՛ և քո առեւտուրդ նոցա հետ արա՛. (Յոյց տալով զօրականների վերայ): Ես ժամանակ չունեմ այստեղ քեզ հետ երկար ու բարակ դատողութիւնների մէջ մտնելու. (Դիմելով դէսի ժողովուրդը և ցոյց տալով պալատի վերայ): Եյ, դուք, ճանապահ տուէք, աչա՛, գալիս է արքայադուստր Միրրան. Հեռանանք այստեղից, որ չվորովինք նորա հանգստութիւնը. (Գլուխ է խոնարհեցնում արձանին): Պահպանի՛ր մեզ և սորանից յետոյ. այդ քաղաքի տիրապետող գերիշխանը դու եղի՛ր, ով Զես. (Չնում է: Ժողովուրդը և զօրքը ցրվում են զանազան կողմեր: Աշ կողմից մտնում է Յովհաննէսը):

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

## ՅՈՒՀԱՆՆԵՍ.

Արդէն մօտ է ժամը, ցանկալի և լուսապայծառ ժամը, կըգայ նա և ես նորից կըտեսնեմ նորան... Սիրում եմ նայել և տեսնել թէ ինչպէս թեթևօրէն տատանվում է նորա օթեանի պատուհանի վարագոյրը, սիրում եմ գրկել այն վայրկեանը, երբ

Նա առաւօտները կանացի ձեռքով մի կողմ է ձգուած, երբ նա ասամօթխած գէմքով՝ ուրախ արեգակի վառվուուն ճառապայթ-ները գէպի ներս է հրաւիրում: ՈՇ, խաղաղ և բաղդաւոր օթեան, դու նման ես երկնակամարի տակ սլացող թռչնիկի բու-նին, որ շինուած է լինում հին, քայքայուած աւերակների մէջ: (Ուշադրութիւնը զարձնելով գէպի մի կողմ): Մի տեղից կար-ծես երգի ձայներ են հասնում ակտնջիս... արդեօք այս հրաշք չէ: Ես, որ ստեղծուած եմ լսելու միմիայն հալածիչների ահար-կու ձայները, ես, որ կիսակենդան մի ցեղի թշուառ զաւակն եմ՝ անսարգուած անունով և վշտայած հոգով, ես, ես գեռ ու-զում եմ ապրել գեռ յշս ունեմ կեանքի բարեբները վա-յելելու, ես, որ այստեղ կանդնած առանձին մի հոճուանքով արբում եմ օտարազգի կոյսի երգի գայլայլիկներով և որից կար-ծես՝ մի ինչ որ ինձ անծանօթ զմայլեցուցիչ զգացմունքներով հոգիս կենդանանում և ուրախանում է, արդեօք ներելի է... (Ուրախայած): Նա գալիս է... Գալիս է... նորան ահա՛ ես տես-նում եմ... ինչպէս մի երկնային թռչնակ, որ գերութիւնից ա-զատուելով՝ ուրախ-ուրախ սաւառնում է պայծառ երկնակամարի տակ, այնպէս և նա հեղձուցիչ պալատական մթնոլորտից դուրս գալով առաւօտեան ժամին թարմանալու, այս գաշտավայրերի լոռութիւնը խանգարում է իւր կախարդիչ կարծես թէ երկնա-յին մեղեգիով... Ով սիրելի, հրաշալի տեսարան, թոյլ տուր, որ ես զմայլուեմ քո պատկերով, թո՛լ յագենամ քո քաղցր երգերով և գէթ մի լոպէ, մի վայրկեան մթիթարէ աբ-սորանքի գատապարտուածիս: (Պալատի սանդուխտի աստիճաններով իշնում է Միքրան, շրջապատուած նամիշտներով, որոնք և երգում են այդ միջոցին: Միքրայի հետ միասին գուգընթաց զալիս է էրիքսը):

## ԵՐԳ. 20. ՏՀԻԿԱԲՐ.

Տեղինէն, Յունաստանի գեղեցկուհին  
Սլիեց Պարիսին,  
Իսկ աստուածները բարկացան  
Եւ տրտմեց Տրոյեան:  
Մինելայ կայսրը չի համբերիլ այդ վիրաւորանքը,  
Նա փափագում է գաժան վրէժինդրութեան դիմել  
Եւ նորա հետ եկաւ ամբողջ Յունաստանը՝  
Աչեղ կոյւ մլելու յանուն պատուասիրութեան:

Վտանգաւոր, ահարկու է աստուածների բարկութիւնը,  
հրեղէն փայլախներ են ցրվում նրա աչքերը,  
Եւ թշնամու հարուածների տակ  
Ծերունի Պրիամը գողում է ու սարսում:  
Ամօթ է, չեղինէ, մեղք է, չեղինէ,  
Դու օտար երկրացուն ես սիրում,  
Եւ անձնական հաճոյքի պատճառով  
Տրոյեայի աղատութիւնն ես խորտակում:

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

Միլրա, Երիքս և նաժիշաներ: Ծառի յետեն և Ցոլհաննէսը:  
ԵՐԻՔԸՆ.

Ո՞քան վտանգաւոր ու ծանր է այս Ճանապարհի վերայ  
երթենեկութիւնը, բայց և չնայած դորան, մենք յաճախ անց ու  
դարձ ենք անում այստեղ:

## ՄԻՒՐՅԱ.

Այդ Ճշմարիտ է, բայց ի՞նչ արած, որ ես չափազանց սի-  
րում եմ այս Ճանապարհը:

## ԵՐԻՔԸՆ.

Աւերակները, փլատակները և պատնէշները...

## ՄԻՒՐՅԱ.

Բայց դոցա փոխարէն՝ նորա վերայ աճում, բազմանում են  
ծաղիկներ, որոնց հետքը անգամ չկայ իմ ծաղկանոցներում և  
այգիներում: Բացի՝ այդ՝ այստեղ և միշտ ամրոխ է լինում  
ժողովուած...

## ԵՐԻՔԸՆ.

Ճշմարիտ ես ասում: ուրախ չէ անցնում քո կեանքը այս  
տխուր և տրտում աշխարհում:

## ՄԻՒՐՅԱ.

Ասենք թէ. բայց... ի՞նչ արած: Հօրս հետ եկել եմ այս-  
տեղ, իսկ նորա համար՝ գու արդէն գիտես, որ կեանքի բաւակա-  
նութիւնը միմիայն պատերազմների մէջ է: Ի՞նչ տեղ որ գնում  
է, ինձ էլ անպատճառ հետք պիտի տանէ, իսկ ես էլ իբրև նո-  
րա դուստրը՝ հնազանդվում եմ ճակատագրիս որոշման:

ԷՐԻՔՍԱՆ, (պատկառանձով).

ՈՇ, ի՞նչ արած:

ՄԻՐՐԱ, (նստելով ժայռի վերայ).

ՈՇքան գեղեցիկ տեսարաններ են բացվում այստեղից. Հրազդան երկինքը... հիւսիսում Լիբանանը՝ կանգնած իբրև մի ամենի հակայ... նորա շրջակայքում կանաչաղարդ հովհաններ... Նըստում ես թէ չէ և յանկարծ չգիտես, թէ որ կողմից՝ օդի հոսանքը զեփիւրանման շիփելով գէմքիդ՝ բերում է իր հետ քնքոյշ բուրմունքներ յասմիկի, վարդի, շուշանի, կինամնի և գորա հետի միասին կարծես թէ խորհրդաւոր ձայնով շշնջում՝ է սիրումասին... Աչա՛, այդ միջոցներին սիրտս մի արտասովոր բուրմունքով, մի ինչ որ զգացմունքով լցվում է...

ՅՈՎՀԱՆՆԵՍ, (առանձին).

ՈՇ, հրաշալի և քաղցր ձայն:

ՄԻՐՐԱ, (նստիշտներին).

Ապա, մէկ անգամ ես ինձ համար կրկնեցէք միևնոյն երգը չեղինէ, մեղք է, գու սիրում ես օտար երկրացուն»...

ԵՐԳՉՈՒՀԻՆԵՐ.

Ամօթժ է, չեղինէ, մեղք է, չեղինէ,  
Որ գու օտար երկրացուն ես սիրում,  
Եւ անձնական հաճոյքների պատճառով  
Տրոյեայի ազատութիւնն ես խորտակում:

ՄԻՐՐԱ, (բարձրանալով տեղից).

ԳՆԱՇՔ: (Նկատելով Ցովհաննէսին): ՈՇ, նա է՛: ՈՇ, հրաշալի վայրիեան: (Նամիշտները հեռանում են: Միրրան հետևում է նոցա, իր սուր հայեացքը բնենելով Ցովհաննէսի վերալ: Այս միջոցին մտնում է Ցովհան և կանգնելով, նայում է եղթօր վերայ:)

ԵՐԳՉՈՒՀԻՆԵՐԸ, (հետուում).

Ցունաստանի գեկեցկուհի չեղինէն  
Սիրեց Պարիսին,  
Որի համար բարկացան աստուածները  
Եւ տրամեց Տրոյեան:

ՅՈՎՀԱՆՆԵՍ, (գուրս գալով ժայռի հետեից).

Նորա քայլերի ձայնը ես տակաւին լսում եմ... ՈՇ, ի՞նչ հրաշալի և քաղցր ձայն... Ա՛յս, ի նշունա հեռացաւ այստեղից...

## ՏԵՍԻԼ ԶՈՐՈՐՈՐԴ.

ՅՈՒԹԱՆ ԵՒԾ ՅՈՒԹԱՆ.

ՅՈՒԹԱՆ, (բռնկով եղբօր թիկունքից).

ԵՇՔԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ,

ՅՈՎՀԱՆՆԵՍ, (յետ շրջելով երեսը).

ՅՈՒԴԱՆ,

ՅՈՒԹԱՆ.

Ի՞նչ է նշանակում, եղբայր, որ այսքան երկար ժամանակ քեզանից ոչ մի համբաւ չենք ստանում: Աչա՛, ինչպէս տեսնում ես, ես ինքս անձամբ վճռեցի դալ...

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Այո՛, նո ինքն է... ՅՈՒԴԱՆ է... առիւծը... ՅՈՒԳԱՆ...

ՅՈՒԹԱՆ.

Վակիսիդը և Նիկիանորը արդէն պատրաստ են միանգամայն մեղ հետ պատերազմելու. դոցանից մէկը բռնել է բարձրութիւնները, իսկ միւսը ցրուել է զօրքը դաշտավյարերում: Վաղը, հենց արշալցյափ երկելուն պէս՝ պիտի սկսուի ոչ թէ կեանքի, այլ մահու ճակատամարտը. մենք ստիպուած ենք կռուել երես առ երես թագաւորական ֆալանգների հետ: Ի՞նչ են ասում, այդ պատերազմի առաջնորդն ու ղեկավարը ինքը թագաւորը պիտի լինի, թէ մի ուրիշը:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Այո՛, այդպէս են խօսում:

ՅՈՒԹԱՆ.

Իսկ քաղաքի մէջ նա որքան զինուոր պիտի թողնէ:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Մօտ տասը հազար:

ՅՈՒԹԱՆ.

Ի՞նչպէս է հրամանատարի անունը:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Երիսթենէս:

ՅՈՒԹԱՆ.

Իսկ գիտէ՞ արդեզք դոցա այդ հրամանատարը և պահապան

զօրավարը, թէ ի՞նչպէս եմ այս գիշեր գաղտագողի մտել քաղաքը, Եղիսէն ի՞նչ է անում:

ՅՈՎՃԱՆՆԻՍ.

Նա չափազանց կասկածու մի անձնաւորութիւն է:

ՅՈՒԴԱ.

Ամեն բանի մէջ նորան հնալանդ եղիր: Այժմ ասա տեսնեմ; կարո՞ղ ես արդեօք որ և է կերպ դու մուտք գործել պալատը, թէ ոչ:

ՅՈՎՃԱՆՆԻՍ.

Այդ էլ ինձ երբեմն, երբեմն յաջողվում է:

ՅՈՒԴԱ.

Ա՞րդեօք գիտես դու այն ամենը, ինչ որ նոքա մոածում, հաշվում և անում են:

ՅՈՎՃԱՆՆԻՍ.

Ես լսում եմ ամենը:

ՅՈՒԴԱ.

Եւ թուչքի ժամանակ բռնում ես այն բոլորը, ինչ որ թշնամիները խորհում և ասում են, այնպէս չէ:

ՅՈՎՃԱՆՆԻՍ. (Դլուխը խոնարհեցնելով).

ԱՇԽԱ.

ՅՈՒԴԱ.

Յիշեր, եղբայր, չմոռանաս երբէք, որ նոցա կորուսից է կախուած մեր յաջողութիւնն ու փառքը:

ՅՈՎՃԱՆՆԻՍ. (ցնցուելով).

Ես...

ՅՈՒԴԱ.

Եղի՛ր խորամանկ:

ՅՈՎՃԱՆՆԻՍ. (Ճածկելով դէմքը).

Ես... ես... դաւաճան... ես լրտես...

ՅՈՒԴԱ. (Քաղցրութեամբ).

Սիրելի՛ եղբայր...

ՅՈՎՃԱՆՆԻՍ. (Աանդիմանական ձայնով).

ՈՇ, մի՞թէ ես անարժան էի, մի՞թէ ես անկարող էի զէնք բանեցնել պատերազմի գաղտում: Ասա՛ ինձ եղբայր տեսնեմ:

Թէ ի՞նչու ես դու ինձ ծանրաբեռնել այս ստոր ու կեղտոտ պաշտօնով. ի՞նչու, ի՞նչու ես հեռացրել ինձ Աստուածանից, հեռացրել քեզանից և իմ սրտին մօտիկ ժողովուրդից և բերել կանգնեցրել մեր թշնամու, մեզ հալածողների մէջ. Ո՛չ, մի՞թէ ես անարժան էի զարդարուել պատերազմական հագուստով, սուր առնել ձեռքս և քո զրօշակի տակ գուրս գալ կոուի դաշտը. Ասա՛, ասա տեսնեմ, թէ ի՞նչու ինձ ես չէ վիճակուած այդ բաղդը, այդ երջանկութիւնը. Ո՛չ, սիրելի եղբայր, եթէ միմիայն խանայիր, թէ ուրան հակակրելի ու անտանելի է ինձ համար իմ՝ ներկայ պաշտօնը... Ճակատիս վերայ արդէն զրոշմուած են դաւաճան ու լրտես մականունները, անունս արատաւորուած է, պատիւս ոտնակոս է եղած այս ամձետաբեր ծառայութիւնից. Ես հանգիստ սրտով, պարզ գէմքով չեմ կարողանում մարդկանց, աշխարհքի վերայ նայել. Ա՛յս, Աստուած իմ, Աստուած իմ...

## ՅՈՒԴԱ.

Սիրելի՛ս, պէտք չէ այդքան վզդովուել ու ցաւել. անկարելի է, որ բոլորիս էլ միւնոյն գործը վիճակուէր: Հաւատա՛ ինձ, որ հայրենիքին, նորա այն թշուառ. օրերում, երբ նա հեծում է հալածչի անողորմ լծի տակ, պաշտպան լինել կարող է նա, ով ըստ չափու կարողութեան օգնութեան ձեռք է մեկնում՝ լինի այդ թշնամու վրանների տակ թափնուած տեղից թէ պատերազմի դաշտում: Այո՛, այո՛, ասում եմ, որ բոլորը մէկ է: Քո մէջ ես ներկայ բոպէում ոչ թէ մի լրտես եմ տեսնում, այլ հայրենիաց պաշտպան մի զինուոր՝ ուղիղ այնպէս, ինչպէս և ես եմ կամ ինչպէս և միւս եղբայրներդ են:

## ՅՈՎԱԿԱՆԻՑ.

Ո՞վ, այդ ե՞ս եմ հայրենիքի պաշտպան զինուորը:

## ՅՈՒԴԱ.

Այո՛, ճիշտ նոյնը, ինչ որ և մեկը ենք... նոյն իսկ գուցէ քո կատարած աւելի մէծ է, քան մերը: Քեզ վիճակուել է մարդասիրական տանջանկներ կրել դու զո՞չ ես բերուած լրտեսելու, ստախոսելու, քստմնելու, դու ուժով յետ ես մղուած պատերազմի դաշտից յաղթական փառքին մասնակից լինելուց և այդ ամենը ի սէր հայրենիքի: Մի՞թէ այդ քիչ բան է քո կարծիքավ, մի՞թէ այդ չնչին գործ է: Ի՞նչու ես այդքան վշտացել, վզդովուել ու նեղացել ի՞նչու ես այդպէս անյօյս վայր իջեցրել

գլուխող. Ո՛չ, ո՛չ միսիթարուիր և յուսա՛, եղբայր, որովհետեւ  
մենք ամենքս գնահատում ենք քո ծառայութիւնը և դորա հետ  
միասին կրկնապատկում ենք մեր՝ դէպի քեզ ունեցած պատիւը,  
յարգանքը և սէրը:

ՅԱՎՀԱԱՆԱԿՍ, (բարձրացրելով գլուխը).

Ուրեմն ների՛ր, եղբայր:

#### ՅՈՒԴԱ.

Մեղ վիճակուել է տատասկոտ Ճանապարհ, խաւարի մէջ  
մենք յաղթութիւն ենք որոնում և թէպէտ և այն դժուարու-  
թեամբ ենք ձեռք բերում, բայց և պյնպէս չէ՞ որ հաւատում  
ենք մեր բարի աստղին, չէ՞ ո՞ր գիտենք, որ արշալոյսը պիտի վրայ  
հասնէ և փոխարինէ խաւար գիշերը:

ՅԱՎՀԱԱՆԱԿՍ.

Բայց եթէ քեզ այստեղ յանկարծ Ճանաչեն:

#### ՅՈՒԴԱ.

Ո՞ւմը, ի՞նձ, այս և պյս հագուստով:

ՅԱՎՀԱԱՆԱԿՍ.

Այո՛, երկիւղալի է...

#### ՅՈՒԴԱ.

Այդ անկարելի է, ես չեմ հաւատում... Բայց լսի՛ր, թէ  
ինչ պէտք է ասեմ. մեր զօրավարները մի սովորութիւն են ու-  
նեցել, այն մենք իբրև հնութիւն պաշտում ենք. պատերազմի  
օրուայ նախընթաց գիշերը աղօթել Աստծուն. Ժողովելով  
ի մի բոլոր ժողովուրդը տաճարի մօտ ջերմեռանդ աղօթել է,  
խոկ նոցա առաջնորդները այդ միջոցին կրօնական զանազան ա-  
րարողութիւններ են կատարել. Ներկայում էլ այդպէս պիտի  
լինի, թէպէտ և ժողովուրդը հեծում է, թէպէտ և նորա տա-  
ճարը քար ու քանոտ է եղել. թէպէտ և գործի գլուխ կանգնած-  
ները հալածանքի են ենթարկուած, բայց և պյնպէս ուզում ենք  
սրբութեամբ պահպանել այդ հինաւուրց ծէսը. Դու տեսնում  
ես այնտեղ քաղաքի դռան մօտ խմբուած այն մարգկերանցը,  
որոնք, ինչպէս և ես, սորուկների հագուստ են հագել. Գիտե՞ս  
արդեօք, թէ ինչ մարդիկ են դպա. Այն մեր եղբայրներն են,  
Եղիազարը, Յովսամթանը և Սիմէոնը.

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Ի՞նչպէս, մեր եղբայրները:

## ՅՈՒԴԱ.

Այո՛. իսկ նոցանից քիչ հեռու տեսնում ես դու արդեօք այն կնոջը, որ ցնցոտիներով է ծածկուած: Աչա՛, տես, նա այժմ քաղաքի պարսպից պյս կողմն է գալիս: Ճանաչում ես, թէ ով է այդ կինը:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Ո՛չ, չեմ ճանաչում:

## ՅՈՒԴԱ.

Այդ մեր մայրն է:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Ի՞նչպէս, մեր եղբայրները, մեր մայրը:

## ՅՈՒԴԱ.

Այո՛, նա գալիս է պյս կողմը և դու հենց այս րոպէիս կըտեմնես նորան: Այդպէս ուրեմն, խնացիր, եղբայր, որ վաղը, ազօթքից յետոյ մենք պէտք է արիւնալից պատերազմ՝ ունենանք մեր հայրենի երուսալէմ քաղաքի դիմաց, մեր սրբազն հայրենիքի ազատութեան գործի համար. անարգելով երկիւղը, մահուան հետ դէմ առ դէմ պիտի օրհասական կուուի բռնուենք... հենց այս րոպէիս մեր մայրը պիտի ամենիս օրհնէ, որ վաղը քաջախտ դիմագրենք թշնամուն և յաղթութեան փառքով պսակինք ամենիս անվեհերութիւնը և քաջագործութիւնները: Նա աչա այժմ այստեղ է և նորա հետ միասին մեր բոլոր եղբայրները:

(Ներս են մտնում Հոաքելը, Սիմեոնը, Յովնաթանը և Եղիազարը):

## ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Յովհաննէս, Յուդա, Արմեն, Յովնաթան, Եղիազար և Հոաքել:

## ՀՈՒԱՔԵԼ.

Ո՛չ, թոյլ տուեք ինձ մծտենալ ձեր ամենիդ շրժունքները լիզելու, ով իմ սիրած որդիք: Ո՞քափ երկար օրեր եմ ձեզ որոնել ի զուր տեղից այս արիւնաշաղախ ճանապարհներում: Ես յառած և ագահ հայեացքս շարունակ այս և այն կողմը դար-

ձրել գտնելու վրիժառուներին, սուրբ հայրենիքի ազատութեան դաշտափառով ոգևորուած այն արժանաւոր առիւծներին, որոնց միացրել եմ ես իմ ստինքի կաթով և որնց աչա, վերջապէս, ի մի խմբուած ես գտնում եմ այստեղ. Աչա, աչա, մի քաջազօր ազգի որդեքը, աչա Մակիաբայեցոց արժանաւոր զաւակները, Հնազանդ իմ և հօր կամքին, գեռ փոքրութեան հասակից իրենց մէջ վառ պահելով Աստուածային երկիւղը, երբէք կենդանի չեն մատնուիլ թշնամեաց ձեռքը, երբէք նոքա յանձնառու չեն լինիլ երկրպագելու թշնամեաց կուռքերին, Սոքա քո անուանն են ծառայում ովկ Ամենալարձեալ Աստուած, և գնալով Քո դրօշակի հետեւց, իրենց սրտերի մէջ ամուր և հաստատ պահում են այն օրէնքը, որ Դու ես տուել նոցա. Քո օրէնքը նաև իրենց օրէնքն է, Քո երկիրը նաև իրենց հայրենի երկիրն է. Նոքա այդ երկիրը հալածանքներից և թշուառութիւններից պաշտպանում են այնպէս, ինչպէս մի ժամանակ հայրն է կոռւել ու պաշտպանել Աչա, դոքա ամենքը Քո առաջ կանգնած են. օրհնի՛ր Քո ամենակարող շրթունքներով, օրհնի՛ր հայրենիքի, ազգի և կրօնի ազատութեան համար կոռւող քաջերին, օրհնի՛ր և պսակի՛ր այդ գժուարին գործը յաղթութեան փառքով:

ՍԻՄԵՈՆ, (բարձրացնելով բազուկները գէպի երկինք).

Եյո, Տէր, Ճշմարիտ է, մենք զինուոր ենք գրուել, մենք քաջութեամբ պիտի կոռւենք, բայց տուր մեզ կարողութիւն լինել այն կոռուողներից, որոնք հայրենիք են փրկում աչարկու թշուառութիւններից, հայրենիք, որ մատնուած է զաժան սորդկութեան, լացի և հեծեծանքի, որոնք ընդունակ են յարութիւն տալ և հրաւեր կարդալ ազգերին նոր կեանքի համար. Տուր մեզ ոյժ նմանելու նոցա, որոնք Աստուածային մուրճերի նմանօրէն զարկում են զնդանին այն միջոցին, երբ երկնքում բոցավառվում է Աստուածային բարկութիւնը, ել մի՛ ուշացնիլ, Տէր, բաց զօրաւոր շրթունքներդ և օրհնի՛ր Քո ընտրեալ երկրի պաշտպաններին՝ իրենց յուսահատական կոռւի մէջ. Այլ ևս չենք կարող կրել ոչ մի հալածանք, այլ ևս չենք համբերիլ Քո անունը հայհոյողներին. (Ցոյց տալով Զեսի արծանի վերայ): Տես, աչա Աստուածային տաճարի դիմաց այդ թշուառականները տեղաւորել են իրենց կուռքը, իսկ մենք, սրտերս լի ժառնութեամբ լոկ հանդիսատես ենք և չենք հասկանում, թէ արդեօք որտեղ ենք կանդնած այս ժամին՝ հայրենի՛ հողի վերայ, թէ մի օտար երկրում:

## ԵՊԻԱԶԱՐ.

Վաղը մեկն ու մեկը մեզանից անհետ պիտ ջնջուի աշխարհ-քի երեսից, կամ չըհաստանը և կամ թէ նորա թշնամին. վաղ-ուան պատերազմը այդ պարզ կ'որոշէ. Ահա, այն ժամանակ մենք երախտամոռ չենք գտնուիլ և այսքան սպանութիւնների փոխա-րէնը ևս սպանութիւններով կը վճարենք, մեղ հասցրած չարիք-ների փոխարէնը մենք ևս դաժան ու սոսկալի չարիքներ կը հաս-ցնենք. Համարձակութեամբ տուած հարուածը միշտ ուժեղ և զարհուրելի է լինում ընդհանրապէս. Թողի ես Եղիազար չի-նեմ, եթէ չպանեմ թագաւորի բանակի մէջ եղած բոլոր փղե-րից ամենամեծին. Թէպէտ և երկիւզալի ու լսանգաւոր է նա, թէպէտ և չեռուից նորա զրահները իրենց փայլով մարդկային աչք են կուրացնում, թէպէտ և կառուցուած է նորա վերայ թագաւորական աշտարակը, բայց և այնպէս ես օձի նման սողա-լով պիտի մօտենամ և սուրս միսեմ ուղիղ կրծքի մէջ մինչև կոթը. և վայր կը զլորուի կենդանին գոռում-գոչիւնով իւր ոս-կեղօծ զարդարանքների և աշտարակի ծանրութիւնից, որտեղ ինքը թագաւորը նստած կը լինի և իւր ոտքերի տակ կը կոխոտէ ու կը ջարդէ ինձ. բայց չէ որ ինքը թագաւորը ևս կը ջարդուի այդ ամենի գաղանի տակ:

## ՅԱՎԱՆԱԹԱՆ.

Դու, Տէ՛ր, զիտես ազգերի ապագան, Դու ամենակարող ես, Դու ես ամենափրկիչը, ազգերի սպառուած ու ջլատուած ոյժերը Դու միայնակ կարող ես վերափենդանացնել. Դու ես կարող նո-ցա իւրաքանչիւրի համար նշանակել իւր վախճանը կամ թէ կեանք պարգևել երկար տարիներ. Դու ես նոցա բաղդի կառավարիչը, և մեր ժողովրդի ներկան ու ապագան Քո ձեռքումն է, ով Ամե-նակարող Արարիչ, Զգիտեմ, թէ ինչ է սպասում նորան ապա-գայում, չգիտեմ և չեմ իմանում, թէ Դու լսում ես արդեօք այն աղաչանքները, որոնց մէջ մենք միայնակ ինդրում ենք հայ-րենի երկրի ազատութեան մասին, բայց զիտեմ ես նախօքք, որ քաջութեամբ, անվեհերութեամբ պիտի կոռւենք յանուն մեր ազգի և հայրենիքի ազատութեան, պիտի պատերազմենք, պիտի արեան գետեր վաղեցնենք նորա ամենայետին անկեան, նորա վեր-ջին չոր տերեւի, նորա մի աւազահատիկի համար... և եթէ մեր նախահարց երկիրը Քո կամքով, Քո որոշմամբ անցնէ Ասորոց ձեռքը, այն ժամանակ այլ և անկարող կը լինինք կրել այդ տե-

ակ անպատւութիւնը և մեղանից իւրաքանչիւրը, առաջինից մինչև վերջինը, անշուշտ պիտի կորչէ արեան դաշտում:

## ՅՈՒԴԱ.

Լսիր, Տէր, սոցա զերմեռանդ աղօմքները: Տեսնում ես, Հայր, որ ամենքս հոգով, մողով սլացել, եկել ենք Քո օգնութեանը դիմելու: Ինչ վերաբերում է ինձ, պիտի ասեմ և որի մէջ հաստատ հաւատացած եմ, թէ ահա այժմեանից երդվում եմ այս սրի վերայ, որ ես անշուշտ պիտի յաղթեմ թշնամուն: Ամենակարող Արարիչը, որ ստեղծել է ինձ, թշլ չի տալ երբէք, որ ես կորչեմ թշնամու անարդ բազկից: (Դիմելով սղբալրներին): Երբ ձեզ մէկն ու մէկը ասէ, թէ ես սպանուած եմ, չհաւատաք նորան: Եթէ ընկնեմ ես պատերազմի դաշտում ուժասպառ լինելուց, եթէ ես կերպարանափոխուեմ դիակի, իսկ յետոյ և փոշու, դարձեալ Աստուած ինձ պէտք է նորից կեանք շնորհէ՝ արեան հեղեղներ վաղեցնելու համար: Օ՛, ես սարսափ պիտի տարածեմ, թշուառութեան և կորուստի պիտի մատնեմ նոցա, որոնք համարձակութիւն ունին մեր գէմ պատերազմ մղելու: (Սօտենալով արձանին): Ահա՝ ձեզ մի լաւ օրինակ, նայեցէք. տեսնում էք: Նոցա կուռքը կանգնած է այստեղ՝ գայիսոնը բռնած իւր ձեռքում: Բայց ամուր և հաստատ չէ այդ գայիսոնը. Հենց վաղը ես պիտի Ասորոց ոյժն ու իրաւոնքը խորտակեմ ուղիղ այնպէս, ինչպէս որ խորտակում եմ այժմ նոցա չաստուծոյ զօրութիւնը: (Կոտրում է գայիսոնը և լետոյ դիմում է սղբալրներին): Վաղ առաւտեան պիտի պաշարեն մեզ նոցա զօրքերն երեք կողմից և եթէ պատահի, որ մերոնք տեսնելով թշնամու անհամար թիւը՝ կը սկսեն վախից, երկիւղից տրանզալ թէ քիչ ենք, դուք պնդեցէք, կրկնեցէք շարունակ, որ «շատ ենք»: Թարձակուեցէք կատաղութեամբ և հաստատակամութեամբ և աշխատեցէք, որ թշնամու բանակից հազար մարդու. վերայ ահ ու դող տարածէ և փախուստի ենթարկէ մերոնցից միայնակ մի անձնաւորութիւն: (Ցովհաննէսին): Ես կըբաժանեմ Վակիսիդին Նիկանորից, յանկարձակի կը յարձակուեմ նորա զօրախմբերի վերայ և իսկզն գէպի քաղաք կը վերաբառնամ այն ժամանակ, երբ թագաւորը ամեն աշխատանք գործ կը լնէ ինձ գտնել հրէական զօրաբաժինների մէջ: Այս՝ ես նորա տարիներով փայփայած դիտաւորութիւնը շատ լաւ եմ հասկանում: այն շատ պարզ երևում է նորա բոլոր

գործերից և շարժումներից... և եթէ ինքը կ'առաջնորդէ զօրախմբերը ինչպէս և առաջ և այդ միջոցին դարձեալ կ'որոնէ ինձ, դու չյայտնես ինձ այդ ոչ մի նշանով. բայց եթէ նա իւր գիտաւորութիւնները փոխէ, այն ժամանակ յայտնիր ինձ անպատճառ՝ ուր էլ որ լինինք մենք երկուսս. Ամեն տեղ համեմ ամեն քայլափոխում գործել համարձակօրէն և որ աւելին է քաջութեամբ—ահա՛ իմ նպատակս, իսկ զգուշացնել իւր ժամանակին. —այդ էլ քո գործը կրկնի. Գուցէ, շատ քիչ ժամանակ է մնում, երբ դու կ'ողջունես ինձ այս բարձրութիւնների վերայ իմ ունեցած յաղթութեանց համար և կըսեղմես ինձ քո գրկի մէջ . . .

## ՅՈՒՂԱՆՆԵՍ.

Ահա՛. վերջապէս հասաւ և իմ հերթը, երբ ես կարող եմ ասել, թէ ինչով կարող եմ պարծենալ. Իմ անելիքս, այդ լրտեսութիւնն է, դաւաճանութիւնը... ահա՛ իմ գործս—ահա իմ աշխատանքս, Ընտրելով քեզ համար փառքի և քաջագործութեանց ասպարեզ անարդ և ամօթաբեր ճանապարհով ես ստիպում ուղղել ինձ իմ քայլերս:

## ՀՐԱՄՔԵԼ.

Ի՞նչ եմ լսում ես. թէպէտ և կանգնած եմ այսուեղ բայց չեմ հաւատում ականջներիս... իմ որդիս տատանվում է... Այդ ի՞նչ է պատահէլ քեզ. Արդեօք ուշք ու միտքդ վրադ է. արդեօք դու Յովհաննէսն ես, թէ մի ուրիշը նորա կերպարանքով (Յուղային): Ա՛յս, ների՛ր, ների՛ր սորան, չէ՞ որ սա գեռ երեխայ է... Ճիշտ է, ինձ որդի է կոչվում, բայց քեզ էլ եղ բայր է ասվում, և հաւատա՛, որ նա երբէք և ոչ մի ժամանակ չի համարձակուիլ քո դէմ գնալ քո ասածները չըսել. Ահա՛ սօքա ամենքը քո հլու հպատակներդ են, միմիայն հրամայիր և ամեն ինչ կատարուած կրտեսնես: (Յովհաննէսին): Էլ ի՞նչ ես այդպէս սառած կանգնել, դէ՛՛, շուտ, համբուրիր եղքօրդ ուսներն ու ծնկները և հազար ներողութիւն ինդրիր:

## ՅՈՒԴԵՍ, (փոքր ժամանակ լուելուց յետոյ).

Է՛՛, ի՞նչ արած, երբ նա տատանվում է և լաց է լինում այն ժամանակ աւելի լաւ չէ, որ նա քեզ հետ լինի: Ոչ թէ մէկ, այլ շատ անգամ եմ մտածել, մայր իմ անդին, որ գու արդէն ծերացել ես և քեզ այդ տարիներում մի յենարան է

պէտք, մինչդեռ ամենքս ուղղում ենք քեզ թողած լինել Դու  
հինգ արու զաւակ ևս մեծացրել քո ստինքի կաթով գոնէ մէկն  
էլ դոցանից վերցրու քեզ օգնական. թող նա քեզ թշնամու  
անարդ լծից, նորա արիւնարբու զօրականներից պահէ և պաշտ-  
պանէ, թող նա քո կեանքի մնացած օրերի համար պատնէշ  
լինի և իւրաքանչեւր քայլդ տպահովէ թշնամու հարուածից. իսկ  
այն Աստուածը, որ այս ամենը տեսնում է երկնային բարձրու-  
թիւնից, նորա փոխարէն մեզ մէկ ուրիշն կ'ուղարկէ. Քո՝ մեզ  
վերայ ունեցած մայրական իրաւունքները կատարելապէս յարգե-  
լով և ճանաչելով, այսու յայտնում ենք քեզ մեր կատարեալ  
հնազանդութիւնը միանգամայն և աղաշում ենք, որին ուղում  
ես, ընտրի՛ր մեզանից.

## ՀՈՒԱՔՆԵԼ.

Եւ ո՛չ մի ժամանակ, երբէք, Ո՛չ ո՛չ... Միսս և արիւնս  
ես իմ մէջ պիտի խսպառ սպանեմ և մոտածեմ միմիայն հոգւոյս  
փրկութեան համար. Ո՛չինչ չպիտի մեզ խանգարէ գլուխ բերե-  
լու այն վեհագոյն գործը, որի մասին այսքան տարիներ մենք  
ամենքս մոտածել և աշխատել ենք. Յաղթութիւն է մեզ սպա-  
սում թէ կործանումն ու խորտակումն, կեանքի պիտի հանդիպենք  
թէ մահուան, —այդ ես չգիտեմ, բայց գիտեմ այն, որ պիտի ա-  
ռաջ գնանք և գործենք, մինչև որ կատարուած տեսնենք մեր  
ուխտը, մեր փափագը. Աչա նոքա ամենքը, որոնց օրօրոցի վերայ  
թեքուած՝ անխոնջ, գիշեր-ցերեկ օրօր եմ երգել մեղմ ձայնով,  
արտասուաթոր՝ աչքերով, բայց և լի յոյսերով. նոցա գլխին  
դալիք բոլոր պատուհանները և չարիքները ես արգէն գիտեմ;  
բայց և գուշակելով նոցա գործերի ապագայ փառքը, ես մի  
վայրկեան անգամ չպիտի մեղմանամ, չպիտի խղճահարուիմ, չպի-  
տի ափսոսամ: Ես այլ ևս սրտիս հատոր, սիրած ու փայփայած  
զաւակներ չունիմ, նոքա քոնն են, ով հայրենիք, նոցա ամեն-  
քին, մեծից մինչև կրտսերը քեզ եմ նուիրում: Այժմ յայտ-  
նեմ ձեզ մի ուխտ, որ պարտաւոր էք սրբութեամբ յիշել և  
կատարել: Երբ անթիւ ու անհամար խառն ամբոխի մէջ, որ գա-  
լիս կը լինի խմբուած զօրքերի հետևից՝ անկարգ և անկանոն գրու-  
թեան մէջ, երբ մոլի և անբարոյական վաճառականների մէջ կը  
տեսնէք ցնցոտիների մէջ կորած մի պառաւ կին, գալիս լուռ  
և մունջ ճանապարհի մի կողմով, չհամարձակուէք նորան ճա-  
նաչել: թող նա զնա որոնելով իւր համար գիշերելու օժե-

ւան հեղեղների ավիին կամ՝ աւազապատ՝ չոր ու ցամաք գետնի երեսին. Դուք չհամարձակուեք մինչև անգամ ձեր հայեացքը ուղղել դէպի այդ կինը, եթէ նա ուժասպառ լինելուց զլորուի գետին և ձգուի այնտեղ. Բայց աղետալի ժամին, երբ կըլուէ պատերազմի սրերի շառաչիւնը, երբ կըտեսնէք դուք այդ կնոջը ընկած, ուժասպառ, չարչարուելիս մահուան ճանկերում, ահա այդ միջոցին միմիայն դուք կարող էք ճանաչել նորան, ահա նա ձեր մայրը կըլինի, Խոնարհեցրէք պյտ վայրկեանին ձեր յօդնած ծնուները դէպի նորա ձեռքը, որպէս զի ընդունէք նորա վերջին մայրական օրհնութիւնը, նորա վերջին հրաժեշոր; Իսկ մինչև այդ ժամը, այդ րոպէն, այդ վայրկեանը ես ձեր մայրը չեմ: Այժմ մնաք բարով:

ՅՈՒԴԱ, (Յովհաննէսին).

Իսկ այժմ կարող ենք քեզ վերայ յաս դնել, թէ ոչ:  
ՅՈՎՃԱՆՆԷՍ.

Ամեն բանի մէջ քո խոնարհ ժառադ եմ, եղայր: (Յուղան, Եղիազարը, Սիմէնը և Յովնաթանը հեռանում են բեմից: Հոաքելը լոելեայն օրհնում է նոցա ամենքին: Քաղաքի դոներից մտնում է ժողովուրդը):

ՅՈՎՃԱՆՆԷՍ, (Վաղելով դէպի Հռապելը).

ԱՇ...

ՀՈՒՖԵԼ, (յոյց տալով դէպի քաղաքը).

Քո գործդ և անելիքդ այնտեղ է, ուրեմն և գնա: (Հեռանում է: Բեմի խորքում երեսում են Անտիոք և Սիրիան):

ՅՈՎՃԱՆՆԷՍ, (նուաղած ձայնով).

Այժմ ես ի՞նչ անեմ: (Ներս են մտնում Միրրան, Եղիսէն և ժողովուրդից մի ստուար բազմութիւն: Միրրան առաջ է զալիս հօր հետ միասին, զրկած նորան մի ծեռքում և զլուխը խոնարհած նորա թիկունքի վերայ):

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ.

Անտիոք, Միրրա, Եղիսէ, Յովհաննէս, Եւրիսթենէս, զօրականներ և ժողովուրդ.

ՄԻՐՐԱ.

Այդպէս ուրեմն, դու վաղը դարձեալ, պիտի պատերազմի

փողը հնչեցնել տաս, այնպէս չէ։ Նորից քեզ երկիւղ է սպառ-նում, ծշմարիտ չէ։ Մի ասա տեսնեմ, հայր իմ, թէ երբ պիտի վերջանան այս սպանութիւնները, այս անհանգիստ, այս վրդով-ուած ու շփոթուած կեանքը, Մի օրից մի օր պիտի վերջ արուի՞ն այդ ամենին, թէ ոչ, ինձ անհասկանալի է միանգամայն ձեր ա-գահութիւնը, ձեր սէրը դէպի այդ պատերազմները. Ես չեմ կա-րողանում հասկանալ թէ ինչի՞ դէմ էք այդքան գրգռուած, ես ինձ չեմ կարողանում հաշխւ տալ, թէ ի՞նչն է դրդում ձեզ այդքան հակակրել այն ազդին, որի հողի վերայ ենք գտնվում մենք այսօր. ՈՇ, հայր իմ, հայր իմ, դու քո փառքդ մեծ գնով ես ձեռք բերում. Որբան զօրեղանում և ուժեղանում ենք մենք, այնքան աւելի և աւելի ուժգին են հակակրում մեզ հրէաները. Այս, իթէ դու իմանայիր, թէ ի՞նչ անհամբեր սրտով եմ սպա-սում ես այն օրին, երբ կը յայտնես դու նոցա խաղաղութիւն և հաշտութիւն.

## ԱՆՏԻՌ.

Հաշտութիւն. . . ոչ, աղջիկս, այդ բանը իմ ականջիս միանգամայն խորիթ է թւում. Մեզ Մեծն Աղէքսանդր Մակե-դոնացին այդ չէ կտակել իւր վերջին րոպեում, երբ հրաժեշտի ողջոյն պիտի տար այս աշխարհքին, ոչ, նա մեզ կտակել է պա-տերազմներ և յաղթութիւններ, ամբողջ երկրագունդը նա կտա-կել է նորան, ով որ ամենից անվեհեր և քաջ կըդանուի, թէ ի՞նչ ելք կ'ունենան մեր պատերազմները—այդ մենք չգիտենք, անտեսանելի մի զօրու-թիւն, մի ոյժ շարունակ մեզ մղում է դէպի անյայտ նսպատակը. Կարելի է, որ այդ բնութեան մի օրէնք է և այդպէս էլ պէտք է լինի, որ ազգերը յաւիտեան շարժուին... Զարմանում ես, ես այդ տեսնում եմ, վախենում ես, վշտալի հայեացքդ կարծես հարցնում է ինձանից. ինչո՞ւ համար. Աչա՛, ասեմ քեզ. Հէնց նորա համար, որ քո գլուխդ պսակուի, զարդարուի երկու թա-գով, որպէս զի ամբողջ Արևելքը, որ իմ զօրեղ ձեռքով ստրկացած կը լինի, քո առաջ երկիւղածութեամբ խոնարհէ իւր գլուխը և գարձեալ նորա համար, որ երբ վրայ համնէ իմ մահ-ուան ժամը, քեզ ընձեռեմ իմ յաղթական գայիսոնս. (Ժողո-վուրդի միջից լսվում է գոռող և աղաղակ. Դժբաղութիւն մեզ վրայ հասաւ, ցա՛, սարսա՛ֆ: Վա՛ մեզ, վա՛ մեզ):

## ԱՆՏԻՌ.

Ի՞նչ աղաղակներ են այդտեղ:

## ԵՂԻԱԱ.

(Վրդովուած ճայնով): Տէ՛ր իմ արքայ, ես կատարել էի այն ամենը, ինչ որ գոռք հրամայել էիք ինձ, այսուղ կանգնեցրել էի Զեսի պատկերը և աշա... (Ժողովրդեան ժիջից լսվում են ծալ-ներ, «ո՞հ, այս ինչ թշուառութիւն է, ցաւ Եկաւ մեր զլիսին»): Այս-տեղ մի սարսափելի սրբապղծութիւն է կատարուած:

## ԱՆՏԻՌՔ.

Ի՞նչ սրբապղծութիւն, մրտեղ:

ԵՂԻԱԱ, (ցոյց տալով արձանի վերայ).

Սրբութիւնը պղծուած է, Զեսի ձեռքում պահուած տէ-րութեան նշանաբանը կոտրուած է, Անմիմիթարական մարդարէու-թիւն է. չլինի թէ բաղդը մտադիր է դաւաճանել մեզ... Բայց ով է համարձակուել ձեռք մեկնել այդ տեսակ չարագործու-թիւն անելու:

## ԶԱՅՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԻՋՅՑ.

Այդ այս հրէայի գործն է... կասկած չկայ, որ նա... ի հարկէ... աշա՛, աշա՛ նա... Աշա՛... խա՛չ հանել սորան... սպա-նել...

ԱՆՏԻՌՔ, (ցոյց տալով Յովհաննէսի վերայ).

Որպէս զի ներկայում մենք կարող լինինք շարժել Զեսի գութը, հարկաւոր է մեզ նորան զոհ բերել այս հրէային: (Աժ-բոխը շըշապատում է Յովհաննէսին):

## ԶԱՅՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԻՋՅՑ.

Դաւաճա՛ն... գէպի մաշ... Սա մեր գլխին դժբաղդութիւն բերեց... Դաւաճա՛ն...

ԵԿՐԻՍԹՈԵՆԱԼՈՒ, (մօտենալով Յովհաննէսին).

Բոնուեցար թէ ոչ... Շատ ուրախ եմ, շատ: Ես՝ վաղուց արդէն համոզուած էի...

## ԶԱՅՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԻՋՅՑ.

Զարկի՛ր դորան... Խփի՛ր, հարուածի՛ր... Զարագո՛ր... Սըր-բապղծող շուն...

ՄԻՐԲԱ, (մանաչելով Յովհաննէսին).

Ո՛չ, ո՛չ, սպասեցէ՛ք... դորա ձեռքը խառը չէ այդ գործի մէջ... Այդ մարդը անմեղ է... (Զօրականներից մէկի արձակած նե-

տը խրվում է Յովհաննէսի մարմնի մէջ և նա վալր է ընկնում: Միր-  
քան վագելով դէպի նա, մեծ զժուարութեամբ հանում է վէրքից նետը):  
Նա կենդանի է... նա կենդանի է... Զեսը զօհ չէ պահան-  
ջում: (Դէմքը մօտեցնելով Յովհաննէսին): Ամօթ չէ միթէ. դու-  
ցանկացար մեռնել երբ ես քեզ արդէն սիրում եմ...»

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (աչքերը բաց անելով).

ՈՇ, երկինք... Այդ դու ես, Միրրա...

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Բեմը ներկայացնում է Անտիոք թագաւորի պալատը: Գիշեր է:  
Դէպի ծախ գտնվում է մի բարձրութիւն՝ թագաւորական գահով: Դէպի  
աջ կայ մի դուռ: Բնմի առաջին մասում՝ փոքր ինչ դէպի աջ, շին-  
ուած է ցածր դիրքով նստարան, որի վերայ կիսով չափ պառկած է  
Յովհաննէսը: Սօսը նստած է էրիքսան:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

ՅՈՎՀԱՆՆԻՍ, ԷՐԻՔՍԱ և ՄԻՐՐԱ.

ՄԻՐՐԱ, (ներս մտնելով).

ԷՇ, այժմ ինչպէս է:

ԷՐԻՔՍԱ.

Վատանգը միանգամայն անցել է, Մեր տարած ինամքի և  
Հոգատարութեան շնորհիւ՝ նա այժմ արդէն համարեա թէ ա-  
ռողջ է. վէրքը ծածկուել է...

ՄԻՐՐԱ.

Ուրեմն մնաք այժմ կարող ենք միանգամայն հանգիստ լի-  
նել և հաւատացած, որ նորան խապառ ազատել ենք մահից,  
այնպէս չէ:

ԷՐԻՔՍԱ.

Թոյս կայ:

ՄԻՐՐԱ.

Հաստատ, այո՞, ուրեմն փրկե՞լ ենք,

ԷՐԻՔՍԱ.

Այժմ դու իղուր տեղից ես երկիւղ կրում, դողը անցել  
է... աչա՛ չորրորդ օրն է:

## ՄԻՐՐԱ.

Բայց կարելի՞ է նորան երկիւղ սպառնացողը հիւանդութիւնը չէ միայնակ. Յանկարծ նորա ով լինելը կարող է իմանալ մէկն ու մէկը... Ո՛չ, իմ աստուածնե՞ր, ես սարսափում եմ մոտածելուց անգամ, որ նորան կարող են անակընկալ կերպով ճանաչել: Չլինի՞ թէ որ և է մէկը մոտածէ և հիւտաքրքրուի... ի՞նչ ես մոտածում դորա մասին, ասա՛ տեսնեմ:

## ԷՐԻՒՔԱՆ.

Չի կարող լինել. ոչ մէկի գլխում այդ ու դորա նման միտք չի կարող յղանալ երբէք: Այստեղ նա ամենքի համար ոչ այլ ոք է, եթէ ոչ մի վիրաւորուած անձնաւորութիւն, որին թագաւորի գուստը՝ իւր բարի սրտի թելագրութեամբ բժշկում է: Բայց և ակամայից պիտի աւելացնեմ ասածներիս և այն, որ զինուորները նախանձկում են դորա վիճակի և դրութեան վերայ և որ նոցա մէջ շատ յաճախ այդ հարցի առիթով տրտունջի և անբաւականութեանց ձայներ են լսվում:

## ՄԻՐՐԱ.

Այո՛, ես այդ գիտեմ... Ուրեմն փրկուած է. ես հաւատում եմ դորան, հաւատում եմ, որ ազատուած է...

## ԷՐԻՒՔԱՆ.

Իսկ դու լսե՞լ ես նոր համբաւ. խօսում են շարունակ տեղի ունեցած նոր սպատերազմի մասին և պնդում են, որ կատարեալ յաղթութիւնը մերոնց կողմն է մնացել:

ՄԻՐՐԱ, (Թոյլ շտալսկ, որ շարունակէ).

Կամաց, կամաց:

## ԷՐԻՒՔԱՆ.

Ինչպէս ասում են, մերոնք այնպիսի մի փառաւոր յաղթութիւն են ունեցել, որի նմանը երբէք չեն յիշում և որի նմանը երբէք եղած չէ:

## ՄԻՐՐԱ.

Ասացի, որ կամաց խօսի՛ր, չէ՞ որ նա կարող է լսել...

## ԷՐԻՒՔԱՆ.

Պատերազմի դաշտից ուղարկուած սուրհանդակներն են այդ լուրը այստեղ հասցրել:

## ՄԻՐՐԱ.

Ո՛չ, ես այդ ամենի մասին ոչ մի տեղեկութիւն չունիմ...  
Բայց և միթէ ինձ համար ամենը մէկ չէ, թէ մենք կը յաղթենք  
և կամ թէ մեզ կը յաղթեն, ինձ ի՞նչ... Իսկ դու այժմ գնա,  
այնուեղ պահապան եղի՛ր, հսկի՛ր և յիշիր այն ամենը, ինչ որ  
արդէն ասացի. հսկի՛ր, որ ոչ ոք չամարձակուի գալ ինձ մօտ  
այժմ՝ յայտնելու, որ մենք բաղդաւոր ենք կամ դժբաղդ, որ  
յաղթել ենք, կամ խորտակուել են մեր զօրախմբերը, Վախե-  
նում եմ, որ մի գուցէ յանկարծ նա լսէ. Գնա՛, գնա և դռան  
մօտ հսկիր և վտանգի առաջն առ. Զմոռանաս... (Երիքսան դուրս  
է գնում):

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

## ՅՈՎՃԱՆՆԵՍ. և ՄԻՐՐԱ.

ՅՈՎՃԱՆՆԵՍ, (Պառանցանքի մէջ).

Իսրայէլ... Եղայրներ... որտեղ էք դուք այժմ...

## ՄԻՐՐԱ.

Բոլոր ժամանակը միւսնոյն երազն է նորան տանջում. յի-  
շողութիւնները թոյլ չեն տալիս նորան քնելու:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Կորա՛ր դու իսպառ, ով հայրենի երկիր...

## ՄԻՐՐԱ.

Նայի՛ր, ես այստեղ եմ, մի՛ վախենար, մի՛ վրդովուիր:

ՅՈՎՃԱՆՆԵՍ, (աեղեց վեր ցատկելով).

Ինչպէս, նոր պատերազմ..

## ՄԻՐՐԱ.

Ո՛չինչ չկայ... մի՛ վախենար... թո՛ղ քո հայեացքդ հան-  
գլստանայ իմ դէմքիս վերայ...

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Իսկ լրաբենները, նոքա այս վայրկեանին այստեղ էին...  
Միթէ նոքա չէին պատմում քեզ նոր պատերազմի մասին:

## ՄԻՐՐԱ.

Հանդարտուի՛ր, հանդարտուի՛ր, բարեկամն... ինչու ես հա-  
ւատում դու խաբուսիկ երազներին, ինչու դու հեռու չես քշում  
քեզանից այդ ու դորա նման մաքերը...

ՅՈՎՀԱՆՆԻՍ. (Ճանաչելով Միրրայլին).  
ՈՇ, սա նա է...

## ՄԻՐՐԱ.

Թողլ քո ցաւդ մեղմանպյ և հանդարտուի,

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Նորից լսում եմ փայփայող և հրաշալի այն ձայնը և տեսիլքներս վազում են խումբ-խումբ՝ վախեցած նորա կախարդիչ պատկերից... ՈՇ, մի՞թէ դու ես հսկել իմ ծանր քունը այստեղ և մի՞թէ այդ միջոցին քո աստուածային շնչառութիւնը զեփիւռանման շփուել է դէմքիս...

## ՄԻՐՐԱ.

Թողլ որ քո տանջանքներգ ես թեթևացնեմ իմ ներկայութեամբ, Այժմ ասա՛ տեսնեմ, թէ ի՞նչպէս ես քեզ զգում, դէպի լաւն է, թէ ոչ, Միսիթարի՛ր ինձ, ասա՛, որ դէպի լաւն է... Ա՛յս, ո՛չ, ես նկատում եմ, որ դու դարձեալ չարչարփումես,

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Մի սարսափելի երաղ շարունակ հետեւում է ինձ և մի դառը վիշտ անողորմ կրծում է սիրտս:

## ՄԻՐՐԱ.

ՈՇ, իմ աստուածներ,

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Բայց երբ ես այսքան մօտ եմ գտնվում քեզանից, այնքան ուժգին, այնքան զըրեղ է լինում իմ յափշտակուելս, որ ինձ թւում է, թէ որպէս երեխայ, ես միանդամայն անմեղ եմ...

## ՄԻՐՐԱ.

Այո՛, անմեղ ես... Բայց ինչո՞ւ քեզ այդքան անչանդստութիւն է պատճառում միւնյոն միաքը, ինչո՞ւ դէմքիդ վերայ այդքան մեծ վիշտ և տիրութիւն է արտափայլում:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Իսկ գործած մեղքս, իսկ խղճիս խայթոցը, Կատարե՞լ եմ արդեօք այն, ինչի համար որ կանչուած եմ կամ ինչ բանի համար որ նշանակուած եմ: ՈՇ, Ամենակարող Աստուած...

## ՄԻՐՐԱ.

Ինչո՞ւ համար ես դու այդքան պատմում մի ինչ որ չարագործութեան մասին:

ՅՈՎՃԱՆՆԵՍ, (յոյց տալով իւր ճակատի վերայ և դարձեալ զա-  
ռացանքի մէջ խօսելով).).

Աչա՛ այստեղ, աչա՛ այստեղ կայ մի ինչ որ բան... գիտե՞ս,  
մի ինչ որ բան... որ կարդալ ես ինքս չեմ կարողանում:

ՄԻԲԲԱ.

ԹԺՐԱՎԴՐ: (Յովհաննէսը յանկարծ տեղից վեր է թոշում և ըսկ-  
սում է վազել դէպի դուռը): Ի՞նչ պատահեց, ուր ես վազում,  
ի՞նչու համար ես գնում:

ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Դէպի պատերազմի դաշտը, ինձ կանչում են. «Չուտ եկ»,  
ասում են, «բարձրացի՛ր պատնէշի վերայ»... Ես լսում եմ այդ  
ձայները...

ՄԻԲԲԱ.

ԹՀՈՒԱՊԱԿԱՌՆ, սա նորից սկսեց դառանցանքի մէջ խօսել:

ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Մի՛թէ չասացի, որ կարող եմ ուշանալ նոցա վազօրօք  
յայտարարելու գործերի դրութեան մասին:

ՄԻԲԲԱ.

Ի մ բարեկամ...

ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Թո՛ղ ինձ... թո՛ղ ասում եմ... ես չեմ կարող և ցանկու-  
թիւն էլ չունիմ լսելու քո ասածները:

ՄԻԲԲԱ, (վճռողական ձայնով).

Քշի՛ր ինձ, հալածի՛ր, ես արդէն լնտելացել եմ դորան,  
Այս առաջինը չէ, դու ինձ շատ անգամ ես հալածել, երբ ծանր  
դողոցի սկզբնական րոպէները խլում էին քեզանից ուշք ու  
միտքդ և հանգատութիւնդ: Թէպէտ և այդ րոպէներում դու  
չափաղանց թշլ էիր լինում, բայց դարձեալ աշխատում էիր ա-  
զատուել ու վազել... և մեծ ոյժ էր հարկաւոր թշլ չտալ քո  
ցնորամիտ նպատկներդ գլուխ բերելու, Քշի՛ր, հալածի՛ր ինձ քե-  
զանից, ես արդէն դորան լնտելացել եմ...

ՅՈՎՃԱՆՆԵՍ, (յուսահատութեան մէջ).

ՈՇ, Աստուած իմ, ինչո՞ւ համար ես չմեռայ...

ՄԻԲԲԱ.

Հէնց նորա համար, որ ես թշլ չտուի: Մի՛ մոռանար, որ  
ես քել սիրել եմ այնպէս, ինչպէս որ և այժմ եմ սիրում և

ինչպէս որ յաւիտեան պիտի սիրեմ։ Ես առաջինն էի, որ կարողացայ հասկանալ քո լուռ աղաշանկներդ և գուշակել քո սըրտի այն գաղտնիքը, որ դու այնտեղ խորը թաղել և ծածկել էիր ամենքից։ Յիշում՝ ես մրգեօք այն տիսուր բոպէները, երբ ամեն ինչ ակամայից ինձ պատմեցիր և յայտնեցիր։

## ՅՈՎՀԱՆՆԻԿԱ.

Մի՛ լոիր. Քո ձայնի մէջ ես փայփայանք և գգուանք եմ գտնում. այդ ձայնը մի ինչ որ քաղցր բարախումով լցնում է սիրոս և հոգիս։

## ՄԻՐՐԱ.

Այժմ ասա՛ տեսնեմ, մի՞մէ դու սիրոյ և գգուանքների համար չես ստեղծուած։ Դժբաղդաբար երկնքի նախաղողացումը այնպէս է, որ մահկանացուներից ամենալաւերն են ենթարկվում յաճախ և ամենից շուտ երկնքի բարկութեանը։ Գեղեցիկ, զմայլեցուցիչ զգացմունքներով և նպատակներով լի, այդպիսիները անցնում են իրենց երկրաւոր ձանապարհը լուռ, հանգիստ, նըւիրուած լոկ միմիայն բարձր ձգտումների... Դու այս իմ նկարագրած պատկերի մէջ ձանաչո՞ւմ ես քեզ թէ ոչ Աչա՛, դու ևս դոցանից մէկն ես. Ուղի՞ղ չէ դիտողութիւնս։ Զափազանց սիրելուց, ես ամեն տեղ հետևել եմ քեզ, քո իւրաքանչիւր քայլը ես դիտել ու նկատել եմ, յառած աչքերով ագահօրեն հետևել եմ.. Այո՛, ես քեզ սիրել եմ, բայց թէ որ ժամանակից, ես ինքու չգիտեմ և երբէք հաշիւ ել չեմ տուել ինձ. Երբ մէկնս սիրում ես, կարծում ես, թէ այդ սէրը ի բնէ բռն դրած է եղել և յաւիտեան ապրել է քո սրտում։

## ՅՈՎՀԱՆՆԻԿԱ.

Ի՞նչ հրձուանքով լցուեցայ ես ամբողջովին, ի՞նչպէս նորից արիւնը իմ երակներիս մէջ եռաց. Թո անուշահոտ շըրթունքներից լսվում են հրաշալի և գերբնական ձայներ... Արժանի՞ եմ արդեօք այդ երջանկութեան. Ո՛չ, ո՛չ, լաւ վարուած կը լինիս, եթէ հէնց այս բոպէիս ինձ դուրս ձգես այստեղից, արտաքսես. Թշյլ տուր, որ հաւատադրժութիւնից ես միջոց գտնեմ աղատուելու, թո՛ղ որ փախչեմ..

## ՄԻՐՐԱ.

Ինչպէս, փախչես, որ քեզ պալատիս մէջ կանգնած պահապան զօրքերը բռնեն և խեղդեն, որ քեզ զինուորականներից մէկն ու մէկը... Ո՛չ, ո՛չ, երբէք...

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Իսկ եթէ ստիպուած՝ ես այժմ հպատակուեմ քեզ անտուունջ ամեն բանի մէջ, այն ժամանակ ո՞վ կըթեթևացնի ինձ իմ տանջանքներից, ո՞վ կըլսեղդի իմ մէջ խղճիս խայթոցը. Ո՛չ, միթէ ես այժմ ինձ համար ներումն պիտի որոնեմ հիւանդութեանս մէջ, արդարացնեմ արարքս նորանով, որ ուշաթափուել եմ և գորանով Ճնշեմ ու խեղդեմ ամօթի անզուսպ ձայնը. Բայց և կարո՞ղ է միթէ աշխարհիս երեսին որ և է բան ստիպել ինձ հեռանալ քո սիրուց...

## ՄԻՐՐԱ.

Ո՛չ, որքան սիրելի ես,

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Այս՝, սիրում եմ քեզ ահա՛ մի սարսափելի սխալանք. Դ - րանից այժմ փրկուելու էլ ոչ մի հնար ու միջոց չկայ.

## ՄԻՐՐԱ.

Այս ի՞նչ եմ լսում, դու լաց ես լինում... ուրեմն գաղտուկ տանջում ես. Զլինի՞ թէ քո դէպի ինձ ունեցած սէրն է քեզ այդքան վրդովում և տիրեցնում...

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Ո՛չ, ո՞քան սարսափելի է այդ սէրը... նա իբրև մթութեան մի կերոն լրւսաւորում է իմ ձանապարհս ձաձանչափայլ լրւսով. Նա, արշալոյսի երկորեակը, գալնան անփոփոխ ընկերակիցը, ընտրեալ երջանկութեանց մէջ առաջն երջանկութիւնն է, որ աշխարհային չարչարանքների ու տանջանքների մէջ միշտ և ամեն ժամանակ օրչնել է մարդկային ազգը. միակ երջանկութիւնն է, որ թողել է Ամենակարող Արարիչը իբրև պարգև ապարադդ աքսորեալներին. Այս՝, այդ մի զօրեղ և նշանաւոր երջանկութիւն է, որ գերում է և փայփայում երիտասարդութեանը (և իւր քաղցրութեամբ արքեցնում նորան ամբողջովին). Այդ զօրեղ գերիշխանութեան ենթարկուած, ծերը նայում է յետ, պատկերացնում է անդարձ գնացած տարիների շարքը և նորա չորացած շրթունքների վերայ սիրոյ խօսքերը ակամայից վերակենդանանում են. (Փախստականի հետևից նա վաղում է թեւաւորուած և նախանձօրէն հսկելով նորա հանգստութիւնը,) բանտարկեալին, իւր մոայլ օթևանի մէջ ցերեկուայ լցուի ուրախ փայլն է ուղարկում. (Ինքը յուսահատութիւնը նորան հանդի-

պում է բարեհած և երկչոտ ժպիտով)... Այս՝, աղքատը նորա մէջ գտնում է սրտի սփոփանք, միմիթարութիւն իւր այն դաժան հոգսերի մէջ, իւր այն ցաւերի մէջ, որոնց պատրաստել է նորա համար կեանքը... Բայց ես... իմ տիսուր ճակատագիրս հրամայում է ինձ իմ գեպի քեզ ունեցած սէրս անիծել և ես նորան... այս՝, նորան ես անիծում եմ:

## ՄԻՐԻԱ.

Ո՞չ, երբէք... Լոի՛ր, անմիտ, մի՛ անիծիր սէրը, երբ նաքեզ ինձ է յանձնում իւր բուռն կրերի թելադրութիւնից, նա է միսիայն ճշմարիտ խօսողը, ես միայն նորա միակ ձայնին եմ ունկնդիր: Մեզ համար գծագրուած է նպատակ, գեպի այդ նըպատակը տանող ճանապարհը ցցց կրտայ մեզ մեր սիրտը: Ինչ երկիր ծնունդ էլ լինիք մենք, ինչ ազգի և ինչ աստուածների էլ որ պատկանենք մենք երկուսս, այդ ինձ համար նշանակութիւն չունի և սարսափելի էլ չէ. ես պատկանում եմ քեզ և հնագանդվում եմ միանդամայն այդ մոքին: Ես կին եմ, իսկ մի կնոջ ապագան, վիճակը և բազդը որոշողը—այդ նորա սէրն է. Ես զգում եմ, որ հոգիս այժմեանից պիտի ձուլուի քո հոգւոյ հետ և մի ամբողջութիւն պիտի կաղմէ. ես ծնուած եմ քաղցր միթարանքով լցնելու քո սրտի խորքերը, որ լինիմ քեզ ամուսին և դորա հետ միասին քեզ քոյր: Ծշմարտութիւնը, իրողութիւնը այս է, որ սորանից յետոյ ես քոնն եմ, իսկ դու իմը: Թո՞ղ այժմ մարդկային բռնութիւնները, ժամանակը և նախանձը՝ կեանքի այդ թոյնը մեզ համար նոր օրէնքներ ստնդեն և մեզ այլ անունով մկրտեն, թո՞ղ, ինչ ուղում են, անեն և մտածեն, բայց իմացած եղե՛ր, որ որբան էլ խիստ և անտանելի լինին այդ օրէնքները, դարձեալ անկարող կը լինին ինեղենել ու լոեցնել այն մեծ ճշմարտութիւնը, որի բովանդակութիւնն այս է, թէ յետ այսու ես քո կինդ եմ և քոյրդ, իսկ դու իմ ամուսինը և եղբայրս:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Հէնց երկինքն է, կարծես, խօսում քո շրթունքներով. կարծես բարձրից երգի ձայն եմ լսում, որ, կախարդելով ականջներս, հասնում է ինձ. Դու—ինքը ճշմարտութիւնն ես, իսկ մնացեալ ամենը—ամբողջովին փթութիւն և ուրիշ ոչինչ. մնացեալը—այդ մոխիր է, փոշի, ստութիւն և ունայնութիւն: Քեզ հետ միասին ես վերակենդանանում եմ հոգով, քեզ հետ

միասին ես գիտակցում եմ բաղդաւորութիւնը և երջանկութիւնը... Զգիտես դու և չես էլ կարող հասկանալ, թէ ինչ բերկութիւն են պատճառում, քո խօսքերը ինձ, որի վշտալից կեանքի օրերը թունաւորուած են նզովքի ճայնով և որը տարիներից ի վեր միշտ լսել է միայն և միայն անէծք. Զգիտես դու, որ քո աչքերիդ մէջ ինձ համար բացուել է մի նոր աշխարհ. այսո՛, ես Ճանաչել եմ սէրն ու գեղեցկութիւնը և նուիրվում եմ ամբողջապէս նոր, բայց քաղցր երևակայութեանց:

## ՄԻՐԲԱ.

Երևակայութիւններ, երևակայութիւններ. ո՞չ, որքան գեղեցիկ, որքան հրաշալի են այդ երևակայութիւնները... Դոցա երևան գալուց փախչում է տիրութիւնս և ինձ թւում է, թէ երբէք և ոչինչ չի կարող ինձ քեզանից բաժանել Ահա՛, և այժմն էլ այդպէս է. նայի՛ր, թափանցող արշալոյսը փազում է փոխարինուել զիշերային մթութեան, և ի՞նչ լսում ես արգեօք, թէ նորան անձնատուր եղած մունետիկը ծառերի շիւզերից որպիսի քայլցրահնչիւն և ուրախ դայլայլիկներով լի՛ ի նշերգեր է երգում. Մի՛ վախենար, նա մեզ չի դատապարտում, նա, ինչպէս և մենք, բուռն սիրոյ զգացմունկներով է ոգեսրուած և յանուն այդ սիրոյ նա այժմ գովասանական երգեր է շարադրում:

ՅՈՎՀԱՆՆԵԼԻՍ, (Թեքուելով Միրրայի ուսի վերայ).

Ո՛չ, նորա ճայնը ես չեմ լսում. քո ճայնը նորանից քաղցր է... (Հսկում են մարդկանց աղաղակներ և զէնքերի ճայներ): Ի՞նչ է նշանակում այս ամենը:

## ՄԻՐԲԱ, (առանձին).

Ի՞նչ որ աղաղակներ կան գուրսը... գալիս են... զօրքեր... յաղթութիւն...

## ՅՈՎՀԱՆՆԵԼԻՍ.

Միտքս պղողովում է... զլուխս սարսափելի պտոյտներ է կատարում... Այս որտեղ եմ ես... ի՞նչ եմ անում... յիշողութիւնս իսպառ կորել է ..

## ՄԻՐԲԱ, (արագօրէն).

Սիրելի՛ս, դու քիչ առաջ ուզում էիր փախչել, ե՛կ այժմ միասին փախչենք այս կողմից:

## ՅՈՎՀԱՆՆԵԼԻՍ.

Փախչել

## ՄԻՐՐԱ.

Սյո՛, այո՛, մեր միակ փրկութիւնը և աղատութիւնը այժմ փախչելու մէջ է, բայց կարող է պատահել որ և կորսափ են-թարկուենք, է՛հ, ի՞նչ փոշթ, երբ ես քեզ հետ միասին կըլինիմ:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Ի՞նչ է նշանակում քո շփոթութիւնը, Դու դողում ես ամբողջովին: Ասա՛ ինձ, ի՞նչ պատահեց քեզ:

## ՄԻՐՐԱ, (շփոթուած).

Ո՞ւր փախչել, որտեղ թագնուել... ի՞նչ ապաստարան կա-  
րող է այնքան մեծ երկիւղ չսպառնալ մեզ: Աչա՛, այստեղ կայ  
մի դաղտնի անցք, դէ՛հ, շուտ, վաղենք:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Ի՞նչ է նշանակում այն բոցը, որ այժմ փայլում է աչա՛  
այն պատկերի վերայ...

## ՄԻՐՐԱ.

Ա՛խ, ի սէր Աստուծոյ, փախչե՛նք:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Մի ինչ որ առկայծեալ բան է երևում երկնքում..., խուլ  
ձայներ են լավում...

## ՄԻՐՐԱ.

Հեռւում մի զօրագունդ է երևում... ես չգիտեմ...

## ՅՈՎՃԱՆՆԵՍ, (կոպտութեամբ).

Այդ ի՞նչ տեսակ պատասխան ես տալիս դու ինձ:

## ՄԻՐՐԱ.

Ո՛չ ո՛չ, այլ ևս չուշացնենք, փախչենք...

## ՅՈՎՃԱՆՆԵՍ, (բարկադած).

Դու կա՞րծում ես, թէ այստեղ համող ձայները ես չեմ  
լսում, ճանաչում, չեմ հասկանում: Դու կարծո՞ւմ ես, թէ յաղ-  
թուածը չգիտէ, որ ինքը ջարդուած ու փշուած է:

## ՄԻՐՐԱ.

Աղաջում եմ քեզ, խղճա՛ ինձ, խնայիր: Դու տեսնում ես,  
որ ես տանջվում եմ... որ ամբողջ մարմնով դողում եմ... Փախ-  
չե՞նք, փախչենք, ողքան կարելի է, շուտ...

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Իմ ազգս, իմ ժողովուրդս հեծում է, քո ժողովուրդը  
խնդում, ուրախանում է:

ՄԻՐՐԱ, (աշխատելով քարշ տալ նորան իւր հետեկց).

ԱՌԻ, չէ որ գեռ ոչինչ յայտնի չէ... Շատ կարելի է, որ  
քո կասկաճներդ ու երկիւղդ անտեղի են միանգամայն...

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (յետ մղելով նորա ձեռքը).

Ո՛չ գիտեմ ես, որ սիրտս ամեն ինչ Ճշմարտութեամբ է  
գուշակել: Նայի՛ր, աշա՛, նորա այս կողմն են գալիս: (Ներս են  
մտնում եղիսէն և զօրականներ):

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ՆՈՅՆՔ, ԵՂԻՍԵ, ԱՈՒՐՀԱՆԳԱԿ, զօրականներ և պահապան զօրք.

## ԵՂԻՍԵ.

Ազբայադուստր, քո հայրդ մի անգամ ևս խլեց թշնամի-  
ներից յաղթութեան փառքը, ամենքը խոնարհեցան նորա սրի  
առաջ: Աշա՛, տե՛ս, նորա առաջեկց վազող ուրախ մնանետիկը  
արդէն հասել է մեզ՝ (այս միջոցին ցոյց է տալիս սուրհանդակի  
վերայ) բերելով մեզ լուր, որ համայն հրէաստանը սրի ու կրակի  
բաժին է դարձել:

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (առանձին).

Ճիշտ այն ժամանակ, երբ սիրուհիս ինձ փայփայում և  
գուրգուրում էր:

## ԵՂԻՍԵ.

Յուդայի զօրքերը երեք օր շարունակ մեզ հետ կեանքի և  
մահու կոիւ էին մղում և պէտք է խոստովանել, որ արիա-  
սրութեամբ և անգթութեամբ էին շարունակում մեր դէմ  
սկսած Ճակատամարտը, բայց վերջոյ, չկարողանալով դէմ կե-  
նալ մերոնց ընդհարումն, առաջինց մինչև վերջինը անձնատուր  
եղան: Ինքը թագաւորը քիչ մնաց, որ զո՞հ գնար կուրի ամե-  
նատաք ժամում: Եղիազարը արդէն ուղղել էր թագաւորին իւր  
մահացու հարուածը, բայց աստուածները օգնութեան հասան և  
չարագործները իրենց արժանի պատիժը ստացան:

ՄԻՐՐԱ, (ցած ձայնով).

ՈՇԻ, երկի՞նք...

## ԵՂԻՍԵ.

Յովլաթանը և Սիմեոնը արդէն բռնուած են...

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Այս ի՞նչ եմ լսում ամ, Աստուած իմ, Աստուած իմ:

## ԵՂԻՍԵ.

Եւ երեքն էլ մահուան պատժի են ենթարկուած. սիւների վերայ այժմ կախուած են նոցա բաց գլուխները. Ինքը Յուղան, այդ ազգի գլխաւոր առաջնորդը ու ղեկավարը, սպանուած է...

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Ի՞նչպէս, սպանուած: Ո՞չ այդ անկարելի է, դու սուտ ես խօսում:

## ԵՂԻՍԵ.

Գնա՛, ինքդ տես և համոզուիր, եթէ ինձ չես հաւատում:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

(Վրայի հագուստը պատուելով).

Ո՞չ, ի՞նչ դժբաղդութիւն, ի՞նչ ամօթ, ի՞նչ նախատինը ու անարգանք: Քանդուեցէք դուք, սիւներ ու կոթողներ, արձաններ ու քարեր, և թող այդ ամենը թափուի ինձ վերայ, թող որ դոցա վլատակների տակ ես ևս մեռնեմ այն օրը, երբ իմ եղբայրներս կորան անդարձ... Յուղա՛, եղբայր իմ Յուղա...

## ԵՂԻՍԵ.

Խսպառ չորացաւ Մակկաբայեցւոյ արիւնը...

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Օ՛, ոչ, նա դեռ շառաչում է իմ կրծքիս մէջ:

## ՄԻՐՐԱ. (Յովհաննէսին).

Լոի՛ր, լոիր ասում եմ քեզ: (Ասորացիներին): Մի՛ լսէք սորան:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Ես նոցա եղբայրն եմ, այո՛, ես այդ արիասիրտ քաջերի եղբայրն եմ:

## ՄԻՐՐԱ. (Յովհաննէսին).

Աղաչում եմ քեզ, լոի՛ր:

## ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Մակկաբայեցւոյ որդին եմ ես, ամենքից կրտսերը ես եմ:

## ԵՂԻՍԵ.

Դուք լսո՞ւմ եք այս:

## ՄԻՐՐԱ.

Մի՛ հաւատաք, սա ցնորուած է: Դուք տեսնում եք, սա  
խելազարուել է: Սա զառանցանքի մէջ է, այո՛, այո՛...

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Բայց գուցէ և կըգտնուի այստեղ մէկը, որ կարողանայ  
ինձ ճանաչել:

ՄԻՐՐԱ, (Յօվհաննէսին).

Ինչո՞ւ համար... թողլ... աղաչում եմ՝ խնդրում եմ՝ քեզ,  
թողլ այդ... (Ներս է մտնում Հոաքելը շրջապատուած զօրական-  
ներով):

## ՏԵՍԻԼ ԶՈՐՈՈՐԴ.

Նոյնք և Հոաքել.

ԵՎԻՍԻ.

Բայց աչա և մահուան դատապարտուածների, Մակկարա-  
յեցւոց մայրը: Սա բռնուած է նոցա կախաղանի տակ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ, (որախացած).

Աչա, կարծես ինքը Աստուած, լսելով իմ աղաչանքներս,  
ասածներս հաստատելու համար՝ սորան ինձ վկայ է ուղարկել  
Այս հոաքելն է, Մակկարայեցւոյ ամուսինը, իսկ ես նոցա որ-  
դին եմ, կրտսեր տղան, Հարցրէք նորանից և նա ձեզ կասէ, թէ  
մինչ նորա միւս որդիքը՝ մահուան երկիւղը մոռացութեան տը-  
ւած, կովում էին իրենց հայրենիքի, կրօնի և սրբութեանց հա-  
մար, մինչ պատերազմի դաշտում հսկայ և քաջն թուղան ուժա-  
սպառ ընկած, արեան գետերի մէջ էր թաւալում, մինչ նորա,  
միւսները մեխուած պատերին, իրենց վերջին հրաժեշտն էին տա-  
լիս կեանքին, ասում եմ, մինչ այդ ամենը լինում և կատար-  
վում էր, ես բոլոր ժամանակը, մոռացած իմ պարտքս ու խիղճս  
վաճառքի հանած իբրև մի ստորաքարշ վախկոտ, իբրև մի հա-  
լածուած ու արտաքսուած փախստական, ընկած էի այստեղ և  
անակընկալ երջանկութեամբ արթեցած, նուիրուել էի ամբողջա-  
պէս ես իմ սիրած կնողը, արժան համարելով ինձ նորա փայ-  
փայանքներին, մոռացած, որ Ճակատիս արդէն դրոշմուած է նա-  
խատանաց ու ամօմի կնիքը... Հարցրէք, ասում եմ; և նա ձեզ  
մենը կըպատմէ: (Դառնալով դէպի Հոաքելը): Դէ՛չ, շուտ, Խօսի՛ր,  
մենք լսում ենք քո խոստովանանքը:

ՀՈՒԱՔԵԼ.

Ես չե՞մ Ճանաչում այս խելացնորին:

ՄԻՐՐԱ.

Ահա՛, տեսաք, ԶԵ որ ես ասում էի: (Յած ձալնով Յովհաննէսին): Այժմ ինչ պիտի ասես, տե՛ս, մայրդ ուզում է քեզ փրկել:

ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Ի՞նչպէս, փրկել... Ի՞նձ պիտի փրկէ կամ ազատէ, հա՞... Դու կարծում ես, թէ ես ազատուելու մէջ կարիք եմ զգում, այնպէս չէ... ՈՇ, ո՛չ, ո՛չ, դորա ինձանից հրաժարուիլը խորհրդաւոր է, դորան գարշելի ու զաղըբելի է թւում իւր որդին... մայրս չի կարողանում հաշտուել իւր վերջին որդույ հետ, չև կարողանում սառնարիւն տեսնել նորա Ճակատին դրոշմուած ամօթի ու նախատանաց կնիքը... (Դառնալով դէպի Հուաքելը): ՈՇ, խղճա՛ ինձ վերջապէս, մայր իմ: Դու տեսնում ես, քո առաջ կանգնած է Յովհաննէս որդիդ՝ իւր համեստ ու խոնարհ աղա-չանքներով... Ես այժմ լնդ միշտ մերժուած եմ քեզանից, ես մի հրէշ եմ, մի ընկած ստորաքարշ արարած, բորոտով վարակեալ մի վիժուած: Զեմ՝ համարձակվում անգամ ընկնել ոտներդ և նոցա փոշին իմ շըթունքներով մաքրել. Անարդ, գող մի՞թէ ես արժանի էի այն արգանդին, որի մէջ գու ինձ այնքան երկար օրեր կրել ես. ՈՇ, ամօթի ու անարգանքի կնիքով է արժանաւոր դրոշմուել իմ Ճակատու... Էլ ո՞ւր ես ուշացնում, դրօշմի՛ր դոցանով իմ արարքս, հալածի՛ր քեզանից, անիծիր և մի խլիր ինձանից այն պատիժը, որը վաստակել է քո չարագործ որդիդ: Դաւաճանի արժանի պատիժը, ժառանգութիւնը այդ պիտի լինի միմիպայն. Լսի՛ր այս ամենից յետոյ, թէ ինչ եմ ուզում ասել քեզ, թէ ինչ եմ ուզում խնդրել ու աղաչել քեզանից. Խոստովանուի՛ր, մայր իմ, սոցա ներկայութեամբ, որ ես քո որդին եմ և դու իմ մայրս, վերադարձրու ինձ իմ անունս, որ տանեմ նորան ինձ հետ դէպի յաւիտենականութիւնը:

ՀՈՒԱՔԵԼ, (Ճանը ձայնով).

Այո՛, սա նա է, ես այժմ խոստովանվում եմ; որ սա իմ կրտսեր որդիս է՝ ինքը Յովհաննէսը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ, (ընկնելով մօր ոտները).

Շնորհական եմ քեզանից, ո՞վ երկինք:

ԵՎԼԻՍԻ, (գէպէն զօրականները).

Տանե՛լ երկուսին էլ:

ՄԻՐՐԱ.

ՈՇ Թշուառութիւն, այժմ նա պիտի մեռնի:

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

Անտիոք Թագաւորի պալատը: Տեսարանը կրում է երկրորդ գործողութեան դեկորացիաները: Ներս են մտնում Անտիոքը, Միջքան և Էրիքսան:

ՏԵՍԻԼ Ա.Ռ.Ա.ԶԻՆ.

ԱՆՏԻՈՔ և ՄԻՐՐԱ.

ԱՆՏԻՈՔ, (Էրիքոսյին).

Ո՞րտեղ է Եւրիսթենէսը, կանչել նորան ինձ մօտ: (Էրիքսան դուրս է գնում: Անտիոքը դառնում է դէպի աղջիկը): Յենուի՛ր բազկիս վերայ: Վաղը մենք կը ճանապարհուենք այստեղից. այնտեղ դու միանգամայն կը վերածնուես: Այնտեղ այլ ևս պատերազմներ կամ ուրիշ դոցա նման սարսափելի զգացումներ չեն վթագովիլ քո խաղաղ սիրուը, իմ աղջիկս: Ստուերախիտ այգիներ, ծաղկիներ, ընկերուհիներ—ահա՛ այն ամենը, ի՞նչ որ քեզ սպասում է այնտեղ... Այո՛, այո՛, վաղը մենք կը ճանապարհուենք:

ՄԻՐՐԱ, (առ անձին).

Այդ այն ժամանակ, երբ ես արդէն այստեղ եմ՝ լի սրտով և ամբողջ հոգով:

ԱՆՏԻՈՔ.

Քո զուարձութիւնները ինձ համար օրէնք կը լինին, քո ամեն քմայաձութեանց ես լիովին կը հապատակուիմ: Կ'ուզենաս դու, մենք Յունաստան կը գնանք, հրաշալի կղզիների ափերը, որոնց երգել են բանաստեղծները, որտեղ զեփիւռը մտնելով ծովի ջրերի ծոցը, գրկում, համբուրում է նոցա: Կամ թէ կ'ուզեռորուենք արևելքի հեռաւոր անկիւնները, ուր գնացել է ինքը, Մեծն Աղեքսանդրը: Այն գետը, որ մի ժամանակ նա նուածել էր, գեռ իմ կայուածներիս մէջն է գտնվում, ահա՛, այդ գետի խաղաղութիւնը վթագովելով հարիւրաւոր թիակներով՝ կապտագոյն ալիքները պատառելով, կը թռչես դու մինչև Հնդկաստան, ի՞շ, ի՞նչ ունես ասելու այս տմենի դէմ:

ՄԻՐՐԱ. (Խոյս տալով հարցից).

ՈՌՔԱՆ զօրեղ, ոՌՔԱՆ նշանաւոր թագաւոր ես գու, հայր իմ  
ԱՆՏԻԱՔ, (Աստում է աղջկայ մատ).

Օ՛, աղջիկս, չգիտեմ, կայ արդեօք երկրագնդիս երեսին  
քեզ արժանի մի թագաւորութիւն, կըցանկայի ես, որ Եգիպտոս-  
սի հրաշալիքները և Սահայի գանձերը վիճակուեին քեզ, իմ  
քաղցր, իմ սիրելի աղջիկս. Սպագայ տարիներում ես քո մէջ  
մի գերիշխող ինքնակալ եմ տեսնում այն ամեն երկիրներին, ո-  
րոնք ձգուած են ինդոս գետից մինչև Եփրատ և Եֆեսից մինչև  
Կիրենեան. Թո՞ղ որ քո անբաժին սեպհականութիւնը լինի բուր-  
մոնքներով լի երկիրը և ոսկի արտադրող աշխարհը և շատ  
ուրիշ թագաւորութիւններ, որոնք տեղ կըցտնեն քո հրաշալի  
օժտի մէջ: Թո՞ղ որ Աֆրիկէյի և Եւլադայի ազգերը քո գեր-  
իշխանութեան տակ յառաջադիմն և ծաղկեն: Կըգայ օրը և եռ,  
իմ աղջիկս, քեզ կըյանձնեմ փայլոն գահս և նորա վերայ  
հպարտորէն կըբարձրանաս դու քո ամուսնուդ հետ միասին:

ՄԻՐՐԱ.

Եւ վերջը ինձ համար շքեղ դամբարան կըկանգնեցնես և  
ինձ ապաստարան կըտաս ոսկեզօծ շիրիմի մէջ: Օ՛, ես գիտեմ,  
ո՞չ, մի' խօսիլ ես արդէն գիտեմ ամենը. Հազցնելով ինձ նուրբ  
և թանկագին հագուստ, ծնօտս կըկապեն ու կըզարդարեն և  
յետ այնորիկ, գագաղիս թաղման ծաղիկները թառամելով, ինձ  
հետ միասին կըքննեն յաւիտեան:

ԱՆՏԻԱՔ.

Մի՛րրա, Մի՛րրա, ի՞նչ են նշանակում քո այդ անմիտ  
զըսցները: (Թափանցիկ հայեացք ձգելով աղջկայ վերայ): Այո՛, ես  
արդէն վաղուց էի սպասում լսել քեզանից այդ ու դորա նման  
խօսքեր... անկարելի ոչինչ չկայ: Ես նկատում եմ արդէն, որ  
դու սառն ես միանգամայն դէպի քո հօր փայփայանկները և  
ձայնս էլ միանգամայն չէ շարժում քո սիրտը, չէ ազդում քեզ  
վերայ: Ինչ որ տիսուր մոլեր ու մտածողութիւններ են վրդո-  
վում քո հոգւոյ հանգստութիւնը և դոցա նուիրուած չեմ ես,  
քո հայրդ, քո բարեկամներիդ մէջ ամենամտերիմը... Բայց ասա  
տեսնեմ: ո՞վ է վրդովել քո հոգւոյ խաղաղութիւնը, ո՞վ է  
պղտորել և նսեմացրել քո կուսական մտածութիւններդ, ո՞ւմը  
պիտի մեղադրեմ ես քո այդպէս կերպարան ափոխուելուդ և

վերածնուելուդ համար, Ո՞չ, որքան տարօրինակ են երեխաները. բաւական է այսօր թողնել նոցա միայնակ, բաղդաւոր, ուրախ ժպիտով ու ծիծաղով խաղալիս ծաղկանց մէջ... յանկարծ վաղը նայում տեսնում ես, որ նոցա սրտերի մէջ արդէն շառաչում է կիրքը և նոցա աչքերը արդէն սիրոյ բոցով են այրվում:

**ՄԻՐԻԱ, (աեղեց բարձրանալով).**

Այո՛, սիրով... Նա վրայ հասաւ ինձ ինչպէս մի փոթորիկ, որպէս մի կայծակ նա վառեց իմ կուրծքա... Նախազգում ենք մենք արդէն՝ գեռ չտեսած նորան, թէ ո՞վ պիտի գաղտնի տիրէ մեր սրտին. Մանկական խաղերի մէջ, երգի և զուարձութեանց մէջ մենք արդէն սպասում ենք մեր ապագայ ամուսնացուին... Ի՞նչպէս, սպասո՞ւմ ենք, ո՞չ ինքը երեւակայութիւնն է նորան առաջ բերում... Բայց աչա՛, հասնում է օրը և նա կանգնում է մեր առաջ գեղեցիկատեսիլ երիտասարդի դէմքով, գեղեցիկ աւելի, քան ինքը ստուերապատ և անորոշ երեւակայութիւնը... Եւ մի՞թէ դու գեռ մինչև այժմն չես իմացել որ կանանց բաղդն ու վիճակը դորա մէջ է. Մի՞թէ դուք, հայրեր, ինքներդ չէք սիրոյ երիտասարդ չաստուծու հովանաւորութեան յանձնում ձեր նորածին աղջկանց և այդ խստասիրու ու գեղեցիկ չաստուածը յետոյ պարեգում է նոցա կեանք և կամ թէ մութը դագաղ և խոնաւ գերեզման:

**ԱՆՏԻՈՔ, (յուսահատութեան մէջ).**

Ո՞չ, այս ի՞նչ դժբաղդութիւն եկաւ իմ գլխիս, ինչո՞ւ համար ես վերցրի քեզ ինձ հետ դէպի այս կողմերը, ո՞վ թը շուառ մանուկ, Դու զառնցանքի մէջ ես. այդ տկարութեան և կամ թէ խելագարութեան նշաններ են. Հաւատացի՛ր, որ այդ մի չնչն երազ է, որ քեզ այդպէս վրդովում ու անհանգըստացնում է. Ի՞նչպէս, մի՞թէ ես նորա համար յաղթեցի չրէաստանը, մի՞թէ ես նորա համար գնացի սուրը ձեռիս դէպի բռնամարտ կոիւները՝ հասարակ զինուորի նման, մի՞թէ նորա համար ես յաղթութիւն յաղթութեան հետելց տարայ, նորա համար մի՞թէ ես բերի այստեղ հեռաւոր երկիրներից իմ հրոսակներս, նորա համար աղորեք աւելեցի և ամինայ կրակի ու սրի ենթարկեցի թշնամու ամբողջ երկիրը, չրէաստանը, որ նոցանից մէկն ու մէկը կենդանի մնալով, համարձակուի իմ աղջկանս, իմ Միրրայիս...

ՄԻՒՐԱ, (Վաղելով ու գրկելով հօրը).

Հայր իմ... ինչո՞ւ համար ես այդքան բարկանում... ինձ  
մի՛ տանջիլ...

ԱՆՏԻՈՔ.

Թշուառակա՞ն, անմիտ, անօգուտ տեղից դու կորար: (Ա-  
ռանձին և բարկացած): Ո՛՛, կրկնակի անիծեալ լինես դու, ո՞վ  
անարգ երկիր:

ՄԻՒՐԱ.

Հայր... Ո՛՛, խղճա՛, մի՛ անիծիր, այդ ամենի մեջ մեղաւորը  
ճակատազիրն է:

ԶՕԲԱԿԱՆ, (գուան միջեց).

Եւրիսթենէսը եկել և սպասում է:

ԱՆՏԻՈՔ.

Ներս թողնել: (Միրրային): Այժմ լոի՛ր, կարևոր գործի  
համար ես նորա հետ պիտի խսեմ:

ՄԻՒՐԱ.

Ես հնազանդվում եմ: (Նստում է մի կողմ: Ներս է մտնում  
Եւրիսթենէսը):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ:

Կ'անք և Եւրիսթենէս.

ԵՒՐԻՍԹԵՆԷՍ.

Ես եկայ այստեղ, մեծ թագաւոր, քո հրամանիդ համաձայն:

ԱՆՏԻՈՔ, (արագ ման գալով և չնկատելով Եւրիսթենէսին):

Օրտիցդ արմատով պոկի՛ր և դէն ձգիր, մոռացի՛ր քո գա-  
տապարտելի սէրը—ահա՛ այն խելացի և միակ միջոցը, որ և  
կըքաղդաւորեցնէ քեզ: (Նկատելով Եւրիսթենէսին): Ա՛, Դու ար-  
դէն այստեղ ես, Ես քեզ նշանակել եմ հսկել պահապան զօրքի  
վերայ, իսկ դու ի՞նչ ես արել: Զգուշացի՛ր: Այսօր ես լսեցի  
նոցա մեջ տրտունջի ձայներ, նոքա անբաւական են իմ տուած  
հրամանից, որով ցանկութիւն ունիմ այստեղից դուրս հանել  
զօրքերս... Դոքա չգիտեն գուշակել ապագայ գալիք չարիքը, բայց  
ես նոր թշնամի եմ նախատեսնում: Հրէաստանի հետ ունեցած  
յաղթական պատերազմից յետոյ, մենք այժմ պէտք է հռովմայե-  
ցիներից զգուշանանք և շտապենք շուտ, դէպի սահմանագիծը:

ԵՒՐԻՍԹԵՆԷՍ.

Թագաւոր...

## ԱՆՏԻՌԻՖ.

Երկու զօրավարներս, Վակիսիդը և Նիկանորը, թշնամու բանակից մնացած աննշան և խղճալի մի խումբ մարդկանց հետ դեռ պատերազմ են մշում և այսօր կամ վաղը դոքա ևս անշուշտ կ'ենթարկուեն իմ գերիշխանութեան։ Այստեղ դուք կը մնաք բաւական թուով որ յամենայն դէպս պաշտպանէք քաղաքը և նորա շրջակայքը։ Թուով դուք մօտ տասը հազարաչափ կը լինէք, իսկ այդ թիւը մի՞թէ քիչ է։ Եւ ահա, երբ ես ուզում եմ միւս զօրաբաժիններս գուրս հանել այս երկից և ուզարկել այլ տեղեր, ուր նորա կարող են աւելի օգտաւէտ լինել նկատում եմ ինչ որ իրարանցում, շփոթութիւն, երկիւղ և մինչև անգամ արտունչ պահապան զօրագնդիս մէջ…

## ԵՒՐԻՍԹԵՆԻՅՈՒԹ.

Թագաւոր…

## ԱՆՏԻՌԻՖ.

Այժմ մենքունենք ամեն ինչ, և յաղթութիւն, և մեծ թիւ, և զօրեղ զժ ու փառք, ել ի՞նչ բանից պիտի վախենանք և կամ ումնից։

## ԵՒՐԻՍԹԵՆԻՅՈՒԹ.

Յուղայից։

## ԱՆՏԻՌԻՖ.

Ումնից, ումնից… Երևի ուզում ես ասել Յուղայի ստուերից։

## ԵՒՐԻՍԹԵՆԻՅՈՒԹ.

Ո՛չ ո՛չ, հենց իրեն, Յուղայից։ Թոշլոտուր, թագաւոր, ասել քեզ մի քանի խօսք։ Ցիշի՛ր, որ այդ մարդու դէմ ունեցած յաղթութեամբ մենք պարտական ենք միմիայն քեզ, բայց այդ չէ կարող հասկանալ պահապան զօրքը։ Նորա համար մինչև անգամ դժուար է հաշոտել այն մոքի հետ, որ Յուղան յաղթուել և ջարդ ու փշուր է եղել միմիայն քո ձեռքով։ Հասկացի՛ր, թագաւոր, նոցա համար Յուղան, այդ արևելքի առիւծն է։ Քեզ համար և քո զօրքի համար կասկածելու տեղիք չկայ, որ դու հենց իրեն, Յուղային ես հանդիպել և յաղթել Երես առ Երես պատահելով նորան հարթ դաշտավայրի մէջ, գիտէք ինքներդ, որ նա սպանուել է ձեր ձեռքով։ Բայց պահապան զօրքը… այդ չգիտէ։ Նա թշնամուն չի ճանաչում։ Նա ամբողջ վեց ամիս նորա թշնամին է եղել, առանց տեսնելու թշնամուն մօտիկից, բայց և ճանաչելով նորա գոյութիւնը այն աւերուածներով և հրդէհներով, որ նա բերել, ափոել, տարածել է այն ամեն

տեղերում, ուր որ մի անգամ ոտք է դրել ինչպէս մի խուրոց գետնի մէջ, ինչպէս մի բու գիշերային մթութեան մէջ, անտեսանելի և անթափանցելի, նա ուր որ գնացել է, միմիայն և միմիայն մշուառութիւն է սերմանել... Քեզ համար նա յաղթուած է և դորան մենք հաւատում ենք, բայց նոցա համար՝ ինչպէս և առաջ միշտ և ամեն ժամանակ անցաղթելի է. Ժողովուրդի աչքում Յուղան մի գերբնական ոյժ, մի դիցաբանական հերոս է և նորա համար ամեն ինչ կարելի է այս աշխարհքում, որ նա կարող է անգամ յարութիւն առնել՝ նորից իւր զօրագնդերը քո դէմ ոտի հանելու համար:

ԱՆՏԻՈՔ, (Մատածողութեանց մէջ).

Այո՛, Ճի՛շտ է. Այ՛դպէս է. Սովորական իրարանցում և շփոթութիւն... հերոսը ընկել, կորել է, և նորա աճիւնը արդէն ցրուած է աղատօրէն շառաչող քամու ալիքներից, բայց դեռ յիշատակը մնում է թարմ և նորա գոռող անոննը ինչպէս և առաջ դեռ հնչում է և թւում է, թէ նա նորից պիտի կեանք առնէ հողեց... Հենց դորա նման մի դէպք տեղի ունեցաւ և ոչ շատ առաջ. ամենքը կասկածում էին Աղէքսանդրի մահուան մասին և Յունաստանը լաց ու կոծով նորան անհամբեր սպասում էր... Այո՛, մեծ է փառքի դիւթիւ զօրութիւնը... բայց որ Յուղան փառքի արժանի հերոս էր, այդ անկասկածելի է. այո՛, նա մեծ էր... Սովորական իրարանցում և վախկոտութիւն... իսկ այդ վախը, երկիւղը սովորական սպառնալիքներով գժուար կը լինի հանգստացնել, ընդհակառակը, եղի՛ր այդպիսիների վերաբերմամբ առատ, ոսկի և գինի բաժանիր նոցա, որոնք աւելի քաջասիրտ կը գտնուեն.

ԵԿՐԻՍԹՈՒՆԼՈՒ.

Ամենահպատակ սրտիս խորին անկիւնից շնորհակալ եմ քեզանից. Բայց մի խօսք ևս. Եթէ կուզենայիր, թագաւոր, աւելի գործ տեսած լինել և աւելի մեծ յաջողութեանց հանդիպել այն ժամանակ հրամայիր մահուան պատժի ենթարկել նորան, որին որ երեկ ենք բռնել մենք:

ՄԻՐԻԸ, (առանձ ձին).

Այս ի՞նչ եմ լսում ես:

ԱՆՏԻՈՔ, (յած ձայնով եւրիսթենեսին).

Լոի՛ր և սպասի՛ր, ես այդ հրամանը-վաղը կըտամ և այ ժժամանակ կարող ես գլուխ բերել (Եւրիսթենէսը հեռանում է):

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

ԱՆՏԻՌ և ՄԻՐՈՒ.

ՄԻՐՐԱ, (ՓՈՂԹԱԹՈՒԵԼՈՎ ՀՕՐԸ).

ՀԱՅՐ...

ԱՆՏԻՌ.

Ի՞նչ ես ուզում ասել ինձ:

ՄԻՐՐԱ.

ՈՇ, ահա՝ այն զօրականն այս րոպէիս խնդրեց քեղանից, որ գու հրամայես մահուան դատապատրել... Ո՛չ, ո՛չ խնդրում եմ, աղաջում եմ, մահու մի' ենթարկիր, ասա՛ շուտ, որ չպիտի սպանես... Հարկաւոր չէ... ՈՇ, երդուիր, որ կընուիրես նորան իւր կեանկը... Հայր իմ, Հայր... (Հեկեկում է):

ԱՆՏԻՌ.

Դու ինձ խնդրում ես այն, ինչ որ տարաբաղդաբար չեմ կարող կատարել. Այժմ լսի՞ր ինձ, իմ որդեակ, հանգիստ սրտով այն ամենը, ինչ որ պիտի ասեմ՝ քեզ Մտածի՛ր, հեշտ է մի՛թէ ինձ համար, որ կտակում է քեզ ամբողջ աշխարհը ժառանգելու, մերժել քեզ քո աղաչածը. Չափազանց մի նշանաւոր պատճառ պիտի լինի, որ ես քեզ պատասխանեմ—«ոչ»: Ես զգում եմ, թէ ինչպէս է այրվում ուսիս վերայ յենուած քո գլուխը, բայց չէ՞ որ ես թագաւոր եմ, ուրեմն և պիտի հպատակուիմ օրէնքներին և նոցա առաջ պարտազանց չգտնուեմ: Երբ և իցէ, եկող սերունդին ես պարտաւոր եմ հաշիւ ներկայացնել իմ գործունէութեանս համար: Ես գեռ նոր եմ վերջացրել այս սարսափելի պատերազմը, գանձարանս դատարկուել ե, զօրքերս յոցնել են և ես գեռ այսօր, թէպէտե ամաշում եմ խոստովանուել լսեցի տրտունջի ձայներ... Նոքա համարձակուեցան տըրտընջալ իմ առաջ, իրենց թագաւորի, տիրապետողի ներկայութեամբ և ինչո՞ւ համար: Որովհետեւ վախենում են, իսկ ումնից, Զօրեղ սարսափելի և ահարկու ժողովուրդից, որ գեռ այն ժամանակ էր ինձ հետ պատերազմներ մղում, երբ գու աշխարհը չէիր եկած, Մակաբայիցին մեզ երեք անգամ յաղթել է, այժմ փառաւորուեցան և նորա որդիքը իրենց անվեհերութեամի, իրենց քաջարի գործերով, նոցա անունները հրէաների համար նոյնն է, ինչ որ պատերազմի ժամանակ հոգի ու անվեհերութիւն ներնչող՝ քաջասկրտ կռուելու հրաւիրող ձայնը, Ո՛չ, ցանկացած

խաղաղութիւնը տեղի ունենալ երբէք չէ կարող... և աշա՛, գեռ  
մէկը կենդանի է. այժմ ինքդ մոտածիր, մի՞թէ ես կարող եմ  
ներողամիտ լինել դէպի այն անձնաւորութիւնը և կեանք շնոր-  
հել նորան. Ո՛չ, նա ևս պիտի յաւիտենական կորստեան մատնուի:

## ՄԻՒՐԱ.

Այո՛, պյդպէս... թո՛ղ, որ նորան ևս կախաղան բարձրաց-  
նեն... Հնուց մնացած վիրաւորանքը այդ է պահանջում, թո՛ղ...  
Բայց ե՛ս... ե՛ս ևս պիտի մեռնեմ նորանից անբաժան, նորա  
հետ միասին. (Ազատվում է հօր զրկից): Այո՛, այո՛, այն ժամա-  
նակ ոչ քո արտասուբները, ոչ քո աղաշանքները չպիտի շար-  
ժեն իմ գութը, ես այն ժամանակ ոյժ չեմ գտնիլ իմ մէջ  
նորա մահուան սարսափը կրելու. (Ներս է մտնում Եղիսէն):

## ՏԵՍԻԼ ԶՈՐՈՌՈԴԻ.

Նոյնք և Եղիսէն.

## ԵՂԻՍԵ.

Թագաւոր'ր...

ԱՆՏԻՌԻ. (Կուպտութեամբ).

Ի՞նչ ես ուզում:

## ԵՂԻՍԵ.

Ամեն տեղ երկիւղ, ամեն տեղ սարսափ է տիրում... Վա-  
ճառականները փախչում են վախենալով իրենց ապրանքներից...  
Քերպոնում նորից մի ճակատամարտ է տեղի ունեցել...

## ԱՆՏԻՌԻ.

Երկի փախստականների անշան մնացորդների հետ:

## ԵՂԻՍԵ.

Բայց բանը նրանումն է, որ Յուդայի անունն է լսվում ա-  
մեն տեղը.

## ԱՆՏԻՌԻ.

Ի՞նչ ես ուզում դորանով ասել.

## ԵՂԻՍԵ.

Վակիսիդի վըանը այրուած է:

## ԱՆՏԻՌԻ.

Ի՞նչ արած, թո՛ղ այրուի:

## ԵՎԻՍԵ.

Բայց խօսում են, որ իբրև թէ այդ տեսակ կռուել գիտէ  
միմիայն Յուղան:

## ԱՆՏԻՌ.

Չեմ հաւատում, այդ ամենը լոկ հէքիաթներ են,

## ԵՎԻՍԵ.

Եւ ձայն կայ, որ իբր Յուդային տեսել են,

## ԱՆՏԻՌ.

ԷՇ, անմիտ առասպելներ են,

## ԵՎԻՍԵ.

Հաստատ լուր է... (Միրրայի դէմքը այս միջոցին սաստիկ փոփոխութիւններ է կրում, գունատուած և տատանուելով դուրս է գալիս):

## ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

## ԱՆՏԻՌ և Եղիսէ.

ԱՆՏԻՌ, (Հետեւլով Միրրային իւր հայեացքով և յետոյ կոպ-  
տութեամբ).

Շատ հարկաւոր է լսել ինձ ձեր յարութիւն առած Յու-  
դայի մասին եղած անմիտ լուրը: Մի՞թէ գու չես տեսնում, որ  
աղջիկս հիւանդ է: Նորա հայեացքի, Նորա քայլուածքի և Նորա  
դէմքի վերայ եղած շուտաքայլ մահուան կնիքը ես արդէն տես-  
նում եմ... Ո՛չ... որբան սարսափելի է այս գիտակցութիւնը:  
Ես, խոռվարար հրէաստանի նոր թագաւորս, ամբողջ Ասիայի և  
Մարաստանի ինքնակալս, ամեն տեղ մահ ու երկիւղ սկիռողս և  
Հնդկաստանի նուաճողս, ես, որ անցնելով իմ նուաճած երկիր-  
ներով ամեն տեղ միմիայն գովասանքներ եմ լսել և որին ամեն  
մի անկիւնից նոր տիտղոսներ են պարզեւում, ինչպէս օրինակ.  
Մեծ, Արդարադատ, ինքնակալ, Փառաւոր, Արևմուտի նեցուկ,  
Արևելքի թագաւոր... և ուրիշ շատ սոցա նման պատուանուն-  
ներ, ի՞նչ, ի՞նչ են այս ամենը համեմատած այն անուան հետ,  
որ պարզեւում էր ինձ իմ սիրած աղջիկս, երբ ժպիտը երեսին  
կանչում էր ինձ. «Հ այրա... Այն ամեն պատուանունները ես  
դեռ շատ կը լսեմ, բայց ահա՛, այս մէկիցն եմ զըկվում...

## ԵՎԻՍԵ.

Թագաւոր'...

## ԱՆՏԻՌԻ.

Ո՞չ, բաղդիս ժպիտը որքան էր կուրացրել ինձ։ Դու երեխ կարծում ես, թէ ես եկայ այս կողմերը հէնց նորա համար, որ վայելեմ յաղթութիւններ և փառքի գափնիններ և որ այստեղ նոր տէրութեան հիմք գնեմ։ Ո՞չ, ես եկել եմ, որ հարազատ որդուս մահը տեսնեմ մի օտար՝ իմ ձեռքով տիրած երկրում։ Ահա՝ թէ ինչու համար էին զօրքերս շառաչեցնում իրենց թրերը, ահա՝ թէ ինչու համար էին պապում արեգակի տակ նոցա զրահները, սաղաւարտները, նիզակները ու նետերը, երբ մենք բարձրադիրք կիւանն էինք նուաճում։ Ահա, ահա՝ թէ ինչու համար էր քամին իւր ամբողջ ուժգնութեամբ փրում մեր վրաները, ահա՝ թէ ինչու համար էինք մենք ընկնում կուռի արեան դաշտերում, մեռնում վահանների ու պատերազմական կառքերի թնդիւնների ժամանակամիջոցում և մինչեւ անգամ տեսնելով մահը, վտանգը, ոչ թէ յետ, այլ առաջ և աւելի առաջ էինք վաղըւմ... Մարդը այդպէս է ստեղծուած ի սկզբանէ. Նա՝ անտեսանելի ձեռքի խաղալիքը գնում է ապագայի հանդէպ, գընում է, մինչեւ որ Ճանապարհի մէջ չի հանդիպել իրեն յուսահատութիւնը և հիասթափութիւնը... Կա՛նդ առ, ցնորամիտ, այնտեղ վիհ, անգունդ է բայցում, շշնջում է նորա ականջին մի ինչ որ գաղտնի ձայն, բայց նա գնում է շարունակ դէպի իւր կորուստը... (Փոքը ինչ լոելուց յատոյ)։ Բայց ինձ ոչ մի երեսոյթ չէր նախազգուշացնում այս չար հետեւանքների համար, ո՛չ երկինքը իւր արտասովոր նշանացցյներով և ոչ որ և է տեսիլ, ո՛չինչ, ո՛չինչ... Ուշ գիշերուայ մառախուղը ինձ չէր թըւում իրբու մի շարագուշակ տեսիլ և վայրենի ագուաւը իւր կըռկըռոցով երրէք և ոչ մի անգամ չի բնակեցրել իմ սրտին մէջ չար նախազգացումունքներ։ Այո՛, ես գալիս էի, գալիս էի միանգամայն հաւատացած իմ բաղդիս մասին... և ինչո՞ւ համար... նորա համար, որ աղջիկս անպատուաբեր, անարդ սիրով բորբոքուի դէպի մի հրէա։ Ո՞չ, վերջացած է, իմ վծիուս անսասան պիտի մնայ, ոչինչ չի կարող փոխել. թէպէտև մեռնի աղջիկս, բայց և այնպէս այդ հրէան պիտի կորչի յաւիտեան...

## ԵՎԼԻՍԻ.

ԹՌՈՒՅԼ տուր ասել քեզ թագաւոր'ր...

## ԱՆՏԻՌԻ.

Օ՛, ես արդ գիտեմ, աւելորդ է։ Ամեն ինչ ինձ հրաւիրում

Ե գէպի այն, որ ես իմ՝ սեպհական ուժովս հանգստացնեմ փո-  
թորիկը, Եթէ այսօր ողորմածութեամբ վերաբերուեմ և մահ-  
ուան տանջանքներից, ազատեմ Յուղայի եղքօրը, այն ժամանակ  
կըմնայ ինձ վաղը իմ՝ սեպհական զօրքելս ջարդել. Մկզքից ես  
գիտեմ այն ամենը, ինչ որ մսադիր ես ասել դու ինձ... Բայց  
իմացի՞ր և այս, որ եթէ ճակատագիրը ուզենայ ինձ հետ վար-  
ուել այնպէս, որ իրեւ մի ծաղիկ՝ գեռ չծաղկած թառամէ աղ-  
ջիկս, այն ժամանակ ես նորից կըմիրադառնամ՝ այս երկիրը ան-  
համար ու անթիւ զօրքերով... Ո՛չ, ո՞քան սարսափելի կըլինի  
այն ժամանակ իմ՝ գարձս այս անիծեալ երկրի համար. Թո՞ղ ինձ  
անուանեն արիւնարբու գաղան, թո՞ղ ինձ անիծեն, որքան ուզում  
են, բայց և այնպէս, յուսահատ և խելագար դրութեան մէջ  
ես կըսկսեմ կոտորել, նիղակահարել, կորտել և այրել... Մի  
ժամանակ ես լոկ միմիայն ժարաւած էի պատերազմների համար...  
բայց այժմ կըծարաւեմ վզէժինգրութեան զգացմունքով... Ո՛չ  
թէ զինուարներ, այլ գահիծներ կըըերեմ այս երկիրը և իրեւ  
հնառուրներ արիւնածարաւ մանգաղներով, կորսարեր քայլերով  
կ'երթանք մենք այս անիծեալ հրէաների արտերով և կըկոսորենք  
անխնայ աջ ու ձախ նոցա բոլոր աղջիկ զաւակներին... Բոյո՞ր,  
բոլո՞ր աղջկերանց և... և նոցա ծնող հայրերին... Ո՛չ, ո՛չ, ո՛չ,  
հայրերին պէտք չէ սպանել... թո՞ղ նորա զառամեն և թո՞ղ որ  
նորա, ինչպէս և ես, ալւորեն վշտից ու տառապանքից...

## ԵՎԻՒՍԷ.

Մեծ թագաւոր, թո՞յլ տուր ինձ մի խօսք ասել քեզ:

ԱՆՏԻՌԻ, (վշտացած սրտով և արագ քայլերով յետ ու առաջ  
գնալով).

Այն ժամանակ միայն ես կըյագենամ արիւնով և ար-  
տասունքներով... Տեսնել շուրջ բոլորքս լաց ու կոծ... հեծե-  
ծանք... հեծկլսանք... ողք... արիւն... (Նկատելով իւր առաջ կանգ-  
նած նղիսէին): Ի՞նչ ես ուզում:

## ԵՎԼԻՍԷ.

Բայց դեռ ուշ չէ փրկել նորան մահից:

ԱՆՏԻՌԻ, (զարմացած).

Եւ դու կարծում ես.

## ԵՎԼԻՍԷ.

Գիտես արդեօք, տէր իմ, որ Յովհաննէսը Մակկարայեցւոյ

Հանդէս Դ.

կրտսեր որդին է, ասել է, որ նշանաւոր և թագաւորական տան ժառանգ է... Զեր աղջիկը իրեն բնաւ չի ստորացնիլ, եթէ նա նորան կին կոչուի:

## ԱՆՏԻՈՔ.

Նորան կի՞՞ն.

## ԵՊԻՍԼԻ.

Իմացիր, թագաւոր, որ այդ միջոցով դու հրէաստանը կը նուաճես հանգիստ, խաղաղ և առանց որ և է պատերազմի, որ դու նորան ձեռք կըբերես ոչ թէ վաստակ, անարդ և ուժասպառ վիճակի մէջ, ոչ թէ կիսակենդան, մահուան պատանքով փաթաթուած և չարագուշակ վէրբերի մէջ կորած, այլ ուժեղ և ընդունակ իրեն տուած քո ծանր վէրբերից աղատուելու: Դու ինքտ կըբժշկես նորան այդ ամենից և կընկրչնչես հլու հպատակութիւն բոլոր հրէանիրի մէջ: Հէնց որ ատելութիւնը վերանայ նոցա սրտերից, իսկզյն այդ ժողովուրդը կըձուլաւի քոնի հետ: Յիշի՛ր իմ խօսքերը, տէ՛ր այդ միջոցին դմելով զու ոչ թէ կաւերես շինութիւնը, այլ նորը կըկանգնեցնես: Այլ ևս մի՛ ուշացնիլ, թագաւոր, այժմ իսկ և իսկ դորա ժամանակն է. մի առ մի կորան նոցա գլխաւորները և պարագլուխները և հոգով թուլացած՝ այդ երկիրը այժմ խաղաղ ու հանգիստ կեանքի է ծարաւ: Նորա մէջ ներկայում տեղի ունեցող աննշան և չնշին խոսվութիւններն ու ապստամքութիւնները մեզ համար սարսափելի չեն: Յուդան մեռած է և խրաբանչիւր մի երկիւղ՝ այդ մի դատարկ ու անմիտ երեակայութիւն է: Այս՝ թէպէտ և Յուդան կորել է, բայց նորա եղբայրը այժմ քո ձեռքումն է, ել ո՞ւր ես ուշացնում, հէնց վաղը և նշանակիր նորան թագաւոր իւր երկրում:

## ԱՆՏԻՈՔ, (մտածողութեանց մէջ).

Ուրեմն գեռ ևս հնար կայ որդուս ազատել, այնպէս չէ: Ուրեմն գեռ գժուար չէ իւլել նորան մահուան ճանկերից... Ա՛յս, ո՛քան, ո՛քան շնորհակալ եմ քեզանից, ազնիւ բարեկամ: անսպասելի, աներեակայութիւն լուսով դու լուսաւորեցիր իմ սիրտս... ինձ թւում է, որ դու ճշմարիտ ես խօսում և աչա, ես պատրաստ եմ լսել քեզ առանձին ուշադրութեամբ: Ուրեմն հարկաւո՞ր է նորան կանչել թէ ոչ:

## ԵՊԻՍԼԻ.

Ինչո՞ւ համար:

## ԱՆՏԻՌԵ.

Իսկ ում հետ պիտի մենք համաձայնութիւն կայացնենք:

## ԵՎԼԻՍՈՒ.

Ո՞չ, ո՞չ, չէ թէ նորա, պյլ մօրը հետ, Ահա՞մ մի անձնաւուրութիւն, Ու թէ կին, պյլ առիւծ է, նա իւր ստինքի կաթով է մեծացրել այդ ամեն առիւծներին և նոցա մէջ ներշնչող խորին ատելութիւնը և չարութիւնը եղել է այդ կինը, Եթէ երեկ գու տեսնէիր նորան, անշուշտ երկիւղից քո մէջ մի առանձին սարսափ ու սարսու պիտի զգացիր:

## ԱՆՏԻՌԵ.

Այս, ես լսել եմ այդ կնոջ մասին... Բայց ի՞նչ կարիք կայ այդ կնոջ հետ խորհրդակցութեանց մէջ մտնել:

## ԵՎԼԻՍՈՒ.

Լսի՛ր, թագաւոր, զրկուելով չորս հարազատ տղայ որդիներից, նա աւելի մեծ ցաւ ու վիշտ է կրել, քան այն, ինչ որ դու ես զգացել ներկայ բոպէում: Հասկանալ այդ ամենը քեզ, ծնող հօրդ—դժուար չէ... նորան երեկ բռնել են որդոց կախաղանի տակ: Մարդ ակամայից խղճում է դորան, երբ փոքր ինչ մտածում է իրողութեան վերայ, ի՞նչ է մնացել նորան կեանքից, ով կըմիկթարէ, ի՞նչը կըլուսաւորէ նորա կեանքի վերջալըսը, Ո՞չ ոք և ոչի՞նչ... Անողօքելի՝ ճշմարտութիւն: Վաղուց ի վեր նա փայփայել է այն միտքը, որ ազատէ մի կերպ հայրենիքը մեր ձեռքից, քայց չէ վիճակուել նորան դլուխ բերել մտածածը, քանի որ այդ երկիրը արդէն նուածուած է քո ձեռքով: Յուսահատ, փշուած սրտով, խոստակուած յցսերով՝ այժմ նա իւր դասն կեանքի վերցին բոպէներին է համարում... Նոյն իսկ այժմ, երբ ժամանակ ժամանակ պատահում է ինձ փոքր ինչ առաջ կորած հրէաների առաջնորդներին, խոստովանվում եմ, որ այդ յիշողութեան դիմաց ես սարսափահահար, դողում եմ ամբողջ մարմեռով, Ուրեմն նա ի՞նչ պիտի զգայ, նա, նոցա ծնող, հարազատ մայրը: Ուրեմն միանգամայն հրաշք չպէտք է համարել, եթէ նորա գիտակցութիւնը և կամքը տատանուի ներկայում այդ տեսակ մի խորը վշտի դիմաց, եթէ նորա հոգին չկարողանայ տանել այդ ցաւը: Դու, թագաւոր, կըհասնես քո նազատակներիդ աւելի քո ողորմածութեամբը և քաղցրութեամբը, քո ուժի և սպառնալիքների միջացով: Այժմն նա գարձեալ

նզյնն է, ինչ որ առաջ էր, դարձեալ խիստ և անընկճելի է, բայց կարող է պատահել որ երբ սեղմի կրծքին իւր միակ որդուն, այն ժամանակ և կըզարթնէ որդու կեանքի համար երկիւղ նորա սրտում, երկիւղ, որ և կըստիպէ համաձայնուել զիջել քեզ իւր որդին:

## ԱՆՏԻՈՔ.

Դէ՛շ, շուտ, հրամայիր կանչել այդ կնոջը ինձ մօտ,

ԵՊԻՄԵ, (զնալով դէպի գոււրը).

Ինչ վերաբերում է Յովհաննէսին, պիտի ասեմ, որ նա միանգամպյն երկիւղալի չէ մեզ համար: (Դուռը բաց անելով, ծայն է տալիս): Նե՛րս բերեք մահուան պատժի ենթարկուած հրէաների մօրը: (Վերադառնալով): Ընդհակառակը, նա մեզ համար չափազանց օգտաւէտ կըլինի: Նա սիրոյ բոցով բորբքուած է դէպի արքայադուստրը և հէնց այդ մէկը թելադրում է կարծել մեզ, որ նա սրտով այնքան մօտ չէ հայրենիքին, որքան նորա միւս, կորած եղացրները: Մենք առանց որ և է ծանր աշխատանքի կարող ենք նորան թեքել դէպի մեր կողմը այնպէս, ինչպէս որ ինքներդ կըբարեհաճէք... Աչա՛ և մայրը: (Մտնում է Հոաքելը, շրջապատուած զօրականներով):

## ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ.

ԿԵՐՆՔ, ՀԱ ԱԲԵԼ և զօրականներ.

ԱՆՏԻՈՔ, (առանձին).

Ինքը ճակատագիրը թող վճռէ իմ և սորա մէջ եղած վէճը... Հետաքրքիր է իմանալ, թէ մեղանից ով պիտի յաղթող հանդիսանայ. Արգե՞ք սա պիտի ինձ յաղթէ և ապա չարախնդաց հրձուանքով ուրախանայ, թէ ես... (Դառնալով դէպի Հոաքելը): Մօտ եկ:

ԵՊԻՄԵ.

Աւելի մօտ,

## ԱՆՏԻՈՔ.

Ես ուզում եմ քեզ հետ ծանօթանալ: Ասա՛ տեսնեմ, գո՞ւ ես այն հոչակաւոր զօրավարների մայրը, որոնց երեկ ես յաղթեցի:

## ՀՄԱՔԵԼ.

Այո՛, ես նոցա մայրն եմ:

## ԱՆՏԻՌ.

Ինչպէս լսել եմ, քո անունը հռափել է, իսկ քո ամուսինդ այն մեծանուն Մակիաբայեցին է, որի հետ այնքան երկար ժամանակ պատերազմներ ենք մղել... (Դէպի Եղիսէն): Ո՞ւղիղ չէ, որ նա նշանաւոր տոհմի ծնունդ էր:

## ԵՎԻՍԽԵ.

Այո՛, նշանաւոր տոհմից էր. նախ քահանայապետ էր, իսկ յետոյ և Հրէաստանի կառավարիչ. Այդ կրկնակի տիտղոսը նա ժառանգել է նախնիքներից:

## ՀՐԱԲԵԼ.

Ո՛չ նա ժառանգել է երրեակ տիտղոս,

## ԱՆՏԻՌ.

Իսկ ո՞րն է երրորդը:

## ՀՐԱԲԵԼ.

Յաղթանակակի՛ր:

## ԵՎԻՍԽԵ.

Անմոռութիւն է այդ տեսակ պատուանունը յիշել բնիճուած օրերում:

## ԱՆՏԻՌ.

Այդ գոռողութիւնը, որով դու մինչև այժմն էլ ամրող ջովին ներշնչուած ես, որից այդքան բարձր է նայում. քո ալեզարդ գլուխը և որ նա քո մէջ ապստամբական ոգի է ծնեցրել, միմայն վնաս և կորուստ է բերել քեզ և քո ընտանիքին. Դու մեր դէմ ինքդ զինուելով, աշխատել ես որդոցդ ևս զինել. նոքա դեռ իրենց մօր արդանդում սովորել են զզուանքով և հակակրութեամբ վերաբերուել դեպի մեզ և այժմ նոքա կորել են հէնց նորա համար, որ լսել են հլու հպատակութեամբ քեզ և միայն քեզ:

## ՀՐԱԲԵԼ.

Նոքա ուշագիր են գտնուել և լսել են միայն իրենց երակներում եռացող արեան:

## ԵՎԻՍԽԵ.

Դեռ նոցա մանուկ հասակում ծնունդ առնելով մեր դէմ մի աննկարագրելի հակակրութիւն և ատելութիւն, տարիների ընթացքում յետոյ նա աճել ու ամրապնդել է և դու դորա մէջ քո ցանկութիւնը կատարած ես տեսել և նպատակ-

ներիդ հասած, այնպէ՞ս չէ: Ո՞վ է նոցա ովկորել մեր գէմ կոռւելու, եթէ ոչ դու, ով է նոցա սովորեցրել կրել սուր, նետ ու աղեղ, եթէ ոչ գարձեալ դու: Ծնելով նոցա, դու ինքդ և սպանեցիր զաւակներիդ: «Զոհուիր», ասում ես դու մէկին, «զօրք ժողովի՞ր», ասում ես միւսին և նորա գնում են, իսկ նոցա հետ գնում ես և դու՝ քո սուր հայեացքը բնեւոելով իւրաքանչիւրի արարողութեան վերայ, գնում ես, առանց մի քայլ յետ մնալու նոցանից և դիտում ես պյտ բոլոր ժամանակամիջոցում ամեն ինչ, ամեն բան... Շատ յաճախ տեսել են քեզ ըմբիշների մէջ թափթփած մազերով և վայրենի հայեացքով...

## ՀՈՒՔԵԼ.

Այդպէս էլ հարկաւոր է, որ մայրը որդոց հետ ուղևորուի պատերազմի դաշտը:

## ԵԳԻՍԵ.

Բայց դու նոցա հետ դեռ աւելի հեռուն ես գնացել: Երեկ դոցանից երեքին մահուան սոսկալի տանջանքներով չարչարում էին, իսկ այդ միջոցին դու սրբազն աղօմքներ էիր երգում, նայելով, թէ ինչպէս էր հսում նոցա արիւնը եռացեալ ակցաների տակից: Ասա՛ տեսնեմ, ով էր այդ կինը: Մի՞թէ այդ դու չէիր, Խօսի՛ր, Խօսի՛ր, ինչո՞ւ ես լուել, պատասխանի՛ր:

## ՀՈՒՔԵԼ.

Այս՛, այդ ես էի:

## ԵԳԻՍԵ.

Նոցա կրած տանջանաց աղաղակներից մինչև անգամ չսարսափելով, դու գեռ օրհնում էիր...

## ՀՈՒՔԵԼ.

Այս՛:

## ԵԳԻՍԵ.

Երբ կրակի բոցը լափում էր նոցա մարմինները, ով էր դիտում հանգիստ սրտով այդ պատառուուած ու խոցուուած մարմինները: Մի՞թէ այդ դու չէիր:

## ՀՈՒՔԵԼ.

Այս՛, այդ ես էի:

## ԵԳԻՍԵ.

Ես լաւ դիտում էի և պարզ տեսնում էի, թէ ինչ ուրախութեամբ էին բորբագիսում քո աչքերը, երբ նայում էիր

անդրանիկ որդուդ կրած սոսկալի տանջանքների վերայ... Նա այդ դառն տանջանքներից յետոյ՝ խեղբամահ եղաւ իւր դէմ ուղղած տասն և երկու նետերից և սոքից գլուխ արիւնաշաղախ ընկաւ դաշիճների ոսքերի տակ. Այժմ ասա՛, տեսնեմ, ով էր նորա յետոյ միւսների մէջ վառ պահում հոգւոյ տոկունութիւնը, եթէ ոչ դու:

## ՀՈՒՍՔԵԼ.

Այո՛, ես էի անմահութեան գաղափարներով նոցա ոգեսո-  
րողը,

## ԵՎԻՒՍԵ.

Դո՛ւ, դո՛ւ և ամենը դո՛ւ:

## ՀՈՒՍՔԵԼ.

Լաւ, այժմ ի՞նչ էք ուզում ինձանից,

## ԱՆՏԻՈՔ.

Ուզում ենք վերադարձնել քեզ քո որդիդ և քեզ էլ անձամբ ներումն չնորհել: Գո բոլոր զաւակներից մնացել է մի-  
միայն մէկը. այժմ ասա՛ տեսնենք, ցանկանում ես արդեօք, որ  
նա ողջ մնայ:

## ՀՈՒՍՔԵԼ. (Հիոթուած).

Ե՞ս... նա... ուզո՞ւմ եմ արդեօք...

## ԱՆՏԻՈՔ.

Այժմ ես իմ հին վրէժս կըմոռանամ, կըներեմ Յովհան-  
նէսին և նոր դաշնակցութիւն կըհաստատենք մենք մեր մէջ:

## ՀՈՒՍՔԵԼ.

Ի՞նչ ուրեմն դուք ինձ կըդարձնէք և միւս որդոցս, որոնց  
երեկ կախաղան բարձրացրիք:

## ԱՆՏԻՈՔ.

Դու ինձ հետ խօսում ես նորա մասին, ինչ որ երեկ է ե-  
ղել, բայց ես քեզ հետ խօսում եմ ապագայի մասին. Ի՞նչ ե-  
ղել է, այն արդէն անցել է. վերադարձնել անցեալում կա-  
տարուածը—այդ անկարելի է. Եթէ պատերազմ է, ուրեմն նո-  
րանից ուրիշ բան սպասել անկարելի է բացի կոտորածից և  
սպանութիւններից. Յաջող էլք նա չի կարող ունենալ ամեն  
մէկի համար. Իսկ դու այժմ, քանի գեռ ուշ չէ, հանդարտեց-  
րու քո կատաղած հայրենակիցներիդ անմոռութիւնները: Հասկա-  
ցի՛ր, որ ինքս ձեզանից պակաս չեմ վնասուել այդ պատերազ-

մներից։ Պատերազմը, երբ նա թռչում է երկրագնդի վրայով, ամենքին էլ կպչում է իւր թևերով և աչա՛, նորա հարուածներից յաղթողն էլ նոյնքան, զրկանք է կրում, որքան և յաղթուողը։ Դու կարծում ես, թէ ինչպէս և դուք, կռուի մէջ չեմ կորցրել սիրած զինուորներիս, որ իմ հրօսակների խմբերը՝ ձեր սրբազն տապանին և ձեր կրօնին ձեռնամուխ լինելուց չեն փըշըուել չեն կորել։ Այո՛, պատերազմի հետեանքները ինձ համար ևս միսիթարական չեն եղել, բայց չնայած այդ ամենին, ես ձեզ ողորմում եմ և ներումն եմ շնորհում։ Թէպէտե Յովհաննէսին արդէն մահուան տանջանքներ են սպասում, բայց ես ներում եմ և տալիս եմ նորան կնութեան իմ աղջիկս։ Անտիոք թագաւորը չգիտէ յիշել կրած վիրաւորանքները և ներկայում նա ցանկանում է ձեզ ներումն շնորհել ի բոլոր սրտէ։

## ՀԱՅԱԲԵԼ,

Ի՞նչ, ի՞նչ։

## ԱՆՏԻՈՔ.

Թո որդիդ, քո կրտսեր որդին, իմ մեծ ողորմածութեան շնորհիւ կըլինի թագաւոր։

## ՀԱՅԱԲԵԼ,

Ի՞նչպէս, ողորմածութեան շնորհի՞ւ։

## ԱՆՏԻՈՔ.

Ես կըտամ նորան իրեն օժիտ իմ ամեն կալուածների կէս մասը։ Թո՛ղ այժմ իմանայ քո ժողովուրդը, թէ ինչ աստիճան գթառատ եմ դէպի յաղթուածները…

## ՀԱՅԱԲԵԼ, (չարախնդաց գէմքով)։

Այդ գո՞ւ ես գթասիրտ գտնվում և գու կարծում ես, թէ պիտի հաւատամ քեզ։ Դու ամբողջ երեսուն տարի վըդովել ես շարունակ մեր հանգստութիւնը և այժմ համարձակվում ես ողորմածութեան մասին խօսել։ Իսկ յիշում ես, թէ ինչպէս էիր հալածում և սաստկացնում մեզ, թէ ինչպէս էիր քանդում քաղաքի պատերը և աւերակ գարձնում մեր տաճարները։ Ասա՛, յիշում ես, թէ ոչ… Գնա՛ մահուան տանջանաց տեղը, որտեղ գուցէ գեռ կախուած են սպանուածների մարմինները, որոնց երեկ պատառոսում էր գահիճը, իսկ այսօր պատառոսում է վայրենի ագռաւը… Գնա՛, գնա՛ և պատմիր զիակներին, թէ որքան ողորմած ես դէպի մեր ժողովուրդը։

ԱՆՏԻՌԻ, (շփոթուած, բայց քաղցր ձայնով).

Ուրե՞մն գու չես հաւատում... Այո՛, ճիշտ է... այդպէս է...  
Ոչ թէ ողորմածութիւն... ոչ թէ խղճահարութիւն... ոչ, ոչ,  
այլ միայն հոգւոյ վիշտ... հենց նորա նման, որպիսին քո մէջ է  
այժմ զգացլում... Լսի՛ր, ես այժմ ամեն բան հասկացայ... այո՛,  
քո ամեն տանջանկըները... Ո՛չ, ո՛քան նորա այժմ մօտ են իմ  
սրտին, Աղաչում եմ, փրկի՛ր ինձ համար իմ աղջիկս. չէ՞ որ նա  
արդէն կանգնած է մաշուան գուան սեմի վերայ. նորան սիրելի  
է քո որդին... Ես տեսնում եմ, որ նորա չարչարանկըները ելք  
չունին... տուր ինձ որդիդ... իսկ ես նորան կը չորչեմ ներումն  
և քո երկրի վերայ թագաւոր կը կարգեմ. Տուր ինձ նորան...

ՀՈՒԱՔԻՆ, (շարախնդաց հայեացքով).

Ա՛, ուրե՞մն նորան մահ է սպառնում..

### ԱՆՏԻՌԻ.

Դուք այժմ ձեր վրէժը առաք կատարելապէս. այս՛, նորան  
մահ է սպառնում... Նա իմ միակ աղջիկս է, իսկ Յովշաննէսը  
քո միակ որդիդ. Ուղիղ չէ մի՞թէ, որ այդ ամենը հասկանալու  
համար թէպէտե քեզ բառեր են հարկաւոր, բայց և մեծ ի-  
մաստ են պարունակում. Դոցա ներկայութիւնից այժմ ամեն ինչ  
պիտի մոռացուի: Թո՞ղ՝ որ վրէժինդրութեան զգացմունքը խեղդ-  
ուի մեր երկուսիս վշտի ովկիանոսի մէջ: Թէ ես և թէ գու այժմ  
համահաւասար աստիճանի վերայ ենք կանգնած, երկուս էլ ու-  
նենք մի մի որդի:

ՀՈՒԱՔԻՆ:

Զեմ հաւատում ես իմ ականջներին...

### ԱՆՏԻՌԻ.

Թո՞ղ՝ հրէաստանում թագաւորէ քո որդին: Նորան ես զի-  
ջում եմ որդուդ առանց արիւնի, առանց պատերազմների: Աչա՛,  
տեսնում ես, թէ ճակատագիրը ինչպէս է յեղաջրջում մարդ-  
կանց դիտարութիւնները, և թէ ինչպէս է նա կարողանում  
մարդուս հոգւոյ խորքերից դուրս քաշել անսպասելի ցանկու-  
թիւններ: Հոգիս ոչ հեռուում լի էր չարութեամբ, բայց այժմ  
նա լի է ողորմածութեամբ, Կովում էի, չարչարվում էի, որ քո  
ազգը ոչնչացնեմ, բայց այժմ աշխատում եմ վերակենդանաց-  
նել: Ես խստասրտութեամբ թափում էի քո ազգի արիւնը, բայց  
այժմ այդ արիւնը ուզում եմ միախառնել իմ արեան հետ, ես

այժմ նեցուկ, պահապան եմ հանդիսանում այն ամենին, ինչ  
որ քիչ առաջ փշում, ոտնակոխ էի անում: Իմ ձեռքով բնա-  
ջնջ արած երկիրը, նցն ձեռքով ուղում եմ կեանքի հրաւիրել,  
ապրեցնել: Թո՞ղ նա թագաւոր լինի, ես կընուիրեմ նորան Խը-  
նայումն, կեանք, աղջիկս և չըշաստանը: Լաւ մնածիր, ինձ չետ  
այժմ հեշտ է խաղաղութեան դաշնք կապել: Իմ ամեն պայ-  
մաններս ես արդէն քեզ յայտնեցի:

ՀՌԱՔԵԼ, (մոտածմանց մէջ).

Պայմանները...

#### ԱՆՏԻՈՔ.

Քեզ մնում է միայն երկուսից մէկը ընտրել: մերժել կամ  
համաձայնուել: Բայց եթէ դու ընտրես որդուդ համար տան-  
ջանքներ, այն ժամանակ ես ոչ մի միջոց չեմ խնայիլ նորան  
ամենաահարկու և ամենաարատափելի կերպարանքը տալու:

ՀՌԱՔԵԼ, (առ անձին).

Ի՞նչպէս վարուել: համաձայնուե՞լ, տա՞լ սորան Յովհան-  
նէսին, թէ մերժել:

#### ԿՎԻՄԵ.

Ել մի' ուշացնիլ, վառալի՛ր, դահիճները արդէն պատրաստ  
կանգնած են նորան տանջելու:

ՀՌԱՔԵԼ, (առ անձին).

Աստուած իմ, Աստուած իմ, դու լսում ես այս ամենը:  
Ամենակարող Աստուած, Դու տուր ինձ զյժ և տոկունութիւն  
այս ամենը տանելու: Ո՛չ, մի' թողնիր ինձ իմ կասկածանաց մէջ  
և սովորեցրո՛ւ, թէ ինչ պատասխան տամ հս սորան: (Անտիո-  
քին): Իսկ եթէ դու, թագաւոր, ստում ես իմ առաջ: Գուցէ  
դու մի նենդ թակարդ ես լարել ինձ համար, գուցէ՞ դու ցան-  
կանում ես սպանուածների թշուառ մօրը, Մակկարայեցւոյ ան-  
բաղդ այրիին, երբ նա արդէն սրսկուած ու շաղախուած է որդոց  
արիւնով, քո ժողովրդեան առաջ ծիծաղի առարկայ դարձնես:  
Կամ գուցէ, ինձ շուա հպատակեցնելու զիտաւորութեամբ, երդ-  
վում ես, որ որդուս կըխնայես, երբ նորան արդէն դահիճները  
տանջում են... Ո՛չ, չեմ՝ կարողանում... այդ ամենին հաւատա-  
լու համար ինձ հարկաւոր է...

#### ԱՆՏԻՈՔ.

Ի՞նչ:

ՀՐԱՄԱՆԻ.

Որ ինքս նորան տեսնեմ; ինքս անձամբ հարցնեմ նորանից...՝

ԱՆՏԻՈՔ, (ողհաւաններին).

ՆԵՐՍ ԹԱՂՆԵԼ սորան բանտը որդուն տեսնելու:

## ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՅՈՐԴԻ.

Բանտ:—Խորքում երկում է երկաթէ դրուք, որ բացվում է զէպի հրապարակ:—Աշ կողմում նեղ դուռն է: Զախ պատի մէջ երկում է փոքրիկ պատուհան երկաթէ վանդակով:

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

ՅՈՎՃԱՆԻՑ, (միայնակ).

Աչքերս կուրանում է վերջալցուի ոսկեզօծ ճաճանչներից: Բարձրադիր Լիվանը փայլում է ամրողջապէս լցոսի վառ ճառագայթների մէջ. կանգնած է նա ամենի գիրքով, իսկ նորա վրայից ձգուած է լայնածաւալ երկնակամարը: Այդտեղ է Ամենաբարձրեալի օթևանը: Գնում եմ ես այնտեղ, այդ դատաւորի մօտ, որ նստած է փայլուն, բոցալառ գահի վերայ: Նորա շուրջը կանգնած են զերմեռանդութեամբ և նորին յարգանքով լի՝ նորա ընտրեալ երկնքի ընակիները, անվերջ խմբերգով որչնելով Արարշին, Բոլոր մարգարէները և մարտիրոսները ահա՛, ես տեսնում եմ այնտեղ, իսկ դոցա մօտ խմբուել են և իմ եղբայրներս՝ յենուած իրենց պատերազմական սրերի վերայ: Արժանի եմ արդեօք կպչելու ես իմ շրթունքներով ձեր հագուստին, ով սուրբ զինուորներ, Արժանի եմ արդեօք մերձենալ ձեզ, երբ իմ մեղքս մեր մէջ՝ անտակ խորիսորատ է փորել և անարդ կնիքով դրոշմել իմ հոգին: Բայց իշեն արած, երբ նորից սիրոյ ժպիտը հետևում է ինձ, մոքերս չեն ուզում բաժանուել ինձանից, իմ մահուան ժամին նդքա ինձ հետ միասին պիտի հանդիպեն... Ես անյօյս և ակամայից ձգում եմ բազուկներս գրկելու սիրոյ տեսիլը և կարծես լսում եմ նորա խօսերը, որոնք իմ մէջ մի ժամանակ սարսուռ և հիացումն էին ծնեցնում: Յափշտակվում եմ ես նորա փայլով, թէպէտե գիտեմ; որ սրբազան օթևանում, ուր Աստուած իմ, Դու միմիայն անարատ հոգիներին ես ընդունում, այն թագաւորութեան մէջ, ուր միմիայն հաւատն է յաղթանակողը, կայ մի աւելի բարձր լցոս, և ով որ տեսնէ նորան, նա

այնուհետև միմիայն Քեզ կը ճանաչէ, Այնուհետև նա կը մուանայ ամեն փթութիւններ, երկրայինը, վիշտ և չարութիւն, կը մոռանայ զգալ տանջանքների դառնութիւնը, երկնքում տիրող միայնակ սէրը նորա համար խորթ, անծանօթ չի լինիլ: Հոգին ճանաշելով այդ սէրը, դէպի երկինք նա առաջուց է թուշում... (Փոքր ինչ լոելուց յետոյ): Աստուած իմ, Աստուած իմ, մարդկանց ամեն մտածմունքները և խորհուրդները, որոնք կամաւ կամ ակամայից են յդացել նոցա մէջ՝ Դու գիտես, չարը և բարին համահաւասար Քեզ յայտնի է, ոչ գիշերը և ոչ ցերեկը չեն կարող ծածկել ոչինչ Քո ամենատես աչքերից, Դու գիտես և այն, Մեծ Աստուած, որ մարդս ոգեւորուած սիրոյ գգուանքներով, այն աւելի բարձր է գասում երկնքից, նոյն իսկ հրեշտակներին անգամ՝ նա չի ուզում նախադասել իրեն սիրած կնոջից: Այսպէս է ստեղծուած մարդը, որ, գալով դէպի մշտական երկնային օթեանը, գառն ափսոսանքով յիշում է երկրաւոր գրկախառնութիւնները և համբոյրները... (Մտնում է Հուաքելը):

### ՏԵՍԻԼ ԵԲԿՐՈՐԴԻ.

(Յովհաննէս և Հուաքել).

#### ՅՈՎՀԱՅԱՆՆԷՍ.

Ի՞նչ եմ տեսնում... Մայր... Ո՞չ, Աստուած իմ... Ուղեղ, մայրս է, մայրս...

#### ՀՈՎԱՔԵԼ.

Այս՛, այդ ես եմ: Ինձ թոյլատրեցին մտնել քեզ մօտ և տեսնուել հետդ:

#### ՅՈՎՀԱՅԱՆՆԷՍ.

Թոյլը տուին,

#### ՀՈՎԱՔԵԼ.

Սպասի՛ր, թո՛ղ որ մի լաւ նայեմ քեզ վերայ: Արդեօք իմ արիւնա է վաղում քո երակներում, արդեօք քո մարմինը ևս իմ մարմինց է: Բաւականաչափ արիութիւն և քաջութիւն զգո՞ւմ ես քո մէջ թէ ոչ:

#### ՅՈՎՀԱՅԱՆՆԷՍ.

Ի հարկէ, Այո՛:

#### ՀՈՎԱՔԵԼ.

Եւ այնքա՞ն ուժեղ ու ամուր ես մարմինը, որ կրես համբերութեամբ և տանես անտրտունջ քո բաժին չարչարանքները

մինչև իրենց վերջին կաթիլները, որ հաստատակամ գտնուես և անձատուր չլինես, որ կուրծքդ անգամ պատրաստ լինես դէմ դնելու և սառնարիւն հանդիպելու...

ՅՈՒՂԱԸՆՆԷՍ.

Ի՞նչ, մա՞յլ: Այո՛, ես պատրաստ եմ:

ՀՄԱՔԵԼ.

Ուրեմն գու պատրաստ ես մահ լընդունելու:

ՅՈՒՂԱԸՆՆԷՍ.

Այո՛:

ՀՄԱՔԵԼ.

Եւ քո մէջ սիրող չի՞ գողալ:

ՅՈՒՂԱԸՆՆԷՍ.

Թո՞ղ նոքա հանեն նորան և պատառ-պատառ անեն, թո՞ղ իմ կուրծքս՝ իրու ազուաներ՝ կտցահարեն, դարձեալ ես չեմ վախենում, դարձեալ ես մահը կ'ընդունեմ անխոռվ հոգով և անխախտ կամքով:

ՀՄԱՔԵԼ.

Բայց ե՞թէ մահուան փոխարէն քեզ կեանք առաջարկեն և կատաղութիւնը տեղի տայ ողորմածութեան, ի՞նչ կ'ասես գու այն ժամանակ: Զկարծես և չեմ էլ ուզում ասել, թէ նոքա ուզում են քեզ խնայել ո՛չ բայց ասում եմ; որ եթէ բան է, քեզ կեանք կամ մահ առաջարկեն, ո՞րը կ'ընդունես, կամ ո՞րը կ'ընտրես:

ՅՈՒՂԱԸՆՆԷՍ.

Այն ժամանակ ես մահ կ'ընտրեմ:

ՀՄԱՔԵԼ.

Աչա՛, աչա՛ իմ որդին:

ՅՈՒՂԱԸՆՆԷՍ.

Այո՛, ես այն անունն եմ ուզում կրել, որին արժանացել են իմ եղբայրներա. ես ցոյց կըտամ, որ իմ երակների մէջ ևս քո արիւնն է հոսում:

ՀՄԱՔԵԼ.

Ո՞չ, ուրեմն ողբան յանցաւոր եմ ես քո առաջ: Ների՛ր ինձ, իմ որդիս. ինդրում եմ, աղաչում եմ բիւր անգամ, ների՛ր, որովհետև քո արժանաւորութեանց մէջ ես թոյլ տուի ինձ կաս-կածել... վախենում էի, որ գու կըհամաձայնուես...

## ՅՈՎՃԱՆՆԻՍ.

Ի՞նչ բանի համար:

## ՀՐԱՄՔԵԼ:

ԱՌ, ուրեմն դու գեռ չե՞ս իմանում: Դէ՛շ, լսի՛ր, ես այժմ ամեն ինչ պիտի քեզ պատմեմ: Մտադիր են յետ տալ՝ բաշխել մեզ երկուսիս մեր կեանքը, մեզ այլ ևս չեն սպառնում ո՛չ մահ և ոչ տանջանկներ, մենք սորանից յետոյ կարող ենք ապրել քո իրաւանց տակ գտնուած երկրում: Ուրեմն այսքան ժամանակ ես քեզ նորա համար եմ պահել, փայփայել որ հայրենի երկիրը քեզ հպատակուի, Այսո՛, մեր հալածիչները երեսուն տարու այ ընթացքում չեն արել այն, ինչ որ մտադիր են անել մի օրուայ մէջ: Դու, պատերազմի որդիդ, իսկ նա, մեր գարաւոր անարդ ու անխիղջ գահիձը, այո՛, դուք երկուսդ միասին վաղը մեր երկրի վերայ տէր և թագաւոր պիտի լինեք, միշտ և ամեն տեղ զուգաւորուած կը հանդիսանաք ժողովրդեան առաջ և ձեր երկուսիդ զլուխները կը զարդարուին մի և նոյն թագով: Դու նորա հետ կը բաժանես իւր իրաւոնքները, որոնց նա ձեռք է բերել կողոպտելով ու սպանելով... կը ստանաս և գահ... և վերջ ՚ի վերջոյ... կ'արժանանաս քո մօր խորին ատելութեան և սրտարուղիս անէծքին...

ՅՈՎՃԱՆՆԻՍ, (անորոշ և շփոթուած վիճակի մէջ).

Բայց ի՞նչպէս, ինչո՞ւ համար:

## ՀՐԱՄՔԵԼ:

Թէ ի՞նչպէս և ինչո՞ւ համար, աչա՛, ես այդ քեզ գեռ չեմ ասել, նորա համար, որ դու մեր անպատութիւնը լրացնելով կը պսակուես նորա աղջկայ հետ, թշնամու աղջկայ հետ: Ի՞նչ, սարսափում, գողում ես, հա՞...

## ՅՈՎՃԱՆՆԻՍ.

Ո՛՛՛, Աստուած իմ:

## ՀՐԱՄՔԵԼ:

Կը ցանկանայի տեսնել, թէ ինչպէս է իմ որդին մեր գարաւոր ոխերիմ թշնամուն թոռներ ընծայում:

## ՅՈՎՃԱՆՆԻՍ.

Ո՛՛՛, էլ զի չունեմ:

## ՀՐԱՄՔԵԼ:

Ո՛՛՛, ի՞նչ կեղուս, ի՞նչ չարամիտ վիրաւորանք է: Հէնց

նոցա այդ մի քայլը ներկայում պահանջում է մեղանից աւելի զօրեղ վրէժինդրութիւն, աւելի ահարկու ատելութիւն:

## ՅՈՒՂԱՆԱԿԱՎ.

Ո՞՛, եթէ իմ մահս կարողանար փրկել հայրենիքս, ո՞՛, եթէ արիւնս թափելով, կարողանայի վերջ տալ նորա ժողովրդեան կրած չարչարանքներին և զյժ ու վեճակենդանութիւն տալ այդ դառն հալածանբների մէջ հեծող ժողովրդեան: Ո՞՛՛, եթէ յօյսի լոկ մի ճառագայթ մնացած լինէր, եթէ մնացած լինէր մի կայծ... Բայց յօյս չկայ, ո՞՛, գորա ժամանակը անցել է. եթէ մինչեւ անգամ ես զլուխս դահճի կացնի տակ գնեմ, գորանից ի՞նչ փոյթ, ի՞նչ օգնութիւն... Մեր աստղը մարել է... Հրէաստանը, Նախախնամութեան կարգադրութեամբ, երկի, պիտի աւերուի և կործանուի... Մենք գորան դիմադրել ենք, կոռւել ենք մեր գյուղեան համար մինչեւ մեր արեան վերջին կաթիլը. մինչեւ մեր վերջին թելը մենք տուել ենք այդ անարդ շներին, տուել ենք ամեն ինչ, ամեն բան՝ լոկ միայն երկրի, ժողովրդեան ապահովութեան ու պաշտպանութեան համար և ի՞նչ... այդ երկիրը այժմ գերեզմանատեղի է զարձել, իսկ նորա բնակիչները կիսակենդան, հալ ու մաշ եղած մի-մի ուրուականներ... Ի՞նչ ենք մենք ներկայացնում այժմ մեղանից: Մի՞թէ չենք տեմնում, որ արդէն ուսնակոն եղած, փշուած, ջարդ ու փշուր եղած մի աղջի խղճալի մնացորդներ ենք և թէ մի ինչ որ անտեսանելի ձեռք շարունակ մլում է մեղ գէպի սարսափելի խաւարը, որ երբէք չպիտի փայլի և ո՛չ մի լոյսի ճառագայթով: Այժմ մեղ հալածում, տանջում, մաշում է ոչ թէ յաղթողը, ո՛չ, մեղ այժմ հալածում է մի նոր օրէնք, որ անողորմ շարունակ այս է կըրկնում: «Ել յօյս չկայ. դուք յաւիտեան ստրուկ էք»: Է՞՛՛, բաւական է, որքան ասացի ու խօսացի... այդ ամենը դու ինքդ էլ շատ լաւ գիտես:

## ՀՐԱՔԻԵԼ.

Ի՞նչ եմ լսում ես. ո՞վ է այն անարդ, վատահոգին, որ համարձակվում է խօսել այդ կերպ իմ ներկայութեամբ: Այս ո՞րտեղից եմ ես լսում մի փոքրհոգու տրտունջը... Ո՞՛՛, խլացէք, խլացէք ականջներ, որ գոնէ կրկնութիւն շլինի, որ գոնէ շարունակութիւնը չլսեմ: Նայի՛ր, ես կի՞ն եմ, բայց և ես անգամ անձնատուր չեմ եղել երբէք երկիւղին, չեմ վհատել երբէք, իսկ ո՞վ է այն երկչօտը, այն փոքրոգին, որ յանդգնում է

վրդովել հոգիս... Ահա՛, քսան տարի է անցել... որդիքս գեռ  
երեխայք էին, իսկ ես այրի... կնքեց իւր երկրաւորը Մակկա-  
բայեցին... նորա յաղթութեանց հետքը անգամ չմնաց... ժողո-  
վուրդը ներումն ու խնայումն էր իսնդրում, աղերսում հալածող  
բռնաւորից... Ահա՛, այդ ամենը տեսայ, բայց մի՞թէ յուսահատ-  
ուեցայ. ո՛չ երբէք, ինձ թևաւորել է միշտ յսյուր. դէպի յու-  
սահատութիւնը, դէպի լացն ու կոծը, ա՞ին ու վիշտը ես միշտ  
խուլ, միշտ անտարբեր եմ գտնուել... հալածուելով, թափառում  
էի ես անապատներում՝ կրծքիս սեղմած մանկանցս, իսկ մեծին,  
Յուդային ման էի ածում հետո՝ շարունակ սովորեցնելով և  
կրկնելով այս. «Գնա՛ առաջ, յուսա՛ և հաւատա՛:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Յուդան մեռած է:

## ՀԹԱՔԵԼ.

Նախատեսնելով յաղթութիւն, ես նորան այդ փառքի հա-  
մար վաղուց էի պատրաստում:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Յուդա՛ն մեռած է:

## ՀԹԱՔԵԼ.

Բայց եթէ Աստուած կամենայ, նա կենդանի կը լինի:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Ա՛յս, մի՞թէ մարդկային հոգւոյ մէջ Աստուած միմիայն ա-  
տելութիւն և հակակրանք է բնակեցնում, մի՞թէ մոռանալը, մո-  
ռացութեան տալը խորթ է մարդկային բնաւորութեան, մի՞թէ  
Կայէնի ամօթարեր գրոշնով ենք մենք կնքուած 'ի յաւիտեան.  
Սէր և ատելութիւն, ո՞ն է գոցանից ազնիւը, բարձրը, վսեմը:  
Արիւն և միշտ արիւն, մի՞թէ գորան վերջ ու սահման չկայ,  
մի՞թէ այլ ելք չկայ. Ո՛չ չեմ կարող.. Սէր և մարդասիրու-  
թիւն, ահա՛ թէ ինչով է լցուած այժմ իմ հոգին... Սիրել նո-  
րան և տիրել ամբողջովին, ահա՛ ներկայում իմ միակ ձգտումն...  
Ո՛չ, մայր իմ, խղճա՛ վերջապէս որդուդ. տե՛ս, քո առաջ չո-  
քած, արտասուալից աչքերով աղաջում է քեղանից գութ քո  
վերջին զաւակը. Պարդեմի՛ր նորան կեանք.

## ՀԹԱՔԵԼ. (սառը).

Ո՛չ, գու իմ որդին չես, գու վիժուածք, գու մի հրէշ ես.  
իմ բոլոր որդիքս արդէն երեկ մարտիրոսական մահ են ընդունել,  
նորա արդէն մեռել են: (Գնում է դէպի դուռը):

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Ի՞նչ ասացիր, այդ ի՞նչ լսեցի ես... ԱՌԻ, մայր իմ, թող  
որ մի քանի խօսք ես ասեմ...

## ՀՈՎԱՔԵԼ.

Երբ դու չես ուզում վարուել այնպէս, ինչպէս որ հար-  
կաւոր է, այն ժամանակ ես ինքս գլուխ կըքերեմ... (Անցնում է  
բեմի մի կողմը: Մտնում է Միքրան):

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

## ՆՐԻՆՔ և Միջուա.

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

## Մի՛րրա:

ՄԻՐՐԱ, (վազելով և ընկնելով՝ Յովհաննէսի գիրկը).

ԱՌԻ, Յովհաննէս, դու կենդանի պիտի մնաս, դու պիտի  
ապրես:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ.

Դու այստեղ և նորից ինձ հետ,

## ՄԻՐՐԱ.

ԱՌԻ ինձ քո գիրկդ, վերցրու: Տուր ինձ կեանք և լցու...  
Արդէն ինձ վերայ ծանրանում էր դագաղի երևակայութիւնը,  
նորա ստուերը ինձ շարունակ հետևում էր: Յերեկը փոխարինուել  
էր խաւարի, ինձ համար օր և գիշեր միանման էին: Այո՛, այո՛,  
ես ապրում էի արդէն գերեզմանային մժութեան մէջ: Բայց...  
աչա ես նորից այստեղ եմ, քեզ հետ միասին: Դու պիտի ապ-  
րես: Ո՛չ, որքան քաղցր և բաղմաբովանդակ են յուսոյ խօսքե-  
րը: Ինչ ուրախութեամբ են լցնում մարդկային հոգին... Թող' որ  
որ ես նոցա կրկնեմ շարունակ, անվերջ և անհամար անգամ...  
Դու կենդանի կըմնաս... Զկան այլ ևս տանջանքներ ու արտա-  
սուքներ: Լսո՞ւմ ես արդեք, մենք երկուս կենդանի կըմնանք,  
այո՛, երկուս... միասին: Նազելի, սքանչելի ծաղիկներով կը  
զարդարէ մեղ ինքը, կախարդուհի սէրը: Արդէն նոր արեգակ,  
արդէն նոր արշալցոյ է բացվում քո ժողովրդեան համար, այո՛,  
նորան խոստանում են նոր և ուրախ կեանք: Կակզել է հայրա  
և հրէաստանի վերայ ցանկանում է թաղաւոր նշանակել քեզ:  
Այսօրուանից նորա վերայ ամեն ինչ կըկերպարանափոխուի և կը  
վերակենդանանայ մեղ հետ միասին: Է՛՛, էլ ո՞ւր եմ՝ երկարաց-  
նում, երկի այս ամենը դու արդէն լսած կըլինես քո մօր բերանից:

## ՅՈՒՂԱՆՆԵՍ.

ԱՌԱ, ՄԻՐՐԱ, ՄԻՐՐԱ:

## ՄԻՐՐԱ.

Ես գալիս էի այստեղ վերջին՝ անխոռասափելի հրաժեշտից քիչ առաջ քեզ հետ միայնակ տեսնուելու, բայց ձանապարհին, վաղելով իմ հետեւից, յայսնեցին ինձ այդ նորութիւնը իմ նաժիշտներս: Նոցա մէջ ամենից հաւատարիմն և անձնանուէրը, երիքսան, գիտէ իմ ամեն դիտաւորութիւններս, իմ սրտի ամեն գաղտնիքներս: Նա գիշեր ու ցերեկ թափառում է քո բանտի շուրջը և պահպանում է կրծքին սեղմած այս թղյնը: (Ցոյց է տալիս սրուակը): Անում են, որ սորա մէջի հեղուկը առանց տանջանքների է թունաւորում: Որպէս զի կարողանայի քեզ վրկել նոցա գաղանային տանջանքներից, ես այն բերի ինձ հետ միասին այստեղ որ երկուսս միասին խմենք...

## ՅՈՒՂԱՆՆԵՍ.

ԱՌԱ...

## ՄԻՐՐԱ.

Բայց այժմ գնա՛ այնտեղ, էլ մի՛ ուշացնիլ, ժողովուրդը հաւաքվում է և քեզ է սպասում: Դու լսո՞ւմ ես անթիւ խուռն ամբոխի աղաղակները. գնա՛ք և կանգնենք դոյցա առաջ ձեռքը ձեռքի տուած... (Կախեցած): Ի՞նչ է նշանակում այդ, ի՞նչ ես ուզում ասել դորանով... Դու հրո՞ւմ ես ձեռքս... Ի՞նչո՞ւ այդքան գունատուեցար... ի՞նչ պատճառ ունիս...

## ՅՈՒՂԱՆՆԵՍ.

Ո՛չ, ո՛չ մահը և միայնակ մահը պիտի այսուհետեւ իմ կիս լիսի...

## ՄԻՐՐԱ.

Ի՞նչ... Յովլա՛ննէս: Այդ ի՞նչ ասացիր... Ո՛չ, ո՛չ, այլ ևս չկրկնես, և աւ, ի՞նչից ես վախենում: Հասկացի՛ր, հայրս քեզ կատարեալ ներումն է շնորհչել: Դէ՛չ, գնա՛ք շուաւ...

## ՅՈՒՂԱՆՆԵՍ.

Ո՛չ, քեզանից վորքը ինչ առաջ մի ուրիշ անձնաւորութեան ձեռքով որոշուեցաւ արդէն բաղդս ու ապագաս:

ՄԻՐՐԱ. (Նկատելով Հուաքելին).

Մի ուրիշի՞... բայց ո՞ւմ... չլինի՞ թէ սորա ձեռքով...

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Այս՝ նորա ձեռքով, որ իրաւունք ունի վարուել ինձ հետ իրեւ իւր որդու հետ այնպէս, ինչպէս որ ինքը կըցանկանայ. նա ինձ կեանք է ընծայել և ընծայելով, նորից Խլում է ինձանից: Գնա՛, թողլ ինձ միայնակ... Այժմ դու անզօր ես...

## ՄԻՒՐԻԱ.

Ի՞նչպէս, մի՞թէ այժմ դու այլ ես իմ ամուսինս չես. Ի՞նչպէս, մի՞թէ դու ուզում ես քո տուած խօսքը յետ առնել Ո՛չ, ո՛չ, այդ անկարելի է: Հայրս քեզ ներումն է շնորհել դու այսօրուանից թագաւոր ես, իսկ ես քեզ հետ թագուհի, ես ներկայ բոպեւմ ուժեղ եմ հէնց այդ միակ գիտակցութեամբ, Թողլ փորձէ այժմ մէկը գնել իւր ոտքն այն դռան շեմքի վերայ, Թողլ այժմ փորձէ մէկը խլել քեզ իմ գրկից... Ո՛չ, այդ անկարելի է, ես թզյլ չեմ տալ, չեմ տալ քեզ ոչ գրին, չեմ զիջիլ նոյն իսկ մօրդ: Անկարելի է բաժանել նոցա, որոնք արդէն մէկ անզամ միացել են ճակատագրի շնորհիւ, որոնք արդէն ձուլուել են միմեանց հետ: Ով սիրում է, նա արդէն մի յայտնի իրաւանց տէր է: Հէնց այդպէս է և այժմ: այս բոպէիս դու իմ գերիշխանութեան տակ ես, իսկ մայրդ... չի կարող այն մայրը սիրել որդուն, որ իւր զաւակին կորատեան է մատնում: այդպիսինը մայր չէ, այլ առիւծ... Ի՞նչպէս, առիւծ... Ո՛չ, ո՛չ... առիւծն անգամ պաշտպան է հանդիսանում իւր ձագերին, երբ նոցա ուզում են խլել նորանից և զիջում է միմիայն ահեղ կռուից և փառաշնչք մահից յետոյ... Աչա՛, այսպէս են վարդում առիւծները... այս՝ այդպէս է լինում միշտ և ամեն ժամանակ մայրը, բայց դու, դու մայր չես, այլ մի անսիրտ, մի անհոգի, մի քարէ արձան...

## ՅՈՎՀԱՆՆԵՍ.

Մի՛րա, Մի՛րա, աւելորդ է այդ ամենը. իմացի՛ր և հասկացի՛ր, որ մենք մի անընկծելի ոյժ ենք, որ դիւրաթեք չենք և ուրեմն ապարդիւն են այդ ամեն խօսքերը. անօգուտ տեղից ես, տանջում ու չարչարվում դու, գեռ յշոյ ունենալով: Գնա՛, գնա և թողլ ինձ միայնակ մօրս հետ: Ես որդին եմ, ես հպատակվում եմ միայն նորան, իսկ քեզ հնազանդուելու ես իրաւունք չունիմ:

## ՄԻՒՐԻԱ.

Այդ անկարելի է. ո՛չ ես կըհամոզեմ նորան: Ո՛չ, մի՞թէ նորա սիրտը այնքան կարծր է, որ անընդունակ է մի փոքր ան-

գամ կակդելու և մեղմանալու: (Դիմելով Հուարելին): Ուղիղ չէ միթէ, որ դու ինձ ատում ես. այո՛, այդ ծշմարիտ է, ես զիտեմ, բայց ի՞նչ արած, ատի՛ր, կոխոտի՛ր ինձ ոտքերիդ տակ, բայց աղատիր սորան մահուան ճանկերից. մի՛ թշլ տաք մահուան սարսափելի դատավճիռը զլուխ բերելու: Ի՞մ գէպի քո որդին ունեցած սէրը յանցաւոր ես համարում, չեմ ուզում, որ ես նորան սիրած լինիմ... համաձայն եմ, թո՛ղ քո կամբը լինի... Ես կը հրաժարուեմ և ոյժ կրգտնեմ՝ այդ բոցը իմ մէջ մարել կարող եմ այդ սէրը իմ մէջ խեղդել, բայց դոցա ամենի փոխարէն ես պիտի աղածեմ, որ արդելես դահիճների մուտքը այստեղ էլ մի՛ ուշացնիլ, մայր, ապա թէ ոչ՝ ուշ կը լինի... Այս՛, գիտեմ, մենք չափազանց անգութ ու խստասիրտ ենք գտնուել գէպի քո որդիքը, դու տեսել ես քո աչքերով, թէ ինչպէս երեկ նոցա ամենին կորստեան են մատնել, ուրեմն թշլ մի՛ տար այլ ևս քո կրտսերին, ամենավերջնին խմելու նոյն տանջանքների բաժակից, ո՛չ, ո՛չ, թշլ մի՛ տար, ինդրում եմ, աղաչում եմ, օգնի՛ր, աղատի՛ր... (Ներս է մտնում Եղիսէն):

### ՏԵՍԻԼ ԶՈՐՅՈՒՐԴ.

ՆՅԱՔ և Եղիսէն.

ՅՈՎՃԱՆՆԵԿՄ, (Եղիսէին).

Ա՛, այդ դու ես, Եղիսէ, գէ՛շ, էլ մի՛ ուշացնիլ. զնա՛, ասա՛ քո ժողովրեան, որ այնտեղ ահա՛ այդպէս գազանարար մոնչում է, որ այս րոպէին ամեն ինչ պատրաստեն տանջանացս համար, որ ես ուզում եմ մահ ընդունել, որ ես պահանջում եմ նոյն տանջանքները, որոնցով կնքել են իրանց երկրաւոր կեանքը իմ եղբայրներս. ասա՛, որ ո՛չ մի խոստում, ո՛չ մի փըր կանք չի կարող ստիպել ինձ հրաժարուել մահից...

### ՄԻՐՐԱ.

Ի՞նչ եմ լսում ես, Յովհաննէ՛ս, Յովհաննէ՛ս, ուշքի ե՛կ...

ՅՈՎՃԱՆՆԵԿՄ.

Այդմ թունաւորի՛ր ինձ, ով հեղուկ, և վերջ տուր դորա-

նու իմ թշուառ կեանքիս, (Խմում է Թոյնը):

ՀՌԱՔԵԼ, (Հետեւով, մինչեւ որ Եղիսէն հետանում է և ապա  
վաղելով՝ դեպի որդին).

ՈՐԴԻՄ...

ՅՈՎՃԱՆՆԵՍ, (Հրելով. ՀԱՅՔԵԼԻՆ).

ՀԵՌՈՌ ինձանից. կեանքիս վերջին բոպէները ես պիտի նուի-  
րեմ սիրոյս, այդ է իմ վերջին պարզբու. (Գնալով դէպի Միրրան):  
Ես սիրում եմ քեզ, իսկ գու. Ասա՛, դարձեալ գու սիրում ես  
ինձ այնպէս, ինչպէս և առաջ. Ո՛՛՛... կրկնի՛ր, [թո՛ղ որ քո  
պանչելի ձայնը ուրախութեամբ և բերկութեամբ լցնէ հոգիս.

ՄԻՐՐԱ, փոտելով գետնի վերայ, վայր է զգում սրուժովը).

ԱՇԽԱՏ

Այդ ի՞նչ ես արել գու, Միրրա.

ՄԻՐՐԱ.

Նոյնը... նոյ...նը... ինչ որ գու... պիտի անես այս բո-  
պէնն. . . .

ՅՈՎՃԱՆՆԵՍ.

Աստուած իմ, Աստուած իմ, այս ի՞նչ դժբաղգութիւն  
եկաւ գլխիս. Սա պիտի մեռնի... Մի՞թէ այդ կարելի մի բան  
է... Ո՛չ, ո՛չ, գու ես երկրագնդի երեսն իմ միակ միսիմարիչը,  
իմ միակ երջանկութիւնս... իմ միակ ուրախութիւնս...

ՄԻՐՐԱ.

Դու ինդրի՛ր քո Աստծոն, որ Նա բաց անէ ինձ համար  
երկնքի դռները...

ՅՈՎՃԱՆՆԵՍ.

ԱՇԽԱՏ, Մի՛րրա, Մի՛րրա...

ՄԻՐՐԱ.

Որ այնտեղ կարողանամ քեզ հանդիպել. (Կայր է ընկ-  
նում և մեռնում: Բեմի լետկից լսկում են աղաղակներ: Հոպելը զբ-  
նում է դէպի դուռը և դուրս գալիս հրապարակը):

ՅՈՎՃԱՆՆԵՍ, (Խոհարհուելով Միրրայի դիակի վերայ).

Վերջացաւ... Բայց ո՛չ, ո՛չ, գեռ ո՛չ. Ո՛՛՛, մի՞թէ կարելի  
բան է այդ: Ի՞նչ սարսափելի իրողութիւն, յաւիտենական քուն,  
գերեզման... մժութիւն և սառնամանիք... Մի՞թէ յաւիտեան  
եմ ես զըկվում քեզանից: Ասա՛, պատասխանի՛ր... միակ իմ բա-

բեկամ; իմ անգին գանձ, իմ միակ քաղցրութիւն, իմ սէր, իմ քսր, իմ կին, իմ երջանկութիւն... Զարթի՛ր, զարթի՛ր, երկնային հրեշտակ, բաց աչքերդ, որոնք ինձ մի ժամանակ փայփայում էին. բաց շըմունքներդ, որոնք մի ժամանակ սիրոյ ողջոյն էին յայտնում... Ո՛չ, որքան անմեղ, որքան գեղեցիկ են նոքա: Մի՛թէ այդ դրութեան մէջ չէիր դու ննջում՝ քո անկողնի մէջ, մի՞թէ այս միւնոյն անհօդ քունը չէր արտափայլում քո անմեղ դէմքի վերայ, մի՞թէ այդ միւնոյն մազերը չէին, որ այն ժամանակներում ալկանման թափուրմ էին քո ուսերի վերայ... Քնի՛ր, ննջի՛ր, իմ աղաւնեակ, ինչպէս և տուաջ անվրդով: Աչա՛, քո գլուխը վերջին անգամ բորբոքուած կըսեղմեմ ես իմ կրծքին: Ափսո՞ս, ափսո՞ս որ երկուսիս համար ես անխուսափելի եղաւ մահը, ես քոնն եմ; իմ անգին հրեշտակ, ես քեզ հետ պիտի մեռնեմ հէնց այս րոպէին:

ՀՐԱՄԱՆԵԼ. (վերագառնալով).

ԺՈՂՈՎՐԴՅԱՆ է քեզ լսո՞ւմ ես թէ ոչ:

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (նայելով Միրրայի վերայ).

Ո՛րքան գեղեցիկ, ո՛րքան հրաշալի է...

### ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՒԴԻ.

Նոյնք, էրիքսան, իսկ յետոյ և ուրիշ նաժիշտաներ.

ԷՐԻՔՍԱՆ, (ներս մանելով).

Թագուհի՛... (Նկատելով Միրրայի դիակը): Ա՛չ... (Կազում է դէպի դուռը): Ա՛յս կողմը, այս կողմը:

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (էրիքսային).

ԶԲՈՒՅԻՆԱՌԱ:

ԷՐԻՔՍԱՆ. (աղաղակում է).

Ա՛յս կողմը, այս կողմը... (Նաժիշտները բարձրացնում են դիակը և դուրս բերում):

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (նոցա հետեից).

Ո՛չ, ո՛չ, մի՛ տանէք... գորան ձեռ մի՛ տաք... Ես թոյլ չեմ տալ... Զէ՞ որ ես գորա ամուսինն եմ... Հայրը ինքն է տուել դորան ինձ կնութեան...

ԱԱՑՆԵՐ ԲԵՍԻ ՀԵՏԵՒՑ.

Մահուան ենթարկել դորան, մահուան...

## ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴԻ.

Յովհաննէս և Հռաքել:

ՀՌԱՔԵԼ, (կանգնեցնելով Յովհաննէսին).

Դու լսում ես դրսում ժողովուած այդ խառն ամբոխի յուսահաստական ձայները. այն ինքը մահն է, այս՝ մահը, որ քեզ կանչում է:

## 2ԱՅՆԵՐ ԲԵՄԻ ՀԵՏԵՒՅՑ.

Մահուան ենթարկել դորան... թո'ղ կորչե՛ քրէաստանը... Սպանել, սպանել դորան...

ՀՌԱՔԵԼ.

Դու լսում ես այդ հեծեծանքը:

## 2ԱՅՆԵՐ ԲԵՄԻ ՀԵՏԵՒՅՑ.

Զարչարել, տանջել, սպանել դորան:

ՀՌԱՔԵԼ.

Ո՞չ, դու չե՞ս լսում այդ ձայները. Քեզ կանչում են, իսկ պահապահեն այստեղ:

## 2ԱՅՆԵՐ ԲԵՄԻ ՀԵՏԵՒՅՑ.

Խեղդամահ անել դորան, սպանել:

ՀՌԱՔԵԼ.

Բայց դու պիտի մեռնես իբրև հերոս, իբրև հայրենիքի արժանաւոր զինուոր:

## 2ԱՅՆԵՐ ԲԵՄԻ ՀԵՏԵՒՅՑ.

Շոշտ, տանջել, չարչարել դորան, սպանել:

ՅՈՎՀԱՆՆԻՍ, (ուշքի գալով).

Այս ի՞նչ ձայներ են այնտեղ: «Սպանել դորան». այդ ո՞ւմը, ի՞նձ... Եթէ այդ պահանջում են, այն ժամանակ թո'ղ սպանեն: (Կազում է դուրս):

## ՏԵՍԻԼ ԵԹԹՆԵՐՈՐԴԻ.

ՀՌԱՔԵԼ, (միայնակ).

Ո՞չ, որդեակ իմ, որդեակ իմ, թոյլ տուր, որ մէկ անդամ գոնէ գրկեմ քեզ... Դեռ մի' գնար... սպասի՛ր... Գոնէ վերջին անդամ մի խօսք ասա՛... (Դրսից դռները փակվում են): Ի՞նչու համար էք ուզում ծածկել դռները... ո՛չ, ես գալիս եմ... գա-

լիս եմ մեռնելու Յովհաննէսի հետ միասին... ես գեռ ուզում  
եմ տեսնել որդուս, լսել... (Վերադանալով): Ո՛չ, այլ ևս չկայ...  
նա անշետացաւ... ամեն բան վերջացաւ... գնաց, կորաւ... իմ  
թշուառ զաւակ, ների՛ր ինձ, ների՛ր, մի՛ անիծիր քո դժբաղդ  
մօրը... Ո՛չ, գարշելի վայրկեանը արդէն մօտ է... ա՛ի, ս'լրան  
սարսափելի է: Դժութիւն չկայ, իսկոյն կըսկսուին չարչարանք-  
ները, տանջանքները: Նորան արդէն բոնեցին, տարան... նորա  
վերջին աղաղակները ես չպիտի այլ ևս լսեմ այս պատերի մէջ...  
(Հեկեկում է): Իսկ ո՞վ էր ուղարկում նոցա կորստեան. ես,  
ե՛ս, նոցա մայրը, ես ցանկանում էի, որ այդպէս լինի, Մի՛թէ  
այն ես չէի, որ շտապում էի մահարեր հարուածով նոցա գլուխ-  
ները դաշճի կացնի տակը գնել, Զէնք կրելը մի՞թէ ես չեմ նո-  
ցա սովորեցրել, Այո՛, այո՛, ես ինքս էի միշտ և ամեն ժամանակ  
նոցա դաշիճը: Գայլը իւր ձագերը պահում, գուրգուրում, փայ-  
փայում է, իսկ ես իմ հարազատ որդոցս... որդոցս ես կորստեան  
մատնեցի... ինքս իմ ձեռքով սպանեցի նոցա... Թշուառ, ապա-  
բաղդ կին, ո՞րտեղ են զաւակներու... (Ուժգին և մասամբ շփոթ-  
ուած մտրով): Ի՞նչ, ի՞նչպէս, օրէ՞նք... Սաստուած... Հայրենիք...  
Օրէ՞նք... Ծննդավայր... Պարտք... Արիւնս բորբոքում է, հոգիս  
տրտնջում է... Իսկ ո՞րտեղ է օգուտը, ի՞նչ օգուտ ստացանք  
այս ամենից... Թշնամին հրձվում է... Նա յաղթել է... Ամեն  
բան կորաւ, ոչինչ չփրկուեցաւ, ոչինչ չազատուեցաւ... (Լաց է,  
լինում): Ա՛ի, Աստուած իմ, Սաստուած, էլ ի՞նչ ես պահան-  
ջում ինձանից: Ո՞րդիքս ես պահանջում: Նորա այլ ևս չկան, չէ՞  
որ ես ինքս նոցա քեզ զոհեցի... Տասն և երկու տարի շարու-  
նակ տաժանակիր չարչարանքներ եմ կրել, տանջուել եմ; բայց  
դարձեալ երբէք և ոչ մի ժամանակ չեմ տրտնջել: Հլու հր-  
պատակութեամբ մէկ-մէկ նուիրել եմ քեզ որդիքս, զոհել եմ  
քեզ այն ամենը, ինչ որ թանգ էր ինձ համար այս աշխար-  
հում: Կարողութիւն, ունեցած-չունեցած, սէր... Դժբաղդ որ-  
դոցս գերեզմանները ես ինքս իմ փորել իմ ձեռքով, ես նոցա  
մահուան դատապարտեցի գեռ իմ արգանդում; գեռ չծնուած,  
ես նուիրեցի նոցա՝ իրանց բովանդակ կեանքում Քեզ և Հրէաս-  
տանին: Արդեօք տեսել են երբ և իցէ, որ աչքերիս մէջ ար-  
տասուքի մի կաթիլ անգամ փայլէր: Ո՛չ, երբէք: Ես մոռացել  
եմ լացը և զաւակներիցս կրտսերին, ամենից փոքրին ես ան-  
վըրդով հոգով, հաստատ կամքով ողարկեցի հենց այս րոպէիս

մահուան տանջանկներ ընդունելու, Թէպէտև կեանքը խոստանում էր սէր, պատիւ, յարգանք, ամեն տեսակ բարիքներ և միմիթարանք, բայց այդ ամենը ես չուզեցի և օրհնեցի նորան մահ ընդունելու և նա գնաց առանց միմիթարական մի խօսք անգամ լսելու: Դու, Տէր, խեցիր ինձանից ամեն բան, ինչ որ ունեի... բայց գեղ մի բան կայ... ո՞՛հ, Խղճա վերջապէս: Աղա-չում եմ քեզ ի հարկէ, ոչ թէ ինձ համար, ոչ թէ հալ ու մաշ եղած հոգւոյս համար, ոչ այն ճիճուի համար, որ ոտնակոխ է եղել ճանապարհին, ո՛չ, ես աղաչում եմ իմ հայրենիքի բարօրութեան համար, իմ թշուառ հայրենիքի ապագայ երջանկութեան համար: Լսի՛ր, Տէր, աղաչունքներս, լսի՛ր հեծեծանքս, հառաչանքս, տես արտասուբս, տե՛ս, տե՛ս այդ ամենը և Քո ընտրեալ ժողովոդեան համար պաշտպան հանդիսացիր: Օգնի՛ր, նորան աղատուելու վիշտ ու տառապանքից, օգնի՛ր, մեկնի՛ր Քո զօրեղ ձեռքը և վերջ տո՛ւր նորա տանջանկներին ու շարչարանքներին... Լսի՛ր, Տէր, երբ ես Քեզ եմ աղօթում և խնդրում: ապա թէ ոչ կըսկսեմ կասկածել Քո մասին... (Ներս է մտնում Եղիսէն):

### ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴԻ.

ՀԱՊԵԼ և ԵՂԻՍԵ.

ԵԳԻՍԻ.

Այս՝ այս՝, կոծի՛ր, աղաղակի՛ր, փետի՛ր մազերդ... Լաց, արտասուբս, վիշտ, տառապանք թո՛ղ քեզ տանջեն ու շարչարեն, ով անարդ կին: Անէծք և միմիայն անէծք թող որոտայ քո գլխին: Դու միայն մահ ես բերում թագաւորներին և նոցա որդոց: Այժմ զաւակներիդ կորստեան և նոցա մահուան համար աղաղակի՛ր, բառաչի՛ր, հեծկլտա՛: Թող որ քո մռնչիւնը հասնէ քո Աստուծոյ ականջին: Ինչ գործ որ ունէիր, վերջացրել ես, այժմ հերթը մեղ է հասել գլուխ բերելու այն, ինչ որ մտադիր ենք: Կորան ամենքը, Յուղան, Յովչաննէսը և ուրիշները. քո հայրենիքի ճզնաժամը արդէն վըայ է հասել մնում ես միայնակ դու, մեռի՛ր ուրեմն և դու մեր հարուածների տակ: (Յարձակվում է Հուարելի վերայ մերկացրած սրով):

ՀՐԱՄՔԵԼ, (Հրձուանքով և մի առանձին ձայնով, որի մէջ լսվում է մարդարէութիւն).

Յաղթուած ենք այժմ ոչ թէ մենք, այլ դուք: Պատերազմ մի մէջ ձեր ամեն նշանաւոր մարդիկն ընկան, կորան, բայց իմ

որդին այստեղ է, այս պատերի տակ: (Եղիսէն յետ է քաշվում սարսափահար եղած): Թող' լ Յովհաննէսը կորած լինի, բայց Յուղան կենդանի է. իմ անդրանիկս բերում է այստեղ իւր զօքքերը, շըջակայքը որոտում է նոցա պատերազմական աղաղակներից, Բայց ո՞վ նորից ժողովեց քեզ չամար զօրախմբեր, որդի՞ս, Ի՞նչպէս, Դու ի՞նքդ յաղթեցիր թշնամեաց զօքքը, Դու ի՞նքդ համախմբեցիր այդ ամենքին քո գերիշխանութեան տակ, Բայց ի՞նչպէս, ասա՛, ասա, իմ բերկրանք, իմ փառք, իմ բաղդ ու երջանկութիւն. ասա ինձ տեսնեմ, որդիս, Թէ ի՞նչպէս յաջողուեց քեզ աղատել սորկացած ու յաղթուած հայրենիքդ թշնամու աւերող Ճանկերից... Դէ՛՛, շարժուի՛ր առաջ, գնա աներկիւդ, վայրենի հրճուանքով տոնի՛ր յաղթութիւնդ և անխնայ սպանիր, կոտորի՛ր թշնամիներիդ, իմ մեծ, իմ քաջարի զաւակ և յաղթական փողերի ձայնով տոն'ւր ինձ լուր, Թէ հայրենի երկիրը արդէն աղատ է օտարի լծից: Ես սպասում եմ, գէ՛՛, շո՛ւտ... (Լսում է փողերի ձախ: Դոնները բացվում են և ներս է մտնում վիրաւորուած Եւրիսմենէսը, իսկ նորա հետեւից զօրականներ):

### ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՒԴԻ.

Նոյնը, եւրիսմենէս և զօրականներ,

ԵՎԻՐԵՄԹԵՆԻՍ.

Վազէ՛ք, իմախէ՛ք ամենքդ. Յուղան կենդանի է, նա մեռած չէ... Շտապէ՛ք, շո՛ւտ, շո՛ւտ... Թագաւորը ինքն էլ է փախչում, քաղաքը պաշարուած է և արդէն վերցրուած... Մեր զօրախմբերը ջարդուած են, ամենքը կոտորուել են, էլ մարդ չկայ... (Յուղան ներս է վազում հրէական զինուորներով):

### ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՒԴԻ.

Նոյնը և Յուղան.

ՅՈՒԴԱ.

Զարկի՛ր, սպանի՛ր, ո՛չ մի ներումն, ոչ մի ողորմածութիւն... (Տեսնելով Հուաքելին): Ա՛շ, մայր իմ, հայրենի երկիրը վերջապէս աղատուած է թշնամու բոնակալ ձեռքից:

ՀՌԱՔԵԼ, (օրօրուելով).

Սրբազան յոյսերս կատարուեցան... Բաւական է որքան ապրեցի, այժմ կարող եմ մեռնել խաղաղ և հանգիստ հոգով... Շնորհակալ եմ Քեղանից, ո՞վ Ամենակարող Արարիչ: (Վայր է ընկնում և մեռնում):

# ԼՈՒՍԱՐԱՐԻ ՆԱՄԱԿԸ

Կ. ՊՕԼՍԻ Ց<sup>1</sup>.

Կոստանդնուպոլիս, 25 Յունիս 1881.

Բարեպատեհ առիթ մը ներկայացուած է այժմ  
քաղաքիս մէջ այն տմէն տղգայնոց որ չկրնալով, աղքա-  
տութեան պատճառաւ, բժշկի այցեվարձ վճարել՝ կը-  
զրկուեին հիւանդանալու իրաւունքին զոր հարուստներն  
միայն կրգայելին մէծ քաղաքներու մէջ։ Այս առիթի մեջ  
ներկայացնողներն են Մանգումէի, Մասիսի և Թէր-  
ձէ մանը Եֆքեարի մէծապատիւ, ազգասէր, մարգա-  
սէր, անձնանու էր, գմանիրա, ողորմած, բարեպաշտ և  
վեհանձն խմբադիրներն, որոց առաջինն կրխոսաւանայ շա-  
բաթը յիսուն օխա կարագ նուիրել աղղային հիւանդա-  
նոցին, երկրորդը՝ յիսուն օխա միս և երրորդը յիսուն  
օխա բրինձ։ Աւ ով կընայ պնդել թէ Պօլսոյ հայ խըմ-  
բագիրներն բարեգործութիւն չեն ընկը. . .

Սոկրատոյ աշակերտներէն մին երբ Սթրեսիատին  
Աթէնքը ցոյց կուտար քարտի վրայ և ամպերու մէջ,

<sup>1</sup> Հանգուցեալ Յակոբ Պարոնեանը աշխատակցում էր իւր ժա-  
մանակին «Փարոս Հայաստանի» պատկերագարդ հրատարակութեան  
«Հրւարար» ստորագրութեամբ։ Այս անտիպ նամակը մենք ստացանք  
Մէծ. պ. Լևոն Մսերեանցից, որին և յայտնում ենք մեր շնորհակա-  
լութիւնը։

Մթրէբսիստան կըպատասխանէր թէ «սխալ է, Աթէհին չնմտնիր այդ, վասն զի դատաւորներ չեմ տեսներ իրենց աթոռներուն վրայ բազմած» և այս պատասխանով Արհստոփան կակնարկէր Աթենացոց այն մոլութեան զոր ունէին դատ վարելու: Բնականաբար շատերն այժմ չպիտի հաւատան խմբագրաց երրորդութեան այն բարեգործութեան՝ պատասխանելով թէ «խմբագրաց համար շահ մը չենք տեսներ այդ դործին մէջ»: Այո՛, յիշեալ խմբագիրներն հրապարակաւ խոստացած են ընել այդ նուէրներն, միայն թէ քանի մը և թէ ներ կան այս բարեգործութեան մէջ: Այդ խմբագիրներն այն ատեն պիտի սկսեն այդ նըւերներն, և թէ ազգայինք բարեհամբին անոնց թերթերուն իւրաքանչիւրէն 1000—1500—2000 օրինակ գնել օրը. Եթէ 999—1499—1999 օրինակ վաճառութին՝ զմասիրա խմբագիրներն ցաւօք սրափ պիտի զգկուին այդ բարիքն ընելէ կամ իրենց նուէրին քանակութիւնն աւելցնելէ: Յայտնի է թէ խմբագրաց այս բարեգործութիւնն, թէ և թէ ով ընկերացած, իրնոց շահաւելու լինել աղբային հիւանդանոցին և, մանաւանդ այդ խմբագրաց, միայն թէ որոշել հարկ է թէ ժողովուրդն ընթերցասիրութեան նըւպատակաւ բարեգործութեան պիտի վարժուի թէ բարեգործութեան նպատակաւ ընթերցասիրութեան, վասն զի ասոնց երկուքն ալ հաւասարապէս կըպակսին մեր մէջ: Մենք այդ խմբագրաց փափուկ զգացմանց քաջածանօթ լինելով՝ չենք կրնար երեակայել թէ միմիայն իրենց շահու աղքիւր ստեղծելու նպատակաւ այդպիսի որոշում մը տուած լինին: Խնչպէս չենք կրնար մեղադրել այն սափրիչն որ վեհանձնաբար կըխոստանայ շաբաթը 100 օխա միս տալ ձրի ազգային հիւանդանոցին, և թէ շաբաթը հազար աղբայինք իրեն խանութն երթան և ածելուին. խնչպէս ոչ ոք կրնայ պարսաւել այն անձնանուէր և ադնիւ պատասխանին որ կըխոստանայ Միացեալ Ընկերութեանց

երեք հազար ոսկի նույրել, և թէ ազգայինք հինգ հազար ոսկիով աղջիկ մը տան իրեն՝ ի կութիւն, սակայն իրաւունք կ'ունենանք խոնարհաբար կարծելու որ այդ և թէ ներով քիւրտերն և աւազակներն իսկ կը յօժարին ազգ. հիւանդանոցին նուէրներ ընելու: Ինչպէս յայտնի կը տեսնուի, այս բարեգործութեանց մէջ և թէ ներուներկայութիւնն քիչ մը աչքի աղէկ չերեար, վասն զի այս և թէն այնպիսի շաղկապ մ'է որ առաքինութեան քովը դրուելուն պէս զայն մոլութեան կը փոխէ և իրաւունք կուտայ ժողովրդիան հարցունել ինքն իրեն թէ, օգնութեան արժանի մէկն ի՞նչպէս կարող է ուրիշին օգնել: Թողունք ժողովրդիան ընել այն հարցումն և մենք դառնանք հիւանդանոցին հոգաբարձութեան գրասենեալն, ուր կը դիմեն մեր խեղճ ազգայիններն և հիւանդ ենք պօռալով հիւանդանոց մոնել կ'ուզին և, երբ ազգային հիւանդանոցին տիսուր վիճակն ցոյց տրուի իրենց՝ կը պատասխանեն, «խմբագիրներն այնչափ կ'օգնեն կոր ձեզի, ինչու համար չէք ուզեր ընդունել զմեզ». մինչդեռ ցարդ կարծենք թէ յիշեալ խմբագիրներն չկարողացան իրենց խոստումն կատարել չկրնալով իրենց ուզած քանակութեամբ թերթ ծախել: Ըստ մեզ՝ յիշեալ խմբագիրներն իրենց նիւթական վիճակն բարւոքելու համար ուրիշ միջոցի մը դիմելու էին և թող տալու էին որ յանուն հիւանդանոցի հաւաքուած զրամն ամբողջ յիշեալ շնչերին անտուկն երթար և ժողովրդեան՝ յանուն հիւանդանոցի ծախու առած թերթին 20 փարաներն յիշեալ խմբագրաց քսակներուն մէջ մոնելով ձանձրութիւն չտային իրենց, մինչեւ այն օրն որ այս անձնանուէր խմբագիրներն հրաշեւք յաջողէին իրենց թերթերէն 1500—2000 օրինակ սպառել...: Սակայն զուք պիտի ըսէք. «թող առւր այս խնդիրն և ըսէ ինձ թէ ուր մնաց հայ կա կան խնդիրն»:

Դեռ երեկ չէ առջի օրը մայրաքաղաքիս մաքսատան

պաշտօնեաներէն մին Բաթաթէս-ի մէջ կըփնտուէր  
 հայ կական խնդիրն Բաթաթէս-ի մշակութիւնն  
 ուսուցանող տետրակիներ՝ որ դաւառները կըզքիուէին  
 մայրաքաղաքէս, հասարակաց կըթութեան պաշտօնէին ու-  
 շաղրութիւնն գրաւեցին, ձերբակալուեցան, քննութեան  
 ենթարկուեցան, որպէս զի ժողովրդեան մաքերն պրո-ող  
 նիւթ չունենան իրենց մէջ: Մազ մնաց որ Բաթաթէս-  
 ով միս ուտելն ալ պիտի արգելուէր մեր ազգայնոց, եթէ  
 հասարակաց կըթութեան պաշտօնեացն երկար քննու-  
 թիւններէ եռք Բաթաթէս-ին անմեղութիւնն չձանա-  
 չէր: Իսկ Ափիտնի մշակութեան վերաբերեալ տետրակիներն  
 ամեն քաղաք ազատ են մուտ գոտնել առանց քննու-  
 թեան. աւելորդ է ըսել թէ այս Ափիտնի մասին եղած  
 թոյլտութիւնն՝ անոր թմրեցուցիչ և քնարեր յատ-  
 կութեանը շնորհիւն է: Հայ կական խնդիրն արդէն  
 խորհրդակցութեան նիւթ ըլլալ սկսած է Տէրութեանց  
 մէջ, և մեր ազգայիններ ամեն օր հեռագրական լուրերու  
 մէջ իրենց խնդրոյն վերաբերեալ բառեր կըփնտուեն: Ան-  
 գղիոյ գեսպան Լօրտ Տիւֆէրին քանի մ' օր առաջ պատ-  
 րիաքարան եկաւ և ժամու մը չափ տեսակցեցաւ Ամեն.  
 Ներսէս Ս. Պատրիարքին հետ Զեմ կարծեր թէ օդին  
 գեղեցկութեանը վրայ խօսած լինին, ոչ ալ Մեղուի Սօ-  
 սիւն-ին յօդուածներուն վրայ, հարկաւ հայկական ան-  
 ուանեալ խնդրոյն վրայ խորհրդակցեցան, սակայն ցա-  
 ւալին այն է որ Ամեն. Ներսէս Պատրիարքն այսօր, հինդ-  
 շաբթի, — իւր հրաժարականը առւաւ ազգային ժողովոյ  
 որ միահամուռ մերժեց զայն, և իւր այս որոշումն պատ-  
 գամաւորութեամբ մը հաղորդեց նորին Սրբավնութեան՝  
 որ պնտեց գարձեալ իւր հրաժարականին վրայ: Ոչ ոք  
 կըկարծէ թէ աղգային ժողովն ընդունի այս հրաժարա-  
 կանը: Մեր ազգայիններն այս հրաժարականը լսելուն պէս  
 սկսան տուներու մէջ զբոսարաններու մէջ և շուկայներու

մէջ միմեանց ըսել. «Հիմայ հասկացանք թէ զիսաւորն ինչու համար երևեցաւ». այնչափ չարագուշակ կըհամարին ազգին համար և ս. Պատրիարքին հրաժարականը: Մինչդեռ հակահասունեան ազգայնոց մէկ մասը կըպնդէ թէ զիսաւորն իրենց համար է, վասն դի հասունի աշակերտ Ազարեանն Հռովմէական Հայոց Պատրիարք և Կաթողիկոս ընտրուեցաւ և թէ իրբե Պատրիարք և թէ իրբե Կաթողիկոս կարող է իրենց չարիք հասցնել: Ի՞նչ պիտի ըսես, մտիկ ընկերու է, նախապաշարումն գեռ վերցած չէ հակառակ մեր ազգային Վիքթօր Հիւկօներու, Լամարթիններու, Լիթրէներու, Պիւլնէրներու, Վոլթէրներու, Ռընաններու հրաժարակութեանց որք աշխարհիս առաջին մատենագարանին զարդն կրնային լինել: Մատենագարանին ըսինք և Սամոսի մատենագարանն միտքս եկաւ, որու համար հայ հանճարի ծնունդ երկեր կըխընդրուին անոր ծնօրէնին կողմէն: Խուսիոյ հայերն կրնան ծերենցի վէպերն ոռւսիրէն, երրայեցերէն և վրացերէն թարգմանութեամբք զըկել Սամոսի մատենագարանն և մետաղ ընդունել իսկ մեք ի՞նչ պիտի զըկենք: Շատերը կըպնդեն որ Պ. Գ. Նիկողոսեանի դէմ Պօլս եցւոյն վրած կամարթինածածանը յօդուածազիրն զըկուի կամ Պ. Ներշապուհի վերջերս հրաժարակած բանաստեղծութիւններն և կամ Պ. Խ. Միսաքեանի ձեռագիր հեղինակութիւններն որ... զրուած չեն գեռ դժբախտաբար: Ոմանք կ'առաջարկեն ոչ ինչ զըկել, այլ միայն նամակ մը գրել և անոր մէջ խոստովանել թէ. «Հայ ազգն գեռ հանճարի ծնունդ գործ մը չունի, և թէ ունենալուն պէս պատրաստ եմք զըկելու, թէ կըխնդրեմք որ առ այժմ հաճիք ընդունել մեր խորին յարգանացս հաւաստիքն և այլն:»

† Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

## Ի ԶԱՄՉԵԱՆ ՀԱՅՐ ՄԻՔԱՅԵԼԵ<sup>1</sup>

Վերապատուելի վարդապետաց՝ Տեառն Տեառն Հայր  
Հայր Մկրտիչ վարդապետի և Հայր իգնատիոս վարդա-  
պետի ի Տէր խնդար:

Զգիր Վերապատուելեաց ձերոց զրեալ ի Հոօմայ յ<sup>9</sup>  
դեկտեմ. 1816 ընկալայ ի 16 փետր. 1816(?) ընթերցայ  
առաջի Մերայնոց զամենայն զբանսդ ընդ որ ոչ սակաւ  
ուրախ լեալ նոցա, փառս մասուցին Տեառն: Խոկ ես յա-  
ռաւելն բերեմ լսել, և ակն ունիմ թէ լուայց, եթէ չկայցէ  
թշնամին ընաանի: Բայց արդ՝ բացից առակաւ զբերան  
իմ, լուարուք զոր ասեմն և զոր զիտեմ:

Ի հոգալ իմում զկահան զրոց՝ լուայ զձայն խոր-  
տակման աղեղանց, զարմացայ և զարմանամ, զի ի մեր  
զրուածն միայնոց ուրուք, դադու ի բնուալից ևս և ի մե-  
ծաւորէ իմմէ և ի միաբանիցս և որժվ իրաւամբք անկաւ  
բանն զշասարակութեամբ համայն: Եթէ դատապարտելի  
ինչ կայր ի նմա, իմ էր դատապարտութիւնն, և ար-  
դարն զի՞ արար: Ես զայն զիր յանձն էի արարեալ դա-

<sup>1</sup> Այս պատմական յիշատակարանը մենք արտագրեցինք հ. Մի-  
քալէլ Զամչեանի իսկական ձեռագրից, որ ուղարկեց մեզ պ. Ս. Թան-  
դեանը: Յայտնում ենք յարդելի պարոնին մեր ընորհակալիքը:

տաստանի, ոչ այսր՝ և ոչ այնր, այլ՝ սրբոյ եկեղեցւոյ՝  
զի գատեսցէ որպէս և ախործ է. իսկ դռքա զիս թողեալ,  
արկին զբատաստանն զհասարակութեամբ մերով:

Այն իմ գիրք՝ զօր դռքա զողացան՝ ի ձեռս իւրեանց  
էր. ես ինքս աստ էի, աստ և ոտիսքն իմ ութսունիւ  
չափ առաւելեալք՝ և Աստուածաբանք վերածայնեալք:  
Զարմանք են, զի ոչ ոք ի նոցանէ իշխեաց ախոյեան ե-  
լանել ընդդէմ իմ յետ բազում անգամ թախանձե-  
րց իմ զնոսա, այլ փախուստ տուեալ տաղնտպեցան,  
և իբրև մեղուք զհասարակութեամբ մերով դիմեցին ան-  
պատկառ յայն ատեան, յոր եսն եմ ապաւինեալ:

Զի՞ կայր ոք և սցնապիսեացզ, հայր Միքայէլ, բա-  
զում ինչ ամենայն իրօք հայեցեալ եմ յազդ հայոց՝ գտի  
զնոսա աւելի քան զքսան միլիօն, ահ կալաւ զիս՝ զի՞արդ  
ազգ այսպիսի կորիցէ. կրկին հայեցայ՝ և տեսի զազգն  
իրը զոսկի. բայց գտի ի նմա խառնորդ պղնձոյ՝ և կա-  
պարի՝ և յառաւել յուշաբերիլ՝ զի սուրբ եկեղեցի չէ  
ընկեցեալ ի ծով զայն խառն զանգուած: Յայս ակն ե-  
ղեալ իմ, յօրինեցի զառաջինն զչորս հատոր զիրս, (ա-  
նուանեալ նշնապէս Վահան հաւասայ ուղղափառութեան)  
ի վանել և ի զտել զպղինս և զկապարս: Հայեցեալ և  
յուսկին՝ կանգնեցի ընդդէմ նետաձիդ եղելոց զՎահանն:  
Բայց քանզի ուրուական իմն էր այն, ոչ երբէք հանի  
ի վեր, և սակայն պատրաստեալ էի ուղղազրել և կա-  
տարելադրծել զնոյն զի թէ երբէք պիհաց ինչ լինիցի,  
առաջի ընծայեցի սրբոյ գահին, իբր բողօք ի բերանոյ  
եկեղեցւոյն հայոց՝ ըստ որում է եկեղեցի. և մինչ ես յայս  
խորհուրդո էի, գողք հանին ի վեր և սկսան անձրեւել  
նետո՝ ոչ յիմ վերայ, այլ ի վերայ հասարակութեան մե-  
րոյ: Զի՞ կայ ձեր, ով Դուք և հասարակութեան մերոյ,  
յիս ձգեսջիք զնետս ձեր. կամ ես ահաւասիկ առաջի ձեր.  
միւսոցին նետք ձեր յաչս իմ և ոչ յաչս այլոց. Ներդ

աղբայրց եղեն վէլոք նոցա և այլն... Եթէ սուրբ ժողովն  
յիմ կոյս է, ով իցէ իմ հակառակ. Եթէ յիմ կոյս ևս  
իցէ, ոչ երկնչիմ, զի ես նորա եմ որդի, նա իմ մայր և  
իմ պաշտպան եթէ կամիցի. և թէ ոչ շատ է ինձ այս՝  
զի նա ի մայրենի իրաւանց իմ տէր է, յորմէ ոչ զա-  
գարեմ խնդրել ոչ թշնամեացս վոէժ, այլ զատաստան  
արդար մինչև հանցէ վերտունս ի լոյս ի հաւասարել զկշիռ  
ճշմարտութեանն: Ավասոս քեզ, հայր Միքայէլ. զի ի ծե-  
րութեանդ հասակի, պաշարեցար յորոց պաշարեցարն.  
պաշարեցայ այս, բայց վատահ կամ ի պաշարմանն. պատ-  
մեցից ձեղ ինչ մի հարեանցի. յաւուրս Թերեզեայ թա-  
գուհւոյն, եկն վեսպան ի Պէշ քաղաք յօսմանցեանց: Ի  
նստիլ տասնապետի միոյ ի պանտոկի, եկին անդ և ուսանք  
յօսմանցեանց անախ յմպել (յըմպել) նոցա և յարբենալ  
ի պանտոկի անդ. մինն յօսմանցեանց քար տրձակեաց  
յանուն թափուհւոյն. բողզք կալաւ տասնապետն առ զեւ-  
պանն և առ սպարտապետն իւր, և ել հրաման մենամար-  
տել նոցա տո. ի մահ: Նկատեալ յայն ժամ ծերոյն՝ ել  
ընդդէմ և կործանեաց զախոյեանն: Ահաւասիկ և ես  
պատրաստեալ եմ նահատակիլ ով ոսոխն իմ՝ ելցէ ընդ-  
դէմ: Բայց քանզի ի սպառ ակարացեալ եմ առաւել քան-  
զոր կարծէքն և անկեալ ի յիշողութենէ, և օրէ յօր  
նուազիմ ստիպիմ զձեղ կանգնել. և կանգնեմ իսկ այսօր  
իմ փոխանակ զՄկրտիչ հայրդ և զհայր իգնատիսադ.  
խօսեսջեք զՃշմարտութիւն և մի՛ երկնջեք ի թշնամեաց  
իմոց, ես ևս եթէ մարթացայց, յուսամ թէ ժամանեցից  
և զձեղ անվաստակս կացուցից, անզգամութեամբ՝ տսեմ  
շատ են ոսկերք իմ առ շաղփազի բանս Աստուածակար-  
ծելոյն: Խոկենդեր պէյ յետ բազում տշխատ առնելց  
օսմանեանս հիւանդացաւ լուեալ յօսմանցեանց զհիւան-  
դութիւն նորա. աւասիկ օր տաելով՝ արձակեցին ընդդէմ  
նորա արո 7000. զայն աւեսեալ իսկենդերայ՝ նստաւ ի

պատգարակ և ել ընդդեմ նոցա. իբրև լուան նոքա, թէ Խսկենդեր ինքնին զայ պատգարաւ, ի փախուսա փութացան և ցիրուցան մաշեցան: Դամ և ես պատգարաւ, ծերութեանս մի՛ ինչ զարհուրիք, վասահ եմ, թէ զարհուրեցուցից և վանեցից ղթշնամիս իմ, եթէ արգարութիւն չիցէ մեռեալ, զործեցից գործ մեծ ի զառամութեանս իմում:

Իսկ թէ արգարութիւն կենդանի զոլով՝ ոչ կամիցի առնել զոր արժանն է, բազուկն արդարութեան՝ ժողովուրդ Աստուծոյ չմն խորստակեալ: Դիտասջիք՝ զի ազգն համօրէն յոտին է, ոչ կարդաւորք միայն, այլ և հայ բազմութիւնք, սկսեալ ի ծագաց աշխարհի ոչ զառնութեամբ սրտի, որպէս ոսոյնն նշմարի, այլ պահանջմամբ արգարութեան, բաղոքելով առ ամենայն աէրութիւնս, և ոչ իսկ գաղարէ, մինչեւ ոչ աեսցէ զիրաւունսն, ոչ լու, որպէս կարծի, այլ՝ գոտեսորեալ զինուորի, ոչ ասելով ըստ թշնամեաց. «ոչ կերիցուք և ոչ արբցուք մինչեւ ջըն-ջեսցուք պարագայեանս. այլ նէ ՞Ն ննջեայո՞ + մինչեւ ոչ տեսցուք զիրազազութիւն սրբոյ եկեղեցւոյն, և զառաջին վիճակ յանդորրութեան Մխիթարեանց միաբանութեան սրբոյ Ղաղարու: Մի կարծէք, թէ ջախջախ բանիք ու մանց, յառաքելոյն սրբոյ անմիտ անուանելոյ խափանեալ դադարեսցէ զործարան ապազրութեան հարիւր ամեոց ժամանեակաց և այն՝ առանց քննութեան: Եկեղեցին Քրիստոսի յայսպիսի բերես ոչ սագարթ: Բայց այդ՝ յինչ իրաւունս հաստատեալ թշնամեաց ի այն եղեն միջամուխս, վասն զի՝ ասեն ապազրեալ զրեան նոցա՝ լի են մոլորութեամբ, յոր զիրս ասեն արգեօք, աւասիկ ասեն զիրքն խորհուրդ Աստուածպաշտութեան: Այս զիրք ի 40-ամաց հետեւ ապազրեալ է, զայսպան ամս ընթերցան և քննեցին թշնամիք, և ինչ ոչ զայն, և այժմ զտանեն: Եւ զինչ արգեօք այն իցէ, այն իցէ մախանիք, առ ասիկ ասեն

և գիրքն, որ ի մեկնութիւն հաւատամքին։ Այս այն զիրք  
է, զօր ի ժողովը երեք ամօք յառաջ՝ առաջին  
նորին իսկ չարախօք, թէ բովանդակեալ կայ ի նմա  
ճշմարիտ դաւանութիւնք հաւատոյ, և այժմ զի՞արդ մո-  
լորամիտ գտաւ։ Պատմազիրք Հայոց՝ իբր 30 ամօք ի լոյս  
ընծայեցաւ և ի հոօմ ևս հանդիսացաւ. և զի՞ պատա-  
հեաց նմա, զի՞ այժմ ընթերցմամբ տղիտաց մոլորական  
ցուցաւ։ Իման ընդ սմին և զայլ զրեանց, իման և մի զար-  
մանար այլ՝ զարմացիր և ակներե տեսչի՞ր, զի՞ անհնարին  
նախանձ և ատելութիւն է, որ զայսպիսիս Ճարտարաւոր  
է և զգայուէ։ Իրաւունս ունին և սոքա ի մախալ քանզի  
ի ճոխարանել իւրեանց, և յընդ վայր հարկանել զմեզ,  
ժողովուրդք ընդդէմ ելեալ, և զուլից նոցա կալեալ՝ զկծե-  
ցուցանեն, ասելով, այսչափ ամք են, զի՞ արբայեանքն ըդ-  
գիրս նորանորս հանեն և զազգն լուսաւորեն. զուք զի՞ զոր-  
ծէք զատարք և փասփուաք վայրավախն շրջեր ի խաղս  
և ի զբոսանս, ցնդիք ընդ կանայս և ընդ աղջկունս կա-  
տակիք և այլն։

Այսմ յանդիմանութեան ոչ կարելով տանել, պու-  
նէ, ասեն, ջնջեսցին ապա սոքա և զիրք սոցա, զի՞ հան-  
գիցուք։ Զի՞նչ ապա ժողովուրդք. ընդդէր ասեն և զուք ոչ  
աշխատիք յօրինել զգիրս։ Զկարեմք ասեն. ընդդէր ապա  
ոչ ներէք կարողաց, զի՞ խոչնդակն են մեզ նոքա. Յտանն  
Վարչարհեյ անուանեալ՝ ի Թրանսիլ-վանիա. մինն ի  
յունաց շինեաց տուն մի փառաւոր. ընդդէմ սորա կանդ-  
նեաց և այլ ոմն ապարան մի, ընդ այս չկարացեալ տա-  
նել առն՝ բազում ինչ արար և ծախեաց, զի՞ բարձցէ  
զայն, գո՞նէ ըստ կիսցն, ընդդէր, զի՞ կուրացաւ տունն իւր։  
Զի՞ կուրացար, ով զու, բարձրացն և զու զառն քո, զի՞  
թոյլ տուեալ է յարքայէ։ Յոչ կարելն նորա զայս առ-  
նել, յանդիմանակացն յաւել յարկ մի ևս և խեղիքաց,  
ահա այսպիսի ինչ է յառաջիկայդ։ Աւելի ինչ խօսիլ

ի վերայ սորա, ի զուր է. քանզի յայտնի տեսանի, զի ի  
նախանձուէ չըրէ յուզին այսպիսի իրք: Բայց թէ զի՞նորդ  
ոչ նշմարեն զայս նշմարողք, ինքեանց է զիտելի, նոքա  
լսել ախորժեն զոյսպիսիս, զբօսնուն ևս (զէֆքին է վար-  
մաք խոփրլէր) առնեն զոր հաճին՝ և խօսին ի հաճիլ գնան  
մեռի՛ր, եկու սիրեմ, հատանեն զզլուխ անսպարտ, և սանտ-  
րեն զմօրումն, «օ առեն զուք այսպէս և այնպէս, առեն  
բերանով և հեղձուցանեն զործով և զի մասիթարիմք»:  
Փառս տուր Աստուծոյ, զի որ քրիստովոր անուանեմ  
քրիստոնեայ եմ: Այլ առանձին զոհմնամ զԱստուծոյ, զի  
այսպիսի վարանս զարթոյց զողիս ուղղախորհուրդ քա-  
ղաքացեացս համօրէն՝ յառնել ոչ եթէ րնդղէմ թշնա-  
մեաց՝ այլ ի պաշտպանութիւն զրկելցոյ՝ մինչև զանձինս  
ևս զնել ի վերայ միաբանութեանս մերոյ. որոյ վասն  
բազում անգամ ժողով արարեալ, և գերկոտասան իշ-  
խանս կարգեալ ոստիկանս զրեցին միաբան ի չոօվմ, և  
զդիրն գարալաղիւ 600 զռուշ ծախելով առաքեցին ի  
Պուքրէշ առ ելքէնձեանսն, զի անձամբ աարցեն ի չոօվմ,  
և փաստաբանեալ արասցեն, զոր կարեն: Դարձեալ առա-  
քեցին և զայլ զիր զէպուղիզ ի չոօմ, և կրկին ևս ա-  
ռաքեցին և ունին առաքել: Այս ամենայն եղեւ բայց բնդ.  
վայր, զի կամ ի գերեւ ելանէ, բազում ժամնատկաց  
տինկալեալ է ի սովորութեան տեղույզ, որպէս ցուցանեն  
զործք, որ զործեցան յտուած ժամնատկաւ: Ապաքէն Աբ-  
րահամ կաթուղիկոս կիբանանու, վասն դատի միոյ ժո-  
մու զերիս ամս պարաւանգեցաւ այդր, և հուսկ զինի  
առանց կոչման, ել բռնի յատեան դոյշա, և ի միջոյ կիսոյ  
ժամնում էառ զոր խնզրէրն<sup>1</sup> .  
ուսէաք ընդ քեզ եկիր յարեելս և վՃարեցեր զամենայն:

<sup>1</sup> Մի քանի տեղ ժեռագիրը մաշուած է և դօ՛ւար է կարդացվում:

ապա եթէ վըխաղեալ դայիր ասս՝ մինչ ի կատարած աշ-  
խարհի տեսէր այն։ Դոքա իրաւունս ունին սցովկէս վա-  
րելց, զի իմաստութեամբ դործեն, իսկ աղդ մեր մանա-  
ւանդ արևելեայք, մաօք զշրաւոր ոչ իրաւունս գիտեն և  
ոչ զիմաստութիւն ձանառչեն, զի չեն ուսեալ դոր ինչ  
ինքեանց հաջոյ տեսանեն և ականջաց խրեանց յարմա-  
րաւոր փարին զնովաւ, ապա թէ աղդ, մերժեն։

Յաւուր միում ի ժագովս Մանուչեանց, եհարց եղ-  
բայրն նորա Մաթոս աղայն, ի Վահանի տօէ, լսեմ օրպէս  
զրեալ է կարգ գարուց եկեղեցւոյն հայոց տնմոլորիջեալ  
և զիսրդգ լինիցի այս։ Ետու պատասխանի՝ այդ անհաս-  
կանալիէ, առէմիրաէն պիր լեպլեպի հեր զիշ չկյնէյմեզ։  
Յերկարել բանից ասեմ, եթէ կամիս, և կարես անսալ,  
լուր զի՞նչ ասես, աղայ՝ զօր վկայէ սրբազան պապն Հռո-  
մայ՝ ընդունի՞ս, այս, ընդունելով ընդունիմ ասէ, և ես  
ասեմ ասես և լսեմ, և ընդունիս ոչ. ահաւասիկ երեքտա-  
սաներորդ Գրիգոր սրբազան պապ հրովարտակ եհան փասն  
հայոց՝ յորում վկայէ. «Աղդ հայոց՝ աղդ մեծ, աղդ հա-  
րազատ որդի սրբոյ եկեղեցւոյ» և այլն։ Սյո հրովարտակ  
ապադրեալ է ի Հռովմ, եթէ այս աղդ, մինչ յաւուրս  
սրբազան քահանայապետիզ գտաւ հարազատ և հաւա-  
տարիմ որդի սրբոյ եկեղեցւոյ ուրեմն անմոլար եջ յայն-  
ժամ, ապա թէ ոչ անհարազատ դատներ, գու զի՞ ասես,  
ոչ քննութիւն և ոչ հարցումն, այլ զի՞նչ. սրբազանն  
ասէ. այդպէս է ասացեալ նէ։ Ասեմ յնա, ոչ ասացի քեզ,  
թէ զոր ոչ ախորժեն. . . . . և ոչ ընդունի, ոչ  
յայս նիւթ միայն, այլ և յայլս։ Զե իմ աւարտեալ  
զխոսս, ասէ ցիս Մանուկ աղայն. վարդապետութիւն ձեր,  
յօրինեաց զիլք ընդպէմ հայոց, իսկ այս զիլք Վահան, է  
ջատազովութիւն հայոց, և որպէս լինիցի այս, «աղուն նէ  
քեհրիոլ և այլն, ետու պատասխանի, իմացիր և զայդ.  
դոր ասես, այս զիլք հայի ի ջատազովութիւն ձշմարտու-

թեան, եկեղեցւոյ հայոց ըստ որում է եկեղեցի, իսկ այն զիբք, հայի ի վանումն մելորեցուցչաց հայոց և այլն: Յա- շափ ինչ շատ լիցի առ այժմ, զի չիք կար զօրութեան ի ձեռին իմում: Բայց սակայն՝ ինձ մնայ բողոքիլ յա- տեանն Քրիստոսի. զի յիտ վաստակելոյ զամն բազումն ի պատիւ եկեղեցւոյ, ի ձեռն դոզոյ գատապարաեցոյ ի ծե- րութեան իմում և ի ստապատիր ամրաստանչաց կեզա- անուն ընկալեալ. հանկերձիմ աւասիկ մաշիլ ի գերեզ- ման, դատ արասցէ տէր ըստ արդարութեան իմում: Բայց ախն ունիմ թէ նա ինքն սուրբ եկեղեցին առանց ինչ տեսանելոյ զարուպս, արդարացուցէ զիս. քանդի ի նա ապաւինեցայ, իսկ զոր զրեալ էիք վասն Վահանին, թէ ի նմա նշմարեցի ընթացք ալեղերթացիօնին, ծանիք, զի այդ մոտածութիւն չունի յայս զործ. զի զիտումն աիե- զերթացօնին՝ է յուցանել թէ մարթ է ուզզափառաց հա- զորզութիւն առնել ընդ հերձուածողաց ի հոգեորս, այդ կարծիք մերժիլ է յինէն: Իսկ զիտումն Վահանին է յուցանել՝ թէ եկեղեցի հայոց, իբրև եկեղեցի, ընդունի զամենայն Ճշմարտութիւն հաւտառոյ. եթէ ունիս օրինակ թղթոյն առաջնոյ զրելոյ յինէն առ սրբազան ժողովն, ընթերցի՛ր, զի յայն թուղթ բովանդակի Վահանն:

Դնեմ ի զիրս թուղթ մի համառօտ և այլն:

(Որոյ օրինակն է)


Առ սրբազան հայրդ՝ երկու զիրս զրեցի առ սրբա- զան ժողովն, իբր բողոք, զայս զրեմ առ սրբութիւնդ, իբր աղերս՝ լուեալ էք և լսէք զվիճակ ուզզափառաց քաղաքիս, բաժանումն անզօդելի. դայթակզութիւն անտ- սելի, բամբասամկը սոսկալի, անուն քահանայութեան ընդ ոտիւք աշխարհականաց հեծէ, պատճառ գագարման ա- ռաքելութեան միրոյ և տպադրութեան:

Եյս հուր՝ օր յօրէ բորբոքեալ տոչորէ, և ոչ ունի  
շիջանել հնարիւք առանձին մարդոյ: Հայր սուրբ՝ ձեռն  
սրբութեանդ կարող է բարեկարգել. իբր այն՝ որ զլուխ  
եկեղեցւոյն Քրիստոսի: Ապա թէ ոչ կատարածն հայի ի  
յատակս դժոխոց:

Եյս, հայր սուրբ, ձեռն սրբութեանդ, որոյ հայրա-  
դութ տեսչութեան կամ յամենայնի

Հնազանդ ծառայ հայր

ՄԻՔԱՅԻԼ ԶԱՄՉԵԱՆ.



ԱՐՆԵՑԻ ՄՈՒՐԱՑԿԱՌՈՒՀՈՒՆ.

Վատաքաղդ գու կին, ի՞նչ ես թափառում,  
Ի՞նչ ես փնտոռում գու մեր հիւսիսում.  
Թողած երկինքը կապցյա հարաւի,  
Բաղդ ես երազում աշխարհում ցրտի:  
Վանայ պաշտելի առաս դաշտերից,  
Արքաի սրբազն ջինջ հովեաներից  
Հեռու ես փախչում հազար մղոններ...  
Օտարի մէջ ես վնտոռում մեծ յոյսերի  
Որքան սովատանիջ, արեառ գէմքդ,  
Ցնցոտով պատաճ՝ կորացած մէջքդ  
Կարեկցի սրտում վառում են տանջանք,  
Նոյնքան յուզում ես իմ մէջ վրդովանք:—  
Միթէ կարող եմ վշտակից լինել  
Ես այն հայ մօրը, նոլան կարեկցել,  
Որ շըլացած բուռն երկիւղից,  
Դողում է ուժգին օսմանցու սրից.  
Սուանց բողոքի՝ այդ գաղաններին  
Ծախում է իր թարմ, կոյս աղջիկներին.

Թողնում է, որ իւր մատղաշ հարսները  
 Լցուին վեխ թուրքի բիւր հարեմները:  
 Անսիրտ՝ ժեռ քարի սառնասրտութեամբ,  
 Սարկին յատուկ անմիտ լոռութեամբ,  
 Թողնում է պղծել պատիւն ընտանի—  
 Քանզել, աւերել վաթան հայրենի:  
 Մեռցնում է իւր մէջ ամեն զգացմունք—  
 Եւ սրտի ձայնը, աղատ համազմունք.  
 Պատրաստ է քծնել, շցել րիրդ թուրքին:  
 Դէթ նա վերջ չտայ իւր անարդ կիանքին:  
 Եւ այնուհետեւ մի ցուպ էլ ձեռին,  
 Գլխակոր, տրաում, արցունք աչերին,  
 Սարկի անուն ճակտոտին զրոշմած,  
 Մի վախկոտ սիրտ էլ սրտումը սեղմած,  
 Ունասակ անում իւր հողն ու ջուրը,  
 Հեռոն... թափառում օտարի դուռը...  
 Եւ բաւ է համարում մէյդանի միջն  
 կանգնել յուսահատ, ասել ամբոխին.—

«Օգնեցէք, Խայեր, թիւրք զմէն թալլեց,  
 «Տիւն, տեղ, օջտինիս զմէն աւերեց,  
 «Վարդի պէս աղջեկս ես քիւրզը տարուց,  
 «Աղւոր լաճերուս ան շունը փախցուց»:

\* \* \*

Սակայն՝ մինչև երբ, ով վանեցի կին,  
 Պիտ ասղաւինես քո թոյլ արցունքին:  
 Բաւական, ինչոր ձորտեր ծնեցիր,  
 Դիւցաղանց ծոցում թոյլեր աճեցրիր.  
 Հասել է ժամը, խոր քնից զարթի՛ր,  
 Քո թոյլ ոյժելով զէմ կենալ վարժուի՛ր.

Սուրբ իրաւունքիդ՝ անձդ մի՛ խնայիր.  
 Քանց ստրուկ ապրել՝ ազառ, վեհ մեռիր:  
 Իմացած եղի՛ր, քո թափած արիւն  
 Արագ սիրտ կտայ քո զաւակներուն,  
 Եւ այն ժամանակ կդան օդնութիւն—  
 Երկունքով ծնել քո աղասութիւն . . .

Դ. ՔԱՅ. ՄԿՐ. . .

1888 թ. յուլիսի 2.

Կ. ԳԵՂՄ.



## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ

Թ Ա Ր Մ Շ Ի Ր Մ Ի Ա Ռ Ա Զ Ի

«Արսո՞ր ու շղթա՞յ, ստրկի հնձնծա՞նք,  
Ժացո՞ղ շինական, հրձուո՞ղ վաշխառու—  
«Ահա չարիքներ, որոնց լծի տակ  
«Դատապարտուած էր նա միշտ տանջուելու...»

(Ելլեսոս)

Նա տանջուե՞ց... Մինչ կեանքի վերջին բոպէն տանջուեց այդ «չարիքների լծի տակ»—և իջտւ զերեղման... Այլ ևս չկայ Գամառ-Քաթիպան... . . .

Տառապեալ հայի անրաւ վշտերին մի՛ վիշտ ևս աւելացաւ—մի ծանր, անպատմելի վիշտ, որ գեռ երկար, երկար պիտի մաշէ խեղճ հայի ցաւազար կուրծքը, գեռ շատ ու շատ ազի արտասուք պիտի քամէ նորա աչքերից...

Եւ ի՞նչպէս արագ, ի՞նչպէս անակնկալ հասաւ մեղ այդ վեշտը... Ո՞վ էր սպասում մի՛շտ աշխայժ, մի՛շտ եռանդուս Գամառ-Քաթիպայի մահը: Ո՞ր հայի մօքով կ'անցնէր, որ իւր ազգի սիրով բորբոքուած, անվերջ երդող ու անվերջ ողեարուող երդիչը յանկարծ կըլոէ, — և կըլոէ յաւիտեան... . . .

ի՞նչ անենք, թէ կեանքի փոթորիկը, կեանքի զբու-  
կանքները ծերութեան ալիքով զարդարել կին նորա զլուխը:  
Նա քաջ և աներկիւղ զինուոր էր կեանքի կռվում. ան-  
վհատ լողորդ էր կեանքի փոթորկում. նորա մէջ ուժգին  
տրոփում էր հայրենասէր սիրար. նորա կուրծքը յուղվում  
էր անվերջ ըղձերով ու խորհուրդներով... Հիւանդ, ցա-  
ւատանջ բանաստեղծը չնայելով որ մարմնով յողնած,  
մարմնով թուլացած՝ անզօր հեծում էր մահծում, սա-  
կայն «հոգով դեռ արի» և միայն «զլիսով ալեռը»—նա  
չէր դադարում քաղցր յշակրով ու սոկեշող ցնորքնե-  
րով ապրելու... Նա հաւատում էր իւր ցժերին: Նա ա-  
պագայի փառաւոր ծրագրներ էր կաղմում... .

Անհուն, յուսալից ծով էր բանաստեղծի սիր-  
ուը . . .

Բայց աւաղ դառն իրականութիւն. . .

Այդ սիրտը էլ չի բարախում. . .

Սյսօր հայկական մանուկ, թոթովախօս դրականու-  
թիւնը զրկվում է իւր մեծավաստակ, քաջոյժ և հսկայ  
մշակից. այսօր հայկական Պաւանասի մուսաներն արտա-  
սուքն աչքերին՝ հողին են յանձնում իրենց սիրեցեալ, մեծ-  
անուն որդեզրին. հայ պատանին բաժանվում է իւր ա-  
զատախօս, հայրենասիրութեան մեծ վարժապետից. հայ  
ծերուկը իւր ոգեսրութեան անսպառ աղքիւրից. վշտա-  
տանջ հայ կինը վերջին հրամեշտի համբոյր է զր շմում իւր  
սրտացաւ, աննման եղքօր ճակատին. «Չինքը արևառ դարիք  
Մշեցին» էլ չի լսում «մայդանում» քաշած իւր ծանր հա-  
ռաչանքի արձագանքը, էլ չի լսում իւր զարիբութեան,  
իւր գարդերի սրտամորմոք երգչի ձայնը. հայ զիւղացին  
կորցնում է իւր իրաւունքների հզօր պաշտպանին, կոր-  
ցնում է իւր արդար քրտինքն օրհնողին, իւր խոփն ու  
գութանը փառաբանողին... Սյո՛, այսօր բովանդակ հայ  
ժողովուրդն արիւն-արտասուքով համակուած՝ սգում ու

ողբում է իւր մեծ զաւակի անդարձ կորուստը, իւր գրդուած ու փայփայած երգչի մահը... .

Եւ մի՞թէ այնքան շատ էր հայի ուրախութիւնը, որ երկինքն այդպէս անողորմ, այդպէս անխնայ խոյեց ազգիս սիրտը՝ խլելով նորանից նորա ազեղ Գամառ-Քաթիպային: Մի՞թէ, հարցնում եմ, այնքան փառաւո՞ր, այնքան ուրախալի՛ էր հայի ժամանակակից կեանքի պատմութիւնը, որ բախտը, հայի սև բախտն այսօր մի տխուր էջ ևս աւելացրեց այդ աղետալի պատմութեանը... .

Բայց ո՞վ կարող է խախտել բնութեան օրէնքը...

Մահը տարաւ Ռափայէլ Պատկանեանին... .

Դարերով դժբախտ, գարերով լերդախոց հայերս կորցրինք մեր զարեօր զատի անձնուեր պաշտպանին,— և կորցրինք Երլ:— Այժմ, այնպիսի մի ծգնաժամում, երբ դեռ այնքան կարօտում, այնքան փափագում էինք նորա հրաշունչ երգիրին. կորցրինք, երբ բանասաեղծը դեռ անձնատուր եղած իւր սուրբ ցնորքներին, ոգեսրուած ապագայի յուսով և ջերմ հաւատալով այդ փրկաւէտ ապագայի յաղթանակին՝ մարգարէտական շրթունքներով բացականչում էր.

«Թուխպը թող պատէ երկինքը պայծառ,  
Թանձը մառախուղ երկիր թող փակէ,  
Տարերք աշխարհիս խառնուին իրար,  
Ցուտով եմ, վաղ-ուշ, արև պիտ ծագէ... .

Եւ ահա այսօր, երբ հայը սրաատրով սպասում է այդ արևածագին, — այս խորհրդաւոր ժամին նա զագաղ է դնում իւր մարդարէ-երգչին: Երգիչը չէ արժանանում աչքով տեսնելու իւր փափագած մեծ զործի սպակը. իսկ ազգը միայն մի քանի քայլ հեռու Աւետեաց երկրից՝ ճամբին կորցնում է իւր քաղաքարթուն ու հեռաղէտ Մովսէսին... .

Տիուր և սրտաճմինի է այդ պատկերը. . .

Բայց մի՞թէ զորանով վերջ է զրվում մեր բոլո՞ր ձգտումներին ու խորհուրդներին: Մի՞թէ դա էր մեր ըղձալի, մեր յուսառատ կեանքի վախճանական պատկերը:

Ո՞չ. . .

Թո՞ղ մահը փակէ ազատախօս երդչի շրթունքները. թո՞ղ հայ աշխարհի սիրահար սոխակն այսօր խուլ մնայ վշտահար աղդի իրան ուղղած աղեկառւր մրմունջին.

Սոխակ, բնչու դադրեցար քո անուշ երդն երգելից,

Որ քամում էր արտասունք շատ իմ երգած աչերից. . .

Թո՞ղ ծանր քարը Ճնշէ այն կուրծքը, որ օր ու գիշեր տառապում էր ազգի ցաւերով ու վշտերով. բայց այն երդը, այն հզօր երդը, որ դուրս է բղիսել այդ կրծքից, այն երդը, որ կես դարից աւելի յուղել է հայի սիրան ու հոգին, այդ երդը չե' մեռել և երբէք էլ չի մեռնիլ: Ո՞չ ժամանակի աւերիչ ժանիքը, ոչ մահն ու կորուսը, ոչ մի աշեղ ցժ, ոչ մի պատուհաս երբէք չեն կարող այդ երդը ջնջել հայի մաքից ու սրտից:

Դարեր կրտան, դարեր կ'անցնեն. մէկ սերունդին կը յաջորդէ միւսը, երկրորդին՝ երրորդը, — սակայն ազգային սպաշտելի բանասառեղծի կենդանի երդը, որպէս հայրենասիրութեան մի մեծ դաս, հանապազ կ'աւանդուի սերունդից սերունդ: Այսօր հայրն է երգում այդ երդը, որպէս մի յուսավառ ոգեորութիւն, որպէս մի տենչալի կեանքի դրաւական. վաղը նորան զաւակը կ'երդէ, որպէս մի քաջ յաղթանակ, որպէս իրագործուած յօյսերի մի փառաւոր պատկ. . .

Համբոյր սուրբ շիրմիդ, ովլ խնկելի հայրենասէր...

Համբոյր այն զրչին, որ անմահ երդ է պարզեել հային:

Համբոյր այն քննարին, որ հայրենասիրութեան յա-

ւէրժ տաճար է կանգնել ազգիս օրտում.—և քանի այդ  
սիրտը բարախում է, քո անունը խնկով ու բուրվառով  
կը յիշուի այդ նուիրական տաճարում. . .

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ.

Տ սեպտեմբերի 1892 թ.  
Մոսկով.



# ԼԵՀԱՍՏԱՆԻ

ԵՒ

ԱՐԵՒՄՏԵԱՆ-ՀԱՐԱԿԱՑԻՆ ՌՈՒՄԻԱՑԻ ՀԱՅԵՐԸ.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Կորերումն՝ Մոսկուսոյի Կայսերական Համալսարանի  
պրօֆ. իւան Ա. Լիննիչնիկօ, որ մասնաղէտ է Լեհաստանի  
և Արևմտեան-Հարաւային Ռումիայի պատմութեան, լցո  
ընծայեց մի ուսումնական քննութիւն այս վերնագրով.  
„Черты изъ исторіи сословій въ Юго-Западной  
(Галицкой) Руси XIV—XV в.“ Изслѣдованіе Ив.  
А. Линниченко. Москва 1894 г. Իւր այս աշխատ-  
առութեան տասնեւրիու էջերը 219-ից մինչև 230-ը ուսու-  
զիանականը ամբողջովին նուիլում է Հայերին։ Լեհաս-  
տանի Հայոց մասին մեր գրականութիւնը ունի արդէն մի  
պատկառելի երկասիլութիւն «Բռնի Միութիւն Հայոց  
Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», որ ուղեղ տասն  
տարի գործնից առաջ ար. Կ. Եղեանցը հրատարակեց Ա.  
Պետերոս բգում իւր գեղեցիկ յառաջարանով հանգերձ։  
Այս գրուածքում առաջին աեղն գրաւում է 'ի հարկէ  
իլլուզի և Կամենեց-Պաղուղի Հայերի կոժւը գտա աճան Հայ

եպիսկոպոս ՆիկոԼ Թորոսովիչը դէմ: Եթէ այս վերջնիս  
ետևը կանգնած չլինէր կաթոլիկ կղերը (ևս և մարմնա-  
ւոր իշխանութիւնը), կոիւը թերեւս ուրիշ հետեւանք  
ունենար:

«Բռնի Միութիւն» զբքում այնքան էլ պարզ չէ ո-  
րոշւում մարմնաւոր իշխանութեան մասնակցութիւնը այս  
գործում: Կամիմ ասել, թէ Հայերի հասարակական դիրքը  
և իրաւաբանական նշանակութիւնը<sup>1</sup> փոքր ինչ զանցա-  
ռութեան է տրուած. այն ինչ պլոօֆ. Լիննիչենկօ յա-  
տուկ այս վերջին տեսակէտիցն է ուսումնասիրում հլվովի  
Հայոց համայնքի զրութիւնը: Մուս գիտնականը մի առ-  
մի յիշում է իւր աղքիւրները, որոնց մի քանիսը յայտնի  
են «Բռնի Միութեան» յառաջաբանից, բայց կոն նաև  
շատ աղքիւրներ, որոնց մենք առաջին անգամն ենք հան-  
դիպում պ. Լիննիչենկօյի զբքում: Ահա այս առաւելու-  
թիւնների պատճառով մենք ձեռնամուխ եղանք թարգ-  
մաննելու ողյն երկասիրութիւնից Հայերին նույիրուած հատ-  
ուածը, որի վերջին տողերը մենք լրացրինք նոյն պ. Լին-  
նիչենկօյի զեկուցումից, որ նա փետրուարի 15-ին, ներկայ  
1894 թ. կարգաց պօլիտեխնիքական թանգարանում:

Մուս գիտնականը մեծաւ յօժարութեամբ մեղ իրա-  
ւունք տուաւ Հայերէն թարգմաննելու իւր համառօտ քըն-  
նութիւնը Հայերի մասին:



<sup>1</sup> Մի բանի դար շարունակ հլվովի Հայոց համայնքը արիու-  
թեամբ պաշտպանում էր իւր իրաւունքները հլվովի մեծաւորի («տա-  
քարուս»), վոյթի և մագիստրատի դէմ, որոնք անկասկած օգնութեան  
ձեռն կարկառեցին կաթոլիկ կղերին և Նիկոլ Թորոսովիչին ընդդէմ  
Հայոց:

Ահա սրբոֆ. ի. Կիննիչենկօյի զբքից քաղուած հաս-  
ուածի հայերէն թարգմանութիւնը:

Հարաւային Ռուսիայի քաղաքների միջին շրջանի պատմու-  
թեան մէջ Հայերին շատ նշանաւոր տեղ է պատկանում: Առանց  
որևէ չափազանցութեան կարելի է հաստատել, որ Հարաւային  
Ռուսիայի ամենաշուշանակուած առևտրական կենտրոնները, ինչպիսի  
են՝ Խլովով, Լուցիկը, Կամենեց-Պոդոլսկը իրանց հարստութեամբ,  
փարթամութեամբ և նշանակութեամբ մեծաւ մասամբ պարուական  
են առանձնապէս Հայերին, Այս ճարպիկ, աշխայժ և ընդունակ  
ամենայն ձեռնարկութեանց ժողովրդի շնորհիւն էր յատկապէս,  
որ Հարաւային Ռուսաց առևտրական կենտրոնները միջնորդ դար-  
ձան Արևելքի և Արևելուտքի վաճառականութեան մէջ: Մանօժ  
լինելով կեանքի պայմաններին Արևելքում, տեղեակ արևելեան  
լեզուներին, քաջ ճանաչելով հաղորդակցութեան ճանապարհ-  
ները Արևելքում, օժտուած անձնական քաջութեամբ և զէնք  
շարժելու վարժ, անհրաժեշտ յատկութիւններ վտանգաւոր ու-  
ղեգնացութիւններ կատարելու Արևելքում աւաղակաբարոյ ցե-  
ղերի ընդարձակ երկիրների միջով, Հայերը շատ հին ժամանակ-  
ներից ձեռնամուխ եղան ցամաքային առևտրին Արևելուտքի և  
Արևելքի մէջ, իսկ իտալական գաղութների անկումից յետոյ  
Խրիմում, բոլոր վաճառականութիւնը նքա իրանց յաջողակ  
ձեռքը ձգեցին:

Ընդարձակ առևտրական գործալարութեամբ և ուրիշ զա-  
նազան շահասիրական, յաճախակի ոչ այնքան պատուաբեր մի-  
ջոցներով, Հայերը Ռուսիայում մեծ հարստութեան տէր դարձան  
և նոցա անձնական աղդեցութիւնը այլոց վերայ զօրացաւ: Սա-  
կայն, այնու ամենայնիւ Հայերին չյաջողեցաւ ընդհանուրի յար-  
գանքը շահելու և իրաւաբանական նշանակութիւն ձեռք բերելու  
մինչեւ անգամ այն իսկ կենտրոններում, որոնք, շնորհիւ նոցա  
ձեռներիցութեան և նախանձելի օրինակին, սկսան օրէցօր բար-  
գաւաճիլ առևտրական լայն ասպարիջում: Հասարակաց կարծիքը,  
Ճշմարիտ է, Հայերին մի աստիճանով բարձր էր գասում Հրեա-  
ներից, բայց յամենայն դէպս գերմանացիններից ստոր էր համարում:

Հայերի այս դրութիւնը մի կողմից կարելի է մեկնել նոցա  
կրօնական առանձնաւորութեամբ. թէ կաթոլիկները և թէ ուղ-  
ղափառները նոցա հաւասարօրէն համարում էին իրր աղանդա-  
ւորներ և անհաւատներ (infideles). Միւս կողմից դա եկաւոր

ժողովուրդ էր, հաստատուն իւր ինքնուրոյն արևելեան սովորութեանց մէջ, արևելեան ժողովուրդ. իսկ դէպի Սրեւելքը միշտ կասկածուութեամբ էին վերաբերում թէ Ռուսիան, թէ Լեհացիք և թէ Գերմանացիք. Իրանց արտաքին կերպարանքով, լեզուով ու սովորութիւններով՝ Հայերը կազմում էին միանգամայն առանձին մի խումբ, կենտրոնացած իրանց համայնքի մէջ, որ շատ տարբերվում էր տեղացիններից և արևմտեան գաղթականներից. Վերջապէս Հայերի անհատական բնաւորութիւնը և նոցա գործունէութեան քանի մի ոչ համակրելի յատկութիւնները (զօրինակ զօշաքաղութիւնը) և ըստ մեծի մասին 'ի Հարկէ և նախանձը եկաւոր օտարականների հարստութեան պատճառով, որ վնասում էր տեղական առևտրական դասի անձնական շահերին—այս ամենը միասին առած հարկադրում էր Հարաւային Ռուսաց քաղաքների բուրժուազիային առանձին խեթիւ նայել Հայերի վերայ:

Պրօֆ. Գրօմինցկին վկայում է, թէ Հայերը նշանաւոր գերչէին խաղում Ռուսիայում իրանց սակաւութեան պատճառաւ (էջ. 52): Հայոց սակաւաթիւ լինելն միայն պայմանաւոր էր: Քաղաքներում; ուր Հայերը յատկապէս բնակութիւն էին հաստատում: Հայ բնակիչների տոկոսը շատ նշանաւոր էր, որ երեսում է նորա 9—10 զլ. մէջ բերած փաստերից: Այսպէս Կամենեցում 900 չափ տներ Հայերին էին պատկանում և 1200 Հայ ընտանիք կար այնտեղ. 1407 թ. Իլվով քաղաքի պարիսապների սահմանում համարվում էր 63 Հայ ընտանիք, իսկ 534 ընտանիք միւս բնակիչներին էր՝ Գերմանացւոց, Ռուսաց, Լեհաց, Թաթարների. Zubrzycki, Kron. miasta Lwowa. Էջ. 68: Սեարչինսկին ասում է (Galicya, Dod. przy Gaz. Lwow 1857) թէ 1413 թ. 3000 Հայ ընտանիք եկան Մոլդաւիա, հաստատուեցան Սուչավայում և ուրիշ քաղաքներում. այնտեղց մի մասն գաղթեց Իլվով Սոլէքսանդր իշխանի ժառանգների միջում տեղի ունեցած կուների ժամանակ: Երբ ներքին խոռվութիւնները փոքր ինչ դադարեցան Մոլդաւիայում, այնտեղ Իլվովից դարձեալ ոչ սակաւ Հայեր գաղթեցին XV դարու կիսում (Kuczynski, l. c.):

Հայերը Ռուսիայում շատ վաղ երեցան, Թէպէտև մէնք վաւերական չենք կարող համարել այն հրովարտակը, որ իբր թէ Կիեվի մեծ իշխանը շնորհել է նոցա 1062 թուականին, բայց Հայերի ներկայութիւնը Ռուսիայում XI դարում անկասկածելի է: Բիշօֆի գրքում՝ Urkunden zur Geschichte der Armenier in

Lemberg, Wien 1864թ. և պլոֆ. Գրօմիկըն Օրմանիա վ  
Պօլսէ, իշ հիստորիա, պրավ և պրավիլիյա, Վարշավա 1889թ.  
մենք կարդում ենք՝ privilegium Theodori Demetrii Ducis Russiae ex Ruthenico idiomate in latinum transpositum in an.  
Dei 1062 Armenis datum, cujus ea sunt verba: Ecce Magni  
Ducis Theodori Demetrii filii Nosohacensibus Armenis, qui  
huc volunt venire, veniant in auxilium meum, et ego vobis  
dabo libertatem ad tres annos et cum fueritis apud me, ubi  
quis voluerit, illuc ibit libere. Զախարեասեվիչը, որ տեսել էր  
այդ հրովարտակի ուստերէն բնագիրը, վկայում է թէ՝ նորա վերայ  
թուական չկայ. նոյնը ասում է նաև Բելովսկին, նկատելով թէ  
բնագրում պակասում են պրանոմեն Zub (Theodor Zub), որոնք  
սակայն պատահում են քանի մի ցուցակներում և թէ՝ բնա-  
գրում կարելի է կարդալ—հօսօհառքում և հօսօհառքում Արմա-  
նամբ (գուցէ աւելի ճիշդ կը լինէր կարդալ— և ոլխաւում).  
Իսկ 1062 թուականը, մեղ թւում է, որ Զախարեասեվիչը յա-  
ջողութեամբ չայց թուականով է մեկնում, երբ (1062—1613)  
յիշեալ հրովարտակը թարգմանուեցաւ լատիներէն: 1062 թուա-  
կանը շատերին մոլորեցրեց—և հրովարտակը, դորա վերայ յեն-  
լով, վերագրեցին XI դարուն. բայց որովհետև 1062<sup>1</sup> թ. չկար  
մեծ իշխան Թէոդոր Դիմիտրիեվիչը, ուստի և բուն հրովարտակը

<sup>1</sup> Այս 1062 թ. մեզ լիշեցնում է երկու հատուածներ պ. Կ.  
Եղիանցի լոյս ընծայած Բոնի Միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկե-  
ղեցւոյն Հոլովայր գրքից. ահա այդ տեղերը. Սկիզբն գաղթականու-  
թեան Հայոց ի Ռուսաստան եղել յամին 1062, յորժած մեծի իշխանին  
Ռուսաց հգեալաւի եարուալաւովիչի լուեալ գրաջութենէ Հայոց կոչ-  
եաց զնոսա ՚ի Խրիմէ Խոստամքը ի Թեկունս իւր ընդդէմ Թշնամեաց  
իւրոց, ազգին Պոլովցոց (Էջ. ժդ.): Իսկ երկրորդ հատուածն այս է՝  
«Յամի Տեառն 1062 իշխանն Ռուսաց Թէոդորիս որդի Դեմետրի,  
որ վարէր պատերազմ ընդդէմ ապստամքելոց հպատակաց իւրոց՝ կոչ-  
եաց ՚ի Թաթարստանէ (իմա Խրիմից) զՀայս իւր ՚ի Թիկունս և ապա  
յորդորեաց զնոսա կալ մնալ անդ, տալով նոյա արտունութիւնս բա-  
զումս, զորս յետոյ գաւերացուցին և Թագաւորք Լեհաստանի, յետ տի-  
րելոյ նոյա Ռուսաստանի». Էջ. 11: Հակածառութիւնը մեծ է վերը  
բերուած տեղեկութեանց մէջ:

շինծու համարեցին. Թղյլ ենք տալիս մեզ անել հետեւալ են-  
թադրութիւնը—այս հրովարտակը արդեօք վորընի իշխան Թէո-  
դոր Լիւբարտովիչից չէ՝ (Լիւբարտի քրիստոնէական անունն է՝  
Դիմիտրի). Նա վախճանեցաւ 1413թ. Dlugosch ed. Przezdiecki  
l. XI. p. 455, Wolf, Röd. Gedymina p. 76; Վալդ սրբոյն Թէո-  
դոսիոսի Պեչերսկու գրքում կայ մի պատմութիւն սորա վիճա-  
բանութեանց առմիւ Կիեվի Հայերի հետ հաւատքի մասին. Կիե-  
վում յայտնի բան է Հայերը պարապում էին վաճառականու-  
թեամբ և արհեստներով:

Կիեվի անկումից յետոյ Հայերը գիմում են դէպի հարաւ-  
արևմտեան առևտրական կենտրոնները. XIII դարում մենք նոցա  
գտնում ենք Վլադիմիրում:

Իսկ երբ իլվով քաղաքի հոչակը, իբր առևտրական կենտ-  
րոնի, սկսում է տարածուիլ ամենուրեք, Հայերը զանազան կող-  
մերից գաղթում են այնտեղ և հաստատու բնակութեան տեղ  
են ընտրում: Բայի իլվովից շատ վաղ ժամանակներում մենք  
հանդիպում ենք Հայերին Լուցկ, Կամենեց-Պոդոլսկ, Գալիչ, Եա-  
րոսլաւ քաղաքներում և առհասարակ հարաւ-արևմտեան Ռու-  
սիայի փոքր ՚ի շատէ նշանաւոր առևտրական կենտրոններում:  
Գումիցիկին իւր գրքի 9—10 գլուխներում ամփոփել է այն բոլոր  
տեղեկութիւնները, որոնք վերաբերում են Հայոց Լեհաստանի  
սահմաններում տարածուելուն:

1432թ. Լուցկ քաղաքի Հայերին և Հրեաներին շնորհվում  
են նոյն արտօնութիւնները, որ վայելում էին իլվով բնակիչները  
(Inventarium privilegiorum etc 271):

Ամենայն տեղ, ուր միայն Հայերը ժողովվում էին մեծ բազ-  
մութեամբ, նոքա կազմում էին առանձին մի համայնք, որ վա-  
յելում էր ինքնուրոյն վարչութիւն, ունէր իւր վշթը, աւագնե-  
րի խորհրդարանը, իւր քահանաները. իսկ աւելի ընդարձակ կենտ-  
րոններում—իւր եպիսկոպոսները: Իլվովում մինչեւ անդամ կային  
երկու Հայ վշթեր, մինը քաղաքում, միուր դորա արուարձանում  
(Pomn. dz. Lwowa № 397. Բողդան, advocatus Armenorum,—  
1386. A. gr. XIV, p. 166 Իիշվում է advocatione Armenorum  
de suburbio). Consilium Armenorum A. gr. XIV, p. 141. Հայ  
եպիսկոպոսներ կային իլվովում XIV դարում, Լուցկում, Կամե-  
նեց-Պոդոլսկում, Եարոսլաւում (Գումիցիկի թ. 69—71):

Հայոց համայնքի ինքնավարութեան շրջանի ծաւալը միշտ

ու անդադար օբյեկտum litis էր կազմում հայերի և քաղաքացւոց մէջ: Առաջինները աշխատում էին ընդլայնել նորա զօրութիւնը, վերջնները կամենում էին հայերին ենթարկել քաղաքային իշխանութեան իրաւասութեան: Երրորդ կողմից, վերջապէս, և վյշերն էլ ճգնում էին իրանց գատաստանի իրաւասութեան տակն առնել ոչ միայն հայ համայնքը, այլ և բոլոր հայերին, որոնք ընդունուած էին քաղաքի համայնքի մէջ և ապա ուրեմն գերմանական իրաւունքն էին վայելում: Եւ դորա արգասիքն էին երեք կողմից էլ անվերջանալի գանդատներ, բողոքներ և գատավարութիւն:

Ամենից շատ տեղեկութիւններ յիշատակարանները պահպանել են մեզ համար նլվովի հայոց համայնքի վիճակի մասին: Համառօտենքը այստեղ այդ համայնքի պատմութիւնը, կանգ առնելով յատկապէս հայերի իրաւաբանական դրութեան ինդրի վերայ: Մեր խօսքը այն հայերի մասին է, որոնք չէին վայելում գերմանական իրաւունք:

Մենք տեղեկութիւն չունինք որ և իցէ առանձին հին հրովարտակների գոյութեան մասին, որոնք հաստատելիս լինէին հայերին նոցա իրաւանց մէջ (թէոդոր Դիմիտրիեվիչի հրովարտակների մասին վերը արդէն յիշեցինք): Կաղիմիրը, ինչպէս երևում է, հայերին չէ շնորհել առանձին զատ հրովարտակ, որ ճշտիւ որոշէր նոցա իրաւունքները և արտօնութիւնները: Իլվովին տուած հրովարտակը, որով գերմանական իրաւունք էր շնորհվում հայերին, որպէս և քաղաքիս միւս ազգութիւններին (Խուսաց, Հրէից և Սարակինոսներին), հաստատում էր առհասարակ միայն նոցա (հայոց) հին իրաւունքները. մի առանձին շնորհումն չկար դորա մէջ:

Նշնալէս անորոշ կերպով խօսում են հայոց իրաւունքների մասին կեհաց թագաւորների և միւս հնագոյն հրովարտակները, որոնք առհասարակ յենքում են Կաղմիրի հայերին շնորհած արտօնութիւնների վերայ<sup>1</sup>:

<sup>1</sup> Եթէ բանանք «Բոնի Միութիւն Հայոց Լեհաստանի» և այլն յառաջաբանի ժե էջը, մենք կըտեսնենք, որ այնտեղ էլ լոկ կողմնակի ակնարկներ միայն կան այս առթիւ և ոչ մի պատմական աղքիւր: «Ի՞րքը արքայն Լեհացւոց Մեծն Կաղիմիր միաւորեաց ընդ Լեհաստանի գգաւառն իլվովայ՝ ոչ միայն խաղաղացոյց զշայս աղղի-աղզի շնորհօք, այլ և դիետ եղի յամննայն զօրութենէ իւրմէ հրապուրել կոչել՝ ինո-

Բայց թէ XIV դարու երկրորդ կիսում հայերը ունեին իրանց յատուկ վշյթը, դա երևում է Եղիսարէ՛ժ թագուհու հայերին շնորհած հրովարտակից և իլվովի մագիստրատի XIV դարու մատեաններից:

Հայոց համայնքի ինքնագլուխ վարչութիւնը իլվովի քաղաքային համայնքի աչքին մի յարատե փուշ էր: Մի քանի դար շարունակ ձգձգվում է իլվովի մագիստրատի վէճը Հայերին իւր իրաւասութեան և նըմարկելու մասին: Քաղաքային համայնքը յամառութեամբ պնդում էր, թէ քաղաքի մէջ մէկ վշյթ պէտք է լինի և թէ նորա դատաստանին պիտի հնազանդուին անխոտիր բոլոր քաղաքացիքը օտար աղգութիւններից և դորա վերայ յեն-լով՝ պահանջում էր Հայոց վշյթի բարձումը<sup>1</sup>:

Այս ներհակ պահանջների առաջ թագաւորները շատ ան-յարմար դրութեան մէջ էին տեսնում իրանց. նոքա չէին ցան-կանում վշտացնել Հայերին, որոնք, նոցա յատուկ խոստովանու-թեամբ, ոչ սակաւ օգոտ էին բերում պետութեան (A quibus nobis comedam crescent non modica, A. gr. V, № 42). Իսկ միւս կողմից քաղաքային համայնքի նշանաւոր արդիւնքները թա-գաւորներին շատ ներողամիտ էին կացուցանում «Հաւատարիմ և սիրելի» (fideles et dilecti) քաղաքացւոց վերաբերութեամբ:

Իրու ի սահման պետութեան իւրու դժապ, որոց եռյլ ետ բնակիլ լի-վով, պարապել լարուեստ և 'ի վաճառականութիւն, ետ նոցա արտու-նութիւնս առնելոյ դատաստան օրինօք և սովորութեամբ իւրեանց ըստ մեծի մասին, և այլև ազատութիւն կրօնից, զի դաւանութեամբ և ծե-սիւք իւրեանց վարեսցին համարձակ: Սրտունութիւնքս ալտքիկ եղն վէմ անկեան, յորոյ վերայ հիմնեալ կառուցան յեսոյ ժամանակաւ իրա-ւունք ինքնազլուկս վարչութեան ժողովրդեանն Հալոց իլվովալ:

## Յ. Խ.

<sup>1</sup> «Քանզի գերմանացի ժողովուրդն իլվովայ, որոց էին արդէն սահմանադրութիւնը և օրէնք ինքնազլուին վարչութեան, անուանեալ օրէնք Մագղերուրդի՝ ջանալին զի և Հայք, համակ որպէս և այլ ժո-ղովուրդը իլվովայ՝ նովին օրինօք վարեսցին: Եւ, քանզի ոչ հաւանէին Հայք նուածիլ ընդ օրինօքն և դատիլ 'ի ծեռն վոյթի և դատաւորաց քաղաքին, այլ կամէին զառանձինն իւրեանց վոյթ և դատաւորս հալ-կաղունս... (Տես Բոնի Միութիւն, էջ ԺԷ):

## Յ. Խ.

Թագաւորութեան արդարադատութեան կշորքը միտում էր մերժայս, մերժ այն կողմը, երբեմն չէզօք դիրք էր բռնում և հաճոյակատարութեամբ աշխատում էր խաղաղացնել երկու կողմերն էլ:

Ո՞ւմ կողմն էր աւելի մեծ իրաւունքը.

Հայերի դրութիւնը իլվովք քաղաքային համայնքի մէջ արդարեւ այնքան էլ յարմար չէր—բացի հասարակ քաղաքային տուբքերի և մաքսերի հատուցումից, Հայերի վերայ ծանրանում էր նաև մի առանձին հարկ, որից ազատ չէին մինչև անգամ գերմանական իրաւունք ստացած Հայերը. Թագաւորը 1440 թ. հրամայում է. quod omnes et singuli Armeni, fide Armenorum viventes, quorum multi de jure suo Armenico se in jus Teutonicum transtulerunt, eoque pociantur et fruantur, ita scilicet quod dum et quociens ipsi Armeni per nos tanquam nostri subditi pro aliquibus dacionibus sive solucionibus requirentur, omnes unanimiter juxta uniuscuiusque exigenciam pro eisdem solucionibus aut dacionibus ipsis per nos impositis contribuant et componant... (A. gr. V, p. 99). 1436 թ. Թագաւորը խնդրում է իլվովք քաղաքը երեք հայի կուտիկից տալ գերմանական իրաւունք, բայց չէ ազատում մաքսից, որ վճարում էին Հայերը (Բիշօփ, № 7). Բայց միւս կողմից իլվովքի Հայերին՝ իւաշկին, Ստեցկին և Թովմանսին չնորչելով գերմանական իրաւունք, Թագաւորը ազատ է կացուցանում նոյն «ա quibusque thelonieis et foralibus Leopoliensibus, nobis per ceteros Armenios solvi et dari consuelis (A. gr. V, p. 182). 1563 թ. Հայերը գանգատում են Թագաւորին, որ իրանցից ունանք դուրս են գալիս հայկական իրաւունքի տակից, ենթարկուելով ուրիշ իրաւունքներին սimulque onera debita denegare consueverunt (Բիշօփ, № 35). Թագաւորը արգելում է Հայերին օտար իրաւունքի տակ անցնելն:

Դարձեալ՝ Հայոց սովորական իրաւունքը շատ տարբերվում էր Լեհաց և Գերմանացւոց իրաւունքի սահմանադրութիւններից. Սակայն, ինչպէս երեսում է, Հայերը կամենում էին դատուել իրանց օրէնքներով և իրանց դատաւորներից և այդ ոչ միայն միմեանց մէջ, այլ և օտարականների ոչ-Հայերի հետ էլ, հրաժարուելով պյուղիսի գէպքերում հնաղանդուիլ քաղաքի հասարակ դատաւորներին, Բնական է, որ քաղաքը պաշտպանում էր իւր իրա-

ւունքները. և երբ Հայերի և ուրիշ ազգութեան պատկանող բնակիչների մէջ վիճելի գործեր էին ծագում; աշխատում էր Ենթարկել նոցա քաղաքային վշյթի դատաստանին:

Իրվակին գերմանական իրաւունք չնորհելով՝ Կաղիմիք թագաւորը վաւերացրեց միենոյն ժամանակ օտար ազգութիւնների իրաւունքը, որոնք բնակվում էին Խլովում: այն է՝ Հայոց, Հրէից, Սարակինացւոց, Թաթարների և Ռուսաց, ընդ սմին թողլատրուած էր, որ այն դէսլքերում, երբ գործեր էին ծագում առանձին ազգութեան անդամների մէջ, կամ երբ մի ազգութեան անդամ դատ էր սկսելու մի ուրիշ ազգութեան անդամի դէմ, դատուիլ կամ ըստ գերմանական իրաւունքների և կամ իւր օրէնքներով, բայց ՚ի ներկայութեան և նախագահութեամբ քաղաքի վշյթի ես այսպէս եմ Հասկանում Հրովարտակի իմաստը. «dantes tamen facultatem eis ut pro quibuscumque causis vel criminibus inter ipsos aut inter eos vel alias (nationes?) quibuscumque super causis vel articulis emergentibus, habuerint questionem, licitum sit eis pridicti jure Madeburgense uti coram advocati et perfrui juxta eorum petitionem petitam et oblatam (A. gr. III. № 5).

Հաստատելով Հայերի իրաւունքները և արտօնութիւնները, Եղիսաբէթը յանձնում է նոցա աւագների հակողութեանը, մինչդեռ Կաղիմիքի Հրովարտակի զօրութեամբ Հայերը ստորագրվում էին քաղաքի վշյթին (Խառն դատաստան վշյթի նախագահութեամբ): A. gr. III. № 29... vobis nichilominus nostro fideli Baroni domino Janussio, Capitaneo terre sepius nominate, singulariter committimus, insimantes, quatinus superios dictos Armenos ab hominum quorum libet iniurys, molestys et perturbacionibus universis tueri et protegere sollicite debeatis et in eorum iure per vos et quemlibet vestrum nec non alios in terra Russie constitutos more pristino permittatis cum effectu. Հասարակօրէն Հաստատվում էն Հայերի արտօնութիւնների իրաւունքը, որ նորա վայելում էին Կաղիմիքի օրերում: Եղիսաբէթի Հրովարտակը վաւերացնում էն նոյնպէս և Լիւգովիկոսը և Եագելլօն (ib. № 21 և 45), Գրաւոր յիշատակարանների մէջ այդ Հակաճառութիւնը անախորժ հետևանք ունեցաւ Հայերի Համար. քաղաքից դուրս բնակուով Հայերը «Ռուսաց իրաւունք» ունէին և ստորագրուած էին բերդի իրաւասութեանը: Միայն

1415 թ. Հայերը, որոնք ապրում էին Սուրբ Յովհաննու եկեղեցու հողի վերայ extra muros civitatis Leopoliensis փոխվում են Ռուսաց իրաւունքից Հայոց իրաւունքի վերայ, որ Վայելում էին իլլովի Հայերը, ազատվում են բերդի աստիճանաւորների իրաւասութիւնից, ստանում են իրանց վշիթը, որ պատասխանատու է լինում միմիայն եկեղեցու կանոնիկոսի առաջև. վշիթը դատում է նոցա Հայոց օրէնքներով և նոյն օրէնքների զօրութեամբ ինքն էլ պատասխանում է կանոնիկոսի առաջ (Ա. ց. VI, № 32). Ուշադրութեան արժանին այն է, որ Հրովարտակի ձեւակերպութիւնը բառ առ բառ նմանում է գերմանական իրաւոնքի Հրովարտակի ձեւին:

Քաղաքի աւագները ձգտում են բոլոր Հայերին ստորագրել իրանց իշխանութեանը. Այս դէպքում արժանի է ուշադրութեան մի բնորոշ գործ, որ գրուած է իլլովի քաղաքային մատեաններում 1446 համարի տակ, իլլովի ստարօստա Պետրոս Ոգրօվանժս, պահանջում է, որ գերմանական իրաւունք վայելող բոլոր Հայերը Հնազանդուին բերդի գատաստանին և այդ բանը նա պահանջում է մահուան պատժի սպառնալիքներով. Սակայն Հայոց վշիթ Խրիստոն քաջութեամբ պաշտպանում է իւր ազգայնոց իրաւոնքները, նա չէ կամենում կոչել յականէ յանուանէ այն Հայերին, որոնք գերմանական իրաւունքի տակն էին. «Նս չեմ կարող հրամայել նոցա, քանի որ նոքա գտնվում են գերմանական իրաւունքի տակ և գատվում են ըստ այդ իրաւունքի»:

Այս գատավարութեանը, հաւանական է կարծել որ քաղաքն էլ մասնակցում էր, որ, ինչպէս վերը յիշեցինք, ձգնում էր իւր գատաստանի տակ ձգել այն Հայերին, որոնք գերմանական իրաւունքովն էին վարվում. Քաղաքի մասնակցութիւնը այս գործում երեսում է իլլովի մազիսարատի ստարօստայի միջև կայացած համաձայնութիւնից, որ տեղի է ունեցել 1460 թ. (տե՛ս Ա. ց. VI, № 41). Ստարօստան հրամարվում է Հայերին իւր իրաւասութեան ենթարկելու ձգտումներից, ինչպէս քաղաքի մէջ, այնպէս և նորա պարիսպներից դուրս ապրողներին, բայց իւր իրաւասութիւնը պահպանում է միայն այն Հայերի վերայ, որոնք չին ժամանակներից ապրում էին բերդի իշխանութեան ներքոյ. Սակայն իլլովի մազիսարատը չէր կամենում շատանալ այս յաղթութեամբ. Հայոց համայնքի ինքնուրոյն գյութիւնը, որ ունէր իւր յատուկ վշիթերը (մ.կը քաղաքում, միւսը դորա արուարձա-

նում<sup>1)</sup>), իւր աւագները, իւր իրաւոնքը, որ շատ սակաւ գէպքերում միայն ստորադրվում էր քաղաքային մագիստրատին, զուող իլվոլցի պատրիկների աչքի շիւղն էր, եւ աշա սկսվում են երկար դատեր մագիստրատի և հայերի մէջ նոցա փոխարինի իրաւաբանական յարաբերութիւնների առթիւ:

Հայ Աւագները կոչվում էին «Armeni scabini iurati» (A. gr. XV, p. 269), seniores consilii Armenorum (A. gr. XIV, p. 141). Մի Ճիշտակարանում (Pomn. dziejowe Lwowa № 492) կայ մի գէպք Խառն դատաստանի այս Հայերի մասին Sewoncz filio Meletschy և Tholak filio Thaycz—դատաստան in iure provinciali—Խախագահում և Pascho de Odirborg, pallatinus parvi castri երեք շլեախտիչ ասեսօրների, Հայոց վշիթ Բողդանին և մի վլադիմերցի Հայ՝ Տենեգանի որդի՝ Herbytho-ի հետ (ա. 1387). Պէտք է կարծել որ դատուող Հայերը բնակվում էին իլվովի արուարձանում և այդ պատճառաւ ենթարկուած էին բերդի իրաւասութեանը. Խառն դատաստանի մասին՝ քաղաքի ստարօստայի Հայ դատաւորների ընկերակցութեամբ—տե՛ս. A. gr. XIV, p. 107, 110, 115—116. Քաղաքային վշիթի և Հայ աւագների դատաստանի մասին տե՛ս A. gr. VII, № 69 (1474). Այդպիսի դատերի նիստերը տեղի էին ունենում in pretorio Leopoliensi (A. gr. XV, p. 269) Armeni scabini iurati in pretorio Leopoliensi iudicialiter residentes. Հարկ է նկատել որ իլվովցիք այդպիսի Խառն դատերի նիստերի տեղերի մասին վէճներ էին ունենում Հայերի հետ. Հայերը պետում էին, թէ Խառն դատերուում, ուր ներկայ են լինում վոյթը և Հայ դատաւորները, այս վերջինները նիստ պիտի ունենան in pretorio et scabellis et locis scabinorum, իլվովի պաշտօնեաները (райцա) պնդում էին թէ՝ Հայ դատաւորները կարող են նիստ ունենալ in pretorio, բայց ոչ in subsellis scabinorum. Թագաւորը գործը վճռում է յօգուտ իլվովցիների, Հակառակ Հայոց, Այս վիճաբանութեան իմաստը հասկանալի է—իլվովցիք այդ մանր ու չնչին պահանջների և ձե-

<sup>1)</sup> Հայոց վոյթը յիշվում է տակաւին XIV դարու վերջում Pomniki dziejowe Lwowa, № 497. արուարձանի վոյթ. A. gr. XIV, p. 166. Ըստ լոգինսկու առաջինը Հայոց հնագոյն աւագներից (վոյթ) կրում էր շատ փառաւոր կոչում «Հայոց ժողովրդի պետ» կամ հայերէն նրեսփոխան (dyrektor narodu ormianskiego).

ւակերպութեան շնորհիւ կամենում են ասպացուցանել թէ՝ հայոց իրաւունքը սահմանափակ է և զուրկ լիսակատարութիւնից և թէ հայերը չունին իրաւունք մասնակցելու քաղաքային վարչութեան (Բիշօֆ № 27):

Ինչպէս արդէն ասացինք, հայերի մէջ գործերը քննվում էին խառն դատաստանում. դատաւորներն էին հայոց աւագները, նախադաշում էր քաղաքային վշթը. այս դատաստանը գործերը վճռում էր ըստ հայոց իրաւանց:

Սակայն բայց տեղացի հայերից՝ իլվովի մշտական բնակիչներից, հարաւային այս կենարունական վաճառաշահ քաղաքը խուռն բաղմութեամբ գաղթում էին հայերը նա և հարաւային Ռուսաց միւս քաղաքներից, Խրիսից, հայաստանից, Վենետիկից և այլն<sup>1</sup>. Ուրիշ քաղաքներից և օտար երկիրներից եկած հայերը թէ ուժ իրաւասութեան տակ պիտի մտնէին, այդ խնդիրը երկար ժամանակ գայթակղութեան քար էր դարձել երեք կողմերի մէջ՝ իլվովի հայոց համայնքի, քաղաքային մագիստրատի և իլվովի ստարօստայի. Ստարօստաները<sup>2</sup> աշխատում էին իրանց իրաւասութեան ենթարկել օտարերկրեայ վաճառականներին, որոնք գալիս էին քաղաք:

Քաղաքային մագիստրատը պահանջում էր, որ նոքա ենթարկուին իւր դատաստանին ըստ գերմանական իրաւունքի, Վերջապէս՝ ի մասնաւորի հայոց վերաբերութեամբ խնդիր է ծագում իրաւունքի մասին, որով նոքա պիտի դատուին. մագիստրատը պնդում է, թէ օտարերկրեայ հայերը, ինչպէս միւս օտար աշխարհի վաճառականները, պիտի դատուին գերմանական օրէնքներով. հայերը նոյն խառն դատաստանն էլ պահանջում էին նաև օտար երկրից եկած հայերի համար, որ սահմանուած էր իլվովի հայոց համար. Բոլոր երեք կողմերն, բացի իրանց իրաւաբանական իրաւասութեան սահմանի խնդիրից, աչքի առաջ ունէին դրամական շահերը, վասն զի ով որ դատում էր, նա էր ստանում դատաստանական մաքսերը:

<sup>1</sup> Այս գաղղականութեանց պատմութիւնը աւելի հանդամանօրէն աւանդում է պ. Կ. Եզնանցը իւր «Բոնի Միութիւն» գեղեցիկ իրաւակութեան էջերում:

Խ. Յ.

<sup>2</sup> Ծարօստա բառը մենք չենք Թարգմանում, վասն զի մեր «տանուտէրը» ոչինչ առընչութիւն չունի սոյն դէպում իլվովի ստարօստայի հետ:

Խ. Յ.

Սկզբում երեք մրցակից հակառակորդների միջից յաղթանակը քաղաքը տարաւ. Թագաւորը 1444 թ., բոլոր իլվով եկող օտարերկրեայ վաճառականներին՝ Յոյներին, Հայերին, Սարակինոսներին, Հրեաներին, Մահմետականներին և բոլոր ուրիշ ազգութեանց ներկայացուցիչներին ենթարկեց քաղաքի դատաժանի իրաւասութեան՝ ըստ գերմանական իրաւունքի:

Սակայն արքայական հրովարտակները և քաղաքիս արտօնութիւնները շատ փարք նշանակութիւն ունեին Գալլիցիայի (Կերպոհայ Պատրիարքութիւն) ինքնիշխան կառավարիչների աշքում, ինչպիսի էին Ոգրովանմները XV դարում. Մենք արդէն տեսանք, որ վերջինները պէս-պէս սպառնալիքներով և հաւանական է նաև բռնութեամբ, կամենում էին իրանց իրաւասութեան ենթարկել մինչև անգամ տեղացի Հայերին, որոնք վայելում էին գերմանական իրաւունք. Միայն 1460 թ. Իլվովի ստարօստան ձանաչեց քաղաքային դատաժանի իրաւունքը՝ քաղաք եկած օտար վաճառականների վերայ. A. gr. VI, № 41... hospitis etiam ab undecimque venientes et signanter hospites transmarinos tam Christianos quam paganos cuiuscunque generis et conditionis extiterint, in iurisdictionem et vivitatem Leopoliensem venientes, pro omnibus questionibus coram nemine de se querulantibus respondebunt, nisi in iure civili coram advocate Leopoliensi. Այս համաձայնութիւնը կայացաւ երկար դատավարութիւնից յետոյ, որին մասնակցեցան նշնպէս Լեհաց քաղաքները Պօղնան և Դանցիկը. վերջիններս վկայում էին թագաւորի առաջ, թէ Իլվովին հին ժամանակներից տակաւին պատկանում էր իրաւասութիւնը օտար երկիրներից եկած վաճառականների վերայ (ib. № 34 և 35). Զարմանալին սոյն դիպուտածում այն է, որ իլվովիկ կարօտ էին երրորդ անձանց վկայութեան, երբ նորա ունեին 1444 թ. արքայական հրովարտակը, ուր այդ իրաւունքը միանգամայն պարզ կերպով որոշուած էր:

Հայոց համայնքի վէճերը քաղաքի հետ, օտար երկրից իլվով գաղթած Հայերի որի իշխանութեան տակ մտնելու մասին, երկար տևեց. Երկու կողմերի մէջ փոքր ինչ համաձայնութիւն կայացաւ 1469 թ. — Իլվովի Հայերի մէջ ծագած գործերը ինչպէս և առաջ պիտի վճռու էին խառն զատաստանում՝ քաղաքի վկայի նախագահութեամբ և այդ գէպքում դատաստանական մաքսերը յօդուա Հայոց դատապերների էր. իսկ օտար երկրի Հա-

յերի գործերում բոլոր դատաստանական մաքսերը ամբողջութեամբ գնում էին յօդուտ քաղաքային վշիթի: Gromnicki, 1, ս, թ. 54. Բիշօֆի ժողովածում մէջը չկայ ոչ այս, ոչ էլ 1476 թ. հրովարտակը՝ վերջնա գտնվում է հայոց արտօնութիւնների ժողովածում, որ հաւաքել է Բելզովկին և որ ներկայումն պահում է Օսսօլինսկիների թանգարանում իլվովի:

Հայոց համայնքի գատաստանական իրաւասութիւնը սակայն աւելի ևս սահմանափակուած էր 1476 և 1510 թ. արքայական հրովարտակների զօրութեամբ: Սուազին քրէական գործերը (բըռնաբարութիւն, սպանութիւն, վերաւորութիւն), որոնք ծագում էին իլվովի հայերի մէջ, արտահանուած էին նառն գատաստանից և ենթարկուած վշիթի ու քաղաքային լաւիկների դատաստաննին. մնացեալ գործերում պահպանուած էր գատավարութեան առաջուայ կարգը: Բողզբը վշիթի գատաստանից անցնում էր թագաւորի գատաստանը:

Հայոց գատաստանական իրաւասութիւնը ևս առաւել սահմանափակում է թագաւորի 1510 թ. արձակած հրամանագրով (Gromnicki): Տակաւին թագաւորի իլվով եղած ժամանակը մագիստրատը գանդատվում էր, թէ հայերը չեն կամենում հպատակել քաղաքի վշիթին, պնդելով թէ ունին իրանց վշիթը: Թագաւորը յետաձգեց այս խնդրի վճռու, մինչև Պետրոկովի ապագայ ժողովը (սէյմը), որը կոչուեցան երկու հակառակ կողմերն էլ: Իլվովցիք ժողովին ներկայացրին գրաւոր ապացոյցներ, որոնց վերայ յենլով՝ հաստատեցին թէ քաղաքում մէկ վշիթ պէտք է լինի միայն, որի իշխանութեան ստորագրվում են բոլոր քաղաքի մէջ ապրող ազգութիւնների ներկայացուցիչները: Հայերը չկարողացան ապացուցանել առանձին վշիթ ունենալու իրաւունքը: Այս պատճառով գործը տարաւ իլվովի մագիստրատը (Բիօֆ, № 23): Սակայն 1510 թ. հրամանագրին էլ չէր ոչնչացնում բոլորովին հայոց համայնքի գատաստանի իրաւասութիւնը, այլ միայն սահմանափակում էր: Խառն գատավարութիւնից, բացի 1469 թ. հրովարտակում յիշուած գործերից (բոնաբարութիւն, սպանութիւն և 1510 հր. գողորութիւն) արտահանուած էին նաև բոլոր անշարժ կայքերին վերաբերեալ գործերը (pro bonis et rebus immobilibus, puta hereditatibus, domibus, hortis et agris et aliis ejus generis). Այդպիսի գործերը այժմ ենթարկուած էին քաղաքային վշիթի գատաստանին: Խոկ մնացեալ բո-

*Էր գործերում* (pro aliis rebus et eventibus pro tempore Armenos contingentibus, hoc est si alieni in aliisque culpabiles essent) սպահուած էր առաջուայ խառն դատաստանը վյթի հայոց վեց դատաւորների ընկերակցութեամբ լուս քատաւորների ըստ առաջին կարգի գործոց պէտք է զնար բարձրագոյն դատաստան. ըստ գերմանական իրաւանց (jus Theutonicum superius). իսկ երկրորդ կարգի գործերինը—ուղղակի թագավառորին.

Դատաստանական մաքսեր ստանալու առթիւ ծագած վեճերի պատճառով հրատարակուեցաւ առանձին հրովարտակ 1518թ. որով սահմանուեցաւ՝ դատավարութիւնից ստանալի մաքսերի կէսը յատկացնել վյթի օգտին, միւս կէսը տալ հայոց դատաւորներին (աւագներին), որոնք մասնակից են լինում դատավարութեան (Բիշօֆ Ն 26):

Մենք այլևս քննելու չենք հայոց համայնքի և քաղաքի վիճաբանութիւնները և ընդհարումները, այլ նկատենք միայն որ հայոց համայնքը իւր առանձին իրաւունքներով շարունակեց իւր գոյութիւնը նվազում մինչև XVIII դարու վերջերը: Հայերը՝ չնայելով նոցա առօրեայ ընդհարումներին, որ ունենում էին իրանցից մտաւորապէս աւելի զարգացած և գերազանց ազգութեանց ներկայացուցիչների հետ, չնայելով վերջապէս, շատ վաղ ժամանակներում նոցա մէջ տեղի ունեցած հաւատափոխութեանը (վասն զի տակաւին XIV դարում ոչ սակաւ կաժոլիկներ կային հայերի մէջ, իսկ XVII դարում նիկոլ Թօրոսովիչ եպիսկոպոսի օրերում պաշտօնապէս կայացաւ Լեհաստանի հայոց միութիւնը հռովմի եկեղեցու հետ), նոքա շարունակում էին ապրել առանձին, կղզիացած համայնքով չեն խառնվում ուրիշ ազգերի հետ, զանազանուելով նոցանից իրանց բարք ու վարքով և բնորոշ կերպարանքով: Նոքա ունէին իրանց ժողովները, ուր ընտրում էին եպիսկոպոսներ, քահանաներ, քննում էին եկեղեցուն վերաբերեալ զանազան հարցեր, հաստատում էին կտակներ, խորհրդակցում էին աղքատների մասին, հիմնում էին ուսումնարան և հիւանդանոցներ, և այլն և այլն:

Դեռ 1519թ. հայերը ներկայացրին թագավառին իրանց Դատաստանազրի լատիներէն թարգմանութիւնը և վերը յիշուած գէպքերում դատվում էին իրանց օրէնքներով մինչև 1784թ.

երբ հայոց մասնաւոր և յատուկ դատաստանին վերջ դրուեցաւ (Gromnicki, 1, e. p. 56):

Թէկ Հայերից շատերը մտել էին գերմանական իրաւանց տակ, իլվովի մագիստրատը չեր ցանկանում բնաւ ճանաչել Հայերի իրաւանց հաւասարութիւնը միւս քաղաքացւոց հետ նա պնդում էր թէ՝ Հայերը իրանց լեզուի և հաւատի խորութեան պատճառով չեն կարող միւս քաղաքացւոց հետ իրաւանց հաւասարութիւնը վայելելու (pares ipsis non esse ac certis limitibus ultra reliquos cives Leopolienses inclusos esse Բիշօֆ l. c. № 37). Իլվովիցիք չեին խորշում մինչեւ անգամ զրպարտութիւներից էլ. նորա աշխատում էին արատաւորել Հայերի քաղաքական հաւատարմութիւնը, չարախօսելով թէ Հայոց ժողովները, որոնք տեղի էին ունենում գիշերները, քաղաքի պարիսպներից գուրս, շատ կասկածելի են:

Հարկ է նկատել, որ տակաւին XIV դարուց բացառապէս Հայերն էին վարում թարգմանների շատ կարևոր պաշտօնը. Դա պետական և միենդյն ժամանակ կիսասոսիկանական պաշտօն էր: Քաղաքի գլխաւոր թարգմանը քաղաքային երդուեալ աստիճանաւորն էր. Նա պարտական էր Հսկելու, որ օտար վաճառականները ունենակու չանեն քաղաքի արտօնութիւնները. զաղտնի ուստիկանութիւնն էլ նորան էր յանձնուած. Նորա պարտականութիւնն էր հետամուտ լինել իմանալու, թէ վաճառականի պատրուակի տակ արգեօք օտար պետութեանց լրտեմները չե՞ն ծածկուած: Ռոճիկ չէր ստանում թարգմանը, այլ գեռ ինքն էր քաղաքին վճարում: Վասն զի այդ պաշտօնը աճուրդով էր տրուում և թարգմանը իւր օգտին էր հաւաքում օտար վաճառականներից ստացած վարձը: Գլխաւոր թարգմանի ձեռքի տակ կային բազմաթիւ մանր պաշտօններ, որոնք կոչվում էին չարձի (նարմանութեան): Շատ բնական է, որ շնորհիւ այս պայմանների և Հայերի՝ արևելեան լեզուաց քաջ տեղեակ լինելըյն, արևելեան վաճառականները՝ ապրանք բերելով հարաւային Ռուսաց առևտրական կենտրոնները, միանգամայն ընկնում էին Հայոց ձեռքը և կախումն ունեին նոցանից: Միայն Հայերի միջնորդութեամբ կարելի էր Արևելքից նոր եկած վաճառականների հետ առևտրական գործեր տեսնել, պայման կագել և այլն: Խոկ անհնազանդներին շատ շուտով իւրելքի էին բերում կասկած ձգելով նոցա քաղաքական հաւատարմութեան վերայ: Բայց, ինչպէս վերը Արշեցինք, իլվով-

ցիք էլ արատաւորում էին Հայերին. դա 'ի հարկէ այնքան էլ գովելի զէնք չէր մագիստրատի ձեռքում Հայոց համայնքի գէմ մաքաւելիս: Իլվովցիների խիստ ատելութեան պատճառը Հայերի վերաբերութեամբ, բացի վիրաւորուած ինքնասիրութիւնից քաղաքի պատրիկների, որոնք Հայոց համայնքի մէջ տեսնում էին status in statu, ճիշդ տնտեսական էր, իլվովի բնակիչները երկիւղ էին կրում, որ չլինի թէ Հայերը ամենայն ինչ իրանց ձեռքը ձգեն տէրութեան մէջ (ne universa prorsus civitas ab illis occuparetur): Նորա գանգատում էին, թէ իլվովի առևտրական շուկան գուցէ բոլորովին Հայերի ձեռքը կանցնի: XVI դարու վերջերում հրապարակի 38 մեծ կրապակներից (institae divites) 22-ը պատկանում են Հայերին և միայն 8 կաթոլիկներին և 6 Ռուսաց. իսկ մանր կրապակներից (institae pauperes) կաթոլիկներին պատկանում էին երկուուր, Ռուսաց—երեք և մնացեալ 18 Հայերին էին պատկանում:

Իլվովցիք ակնարկում էին նաև այն իրողութեան վերայ, որ հին ժամանակից արդէն պարզ որոշուած էր տների տակում-ը, որ Հայերը, Ռոմեաները և Հրեաները իրաւունք ունէին գնելու քաղաքում, ուստի խնդրում էին որ Հայերին արգելուի տներ գնել կաթոլիկներից: Սակայն բանից երևեցաւ, որ մագիստրատը այնքան էլ իրաւացի չէր իւր պահանջներում—ոչ մի թագաւորական հրովարտակներում չէր որոշուած քաղաքի տների քանակութիւնը, որ կարող էին ունենալ Հայերը: Գործը վերջացաւ 1600 թ. երկու կողմերի մէջ կայացած համաձայնութեամբ, Թագաւորը իրաւունք տուաւ Հայերին քաղաքում 73 տուն ունենալու (շատ հաւանական է, որ Հայ տէրերին հաստատեց նոցակալուածական իրաւունքների մէջ). Հաշուելով այստեղ այն տունը qua in negotiis ecclesiasticis utuntur (այս տունը—Հայերի ժողովների տեղն—Հայերէն կոչվում է շուշ (Խոց), երկու եկեղեցական տները, ուսումնարանները և հիւանդանոցը:

Թէպէտ և բոլոր քաղաքային պաշտօնէից ընդհանուր ժողովներում Հայոց աւագները և բանում էին երկրորդ տեղը, բայց նոցա, իբր ոչ կաթոլիկներին, չէր կարելի քաղաքային պաշտօններ լարել և մտնել յայտնի արհեստաւորների գասակարգը: Ինչպէս վերը ասացինք, XIV դարում մէնք հանդիպում ենք իլվովում ոչ սակաւ Հայ-կաթոլիկների (Պոմն. dz. Lwowa, p. 4, 10, 13, 17, 26 ևայլն): XV դարում թշուատրուած էր կաթո-

լիկներին խնամութեան կապեր հաստատելու հայերի հետ և ընդհակառակն: Այսպէս իլվովի արքեպիսկոպոսը թոյլ է տալիս նէոնարդ անուամբ մի հային պատկուիլ կաթոլիկ դաւանութիւն ընդունած մի թաթարի աղջկան հետ այն պայմանով միայն, որ ուրիշ հաւատի չգարձնել նորան, ոչ հայոց, ոչ էլ Ռուսաց, չբռնադատել նորան կատարելու հայոց դաւանութեան ծէսերը. այս ամուսնութիւնից ծնելի զաւակները կաթոլիկ պիտի մլրտուին (A. gr. XI, № 84 1451—1477թ.)

Հարուստ հայուհի<sup>1</sup> ոչ սակաւ մարդու էին գնում ռուսականական հայութիչների (A. gr. XIV, p. 433—4, 302—4, 309, 312).

Հայ մեշշանները, նախ քան հողատիրութեան արգելումն, ունէին հողային անշարժ կայքեր (A. gr. III, № 23 մի հայ՝ Մարդը անուամբ իւր կալուաճըլ վաճառում է Եան Մախովիչին):

Պատաշում էր երբեմ որ հայերից ոմանք ձեռք էին բերում շլեախտիչի կոչումն (A. gr. IX, № 28 Gregorius miles Armenicalis, A. gr. XV, p. 107 հայազգի interpretes Thartarorum cubicularius Regis, nobilis, A. gr. XIV, p. 145, 260—Nobilis Petrus armenus de Stronyathin, ib. p. 34 Holubej armenus. տե՛ս նաև քանի մի փաստեր Լողինսկու գրքում գլ. VII):

ХVII դարու երկու հեղինակների մօտ մենք գտնում ենք ուշադրութեան արժանի նկարագիրը հայոց բարեմասնութեան, յատկութեան և արտաքին կերպարանքի. Եան Ալամբէկը, իլվովի մեշշան, հետևեալ կերպով է գծագրում իրան ժամանակակից իլվովցի հայերին. «Երիտասարդները համեստ են և աներկիղ այր մարդիկ հնարագէտ են և փարթամութեան հետամուտ, ծերունիք քաղցրաբարոյ են և հիւրընկալ օրիորդները երեսով թուիս են և ամբարտաւան, կանայք բաւականին քաղաքավարի են, բայց պառաւ հասակում—ժունաւոր»:

Միւս հեղինակ Ուրիխ Թօն Վեռդում 'ի միջի այլոց ասում է թէ հայերը իրանց թուիս երեսով, լրբաբար դուրս ցցուած աչքերով շատ տարբերվում են Լեհերից, և գունատ ու տիմար

<sup>1</sup> Լեհաստանի Հայուհեաց բարոյական տղիտութիւնը ամենայն ուրեք կրկնվում է և այն մեծ յամառութեամբ մինչև մեր օրերը, հարուստ և փառասէր հայ ծնողների աղջիկը կատարեալ գայթակութեան քար է զարծել աղջի համար:

Հրեաներից. որչափ այս վերջիններս երկշուտ են և հաճոյակատար, այնչափ Հայերը յաղթանդամ են և հրամայող. բայց, նկատում է նոյն հեղինակը, նորա ժամանակ գծուար էր գտնել մէկ Հայ, բացի Եազնովեցի Հայերից, որ հասկանալիս լինէր իւր հին գրոց լեզուն. Նոցա կենդանի լեզուն խառն էր թաթարի բառերով (Liske, Cudzoziemcy w Polsce, Lwow, 1876, p. 81—2).

Դիտաւորութիւն չունենալով բնաւ փոքր 'ի շատէ ամփոփ կերպով նկարագրել այստեղ Հայերի վիճակը Ռուսիայում, ես կամեցայ միայն Խոշոր գծերով գծագրել այն գերը, որ երբեմն այս ազգը կատարում էր Հարաւային Ռուսիայում: 'Ի մի ամփոփելով բոլոր վերը ասածներս, մենք չենք կարող չխոստովանել, որ Հարաւային Ռուսաց քաղաքի պատմութեան մէջ Հայերին պատկանում է նշանաւոր տեղ: Բայց անցելում ես և ապագայում սոցա աւելի նախանձելի գեր գուցէ վիճակուէր, եթէ միայն նորա օժտուած լինէին գաղափարական ձգտումներով: Սակայն այդպիսի յատկութիւններ մենք շատ սակաւ ենք գտնում հին Հայոց մէջ: Կուլտուրական ինդիրները Հեռու են նոցանից: Բոլոր նոցա գործունէութեան շարժառիթը ծագում է զուտ տընտեսական տեսակէտից. ամբողջ աշխարհը նոցա համար լոկ առետրական մի շուկայ էր: Նոցա յարատե գործունէութեան և կեանքի բնաւորութիւնը արտայայտվում է ուրոյն առանձնաւորութեամբ, որ արդարե, որոշ հանգամանքներում նոցա ոյժն էր կազմում, բայց միևնոյն ժամանակ նոցա անկման պատճառ դարձաւ, երբ չնայելով կեանքի նոր պայմաններին, Հայերը չկամեցան հրաժարուիլ իրանց նեղ ազգային կեանքից, յամառութեամբ հաւատարիմ մնալով իրանց հնացած աւանդութիւններին:

P. S. Յօդուածի աղբիւրները:

Լաւագոյն աշխատանքը՝ վերաբերեալ Հարաւային Ռուսաց Հայերի պատմութեանը, պատկանում է պրօֆ Գոռմիցկուն (Ormianie w Polsce ich historya, prawa i przywileje, Warszawa 1889): Այդ աշխատանքի յառաջաբանում (յենեալ ըստ մեծի մասին քաղաքագիտական նիւթերի վերայ) մէջ է բերուած նաև առարկայիս գրականութիւնը: Հեղինակի յիշած մատենագրութիւններից կարևորագոյնն են՝ 1. Sadok Baracz, Zywoty slawnych ormyan w Polsce, Lwow 1856 (Հարուստ նիւթ է, բայց զերծ չէ աւելորդաբանութիւնից և սխալներից).

2. Bichoff Ferd. Das alte Recht der Armenier in Polen

(Oesterr. Blätter für Litteratur und Kunst, Wien 1857).

— Das alte Recht der Armenier in Lemberg, Wien 1862.

— Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg (Archiv für Kunde oesterr. Geschichtsquellen, Wien 1864).

3. Zacharjasiewicz, Wiadomosci o ormianach w Polsce (Bibl. nauk. Zakl. im Ossol. 1842. m. II).

4. Шараневичъ (Szkoła, r. 1868).

5. Sodok Baracz, Rys dziejów ormiańskich.

6. Siarczynski, galicya, jej ziemia, plody i ludy (Do tyg. przy Gaz. Lwowskij 1857)

Շատթանկագին նիւթեր կան Ռուսաց Դալբյիայի քաղաք-ներում բնակուած Հայերի պատմութեան վերաբերեալ այս յիշատակարաններում—Акта гродзкие i земельные.

Բիշօփի ժողոված Հայոց արտօնութիւններից շատերը (բնագրի հետ միասին արտաստպած են առաջին IX հատորներում):

Իլվովի Հայոց նիստ ու կացի պատմութեան Համար շատ կարևոր են՝ Akta gr. չ. XIV—XV և Pomniki dziejowe Lwowa, Lwow 1892 թ.

Ոչ սակաւ ուշադրութեան արժանի մանրամասնութիւններ Հայերի մասին Հաղորդում է՝ Wl. Lozinski իւր հետևեալ աշխատութեան մէջ—Lwów starozytny II, Patrycyat i mieszanstwo Lwowskie w XVI—XVII w (քաղուած յատկապէս իլվովի քաղաքային դիւնի գեռ շհրատարակուած նիւթերից):

Կիևի կենտրոնական դիւնում, որչափ մեղ յայսնի է, պաշտում են Կամենեց-Պոդոլսկի Հայոց գատավարութեան գրքերը (Հայոց լեզուաւ): Այս դիւնից Բար քաղաքի Հայոց գրքերը վերադարձրած են Բար<sup>1</sup>, Կամենեց-Պոդոլսկի Հայոց մատեաններից քաղուածներ են արած Սր. էջմիածնի Հայրապետական Մատեանագարանի Համար: Նոյն Կամենեց-Պոդոլսկի Հայերի մասին տես dr. Antoni J. Zamecki Podolskie I—III Warszawa 1880.

Հարաւային Ռուսաց Հայերի վաճառականութեան մասին տես՝ սակ St. Koczynski, osteurop. Handel im XV Jahrh. (Jahrb. für Nationalrekon. u. Statistik, XXXIV (1879 թ.), p. 498.

<sup>1</sup> Բար քաղաքը Պոդոլսկի նահանգումն է:

Հայոց իրաւանց ժողովածուի լատիներէն բնագիրը լսու ընծայեց Բիշօֆ (Das alte Recht der Arm. in Lemberg). Իսկ Լեհէրէն բնագիրը—Վայելցիկն (տե՛ս. Bibl. Warsz. 1842 և Bibl. starozytna pisarów polskich, I).

Շատ կարեղոր է ուսումնասիրել այս ժողովածուն և որոշել նորա միջից յետոյ եկած բարդութիւնները. Այդ փորձը անում է J. Kohler, Das Recht der Armenier (Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, VII Bd. I Heft, Stuttgart, 1887).


Հայոց միութեան (Հռովմայ Եկեղեց.) պատմութիւնը տե՛ս պրօֆ. Պաւինսկու այս աշխատութեան մէջ—Dzieje z jednocenia ormian polskich z Kosciolom Rzymiskiem, Zródra dziejowe, m. II, Warsz. 1876. տե՛ս և Իօզեֆովիչ-ի, Annalium urbis Leopoliniensis tomus extraneus (Օսողինսկիների մատենագարանի ձեռագիրը իլովագում). Լեհաստանի Հայոց լեզուի մասին տե՛ս J. Hanusz (Հանուշ), օ յեզիկ օրմյան պոլշիկ, Rozpr. wydz. filolog. Akad. umiej. հ. XI.

— Einige slovischen Namen armenischer und türkischer Herkunft, Եագիչիք դիւան, Bd. IX, H. III.

#### Խ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ.

Ապրիլի 21, 1894 թ.

Մոսկովա.



## ԱՆՎԵՐԵՐ ԱՍՊԵՏՈՒԹԻՒՆ

Պարտ է եպիսկոպոսին անարատ  
լինել՝ որպէս և Աստուծոյ տնտեսի, մի  
լանդուզն, մի բարկացող, մի թշնամա-  
նող, մի հարկանող, մի զօշաքաղ: Այլ  
հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ,  
ժումկալ: Վերակացու լինել հաւատա-  
րիմ բանին վարդապետութեան, զի կա-  
րող իցէ միմիթարել ողջամտութեամբ  
վարդապետութեան, և դհակառակորդսն  
կշտամբել:

ՊՈՂՈՍ ԱՌ. ԱՌ ՏԻԹՈՍ, ԳԼ. Ա.

Ընթերցող Հասարակութիւնն անշուշտ յիշում է,  
որ «Մշակ» լրագրի կաթողիկոսական թեկնածուներն էին  
ազգիս Վեհափառ Հայրիկն և Արիստոկէս եպիսկոպոս  
Սեղբակեանը: Անկասկած, Հասարակութիւնը նոյնողէս յի-  
շում է, որ Վեհափառին ո. Էջմիածին բերելու նուիրակ-  
ների թւում կար և Սեղբակեան եպիսկոպոսը: Բայց գուցէ  
շատերը չգիտեն, որ գերատ. եպիսկոպոսը Երուսաղէմում  
Վեհափառին ներկայնալու ժամանակ մի ձառ է արտա-  
սանել, որ տպուած էր «Տարտղե» անցեալ 1893 թ. 33  
Համարում, Հետեւեալ խորագրով. «Արիստոկէս Սեղբակ-  
եանի ձառը նորին Վեհափառութեան ներկայնալու ժա-

մանակ<sup>1</sup>: Ճառը գրուած է գլուխար լեզուով, կոկ ու վերամբարձ ոճով: Տրաւիրելով մեր ընթերցողն ուշադրութիւնն սյդ ճառի վերայ, մենք բնաւ չենք կամենում մանրամասն կիրպով ծանօթացնել նորա բովանդակութեան հետ, բայց մի կտորը միայն ապարդիւն չի լինի այսուեղ առաջ բերել.

«Ել զի սրբոցն և արանցն Աստւածայնոց (Աստուածայնոց) դժւարակոխն է (դժուարակոխն է) միշտ ուղին, և ի Քո, Վեհափառ Տէր, յանցս գնացիցդ բազմապատիկ փուշք և տատասկիք են ամենուրեք, այլ հաւատամք, եթէ Տէր զօրացուցէ զդարշապարս ոտից Քոց անխոցոտելի ընթացիւք կոնել զփուշն ի տրորումն անվերընձիւղ, և մաքրեսցի անդաստան մեր հոգեսոր ի բուսուցանել զսերմանիս մնեդարարս և զծաղկունս անուշահոտս, արժանիս քըտանց պատկառելի ճակատուգ»:

«Անդրդւելի» (անդրդուելի) գոլով յայս մեր հաւատ, որ յուսացելոց իրացն է հաստատութիւն, մատչիմք մեծաւ ակնածութեամբ ի համրոյ Սրբյ Ա.ջոյդ, և ի հայցւած (հայցւած) երկնահաս օրհնութեանդ ի գլուխս մեր և համայն լրութեան հայ աղգի, եկեղեցականաց և աշխարհականաց»:

Այս տողերից յետոյ դերապատիւ եպիսկոպոսն ամփփոփում է ոգեւորութեամբ իւր ճառը այսպէս.

«Եւ մեք յօրհնութենէդ զօրացեալք՝ երգեսցուք ցնծութեամբ, օրհնեալ ընտրեալդ յանոն Տեառն, օրհնեալ՝ որ գալոցդ ես անսամբ<sup>2</sup> (անուամբ) Տեառն»:

<sup>1</sup> Մենք գիտմամբ առաջ բերինք այդ վերնագիրն ամբողջապէս, որովհետև մեզ խորթ է թւում, թէ ինչպէս կարելի է մի եպիսկոպոսի անունն ու ազգանունը միայն յիշել առանց «Եպիսկոպոս» բառի և կամ այդ աստիճանին յատկացեալ «սրբազն» և կամ «գերապատիւ» ածականների, Միթէ այդ հիմնուած է նորա մեծ ժողովրդականութեան վերայ(?!)...

<sup>2</sup> Զգիտենք, թէ ում շնորհիւն է այսուեղ առեղծուած գրաբարի ուղղագրութիւնը, — իսմբագրութեան ցանկութիւնն է եղել այդ, թէ Սրբստակէս եպիսկոպոսինը, Երկու գէպքումն էլ հաւատարապէս գատապարտելի է այդ յանդուզն ուղղագրութիւնը, որի գոյութիւնն ո՛չ միայն գրաբար, այլ և աշխարհիկ լեզուում՝ միանգամայն անհիմն է և անտանելի:

Սյդ ճառի տպագրութիւնից յետոյ անցաւ Ճիշդ  
եօթն ամիս և ասանմէկ օր, և ահա «Մշակ» լրագրի բա-  
նասիրական բաժնում երեան է գալիս մի յօդուած «Ո՞վ  
Հաւատաց» խորհրդաւոր վերտառութեամբ և Սեղբակ-  
եան եպիսկոպոսի լիակատար սարրագրութեամբ: Յօդուա-  
ծը զրուած է բարեկրօն Արշէն Էրէցի՝ զիւղական քահա-  
նայի մի քարողի առթիւ, որ զետեղուած է սոյն թուա-  
կանի «Արարատի» մարտի տեսրակում: Մամուլը բաւակա-  
նին զբաղուեց այդ յօդուածներով գուցէ նա ասաց աւելի,  
քան պէտք էր, թերեւ չասաց և այն, ինչ որ հարկաւոր  
էր: Բայց եթէ այսօր «Հանդէսը» ևս իւր սեպուհ պարատ-  
կանութիւնն է համորում չլուել և Սեղբակեան եպիսկո-  
պոսի յօդուածի մասին մի քանի խօսք ասել, — զորա  
գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ մեզ մեծ  
զարմանք է պատճառում այն հանդամնքը, թէ մի ե-  
պիսկոպոս, որ երազում էր կաթողիկոսական գահի վե-  
րայ բազմելու, ինչպէս չէ կարողացել հասկանալ զիւ-  
ղական մի քահանայ Արշէն Էրէցի յօդուածը և թէ որ-  
պիսի անբարեխզութեամբ է վարուել նա այդ յօդուա-  
ծի հետ:

Սեղբակեան ևալ. խոստովանում է, թէ Արշէն Էրէցի  
քարողի բովանդակութիւնը «արժանի է ամեն մի հայի խո-  
րին ուշարդու-նեան» և նկատեցէք թէ ինչու. «իշ ջաշիտն-  
ինդը պարհաւառն այդ՝ ժողովրդին ուստան և արժանա-  
ռոց ժահանաներ դաշտ ժամանակունց ինստական ինդին է»,  
և այդ ասում է նու, կ'աւելացնենք մենք, այն նպաստ-  
կով, որ մի զուցէ ընթերցողն ուրիշ բացատրութիւն, ու-  
րիշ նշանակութիւն տայ Արիստակէս եպիսկոպոսի յօդ-  
ուածին: Բայց որովհեաւ գերասպատիւ սրբազնութ կաթո-  
ղիկոսական թեկնածու էր, վայել է համարել, որ ամենից  
առաջ ինքը խօսի այդ յօդուածի մասին, որով թերեւ ո-  
իւր բարոյական պատկերը ցոյց տուած կը լինի: Մակայն

խօսելով այդ «կենուական խնդրի» մասին, Արիստակէս եպիսկոպոսը միայն հասատեց բանաստեղծի խօսքելը.

Հայ տէրտէրը կարդալ չգիտէ,  
Հայ տիրացուն շատ տգէտ է.  
Եպիսկոպոսը այդ լաւ գիտենք,  
Օգնելու տեղ՝ լոկ կըխօսենք:

Կրինում ենք, նա միայն հաստատեց, թէ որքան դառն  
ձշմարտութիւն կայ այդ չորս տողերում, որովհետեւ թե-  
րահաւատ հեղինակն անորոշ գրութեան մէջ է թողնում  
իւր ընթերցողին և, կարծես, ուզում է հաւատացնել իւր  
ընթերցողին, որ բար. Արշէն երեցը տգէտ քահանաների  
պաշտպան է հանդիսանում իւր յօդուածում, իսկ չէ ա-  
սում, թէ ինչպէս կարելի է որոշ պայմաններում աղաս-  
ուել կարգալ չիմացող քահանացից և շատ աղետ տիրա-  
ցուից<sup>1</sup>: Նա փառաւորապէս ապացուցեց, թէ

Եպիսկոպոսը այդ լաւ գիտենք,  
Գիտենք և միայն կըխօսենք:

Շարունակենք առ այժմ կարդալ Սեղրակեան եպիս-

<sup>1</sup> Մուկուայի հայ հասարակութիւնն էլ ներկայումն զբաղ-  
ուած է այդ կենսական խնդրով. Օգտուելով հանգամանքից՝ մենք  
աւելորդ չհամարեցինք գէթ թուոցիկ կերպով մի քանի խօսք  
ասել մայրաքաղաքիս հայ հոգեսրականութեան և այն մեծ գոր-  
ծունեութեան մասին, որ բաց է նորա առաջ:

Յակոր աւագ քահանայ Սուրբնեանցի մահից յետոյ Մոս-  
կուայի հայոց եկեղեցին, նորա հետ և հասարակութիւնը մնաց  
շատ անմիտար վիճակի մէջ: Եկեղեցու բեմից այլ ևս չէր հըն-  
չում կենդանի, միխթարական խօսք, չկար այլ ևս ոչ ոք, որ ոչ  
միայն հրավիրէր իւր ժողովուրդը այս կամ այն բարի գործին  
մասնակցելու, այլև ինքն անձամբ գլուխ անցնէր այս կամ այն  
հասարակական գործին: Ժողովոդի հետ միասին անիմնամ մնա-  
ցին Լաղարեան Ճեմարանի և ուրիշ թէ՛ արական և թէ՛ իդական,  
որպէս արքունական, նոյնպէս և մասնաւոր ուսումնարանների  
աշակերտներն ու աշակերտուհիները. նոքա զուրկ մնացին բաւա-

յօդուածը և ծանօթանանք նորա յայտնած՝ «Մշակ» լրագրին վայելուչ լուսաւոր մաքեն ու գաղափարները:

Սեղակեան հավակոպոսը՝ քննելով բար. Արշէն է-րէցի յօդուածը, ասում է.

«Հատ երեսութիւն կամենում է հոգեոր վարչութիւնը մի կերպ արդարացրած լինել ազգի առաջ այդպիսի ձեռնադրութիւններ

բար կրօնուսոյցից, թէև կան անձնաւորութիւններ, որոնք այդ դասերի համար փող ստանում են:

Չնայելով որ Մոսկուայում քահանաները որոշ ոռծիկ են ստանում, սակայն նորա իրանց անմիջական պարտականութիւնը չեն կատարում. ամենօրեայ ժամասացութիւն կամ լինում է կամ չի լինում. իսկ եմէ լինում է, այն ևս միայն մի քանի բազէ. Ժամասացութիւնը ըստ քահանանութիւն աղաւաղել և փոխիսել սովորական ըան է դոցա համար. Նշանաւոր տաներին, մեռելոց ներին մեր եկեղեցու գնները փակ են լինում և չգարհուեք, եթէ ասեմ, որ հանգուցեալ չոգելոյս Մակար կամողիկոսի թաղման օրն անգամ մեր եկեղեցում ժամասացութիւն չկար, որովհետեւ զատկի երկրորդ օրն էր և քահանաները շտապել էին տուն օրհնելու, որպէս զի շուտով փող հաւաքեն. Զքաւոր ընտանիքներն երկար տարիներ չեն արժանանում հոգեոր միսիթարութեան. մեծ տօներին նոցա տունն երբէք չէ օրհնվում, որովհետեւ անկարող են վճարիլու յատկացեալ տուլլրը; Այդ բաւական չէ. երբ բարեկրօն Դ. ք. Յովսէփեանցն եկաւ Մոսկուա, մեր քահանաները սկզբունորա տունն էլ չեին գնում օրհնելու, յարգելով գոնէ նորա քահանայական կոչումը. իսկ այս տարի աւագ քահանայ Տէր-Ղուկասեանցը նորան չէ ընդունում տուն օրհնելու, ինքն էլ չէ գնում: Տեղի են ունենում եկեղեցում օտարամուտ սովորութիւններ և ըստ կամաց մեր քահանաների վերացվում են չայաստանեաց եկեղեցու ընդունած ձէսերը. Նարօտ կապելն այստեղ կախումն ունի մօդայից և ոչ Մաշտոցից, մինչև անգամ կամեցողին այնպէս են նայում, կարծես թէ մի արտասովոր բանի լինի ինդրածը: Կօշիկներով սեղան բարձրանալը մեր քահանաների համար ոչինչ բան է. պատարագի արարողութեան ժամանակ փողը ձեռին բռնած սեղան են բարձրանում սուրբ խորհուրդը կատարելու, Ականատես եղանք անձամք սղյն տարի աւագ շաբաթ օրը, ինչպէս աւագ ք. Տէր-Ղուկասեանցը և Հ. Պապովիւնը ժամասացութիւնից առաջ և յետոյ կօշիկներով ատեանում կանգնած հաղորդում էին: Մինչ սարկաւագը բարձր ձայնով հրաւիրում է երկիւղիւ և հաւատով յառաջ մատչել հազարդուելու, մեր քահանաները, հակառակ մեր եկեղեցու սահմանած կարգապահութեան, անպատկառ կերպով կօշիկներով կանգ-

**Թ Ս Յ Լ** տալուն համար։ Ասացինք ըստ երևութին, ըստ որում արժ։ Երէցը որոշ կերպով չէ բացատրում իր միտքը, պարով չէ ասում այն, ինչ որ ընթերցողն ինքը եղբակացնում է։

Եւ իւր եղբակացութիւնը վաւերացնելու համար նայառաջ է բերում բար։ Արշէն երէցի քարոզից հետեւեալ սողերը.

«Փողովուրդ, գոչում է տէր Արշէնը, — աւելացրել է սրբազն Արիստակէսը, — այս դատաստան ձեղ կըթողում։ յանցանքն

նած ատեանում հաղորդութիւն են տալիս, փոխանակ սեղանի մերայ երկիւղածութեամբ ծունկ խոնարհեցու։

Մենք կըբերենք և մի օրինակ, թէ ինչպէս փոփոխութեան են ենթարկվում Մոսկուայում հայաստանեայց եկեղեցւոյ ծիսակատարութիւնները։ Այս տարի փետրուարի, եթէ չենք սիսալ վում, 16 ին տեղի ունեցաւ մեր եկեղեցում մի տարօդինակ արարողութիւն, որ մենք դժուարանում ենք պսակ անուանել կէս պսակ թէ օրհնութիւն։ Զնայելով որ տէրութեան օրէնքը (յօդ. 67, X հատ. Պետ. օրէնք. I Մասին) պահանջում է, որ երբ մի ուսւ պսակվում է կամ մարդու և գնում օտար դաւանութեան պատկանողի, պսակն անպայման կատարվում է ոսւսաց եկեղեցում, սակայն այդ օրը մի օտարոտի պսակ տեղի ունեցաւ, որ, կրկնում ենք, մենք մինչև օրս ել չենք կարողանում մեզ բացատրել թէ ինչպէս նա կարող էր տեղի ունենալ մեր եկեղեցում։ Հանգուցեալ բարեգործ Յովհաննէս Յովհաննեանցի թոռը, օրիորդ Մարիամ Աքիմեանը, որի մայրն այժմ Լազարեան Ճեմարանի վերատեսուչ պ. Գ. Քանանեանցի կինն է, այդ օրը պիտի պսակուէր Բեյքրադի գեսպանատառն երկրորդ քարտուղար պ. Միտոնովի հետ. Երկու ժամին կէսօրից յետոյ՝ եկեղեցու դաները բաց էին. աւագ քահ. շուրջառը ձգած, իսկ Պապովեան քահ. լիովին զբեստաւորուած, ինչպէս պսակի ժամանակ է լինում, սպասում են նորապատճերին։ Երբ սոքա գալիս են, քահանաները ընդ առաջ են գնում, իսկ Լազարեան Ճեմարանի աշակերանները ըսկուում են երդել «Մայր ցանկալի» տաղը. Քահանաները կատարում են պսակի արարողութիւնը, սկսելով «Խանաւ ամենայաղթ» շարականով, «Յարեւու եհար զխորան», ասում են «Սուրբ խաչեւս» և «Պահպանիչ» և յոյս հաւատացելոց, երգում են «Այսօր երկնայինքն որախացան» շարականը, յետոյ իսումը երգում է «Փառք Քեզ, Տէր Աստուած մեր», որ «Եմաշտոցում» չկայ, ապա շարունակում են մինչև «Տէր Աստուած զօրութեանց» ազգօթքը, կարդում են յատկացեալ «Եւ յամսեանն վեցերօրդի» աւետարանը, միայն բաց են թողնում մի երկու բան. չեն հարցնում համաձայնութիւնը և «Տէր Աստուած զօրութեանց» ազօթքից բաց

ում է, երբ գիւղական քահանաներ տպէտ և անխմաստ են. յանցակը եպիսկոպոսի՞ն է, որ կըձեռնադրէ, թէ էջմիածնայ Բարձր հոգեոր Աստենինն է, որ կըթոյլատրէ. Զէ ժողովուրդին, որ կըթախանձէ, կըպահանջէ, համախօսական ժողովներ կըկազմէ, հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են խնդրագրին վրայ, վաւերական կնքով էլ գրոշմելով»:

Ուշիմ ընթերցողն այս տողերից այն եղբակացութիւնը պիտի անէ, որ բար. Արշէն Էրէցը յանցանքը վե-

են թողնում «և եղեր ի գլուխ սոցա պսակ ի քարէ պատուականէ»: Վերջում աշակերտները դարձեալ սկսում են երգել «Միաշարաթ օր յանգտուեան» տաղը: Այստեղ մենք նկատում ենք կրկնակի զեղծումն. նախ խախտում են տէրութեան օրէնքը, թէն մեր քահանաներն պիտի ասեն, թէ խսկական պսակն եղաւ ուռսաց եկեղեցում և երկրորդ՝ աղաւաղում են մեր եկեղեցւց արարողութիւնը Ասել թէ խսկական պսակը կատարուեցաւ ուռսաց եկեղեցում, մենք ընդունում ենք. միայն կըխնդրենք, որ բարեհաձին մեզ բացատրել, թէ ի՞նչ կատարուեցաւ հայոց եկեղեցում: Համեմատիլով «Մաշտոցի» հետ այն բոլորը, ինչ որ մեր քահանաները կատարել են եկեղեցում, գուրս է գալիս, որ փոքրիկ կրծատմամբ կատարել են պսակի արարողութիւնը, Պըսակի արարողութիւնը, ինչպէս յայտնի է, մեր եկեղեցու խորհուրդներից մէկն է. կարգալով այն բոլոր խորհրդաւոր աղօժքներն ու շարականները, որոնք սահմանուած են պսակի արարողութեան համար, նշանակում է կատարել այդ խորհրդութքը: Հետևաբար պէտք է եղբակացնել որ այդ օրը պսակը երկու անգամ է կատարուել: Անտարսակցու, բնական է, որ մի հայ օրիորդ՝ հեռանալով իւր մայրենի եկեղեցուց, կարող է պահանջ ունենալ, որ իւր կեանքի այդ հանդիսաւոր օրին լսէ և իւր հարազատ եկեղեցում օրհնութիւն: Բայց այդ գէպ քում ամենայն ինչ երկու, պիտի լինի որոշեալ շրջանակում, յայտնի կարգ ու կանոնով կամ տանը և կամ եկեղեցում ամենայն զգուշութեամբ. իսկ բոլորովն հակառակ բան ենք տեսնում: բաւական չէ, որ աղաւաղեալ կերպով պսակի արարողութիւնն են կատարում, այլ և երգում են աշակերտներն այնպիսի տաղը, որոնք ունին իրանց առանձին գործադրութիւնը, այսինքն երգվում են ս. Յարութեան տօնից յետոյ: Եւ գիտէք, թէ զա ինչպէս է բացատրվում—շատ պարզ կերպով. Պապովեան քահանան Լազարեան Ճեմարանի կրծուսպյան է, իսկ Լազարեան Ճեմարանի վերատեսուչը պ. Քանանեանցն է, ուրդութիւնը ամեն բան կարելի է անել: Շատ ցանկալի է իմանալ թէ մեր քահանաները պիտի թոյլատրեն, եթէ վաղը մէկն իւր հարսանիքին բերել տայ եկեղեցի պսակադրութեան ժամանակ

բազրում է ժողովրդին և զանազան «բառ երևութին»-ները բալորովին անտեղի են: Եթէ Արխատակէս և լիսկով զարմանում է, որ բար. Արշէն էրէցը դասաւարաբում է ժողովրդին, այդ գարմանքը նոյնպէս անտեղի է: Այդ տողերում պարզ կերպով արտացոլում է այն տիտուր իրականութիւնն, որից, կարծես, կամենում է խոյս տալ Ա-

զանազան տաղեր երգելու համար մի խումբ, իսկ միւսն իւր ննջեցւալի համար մի ուրիշ խումբ՝ դարձեալ նոյն նպատակով: Եւ միթէ այս բոլորն անպատճ պիտի անցնի:

Քարոզ, կենդանի խօսք մեր եկեղեցու բեմից լսելու բախտաւորութեանը չենք արժանանում: իսկ ևթէ մի այդպիսի փորձ էլ լինում է, այն ժամանակ կուսակցութեան ներկայացնեցիչ են հանդիսանում քարոզողներն և փոխանակ իրատական, մսիթարական մի քանի խօսք ասելու, երկպառակութեան են զարկ տալիս, ինչպէս այդ արաւ հ. Պապովեանն անցեալ տարի Հոկտեմբերի 24-ին: — Եկեղեցին մրցութեան ասպարէկ են դարձնում և այն տեղն է համառմ, որ առանց Վեհափառ Կաթոլիկոսից հաստատած խմբապետի թշուտութեան և համաձայնութեան եկեղեցու միւս դասում կանգնեցնում են մի ուրիշ խումբ, չնայելով որ խմբապետն ունէր իւր կաղմակերպած՝ ուսանողներից և ուրիշ երիտասարդներից բաղկացած խումբը: Առաջին անգամ՝ մի այդպիսի մրցութիւն յաջողութիւն ունեցաւ, իսկ երկրորդ անգամ—ոչ բայց անողները կրկին հասան իրանց նպատակին, որովհետև մարմաւոր իշխանութեան հասցրին, որ Կաղաքոս ք. Յովսէփեանցը ըմբոստ ու խոռվարար է, սակայն այդ անհետեանք մնաց: Դեռ գուրս են գալիս «Ծխականի» և «Պանդուխտի» նման թղթակիցներ, որոնք ստախոս լեզուով, ճշմարտախօսի դիմակով և կեղծ ստորագրութեամբ կամենում են հաւատացնել որ Մոսկուայում հասարակութեան մէջ երկպառակութեան պատճառն է Ղ. ք. Յովսէփեանը (տես «Արձագանք» 1894 թ. ԱՆ 37 և 42): Կարող ենք հաւատացնել այդ երկու անբարեխիղջ թղթակիցներին, որ Ղ. ք. Յովսէփեանցը չլինէր, ով ուզում է լինէր, կրկին նոյն անբաւականութիւնները տեղի պիտի ունենային շնորհիւ մեր նախկին քահանաների:

Եկեղեցական կարգապահչութիւնն այստեղ անօրինակ է: Պատարագիչ աւագ քահանան կամենալով ծաղքել Ղ. ք. Յովսէփեանցն մի անգամ այնպէս խոնարհ կերպով է գլուխ իշեցնում, որ քիչ է մնում սաղաւարտը զլիքց վայր ընկնի և այդ նա անում է նորա համար, որ ցոյց տայ ծխականներին, թէ զըլուխ է տալիս նորան, մինչդեռ ծխականները գանգատվում էին, թէ աւագ քահանան՝ համաձայն ընդունուած ձևին, ոչ պատաս-

րիստակէս եպիս. և կամ վարագուրել նորան։ Այդ ցաւալի և տխուր իրականութեան մասին մենք կըխօսենք փոքր ինչ ստորեւ։

Սեղբակեան եպիս. սխալ է համարում ժողովրդի մասնակցութիւնը տղէտների ձեռնալրութեան մեղքին և նախ քան ապացուցանել իւր այդ նշանաւոր միտքը, նա դիմում է անցեալին, չզիտենք ինչ բանի համար։ Մենք

խանում է, երբ բար. Դ. ք. Յովսէփեանցը զլուխ է իջեցնում, ոչ էլ ինքն է անում, երբ պէտք է, որ առաջ ինքն աւագ քահանան գլուխ խօնարհէցնէ. Դեռ չենք խօսում այն բոլորի մասին, ինչ որ այդ երկու քահանաներն արել են Ղազարոս քահանայի վերաբերմանք. բաւական է, եթէ ասենք, որ իսպառ զգիել էին նորան քահանայագործութիւնից. եկեղեցում նա շուրջառ չէր կրում, աւետարան չէր կարգում, պատարագ չէր մատուցանում և այն. Առաջին տարին, երբ յիշեալ քահանան Մոսկուա եկաւ, միայն 7 ամիսից յետոյ կարողացաւ պատարագել և այդ եղաւ այն ժամանակ, երբ բաղմաթիւ ստորագրութեամբ հեռագիր գնաց թեմիս սրբազն կառավարչին, որ թոյլատարէ Հ. Ղազարոսին պատարագ մատուցանել։

Այս տարի աւագ հինգչարմի գիշերը տեղի ունեցաւ մի այսպիսի տարօրինակ գէպք, որ ցցց է տալիս, թէ որքան կարգապահ է մեր աւագ քահանան, Բարեկրօն Դ. ք. Յովսէփեանցը իւր ժամանակին կամենալով կարդալ «Կտակը», բարձրացնումէ գրքակալը, որ դնէ բեմի վերայ, բայց աւագ քահանան գալիս է ատեան և բարձրացայն կանչում. «ապէտք չի»։ Դ. քահանան. Հնազանդուելով Հեռանում է իւր դասը և կանգնում. Իսկ ժամասցութիւնն աւարտելուց յետոյ, նոյն աւագ քահանան դառնում է Դ. քահանային և ասում. «իժում գուղիս, գնա, կարդա»։ Քահանան Հնազանդվում է աւագերեցին, բեմ է բարձրանում և սկսում կարգալ և երգել այդ գիշերուան յատկացեալ խորհրդաւոր «Կտակն» ու «Ողբը»։ Ծխականները, որոնք տարիներով զրկուած էին այդ երկուսից, «Կտակից» ու «Ողբից», առանձին Հոգեկան միիթարութեամբ լսում են; Եւ տեսէք, որ միւս քահանաներն այդ ժամանակ դասում վերաբկոները հագած պատրաստ էին դուրս գալու և եկեղեցուց առաջին դուրս եկողները նորա էին։

Երբ տուն օրհնելու են գնում, ինչպէս այս տարի զատկին, քահանաներից միայն մէկը բաւականանում է փորուրարով, իսկ միւսը և սարկաւագը—ոչինչ, բուրգաւ և խունկ ման ածել Հետներին բնաւ սովորութիւն չունին. Նշանարք յաճախտակի ժամկոչին

կըքերենք յիշեալ եպիսկոպոսի խորհրդածութեան մեծ  
մասը, հրաւիրելով նորա վերջին տողերի վերայ մեր ըն-  
թերցողի ուշազբութիւնը։ Ահաւասիկ։

Ուրան էլ օգտակար և ողջմտ լինի մի պահանջ, որքան  
էլ իրանց կրթութեամբ, խելքով և զգացմոնքով բարձր կանգ-  
նած լինեն նրա յարուցանողները, այսու ամենայնիւ նրանց ա-  
ղաղակը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի, և թէ ինքը  
ժողովուրդը՝ դեռ չէ զգում պահանջածի կա-  
րեւութիւնը։

Անցեալի վերայ հայեացք ձգելով, Ակդրակեան եպիս-  
կոպոսը բերում է հանդուցեալ Մ. Նոլլանդեանի խօսքերը

են պատուիրում պատրաստել և շատ անգամ առանց պատարա-  
զի կամ օրհնութեան են բաժանում ծխականներին և նշխարք  
ստանալու արտօնութիւնն ամեն մի ծխական չունի. քահանանե-  
րը ունին իրանց առանձին հայեցողութիւնը, թէ ում կարելի է  
և պէտք է տալ, ում—ոչ։

Հարիւրաւոր աշակերտներ և աշակերտուհիներ համարեա  
առանց կրօնուսոյցի են մնացել, ասում ենք համարեա այն պատ-  
ճառով, որ ոչինչ, չուսած քահանան չէ կարող բաւականութիւն  
տալ նոցա և լցուցանել նոցա հոգեոր պիտոյքը, իսկ վերը բե-  
րած օրինակներից ընթերցողը կարող է եղանակնել թէ այդպիսի  
քահանաներն որպիսի կենցանի օրինակ կարող լինել իրանց սանե-  
րին և որքան կարող են աղդել նոցա կրօնական զգացմոնքների  
վերայ. Գլխաւորապէս դասերն իւր ձեռն է առել հ. Պապովեանը,  
բայց ինչպէս նա կարող է և քահանայութիւն անել, այսինքն՝  
լինել ծխատէր քահանայ և կրօնուսոյց, երբ օրեկան 5—6 ժամ  
դաս ունի և այն՝ զանազան ուսումնարաններում։ Տաղիւ թէ նա  
երկուսից զէթ մէկը փոքր ի շատէ բարեխղծութեամբ կատարէ,  
իսկ թէ ինչ կրօնուսոյց կարող է լինել, այդ մենք թողնում  
ենք ընթերցողին դատելու, առաջարկելով ծանօթանալ արժա-  
նապատիւ տէր հօր կազմած դասսագրքերի հետ, որնք, որքան  
մեզ յայսնի է, ոչ մի ուսումնարանում չեն ընդունուած, բացի  
Լազարեան ծեմարանից. Ռուսաց օրէնքով դասատուութեամբ պա-  
րապող քահանան զըկվում է ծուխից. Արգեօք լաւ չէր լինիլ,  
եթէ մի երրորդ հոգեոր անձն լիներ պյտեղ, որ վերահսկէր ընդ-  
հանուր կարդապահութիւնն և պարապէր դասատուութեամբ։ Ե-  
թէ մենք շարունակ տեսնում ենք զեղծումներ, չէ՞ որ դորա պատ-  
ճառն և այն է, որ մեր քահանաները հեռու են իշխանութեան  
վերահսկողութիւնից և հանգիստ անում են այն, ինչ որ կամե-  
նում են։

և շարունակում է իւր ասենաբանութիւնը քողարկուած նպատակով, թէ

«Ազգիս Վեհափառ. Հայրապետը շրջած լինելով իբրև վարդապետ Կովկասի Հայոց մէջ և Հանդիպած Մ. եպիսկոպոսի Տաթեակի վանքում ձեռնադրած քահանաներին՝ իր Արծիւ Վասպուրականի» թերթում լսու բնծայեց մի յօդուած իբրև բողոք անարժանների ձեռնադրութեան դէմ»:

Եւ բանից դուրս է դալիս, որ 60 թուականներին ժողովուրդն անստարբեր էր, հետեաբար և այդ անհատների բողոքը ցանկալի արգիւնք չէր տալիս: Սակայն ժամանակները փոխվում են, մարդիկ լուսաւորվում են և զարգանում մանաւանդ հայերս, որ Դրեպերի հայկական թարգմանութիւնից յետոյ, հսկայական քայլերով անցել ենք և անցնում ենք քաղաքակրթութեան ընդարձակ ասպարէզը և համարեա 25 տարուայ ընթացքում հաղեւ թէ մի յետին գիւղ լինի, ուր մարդիկ ոչ միայն կարգադրել չիմանան, այլ և զարդացած ու քաղաքակրթուած չինին լիովին: Հենց այդ է պատճառը, որ 15—20 տարի անցնելուց յետոյ (մենք շատ էինք ասել 25 տարի, բայց ինքը Սեղրակեան եպիսկոպոսը բաւականացել է 15—20 տարով) «մի կողմից մասնւր, միւս կողմից մասաւոր զարգացման և յառաջադիմութեան հայ հասարակութեան զանազան դասակարգերի մէջ ծաւալ առնելը՝ մասնաւորների բողոքն ու պահանջը դարձնում են ժողովրդական»:

Անտարակցոյ, 15—20 տարուայ ընթացքում մտաւորապէս զարգանալ և յառաջադիմութիւն անել մի ժողովուրդ կարող է, բայց ոչ այնքան, որքան կարծում է Սեղրակեան եպիսկոպոսը: Ուսում ու կրթութիւն կարող են ունենալ և զանազան դասակարգի պատկանող անձինք, բայց դա գետ չէ նշանակում, որ մեծամասնութիւնն այնքան մտաւորապէս զարգացած և յառաջադիմութիւն արած լինի, որ կարողանայ առանց երամական շարժման,

առանց ևնթարկուելու այս կամ այն անձնաւորութեան ազդեցութեան ինքնաբերաբար վարել իւր բոլոր հասարակական գործերը Եթէ Սեղբակեան եա. լաւ ձանաչք «Հայ ժողովավին, քաղաքացուց սկսած մինչեւ գիւղացին», ինչպէս ինքն է ասում, այն ժամանակ նա մեզ կընկարագրէր անհամեմատ տիսուր պատկեր, ցոյց տալով թէ հայերս զեռ որքան կարօտ ենք ուսումն, թէ քանի՛ քանի՛ քանի՛ գիւղեր ունինք առանց ուսումնարանի, թէ որքան կարօտութիւն ունինք վարժապետի, որքան կարգալգրել չիմացող եղայրներ ու քոյրեր ունինք, թէ որքան քիչ է տարածուած մեղանում ընդհանրապէս գրագիտութիւնը և այլն: Առանց փաստերի մենք բոլորովին անկարող ենք ընդունել Սեղբակեան ևպիս. այդ համարձակ յայտնած միտքը, այլ տարաբախաբար աւելի տրամադիր ենք հակառակը կարծելու: Մենք կըքերենք մի օրենակ, որ պատահել է սորանից Ճիշդ 10 տարի առաջ Մոսկուայում: Հանգուցեալ Սուրբնեանց աւագ քահանայի մահից յետոյ, աւագ քահանայութիւն ստանալու աշխատեց տեղւոյս երկրորդ քահանան՝ տէր Յարութիւն Տէր-Ղուկասեանցը: Զենք կարող ասել թէ այս քահանան ի սպառ կարգալգրել չգիտէ. ոչ, գիտէ, բայց բարբարոսական է: Նա յաջողութիւն ունեցաւ աւագ քահանայութիւն ստանալու, որովհետեւ թղթին ստորագրել էին այնպիսի մարդիկ, ինչպէս հանգուցեալ Մկրտիչ Էմին և մի քանի ուրիշները, չնայելով որ Բարձր Հոգեոր Կառավարութեան շատ լաւ յայանի էր, որ յիշեալ քահանային ոչ միայն աւագ քահանայութիւն տալ չէ կարելի, այլ և Մոսկուայում կամ ուր և իցէ ունենալ նորան որպէս քահանայ անհնարին է: Իրաւ է, մայրաքաղսքում տասը աւարի առաջ կատարուած այդ դէպքը՝ քահանայ ընտրելու մասին չէ, այլ անդէտին վարձատրելու, սակայն նո կրկին պերճօրէն խօսումը և վկայումը է ժո-

զովրդի մասնակցութեան մեղքի մասին և բայցարութիւններն աւելորդ են հապա ի՞նչ զրութեան մէջ են մեր միւս քաղաքներն ու գիւղերը, նոյն իսկ և այսօր։ Մենք փատահանում ենք ենթազրելու, որ եթէ Սեղրակեան եպիսկոպոսը կտնիխակալ զիտաւորութեամբ սկսած չլենէր իւր յօդուածը, այն ժամանակ չէր ճղնիլ ժողովուրովը անմեղ կացուցանելու և իւր նետերը բացառապէս չէր ուղղել իւր պաշտօնակիցների վերայ, թէ եւ մենք սորանով չենք կամենում ասել, թէ կաշառակերութիւնը բնաւ գոյութիւն չունի հոգեսրականութեան բարձր զասի մէջ... Մեղքը անկասկած երկուստեկ է։ Սեղրակեան եպիս. լաւ պիտի ծանաչէր հայ ժողովուրովը, նորա մատոր զարգացման աստիճանը և աւելի շուտ պիտի ասէր, թէ «ժողովադրութեամբ չէ զգում պահանջածի կարեսրութիւնը։ Սակայն նա այդ չէր կարող ասել կրկնում ենք, որովհետեւ կանխակալ դիտաւորութեամբ է գրել իւր յօդուածը և ապա՝ ծարպիկ կերպով խոյս է տուել իսկական խնդրին անմիջապէս պատասխան տալուց։»

Մարդ որ ուշադրութեամբ կարդում է Արիստակէս եպիս. յօդուածը, ակամացից իրան հարց է առաջարկում ի՞նչ նպատակ ունի այդ զրութիւնը։ Ասել թէ նա լրացնում է Արշէն երեցի յօդուածը, նշանակում է չհասկանալ վերջնի իմաստը։ Մել համար հասկանալի կրլինէր, գուցէ մի որ և է նշանակութիւն էլ ունենար այդ յօդուածը, եթէ նա ցոյց տար այն ծանապարհը, որ պէտք է ընթանալ որով կարելի է հասնել ցանկալի նպատակն. բայց այդ թերեւս պիտանի լինէր ապագայի համար։ Սակայն անհամեմատ աւելի արժէք կ'ունենար յիշեալ եպիսկոպոսի յօդուածը, եթէ նա ցոյց տար, թէ որպէս պէտք է ներկայում վարուել, որ տգէտները քահանայ չդառնանան, երբ ստիպողական պահանջներ կան։ Փոխանակ այդ իրական կէտի մասին խօսելու, Արիստակէս եպիսկո-

պոսը սար ու ձորեր է ընկնում, նիզակներ է կոտրատում,  
չփիտենք ում համար և ինչու համար:

Արժանաւոր քահանաներ ունենալու խնդիրը կա-  
րելի է յարուցանել երկու կերպ. նախ՝ սկզբունքով՝ ար-  
ծարծել այդ խնդիրը և որոշել այն ուստրաստականու-  
թեան և պահանջների սահմանները, որ պէսք է անպատ-  
ճառ Բարձրագոյն չողեար իշխանութիւնը առաջարկէ  
խւրաքանչիւր քահանայացողին. իսկ ապա՝ այնպէս, ինչ  
պէս արծարծել է այդ խնդիրը բար. Արշէն երէցը: Զա-  
նազանութիւնը դոյց մէջ այն է, որ մէկը սկզբունքի տեսա-  
կէտ լինելով՝ կարող է ժամանակով միայն իրադործուել.  
իսկ միւսը՝ քահանայացնելու խնդիրը, որոշ հանգամանք-  
ներից ու պայմաններից է կախուած: Սկզբունքի տեսա-  
կէտից նայելով խնդիրի վերայ, ոչ ոք, հաւտացած, ենք,  
չի ասիլ թէ բարեկիրծ, ուսում առած քահանաներ մեզ  
պէտք չեն և չպիտի աշխատենք ամեն կերպ ձգտել այդ  
նպատակին. դորան հակառակ չէ նոյնպէս և բար. Արշէն  
երէցը: Սակայն բար. Արշէն երէցի բերած դէպքը հենց  
այն կողմից էլ ուշադրութեան արժանի է, որ հարցը  
զրկում է որոշ շրջանակի մէջ—առաջ են բերվում զա-  
նազան պայմաններ զիւղացիների կողմից և հասարակա-  
կան կայութեան կողմից: Իսկապէս այսոեղ պէտք է ցոյց  
տալ՝ խօսելով բար. Արշէն երէցի յօդուածի մասին, թէ  
ինչպէս կարելի է այդ հանգամանքների ու պայմանների  
մէջ գանուելով՝ յաջողութեամբ զործն առաջ տանել,  
այսինքն՝ առանց քահանայի մնացած զիւղերին լաւ, ար-  
ժանաւոր քահանաներ տալ: Այդ բանին բաւականաշափ  
ուշադրութիւն չէ դարձել Արևսակէս եպիսկոպոսը և  
աւելի փոխում է խնդիրը սկզբունքի հարցի:

Բար. Արշէն երէցի յօդուածի առթիւ խօսելով ոչինչ  
նշանակութիւն չունին ոչ անցեալը, որին զիմում է Ա-  
րիստակէս եպիսկոպոսը, ոչ սիմոնականութիւնը, ոչ ծա-

Նօթութեան մէջ յիշած իւր ընդարձակ յայտարարութիւնը և ոչ մուրհակը, ոչ հոգելոյս հայրապետին անուանարկելը, ոչ Սկանի վանքից բերած վկայականը և ոչ էլ 1878 թ. մի հայիսկոպոսի արտասանած քարոզը: Գուցէ այդ բոլորը նշանակութիւն ունենար մի ուրիշ գէպքում; Երբ բացառապէս յօդուածի նիսթը այդ լինէր, իսկ ներկայում նոքա բոլորովին անտեղի են, ոչ մի կապ չունին բար. Արշէն էրէցի քարոզի հետ և չեն լուսաբանում ոչ մի հէտը: Հասկանալի է, որ այդ բոլորն Արիստակէս եպիսկոպոսը զրել է այն նպատակով, որ մեղագրանքը կուտակիէ միայն հոգեոր իշխանութեան վերայ և ժողովուրդը արդարացնէ: Սակայն նորա այդ փաստաբանութիւնը, խախուտ է և անհիմն, որովհետև միակողմանի է և ուղղած գէպի որոշ նպատակ, մինչդեռ քննադատական յօդուածի արժանիքը միշտ կայանում է նորանում, որ հարցը լուսաբանում է զանազան կողմից:

Բար. Արշէն էրէցի քարոզում ժողովուրդը դիմում է ազգիս Վեհափառ հայրապետին և տսում:

«Հայրի՛կ, մէք զարմանում ենք, երբ Դուք դպրոցական և արժանաւոր տիրացու պահանջում էք մեզմէ. մի՞թէ այդ պարտք մե՞րն է, կամ թէ ժողովովորդ պարտական է սուրբ եկեղեցւոյ սպասաւորութեան պէտք լեցնելը չէ՞ որ այդ պարտք բոլոր վիճակաւոր առաջնորդաց պատկանում է, որոց ջանք պիտի լինի միշտ եկեղեցւոյ հոգեոր պէտքեր հոգալ և պատրաստել: Իսկ ամենանամեծ պարտիք Մայր Աթոռին է, որուն ձեռք լինելով Բարձրագոյն Տեսչութիւն, կարող է ամեն բան տնօրինել և կարգադրել, մեր վանքերու մէջ ընծայարաններ շինել տալ և մեզ համար քահանայացու պատրաստել:

Սակայն Արիստակէս եպիսկոպոսը, շատ լաւ ձանաչելով հայ ժողովրդին, «Քաղաքացուց սկսած մինչեւ զիւղացին», այս անդամ անընդունակ է հանդիսանում հասկանառ նոյն տղէտ զիւղացու յայտնած մաքի իմաստը և զնահատել նորան: Իւր երեակայսէան մէջութիւնից

նկատեցէք թէ ինչ է ասում հօգելոյս Գէորգ ԱՎ կաթողիկոսի այն կոնդակի մասին, որով նա պատուիրում է ախրացուներին ուղարկել վանքեր, որ սովորեն քահանայական դիտելեք.

«Ի՞նքը կոնդակ տուողը շատ լաւ գիտեր, թէ մեր վանքերը բարոյական որպիսի անկման են հասել և նրանցում նստող վանահայրերի համար ուսումն ու գիտութիւն վաղուց դարձել են շռայլութեան առարկաներ»:

Յրիստուակէս եպիսո., որ անտարակոյս յաւակնութիւն ունի իրան շատ յառաջազէմ և լուսաւոր գաղափարներով առգորուած մի եղակի ու բացառիկ եպիստոպոս կործելու, նա պիտի բացատրէր մեզ, թէ ինչո՞ւ վանքերը ներկայումս կամ ապագայում չեն կարող ընծայարաններ ունենալ և այդ ընծայարաններն ել չեն անենալ բարերար ազգեցութիւն։ Տգէտ ժողովովի ասածն ունի իւրագարացի կողմը և նա արժանի է ուշադրութեան։

Եմինքը գիտեն, որ անցեալում վանքերը մեծ գեր են կատարել մեր մատառ կեանքում. զիտեն նոյնպէս, որ այժմ էլ Տաճկական Հայտաստանում կան վանքեր, ուր գտնվում են միաբանութիւն և գոլոց։ Տարաբաղդարար Ռուստատանում վանքերի զրութիւնը համեմատաբար անհոխանձելի է, բայց չենք կարծում, որ անհաւարին լինի նոցա վերականգնել և այնահեղ կենարոնացնել որոշ նպատակի համար նախապատրաստական լպրանոյներ կամ ընծայարաններ։ Եթէ այսօր մենք ունինք ուսումնարաններ, ի՞նչ տեղ են նոքա, եթէ ոչ եկեղեցներին կից։ Եթէ այսօր էջմիածնի միաբանութեան մէջ կայ ձեզ սկս, սրբազն հայր, զարդացած ու լուսամիտ եպիստոպոս, ինչո՞ւ ձեզ չի կարելի յանձնել զիսյուք, Տաթևի վանքը, որ գուք այնուեղ որոշ շրջանի համար քահանաներ սպատրաստէք, մի ուսումնարան ել ունենաք երեխանների համար։ Մի՞թէ ձեզ յանձնած ընծայարանը կամ ուսումնարանը չպիտի տայ ձեր

անուան արժանի արգասիք։ Բայց այսօր կարող է լինել մի Սելբակեան, որ մի որոշ շրջանում, դիցուք, կարող է օգտակար լինել, իսկ վաղը կարող են լինել ոչ թէ երկու- երկը, այլ տասը-քսան Օրմանեան սրբազններ, որոնք լուռ ու համեստ կերպով Սրբաշու վանքում աւելի կ'ա- նեն, քան թէ Արխատակէս եպիսկոպոսը խօսելով, որպէս կեղծ ցաւակից ազդի ցաւերին Եւ մի՞թէ յարմար չէր լինիլ, որ Արխատակէս եպիս. սինօդի օրագրութեամբ ցմահ Շողակաթ վանքի վանահայր նշանակուած լինելով, հե- ռանար մենաստան և փորձի համար մի ընծայարան բաց անէր արժանաւոր քահանայացուներ պատրաստելու։ Այն ժամանակ նա աւելի մեծ իրաւունքով կընախատէր Սեա- նայ վանքի վանահօրը՝ որովհետեւ, վատահանում ենք ենթաղբել սրբազնի սպատրաստածներն աւելի համա- պատասխան կըլինին իրանց կոչման. սակայն «օգնելու տեղ՝ լոկ կըխօսենք»։

Մենք կըկամենայինք մի փոքր ևս ընդարձակել մեր խօսքը ընծայարանների մասին, կամ ինչպէս կամիք ա- նուանեցէք այն հիմնարկութիւնը, որի նպատակը կըլինի լու քահանայացուներ պատրաստել։ Ասել թէ բնաւ նոքա անպէտք են և անխորհուրդ, մենք գժուարանում ենք ըն- դունելու, որովհետեւ իրօք ի՞նչ վետ պիտի լինի մի այն- պիտի հիմնարկութիւնից, որի նպատակն է լինելու պատ- րաստել չափահաս մարդկանց որոշ կոչման համար։ Կա- րող են ասել, թէ Հոգեւոր կոչումն սատաննելու համար մար- դիկ պիտի պատրաստեն թեմական Հոգեւոր գպրանոցներն ու էջմիածնի Ճեմարանը։ Համաձայն ենք, որ այդ հիմ- նարկութիւնները պիտի ծառայեն այդ նպատակին։ Սա- կայն դորան համնելու համար կամ պիտի նեղ կղերական ոգւով կըթել ու մեծացնել այդ սաներին, և կամ պիտի սովիտել։ Երկու եղանակն էլ ցանկալի չեն։ Մացնել այն- պիտի ուղղութիւն, որ աշակերանները միայն հոգեւոր կոչման

պատրաստ լինին, ցանկալի չէ զանազան պատճառներով. իսկ ստիպելն էլ անհնարին է, որովհետև աւելի վատ հետևանքներ կարող են լինել: Ընծայարանները բաւականին կարող էին նպաստել այդ գործին, այստեղ միայն քննադատութեան նիւթ կարող է լինել, թէ որպիսի ուղղութիւն նորա պիտի ունենան, զուտ հոգեսր, թէ պիտի աւանդուին և այնպիսի զիտելիքներ, որ անհրաժեշտ են գէթ փոքր ինչ ընդլայնելու քահանայացողի աշխարհայեցողութիւնը. միայն հոգեորականներ պիտի լինին այդ ընծայարանների զեկավարները, թէ անհրաժեշտ է և աշխարհականների մասնակցութիւնը. միայն վանքերում պիտի լինին այդ ընծայարանները, թէ կարելի է և քաղաքներում, որովհեաւ ամեն մի վանքում կարող են չլինել յարմարութիւններ, իսկ քաղաքներում կարող են լինել յարմարութիւններ և միջոց հսկելու ընծայարանների գործունէութիւնը: Անկասկած խնդրի էական կէտերն են սոքա, որոնց վերայ աւելի լուրջ ուշադրութիւն պէտք էր դարձնել և ոչ թէ զարհուրել ընծայարան» բառից և աղաղակել, թէ մեղ պէտք չեն, վանահայրերը տղէտ են, ուսումն ու զիտութիւնը նոցա համար շռայլութեան տարկաններ են:

Ազգի վշտով տանջուռող Սեղբակեան եպիսկոպոսը միանգամնայն զարհուրում է, որ այսօր,

«Երբ հայրապետական գահի վրա բազմել է «Արծիւ Վասպուրականի», խմբագիրը և «Դրախտի ընտանիքի» հեղինակը, այսօր, երբ հասած պիտի համարենք այն բաղձալի ժամը, որ պէտք է իրադրծված տեսնենք ազգի կողմից յարուցված-հասունացրած և Վեհափառի սրտին մօտիկ կենսական մեծ խնդիրն առանց որ և է գժուարութեան, յանկարծ—ինչպէս «յանկարծ» խօսքից յետոյ հերիաթներում մի զարհուրելի բան է հետեւում, նշյն գուք, ընթերցող, այստեղ սպասեցէք,—«Արարատի» էջերում երեւում է Տ. Արշէն երէցի քարոզը, որ կարծես թէ նպատակ ունի ասելու, թէ ինչպէս կարելի է տղէտները մերժել եկեղեցուց հեռացնել, քանի որ ընտրողը ժողովուրդն է»:

Իւր զարմանքը հաստատելու համար նա բերում է բար. Արշէն երկյի խօսքերը, թէ ինչ կարող է անել հոգեոր իշխանութիւնը, երբ ժողովուրդը «կրթախանձէ», կը պահանջէ, համախօսական ժողովներ կրկազմէ, հարիւրաւոր սատրազրութիւններ թափում են, խնդրազրին վերայ, վաւերական կնքով էլ զրոշմելով» Սրտի ցաւով պիտի ասենք, որ մեր իբրու զարդացած եպիսկոպոսը լաւ չէ ըմբռնել կամ չէ կամեցել հասկանալ բար. Արշէն երկյի յօդուածը, որ սկզբում հենց ցաւակցութիւն է յայտնում; թէ «շխտակ խօստովանելով կամաչեմ խօսելու. մեք քահանաներս էլ մեր կորդացած բան չենք հասկանում, որովհետեւ դպրոցի երես երես+ ունաժ չէ»... Եւ Սեղրակեան ոչ թէ քահանան, այլ եպիսկոպոսը հաստատում է այդ խօսքերի ճշմարտութիւնն իւր յօդուածով: Փոքր ինչ յետոյ բար. Արշէն երկյը շարունակում է.

«Գիտէք գուք, ժողովուրդ, մեր քահանայից գութանի խոփարդէն անպիտան և գուլ է, որովհետեւ ոչ դպրոցի հնոցի մէջ մոտած են և ոչ էլ կրթութեան կոսմով ծեծուած ու մխուած են, մեք էնպէս խամ երկաթ մնացած ենք, մեր խոփ պողպատով զօդուած չէ: Հապա ինչպէս կարող եմք ժողովուրդի կորդացած ու խստացած երկիր վարել»:

Իսկ իւր յօդուածը նա ամիտիում է հետեւել տողերով.

«Սիրելի ժողովուրդ, ես զրելով և քարողելով քո ճաշակ պիտի բանամ: Այժմ այսքան բաւական է, գարուն եկած է, երգում է ճախրակ մանիկ, լըծէ լըծէն. երթանք՝ ես դէպի դպրոց իմ դաս, դուք դէպի ի դաշտ ձեր գութան»:

Անհուն սէր զէպի ժողովուրդը բուրող այս տողերից պարզ երեւում է, թէ որքան բար. Արշէն երկյը Սեղրակեան եպիսկոպոսից ուսումնասէր և դպրոցասէր է, թէ որքսն նա մտածում է կրթուած ու զարդացած քահանաների մասին: Մնում է միայն զարմանալ, թէ ինչ պէս Սեղրակեան եպ. շատովել է զրել իւր յօդուածը և

զուր աեղը մեղադրանք է թափել բար. Արշէն էրէցի վերայ, ուշադրութեամբ կարգացած չլինելուն պատճառով։ Սակայն նորան պէտք էր և՛ ուշադրութեամբ չկարգալ և՛ դիտմամբ յեղաշրջել, որովհեաև ուրիշ կերպ նա չէր կարող յօդուած զրել և իւր ցանկալի նպատակին հասնել։ Նա պիտի խոյս տար իրականութիւնից, որովհետև հնար չէր ունենալ մի միջոց ցոյց տալու, որով կարելի լինէր ժողովրդին բաւականութիւն տալ լսւ, ընտիր քահանաներով. Եթէ միջոցը մի կերպ ցոյց էլ տար, չպիտի կարողանար ասել, թէ ներկայումս այդ ընալիր և լսւ քահանաներն ինչափեղից կարելի է վերցնել, զանել։ Սեղրակեան եպ. լոկ դասողութիւններով և արժանագին դասողութիւններով է կամենում հարցը լուծել.

«Սակայն այդ խօսքերը,—ասում է նա,—մի եպիսկոպոսի բերանից են լսվել թէ մի երէցի, բարեբաղդաբար շատ թօյլ, շատ անզօր են արդարացնելու հոգեոր վարչութիւնը, եթէ վերջինս իրան նեղն ընկած կըհամարի թափանձանքների հանդէպ, և կոչված լինելով եկեղեցու իսկական շահերը պաշտպանելու՝ կը զիջանի նրանց հակառակ գնալ . . .»

Մի փոքր էլ յետոյ նա իմաստալից խրատ է տալիս, թէ ինչ և ինչպէս պէտք է անել.

«Փորձեցէք մի կողմից իշխանական իրաւունքի և կամքի վայելու սահմանի մէջ մնալ և միւս կողմից հասկացնել բացարել նորան, թէ այս կամ այն ինսդրում նա սիսալվում է, կամ ինչ որ թափանձում, պահանջում է, վեասակար է իրան և նա պատրաստ է հլու հպատակութեամբ լսել իր եկեղեցականին»։

Սոքա միայն խօսքեր են, պէտք է առօրեայ պահանջներին բաւականութիւն տուլ. պէտք է ասել, թէ ժողովուրդը ինչպէս կարող է առանց քահանայի մնալ և կառավարուել, մինչև որ Սեղրակեան եղիս. պէս ուսեալ քահանաներ կըլինեն։ Այստեղ հարցի պատասխանը գժուաբանում է։ Գիւղացիք զիմում են։ Վեհափառ հայրապետին, խնդրում են, որ իրանց բերած տիրացուին քահա-

նայութիւն տայ, յայտնում են, թէ ինչ հանգամանքներից զրգուած նոքա կամենում են իրանց քահանան ունենալ իսկ երբ չայրիկը թեթևակի քննելով տեսնում է, որ նոցա բերած տիրացուն անյարմար է, պատրաստականութիւն չունի, տգէտ է, անարժան է այն կոչման, որ պիտի ընդունի և մինչեւ անդամ աւելացնում է, թէ «լաւ է, որ առանց քահանայի մնաք, քան թէ տգէտ քահանայ ունենաք»... Բայց գիւղացիք ունին և իրանց պատճառաբանութիւնները, որոնց բոլորովին անտես անել չեկարելի և պէտք չէ խցս տալ այդ իրողութիւնից, ինչպէս անում է Արիստակէս հաղիսկոպոսը: Նիւթը այնքան հանրածանօթ է, որ մենք գիւղացւոց առարկութիւնները մի առ մի չենք թուիլ միայն կըբերենք հետևեալ տողերը: «Բայց ի՞նչ անենք, փարանած ու շուտրած ենք: Դու էլ գիտես, հայրիկ, որ ուսեալ և արժանաւոր ընծայացու չունի՞մք, չունի՞մք, չունի՞մք»... իսկ քահանայ պէտք է, անհրաժեշտ է, իւրաքանչիւր քայլափոխում գիւղարութիւնների ու նեղութիւնների են հանդիսպում խեղջ գիւղացիք: Թոնզ մեզ բացատրէ Արիստակէս հաղիսկոպոսը, թէ հոգեւոր կառավարութիւնն այս հանգամանքում ի՞նչպէս պիտի վարուի: Գիւղը, ենթալրենք, բաղկացած է, 80 կամ 100 ծխից, գիւղացիք քահանայ չունին, բայց մերտել պսակել, թաղել և այլն պէտք է... նոքա գտել են մի տգէտ տիրացու և կամենում են իրանց համար քահանայ ձեռնապրել: Եթէ այդ տիրացուն անարժան է քահանայ լինելու, թող հոգեւոր կառավարութիւնը կարգադրութիւն անէ և այնպիսի կարգադրութիւն, որ գիւղացիք քահանայ ունենան և քահանան տգէտ էլ չինի: Եթէ Արիստակէս եպիս, այս կէտի վերաբերմամք մի բան զրականապէս ասած լինէր, այն ժամանակ մենք կ'ասէինք, թէ մի նոր միտք է աւելացրել Արշէն էրէցի յօդուածին. իսկ քանի որ այդ չկայ, այդ ամենաշօշափելի

կէտում նա իւր ընթերցողին թողնում է մոլորութեան մէջ այն ժամանակ մենք ակամայ հարց ենք առաջարկում ինչու է գրուած այդ յօդուածը։ Սակայն ներեցէք, աեսէք, թէ որքան միամիտ է մեր յօդուածագիրը։ Փակագծում ասում է. «Բարեկ. Արշէն երէցը լսած է արդեօք, որ մի գիւղի ժողովուրդ ընտրել է ձեմարանից դուրս եկած երկու երիտասարդների և սրանք յօժարութեամբ յանձն են առել նրանց համար քահանայանալ»։ Ներելի լինի հարցնել, թէ զա ի՞նչ մի մեծ ու նշանաւոր բան է, որ անպատճառ պէսք էր իմանալ բար. Արշէն երէցին։ Եթէ հայերը երկու-երեք գիւղ ունենային և երկու ձեմարանից դուրս եկածներ նոյն համար քահանայացած լինէին, այլ ևս խօսակցութեան տեղիք չէր լինիլ. բայց քանի որ գիւղերի թիւն երկու-երեք չէ, ուստի թող «Մշակի» արժանագոյն աշխատակիցը բարեհաճի բացատրել մեզ, թէ ո՞րոշ հանդանունէքո՞ւ-մ ի՞նչ է և ի՞նչ պէտք է անել։ Ապաքէն այդ տողերը ոչինչ նշանակութիւն չունին։ Գուցէ Սեղրակեան եալ. կամենում է ասել, թէ ձեմարանից աւարտածներն միշտ սպատրաստ են գիւղ գնալու, բայց խնդրող չկայ...—մենք հաւատալ դորան դժուարանում ենք և չենք կարող այդպիսի անհիմն եղբակացութիւն անել. իսկ եթէ հեղինակը կամենում է, թող այդպէս լինի։

Սեղրակեան եպիսկոպոսը վերջացնում է իւր յօդուածը՝ թափելով բոլոր մաղձը.

«Եյս տեղ արդէն կանք ենք առնում,—ասում է նա,— որովհետեւ պատասխանելու պէտք չենք տեսնում. մենք միայն ստորագծեցինք վերջին տողերը, որ ընթերցողի խորին ուշագրութիւնից չըվթափեն նրանք. «Արարատի» էջերում փայլող այդ տողերը ապագայ պատմաբանի համար հատողներ կազմելու նիւթ տուող գանձ են»։

Գիտէ՞ք, թէ այդ ինչ տողեր են.

Տգէտ ժողովրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր և ընական կերպով չեն յարմարիր իրարու։

Այդ խօսքերն ասում են գիւղացիք Հայրիկին, կան-  
խապէս թոյլտուութիւն խնդրելով նորանից, որ «գիւղա-  
ցի կոպիտ խելքով մի փիլխոփայութիւն» անեն: Զենք  
հասկանում, թէ ինչու տգէտ գիւղացու այդ փիլխոփա-  
յութիւնը Սրբատակէս եպիսկոպոսի աչքում մի զարհու-  
րելի բան է երևեցել, և նա սպառնում է, որ ապագայ  
պատմաբանի համար այդ փիլխոփայութիւնը հատորներ  
կազմելու նիւթ տուող գանձ է: Մակայն մասամբ զար-  
մանալի չէ այդ. եթէ «Մշակի» անգուգական աշխատա-  
կիցը նոյն լրագրի մի մանր լուրից կարող է ամեն տե-  
սակ բարուրանք ու լուսանք թափել իւր պաշտօնակցի  
վերայ՝ չունենալով առելի զօրաւոր փաստեր, բացի այդ  
մանր, պատահական լուրը, այն ժամանակ նորա երևա-  
կայութիւնը կարող է պատմաբանի համար հատորներ  
կազմելու գանձ գտնել այդ տողերում, և գուցէ այդ հա-  
տորների յառաջաբանն է զրել Սրբատակէս եպիսկոպոսը:

Մենք կարծում ենք, որ տգէտ ժողովրդի այդ փիլի-  
սոփայութիւնն ամենեին զսւրկ չէ ճշմարտութիւնից:  
Նախ և առաջ այնտեղ կայ մի փոքրիկ բառ մեծ նշա-  
նակութեամբ, որ թէեւ աչքի չէ ընկնում, բայց և այնպէս  
կարելի չէ առանց ուշադրութեան թողնել—գա «շատ»  
բառն է: Եւ ոչ ոք չէ ասիլ, որ ներկայ պարագաներին  
մեր տգէտ ժողովրդին «շատ ուսեալ» քահանան կը յար-  
մարի: «Շատ ուսեալ» մենք հասկանում ենք համալսարանը  
աւարտած: Թերեւ մեզ ասեն, որ էջմիածնի ճեմարանն  
աւարտագները ինչու չեն կարող լինել գիւղական քահա-  
նայ, մանաւանդ որ մի երկու դէպք էլ եղել են: Նախ և  
առաջ չդիտենք, թէ էջմիածնի ճեմարանից գուրս եկած-  
ներն որքան «շատ ուսեալ» են, բայց յամենայն դէպս կա-  
րող են և պիտի լինեն: Տարաբախատաբար մենք այդ էլ չենք  
տեսնում, իսկ մի երկու ծաղիկ դեռ գարուն չէ բերում: Կը գայ  
ժամանակ, երբ գիւղացին էլ ուսման ու կրթու-

թեան համն ու հոտը կ'առնի, սերնդէ-սերունդ կըլլարգանայ, այն ժամանակ և քահանաները կըլինեն «շատ ուսեալ» և բնական կերպով կըլյարմարին իրարու։ Այժմեան շատ ուսեալ քահանան յաջողութիւն կարող է չունենալ զիւզացիների ըջանում և նոքա միմեանց կարող են ըշհասկանալ։ Սորանով մենք բնաւ չենք ուղում տսել, որ տղէտ ժողովրդին անպատճառ ալէտք է տուլ և տղէտ քահանայ. Թող առ այժմ այդ քահանան լինի ուսեալ, նորանից գէթ այնքան ուսեալ, որ կարողանայ առաջնորդել նորան դէպի ուսումն ու կրթութիւն, որ կարողանայ բարի օրինակ և խելացի զեկավար լինել նորա իւրաքանչիւր զործում. իսկ «շատ ուսեալը» կտրող է և չիմանալ նոցա հետ զործելու եղանակը...

Հանգույեալ Գրիգոր Արքունին, առաջարկելով Արիստակէս եպիսկոպոսին որպէս կաթողիկոսացու, ասում էր, որ նա Հայոց Հայրիկին զաղափարակից է. բայց որքան նա պիտի հիասթափուէր՝ կարգալով սրբազնի այդ յօդուածը։ Հիասթափուած պիտի լինի այժմ, կարծում ենք, և «Մուրճ» ամսագիրը։

«Մուրճ» ամսագիրը, մարտի տեսրում խօսելով բար. Արշէն երէցի քարոզի և Արիստակէս եպ. Սեղրակեանի յօդուածի մասին, խոստովանում է նորա բանակո-ուական ձեր և աւելացնում է. «Հեղինակի պահանջները չեն տարբերվում Արշէն երէցի պահանջներից» և բերում է ապացոյներ. Մենք միայն մի հարց կ'առաջարկենք «Մուրճի» յարգելի խմբադրութեան. եթէ նոցա պահանջների մէջ տարբերութիւն չկայ, ի՞նչ հանդամանք էր ստիպում Արիստակէս եպիսկոպոսին հրապարակ դուրս գալ, բանակո-ուական ձեռվ նոյն պահանջները կրկնելու։ Անկասկած մի բան կայ և այդ բանը «Մուրճի» յարգելի խմբադրութիւնը զիտմամբ լոռութեան է տալիս, որ ներկայ պայմաններում աններելի է։ Զենք կառկածում, որ «Մուրճի»

խմբագրութիւնն ևս զղում է մի անյարմարութիւն և այդ անյարմարութիւնն այն է, որ խօսքն իւր առաջարկած կաթողիկոսական երկու թեհնածուների մասին է, որոնցից մեկն ընարուած է ազգի միահամուռ ցանկութեամբ, իսկ միւսը չորից իսկ ցանկը չէ մտած: Այդ անյարմարութիւնն է պատճառը, որ «Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը ցաւելով, բայց շատ քաղաքավարի կերպով արձանագրում է մի իրողութիւն, որ «Ով հաւատաց» յօդուածի վերջում չակերտների մէջ դրած տողերը բաւականաչափ զգուշութեամբ և ձշտութեամբ չեն արաւագըրւած Սրչէն երէցի յօդուածից... «սրբազն Արիստակէսի յօդուածում վերագրւած են (այդ խօսքերը) նաև Հայրիկին, մինչ դեռ Սրչէն երէցի քարոզում նոյն այդ խօսքեր արտասանողը միայն տգէտ ժողովուրդն է»: Կարող ենք հաւատայնել «Մուրճի» յարգելի խմբագրութեան, որ այդ վարմունքին չէ կարելի ասել, թէ «բաւականաշափ զգուշութեամբ և ձշտութեամբ չեն արտագրւած», այլ առ նուազը դա անբարեխղճութիւն է, որ իրան չէր թոյլատրի նոյն իսկ Մալումեանը: Կինում են դէպքեր, երբ վարմունքին իւր իսկական անունն են տալիս, և Սրբիստակէս սրբազնի յօդուածը այդ ահապկներիցն է:

«Արարատ» ամսագիրը վաղուց արդէն հրատարակվում է, նորան աշխատակցել են և՝ քահանաներ, և՝ արեղաներ, և՝ միաբաններ, և՝ վարդապետներ, և՝ եպիսկոպոսներ, և՝ աշխարհականներ: Ոչ մի անգամ և ոչ ոքի յօդուածը չէ արժանացել Սեղրակեան եպիստային խորին ուշադրութեան, որպէս բար. Սրչէն երէցի յօդուածը: Ոչ մի անգամ և ոչ ոքի յօդուածը չէ վայլել «Արարատի» էջերում այնպէս, ինչպէս բար. Սրչէն երէցի քարոզի մէջ տգէտ ժողովովի այդ կոպիտ փիլիսոփայու-

թիւնը, և ոչ մի յօդուած ապագայ պատմաբանի համար հասորներ կազմելու նիւթ տուղող առատ գանձ չի եղել ինչպէս բար. Արշէն երեցի յօդուածը: Ի՞նչ է արդեօք դորա պատճառը. ինչու երկար տարիներ հրատարակուող «Արարատի» և ոչ մի տողը չարժանացաւ այդ սկասուին: Ի՞նչ է պատճառը, որ Սեղրակեան եպիս. սուր հայեացքից միայն այդ յօդուածը չէ վրիպել և ոչ միայն չէ վրիպել, այլ և աշխատել է ամենից շուտ խօսել: Դեռ նոր միայն այդ յօդուածը լցու է տեսնում, և ահա աղատամիտների կամ, որ աւելի համապատասխան է, մոքից աղատների օգապարիկ «Մշակ» թերթում, չպասելով անգամ հերթին, երեան է գալիս Սեղրակեան եպիս. այդ թղթակցութիւնը, որ ապագայ պատմաբանի համար մի քանի սև էջեր գրելու նիւթ կը այց: Աներկպայելի է, որ Սեղրակեան եպիս. գիտէր, թէ ինչ է անում և ում յօդուածն է քննաղատում, և այդ պարզ երեւում է նորա յօդուածի վերջին տողերից, թէ պատմաբանի համար որպիսի գանձ են հասորներ գրելու համար: Եթէ Արշէն երեցը լինէր մի հասարակ զիւղական քահանաց, Արիստակէս եպ. այդ յանդուզն խօսքերով չէր վերջացնիլ իւր յօդուածը և ուշաղրութիւն անդամ չէր գարձնիլ նորա վերայ, 'ինչպէս և չէր գտրձնում: Մինչեւ անդամ ենթագրենք, որ նա չէր իմանում, թէ ով է հեղենակը,—կրկին նորա արած քայլը չափազանց համարձակ է և անվայել: Գոլով հոգեորական, լինելով եպիսկոպոս և մինչեւ անդամ կաթողիկոսական գահի թեկնածու լինելու յաւանիութիւնն ունենալով, նա շատ լաւ պիտի հասկանար, թէ վարչութեան մէջ ինչ դեր է խաղում կարգապահութիւնը (ՃԱԾԿՈՒՆԻԱ), թէ ողքան մենք զուրկ ենք կարգապահութիւնից և թէ որ քան նա մեղ համար անհրաժեշտ է: Եթէ բարձրաստիճան հոգեորականը, կրկնում ենք, եպիսկոպոսը, համարձակութեան և անբարեխղջութեան մի այդպիսի օրինակ է հան-

զիստանում: Հապա ի՞նչպէս կարելի կըլինի ղսպել փոքր աստիճան ունեցողներին: Միթէ Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանի համար բաւական չէր լոկ այն հանգամանքը, որ ազգիս Աստուածարեալ Կաթողիկոսը իւր կոնդակի մէջ մատնանիշ է անում այդ յօկուածը և առաջարկում է կարգալ նորան: Եւ եթէ Արիստակէս եպիսկոպոսը անպատճառ կամենում էր և իւր լուսաւոր ու առաջադէմ մոքերը յայտնել ազգին, դարձեալ վայել էր, որ նա, որպէս ս. Էջմիածնի միաբան, զրէր նոյն «Արարատ» ամսագրում և անտարակշյո Նորին Վեհափառութեան հրամանով կամ թշրիւութեամբ և տւելի վայելուչ ոճով ու ձեռքի: Այդ վարմունքն ինքն ըստ ինքեան մի քստմելի երեցիթ է և միանդամայն անպատուարեր ամեն մի հոգեւորականի, թող թէ եպիսկոպոսի:

Մամուլը խօսեց, զբաղուեց այդ խնդրով. ոմանք բաւականին համարձակօրէն և իրանց կօչման համապատասխան ձեռփ, ոմանք էլ աւելի մեղմ և քողարկուած կերպով. դանուեցան և այնպիսիները, որոնք գերազասեցին լուել, որովհետև նոքա միաժամանակ երկու տան կատու կամին լինել: Եղան և Սեղրակեան եպիս. պաշտպաններ, ինչպէս «Մշակ» լրագրի խմբագրութիւնը in corpore, բժ. Մ. Զ. և ուու զանուար Արիգոր Արծրունու հետեւողները բաւականին դաւածանեցին հիմնագրի սկզբունքին: Հանգուցեալը միշտ ասում էր, թէ այսօր նա կարող է մէկին զովել և զրուատել, իսկ վաղը նոյն մարդուն մորակել և պարսաւել, եթէ նա մի վատ ու պախարակելի գործով արժանի կըլինի դրան: Բայց եթէ պատահում էր, որ նա իւր զոված մարդուն չէր պախարակում վատ գործի համար կամ, եթէ սխալվում էր, յետ չէր առնում իւր խօսքը, դորա պատճառը նորա բնաւորութեան ժառանգական յատկութիւնն էր: Սակայն այսօր «Մշակի» խմբագրութեան բոլոր անդամներն աշխատակից-

ների հետ միասին նոյնպէս ժառանգել են այդ առանձնայացակութիւնը և այնքան պատուասէր են, որ խիստ զգոյշ առաջնորդող դրելուց յետոյ դեռ վստահանում են աւելի պնդել իրանց արած այդ անգոսնելի սխալանքը: Խօսեց, երեխ, ամեն տեղ և հասարակութիւնը, շատերը զայրացան, և մինչև անգամ բազմաստորագիր զժզոհութիւններ յայտնուեցին:

Ցաւելով պիտի արձանագրենք այն ախուր իրողութիւնը, որ «Մշակ» լրագիրն այս անգամ ևս անընդունակ եղաւ խոնարհուելու այն մեծ հեղինակութեան առաջ, որ ճանաչուած է համայն ազգի կողմից և կարծես ճրդնում է հեղինակութիւն ունեցող ճանաչել Արիստակէս եպիսկոպոսին, որ գեռ շատ և շատ հեռու է գորանից: Բայց խոնարհուել հեղինակութիւն ունեցող մեծ անձնաւորութիւնների առաջ մեր բարոյական պարտականութիւնն է և դա անհրաժեշտ է նոյն իսկ այն տեսակէտից, եթէ «Մշակը» կամենում է, որ ինքն էլ հանգույցեալ Գրիգոր Արծրունուց յետոյ գէթ սակաւիկ հեղինակութիւն ունենայ ուրիշների աչքում: Այդ աւելի տղնիւ վարմունք կը լինէր, քան այն անտեղի ակնարկութիւններն, որոնք յաճախակի տեղի են ունենում և անվայել են փոքր իշտուէ պատուածանաչ պարբերական հրատարակութեան: Մենք չենք նկառում, թէ մեր անընդունակութեամբ որպիսի վաս օրինակ ենք հանողիսանում այն ժողովրդին, որին կամենում ենք առաջնորդել: Ամօթ, հազար ամօթ: Թողլ «Մշակի» խմբադրութիւնը վերստին կարգայ և միշտ աչքի առաջ ունենայ ազգիս Աստուածարեալ հայրապետի անդրանիկ կոնդակի այն տողերը, որ նուիրուած են հայ խմբագիրներին.

«Ողջն Զեզլ խմբագիրք հայոց, որ ճգնիք անդադար յաշխատութիւնս և իրրե հրապարակախօս մունետիկ՝ գրով ու թրդթով վարէք զժողովուրդն ի յառաջդիմութիւն և քաղաքակըր-

թութիւն՝ բանալով զմիտս նոցա ընդունել զլաւն և խորշել ի վատէն, Զգոյշ զգոյշ, ջանացէք միշտ ի շննել, զի այս է Զեր սեպուհ պարտիք»:

«Հանդէսը» այսօր իւր խորին ցաւակցութիւնն է յայտնում Նորին Բարձր Օծութեան այդ անօրինակ ղեղծման, եթէ չասենք ըմբոստութեան առթիւ և վստահ ենք, որ նա իւր հայրական վեհանձնութեամբ կ'ասէ. «Հայր, թող դոյց, զի ոչ դիտեն դինչ զործեն»: Բայց այսօր ցաւածէ աղջը. նա վշտացած է, որ հոգեւորականութեան բարձր գասի մէջ կան ստամբակներ, որոնք ամենուրեկ ձանապարհի վերաց աւելացնում են փուշ և տատասկ: Աղջը այսօր ականատես է, ինչպէս մի եպիսկոպոս՝ մոռնալով իւր չափն ու սահմանը, հակառակ է գնում այն Պետի գէմ, որի առաջ հինգ միլիոն ժողովուրդ խոնարհում է իւր զլուխը և օրէնք է համարում իրան համար նորա իւրաքանչիւր խօսքը: Մենք ոչինչ չունինք առաջարկելու այդ առթիւ, վերջացնելով մեր յօդուածը, մենք կըբերենք նոյն Արիստակէս եպիսկոպոսի խօսքերը.

«Եյլ զի սրբոցն և արանցն Աստուածայնոց գժւարակուս է միշտ ուղին, և ի Քո, Վեհափառ Տէր, յանցս գնացիցդ բազմապատիկ փուշք և տատասկէք են ամենուրեկ, այլ հաւատամք, եթէ Տէր զօրացուսցէ զգարշապարս ոտից Քո անխոցոտելի ընթացինք կոխել զփուշն ի տրորումն ան վերը նձիւդ, և մաքրեսցի ան դաստան մեր հոգեռոր ի բոււցանել զսերմանիս սննդարարս և զծաղկունս անուշահոտս, արժանիս քրոտանց պատկառելի ձակատուգ»:

Մ. ԲԱՐԻԽՈՒԴԻՄ.ՐԵԱՆ.



## ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ

Թէւ մենք յայտարարել էինք, որ «Ճանդիսի» Վ և VI գրքերը լոյս կըտեսնեն մի հատորում ամփոփուած և այդպէս էլ դասաւորում էինք նիւթերը տապալրութեան ժամանակ, սակայն մի քանի խոչընդուների հանդիսկելով՝ ստիպուած եղանք իւրաքանչիւրն առանձին լոյս ընծայել:

«Ճանդիսի» վեցերորդ դիբքը լոյս կըտեսնէ առաջիկայ հոկտեմբեր ամսնին մինչև 400 էջից բաղկացած։ Առանձին հրատարակելով այդ գրքերը, մեր բաժանորդներին մինչև 100 երես աւելի կըտանք, քան թէ խոստացել էինք։



# ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ռ. Ս. Զ Ի Ն Գ Ր Թ Ի.

I. Նա սպասում է գեռ... պատկեր. Գ. Չուբար.—II. Մի՛ կարծէք որ ես... բանաս. Գամառ-Քաթիպա.—III. Առաջին Սէր, վէպ Տուրգենեվից.—IV. Չորս բանաստեղծութիւն. I. Արազն է-կաւ, II. Մին, III. Երգչի անէծքը (Ուլանդից) և IV. Կեանք. Յով. Յովհաննիսեան, —V. Անկոչ հիւրը, վէպ. Պ. Հ. Աղամեան, —VI. Մաֆիր կուսաստան, բանաստ. Պ. Հ. Աղամեան, —VII. Ման-կական թոթովանք, բանաստ. Պ. Աղայեանց, —VIII. Թիմար ոչ-խարներ (առակ մեծերի համար). Գ. Չուբար, —IX. Արևելեան զրոյց. Երէինովից, —X. Աղգային բանաստեղծ, բանաստ. Աղէք. Մատուրեան, —XI. Ագեւոս իշխանի պատմութիւնը, Վ. Գարշի-նից. Վ. Մ., —XII. Չեմ ազօթում... բանաստ. Նաղսօնից. Պ. Հ. Աղամեան, —XIII. Յարութեան գիշեր, աւանդութիւն, Շչեղրինից. Ա. Մատուրեան, —XIV. Գիւղի ասպետները, զրոյց Մօնարքից, —XV. Մուսա, բանաստ. Ա. Մատուրեան, —XVI. Կիւրար կամ Մշեցու հայու մը խոստովանանքը. Վ. Թ. Մ., —XVII. Հայ ժո-ղովուրդը, նորա այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համարօտ տեսութեամբ. Ստ. Նաղարեանց, —XVIII. Հին ցաւ. Գար. Ենք., —XIX. Նիւթեր մատենագրութեան պատմութեան համար. I. Ստեփաննոս Նաղարեանցի թղթերից, Ա. Ռուկան Վ. Կտակը, —XX. Շատերէն մէկը, պատկեր. Սիւլիկ, —XXI. Զէյթունցի կինն առ պանդուխտ ամուսինն իւր. Յ. Զաք. րեան, —XXII. Խոստովանանք, Կուպէւնաթուին հացը, Նոր ա-զօթք, Հայլի. Սիւլիկ, —XXIII. Վանեցի պառաւ. Սառայի խրատն առ Կուտրաթ Խաթունն և Կուտրաթ Խաթունի պատասխանը. Մ. Կ. Միքայիսորեան, —XXIV. Օձի Խածած, պատկեր. Սիւլիկ, —XXV. Մատենախոսութիւն. I. Շէքսամիր և իւր Համլէթ ողբեր-գութեան աղքիրն ու քննադատութիւնները, աշխատասիրեց Պ. Հ. Աղամեան գերասան. II. Կորած Մարգարիտ, վէպ-նկարագրու-թիւն Ս. Փիլյուեան, —XXVI. Մահացուցակ Յ. Շիշմանեանի. —XXVII. Բաֆֆիի մահ (մի առաջարկութիւն), —XXVIII. Հայ գիւղացիների հայեացքը բնութեան երկոյթների վերայ, Յ. Մ. Տուտուխեան, —XXIX. Ակամայ պատասխան, —XXX. Հրատարակ-չի կողմից, —XXXI. Յայտարարութիւններ:

Ե Ր Կ Ռ Ո Ր Դ Գ Ր Ք Ի.

I. Մի կտոր՝ հանած իմ տպելու պատրաստ աշխատասիրութիւնից, Պ. Պոօշեանց.—II. Բանաստեղծութիւններ, Մ. Նալբանդեան, —III. Ծեր Մարկոսը, պատկեր. Լէօ.—IV. Վերջին փափագ, բանաստ. Ս. Շահազեղեան, —V. Կաձետայ ծոեր, Ժիշողութիւն, Տ. Փիրումեան, —VI. Ընկե'ր իմ, բանաստ. Նաղասնից, Յ. Յովհաննիսեան, —VII. Հասո, պատկեր. Գ. Զուբար, —VIII. Երեք արևաւենի, բանաստ. Լերսնուտովից. Գամառ-Քաթիպա, —IX. Յիշողութիւն, Սննէտ, Խնչպէս քաղցր երազ, բանաստ. Յ. Յովհաննիսեան, —X. Պոյէտ, բանաստ. Ա. Ծատուրեան, —XI. Հայի ճուտ. երգ, Աշըդ Զիւան, —XII. Երեք զրայց. I. Վահկոտ. II. Դիւղի Մուրացկան և III. Ջմնուոր Դիւրիւմն, Դիւի գը-Մօպասանից. Ա. Ծատուրեան, —XIII. Երգ, բանաստ. Նժգեչ, —XIV. Մեր դաշտն ու Հովիտ... բանաստ. Գ. Բարիուղարեան, —XV. Սիրոյ վշտեր, Զարատանջ զոհ. Այս աշխարհին (Հայնէից). բանաստ. Ա. Ծատուրեան, —XVI. Լաւ բժշկեցին, պատկ. ՆարԴոս, —XVII. Պոէտ և Աստղեր. Սպիտակ զգեստ, բանաստ. Ժարգ. Ա. Թանգեան, —XVIII. Արձագանք, Տաճկա-Հայաստան և Հայք. բանաստ. Գ. Բարիուղարեան, —XIX. Ճանապարհորդութիւն գէպի Հայաստան, Ֆլո. Բօէէնշտէդտից. Յ. Բարիուղարեանից, —XX. Թէէ ովքեր էին ս. Վարդանանց և նոցա ժամանակակից Հայ սերունդի գաստիարակիւնները, Լորդ. —XXI. Երկու խօսք. Յառաջաբան. Մ. Նալբանդեան, —XXII. Ազգային նկատողութիւնք. Լապտեր Հայաստանի. Ա. Նազարեանց, —XXIII. Արկողդ լզիւյս... Գ. Եպ. Այվազեան, —XXIV. Ցուցակ ստացեալ աղլսից... Մ. Թաղիադեան, —XXV. Մատենախօսութիւն — Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասոլիկ կոչեցելոյ. Ն. Ն. Բիւզանդացի, —XXVI. Բանք ի Պողոս Կրօնաւորէ, Ղ. Վ. Փիրզալէմեան, —XXVII. Ազգ. Այլ և այլք:

---

I. Վարժապետ, II. Վարժէվօր, պատկ. Ախտամերկեան, —III. Սատանայի օջիլ պատկեր, Սիւլիւկ. —IV. Խոռոթլախ, պատկ. Սիւլիւկ. —V. Յայտարարութիւններ:

Ե Ր Բ Ո Ր Դ Դ Գ Ր Ք Ի.

I. Աղամայ մութը, աւանդութիւն. Պերճ Պոօշեան, —II. Բանաստեղծութիւններ Մ. Նալբանդեան, —III. Դոն Քիշոսի իմաստը (Ն. Ստորոտենկօ), —IV. Տղմուտ. Ջմնուորի մահը. Տեսնում եմ աշա... բանաստ. Յ. Յովհաննիսեան, —V. Առաւտեան

ժամին, սերբիական զրոյց Լ. Կ. Լաղարեվիչից; — VI. Գողթան երգիչներին, բանաստ. Լ. Մանուկելեանց; — VII. Փիլիսոփայական մանկավարժութեան հիմունքներն ըստ Լինդների Յ. Բարխուդարեան; — VIII. Երկու վարդ (Մ. Վալդաուկից), Մարգարիտներ և Երդեր (Ռ. Պրուտցից), Երդեր (Հայնէից). Փոթորկից յետոյ (Ռ. Պրուտցից), բանաստ. Ա. Մատուրեան; — IX. Ինչո՞ւ աշխարհս բարեկարգուած չէ, Կօտ Մուռլիկայից. Մ. Տէր-Զաքարեանց; — X. Մաշան, պատկեր. Սուլթան; — XI. Մարտովից. Օտար պօէտին. Սոկոլովից. Նոր լուրեր Տաճկահայաստանից, Էջը. Եթէ դու մի օր... բանաստ. Զ. Բալուղեան; — XII. Հանս Շիլդբերգերի կեանքի և Ճանապարհորդութեան մասին. Վ. Սուրբնեանց; — XIII. Դաւաճանին, Իմ Հայրենիքն... բանաստ. Լ. Մանուկելեանց; — XIV. Կարաբաս, Մօրիս Մօնտարդիսից Զ. Պ.; — XV. Սրծիւ, բանաստ. Սէթ; — XVI. Ուրուականներ, ֆանտազիա. Ի. Տուրգենեվից; — XVII. Ծեր ժամկոչը, գաղնանային իդիլիա. Վ. Կորոլենկոյից; — XVIII. Թափոր Աւագ ուրբաթ երեկոյեան, բանաստ. Պ. Հ. Ադամեան; — XIX. Վարդանանց պատերազմի պատճառներն և հետևանքը. Եր. Շահազել; — XX. Լէօպոլդ Ֆօն Ռանքէ և Հայոց Պատմութիւնը, Լորդ; — XXI. Շահիր Խաչատրի երգերից; — XXII. Մատենախոսութիւն. Սօս և Վարդիթեր, վէպ Պերճ Պոօշեանցի. Մ. Նալբանդեան; — XXIII. Մտացուած զբքեր; — XXIV. Ցայտարութիւններ:

I. Հայագիտութիւն, հաղորդեց Կ. Եղեանց.

## Չ Ո Ր Բ Ո Ր Դ Գ Ր Ք Ի.

I. Սպանգանոց, պատկեր. Բաֆֆի; — II. Բաց աչքով երազ, զրոյց (Պոլ Բուրժէից). Տիկ. Մարդարիտ; — III. Բանաստեղծութիւններ. I. Ո՛չ, կանայք... (Լէօպարդիից). II. Կար մի ժամանակ. III. Բուզը ցից Մագոննայի առաջ, Յ. Յովչաննիսեան; — IV. Վերածնութեան դարու մանկավարժական տեսութիւնները (Ե. Մաօրօժէնկոյից); — V. Մի մեծ յօդուածից մի Հանգուցեալ կտոր. Գառնեցի; — VI. Մի հոնը խելացի մաքերը, Յ. Բարիուդարեանցից; — VII. Բանաստեղծութիւններ, I. Խաղաղութիւն ձեզ (Բ. Մուրից). II. Մելոդիա (Մրուգից) Ա. Մատուրեան; — VIII. Մագօ. պատկ. Ժիւլ Կլասեսսի. Պ. Զուրար; — IX. Խղճի խայթոցներ, Հոգեր. պատկ. Պ. Զուրար; — X. Դիմակահանդէս, դրամ 4 արարուածով. Լերմոնտովից. Յ. Զանումեանց; — XI. Բանաստեղծութիւններ. I. Մենք կրովում ենք, II. Կտակ, III. Վահագնայ ծնունդը. Զ. Բալուղեան; — XII. Մոռացուած շիրմի; բանաստ. Բաֆֆի; — XIII. Հատուցումն, բանաստ. Պ. Հ. Ադամ-

եան,—XIV. Մի երես մեր նորագոյն պատմութիւնից. Զ. Աղայ-  
եանց,—XV. Բանաստեղծութիւններ, I. Կէս գիշեր. II. Սոնետ.  
III. Թշուառին. IV. Ա. լու, երանի չէ. Ա. Մատուրեան,—XVI.  
Բանաստեղծութիւններ, I. Սնապուղ երկունք. II. Է՛հ, սա էլ իմ  
սէրը. III. Հայու մեծերը. Զ. Բալողեան,—XVII. Նախարար և  
նախարարութիւն. Եր. Եահազիզ,—XVIII. Աշողի երգ,—XIX.  
Մատենախօսութիւն—Դաւիթ և Մհեր. Լէօ.—XX. Ակրափի ե-  
մին,—XXI. Մատուրած հրատարակութիւններ,—XXII. Թայտա-  
րարութիւններ:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Ռ. Թ. Ի. Ի.

# 1794 ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ 1894

ՑՈՐԵԼԻՆԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ

## „Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ“

Լ Ր Ա Գ Ր Ի

ԽՐԵՆԳՐԱՓԵՍՆ ԿԱՂՄԵՆ

ԿՐՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 1894 թ. Սեպտեմբերի 1-ին

Մեծ միածալ դիրքով լուսատիպ (phototype) պատկեր յը, որուն  
մեծութիւնն է  $50 \times 35$  սանտիմետր, տպուած  $70 \times 45$  սանտիմետր  
քարտոնի (carton) վրա այլեալլ բնագրով: Պատկերս պիտի ներ-  
կալացնէ՝ մէջտեղը հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն  
քինց. Շմաւոնեանին պատկերը, և բոլորտիքը 1894-ին հայերէն լեզ-  
ուաւ հրատարակուող բոլոր լրագիրները, իրենց խմբագրապետներու  
պատկերներով:

„1794 ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՑՈՐԵԼԻՆԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ 1894“

պատկերը կարելի է ստանալ բաժանորդագրութեամբ: Մէկ օրինակի  
բաժանորդագինն է՝ բուբլի 1.—կամ ֆր. 2.50:

Ճանապարհածախսը խմբագրութեանս վրայ է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ,

Լ Ր Ա Գ Ր Ի.

ՆԵՐԿԱՄ 1894 թուականին

(ՏԱՍՆԵՒՄԵԿԻՐՈՐԴԻ ՏԵՐԵ)

## ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

# ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԹԵՐԵԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

հրատարակում է նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և  
տօներին հետևող օրերից:

(Տարուայ ընթացքում՝ «Նոր-Դար»-ը լոյս կըտեսնի առնուազն  
220—225 անգամ)

ՆՈՐ-ԴԱՐԸ -Հ ԱՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՊԱԿԱՆ ՀԵԽԱԳԻՐՆԵՐ

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 ր.,  
թիֆլիսից գուրս ամիսը 1 ր. 50 կ., հատով գուրսը՝ 7 կոպ.,  
թիֆլիսում՝ 5 կոպ.:

Եւրոպայի, Թիֆլիսից և այլ հեռաւոր երկիրների բաժա-  
նորդները վճարում են տարեկան 40 Փրանկ:

Ամերիկայի բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլ-  
լար: «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրում իւրաքանչիւր ամնի  
1-ից միայն:

Թիֆլիսում բաժանորդ են գրում միմիայն «Նոր-Դար»-ի  
խմբագրատանը:

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոց, Ակուե-  
րի գիմազ:

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեանը՝ Տիֆլիս,  
въ редакцію ежедневной газеты „НОР-ДАР“ կամ Tiflis  
(Caucase) Rédaction du journal „NOR-DAR“.

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

## Բ Ա Զ Մ Ա Վ Ե Պ

ԱՄՍԱԹԵՐԹ

Տարեկան բաժանորդագինն է 10 ֆլ. (4 րուբլի):

Հասցեն՝ Rédaction de la Revue «Basmavep», Venise (Ita-  
lie) St-Lazare.

## „Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԸԿՆ—ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Գ Ի Բ 1894 թ.

Բաժանորդագրութիւնը շարունակվում է

«Մուրճը» հրատարակվում է ամեն ամիս 9—11 թերթ  
մեծութեամբ:

Տարեկան բաժանորդագինը . . . . . 10 ր.

Կէս տարուանը . . . . . 6 »

Երեք ամսուանը . . . . . 4 »

Մի գրքոյկը . . . . . 1 » 50 կ.

Ընդունվում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով.  
Խմբագրութեան հասցէն Տիֆլիս, բաժանում առաջին համար վճարելու պայմանով.  
«ՄՈՐՎԻ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».

Խմբ. հրատ. Ահեջիք ԱՐԱՍԻԱՆԵԱՆ.

## „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“

Բարոյական, Ուսումնական, Արուեստագիտական.

Բաժանորդագինն է 8 Փրանք=4 րուբլի թղթադրամ=4 ֆլորին:

Հասցէն. առ Վեն (Австрія), բաժանում առաջին համար վճարելու պայմանով.  
«Հանդես», Վեն (Австрія) VII. Mechitharistengasse 4. և Կամ Rédaction de la Revue «Hantess», Vienne (Autriche) VII. Mechitharistengasse 4.

Խմբագր. «ՀԱՆԴԵՍԻ».

## „Ա. Բ Ա. Բ Ա. Տ“

ԿՐՈՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱԼԱՍԻՐԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ

Ա. Մ Ա Գ Ի Բ Հ

ՍՊԵՆ 1894 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Հրատարակվում է նոյն ուղղութեամբ և ծրագրով:

Բաժանորդագինն է մուսաստանում՝ 4 ր. Եւրոպայում՝ 5 ր. Հնդկաստանում՝ 6 ր.:

Հասցէն՝ Թշմանական, Տիպոգրաֆ. Կոմիտետ.